ՄԱՐԻԱՄԻ ԼԵԳԵՈՆԻ ՊԱՀՏՈՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝
CONCILIUM LEGIONIS MARIAE
DE MONTFORT HOUSE
MORNING STAR AVENUE
MORNING STAR AVENUE
DUBLIN 7, D07 VA03
IRELAND

www.legionofmary.ie
email: concilium@legionofmary.ie

Վերանայված հրատարակություն, 2024

Nihil Obstat:
Paul Churchill B. Theol. DCL
Censor Theologicus Deputatus.

Imprimi potest:
✠ Dermot Farrell
Archiep. Dublinen.
Hiberniae Primas.

Դուբլին, 1 հունվարի, 2024
Տոն Մարիամ Աստվածածնի

Հայերեն թարգմանությունը՝ արտոնությամբ
Արհ. Տ. Գևորգ Արքեպս. Նորատունկյանի՝
Առաջնորդ Կաթողիկէ Հայոց Հայաստանի, Վրաստանի,
Ռուսաստանի և Արևելյան Եվրոպայի:

Աստվածաշնչյան հատվածների մեջբերումը կատարվել է
ըստ հետևյալ հրատարակության՝
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆ
ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ
Հրատարակություն Հայաստանի Աստվածաշնչային
ընկերության, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994:

Մարիամի Լեգեոնի պաշտոնական հանդեսն է՝
«Maria Legionis»-ը,
որը հրատարակվում է երեք ամիսը մեկ,
Էլ. փոստի հասցեն՝ marialegionis263@gmail.com

© Copyright Concilium Legionis Maria 2024

Տպագրվել է «Անտարես» հրատարակչատանը
Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374 10) 58 10 59, 56 15 26, 58 76 69
antares@antares.am
www.antares.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ՆՇՈՒՄ VII

ՖՐԱՆԿ ԴԱՖՖ
Մարիամի Լեգեոնի հիմնադիր VIII

ՄԱՐԻԱՄԻ ԼԵԳԵՈՆԸ 11

1. ԱՆՈՒՆԸ ԵՎ ԾԱԳՈՒՄԸ 11
2. ՆՊԱՏԱԿԸ 14
3. ԼԵԳԵՈՆԻ ՈԳԻՆ 15
4. ԼԵԳԵՈՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ 16
5. ԼԵԳԵՈՆԻ ՋԵՐՄԵՌԱՆԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԸ 22
6. ՄԱՐԻԱՄԻ ՀԱՆԴԵՊ ԼԵԳԵՈՆԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 32
7. ԼԵԳԵՈՆԱԿԱՆԸ ԵՎ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ 55
8. ԼԵԳԵՈՆԱԿԱՆԸ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ 60
9. ԼԵԳԵՈՆԱԿԱՆԸ ԵՎ ՔՐԻՍՏՈՍԻ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՄԱՐՄԻՆԸ 67
10. ԼԵԳԵՈՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 77
11. ԼԵԳԵՈՆԻ ՍԽԵՄԱՆ 90
12. ԼԵԳԵՈՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 96
13. ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 107
14. ՊՐԵՋԻԴԻՈՒՄԸ 111
15. ԼԵԳԵՈՆԱԿԱՆԻ ԽՈՍՏՈՒՄԸ 119
16. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ 122

17. ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ԼԵԳԵՈՆԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԳԻՆԵՐԸ .138
18. ՊՐԵԶԻԴԻՈՒՄԻ ԺՈՂՈՎԻ ԿԱՐԳԸ 139
19. ԺՈՂՈՎԸ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԸ 154
20. ԼԵԳԵՈՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԱՆՓՈՓՈԽԵԼԻ Է 168
21. ՆԱԶԱՐԵԹԻ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՏՈՒՆԸ 169
22. ԼԵԳԵՈՆԻ ԱՂՈԹՔՆԵՐԸ.....174
23. ԱՂՈԹՔՆԵՐԸՊԵՏՔ Է ՄՆԱՆ ԱՆՓՈՓՈԽ 179
24. ԼԵԳԵՈՆԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐԸ 180
25. ԼԵԳԵՈՆԻ ՆԿԱՐԸ 194
26. ՏԵՍՍԵՐԱ 197
27. VEXILLUM LEGIONIS 198
28. ԼԵԳԵՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ 201
29. ԼԵԳԵՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ 226
30. ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ 228
31. ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ ԵՎ ՆՈՐ
ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ 237
32. ԿԱՆԽԱՏԵՍԵԼԻ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 242
33. ԼԵԳԵՈՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 252
34. ՊՐԵԶԻԴԻՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՆԵՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 279
35. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ 292
36. ՊՐԵԶԻԴԻՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ
ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ՀԱՏՈՒԿ ԱՆԴՐԱԴԱՐՁ 295
37. ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 306
38. ՊԱՏՐԻԿՆԵՐԸ 347
39. ԼԵԳԵՈՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԿԵՏԵՐԸ 364
40. ԳՆԱՑԵՔ ՔԱՐՈԶԵՔ ԱՎԵՏԱՐԱՆԸ
ԱՄԲՈՂՋ ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅԱՆԸ (Մրկ. 16:15).... 412
41. «ՍՐԱՆՑԻՑ ՄԵԾԱԳՈՒՅՆԸ ՍԵՐՆ Է»
(Ա Կրնթ. 13:13)..... 439

ՀԱՎԵԼՎԱԾ 1 ..... **443**

ՀԱՎԵԼՎԱԾ 2 ..... **458**

ՀԱՎԵԼՎԱԾ 3 ..... **461**

ՀԱՎԵԼՎԱԾ 4 ..... **464**

ՀԱՎԵԼՎԱԾ 5 ..... **466**

ՀԱՎԵԼՎԱԾ 6 ..... **470**

ՀԱՎԵԼՎԱԾ 7 ..... **472**

ՀԱՎԵԼՎԱԾ 8 ..... **475**

ՀԱՎԵԼՎԱԾ 9 ..... **476**

ՀԱՎԵԼՎԱԾ 10 ..... **477**

ՀԱՎԵԼՎԱԾ 11 ..... **482**

ՀԱՎԵԼՎԱԾ 12 ..... **485**

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԳՐՔԵՐԻ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ *489*

ՆԱԽՆԱԿԱՆ ՆՇՈՒՄ

Լեգեոնը մի համակարգ է, որը կարող է կորցնել իր հավասարակշռությունը, եթե դրա մասերից որևէ մեկը հանվի կամ փոխվի: Հետևյալ տողերը կարող էին գրված լինել նաև Լեգեոնի վերաբերյալ.

«Հանեցեք մի թել, և ամբողջ ցանցը կքանդվի:
Հազարավոր կտորներից կոտրեք միայն մեկը,
և ջարդուփշուր կլինի ամբողջը»:

(Ուիթթիեր)

Ուստի եթե մեկը պատրաստ չէ աշխատել այնպես, ինչպես նկարագրված է այս էջերում, խնդրում ենք ընդհանրապես չսկսել Լեգեոնը: Սրա վերաբերյալ ուշադրությամբ կարդացեք Գլուխ 20-ը՝ ***«Լեգեոնի համակարգն անփոփոխ է»:***

Առանց Լեգեոնի հետ կապակցված լինելու (նրա հաստատված խորհուրդներից որևէ մեկի միջոցով՝ լեգեոնական անդամակցություն չի կարող լինել:

Եթե նկատի առնենք անցյալ փորձառությունը, ըստ կանոնների աշխատող Լեգեոնի որևէ ճյուղ չի ձախողվի:

ՖՐԱՆԿ ԴԱՖՖ
Մարիամի Լեգեոնի հիմնադիր

Ֆրանկ Դաֆֆը ծնվել է 1889թ. հունիսի 7-ին, Իռլանդիայի մայրաքաղաք Դուբլինում: Տասնութ տարեկանում անցել է պետական ծառայության և ունեցել աչքի ընկնող աշխատանքային ճանապարհ: Ազատ ժամանակ Ֆրանկը նախ և առաջ զբաղվում էր սպորտով, բայց քսանչորս տարեկանում միացավ Սուրբ Վինսենթ դը Փոլի հասարակությանը, որտեղ ավելի խորապես նվիրվեց իր կաթողիկէ հավատքին և միևնույն ժամանակ դարձավ շատ նրբազգաց աղքատների և անապահովների կարիքների հանդեպ:

Մի խումբ կաթողիկէ կանանց և Դուբլինի թեմի վարդապետ Հ. Մայքլ Թոհերի հետ միասին 1921թ. սեպտեմբերի 7-ին նա հիմնադրեց առաջին խումբը, որը հետագայում դառնալու էր Մարիամի Լեգեոնի առաջին պրեզիդիումը: Այդ օրվանից մինչև իր մահը (7 նոյեմբերի, 1980թ.) հերոսաբար նվիրված՝ Դաֆֆը ղեկավարել է Լեգեոնի տարածումը ողջ աշխարհով մեկ: Մասնակցել է Վատիկանի 2-րդ Ժողովին՝ որպես աշխարհական դիտորդ:

Ֆրանկ Դաֆֆը մահացավ 1980թ. նոյեմբերի 7-ին, ինսունմեկ տարեկանում: Նրա սրբագործման գործընթացը սկսվեց Դուբլինի Արքեպիսկոպոս Կարդինալ Դեսմոնդ Քոնսելի կողմից 1996թ. հունիսին:

Նրա խորաթափանց տեսակետները հոգիների փրկության ծրագրում Սուրբ Հոգու և Աստվածածնի դերի վերաբերյալ, ինչպես նաև Եկեղեցու առաքելության մեջ աշխարհականների դերի վերաբերյալ, արտացոլվում են այս ձեռնարկում, որը գրեթե ամբողջությամբ իր ստեղծագործությունն է:

ԱՂՈԹՔ
ԱՍՏԾՈ ԾԱՌԱ ՖՐԱՆԿ ԴԱՖՖԻ
ՍՐԲԱԴԱՍՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայր մեր,

Դու ոգեշնչել ես քո ծառա Ֆրանկ Դաֆֆին խորապես ընկալելու քո Եկեղեցու խորհուրդը՝ Հիսուսի Մարմինը, և Աստվածամոր դերն այս խորհրդում:

Իր այս ընկալմամբ, ուրիշների հետ կիսվելու մեծ ցանկությամբ և Մարիամի հանդեպ իր որդիական կապվածության շնորհիվ նա հիմնեց Մարիամի Լեգեոնը, որպեսզի այն նշան լինի աշխարհի հանդեպ Սուրբ Կույսի մայրական սիրո, և միջոց՝ բոլոր Նրա զավակներին զորակոչելու Եկեղեցու ավետարանման գործին:

Շնորհակա՛լ ենք, Հա՛յր, այն շնորհների համար, որ տվել ես նրան, և այն քաջ և փայլուն հավատքի համար, որ Եկեղեցին ստացել է նրանից որպես ընծա:

Մենք վստահությամբ աղաչում ենք, որ նրա միջնորդությամբ Դու կատարես այն խնդրանքը, որ մենք ներկայացնում ենք քեզ...

Մենք նաև խնդրում ենք, որ եթե դա Քո կամքի համաձայն է, նրա կյանքի սրբությունը ճանաչվի Եկեղեցու կողմից՝ Քո անվան փառքի համար:

Մեր Տեր Քրիստոսով. Ամէն:



ՖՐԱՆԿ ԴԱՖՖ

ՄԱՐԻԱՄԻ ԼԵԳԵՈՆԸ

«Ո՞վ է սա, որ ելնում է ինչպես առավոտ, և գեղեցիկ է, ինչպես լուսին, ընտիր, ինչպես արեգակ՝ զարմանալի հորինված… որ դեպի մեզ է գալիս բանակների գնդերի պես» (Երգ. 6: 10; 7:1):

«Եվ այդ Կույսի անունը Մարիամ էր» (Ղկ. 1:27):

«Մարիամի Լեգեոն. ինչպիսի՛ կատարելապես ընտրված անվանում» (Պիոս ԺԱ Պապ):

1

ԱՆՈՒՆԸ ԵՎ ԾԱԳՈՒՄԸ

Մարիամի Լեգեոնը կաթողիկէ քրիստոնյաների միավորում է, որոնք Եկեղեցու արտոնությամբ և Անարատ Կույսի հզոր առաջնորդությամբ, որը Միջնորդն է բոլոր Շնորհների (գեղեցիկ, ինչպես լուսինը, ընտիր, ինչպես արեգակը և զարմանալի հորինված… որ դեպի մեզ է գալիս բանակների գնդերի պես՝ սարսափելի սատանայի և նրա լեգեոնականների համար), կազմվել են որպես մի Լեգեոն, որպեսզի ծառայեն այն պատերազմում, որը Եկեղեցին մշտապես մղում է այս աշխարհի և դրա չար ուժերի դեմ:

«Մարդկանց ողջ կյանքը՝ թե՛ անհատական, թե՛ հասարակական, ինքնին մի դրամատիկ պայքար է չարի և բարու, լույսի և խավարի միջև» (GS, 13):

Լեգեոնականները հույս ունեն իրենց հավատարմությամբ, առաքինություններով և արիությամբ արժանի լինել մեծ Երկնային Թագուհուն: Ուստի, Մարիամի Լեգեոնը կազմավորված է բանակի նման, սկզբունքորեն՝ հին Հռոմի բանակի նման, որի տերմինաբանությունը նույնպես որդեգրել է: Բայց այդ բանակն ու Մարիամի լեգեոնականների զենքերն այս աշխարհից չեն:

Այդ բանակը, որն այժմ այսքան ծանրակշիռ է, ունեցել է ամենահամեստ ծագումը: Այն նախապես մտածված կազմակերպություն չէր. ծագեց ինքնաբուխ կերպով: Ստեղծելուց առաջ չէին խորհրդածել կանոնների և գործողությունների վերաբերյալ: Պարզապես մի առաջարկ արվեց, որոշվեց մի երեկո, հավաքվեց մարդկանց մի փոքրիկ խումբ՝ չգիտակցելով, որ իրենք լինելու էին սիրառատ Աստվածային Նախախնամության գործիքները: Այդ հանդիպումը նույնն էր, ինչ կարելի կլիներ տեսնել այսօր, եթե մեկն այցելեր Լեգեոնի որևէ հանդիպում աշխարհի որևէ վայրում: Սեղանին, որի շուրջ նրանք հանդիպեցին, կար մի պարզ խորան, որի կենտրոնը Անարատ Հղացյալի արձանիկն էր (հրաշագործ մեդալիոնի նման): Այն դրված էր սպիտակ ծածկոցին, աջ և ձախ կողմերում՝ ծաղիկներով երկու ծաղկաման և երկու մոմակալ՝ վառված մոմերով: Այս տեսարանը, որն այնքա՛ն հարուստ մթնոլորտ ուներ, ամենավաղ եկած նորեկներից մեկի ներշնչված մտքի արգասիքն էր: Այն արտացոլում էր Մարիամի Լեգեոնի ամբողջ իմաստը: Լեգեոնը մի բանակ է: Եվ ուրեմն, Թագուհին այդտեղ էր՝ մինչ նրանց համախմբվելը: Նա կանգնած սպասում էր՝ ընդունելու իր զորակոչիկներին, որոնք գալիս էին Իր մոտ: Նրանք չէ, որ որդեգրեցին Սուրբ Կույսին, այլ ի՛նքը որդեգրեց նրանց, և այդ պահից ի վեր նրանք արշավել և պայքարել են Սուրբ Կույսի հետ միասին՝ համոզված լինելով, որ հաջողության կհասնեն և կհարատևեն այնքան ժամանակ, քանի դեռ միավորված են Մարիամի հետ:

Այդ լեգեոնականների առաջին միասնական գործողությունը ծնկի գալն էր: Ազնվագույն երիտասարդ գլուխները խոնարհվեցին, նրանք արտասանեցին Սուրբ Հոգուն ուղղված խնդրանքն ու աղոթքը, և հետո, օրվա ծանր աշխատանքից հոգնած, մատների արանքով սահեցին ամենապարզ ջերմեռանդական աղոթքներից մեկի համրիչի հատիկները: Երբ վերջին խնդրանքներն ավարտվեցին, նրանք նստեցին և Մարիամի հովանու տակ (ինչպես ներկայացնում է նրա արձանիկը) սկսեցին մտածել, թե ինչպես լավագույն կերպով հաճելի լինեն Աստծուն և նրան սիրելի դարձնեն այս աշխարհում: Այդ քննարկումից ծնվեց

Մարիամի Լեգեոնը՝ ինչպիսին որ է այսօր՝ իր բոլոր հատկանիշներով:

Ինչպիսի՛ հրաշք: Նայելով այդքան պարզորեն ներգրավված այս աննշան մարդկանց՝ ո՞վ կարող էր, նույնիսկ իր ամենահամարձակ պահին, պատկերացնել, թե ինչպիսի՛ ճակատագիր էր սպասվում իրենց մոտ ապագայում: Նրանցից ո՞վ կարող էր մտածել, թե սկսում էին մի համակարգ, որը լինելու էր համաշխարհային մի նոր ուժ, որը, հավատարմորեն և ազդեցիկ կերպով օգտագործելու դեպքում, Մարիամի միջոցով ի զորու էր լինելու ազգերին բերել կյանք, քաղցրություն և հույս: Եվ, սակայն, այդպես էլ լինելու էր:

Մարիամի լեգեոնականների առաջին զորակոչը տեղի ունեցավ 1921թ. սեպտեմբերի 7-ին՝ երեկոյան ժամը 8-ին, Իռլանդիայի Դուբլին քաղաքում՝ Ֆրենսիս փողոցի վրա գտնվող Մայրա տանը, Սուրբ Կույս Մարիամի ծննդյան տոնի նախօրեին: Մայր խմբի «Ողորմության Տիրամայր» անվան պատճառով կազմակերպությունը մի որոշ ժամանակ հայտնի էր որպես «Ողորմության Տիրամայր միավորում»:

Հանգամանքները, որոնք կարելի էր համարել պատահական, որոշեցին այդ օրը, որն այդ ժամանակ թվում էր պակաս հարմարավետ՝ հաջորդող օրվա համեմատ: Եվ միայն տարիներ անց, երբ ճշմարտապես մայրական սիրո անթիվ ապացույցները ստիպեցին մտածել, գիտակցեցին, որ Լեգեոնի ծննդյան պահին երևում էր Մարիամի ձեռքի բավական ընտիր հպումը: Առաջին օրը ստեղծվեց երեկոյան և ավարտվեց առավոտյան (Ծնունդ. 1:5), և վստահաբար, առաջին և ոչ վերջին բուրմունքներն այն տոնի, որը պատվում է Սուրբ Կույսի Ծնունդը, պատշաճ եղան առաջին վայրկյանների համար մի կազմակերպության, որի սկզբնական և մշտական նպատակն է եղել իր մեջ վերարտադրել Մարիամի նմանությունը՝ այդպես լավագույն կերպով մեծարելով Տիրոջը և Նրան բերելով մարդկանց մոտ:

«Մարիամը Փրկչի Խորհրդավոր Մարմնի բոլոր անդամների Մայրն է, որովհետև իր սիրով նա համագործակցեց Եկեղեցում հավատացյալների ծննդյան մեջ: Մարիամն Աստծո կենդանի կաղապարն է, այսինքն՝ միայն նրա մեջ է, որ Աստվածամարդը

բնական կերպով կազմավորվեց՝ առանց կորցնելու Իր Աստվածությունը, և միայն Մարիամո՛վ է, որ մարդը կարող է պատշաճ ձևով և կյանքին համապատասխան կերպով ձևավորվել Աստծո մեջ՝ այնքանով, որքանով մարդկային բնությունն ունակ է դրան՝ Հիսուս Քրիստոսի շնորհով» (Սուրբ Օգոստինոս):

«Ողորմության ինչպիսի՛ գեղեցիկ գործ է և այնքա՛ն պատշաճ՝ Կաթողիկէ Եկեղեցու ճշմարիտ դեմքը ծանոթացնելու համար շատերին, ովքեր չեն հասկանում այն» (Սբ Հովհաննես ԻԳ Պապ):

2

ՆՊԱՏԱԿԸ

Մարիամի Լեգեոնի նպատակը Աստծո փառավորումն է իր անդամների սրբության միջոցով, որը կարելի է զարգացնել աղոթքով և, եկեղեցական առաջնորդության ներքո, ակտիվ համագործակցությամբ՝ Մարիամի և Եկեղեցու առաքելության մեջ՝ ջախջախելու համար օձի գլուխը և առաջ տանելու համար Քրիստոսի արքայությունը:

Կոնսիլիումի հավանությամբ և ենթարկվելով Լեգեոնի պաշտոնական ձեռնարկի կանոններին՝ Մարիամի Լեգեոնը թեմի եպիսկոպոսի և ժողովրդապետի տրամադրության տակ է՝ հասարակական որևէ ծառայության և կաթողիկէ առաքելության համար, որոնք այդ իշխանությունները պատշաճ կհամարեն լեգեոնականների և օգտակար՝ Եկեղեցու բարօրության համար: Առանց Առաջնորդի կամ ժողովրդապետի արտոնության՝ ժողովրդապետության մեջ լեգեոնականները չեն կարող զբաղվել այդպիսի որևէ գործունեությամբ:

Այստեղ «Առաջնորդ» ասելով՝ նկատի ունենք տեղի առաջնորդին, որը թեմի եպիսկոպոսն է կամ եկեղեցական այլ իրավասու իշխանություն:

ա) «Այս կարգի կազմակերպությունների անմիջական նպատակը Եկեղեցու առաքելական նպատակն է, այլ խոսքով՝ մարդկանց ավետարանելը, սրբացնելը և նրանց խղճի քրիստոնեական

դաստիարակությունը, որպեսզի նրանք կարողանան Ավետարանի ոգին ներդնել տարբեր հասարակական խմբերում և միջավայրերում:

բ) Աշխարհականները, իրենց բնորոշ ձևով համագործակցելով եկեղեցական նվիրապետության հետ, աջակցում են իրենց փորձառությամբ և պատասխանատվություն են ստանձնում այդ կազմակերպությունների ղեկավարման համար, ուսումնասիրում են պայմանները, որոնց պարագայում իրականացվելու է Եկեղեցու հովվական աշխատանքը, մշակում ու իրագործում են իրենց գործունեության ծրագրերը:

գ) Աշխարհականները գործում են միասին՝ օրգանական մարմնի նման՝ ավելի ակնառու կերպով ցույց տալու համար Եկեղեցու համայնական կողմը և ավելի պտղաբեր դարձնելու համար առաքելությունը:

դ) Աշխարհականները, անկախ նրանից, թե եկել են իրենց սեփական նախաձեռնությամբ, թե արձագանքելով եկեղեցական նվիրապետության առաքելության համար գործելու և ուղղակիորեն համագործակցելու հրավերին, աշխատում են եկեղեցականների վերադաս առաջնորդության ներքո, որոնք կարող են արտոնել այդ համագործակցությունը՝ նաև հստակ լիազորությամբ» (AA, 20):

3

ԼԵԳԵՈՆԻ ՈԳԻՆ

Լեգեոնի ոգին հենց իր՝ Մարիամի՛ ոգին է: Լեգեոնը հատկապես ձգտում է նմանվել Մարիամի անհուն համեստությանը, կատարյալ հնազանդությանը, հրեշտականման քաղցրությանը, անդադար աղոթքին, տիեզերական զոհողությանը, ամբողջովին անբիծ մաքրությանը, հերոսական համբերությանը, երկնային իմաստությանը, Աստծո հանդեպ նրա ինքնազոհ, քաջարի սիրուն և, ամենակարևորը, նրա հավատքին, այն առաքինությանը, որը միայն Մարիամի մեջ է հայտնաբերվել՝ իր առավելագույն չափով և անգերազանցելիորեն: Մարիամի այս սիրով և հավատքով ոգեշնչված՝ նրա Լեգեոնը ջանում է կատարել ցանկացած և յուրաքանչյուր աշխատանք և «չի բողոքում,

թե անհնարին է, որովհետև հասկանում է, որ ինքը կարո՛ղ է, և որ հնարավո՛ր է անել ամեն ինչ» («Նմանություն Քրիստոսի», Գիրք 3,5):

«Առաքելական հոգևոր կյանքի կատարյալ օրինակն է Առաքյալների Թագուհին՝ Երանելի Կույս Մարիամը: Քանի դեռ Կույսը ապրում էր երկրի վրա, նրա կյանքը նման էր ուրիշների կյանքին՝ լի աշխատանքով և տնային հոգսերով, բայց այնուամենայնիվ, նա միշտ մնում էր սերտորեն միացած Իր Որդուն և բացառիկ ու եզակի կերպով համագործակցեց Փրկչի հետ փրկագործության մեջ... Բոլորը պետք է անկեղծ ջերմեռանդություն ունենան Մարիամի հանդեպ և իրենց կյանքը պետք է վստահեն նրա մայրական հոգատարությանը» (AA 4):

4
ԼԵԳԵՈՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1. Պետք է հագնել «Աստծո սպառազինությունը» (Եփս. 6:11)

Հռոմեական Լեգեոնը, որից Լեգեոնը վերցրել է իր անունը, դարեր շարունակ եղել է ականավոր իր հավատարմության, քաջության, կարգապահության, տոկունության և հաջողության շնորհիվ, բայց այս ամենը հաճախ ցածր և ոչ ավելի, քան աշխարհային նպատակների համար էր (տե՛ս Հավելված 4, Հռոմեական Լեգեոնը): Ակնհայտ է, որ Մարիամի Լեգեոնը չի կարող Մարիամին ընծայել մի անուն (ինչպես զարդի շրջանակը՝ առանց թանկարժեք քարերի), որն ուղեկցվի դրանցից պակաս նկատելի որակներով, որոնք, այնուամենայնիվ, ցույց են տալիս լեգեոնական ծառայության նվազագույն մասը միայն: Սբ Կղեմեսը, որ դարձի եկավ Սբ Պետրոսի շնորհիվ և նաև Սբ Պողոսի գործընկերն էր, հռոմեական բանակն առաջարկում է որպես օրինակ, որին կարող է նմանվել Եկեղեցին:

«Ովքե՞ր են թշնամիները. չարամիտներն են, ովքեր ընդդիմանում են Աստծո կամքին: Ուստի, վճռականորեն նետվե՛նք

Քրիստոսի պատերազմի մեջ և ենթարկվենք Նրա փառավոր պատվիրաններին: Ջնջենք նրանց, ովքեր ծառայում են հռոմեական Լեգեոնում՝ զինվորական իշխանության տակ, և ուշադրություն դարձնենք նրանց կարգուկանոնին, նրանց պատրաստակամությանը, հնազանդությանը՝ կատարելու հրամանները: Ո՛չ բոլորն են պրեֆեկտներ, տրիբուններ, հարյուրապետներ, հիսնապետներ կամ իշխանության ավելի ցածր աստիճանների վրա կանգնածներ: Բայց յուրաքանչյուրն իր պաշտոնում կատարում է կայսեր և իր վերադաս սպաների հրամանները: Մեծը չի կարող գոյություն ունենալ առանց փոքրի, ոչ էլ փոքրը՝ առանց մեծի: Մի որոշակի օրգանական միություն կապում է բոլոր մասերը, այնպես որ յուրաքանչյուրն օգնում է և ստանում օգնություն բոլորից: Վերցնենք մեր մարմնի նմանությունը: Գլուխը ոչինչ է առանց ոտքերի, ինչպես ոտքերը՝ առանց գլխի: Մեր մարմնի ամենափոքր անդամներն անգամ անհրաժեշտ են և արժեքավոր ողջ մարմնի համար: Իրականում, բոլոր մասերը աշխատում են միասին՝ փոխկապակցված, և բոլորը հնազանդվում են՝ հօգուտ ողջ մարմնի» (Սբ Կղեմես, Պապ և մարտիրոս, Նամակ՝ կորնթացիներին (Ք. Հ. 96) Գլուխներ 36 և 37):

2. Պետք է լինել «զոհ կենդանի, սուրբ, աստվածահաճո... և այս աշխարհի կերպարանքով մի՛ կերպարանվեք» (Հռմ. 12:1-2)

Այդ աղբյուրից հավատարիմ լեգեոնականի մեջ կբխեն առաքինություններ՝ այնքա՛ն առավել մեծ, որքան գերազանց է դրանց պատճառը, և հատկապես մի ազնիվ մեծահոգություն, որը կարձագանքի Սբ Թերեզա Ավիլացու հետևյալ զգացումին. «Ընդունել այնքա՛ն շատ և հատուցել այնքա՛ն քիչ. ո՛հ, սա մի մարտիրոսություն է, որին ես հանձնվում եմ»: Լեգեոնականը, խորհրդածելով իր խաչված Տիրոջ մասին, Ով նվիրեց իրեն Իր վերջին շունչը և Իր Արյան վերջին կաթիլը, պետք է ձգտի իր ծառայության մեջ արտացոլել նույնպիսի ամբողջական ինքնանվիրում:

«Էլ ի՞նչ պիտի անեի իմ այգու համար, որ չարեցի» (Ես. 5:4):

3. Չպետք է հրաժարվել «աշխատանքներից և հոգնություններից» (Բ Կրնթ. 11:27)

Միշտ լինելու են վայրեր, երբ կաթողիկէ եռանդը պետք է պատրաստ լինի հանդիպել մահվան կամ տանջանքի գործիքների հետ: Շատ լեգեոնականներ են այսպես հաղթանակած անցել փառքի դարպասներով: Ընդհանուր առմամբ, սակայն, լեգեոնականի նվիրվածությունը կունենա ավելի համեստ ընթացաշրջան, որը, սակայն, ևս կտա լիառատ հնարավորություն՝ կատարելու լուռ, բայց իրական հերոսություն: Լեգեոնի առաքելության մեջ կմտնի մոտենալը շատերին, որոնք կնախընտրեին հեռու մնալ լավ ազդեցություններից, և որոնք կարտահայտեն իրենց տհաճությունը լեգեոնականների այցելության հանդեպ, որոնց առաքելությունը բարի է և ոչ չար: Այս ամենը կարող է հաղթահարվել, բայց՝ ոչ առանց համբերատար և քաջ ոգու:

Թթված հայացքները, վիրավորական խայթոցն ու կտրուկ մերժումը, ծաղրանքը և թշնամական քննադատությունը, մարմնական ու հոգեկան հոգնածությունը, ցավերը, որ պատճառում են ձախողումը և ստոր ապերախտությունը, սաստիկ ցուրտը և կուրացնող անձրևը, կեղտը, վնասատուները և գարշահոտությունը, մութ անցումները, անազնիվ միջավայրը, հաճույքներից հրաժարվելը, անհանգստությունները, որոնք լի են աշխատանքի մեջ, խռովքը, որ զգայուն հոգուն բերում է անկրոնության և ապականության մասին խորհրդածությունը, վիշտը՝ ամբողջ սրտով ուրիշների վշտերը կիսելու պատճառով. այս ամենի մեջ քիչ գրավչություն կա, բայց քաղցրությամբ տանելով, համարելով դա նույնիսկ ուրախություն, հաստատակամորեն մնալով մինչև վերջ և վերլուծելով՝ լեգեոնականները շատ կմոտենան այն սիրուն, որն ավելի մեծ է, քան որևէ մեկն ունի, որից մղված՝ Տերն Իր կյանքը տվեց Իր ընկերոջ համար:

«Ինչ հատուցում պիտի անեմ Տիրոջն այն ամենի համար, որ ինձ տվեց» (Սղմ. 115:3):

4. Պետք է ընթանալ «սիրով, ինչպես որ Քրիստոս սիրեց մեզ և Իր անձը մատնեց մեզ համար» (Եփս. 5:2)

Մարդկանց հետ աշխատանքում ամբողջ հաջողության գաղտնիքը ընկած է անձնական շփում ստեղծելու մեջ՝ սիրո և համակրանքի շփումը: Այս սերը պիտի լինի ավելին, քան մի արտաքին բան: Այս սերը պիտի կարողանա դիմակայել փորձություններին, որոնց կարող է հանդիպել իրական ընկերությունը: Սա հաճախ կպահանջի փոքր զոհողություններ: Բարձրաշխարհիկ միջավայրում ողջունել մեկին, ում նախկինում այցելել ես բանտում, փողոցում երևալ ցնցոտիներով մարդկանց հետ քայլելիս, ջերմությամբ սեղմել այդպիսի մի անձի աղտոտված ձեռքը, մասնակցել առաջարկված ճաշին՝ մի շատ աղքատ ու ոչ կոկիկ տան մեջ. ոմանց համար այս ամենը կարող է դժվար լինել, բայց եթե խուսափենք, մեր ընկերական մոտեցումը ձևական կլինի, կապը կխզվի, և այն մարդկային հոգին, որը սկսում էր բարձրանալ, նորից հետ կսուզվի հիասթափության մեջ:

Ամեն տեսակ իրական պտղաբեր աշխատանքի հիմքում պետք է լինի ամբողջությամբ նվիրվելու պատրաստակամությունը: Առանց այս պատրաստակամության՝ մարդու ծառայությունն անբովանդակ է: Այն լեգեոնականը, ով սահման է դնում իր առաքելությանը, այսինքն՝ որոշում է, թե իր «ինքնազոհությունը պետք է հասնի մինչև այստեղ և ոչ ավելի հեռու», կհասնի միայն մակերեսային արդյունքների, թեկուզև մեծ ջանքեր էլ գործադրի: Մյուս կողմից, եթե այդ պատրաստակամությունը կա, նույնիսկ եթե կարիքը երբեք չլինի, կամ լինի քիչ չափով, այն հսկայական արդյունքներ կբերի:

«Հիսուս պատասխանեց նրան. «Ինձ համար կյանքդ կտամ...» (Հվհ. 13:38):

5. Պետք է «ավարտել ընթացքը» (Բ Տիմ. 4:7)

Ուրեմն, Լեգեոնի կոչումն է՝ ծառայություն՝ առանց սահմանների և վերապահումների: Սա պարզապես կատարելության հասնելու մի խորհուրդ չէ, այլ նաև անհրաժեշտություն է, որովհետև եթե լեգեոնականի նպատակը գերազանց

լինելը չէ, ապա հարատև անդամակցություն չի ունենա: Ամբողջ կյանքում հարատևող առաքելական աշխատանքը ինքնին հերոսական է և կարտահայտվի որպես հերոսական գործերի անդադար շարքի հանրագումար, և դա՛ է հիրավի այդ հերոսական գործերի մրցանակը:

Բայց հարատևությունը չպետք է վերաբերի միայն անհատական անդամակցությանը: Լեգեոնի պարտականությունների շարքի ամեն և յուրաքանչյուր կետ պետք է կնքված լինի այս միևնույն հարատև ջանադրության կնիքով: Փոփոխությունն այստեղ, իհարկե, անհրաժեշտաբար լինի. լեգեոնականներն այցելում են տարբեր վայրեր և մարդկանց, աշխատանքներ են ավարտվում և նոր աշխատանքներ սկսվում, բայց այս ամենը կյանքի մշտական փոփոխություն է, և ոչ թե անկայունության և նորույթների փնտրտուքի պատահական գործողություն, որն ավարտվում է հիանալի կարգուկանոնի ավերմամբ: Լավ իմանալով այս փոփոխության ոգին՝ Լեգեոնը անընդհատ կոչ է անում ավելի համառ տրամադրության և յուրաքանչյուր հերթական հանդիպման ժամանակ իր անդամներին ուղարկում է կատարել իրենց առաջադրանքները՝ անփոփոխ հսկիչ խոսքով, որը նույնությամբ հնչում է նրանց ականջներում՝ «Պինդ կացե՛ք»:

Իրական ձեռքբերումը կախված է անդադար ջանքերից, ինչն իր հերթին արդյունքն է հաղթելու անկոտրում կամքի: Այդպիսի կամքի հարատևման մեջ էականն այն է, որ այդ կամքը չի կոտրվում ոչ հաճախ և ոչ էլ ընդհանրապես: Ուրեմն, Լեգեոնը հրահանգում է իր մասնաճյուղերին և անդամներին ունենալ մի ընդհանրական վերաբերմունք՝ մերժելու պարտություն ընդունելը կամ պարտությունը մեղմելը՝ այնպիսի հակվածությամբ, որն աշխատանքը տեսակավորում է «խոստումնալից», «անխոստումնալից», «անհույս» և այլ հասկացություններով: Եթե խոսում ենք Լեգեոնի մասին, ապա որևէ աշխատանք որպես «անհույս» պիտակավորելու պատրաստակամությունը հռչակում է, որ մի անգին մարդկային հոգի ազատ է անխոչընդոտ ընթանալու իր անհոգ ճանապարհով՝ դեպի դժոխք: Ավելին, դա ցույց է տալիս, որ փոփոխությունների և առաջընթացի նշաններ ունենալու չմտածված ցանկությունը հակված է

ինքն իրենով փոխարինելու ավելի բարձր նկատառումներին՝ որպես աշխատանքի շարժառիթ: Այսինքն՝ մինչև բերքը ծլում-հասնում է սերմնացանի կրունկներին, նա հիասթափվում է և վաղ թե ուշ թողնում աշխատանքը:

Նորից հայտարարում և պնդում ենք, որ եթե ինչ-որ մի դեպք պիտակավորում ենք որպես անհույս, մեխանիկորեն թուլանում է լեգեոնականի վերաբերմունքը բոլոր մյուս դեպքերի հանդեպ: Գիտակցաբար թե անգիտակցաբար, մոտեցումը ամբողջ աշխատանքին կլինի կասկածի ոգով, թե արդյոք դա արդարացվա՞ծ ջանք է, և նույնիսկ կասկածի մի հատիկը կաթվածահար է անում գործողությունը:

Եվ ամենավատն այն է, որ այդ պարագայում հավատքը դադարում է խաղալ իր պատշաճ դերը Լեգեոնի գործերում, որովհետև թույլատրում ենք հավատքի միայն խոնարհ մուտք, այսինքն՝ միայն այն դեպքում, երբ բանականությունը հավանություն է տալիս հավատքին: Այդպես Լեգեոնը՝ իր շղթայված հավատքով և թուլացած վճռականությամբ, անմիջապես սլանում է բնական երկչոտության, խեղճությունների և աշխարհային ողջամտության մեջ, որը, սակայն, նախապես մի կողմ էր դրվել, և Լեգեոնը սկսում է կատարել մի պատահական կամ կիսատ-պռատ ծառայություն, որն ամոթալի ընծա է մատուցում Երկնքին:

Հետևաբար, Լեգեոնի համար երկրորդական է աշխատանքային ծրագիրը, և ավելի կարևոր է հաստատակամ նպատակը: Լեգեոնն իր անդամներից պահանջում է ոչ թե հարստություն կամ ազդեցություն, այլ անսասան հավատք, ոչ թե հայտնի գործեր, այլ չթուլացող ջանքեր, ոչ թե հանճար, այլ անսպառ սեր, ոչ թե հսկայական ուժ, այլ կայուն կարգապահություն: Լեգեոնականի ծառայությունը պետք է լինի այնպիսին, որ դրա վրա հնարավոր լինի հիմնվել՝ բացարձակապես և համառորեն մերժելով հիասթափությունը: Լինել ժայռի նման՝ ճգնաժամին, և մշտապես կայուն՝ հուսալով ունենալ հաջողություն, խոնարհ՝ հաջողության մեջ, բայց անկախ դրանից՝ պայքարելով ձախողման ժամանակ, չհիասթափվել ձախողումից, շարունակել պայքարել և հաղթահարել, ծաղկել դժվարությունների և միապաղաղության մեջ, որովհետև դրանք հավատքին տալիս են տարողություն

և մշտական առաջխաղացման ջանադրության ցանկություն: Լինել պատրաստ և վճռական, երբ կանչում են, լինել աչալուրջ, թեև դեռ չես կանչվել, նույնիսկ եթե տեսադաշտում չկա որևէ հակառակություն և թշնամի՝ միշտ լինելով անխոնջ նախազգուշացնող պահակ՝ Աստծո համար, ամբողջ սրտով պատրաստ անհնարինի համար, բայց գոհ՝ լինելու ժամանակավոր պայքարի մի մասը: Լեգեոնականի համար ոչ մի բան չափազանց մեծ չէ կատարելու համար, ոչ մի պարտականություն չափազանց միջակ չէ, նույն ուշադրությունը պետք է լինի ամեն ինչում. նույն անխոնջ համբերատարությունը, նույն ճկուն քաջությունը, յուրաքանչյուր առաջադրանքի պետք է մոտենալ միևնույն ոսկյա հաստատակամությամբ, լինել միշտ արթուն՝ հոգիների համար, միշտ պատրաստ՝ թույլերին առաջնորդելու նրանց դժվար պահերին, արթուն հսկելով, կարծրասիրտներին զարմացնելով՝ նրանց մեղմության հազվադեպ պահերին, չդադարելով փնտրել նրանց, ովքեր շեղվել են ճանապարհից, մոռանալ սեփական «ես»-ը, միշտ կանգնած ուրիշների խաչերի կողքին, և մնալով անհողդողդ մինչև աշխատանքի ավարտը:

Հավատարիմ Կույսին նվիրված կազմակերպության ծառայությունը պետք է լինի հարատև՝ կրելով Նրա անունը պատվով կամ չկրելով առհասարակ:

5

ԼԵԳԵՈՆԻ ՋԵՐՄԵՌԱՆԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԸ

Լեգեոնի ջերմեռանդական աշխարհայացքն արտացոլված է իր աղոթքներում: Լեգեոնը առաջին հերթին կառուցված է Աստծո հանդեպ խոր հավատքի և Իր զավակների հանդեպ Աստծո սիրո վրա: Տերը կամենում է մեծ փառք ընդունել մեր ջանքերի միջոցով, և Նա կմաքրի մեր ջանքերը և դրանք կդարձնի պտղաբեր և հարատևող: Մենք տատանվում ենք անտարբերության և տենդագին անհանգստության հակադիր ծայրահեղությունների միջև, որովհետև

համարում ենք, թե Աստված գործ չունի մեր աշխատանքի հետ: Փոխարենը, եկեք գիտակցե՛նք, որ մենք ունենք լավ նպատակ, միայն այն պատճառով, որ Աստված է ներդրել դա մեր մեջ, և որ մենք կհասունացնենք այն՝ միայն, եթե Տերն աջակցի մեզ մշտապես: Ձեռնարկվող գործի հաջողությունն ավելի շատ կախված է Նրանից, քան մեզնից: Տերը մեզնից անհամեմատ ավելի շատ է ցանկանում մարդկանց դարձի բերել, որին մենք ձգտում ենք: Մենք ցանկանում ենք լինել սուրբ, իսկ Աստված փափագում է դա մեզնից միլիոն անգամ ավելի:

Լեգեոնականների համար հիմք պետք է լինի Աստծո՝ իրենց բարի Հոր հետ համագործակցելու գիտակցությունը իրենց կրկնակի աշխատանքի միջոցով՝ ինքնասրբացմամբ և մերձավորին ծառայելով: Այստեղ, բացի անվստահությունից, ուրիշ ոչինչ չի կարող խանգարել գործի հաջողությանը: Եթե ունենք բավականաչափ հավատք, ապա Աստված կօգտագործի մեզ, որպեսզի շահենք աշխարհը՝ Իր համար:

«Քանի որ ամեն ոք, որ Աստծուց է ծնված, հաղթում է աշխարհին: Եվ այս է այն հաղթությունը, որ հաղթում է աշխարհին՝ մեր հավատքը» (Ա Հվի. 5:4):

«Հավատալ՝ նշանակում է «ինքդ քեզ հանձնել» Կենդանի Աստծո Խոսքի ճշմարտությանը՝ հասկանալով և խոնարհաբար ճանաչելով, թե «Որքա՛ն անքննելի են Նրա դատաստանները, և անզննելի՝ Նրա ճանապարհները» (Հռմ. 11:33): Մարիամը, որն Ամենաբարձրյալի հավիտենական կամքով գտնվում է այդ «անզննելի ճանապարհների» կենտրոնում և Աստծո «անքննելի դատաստաններում», հավատքի վառ լույսի ներքո ենթարկվում է այդ ամենին պատրաստակամ սրտով և ամբողջությամբ ընդունելով այն ամենը, ինչ որոշված է աստվածային ծրագրով» (R MAT 14):

1. ԱՍՏՎԱԾ ԵՎ ՄԱՐԻԱՄԸ

Աստծո հովանու ներքո՝ Լեգեոնը կառուցված է Մարիամի հանդեպ ջերմեռանդ նվիրումի հիման վրա, որը «Ամենաբարձրյալի անպատմելի հրաշքն է», (Պիոս Թ Պապ): Բայց ո՞րն է հենց նրա՝ Մարիամի դերը Աստծո հետ հարաբերության մեջ: Ինչպես երկրային մյուս բոլոր արարածներին,

Աստված Մարիամին նույնպես ստեղծել է ոչնչից, և չնայած Աստված նրան հետո բարձրացրեց մինչև մեծ և անհասանելի շնորհի մակարդակին, այնուամենայնիվ, նա, հիրավի, ոչինչ է՝ իր Արարչի համեմատ: Իրականում, Սուրբ Կույսը մյուսներից շատ ավելի՛ Աստծո արարածն է, որովհետև Աստված նրա վրա ավելի շատ է ջանք թափել, քան Իր մյուս բոլոր արարածների վրա: Որքան ավելի Աստված մեծ գործեր է անում Մարիամի համար, այնքան ավելի նա դառնում է Աստծո ձեռքերի գործը:

Շատ մեծ գործեր է Աստված արել Կույսի համար: Մի ամբողջ հավերժություն Աստվածամոր և Փրկչի մասին գաղափարը Աստծո մտքում էր: Նա սերտորեն մասնակից դարձրեց Մարիամին Իր շնորհի ծրագրերի խորքերին՝ դարձնելով նրան Իր Որդու ճշմարիտ Մայրը, և Մայրը բոլոր նրանց, ովքեր Իր Որդու հետ միասին են: Աստված արեց այդ ամենը, նախ և առաջ, այն պատճառով, որ Մարիամը վերադարձնելու էր Իրեն ավելի շատ, քան մյուս բոլոր հոգով մաքուր արարածները՝ միասին: Երկրորդ, Աստված այսպիսով և մեր մտքի համար անհասանելի կերպով կմեծացներ փառքը, որ կստանար մեզնից նույնպես: Ուստի աղոթքը և սիրո ծառայությունը, որով մենք փոխհատուցում ենք Մարիամին՝ մեր Մորը և մեր փրկության Օգնողին, չեն կարող հակառակ լինել Աստծուն, Ով նրան այդպիսին է ստեղծել: Այն, ինչ տրվում է Աստվածածնին, վստահաբար և ամբողջովին հասնում է Աստծուն: Բայց այստեղ խնդիրը ոչ թե փոխանցման նվազեցման, այլ մեծացման մեջ է: Եվ Մարիամն ավելին է, քան մի հավատարիմ սուրհանդակ: Նա Աստծո վեհ ծրագրի մի կենսական տարրն է՝ այնպես, որ թե՛ Աստծո փառքը, թե՛ մեր շնորհն **ավելի մեծ են** Մարիամի ներկայության շնորհիվ:

Եվ քանի որ հավիտենական Հորը հաճելի է փառավորվել Մարիամի միջոցով, Նրան նմանապես հաճելի է Մարիամի միջոցով մարդկանց վրա փոխանցել իր առատ բարիքների և ամենակարողության զանազան զեղումները՝ սկսած այդ ամենի պատճառից՝ Աստվածային Երկրորդ Անձից, Ով մարդ դարձավ՝ մեր ճշմարիտ կյանքը և միակ փրկությունը:

«Եթե ես կամենում եմ կախման մեջ լինել Մորից, ապա միայն նրա համար, որ ստրուկ դառնամ Որդուն: Եթե ես ձգտում եմ դառնալ Մարիամի սեփականությունը, ապա այն բանի համար, որպեսզի Տիրոջն ավելի հստակ ցույց տամ իմ հպատակությունը» (Սբ Իլդեֆոնսուս):

2. ՄԱՐԻԱՄԸ՝ ԲՈԼՈՐ ՇՆՈՐՀՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԸ

Լեգեոնն անսահմանորեն վստահում է Մարիամին՝ իմանալով, որ Աստծո կամոք Սուրբ Կույսի զորությունն էլ անսահման է: Աստված Նրան տվել է այն ամենը, ինչ կարող էր: Այն ամենը, ինչ Մարիամը կարող էր ընդունել, ընդունել է լիությամբ: Մեզ համար Աստված հաստատել է Մարիամին՝ որպես շնորհի հատուկ միջոց: Գործելով Մարիամի հետ միասին՝ մենք մոտենում ենք Աստծուն ավելի արդյունավետ կերպով, և այսպիսով շահում ենք շնորհներն ավելի առատորեն: Իրականում մենք ընկղմվում ենք շնորհի հոսանքի մեջ, քանի որ Աստվածամայրը Հարսն է Սուրբ Հոգու, փոխանցողն է բոլոր շնորհների, որոնք վաստակել է Հիսուս Քրիստոսը: Մենք չենք ստանա ոչինչ, եթե չունենանք Մարիամի դրական միջամտությունը: Աստվածածինը չի բավարարվում միայն ամեն ինչ մեզ փոխանցելով, այլ ձե՛ռք է բերում այդ ամենը մեզ համար: Ներթափանցված Սուրբ Կույս Մարիամի այս գործառույթի հանդեպ հավատքով՝ Լեգեոնն իր բոլոր անդամներին հրահանգում է հատուկ կերպով ջերմեռանդ լինել նրա հանդեպ:

«Այն ջերմ սիրո մասին, որով Աստված ուզում է, որ պատվենք Մարիամին, երբ տեսնում ենք, որ Տերը Մարիամի մեջ ներդրել է բոլոր բարիքների ամբողջությունը, դատենք այսպես, որ մեր բոլոր հույսերը, շնորհները, փրկությունը, ամեն ինչ, անկասկած, հոսում է դեպի մեզ՝ Մարիամից» (Սբ Բեռնարդոս. «Sermo de Aquaeductu»):

3. ԱՆԱՐԱՏ ՄԱՐԻԱՄԸ

Լեգեոնի ջերմեռանդության երկրորդ կողմն ուղղված է Անարատ Հղությանը: Ամենաառաջին ժողովի ժամանակ Լեգեոնի անդամներն աղոթում և քննարկում էին Անարատ Կույսի փոքրիկ խորանի շուրջ, այն նույն խորանի, որն այժմ յուրաքանչյուր Լեգեոնի հանդիպումների կենտրոնն է: Ավելին, Լեգեոնի առաջին շունչն այն աղոթքն է, որը նվիրված է Մարիամի յուրահատուկ այդ արտոնությանը՝ Անարատ Հղացյալ լինելուն, ինչը նախապատրաստություն էր հետագա մյուս շնորհների և առավելությունների համար:

Անարատ Հղության մասին Աստծո կողմից ակնարկություն կա այն նույն վճռում, երբ Նա խոստացավ տալ մեզ Սուրբ Կույս Մարիամին: Արտոնությունը Մարիամի մի մասն է. նա՛ է Անարատ Հղացյալը: Եվ այս արտոնության հետ միասին նաև մարգարեություն է կատարվում դրա երկնային շարունակական ճշմարտությունների՝ Սուրբ Կույսի Աստվածային Մայրության, փրկության միջոցով օձի գլխի ջախջախման, Մարիամի՝ ամբողջ մարդկության Մայրը լինելու մասին:

«Թշնամություն պիտի դնեմ քո և կնոջ միջև, քո սերնդի ու նրա սերնդի միջև: Նա պիտի ջախջախի քո գլուխը, իսկ դու պիտի խայթես նրա գարշապարը» (Ծնն. 3:15):

Ամենակարող Աստծո կողմից սատանային հասցեագրված այս խոսքերին Լեգեոնը վերաբերվում է որպես մեղքի դեմ իր մղած պատերազմում իր ուժի և վստահության աղբյուրին: Լեգեոնը ողջ սրտով ձգտում է ամբողջովին լինել սերմ, լինել Մարիամի սերունդը, զավակները, քանի որ ա՛յդ է հաղթանակի գրավականը: Որքանով Լեգեոնը Անարատ Կույսին ավելի ու ավելի խորապես դարձնի իր Մայրը, այնքան ավելի ահեղ կլինի Լեգեոնի թշնամությունը չար ուժերի դեմ, և լիակատար՝ Լեգեոնի հաղթանակը:

«Հին և Նոր Կտակարանների գրքերը և Սրբազան Ավանդությունն ավելի հստակ են ցույց տալիս Աստվածածնի դերը փրկության ծրագրում և հրավիրում են մեր ուշադրությունն այդ փաստի վրա: Հին Կտակարանի գրքերը նկարագրում են փրկության պատմությունը, որով աստիճանաբար նախապատրաստվում է Քրիստոսի գալուստը: Առաջին փաստաթղթերը, որոնք ընթերցվում էին Եկեղեցում և հասկացվում հետագա և ավելի ամբողջա-

կան հայտնության լույսի ներքո, աստիճանաբար ավելի հստակ էին տալիս Կնոջ՝ Փրկչի Մոր պատկերը: Այս լույսի ներքո, Կույսն արդեն իսկ մարգարեությամբ նախատեսված էր օձին հաղթելու խոստման մեջ, որը տրվեց մեր նախածնողներին մեղքի մեջ ընկնելուց հետո (հմմտ.՝ Ծնն. 3:15)» (LG 55):

4. ՄԱՐԻԱՄԸ ՄԵՐ ՄԱՅՐՆ Է

Բայց եթե մենք պահանջում ենք որդիական ժառանգություն, ապա պիտի հարգենք Սուրբ Կույսի մայրությունը, որի միջոցով ստանում ենք ժառանգությունը: Մարիամի հանդեպ Լեգեոնի ջերմեռանդության երրորդ կողմը նրա հատուկ մեծարումն է՝ որպես մեր իրական Մայրը, որը, փաստացի, այդպես է:

Մարիամը դարձավ Քրիստոսի և մեր Մայրը, երբ հրեշտակի ողջույնին պատասխանեց իր խոնարհ համաձայնությամբ. «Ահավասի՛կ ես մնում եմ Տիրոջ աղախինը, թող քո խոսքի համաձայն լինի ինձ» (Ղկ. 1:38): Նրա մայրությունը հռչակվեց այն պահին, երբ այն հասավ իր լիարժեք ընդլայնմանը, այսինքն՝ երբ իրագործվեց փրկությունը: Գողգոթայի ցավերի մեջ Հիսուսը խաչի վրայից Աստվածամորն ասաց. «Ո՛վ կ՛ին, ահա՛ քո որդին», այնուհետև Սբ Հովհաննեսին ասաց. «Ահա՛ քո Մայրը» (Հվի. 19:26-27): Սբ Հովհաննեսի միջոցով այս խոսքերն ուղղված էին բոլոր ընտրյալներին: Իր համաձայնությամբ և ցավերով ամբողջովին համագործակցելով մարդկության հոգևոր ծննդյան գործում՝ Մարիամը ամենաամբողջական և ամենակատարյալ իմաստով դարձավ մեր Մայրը:

Լինելով ճշմարտապես Աստվածամոր երեխաները՝ մենք պետք է ինքներս մեզ դրսևորենք որպես այդպիսին՝ որպես շատ փոքրիկ երեխաներ՝ ամբողջովին կախված նրանից: Մենք պետք է ակնկալենք Մարիամից, որ նա մեզ կերակրի, ուղղորդի, սովորեցնի, բժշկի մեր հիվանդությունները, մխիթարի մեզ վշտերի մեջ, խորհուրդ տա մեզ մեր կասկածների մեջ, հետ կանչի մեզ, երբ մոլորվենք, և այսպես ամբողջովին հանձնվելով նրա խնամքին՝ կարողանանք նմանվել մեր ավագ եղբորը՝ Հիսուսին, և կիսել մեղքերի

դեմ պայքարելու և դրանք հաղթահարելու՝ Հիսուսի առաքելությունը:

«Մարիամը Եկեղեցու Մայրն է ոչ միայն այն պատճառով, որ Քրիստոսի Մայրն է և Նրա ամենամոտ գործակիցը՝ «նոր տնօրինության մեջ, ուր Աստծո Որդին, մարդկային բնություն վերցրեց նրանից, որպեսզի Իր Մարմնի Խորհուրդներով մարդուն ազատի մեղքից», այլ նաև այն պատճառով, որ Մարիամը «փայլում է բոլոր ընտրյալների համար՝ որպես առաքինությունների օրինակ»: Աշխարհում ոչ մի մայր իր նպատակը չի կարող սահմանափակել միայն նոր մարդ ծնելով, այլ պետք է ընդլայնի իր պարտականությունները՝ մինչև իր զավակին կերակրելը, դաստիարակելը: Այդպես էլ Անարատ Կույսը, Որդու փրկարար Ջոհաբերությանը ամբողջությամբ մասնակից լինելուց հետո, և այնքան հարազատ ձևով, որ Նրա կողմից արժանի եղավ կոչվելու ոչ միայն Հովհաննեսի մայրը, այլ նաև (եթե կարող ենք ասել) Մայրը ամբողջ մարդկության, որոնց ինչ-որ ձևով ներկայացնում էր Հովհաննեսը, այժմ շարունակում է երկնքից կատարել իր մայրական դերը՝ համագործակցելով յուրաքանչյուր փրկվածի աստվածային կյանքի ծնունդյան և զարգացման գործում: Սա մի գերազանց մխիթարական ճշմարտություն է, որն Իմաստնագույն Աստծո ազատ համաձայնությամբ մարդկության փրկության առեղծվածի մի բաղկացուցիչ մասն է, և այդ իսկ պատճառով բոլոր քրիստոնյաները պետք է հավատան դրան» (SM):

5. ԼԵԳԵՈՆԱԿԱՆ ՋԵՐՄԵՌԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ԼԵԳԵՈՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՏՆ Է

Լեգեոնի ամենասիրելի պարտականություններից մեկը պետք է լինի Աստվածածնի հանդեպ ամբողջ սրտով ջերմեռանդությունը: Լեգեոնը դա կարող է անել միայն իր անդամների միջոցով, այնպես որ յուրաքանչյուր անդամի խնդրում ենք այս հարցին վերաբերվել լուրջ խորհրդածությամբ և եռանդուն գործնականությամբ:

Եթե Աստվածածնի հանդեպ ջերմեռանդությունը լեգեոնականի ճշմարիտ հարգանքն է, այն պետք է լինի Լեգեոնի էական մասը՝ անդամակցության այնպիսի պարտավորություն, ինչպես ամենշաբաթյա հանդիպումներին մասնակցելը և ակտիվ աշխատանք կատարելը. բոլորը

պետք է մասնակցեն դրան կատարյալ միասնությամբ: Սա մի տեսակետ է, որն անդամները դեռ չեն կարող լիովին ընկալել:

Բայց այս միությունը շատ նուրբ է, քանի որ յուրաքանչյուր անդամ որոշ չափով կարող է կառավարել և վնասել այն: Այսպիսով, այս պարագայում յուրաքանչյուրին փոխանցվում է լուրջ վստահություն: Եթե կա թերություն, եթե լեգեոնականները «կենդանի վեմեր չեն... իբրև հոգևոր տաճար» (Ա Պետ. 2:5), ուստի Լեգեոնի կառուցվածքի կարևորագույն մասը թերի է: Որքան կենդանի վեմերը պակասում են, այնքան Լեգեոնի համակարգը ավելի և ավելի է փլուզվում. այն չի պաշտպանի և, հետևաբար, դժվարությամբ կպահի իր զավակներին: Ավելին, կնվազի կառույցի բարձր և սուրբ որակը, կամ կթուլանա հերոսական ջանադրությունների հենքը:

Այսինքն՝ հակառակ կողմից գալով՝ շեշտենք, որ երբ բոլորը համապատասխան կերպով կիրառեն լեգեոնական ծառայության վերոհիշյալ կետը, ապա Լեգեոնը կունենա և՛ մտքի, և՛ նպատակի, և՛ գործողության հիանալի միասնություն: Այս միասնությունը այնքա՛ն թանկ է Աստծո համար, որ Նա անհաղթահարելի զորություն է տվել դրան, այնպես որ, եթե անհատի համար Կույս Մարիամի հանդեպ իսկական ջերմեռանդությունը շնորհ ստանալու յուրահատուկ աղբյուր է, ապա երևակայե՛ք, թե ինչե՛ր կբերի այդ ջերմեռանդությունը մի կազմակերպության, որը հարատևում է մեկ մտքի մեջ՝ աղոթքով և Մարիամի հետ միասին (Գործք. 1:14), որն ամեն ինչ ստացել է Տիրոջից՝ այդ ամենին մասնակցելով հոգով և ամբողջովին մտնելով Աստծո շնորհների բաշխման ծրագրի մեջ: Մի՞թե այդպիսի կազմակերպությունը լցված չի լինի Սուրբ Հոգով (Գործք. 2:4), և մի՞թե սրա արդյունքում «բազում հրաշքներ և զարմանալի գործեր չեն կատարվի» (Գործք. 2:43):

«Սուրբ Կույսը, Վերնատանն աղոթելով առաքյալների հետ և անասելի ուժականությամբ նրանց տալով Իր սիրտը, Եկեղեցուն է բերում այն գանձը, որը պիտի առատանա Եկեղեցում հավիտյան՝ Մխիթարչի լիությունը՝ Քրիստոսի բարձրագույն պարգևը» (JSE):

6. ԵԹԵ ՄԻԱՅՆ ՄԱՐԻԱՄԸ ՀԱՅՏՆԻ ԼԻՆԵՐ

Այն քահանային, որը գրեթե հուսահատորեն պայքարում է կրոնական անտարբերության ծովում, նախնական նկատառման և գուցե Լեգեոնն արժևորելու համար, խորհուրդ ենք տալիս ընթերցել Հայր Ֆաբերի խոսքերը՝ վերցված Սբ Լուի-Մարի Մոնֆորտացու «Ճշմարիտ ջերմեռանդություն՝ Մարիամին» գրքի (Լեգեոնի համար այս գիրքը ոգեշնչման առատաբուխ աղբյուր է) համար գրված նրա նախաբանից: Հայր Ֆաբերի փաստարկն այն է, որ Կույս Մարիամին բավականաչափ չեն ճանաչում ու սիրում, որի հետևանքը հոգիների համար տխուր է. «Ջերմեռանդությունն Աստվածածնի հանդեպ սակավ, թույլ և աղքատ է: Հավատք չկա՛ դրանում: Սա՛ է պատճառը, որ Հիսուսը սիրված չէ, հերետիկոսները դարձի չեն գալիս, Եկեղեցին չի պայծառանում, իսկ այն հոգիները, որոնք կարող էին սրբանալ, փոքրանում ու չորանում են, Սուրբ Խորհուրդներին չեն մասնակցում, կամ հոգիներին չեն ավետարանում խանդավառությամբ: Հիսուս աչքի չի ընկնում այն պատճառով, որ Մարիամն անտեսված է: Հազարավոր հոգիներ կործանվում են, որովհետև Աստվածածինը հեռացված է նրանցից: Դա մենք անվանում ենք ջերմեռանդություն՝ Երանելի Կույսի հանդեպ, բայց իրականում դա չնչին և անարժան ստվեր է միայն, դա բոլոր հոգևոր պակասությունների և կործանման, չարիքների, բացթողումների և թուլությունների պատճառն է: Բայց եթե հավատում ենք սրբերի հայտնություններին, ապա պետք է հասկանանք, որ Աստված Իր Երանելի Մոր հանդեպ պահանջում է ավելի մեծ, լայն, ուժեղ և բավական այլ որակի ջերմեռանդություն... Թո՛ղ պարզապես մարդն ի՛նքը փորձի և կզարմանա՝ տեսնելով, թե որքան շնորհներ կգան այդ ամենի հետ միասին, և նրա հոգու փոխակերպումները շուտով կհամոզեն նրան, որ այդ ջերմեռանդությանը՝ որպես մարդու փրկության և Աստծո Արքայության գալստյան միջոց, գրեթե անհավանական արդյունավետություն ունի»:

«Հզոր Կույսին է շնորհված ջախջախել օձի գլուխը, և այն հոգիներին, որոնք միավորված են նրա հետ, և շնորհված մեղքը հաղթահարելու հնարավորությունը: Այս ճշմարտությանը մենք պետք է հավատանք անսասան հավատքով, ամուր հույսով:

Աստված կամենում է մեզ տալ ամե՛ն ինչ: Այժմ ամեն բան կախված է մեզնից և Քեզնից, Ո՛վ Դու, Աստվածամայր, որի միջոցով այս ամենը ստանում և հարստանում ենք, որի միջոցով ամեն ինչ փոխանցվում է մեզ: Ամեն ինչ կախված է մարդու և Մարիամի միությունից, որն ամեն ինչ ստանում է Աստծուց» (Գրաթրի):

7. ՄԱՐԻԱՄԻՆ ԲԵՐԵԼ ԱՇԽԱՐՀԻ ՄԵՋ

Եթե Մարիամի հանդեպ ջերմեռանդությունն այսպիսի հրաշքներ է գործում, ուրեմն հիմնական նպատակը պետք է լինի այդ ջերմեռանդությունն օգտագործելը և Աստվածամորն աշխարհի մեջ բերելը: Եվ ինչպե՞ս կարող է դա ավելի արդյունավետ կատարվել, եթե ոչ մի առաքելական կազմակերպության միջոցով. աշխարհականների միջոցով, որոնց թիվն ուրեմն սահմանափակ չէ, գործնական աշխարհականների, որոնք, ուրեմն, ներթափանցում են ամենուր՝ սիրելով Մարիամին ամբողջ ուժով և միավորելով մյուսների սրտերն այդ սիրո մեջ և օգտագործելով բոլոր հասանելի հնարավորությունները այդ նպատակն իրականացնելու համար:

Եվ այսպիսով, Մարիամի անունը կրելով անասելի հպարտությամբ՝ որպես նրա հանդեպ անսահման և մանկական վստահության վրա կառուցված մի կազմակերպություն, որը ծանրակշիռ է դարձնում այդ վստահությունը՝ սերմանելով այն իր անդամներից յուրաքանչյուրի սրտում և նրանց դարձնելով աշխատող մասնիկներ, որոնք գործում են հավատարմության և կարգուկանոնի կատարյալ ներդաշնակությամբ, Մարիամի Լեգեոնը չի գերագնահատում ինքն իրեն, այլ վստահության ճիշտ չափով հավատում է, որ իր համակարգը մի մեխանիզմ է, որը պետք է պարզապես գործադրվի ղեկավարության ձեռքով՝ աշխարհում տարածվելու համար, և որը Մարիամը կօգտագործի որպես միջոց՝ ավարտին հասցնելու համար իր մայրական աշխատանքը՝ հանուն հոգիների, և շարունակելու համար օձի գլուխը ջախջախելու իր հավերժական առաքելությունը:

«Ով Աստծո կամքն է կատարում, նա է իմ եղբայրը և քույրը, և մայրը» (Մրկ. 3:35): Ինչպիսի՛ հրաշք, ինչպիսի՛ պատիվ: Փառքի

ինչպիսի՛ աստիճանի վրա է բարձրացնում մեզ Քրիստոսը: Կանայք Երանելի են հռչակում Նրան, ով ծնել է Հիսուսին, բայց ի՞նչն է նրանց խանգարում մասնակցելու այդ նույն մայրությանը: Որովհետև Ավետարանն այստեղ խոսում է նոր սերնդի մասին, նոր ծնող լինելու մասին» (Սբ Հովհան Ոսկեբերան):

6
ՄԱՐԻԱՄԻ ՀԱՆԴԵՊ ԼԵԳԵՈՆԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. **Մարիամի հանդեպ Լեգեոնի ջերմեռանդ լինելու պարտականությունը՝ լուրջ խորհրդածությամբ և եռանդուն գործադրությամբ, դրված է յուրաքանչյուր անդամի վրա՝ որպես Լեգեոնի հանդեպ ծանրակշիռ վստահություն: Սա պետք է համարել լեգեոնական պարտականության հիմնական մաս՝ ավելի առաջնային, քան անդամների որևէ այլ պարտականություն *(տե՛ս Գլուխ 5՝ «Լեգեոնի ջերմեռանդական աշխարհայացքը», և Հավելված 5՝ «Բոլոր Սրտերի Թագուհի Մարիամի եղբայրությունը»):***

Լեգեոնի նպատակն է՝ Մարիամին բերել աշխարհ՝ որպես անսխալական միջոց՝ աշխարհը Հիսուսի համար շահելու նպատակով: Ակնհայտ է, որ եթե լեգեոնականի սրտում չկա Մարիամը, ապա այդ լեգեոնականը չի կարող որևէ դեր խաղալ այդ ամենի մեջ: Նա անջատված է լեգեոնական նպատակից: Նա անզեն զինվոր է, պոկված օղակ կամ, ավելի շուտ, մի կաթվածահար ձեռք, որը, ճիշտ է, դեռ միավորված է մարմնին, սակայն գործի համար պիտանի չէ:

Յուրաքանչյուր բանակում (նաև Լեգեոնում) զինվորին պետք է սովորեցնեն միավորվել իր զորահրամանատարի հետ, որպեսզի վերջինիս ծրագիրն իրագործվի սահուն կերպով և համաձայնեցված գործողություններով: Բանակը գործում է որպես մեկ միասնություն: Այս նպատակի համար

մանրամասնորեն սահմանված է վարժանքի և կարգուկանոնի մի համակարգ: Ավելին, պատմության բոլոր հզոր բանակների զինվորների մոտ կարելի է գտնել մի ուժգին նվիրվածություն՝ իրենց առաջնորդին, որն ամրացնում է առաջնորդի հետ նրանց միությունը, հեշտացնում է զոհողություններ անելը, որը պահանջում է առաջնորդի ծրագիրը: Այսպիսի առաջնորդի մասին կարելի էր ասել, որ նա իր զինվորների ոգեշնչումն ու հոգին է, նրանց սրտերում է, նրանց հետ միավորված է և այլն: Այդ ամենը նկարագրում են այդ առաջնորդի ազդեցությունը և արտահայտում մի որոշ ճշմարտություն:

Բայց այս միությունը լավագույն դեպքում միայն զգացմունքային կամ մեխանիկական է: Այդպիսին չէ հարաբերությունը քրիստոնյա հոգու և մոր՝ Մարիամի միջև: Ասել, որ Մարիամը հավատարիմ լեգեոնականի հոգում է, կնշանակեր նկարագրել անսահմանորեն ավելի պակաս ազդեցիկ միություն, քան փաստացի կա. միություն, որի էությունը Եկեղեցու կողմից ամփոփված է հետևյալ տիտղոսներով՝ «Աստվածածին՝ Մայր Շնորհի», «Միջնորդ Բոլոր Շնորհների»: Այս տիտղոսներում արտահայտված է Աստվածամոր իշխանությունը հոգու կյանքի վրա, որն այնքա՛ն լիակատար և սերտ է, որ նույնիսկ երկրային ամենամտերիմ կապը մոր և դեռ չծնված երեխայի միջև բավարար չէ նկարագրելու այդ մտերմությունը: Այլ բնական գործընթացներ ևս կարող են օգնել՝ հասկանալու Մարիամի դերը շնորհի ներգործությունների մեջ: Արյունը չի կարող շրջանառել առանց սրտի, աչքերն անհրաժեշտ կապն են տեսանելի աշխարհի հետ, և թռչունը, չնայած իր թևերը թափահարելուն, չի կարող թռչել առանց օդի օգնության: Այդպես էլ հոգին, ըստ աստվածային հաստատված կարգի, չի կարող, առանց Մարիամի, ինքն իրեն բարձրացնել Աստծո մոտ կամ կատարել Աստծո գործը:

Մարիամից այս կախվածությունը, չլինելով բանականության կամ զգացողությունների արարում, այլ աստվածային կարգադրություն, գոյություն ունի՝ նույնիսկ եթե այն նկատելի չէ: Բայց այս կախվածությունը կարող է և պե՛տք է լինի անչափ զորացած՝ անհատի վճռական մասնակցությամբ:

Մարիամի հետ ամուր միությամբ, որը (ըստ Սբ Բոնավենտուրայի) մեր Տիրոջ Արյան բաշխողն է, տրվում են սրբացման հրաշքներ և մարդկանց հոգիների նկատմամբ անհավատալի մի իշխանության աղբյուր: Ամեն ոք, որի առաքելության սովորական ոսկին չի կարող փրկագնել մեղքի գերությունից, ազատվում է, երբ Մարիամը Թանկարժեք Արյան զարդերով համալրում է այդ ոսկին, որը Մարիամը տալիս է որպես ընծա:

Այսպիսով, սկսելով ջերմեռանդ նվիրմամբ, հաճախակի նորոգելով այդ նվիրումը մի որոշակի արտահայտությամբ, որը մարմնավորում է այդ նվիրումը (օրինակ՝ «Ես ամբողջովին քոնն եմ, իմ Թագուհի՛, իմ Մա՛յր, և այն ինչ ես ունեմ, քոնն է»)՝ մեր հոգում Մարիամի մշտական ներգործության միտքը պետք է վերածվի այնպիսի մեթոդական և հստակ գործադրության, որպեսզի հոգին կարողանա ասել. «Շնչի՛ր Մարիամին, ինչպես մարմինը շնչում է օդը» (Սբ Լուի-Մարի դը Մոնֆոր):

Սուրբ Պատարագին, Սուրբ Հաղորդությանը, Սուրբ Հաղորդության երկրպագության ժամանակ, Վարդարան աղոթելիս, Խաչի Ճանապարհին և ջերմեռանդական այլ գործողություններում լեգեոնական հոգին պետք է ձգտի ինքն իրեն նույնացնել Մարիամի հետ և խորհրդածել փրկության Խորհուրդների շուրջ՝ այդ գերագույն հավատարիմ հոգու միջոցով, որն ապրեց դրանք Փրկչի հետ միասին և անփոխարինելի դեր խաղաց դրանց մեջ:

Ուրեմն, նմանվելով Սուրբ Կույսին, ջերմորեն շնորհակալություն հայտնելով նրան, ուրախանալով և տխրելով նրա հետ միասին, տրամադրելով նրան այն, ինչ Դանթեն անվանում է «երկար ուսում և մեծ սեր», մի քիչ խորհրդածելով նրա մասին հոգևոր կյանքի յուրաքանչյուր աղոթքում, աշխատանքի և գործողության մեջ, մոռանալ ինքդ քեզ և սեփական կարողություններդ՝ Մարիամից կախված լինելու համար. այս ամենի շնորհիվ լեգեոնականի հոգին այնքա՛ն է լցվում Սուրբ Կույսի պատկերով ու նրա մասին մտածումներով, որ երկու հոգին դառնում են մեկ: Մարիամի հոգու խորքում կորած լեգեոնականը մասնակից է լինում Մարիամի հավատքին, հեզությանը, նրա Անարատ Սրտին

(և հետևաբար՝ նրա աղոթքի զորությունը) ու քաղցրորեն փոխակերպվում է Քրիստոսին, ինչը մարդու ամբողջ կյանքի նպատակն է: Մինչդեռ, մյուս կողմից, Կույս Մարիամն իր լեգեոնականի միջոցով մասնակցում է նրա բոլոր պարտականություններին և մայրաբար խնամում հոգիները, այնպես որ՝ ամեն մեկի մեջ, որի համար աշխատանք է տանում լեգեոնականը, նաև իր լեգեոնական գործակիցների մեջ, ոչ միայն մեր Տիրոջ Անձն է տեսնվում և սպասարկվում, այլ տեսնվում և սպասարկվում է Մարիամի՛ կողմից՝ միևնույն բացառիկ սիրով և սնուցող խնամքով, որը նա տալիս էր Իր Աստվածային Որդու իրական մարմնին երկրային կյանքում:

Այսպիսով, երբ իր անդամներն աճում են որպես Մարիամի կենդանի կրկնօրինակներ, Լեգեոնն ինքն իրեն տեսնում է որպես ճշմարիտ Մարիամի՛ Լեգեոն՝ միավորված նրա առաքելությանը և երաշխավորելով նրա հաղթանակը: Լեգեոնը Մարիամին կբերի աշխարհ, իսկ Մարիամը լույս կբերի աշխարհին և կլուսավորի մերօրյա աշխարհն ամբողջությամբ:

«Մարիամի հետ ապրե՛ք ուրախությամբ, Մարիամի հետ տարե՛ք բոլոր ձեր փորձությունները, Մարիամի հետ աշխատեցե՛ք, Մարիամի հետ աղոթեցե՛ք, Մարիամի հետ նորոգվե՛ք, Մարիամի հետ հանգստացե՛ք: Մարիամի հետ փնտրե՛ք Հիսուսին, ձեր ձեռքերում կրե՛ք Հիսուսին և Հիսուսի ու Մարիամի հետ ընակություն հաստատե՛ք Նազարեթում: Մարիամի հետ գնացե՛ք Երուսաղեմ, մնացե՛ք Հիսուսի Խաչի կողքին, թաղվե՛ք Հիսուսի հետ: Հիսուսի և Մարիամի հետ նորից հարություն առե՛ք, Հիսուսի և Մարիամի հետ համբարձվե՛ք Երկինք, Հիսուսի և Մարիամի հետ ապրե՛ք և մահացե՛ք» (Թովմաս Գեմբացի, «Քարոզ՝ նորընծաներին»):

2. ՄԱՐԻԱՄԻ ԽՈՆԱՐՀՈՒԹՅԱՆԸ ՆՄԱՆՎԵԼԸ ԼԵԳԵՈՆԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՆ ՈՒ ՄԻՋՈՑՆ Է

Լեգեոնը խոսում է իր անդամների հետ բանակի և ճակատամարտերի տերմիններով: Եվ դա պատշաճ է, քանի որ Լեգեոնը գործիքն ու տեսանելի գործունեությունն է նրա, ով նման է կռվի դաշտում մարտնչող բանակի և ով ուժգին

պատերազմ է մղում՝ յուրաքանչյուր մարդու հոգու համար: Ավելին, զինվորական գաղափարը շատ է գրավում մարդկությանը: Լեգեոնականները, իմանալով, որ իրենք զինվորներ են, ոգևորվում են՝ զինվորական լրջությամբ մոտենալով իրենց աշխատանքին: Բայց լեգեոնականների պատերազմն այս աշխարհից չէ, և պետք է վարվի Երկնքի մարտավարությամբ: Կրակը, որը վառվում է ճշմարիտ լեգեոնական սրտերում, բոցավառվում է միայն փոքրիկ և ոչ երկրային ածուխներից: Հատկապես դրանցից է խոնարհության առաքինությունն այնքա՛ն չընկալված և արհամարված աշխարհի կողմից: Բայց այն ազնիվ և ուժեղ է, տալիս է արտասովոր ազնվություն և զորացնում է նրանց, ովքեր ձգտում են դրան և կիրառում են դա:

Լեգեոնի համակարգում խոնարհությունը յուրահատուկ տեղ է զբաղեցնում: Առաջին հերթին դա Լեգեոնի առաքելության գլխավոր գործիքն է: Որովհետև միջանձնային կապի արդյունավետության և զարգացման համար, որի վրա Լեգեոնը մեծապես հիմնված է իր աշխատանքում, Լեգեոնը կարիքն ունի մեղմ, ոչ ամբարտավան վարվելակերպով աշխատողների, իսկ դա բխում է միայն սրտի ճշմարիտ խոնարհությունից: Բայց Լեգեոնի համար իր արտաքին աշխատանքում խոնարհությունն ավելին է, քան սոսկ մի գործիք: Դա այդ գործողության հենց օրրանն է: Առանց խոնարհության՝ չի կարող լինել ո՛չ մի արդյունավետ լեգեոնական գործողություն:

Քրիստոսը, ասում է Սբ Թովմաս Աքվինացին, մեզ ամենից ավելի խոնարհությունն էր առաջարկում, քանի որ դրա շնորհիվ վերանում է մարդկանց փրկության գլխավոր խոչընդոտը: Մյուս բոլոր առաքինություններն իրենց արժեքը ստանում են դրանից: Միայն այն դեպքում, եթե կա խոնարհության, Աստված կպարգևի Իր շնորհները: Երբ խոնարհությունն անցնի, այդ շնորհների պարգևումը կդադարեցվի: Մարդեղությունը՝ բոլոր շնորհների աղբյուրը, կախված էր դրանից: «Մեծացուսցէ»-ի մեջ Մարիամն ասում է, որ իր մեջ Աստված ցույց տվեց Իր բազկի զորությունը, այսինքն՝ Մարիամի մեջ գործադրեց Իր ամենակարողությունը: Եվ Նա հռչակում է պատճառը. Մարիամի խոնարհությունն էր,

որ գրավեց Աստծո հայացքը և իջեցրեց Բարձրյալին՝ վերջ դնելու հին աշխարհին և սկիզբ դնելու նորին:

Բայց ինչպե՞ս կարող էր Մարիամը մեզ համար լինել խոնարհության օրինակ՝ հաշվի առնելով, որ նրա կատարելությունների գանձարանը ամբողջովին անսահման էր, փաստացի մոտենալով անվերջության եզրերին, և ինքն էլ գիտեր այդ մասին: Նա խոնարհ էր, որովհետև հավասարապես գիտակցում էր, որ առավել կատարյալ ձևով էր փրկված, քան մարդկանց զավակներից որևէ մեկը: Նա իր անճառելի սրբության յուրաքանչյուր ճառագայթի համար պարտական էր իր Որդու վաստակներին, և այդ միտքը անընդհատ վառ էր Սուրբ Կույսի մտքում: Նրա աննման բանականությունը լի էր այն գիտակցությամբ, որ ինքը ստացել էր ավելին, և ուրեմն Աստծո որևէ այլ արարած պարտական չէր Աստծուն այնքան շատ, որքան ինքը: Հետևաբար, Մարիամի խոնարհության բացառիկ և շնորհալի վերաբերմունքը դյուրին էր և հաստատուն:

Հետևաբար, ուսումնասիրելով Սուրբ Կույս Մարիամին՝ լեգեոնականները կսովորեն, որ ճշմարիտ խոնարհության էությունը ճանաչումն ու անկողմնակալ գիտակցումն է այն բանի, թե իսկապես ո՛վ է մարդն Աստծո առաջ, և հասկանալը, որ մարդու սեփականությունը միայն իր անարժանությունն է: Մնացած ամեն ինչ Աստծո ձրի պարգևն է մարդկային հոգուն, և միայն Նա կարող է ավելացնել, պակասեցնել կամ ամբողջապես վերցնել՝ ճիշտ այնպես, ինչպես որ միայն Ինքն է տվել ամեն ինչ: Մեր ենթարկվելու զգացումը ինքնին կերևա, երբ նախընտրենք խոնարհ և փոքր առաջադրանքները, պատրաստակամ լինենք տանելու արհամարհանք և մերժում, և, գլխավորապես, Աստծո կամքի արտահայտման հանդեպ այնպիսի վերաբերմունքի մեջ, որը կարտացոլի Մարիամի այն հռչակումը, թե «Ահավասի՛կ, ես մնում եմ Տիրոջ աղախինը» (Ղկ. 1:38):

Լեգեոնականի և իր Թագուհու անհրաժեշտ միությունը պահանջում է ոչ միայն այդ միության ցանկությունը, այլ նաև դրա ունակությունը: Մարդը կարող է վճռել լինել լավ զինվոր, բայց գուցե երբեք չունենա այն ունակությունները, որոնք նրան կդարձնեն զինվորական համակարգի

արդյունավետ մասնիկ: Արդյունքում այդ մարդու միությունն իր գեներալի հետ արդյունավետ չի լինի, այնպես որ նա կխոչընդոտի ռազմական ծրագրի իրագործմանը: Նմանապես, լեգեոնականը գուցե ձգտում է մեծ դեր ունենալ իր Թագուհու ծրագրում, բայց հնարավոր է, որ նա ի վիճակի չլինի ստանալու այն, ինչ Մարիամը ջերմորեն փափագում է տալ: Հասարակ զինվորի դեպքում այս անկարողության պատճառը կարող է լինել քաջության, խելքի, ֆիզիկական պատրաստվածության պակասը և այլն: Լեգեոնականի դեպքում անընդունակության պատճառը կլինի խոնարհության առաքինության բացակայությունը: Լեգեոնի նպատակն իր անդամների սրբությունն է և այդ սրբության շողարձակումը աշխարհի մարդկային հոգիների վրա: Բայց չի կարող լինել սրբություն՝ առանց խոնարհության: Ավելին, Լեգեոնի առաքելությունը իրագործվում է Մարիամի՛ միջոցով: Բայց չի կարող լինել Մարիամի հետ միություն՝ առանց Մարիամի հետ որևէ նմանության, իսկ նրա հետ նմանությունը կլինի քիչ, եթե նմանվողին պակասի Մարիամի խոնարհության հատուկ առաքինությունը: Եթե Մարիամի հետ միությունն անհրաժեշտ պայման է, եթե կարելի է այսպես ասել, արմատ է՝ լեգեոնական բոլոր գործողությունների համար, ապա հողը, որի մեջ մխրճված է այդ արմատը, խոնարհությունն է: Եթե այդ հողը թերի է, լեգեոնական կյանքը կթոռոմի:

Հետևաբար, հոգիների փրկության համար Լեգեոնի ճակատամարտը սկսվում է յուրաքանչյուր լեգեոնականի սրտում: Յուրաքանչյուրը պետք է ճակամարտ սկսի ինքն իր ներսում՝ իր սրտում վճռականորեն հաղթահարելով հպարտությունն ու եսասիրությունը: Որքա՛ն հոգնեցուցիչ է մարդու մեջ ընթացող այս սարսափելի պայքարը չարի արմատի դեմ, այս տևական մաքառումը՝ մաքուր դիտավորության համար: Սա ամբողջ կյանքում ընթացող մի ճակատամարտ է: Միայն սեփական ջանքերի վրա հիմնվելը կլինի ձախողում ամբողջ կյանքում, որովհետև «ես»-ը հարձակման է նետվում նույնիսկ ինքն իր դեմ: Ի՞նչ օգուտ կա սեփական մկաններից՝ նրա համար, ով պայքարում է սորուն ավազի մեջ: Անհրաժեշտ է ամուր հենարան:

Լեգեոնակա՛ն, քո ամուր հենարանը Մարիա՛մն է: Լիարժեք վստահությամբ հենվի՛ր նրա վրա: Նա երբեք քեզ հուսախաբ չի անի, որովհետև խորապես արմատավորված է այն խոնարհության մեջ, որը կենսական է քեզ համար: Աստվածածնի հանդեպ գործադրելով հավատարիմ վստահության ոգին՝ մենք կգտնենք խոնարհության գերագույն, պարզ և ամբողջական ճանապարհը, ինչը Սբ Լուի-Մարի դը Մոնֆորը բնորոշում է այսպես. «Շնորհի քիչ հայտնի գաղտնիքը, որ հնարավորություն է տալիս մեզ արագ և քիչ ջանքերով ինքներս մեզ դատարկել «ես»-ից, լցնել ինքներս մեզ Աստծով և դառնալ կատարյալ»:

Քննենք, թե ինչպես է դա տեղի ունենում: Լեգեոնականը, որը գալիս է դեպի Մարիամը, պետք է անպայման հրաժարվի իր «ես»-ից: Մարիամը վերցնում է այս շարժումը և բարձրացնում այն՝ դարձնելով այն գերբնական մահացում «ես»-ի համար, ինչը ի կատար է ածում քրիստոնեական կյանքի խիստ, բայց պտղաբեր օրենքը (Հվի. 12:24-25): Խոնարհ Կույսի կրունկը ջախջախում է եսասիրության օձին, որն ունի բազում գլուխներ, որոնք են.

ա) ինքնամեծարումը, որովհետև եթե Մարիամը, լինելով այնքան հարուստ կատարելություններով, որ Եկեղեցին նրան կոչում է «Հայելի Արդարության»՝ օժտված շնորհի անսահման զորությամբ, այնուամենայնիվ, ծնկի է իջել Աստծո առջև՝ որպես Տիրոջ խոնարհագույն աղախինը, ապա ինչպիսի՛ն պիտի լինի լեգեոնականների դերն ու վերաբերմունքը,

բ) սեփական «ես»-ը փնտրելը, որովհետև ինքն իրեն և իր ամբողջ ունեցվածքը՝ հոգևոր և աշխարհային, տված լինելով Մարիամին, որպեսզի նա այդ ամենն օգտագործի իր հայեցողությամբ, լեգեոնականը շարունակում է ծառայել նրան՝ լիարժեք առատաձեռնության միևնույն ոգով,

գ) ինքնաբավությունը, որովհետև Մարիամի վրա հույսը դնելու սովորությունն անխուսափելիորեն առաջացնում է անվստահություն սեփական անօգնական ուժերի հանդեպ,

դ) ինքնահավանությունը, որովհետև Մարիամի հետ համագործակցելու զգացումը բերում է սեփական անհամապատասխանության գիտակցմանը: Ի՞նչ է լեգեոնականը

ներդրել այդ համագործակցության մեջ, եթե ոչ միայն ցավալի տկարություններ,

ե) եսասիրությունը, որովհետև ի՞նչ կա այստեղ սիրելու: Լեգեոնականը, որ կլանված է իր Երկնային Թագուհու հանդեպ սիրո և հիացմունքի մեջ, դժվար թե շրջվի նրանից ինքն իրենով հիանալու համար,

զ) ինքնաբավարարվածությունը, որովհետև այս դաշինքում պետք է գերակշռեն բարձր չափանիշները: Լեգեոնականն ինքն իրեն ձևավորում է Մարիամի նմանությամբ և ձգտում է նրա դիտավորության կատարյալ մաքրությանը,

է) ինքն իրեն առաջ մղելը. մտածելով Մարիամի մտքերով՝ մարդն ուսումնասիրում է միայն Աստծուն: Տեղ չկա սեփական ծրագրերի կամ մրցանակի համար,

ը) ինքնագլխությունը. ամբողջովին հնազանդվելով Մարիամին՝ լեգեոնականը չի վստահում իր անձնական հակումների հուշումներին և ամեն ինչում վճռականորեն լսում է շնորհի շշուկները:

Լեգեոնականի մեջ, որն իսկապես մոռացել է իր «ես»-ը, Մարիամի մայրական ազդեցությունների հանդեպ արգելքներ չեն լինի: Մարիամը նրա մեջ կզարգացնի վերբնական էներգիա և զոհաբերություններ կատարելու կարողություն՝ դարձնելով նրան Քրիստոսի լավ զինվոր (Բ Տիմ. 2:3), որը կհամապատասխանի դժվարին ծառայությանը, որին կանչում է նրան այդ մասնագիտությունը:

«Աստծուն հաճելի է աշխատել ոչնչի վրա. այդ խոր հիմքից է, որ Նա բարձրացնում է իր զորությամբ ստեղծած արարածներին: Մենք պետք է լցվենք Աստծուն փառաբանելու նախանձախնդրությամբ և, միևնույն ժամանակ, համոզված լինենք այն տարածելու համար մեր անկարողության մեջ: Խորասուզվենք մեր անարժանության անդնդի մեջ, պատսպարվենք մեր փոքրության թանձր ստվերի տակ, հանգիստ սպասենք, մինչև Աստված հարմար կգտնի մեր գործուն ջանքերը դարձնել միջոցներ Իր փառքի համար: Այս նպատակի համար Նա կարող է օգտագործել մեր բնական սպասումներին լրիվ հակառակ միջոցներ: Հիսուս Քրիստոսից հետո ոչ ոք Աստծուն այնպես չի փառավորել, ինչպես Սուրբ Կույս Մարիամը, և սակայն միակ նպատակը, որին ուղղված էին Սուրբ Կույսի բոլոր մտքերը, իր սեփական ոչնչացումն էր: Նրա խոնարհությունը, թվում էր, թե կարող էր Աստծո ծրագրի համար

խոչընդոտ հանդիսանալ: Բայց ընդհակառակը, հենց այդ խոնարհությունն էր, որ հեշտացրեց Աստծո բազումողորմ ծրագրի կատարումը» (Գրու, «Հիսուսի և Մարիամի ներքինը»):

3. ՄԱՐԻԱՄԻ ՀԱՆԴԵՊ ՃՇՄԱՐԻՏ ՋԵՐՄԵՌԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆՈՒՄ Է ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ

Այս ձեռնարկում մեկ այլ տեղ շեշտվել է, որ մենք չենք կարող վերցնել և ընտրել Քրիստոսի մեջ ինչ-որ բաներ, որ չենք կարող ընդունել փառքի Քրիստոսին՝ առանց միևնույն ժամանակ մեր կյանքի մեջ բերելու ցավի և հալածանքի Քրիստոսին, որովհետև կա միայն մեկ Քրիստոս, Ում չի կարելի բաժանել: Մենք պետք է վերցնենք Նրան՝ այնպիսին, ինչպիսին կա: Եթե մենք հետևենք Նրան՝ փնտրելով խաղաղություն և երջանկություն, գուցե ինքներս մեզ գամված գտնենք խաչին: Հակադրությունները խառնված են, և անկարելի է դրանք բաժանել. չկա դափնեպսակ՝ առանց տանջանքի, չկա գահ՝ առանց փշերի, չկա փառք՝ առանց հանդգնության, չկա թագ՝ առանց խաչի: Ձգտելով հասնել մեկին՝ տեսնում ենք, որ ստանում ենք մյուսն էլ՝ դրա հետ միասին:

Եվ, իհարկե, նույն օրենքը վերաբերում է նաև մեր Երանելի Աստվածամորը: Նա ևս չի կարող բաժանվել մասերի, որոնց մեջ կարողանայինք ընտրել այն, ինչ մեզ հարմար է: Մենք չենք կարող միանալ Մարիամի ուրախություններին՝ առանց հայտնաբերելու, որ մեր սրտերը պատռվում են նրա տառապանքներով:

Եթե մենք ցանկանում ենք Քրիստոսի սիրելի աշակերտ Հովհաննեսի նման մեզ մոտ պահել Մարիամին (Հվհ. 19:27), ուրեմն մենք պետք է նրան ընդունենք ամբողջապես: Իսկ եթե մենք ուզում ենք ընդունել միայն նրա մի մասը, ապա դժվար թե նրան ընդունենք ընդհանրապես: Ակնհայտորեն, նրա հանդեպ ջերմեռանդության մեջ պետք է ապրել և վերարտադրել նրա անձնավորության և առաքելության յուրաքանչյուր կողմը: Այսինքն՝ նախ և առաջ չպետք է կենտրոնանալ միայն այն բաների վրա, որոնք մեզ համար թվում են

ամենակարևորը: Օրինակ՝ կարևոր է ընդունել Սուրբ Կույսին՝ որպես սքանչելի նմուշ, որի առաքինությունները պետք է յուրացնենք մեզ համար: Բայց այդպես վարվել և չանել ավելին՝ կլիներ նրա հանդեպ մի մասնակի և խղճուկ ջերմեռանդություն: Բավական չէ միայն նրան աղոթելը, նույնիսկ եթե շատ ենք աղոթում: Նույնիսկ բավական չէ իմանալ բազմաթիվ և զարմանալի շնորհները, որոնցով Սուրբ Երրորդության Երեք Անձերը ողողել են Սուրբ Կույսին, կառուցել նրա վրա և նրա միջոցով արտահայտել Իրենց սեփական հատկանիշները, և ուրախանալ այս ամենով: Հարգանքի այս ամբողջ տուրքը պատշաճ է նրան և պետք է տրվի նրան, բայց դրանք ավելին չեն, քան միայն ամբողջի մասերը: Մարիամի հանդեպ պատշաճ ջերմեռանդությունը հնարավոր է միայն նրա հետ միությամբ: Միությունը պարտադիր նշանակում է նրա հետ կյանքի ընդհանրություն, իսկ Մարիամի կյանքն այն չէ, որ հիացմունք պահանջի իր համար, այլ շնորհի փոխանցման մեջ է:

Մարիամի ամբողջ կյանքն ու ճակատագիրը եղել է մայրությունը, նախ՝ Քրիստոսի և հետո մարդկության համար: Դրա համար էր նա պատրաստվել և գոյության բերվել Սուրբ Երրորդության կողմից հավիտենական դիտավորությամբ, ինչպես նշում է Սբ Օգոստինոսը: Ավետման օրը Սուրբ Կույսը սկսեց իր հիանալի աշխատանքը և այդ ժամանակվանից ի վեր նա կատարում է իր տնային պարտականությունները: Որոշ ժամանակ դրանք կատարում էր Նազարեթում, բայց շուտով փոքրիկ այդ տունը ընդլայնվեց-դարձավ ամբողջ ընդարձակ աշխարհը, իսկ իր Որդին դարձավ ամբողջ մարդկությունը: Եվ այդպես շարունակվեց ամեն ինչ: Մարիամի տնային աշխատանքը շարունակվում է մշտապես, և այդ ընդարձակված Նազարեթում ոչինչ առանց նրա տեղի չի ունենում: Տիրոջ մարմնի հանդեպ ցանկացած խնամք միայն լրացնում է Աստվածամո՛ր խնամքը. առաքյալն իր աշխատանքը միայն հավելում է Աստվածամոր մայրական զբաղվածությանը: Եվ այդ իմաստով Աստվածամայրը կարող էր հայտարարել՝ «Ե՛ս եմ առաքելությունը», այն նույն կերպով, երբ ասաց. «Ե՛ս եմ Անարատ Հղությունը»:

Հոգիների հանդեպ մայրական խնամքը նրա հիմնական գործն է և հենց նրա կյանքը, հետևաբար՝ առանց նրա մայրական խնամքին մասնակցելու՝ չի կարող նրա հետ լինել իրական միություն: Ուստի ևս մեկ անգամ նշենք, որ Մարիամի հանդեպ Ճշմարիտ Ջերմեռանդությունն իր մեջ պետք է ներառի ծառայություն հոգիներին: Մարիամը՝ առանց մայրության, և քրիստոնյան՝ առանց առաքելության, կունենային միևնույն իմաստը: Թե մեկը և թե մյուսը կլինեին ոչ ամբողջական, անիրական, անբովանդակ, աստվածային գաղափարն աղավաղող:

Այդ պատճառով Լեգեոնը կառուցված չէ, ինչպես ոմանք ենթադրում են, երկու սկզբունքների վրա, որոնք են Աստվածամայրը և առաքելությունը, այլ միայն ու միակ Մարիամի՛ սկզբունքի վրա, իսկ այս սկզբունքն ընդգրկում է առաքելությունը և (ճիշտ հասկացված) ամբողջ քրիստոնեական կյանքը:

Հայտնի է, որ ցանկանալով մտածելը դատարկ գործընթաց է: Միայն խոսքերով Մարիամին մատուցված մեր ծառայությունները նույնպես դատարկ են: Պետք չէ՛ մտածել, որ առաքելական գործերը երկնքից կիջնեն նրանց վրա, ովքեր գոհանում են անգործ սպասելով, թե երբ դա տեղի կունենա: Ավելի շուտ պետք է վախենալ, որ այդ ծույլերը կշարունակեն իրենց անգործությունը: Միակ արդյունավետ միջոցը՝ ինքներս մեզ առաջարկելու որպես առաքյալներ, առաքելություն սկսելն է: Երբ այդ քայլն արվում է, Մարիամն անմիջապես ընդունում է մեր գործունեությունը և միացնում իր մայրական խնամքին:

Ավելին, Մարիամը կարիքն ունի մեր օգնության: Բայց այստեղ արդյոք այս միտքը չափազանցված չէ՞: Ինչպե՞ս կարող է այդքան հզոր Սուրբ Կույսը կախված լինել այդքան թույլ մարդկանց օգնությունից: Բայց, հիրավի, այդպես է: Դա աստվածային ծրագրի մի մասն է, որը պահանջում է մարդկային համագործակցություն, այսինքն՝ չի փրկում մարդուն այլ կերպ, բայց միայն՝ մարդու միջոցով: Ճշմարիտ է, որ Մարիամի շնորհի գանձարանը գերառատ է, բայց նա չի կարող օգտագործել այն առանց մեր օգնության: Եթե նա կարողանար կիրառել իր զորությունը

միայն իր սրտի թելադրանքով, ամբողջ աշխարհը մեկ ակնթարթում դարձի կգար: Բայց նա պետք է սպասի՝ մինչև որ մարդիկ օգնեն իրեն: Առանց դրա նա չի կարող իրականացնել իր մայրական առաքելությունը, և հոգիները սովամահ կլինեն և կմահանան: Այսպիսով, նա մեծ ուրախությամբ կընդունի բոլոր նրանց, ովքեր իսկապես իրենք իրենց դնում են Նրա տրամադրության տակ, և նա կօգտագործի նրանց բոլորին և յուրաքանչյուրին՝ ոչ միայն սրբերին և պատշաճներին, այլ նմանապես և՛ տկարներին, և՛ անհամապատասխաններին: Այսպիսով, նա բոլորի կարիքն ունի, և ոչ ոք չի մերժվի: Անգամ ամենափոքրը կարող է փոխանցել Մարիամի զորության մի մեծ մաս, իսկ ավելի լավերի միջոցով նա կարող է ցույց տալ իր ամբողջ զորությունը: Պատկերացնենք՝ ինչպես արևի շողերը կթափանցեն մաքուր պատուհանից ներս և դժվարությամբ՝ կեղտոտ պատուհանից ներս:

«Մի՞թե Քրիստոսն ու Մարիամը նոր Ադամն ու Եվան չեն, որոնց Խաչափայտը միացրեց տանջանքների և սիրո մեջ՝ մեր նախածնողների կողմից Եդեմում կատարված սխալն ուղղելու համար: Հիսուս Քրիստոսը շնորհների աղբյուրն է, իսկ Մարիամը՝ շնորհների խողովակը, շնորհների, որոնք մեզ պարգևում են հոգևոր վերածնունդ և օգնում հետ նվաճելու մեր երկնային հայրենիքը»:

«Տիրոջ հետ եկեք փառավորենք նրան, ում Տերը դարձրել է Ողորմության Մայրը, մեր Թագուհին, մեր ամենասիրալիր Մայրը, Տիրոջ շնորհների Միջնորդը, Տիրոջ գանձերի Բաշխողը: Աստծո Որդին Իր Մորը պարուրեց Իր Արքայության փառքի, մեծության ու զորության շողերով: Քանի որ Մարիամը միավորված էր Նահատակների Արքայի հետ՝ որպես Մայր և օգնական՝ մարդկությանը փրկելու հոգեզմայլ գործում, նա հավիտյան մնում է միացած Տիրոջ հետ՝ զգեստավորված Փրկագործության շնորհները բաշխելու գրեթե անսահմանափակ զորությամբ: Մարիամի կայսրությունն իր Որդու արքայության պես լայնածավալ է, իսկապես այնպես, որ Մարիամի ազդեցությունից ոչինչ չի վրիպում» (Պիոս ԺԲ Պապ, 1940 թ. ապրիլի 21-ի և 1945 թ. մայիսի 13-ի ճառերը):

4. ԵՌԱՆԴՈՒՆ ՋԱՆՔԵՐ ՄԱՐԻԱՄԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ոչ մի պարագայում Մարիամից կախված լինելու ոգին չի կարող արդարացում լինել քիչ ջանքեր գործադրելու կամ համակարգի թերությունների համար: Իրականում պետք է լինի ճիշտ հակառակը: Քանի որ մարդն աշխատում է Մարիամի հետ և Մարիամի համար՝ այդքան լիակատար ձևով, դա նշանակում է, որ պետք է տա նրան իր ամենաընտիր ընծան: Պետք է միշտ աշխատել ժրաջան, հմտորեն ու լավորակ: Ժամանակ առ ժամանակ սխալներ են հայտնաբերվել մասնաճյուղերում և անդամների մեջ, որոնք, թվում է, բավականաչափ ջանքեր չեն գործադրել Լեգեոնի սովորական աշխատանքում կամ տարածման ու նոր անդամների զորակոչման մեջ: Երբեմն հետևում է այսպիսի պատասխան. «Ես չեմ վստահում իմ սեփական ուժերին: Ես ամբողջովին հիմնվում եմ Աստվածամոր վրա, որպեսզի նա իր ձևով հասնի ճիշտ արդյունքի»: Հաճախ այսպիսի պատասխան ենք ստանում անկեղծ մարդկանցից, որոնք հակված են իրենց անգործությունը ներկայացնել որպես մի տեսակ առաքինություն, կարծես թե մեթոդը և ջանքը խոսում են հավատքի պակասի մասին: Նաև կարող է որոշակի վտանգ լինել՝ այս ամենին վերագրելու մարդկային գաղափարներ և մտածելու, որ եթե մենք այդքան հսկայական իշխանության գործիքներ ենք, ուրեմն կարևոր չէ, թե հատկապես որքան ջանքեր ենք գործադրում: Կարելի է պնդել, թե ինչո՞ւ մի աղքատ, որ միլիոնատիրոջ գործընկերն է, պետք է նեղություն կրի ավելորդ մի լումա դնելու համար՝ արդեն լիուլի ընդհանուր դրամապանակի մեջ:

Ուրեմն անհրաժեշտ է շեշտադրել մի սկզբունք, որով պետք է ղեկավարվի իր աշխատանքի հանդեպ լեգեոնականի վերաբերմունքը: Այսինքն՝ լեգեոնականները սոսկ գործիքներ չեն Մարիամի կատարած աշխատանքի մեջ: Նրա հետ իրական համագործակցության նպատակը մարդկային հոգիների հարստացումն ու ազատագրումն է: Այդ համագործակցության մեջ յուրաքանչյուրը տալիս է այն, ինչ մյուսը չի կարող տալ: Լեգեոնականը տալիս է իր գործն ու իր կարողությունները, այսինքն՝ ինքն իրեն ամբողջությամբ,

իսկ Մարիամը տալիս է ինքն իրեն՝ իր ամբողջ մաքրությամբ և զորությամբ: Յուրաքանչյուրը պարտավոր է տալ առանց վերապահումների: Եթե լեգեոնականը հարգի այս համագործակցության ոգին, Մարիամը երբեք որևէ բանի պակաս չի ունենա: Ուստի այս համագործակցության ապագան, կարելի է ասել, ամբողջովին կախված է լեգեոնականից, այնպես որ նա պետք է այդ գործին նվիրի իր ամբողջ մտավոր կարողությունը և ուժը՝ կատարելագործվելով խնամքով կիրառված մեթոդով և հարատևությամբ:

Եթե անգամ լեգեոնականը վստահ լինի, որ Մարիամը կապահովի ցանկալի արդյունքը՝ անկախ իր ջանքերից, այնուամենայնիվ, նա պե՛տք է ներդնի իր ջանքերն ամբողջությամբ և միևնույն եռանդով՝ ասես ամեն ինչ կախված է իր ջանքերից: Թեպետև հարկավոր է Մարիամի օգնության հանդեպ անսահմանափակ վստահություն տածել, բայց լեգեոնականի ջանքերը միշտ պետք է գործադրվեն առավելագույն չափով: Լեգեոնականի առատաձեռնությունը միշտ պետք է լինի նույնքան բարձր, որքան իր վստահությունը: Անսահման հավատքի և եռանդուն ու մեթոդական ջանքերի այս անհրաժեշտ համագործակցության սկզբունքն այլ կերպ արտահայտված է սրբերի կողմից, երբ նրանք ասում են, թե պետք է աղոթել այնպես, կարծես ամեն ինչ կախված է այդ աղոթքից և ոչինչ՝ մեր սեփական ջանքերից, և պետք է եռանդով աշխատել այնպես, կարծես ամեն ինչ կախված է այդ աշխատանքից:

Չի կարելի համաչափության մեջ դնել ջանքերի արդյունքը խնդրի բարդության սեփական գնահատականի հետ, կամ մտածել, թե «ինչպե՞ս անեմ, որ հնարավորինս քիչ ջանքերով հասնեմ նպատակիս»: Նույնիսկ աշխարհիկ հարցերում սակարկության այսպիսի ոգին մշտապես պարտվում է: Գերբնական հարցերում այն միշտ կձախողվի, որովհետև հրաժարվում է շնորհից, որից իսկապես կախված է ամեն բան: Ավելին, չի կարելի կախված լինել մարդկային դատողություններից: Ակնհայտ անհնարինությունը հաճախ քանդվում է մի հպումից, մինչդեռ մյուս կողմից, պտուղը, որին գրեթե հասնում ես, կարող է համառորեն խույս տալ ձեռքիցդ և, ի վերջո, ուրիշի ձեռքն ընկնել: Հոգևոր

հարթության վրա հաշվենկատ մարդը կսուզվի ավելի ու ավելի փոքր բաների մեջ և, ի վերջո, կհասնի հոգևոր անպտղության: Միակ վստահելի ճանապարհը մնում է անսահմանափակ ջանադրությունը: Յուրաքանչյուր առաջադրանքի մեջ՝ փոքր թե մեծ, լեգեոնականը պետք է գործադրի գերագույն ջանքեր: Միգուցե, այդ աստիճանի ջանքերի կարիք չկա: Միգուցե մի հպումը բավական է աշխատանքն ավարտելու համար, և եթե աշխատանքի ավարտը լիներ միակ նպատակը, ապա արդարացված կլիներ գործադրել միայն այդքան ջանքեր, և ոչ ավելին: Ինչպես Բայրոնն է ասում, ոչ ոք չի բարձրացնի Հերկուլեսի մականը՝ ջախջախելու մի թիթեռ կամ տրորելու մի մոծակ:

Լեգեոնականները պետք է գիտակցեն, որ իրենք ուղղակի չեն աշխատում արդյունքների համար: Նրանք աշխատում են Մարիամի համար՝ անկախ նրանից, թե առաջադրանքը պարզ է թե բարդ, և յուրաքանչյուր աշխատանքի մեջ լեգեոնականը պետք է տա իր լավագույնը՝ լինի դա փոքր կամ մեծ ջանադրություն: Դրանով արժանանում ենք լիարժեք համագործակցությանը Մարիամի հետ, այնպես, որ նույնիսկ հրաշքներ կկատարվեն այնտեղ, որտեղ անհրաժեշտ է: Եթե մենք անում ենք մի փոքր բան, բայց ամբողջ սրտով, Մարիամը կգա զորությամբ և այդ թույլ շարժմանը կտա հսկայի ուժ: Եթե լեգեոնականն արել է այն ամենը, ինչ կարող էր և դեռ միլիոնավոր մղոններ հեռու է հաջողությունից, Մարիամը կկամրջի այդ հեռավորությունը՝ լեգեոնականի հետ իր միասնական աշխատանքը հասցնելով իդեալական ավարտին:

Եվ նույնիսկ եթե լեգեոնականը պահանջվածից տասնապատիկ ավելի եռանդ դնի իր աշխատանքի մեջ այն կատարելագործելու համար, այնուամենայնիվ, իր արածի ամենափոքրիկ մասնիկն էլ ի զուր չէ. որովհետև, մի՞թե իր ամբողջ աշխատանքը չի ծառայում Մարիամին և նրա հսկայական ծրագրին և նպատակին: Այդ հավելյալ ջանքերը Մարիամը կընդունի ուրախությամբ, կբազմապատկի դրանք ավելիով և դրանցով կհոգա Աստծո տան մեծ կարիքները: Ոչ մի բան չի կորում այն ամենից, ինչ հանձնվում է Նազարեթի հոգատար տնտեսուհու ձեռքերին:

Բայց եթե մյուս կողմից լեգեոնականի բերած նպաստը ավելի խղճուկ և սակավ լինի, քան ինչը որ ողջամտորեն կարելի էր պահանջել նրանից, այդ ժամանակ կպակասի նաև Մարիամի առատաձեռն օգնությունը: Մարիամի հետ միության շնորհիվ շահելիք բարիքները, որ այնքան լի են եզակի հնարավորություններով, չեն օգտագործվում լեգեոնականի անփութության հետևանքով: Օ՛, ինչպիսի՛ տխուր կորուստ է հոգիների համար, և հենց իր՝ լեգեոնականի համար, իր սեփական կարողությունների հույսին մնալը:

Ուրեմն, անօգուտ է լեգեոնականի համար արդարացնել իր քիչ ջանքերը կամ անփույթ մեթոդները՝ ասելով, թե ամեն ինչ Մարիամի վրա է հիմնված: Անկասկած, Մարիամի հանդեպ այդ տեսակ վստահությունը, որը դրդում է նրան սահմանափակել իր ճիգերը, կլիներ թույլ և անարգ մի արարք: Նա փորձում է Մարիամի ուսերին բարդել այն բեռը, որը կարող է կրել իր սեփական ուժերով: Կարո՞ղ է արդյոք որևէ սովորական ասպետ ծառայել իր սիրելիին այդքան տարօրինակ կերպով:

Այսպիսով, ենթադրելով, որ ոչինչ չի ասվել այս նյութի շուրջ, եկեք մեկ անգամ ևս հաստատենք լեգեոնականի և Մարիամի միության հիմնական սկզբունքը: Լեգեոնականը պետք է տա իր կարողության առավելագույնը: Մարիամի գործը չէ՝ մատակարարել այն, ինչ լեգեոնականը մերժում է տալ: Պատշաճ չէր լինի Մարիամի համար իր լեգեոնականին ազատել այն ջանքերից, մեթոդներից, համբերությունից, մտքերից, որոնք նա կարող է ապահովել, և որոնք լեգեոնականը պարտավոր է ներդնել Աստծո գանձարանում:

Մարիամը ցանկանում է տալ առատորեն, բայց միայն առատաձեռն հոգիներին: Ուստի, ցանկանալով, որ իր լեգեոնական զավակները սուզվեն իր անսահմանության մեջ, նա մտահոգված կոչ է անում նրանց, իր Որդու խոսքերով, ծառայել «ամբողջ սրտով, հոգով, մտքով և ամբողջ զորությամբ» (Մրկ. 12.30):

Լեգեոնականը պետք է Մարիամին դիմի միայն լրացնելու, մաքրագործելու, կատարելագործելու, բնականը գերբնական դարձնելու, մարդկային թույլ ջանքերը զորացնելու համար՝ հասնելու համար անհնարինին: Սակայն դրանք

զորավոր բաներ են: Սա կարող է նշանակել, որ լեռները կպոկվեն իրենց հիմքերից և ծովը կնետվեն, բլուրները կհավասարվեն, և շավիղները կուղղվեն՝ առաջնորդելու համար դեպի Աստծո թագավորություն:

«Մենք բոլորս անպիտան ծառաներ ենք, բայց ծառայում ենք մի Տիրոջ, Ով լիակատար տնտես է, Ով չի թողնում, որ ոչինչ կորչի, նույնիսկ մեր հոնքերից կաթող ոչ մի կաթիլ, ինչպես Իր երկնային ցողը: Ես չգիտեմ, թե ինչ ճակատագիր է սպասվում այս գրքին. արդյոք կվերջացնեմ այն, թե՞ չեմ ավարտի այս էջը, որի վրայով սահում է իմ գրիչը: Բայց այն, ինչ ես գիտեմ, բավական է, որպեսզի այս գործի մեջ ներդնեմ իմ ուժերի ու օրերի մնացած մասը՝ լինեն դրանք մեծ կամ փոքր» (Ֆրեդերիկ Օզանամ):

5. ԼԵԳԵՈՆԱԿԱՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՍՏԱՆՁՆԵՆ ՍԲ ԼՈՒԻ-ՄԱՐԻ ԴԸ ՄՈՆՖՈՐԻ ՋԵՐՄԵՌԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԻԱՄԻ ՀԱՆԴԵՊ

Ցանկալի է, որ Մարիամի հանդեպ լեգեոնական ջերմեռանդության կիրառումը ամփոփվի և հատկապես բնորոշվի այնպես, ինչպես սովորեցրել է Սբ Լուի-Մարի դը Մոնֆորը «Ճշմարիտ Ջերմեռանդությունը» կամ «Ստրկություն Մարիամի համար» անվանումների ներքո, և որը սրբորեն պահված է իր երկու գրքերում՝ «Ճշմարիտ Ջերմեռանդությունը Սուրբ Կույսի հանդեպ» և «Մարիամի գաղտնիքը» (տե՛ս Հավելված 5):

Այդ ջերմեռանդությունը պահանջում է պաշտոնական մուտք Մարիամի հետ միության մեջ, որտեղ յուրաքանչյուրը տալիս է նրան իր ամբողջ էությունը՝ իր բոլոր մտքերով, արարքներով, և՛ հոգևոր, և՛ ժամանակավոր ունեցվածքով՝ անցյալի, ներկայի և ապագայի, առանց պահելու նույնիսկ ամենափոքրիկ իրը: Մի խոսքով, Մարիամին նվիրվողը ինքն իրեն դնում է ստրուկին հավասար կարգավիճակում՝ ոչինչ չունենալով, և ամբողջությամբ կախված լինելով Մարիամից, և բացարձակապես նրա տրամադրության տակ:

Բայց երկրային ստրուկը շատ ավելի ազատ է, քան Մարիամին նվիրված ստրուկը: Առաջինն իր մտքերի ու

անձնական կյանքի տերն է, և այսպիսով կարող է ազատ լինել ամեն ինչում, որ կարևոր է իր համար: Բայց Մարիամին հանձնվողը տալիս է ամեն ինչ՝ իր յուրաքանչյուր միտքը, հոգեվիճակը, թաքնված հարստությունները և անմնացորդ ինքնությունը: Ամեն ինչ՝ մինչև վերջին շունչը, տալիս ենք իրեն, որպեսզի նա այդ ամենը ծախսի Աստծո համար: Դա մարտիրոսության, Աստծո հանդեպ անձնազոհության տեսակ է, իսկ Մարիամն այդ անձնազոհության խորանն է: Որքա՛ն նման է սա Քրիստոսի անձնազոհությանը, որը ևս սկսվեց Մարիամի գրկում, հրապարակավ հաստատվեց Մարիամի ձեռքերում ընծայման ժամանակ, ընդգրկեց Քրիստոսի կյանքի յուրաքանչյուր պահը և ավարտվեց Գողգոթայի վրա՝ Մարիամի սրտի խաչի վրա:

Ճշմարիտ Ջերմեռանդությունը սկսվում է Աստվածամոր հանդեպ պաշտոնական Նվիրագործման արարողությամբ, բայց այն սկզբունքորեն իրականանում է այդ նվիրման հետագա ապրումի մեջ: Ճշմարիտ Ջերմեռանդությունը պետք է ներկայացնի ոչ թե գործողություն, այլ վիճակ: Քանի դեռ Մարիամը չի տիրապետում նվիրագործվողի ամբողջ կյանքին և ոչ թե պարզապես այդ կյանքի րոպեներին և ժամերին, Նվիրագործման արարողությունը, նույնիսկ եթե հաճախ կրկնվի, ունի միայն անցողիկ աղոթքի արժեք: Այն նման է տնկված, բայց երբևէ արմատներ չունեցող ծառի:

Բայց դա չի նշանակում, որ մարդու միտքը պետք է սևեռված մնա այդ Նվիրագործման արարողության վրա: Ճիշտ ինչպես մարդու ֆիզիկական կյանքը կախված է շնչառությունից և սրտի զարկերից, նույնիսկ եթե դա գիտակցաբար չենք տեսնում, այդպես է նաև Ճշմարիտ Ջերմեռանդության պարագայում: Նույնիսկ եթե նկատելի չէ, այն անընդմեջ ներգործում է հոգու վրա: Բավական է, եթե Մարիամին պատկանելության գաղափարի շուրջ ժամանակ առ ժամանակ խորհենք և դա ակնհայտ դարձնենք գործողություններով և կարճ աղոթքներով՝ այն պայմանով, որ մենք մշտապես գիտակցենք Մարիամից կախված լինելու փաստը, միշտ գոնե աղոտ հիշենք դրա մասին և գործադրենք դա մեր կյանքի բոլոր իրավիճակներում:

Եթե այս ամենում կա ջերմություն, դա կարող է օգնել, իսկ եթե ոչ, այն չի հաղորդում ջերմեռանդության արժեքը: Հաճախ, փաստացի, ջերմությունը մեղմացնում է իրականությունը և վերացնում կախվածությունը:

Լավ հիշե՛ք հետևյալը. Ճշմարիտ Ջերմեռանդությունը կախված չէ որևէ տեսակի խանդավառությունից կամ զգացմունքներից: Ինչպես ցանկացած վերամբարձ կառույց, այն կարող է երբեմն վառվել արևի շողերով, մինչդեռ դրա խոր հիմքը, որի վրա այն կանգնած է, կարող է լինել սառը՝ ժայռի պես:

Բանականությունը սովորաբար սառն է: Լավագույն լուծումը կարող է լինել սառը: Հավատքը ինքնին կարող է լինել սառը՝ ադամանդի պես: Բայց սրանք են Ճշմարիտ Ջերմեռանդության հիմքերը: Դրանց մեջ հիմնվելով՝ Ճշմարիտ Ջերմեռանդությունը կհարատևի, և սառնամանիքն ու փոթորիկը, որոնք պատճառ են դառնում լեռների փլուզման, ավելի ուժեղ կդարձնեն այն:

Շնորհները, որոնք եկել են Ճշմարիտ Ջերմեռանդության միջոցով, և այն դիրքը, որն այն զբաղեցնում է Եկեղեցու ջերմեռանդական կյանքում, ողջամտորեն ցույց է տալիս, որ դա ճշմարիտ պատգամ է երկնքից, և հենց այն է, ինչը որ Սուրբ Լուի-Մարի դը Մորֆորը հստակ կերպով պնդում է: Նա դրա հետ կապում է հսկայական խոստումներ և լավատեսորեն հաստատում է, որ այդ խոստումները կկատարվեն, եթե առաջադրված պայմանները կատարվեն:

Եվ ամենօրյա փորձի վերաբերյալ խոսե՛ք նրանց հետ, ում համար այդ ջերմեռանդության գործադրությունն ավելին է, քան մակերեսային մի բան, և կտեսնեք, թե ինչպիսի՛ լիակատար համոզումով կխոսեն այն մասին, թե ինչ է դա տվել իրենց: Հարցրե՛ք նրանց. գուցե իրենց զգացմունքների կամ երևակայության զոհե՞րն են: Նրանք միշտ կհայտարարեն, որ այդ մասին հարց անգամ լինել չի կարող. պտուղները չափազանց ակնհայտ են՝ մտածելու համար, թե նրանք խաբված են:

Եթե արժեքավոր է ի մի բերել նրանց փորձը, ովքեր ուսուցանում, հասկանում և կիրառում են Ճշմարիտ Ջերմեռանդությունը, անկասկած է թվում, որ դա խորացնում է

ներքին կյանքը՝ կնքելով այն անեսասեր և մաքուր դիտավորության հատուկ բնույթով: Կա առաջնորդության և պաշտպանվածության զգացողություն, մի ուրախ վստահություն, որ այժմ մեր կյանքը նվիրված է լավագույն գործին: Կա մի գերբնական աշխարհայացք, մի վճռական քաջություն, ավելի հաստատուն հավատք, որը մարդուն ամուր կերպով պահում է յուրաքանչյուր առաքելական ձեռնարկի մեջ: Կա քնքշություն և իմաստություն, որը պահում է ուժն իր ճիշտ տեղում: Կա նաև այդ ամենի պաշտպանը՝ մի քաղցր խոնարհություն: Այնպիսի շնորհներն են գալիս, որ մենք նույնիսկ չենք գիտակցում դրանց արտառոց լինելը: Հաճախ լսում ենք մի մեծ աշխատանքի կոչ, որն ակնհայտորեն վեր է մեր արժանիքներից և բնական ունակություններից: Բայց դրա հետ միասին գալիս են այնպիսի օգնություններ, որոնք ունակ են դարձնում առանց հանձնվելու կրել այդ փառավոր, բայց ծանր բեռը: Մեկ խոսքով, ի պատասխան այն սքանչելի զոհողության, որը մատուցում ենք Ճշմարիտ Ջերմեռանդությամբ՝ ինքներս մեզ վաճառելով ստրկության, շահում ենք հարյուրապատիկը՝ խոստացված նրանց, ովքեր իրենք իրենց նվիրաբերում են Աստծո մեծագույն փառքի համար: Այս պարագայում, երբ ծառայում ենք՝ ղեկավարում ենք, երբ տալիս ենք՝ ստանում ենք, երբ հանձնվում ենք՝ հաղթում ենք:

Որոշ մարդիկ իրենց հոգևոր կյանքը, կարծես, իջեցնում են մինչև պարզ եսասիրական շահույթ ստանալու կամ կորցնելու աստիճանը: Նրանք շփոթվում են այն առաջարկից, որ իրենց գանձերը պետք է նվիրաբերեն մեր հոգիների Մորը: Կարելի է լսել հետևյալը. «Եթե ես ամեն ինչ տամ Մարիամին, արդյոք այս աշխարհից հեռանալու պահին դատարկաձեռն չե՞մ մնա իմ Դատավորի առջև և, գուցե, ստիպված լինեմ երկար ժամանակ մնալ Քավարանում»: Այս հարցին կա մի անսովոր գրավիչ պատասխան. «Ո՛չ, ամենևին ո՛չ, քանի որ Մարիամը ներկա է դատավարությանը»: Այս պատասխանի միտքը շատ խորն է:

Բայց Նվիրագործման դեմ առարկության պատճառը սովորաբար ավելի շատ զարմանքն է, քան եսասիրությունը: Դժվար է հասկանալ, թե ինչպես այն ամենը, ինչի համար մենք պարտավոր ենք աղոթել, օրինակ՝ ընտանիքը,

ընկերները, հայրենիքը, Պապը և այլն, կշահեն, եթե մարդն անմնացորդ նվիրումով ընծայաբերի իր հոգևոր գանձերն Աստվածամորը: Եկե՛ք այս բոլոր մտավախությունները մի կողմ թողնենք և համարձակորեն նվիրվենք: Ամեն ինչ ապահով է Աստվածամոր հետ, նա Աստծո գանձերի Պահապանն է: Նա ունակ է լինել նրանց մտահոգությունների Պահապանը, ովքեր վստահում են նրան: Ուրեմն, քո կյանքի բոլոր արժեքների հետ միասին քո ամբողջ պատասխանատվությունը՝ պարտականություններդ և պարտավորություններդ, ընծայի՛ր Սուրբ Կույսի մեծ, վեհ սրտին: Քեզ հետ իր հարաբերություններում Աստվածամայրը գործում է այնպես, կարծես, քեզնից բացի, ուրիշ զավակ չունի: Անկասկած, նա մտահոգ է քո փրկության, քո սրբության, քո բազմաթիվ կարիքների վերաբերյալ: Երբ աղոթում ես Սուրբ Կույսի դիտավորությունների համար, դու ի՛նքդ ես նրա առաջին դիտավորությունը:

Բայց երբ մեկը համոզվում է զոհողության գնալ, չենք կարող գտնել մի ապացույց առ այն, որ որևէ կորուստ չի ունենալու այդ հանձնառության մեջ: Որովհետև դա ապացուցելը կքայքայի նվիրման հիմքը և կզրկի զոհողության բնույթը իր հիմնարար արժեքից: Բավական է հիշել, թե ինչպես մի ժամանակ անապատում տասը կամ տասներկու հազար բազմություն էր հավաքվել, և ամենքը քաղցած էին (Հվի. 6: 1-14): Այդ բազմության մեջ միայն մեկն էր իր հետ ուտելիք բերել, նրա ունեցածը հինգ հաց էր և երկու ձուկ, և նրանից խնդրեցին դրանք տալ ընդհանուր բարօրության համար, և նա սիրով արեց դա: Հետո այդ սակավ հացն ու ձուկն օրհնվեցին, կիսվեցին և բաշխվեցին բազմությանը: Եվ վերջում այդ բազմությունը կերավ մինչև հագենալը, այդ թվում և նա, ով տվեց այդ յոթ կտոր ուտելիքը: Եվ դեռ ավելացավ ուտելիքով լի տասներկու զամբյուղ: Արդ, երևակայենք, որ այդ տղան ասեր. «Ի՞նչ օգուտ այս մի քանի հացից ու ձկներից այսպիսի մեծ բազմության համար: Բացի դրանից՝ ինձ դրանք պետք են իմ ընտանիքի անդամների համար, որ այստեղ ինձ հետ են և նույնպես քաղցած են: Ես չեմ կարող տալ»: Բայց ո՛չ, նա տվեց, և իր հարազատների հետ միասին կատարված հրաշքից ստացավ շատ ավելին,

քան տվել էր: Եվ, անկասկած, նրանք կարող էին պահանջել տասներկու լի զամբյուղ, եթե ցանկանային:

Այսպես են միշտ վարվում Հիսուսն ու Մարիամն անշահախնդիր հոգիների հետ, որոնք ինչ ունեն, տալիս են առանց պայմանի ու հաշվի: Նրանց ընծան բավական է բավարարելու հսկայական բազմության կարիքները: Իսկ նրանց սեփական կարիքները և դիտավորությունները, որոնք այդ պահին, երբ թվում է, թե կորցնում են, ամբողջապես բավարարվում են, և դեռ ավելի՛ շատ են ստանում աստվածային առատաձեռնության շնորհիվ:

Ուստի, եկե՛ք շտապենք Մարիամի մոտ՝ մեր խղճուկ հացի նկանակներով ու ձկներով և դրանք դնենք նրա ձեռքերի մեջ, որպեսզի Հիսուսը և Մարիամը կարողանան բազմապատկել դրանք և կերակրել այս աշխարհի անապատի միլիոնավոր քաղցած հոգիները:

Կարիք չկա Նվիրագործման արարողության պատճառով փոխելու մեր սովորական աղոթքներն ու գործողությունները: Կյանքի սովորական ճանապարհները կարող են շարունակվել, և կարող ենք շարունակել մեր սովորական աղոթքները մեր դիտավորություններով և բոլոր հատուկ նպատակներով, բայց ապագայում հնազանդվելով Մարիամի բարեհաճությանը:

«Մարիամը մեզ ցույց է տալիս իր Աստվածային Որդուն՝ ուղղելով մեզ նույն առաջարկը, որը ժամանակին արեց Կանայի մարդկանց. «Ինչ որ ձեզ ասի, արեք» (Հվհ. 2:5): Եթե, Աստվածամոր հրահանգի համաձայն, մեր ամենօրյա գործողությունների հազարավոր մանրուքներով լի անհամ ջուրը լցնենք Գթության և Ջոհաբերության սափորների մեջ, ապա Կանայի հրաշքը կկրկնվի: Ջուրը կվերափոխվի համեղ գինու, այսինքն՝ կվերափոխվի ամենաընտրյալ շնորհների՝ մեզ և ուրիշների համար» (Քուզեն):

7

ԼԵԳԵՈՆԱԿԱՆԸ ԵՎ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Հատկանշական է, որ Մարիամի Լեգեոնի միասնական առաջին քայլը եղել է Սուրբ Հոգուն դիմելը՝ կոչով և աղոթքով, որին հաջորդել է Վարդարանի աղոթքը՝ ուղղված Մարիամին և Իր Որդուն:

Նաև նշանակալից է այն փաստը, որ երբ տարիներ անց ձևավորվեց Վեքսիլլումը, անսպասելիորեն ի հայտ եկավ նույն հատկանիշը. Սուրբ Հոգին այդ խորհրդանշանի գլխավոր առանձնահատկությունն է: Տարօրինակ էր, որովհետև այդ ձևավորումն արդյունք է գեղարվեստական, այլ ոչ թե աստվածաբանական մտածողության: Ոչ կրոնական խորհրդանշանը՝ վերցված հռոմեական Լեգեոնի դրոշից, հարմարեցվեց Մարիամի Լեգեոնի նպատակներին: Աղավնին փոխարինում է արծվին, և Աստվածամոր պատկերը փոխարինում է կայսեր կամ կոնսուլի պատկերին: Իսկ վերջնական արդյունքում պատկերված է Սուրբ Հոգին, իր կենարար ազդեցությունները Աստվածամոր միջոցով հեղում է աշխարհի վրա և Իրենը դարձնելով Լեգեոնը:

Ավելի ուշ, երբ նկարվեց Տեսսերայի պատկերը, այն արտահայտում էր նույն բարեպաշտական գաղափարը. Սուրբ Հոգին թևածում է Լեգեոնի վրա: Սուրբ Հոգու զորությամբ երկարատև պատերազմն ավարտվում է. Աստվածածինը տրորում է օձի գլուխը, նրա գնդերը շարժվում են դեպի չար ուժերի դեմ կանխատեսված հաղթանակը:

Ի հավելումն, ևս մեկ ուշագրավ հանգամանք՝ Լեգեոնի գույնը կարմիրն է և ոչ թե կապույտը, ինչպես կարելի էր սպասել. դա կապված է պատկերի մի փոքր մանրամասնության հետ, որ Վեքսիլլումի մեջ Աստվածածնի գլխի լուսապսակի և Տեսսերայի գույնն է: Զգում էին, որ Լեգեոնի խորհրդաբանությունը պահանջում էր Աստվածածնին պատկերել Սուրբ Հոգով լցված, և սա պետք է արտահայտվեր նրա լուսապսակի գույնով: Հետագա միտքն այն էր, որ Լեգեոնի գույնը պետք է լիներ կարմիր: Նույն միտքն արտահայտված է

Տեսսերայի պատկերում, որտեղ Աստվածածինը պատկերված է որպես աստվածաշնչյան հրեղեն սյուն՝ ամբողջովին լուսավորված և բոցավառված Սուրբ Հոգով:

Այսպիսով, երբ գրվեց Լեգեոնի խոստումը, թեև սկզբում զարմանալի էր, բայց պարզ էր, որ խոստումն ուղղված էր Սուրբ Հոգուն, այլ ոչ թե Լեգեոնի Թագուհուն: Կրկին կարևոր է նշել, որ Սուրբ Հոգին է աշխարհի մշտական վերանորոգողը՝ պարգևելով նույնիսկ ամենափոքր անհատական շնորհները, իսկ Նրա օգնականը միշտ Աստվածածինն է: Մարիամի մեջ Սուրբ Հոգու ներգործությամբ մարդացավ Աստծո Որդին: Դրանով մարդկությունը միավորվեց Սուրբ Երրորդությանը: Աստվածածինն իր հատուկ, եզակի հարաբերությունն ունի Աստվածային յուրաքանչյուր Անձի հետ: Մարիամի եռակի հարաբերությունը պետք է առնվազն նկատվի մեր կողմից, որքանով որ աստվածային տնօրինությունների մասին նրա ընկալումը շնորհի ամենաընտիր տեսակն է՝ մի բան, որը չի նախատեսվել, որ մեզ համար հասանելի լինի:

Սրբերը պնդում են, որ անհրաժեշտ է իրարից տարբերել Աստվածային երեք Անձերը՝ յուրաքանչյուրին ցուցաբերելով համապատասխան վերաբերմունք: Այս պահանջի առնչությամբ Աթանասյան Հավատամքը պարտադրող է և տարօրինակ կերպով սպառնացող. սա բխում է այն փաստից, որ արարչագործության և մարդեղության վերջնական նպատակը Սուրբ Երրորդության փառավորումն է:

Բայց ինչպե՞ս կարող է այս անհասկանալի խորհուրդը գոնե աղոտ կերպով ապացուցվել: Անշուշտ, միայն աստվածային լուսավորությամբ, բայց այդ շնորհը կարելի է վստահորեն հայցել նրանից, ում համար աշխարհում առաջին անգամ վճռականորեն հարազատ դարձվեց Սուրբ Երրորդության վարդապետությունը: Այդ պատմական դեպքն Ավետումն էր: Հրեշտակապետի միջոցով Սուրբ Երրորդությունը ներկայացավ Մարիամին. «Սուրբ Հոգին կգա քո վրա, և Բարձրյալի զորությունը հովանի կլինի քեզ, որովհետև Նա, որ քեզնից է ծնվելու, սուրբ է և Աստծո Որդի կկոչվի» (Ղկ. 1:35):

Այս հայտնության մեջ բոլոր Երեք Աստվածային Անձերը հստակորեն բնորոշվում են. առաջինը Սուրբ Հոգին է, որի

միջոցով կատարվեց Մարդեղությունը, երկրորդը՝ Բարձրյալը, Հայրը՝ որից Նա պետք է ծնվեր, երրորդը՝ Մանուկը, «Ով մեծ կլինի և Բարձրյալի որդի կկոչվի» (Ղկ. 1:32):

Աստվածային Անձերի նկատմամբ Մարիամի հատուկ հարաբերությունների մասին մտորումն օգնում է մեզ զանազանել երեք Անձերը:

Երրորդության Երկրորդ Անձի հանդեպ Մարիամի հարաբերությունն ամենամոտն է մեր հասկացողությանը. դա Մարիամի Մայրությունն է: Բայց նրա մայրությունն ունի մտերմություն, հարատևություն և մի որակ, որոնք վեր են մարդկային սովորական հարաբերություններից: Հիսուսի և Մարիամի դեպքում հոգիների միությունն առաջնային էր, իսկ մարմնական միություն՝ երկրորդական, այնպես որ, նույնիսկ երբ ծննդյան պահին մարմնապես նրանք բաժանվեցին, նրանց միությունը չընդհատվեց, այլ շարունակվեց և բարձրացավ առավել անընմբռնելի զորությամբ մտերմության և միության աստիճանների, այնպես որ Մարիամը Եկեղեցու կողմից կարող է հայտարարվել ոչ միայն Երկրորդ Աստվածային Անձի «օգնական», Համափրկագնող՝ փրկչագործության մեջ, Շնորհների Միջնորդ, այլ գործնականում նաև՝ «Նրա նմանը»:

Ինչ վերաբերվում է **Սուրբ Հոգու հետ Մարիամի հարաբերությանը**, ապա Մարիամին ընդունված է կոչել Սուրբ Հոգու տաճարը կամ սրբավայրը, սակայն այս բառերը բավական չեն՝ արտահայտելու այն իրականությունը, ըստ որի՝ Սուրբ Հոգին միացավ Մարիամին այնպես, կարծես Մարիամին արժանապատվությամբ դրեց Իր կողքին: Մարիամն այնպես ներառվեց Սուրբ Հոգու մեջ, միացավ Նրան, կենդանացավ Նրանով, որ կարծես Սուրբ Հոգի՛ն է Մարիամի հոգին: Մարիամը պարզապես Սուրբ Հոգու ներգործության գործիքը կամ փոխանցողը չէ, այլ Նրա բանական, գիտակից գործընկերն է՝ այնպես, որ երբ Մարիամն է գործում, նաև Սուրբ Հոգին է գործում, որ եթե չի ընդունվում Աստվածածնի միջամտությունը, ուրեմն չի ընդունվում նաև Սուրբ Հոգու միջամտությունը:

Սուրբ Հոգին Սեր է, Գեղեցկություն, Հզորություն և Իմաստություն, Մաքրություն և այն ամենը, ինչ Աստծուց է:

Երբ Նա իջնում է առատությամբ՝ տալիս է այն ամենը, ինչի կարիքը մենք ունենք, և նույնիսկ մեր ամենաբարդ խնդիրները գտնում են իրենց լուծումը՝ համաձայն Աստծո կամքի: Նա, ով Սուրբ Հոգուն այսպես դարձնում է իր հենարանը (Սղմ. 77:7-8), մտնում է ամենակարողության հոսանքի մեջ: Եթե Սուրբ Հոգու շնորհներն այդպես ընդունելու պայմաններից մեկն Աստվածամոր և Սուրբ Հոգու հարաբերությունները հասկանալն է, ապա մյուս կենսական պայմանն է՝ գնահատել Սուրբ Հոգուն՝ որպես ճշմարիտ, յուրահատուկ Աստվածային Անձ՝ մեզ համար Իր առանձնահատուկ առաքելությամբ: Մենք չենք գնահատի Սուրբ Հոգուն, եթե մեր մտքերը ողջամտորեն և հաճախակի չուղղենք դեպի Նա: Պարզապես մի հայացք դարձնելով դեպի Նա՝ Օրհնյալ Սուրբ Կույսի հանդեպ յուրաքանչյուր ջերմեռանդություն կարող է դառնալ ընդարձակ ճանապարհ դեպի Սուրբ Հոգին: Լեգեոնականները հատկապես կարող են կիրառել Վարդարանը: Վարդարանը ոչ միայն առաջնային ջերմեռանդությունն է Սուրբ Հոգու հանդեպ՝ այն պատճառով, որ այն գլխավոր աղոթքն է՝ ուղղված Աստվածամորը, այլ նաև Վարդարանի քսան խորհուրդները վկայում են փրկագործության դրամայում Սուրբ Հոգու գլխավոր միջամտությունների մասին:

Հավիտենական Հոր հետ Մարիամի հարաբերությունն ընդունված է անվանել դստեր հարաբերություն: Այս տիտղոսով բնորոշվում է. ա) նրա կարգավիճակը՝ որպես «առաջինը բոլոր արարածներից, Աստծո ամենաընդունելի զավակը, Աստծուն ամենամոտն ու ամենասիրելին» (Սբ Ջոն Հենրի Նյուման), բ) Հիսուս Քրիստոսի հետ Մարիամի միության լիությունը, որը նրան տանում է դեպի նոր հարաբերություններ Հոր* հետ՝ դրանով իսկ արտոնելով նրան, որ խորհրդաբանորեն անվանվի Հոր Դուստր և գ) Հոր հետ ակնհայտ նմանությունը, որը Մարիամին ունակ է դարձրել, որպեսզի աշխարհում տարածի Հորից բխող հավիտենական լույսը:

Սակայն «Դուստր» տիտղոսը գուցե մեզ բավականաչափ չի պարզաբանում, թե նրա հարաբերությունն Աստծո հետ

* Որպես Աստծո Մայր՝ Մարիամը ավելի հարազատ է դառնում Հորը (Լեպիսիե):

ինչ ազդեցություն ունի մեզ համար, որ Աստծո և Մարիամի երեխաներն ենք: «Հայրը փոխանցել է Աստվածամորն Իր պտղաբերությունն այնքան, որքան մի պարզ արարած ունակ էր ընդունելու, որպեսզի նրան ուժ տա՝ աշխարհ բերելու Իր Որդուն և Նրա Խորհրդավոր Մարմնի բոլոր անդամներին» (Սբ Լուի-Մարի դը Մոնֆոր): Սուրբ Կույսի հարաբերությունը Հոր հետ հիմնարար, մշտապես ներկա գործոն է յուրաքանչյուր հոգուն կյանք պարգևելու մեջ: Աստծո պահանջն է, որ ինչ Ինքը տալիս է մարդուն, պետք է արտացոլվի մարդու կողմից գնահատման և Աստծո հետ համագործակցության մեջ: Ուստի, Հոր և Մարիամի այդ կենսատու միությունը պետք է դառնա մեր մտքերի առարկան. Առաջարկում ենք, որպեսզի «Հայր Մերը», որը հաճախ լեգեոնականների շուրթերին է, ասվի այդ հատուկ դիտավորությամբ: Այդ աղոթքը ստեղծել է մեր Տեր Հիսուս Քրիստոսը, և հետևաբար, այն խնդրում է ճշմարիտ պարգևներ՝ անգերազանցելի ձևով: Եթե այդ աղոթքն արտասանենք ճիշտ ընկալմամբ և Կաթողիկէ Եկեղեցու ոգով, այն պետք է կատարելապես ի կատար ածի հավիտենական Հորը փառաբանելու նպատակը՝ ընդունելով Նրա հավերժահոս ընծան մեզ համար՝ Մարիամի միջոցով:

«Որպես Աստվածամոր հանդեպ կախվածության ապացույց՝ հիշենք, որ պարտավոր ենք ունենալ այն օրինակը, որը մեզ տալիս են Հայրը, Որդին և Սուրբ Հոգին: Հայրը չտվեց և չի տա Որդուն այլ կերպ, քան միայն Մարիամի միջոցով: Աստված ունի զավակներ՝ Մարիամի միջոցով, և տալիս է շնորհներ՝ Մարիամի միջոցով: Աստծո Որդին աշխարհի համար ձևավորվեց Մարիամի՛ միջոցով, և ամեն օր ձևավորվում և ծնվում է միայն նրա՛ միջոցով և Սուրբ Հոգու հետ միությամբ, և Աստված փոխանցում է Իր արժանիքներն ու առաքինությունները միայն Մարիամի՛ միջոցով: Սուրբ Հոգին ձևավորեց Հիսուս Քրիստոսին Մարիամի՛ միջոցով, և ձևավորում է Աստծո Խորհրդավոր Մարմնի անդամներին՝ միայն նրա՛ միջոցով, և միայն նրա միջոցով է հաղորդում Իր բարեհաճություններն և պարգևները: Սուրբ Երրորդության այսքան շատ օրինակներից հետո կարո՞ղ ենք արդյոք ինքներս մեզ, առանց բացարձակապես կույր լինելու, բաժանել Մարիամից, և չվիրվել նրան և կախված չլինել նրանից: (Սուրբ Լուի-Մարի դը Մոնֆոր, «Ճշմարիտ Ջերմեռանդություն», պարագրաֆ 140):

8

ԼԵԳԵՈՆԱԿԱՆԸ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

1. ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԸ

Արդեն նշվել է, որ լեգեոնականների սրբությունը հիմնարար կարևորություն ունի Լեգեոնի համար: Ավելին, սրբությունը գործունեության առաջնային միջոցն է, որովհետև լեգեոնականը կարող է ուրիշներին փոխանցել շնորհ՝ միայն այնքան, որքան ի՛նքն ունի շնորհ: Հետևաբար, լեգեոնականը սկսում է իր ծառայությունը՝ Մարիամի միջոցով Սուրբ Հոգու շնորհով լցվելու և աշխարհը վերանորոգելու համար Սուրբ Հոգու զորության գործիքը լինելու խնդրանքով:

Շնորհները, որոնք այսպիսով խնդրում ենք, բոլորը մեկ առ մեկ բխում են Գողգոթայի վրա Հիսուս Քրիստոսի զոհաբերումից: Սբ Պատարագով Խաչյալի Զոհաբերությունը շարունակվում է մարդկանց մեջ: Պատարագը լոկ անցյալի խորհրդանշական վերարտադրությունը չէ, այլ իրապես և իրականում մեր մեջ ներկա է դարձնում այն գերագույն գործողությունը, որը մեր Տերն ի կատար ածեց Գողգոթայի վրա և որը փրկեց աշխարհը: Խաչն ավելի արժեքավոր չէր, քան Սուրբ Պատարագը, որովհետև երկուսն էլ մեկ և միևնույն Զոհաբերությունն են, և ժամանակն ու տարածությունը, Աստծո ամենակարողության շնորհիվ, մի կողմ են մղվում: Քահանան և զոհը նույնն են, միակ տարբերությունը միջավայրն է: Սուրբ Պատարագը պարունակում է այն ամենը, ինչ Քրիստոս ընծայեց Աստծուն, և այն ամենը, ինչ նա ձեռք բերեց մարդկության համար, իսկ Պատարագին բոլոր մասնակիցների ընծաները միանում են Քրիստոսի մեծ ընծայաբերությանը:

Հետևաբար, լեգեոնականը պետք է մասնակցի Պատարագին, եթե իրապես տենչում է առատորեն բաժին ունենալ փրկագործության պարգևների մեջ՝ իր և մերձավորների համար: Լեգեոնն այս հարցում իր անդամների վրա չի դնում

ոչ մի պարտավորություն՝ այն պատճառով, որ հնարավորությունները ու հանգամանքները շատ տարբեր են: Այնուամենայնիվ, հոգ տանելով նրանց և նրանց առաքելության մասին՝ հորդորում և աղաչում է հաճախակի մասնակցել Սուրբ Պատարագին, եթե հնարավոր է, ամեն օր, և Պատարագի ժամանակ ստանալ Սուրբ Հաղորդություն:

Լեգեոնականները գործում են՝ Մարիամի հետ միավորված: Դա հատկապես վերաբերում է Պատարագին մասնակցությանը:

«Սուրբ Պատարագը, ինչպես գիտենք, բաղկացած է երկու հիմնական մասերից՝ Խոսքի Պատարագ և Սուրբ Հաղորդության Պատարագ: Կարևոր է նշել, որ այդ երկու մասերն այնքան սերտ են կապված իրար, որ կազմում են պաշտամունքի մեկ գործողություն» (SC 56): Այս պատճառով հավատացյալները պետք է մասնակցեն ողջ Պատարագին, որտեղ պատրաստված են և՛ Աստծո Խոսքի սեղանը և՛ Քրիստոսի Մարմնի սեղանը, որպեսզի հավատացյալները դաստիարակվեն և սնվեն (SC 48, 51):

«Պատարագի Սուրբ Զոհի ընթացքում Խաչի զոհաբերությունը չենք հիշատակում պարզապես խորհրդանշական կերպով: Ընդհակառակը, Գողգոթայի զոհը, որպես հարատև իրականություն, մուտք է գործում անմիջապես ներկայի մեջ: Տարածությունը և ժամանակը ջնջվում են: Այստեղ ներկա է նույն Հիսուսը, որ մեռավ Խաչի վրա: Ամբողջ հասարակությունը միավորվում է Նրա սուրբ զոհաբերվող կամքին և իր առջև ներկա Հիսուսի միջոցով նվիրվում է երկնային Հորը՝ որպես կենդանի ողջակեզ: Այսպիսով, Սուրբ Պատարագը խորապես իրական փորձառություն է՝ Գողգոթայի իրականության փորձառությունը: Ցավի, ապաշխարանքի, սիրո, ջերմեռանդության, հերոսության, զոհաբերության ոգու մի հեղեղ հոսում է Խորանից և փոխանցվում աղոթող հասարակությանը» (Կարլ Ադամ, «Կաթողիկեության ոգին»):

2. ԽՈՍՔԻ ՊԱՏԱՐԱԳԸ

Նախ և առաջ Պատարագը հավատքի տոնակատարություն է, այն հավատքի, որը ծնվում է մեր մեջ և սնվում՝ Աստծո Խոսքը լսելով: Այստեղ հիշենք Ընդհանուր

Պատարագամատույցի խոսքերը (N° 9). «Երբ Եկեղեցում ընթերցվում է Սուրբ Գիրքը, Ի՛նքն Աստված է խոսում Իր ժողովրդի հետ, և Քրիստոսը, որ ներկա է Իր խոսքում, հռչակում է Ավետարանը: Դրա համար Աստծո Խոսքի ընթերցումը ծեսի ամենակարևոր տարրերից մեկն է, և բոլոր ներկաները պետք է այն լսեն **պատկառանքով**»: Մեծ կարևորություն ունի նաև քարոզը: Այն կիրակնօրյա և տոնական Պատարագի անհրաժեշտ մասն է, իսկ մյուս օրերին ցանկալի է, որ լինի: Քարոզիչը, ըստ կարելվույն, բացատրում է Սրբազան տողերը Եկեղեցու վարդապետության լույսի ներքո՝ ամրապնդելու ներկա գտնվողների հավատքը:

Երբ մենք ներկա ենք Խոսքի ծիսակատարությանը, Աստվածածինը մեզ համար տիպար է, որովհետև «Կույսը հավատքով ականջալուր էր Աստծո խոսքին, որը նրա համար դարպաս էր և ճանապարհ դեպի Աստվածային Մայրությունը» (MCul 17):

3. ԲՈՒՆ ՊԱՏԱՐԱԳԸ՝ ՄԱՐԻԱՄԻ ՀԵՏ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Տերը չսկսեց փրկագործության Իր աշխատանքը՝ առանց Մարիամի համաձայնության, որը խնդրվեց հանդիսավորությամբ և տրվեց ազատորեն: Նմանապես, Տերը չավարտեց Իր գործը Գողգոթայում՝ առանց Մարիամի ներկայության և համաձայնության: «Մարիամի և Հիսուսի տառապանքների և կամքի այս միավորումից Մարիամը ամենաարժանավոր ձևով վաստակեց շնորհը՝ դառնալու կործանվող աշխարհի վերականգնողը, և բաշխողը բոլոր շնորհների, որոնք Հիսուսը ձեռք բերեց Իր մահվամբ և արյամբ» (AD12): Նա կանգնած էր Գողգոթայի վրա՝ Հիսուսի Խաչի կողքին՝ այնտեղ ներկայացնելով ողջ մարդկությանը, և յուրաքանչյուր նոր Պատարագի ընթացքում Փրկչի ընծայաբերությունն իրականացվում է նույն պայմաններում: Մարիամը կանգնած է Խորանի մոտ՝ նույնկերպ, ինչպես կանգնած էր Խաչի մոտ: Նա այնտեղ է՝ ինչպես միշտ, համագործակցելով Հիսուսի հետ. նա այն Կինն է՝ ի սկզբանե կանխատեսված, որը ջախջախում է օձի գլուխը: Հետևաբար, Սրբուհի

Մարիամի հանդեպ սիրառատ ուշադրությունը պետք է կազմի մեր յուրաքանչյուր ուշիուշով մասնակցած Սուրբ Պատարագի մի մասը:

Գողգոթայում Մարիամի հետ միասին ներկա էին Լեգեոնի ներկայացուցիչներ՝ հարյուրապետը և նրա մարդիկ, որոնք ցավալի մասնակցություն ունեցան Զոհի ընծայաբերմանը, թեև նրանք իրականում չգիտեին, որ խաչում էին Փառքի Տիրոջը (Ա Կրնթ. 2:8): Եվ տեղի ունեցավ հրաշքների հրա՛շքը. շնորհ հեղվեց նրանց վրա: Սուրբ Բեռնարդոսն ասում է. «Նայեցե՛ք և տեսե՛ք, ի՛նչ խորաթափանց է հավատքի հայացքը: Ուշադիր կերպով նայեցե՛ք՝ ինչ սրատես է այն: Գողգոթայի վրա հավատքը հարյուրապետին ունակ դարձրեց տեսնելու կյանքը մահվան մեջ և մահվան շնչում ճանաչելու ինքնակալ Հոգին»: Լեգեոնականները, նայելով իրենց մահացած և աղավաղված Զոհին, հռչակեցին. «Արդարև, Աստծո Որդի էր սա» (Մտթ. 27:54):

Այս կոպիտ մարդկանց դարձի գալը Աստվածամոր աղոթքների քաղցր և անսպասելի պտուղն էր: Նրանք առաջին օտար երեխաներն էին, որոնց մարդկության Մայրն ընդունեց Գողգոթայի վրա, բայց նրանք լեգեոնականի անունը մշտապես սիրելի դարձրին Աստվածամոր համար: Այսպիսով, ո՞վ կարող է կասկածել, որ երբ Սուրբ Կույսի լեգեոնականները, միավորված նրա դիտավորությանը, համագործակցելով նրա հետ, մասնակցում են ամենօրյա Պատարագին, նա հավաքում է նրանց իր շուրջը և տալիս է հավատքի սրատեսություն և իր առատաբուխ սիրտը, որպեսզի նրանք ամենամտերիմ կերպով (և անսահման շահով) մտնեն Գողգոթայի վեհ զոհի հարատևության մեջ:

Երբ նրանք տեսնեն Հիսուսին խաչված, նրանք կմիավորվեն Նրա հետ՝ լինելու մեկ զոհ, որովհետև Պատարագը, որքան Հիսուսի, նույնքան էլ իրե՛նց զոհն է: Այնուհետև նրանք կստանան Հիսուսի պաշտելի Մարմինը, որովհետև էական է բաժնեկից լինել այս ողջակիզված Զոհի Մարմնին՝ քահանայի հետ միասին, եթե ուզում ենք ամբարել Աստվածային Զոհի ամբողջ պտուղը:

Նրանք կհասկանան Մարիամի՝ Նոր Եվայի, կարևորագույն մասնակցությունը այդ Սուրբ Խորհուրդներում, որն

այնպիսին էր, որ «երբ նրա սիրելի Որդին ի կատար էր ածում մարդկության փրկագործությունը Խաչի խորանին, Մարիամը կանգնած էր Նրա կողքին՝ տառապելով և փրկագնելով Նրա հետ միասին» (Պիոս ԺԱ Պապ): Երբ նրանք դուրս գան Պատարագից, Մարիամը կլինի իր լեգեոնականների հետ միասին՝ նրանց հետ կիսելով Իր շնորհաբաշխ առաքելությունը, որպեսզի յուրաքանչյուրին, ում նրանք հանդիպեն և ում համար աշխատեն, առատորեն բաշխվեն փրկագործության անհատնում գանձերը:

«Նրա մայրությունը քրիստոնյաների կողմից հատկապես հիշվում և ապրվում է **Սրբազան Խնջույքի ժամանակ** (Փրկագործության Խորհրդի ծիսակատարումը), երբ ներկա է Քրիստոսը՝ **իրական Մարմնով ծնված Սուրբ Կույս Մարիամից**:

Քրիստոնյաների բարեպաշտությունը միշտ շատ ճշգրտորեն զգացել է Ամենաօրհնյալ Կույսի հանդեպ ջերմեռանդության և Հաղորդության երկրպագության միջև գոյություն ունեցող խոր կապը. սա մի փաստ է, որը կարելի է տեսնել և՛ արևմուտքի, և՛ արևելքի ծեսերում, հոգևոր միաբանությունների ավանդույթներում, հոգևոր արդի շարժումներում՝ ներառյալ երիտասարդականներում և մարեմական սրբավայրերի հովվական առաքելություններում: **Մարիամը առաջնորդում է հավատացյալներին դեպի Սուրբ Հաղորդություն**» (RMat 44):

4. ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԳԱՆՁՆ Է

Սուրբ Հաղորդությունը շնորհի կենտրոնն ու աղբյուրն է, այդ պատճառով այն պետք է լինի Լեգեոնի համակարգի հիմնաքարը: Ամենաեռանդուն աշխատանքն արժեք չի ունենա, եթե նույնիսկ մեկ պահ մոռանանք, որ դրա գլխավոր նպատակն է՝ յուրաքանչյուրի հոգու մեջ հաստատել Սուրբ Հաղորդության թագավորությունը: Որովհետև այդպիսով իրագործվում է այն, ինչի համար Հիսուսն աշխարհ եկավ: Նրա նպատակն էր՝ հաղորդակցվել հոգիներին և միավորվել նրանց հետ: Այդ հաղորդակցության միջոցն է Սուրբ Հաղորդությունը: «Ե՛ս եմ կենդանի հացը, որ երկնքից է իջել. եթե մեկն այս հացից ուտի, հավիտյան կապրի, և

այն հացը, որ ես կտամ, իմ մարմինն է, որը ես տալու եմ, որպեսզի աշխարհը կյանք ունենա» (Հվի. 6:51):

Սուրբ Հաղորդությունն անսահման բարիքն է: Որովհետև այս Խորհրդում ներկա է Ինքը՝ Հիսուսը, այնպես, ինչպես ներկա էր իր տանը՝ Նազարեթում կամ Երուսաղեմի Վերնատանը: Սուրբ Հաղորդությունը պարզապես Նրա ներկայության խորհրդանիշը կամ Նրա հզորության գործիքը չէ, այլ հենց էապես Ինքը Հիսուս Քրիստոսն է: Այսպիսով, նա, ով հղացել և սնել է Հիսուսին, «պաշտելի նշխարի մեջ վերագտավ իր որովայնի օրհնյալ պտուղը և, Նրա խորհրդավոր ներկայությանը միավորված, վերապրեց իր Բեթղեհեմի և Նազարեթի երջանիկ օրերը» (Սբ Փիթեր Ջուլիան Էյմարդ):

Շատերը, որոնք Հիսուսին համարում են պարզապես մի քիչ ավելի լավը, քան մի ոգեշնչված մարդ, պարզվում է, որ ուզում են նմանվել և մեծարել Նրան: Եթե նրանք Հիսուսին համարեին ավելին, ապա առավել շատ կպատվեին Նրան: Ուրեմն, ի՞նչ սպասել հավատացյալների բազմությունից: Որքա՛ն աններելի են այն կաթողիկէները, որոնք հավատում են, սակայն չեն կիրառում այդ հավատքը: Այն Հիսուսին, Ումով մյուսները հիանում են, կաթողիկէները ունեն Սուրբ Հաղորդության մեջ՝ հավերժ կենդանի ներկայությամբ: Նրանք ազատ մուտք ունեն դեպի Հիսուսը և կարող են ու պետք է ընդունեն Նրան ամեն օր՝ որպես իրենց հոգիների սնունդ:

Հաշվի առնելով այս ամենը՝ ցավալի է տեսնել, որ այսպիսի հիասքանչ մի ժառանգություն շատ հաճախ անտեսվում է, և որ մարդիկ, ունենալով Սուրբ Հաղորդության հանդեպ հավատք, այնուամենայնիվ, թույլատրում են, որ մեղքն ու անմտությունը զրկեն իրենց հոգիները կենսական անհրաժեշտությունից, որը մեր Տերը երկրի վրա Իր գոյության առաջին իսկ պահից Իր մտքում նախատեսել էր նրանց համար: Նույնիսկ Բեթղեհեմում (որը նշանակում է «Հացի Տուն»), որպես նորածին երեխա, Նա պառկած էր հարդի վրա, որի Աստվածային Ցորենն էր և կոչված էր լինելու Երկնային Հացը, որը մարդկանց դարձնելու էր մեկ՝ Իր հետ և միմյանց հետ, Իր Խորհրդավոր Մարմնում:

Մարիամն այդ Խորհրդավոր Մարմնի Մայրն է: Ինչպես մի ժամանակ նա հոգ էր տանում իր Քրիստոս Մանկան կարիքների համար, այդպես էլ հիմա նա փափագում է սնուցել այդ Խորհրդավոր Մարմինը, որի Մայրն է հավասարապես: Որքա՛ն ցավալի է նրա համար տեսնել, որ իր Մանուկն Իր Խորհրդավոր Մարմնում քաղցած է, նույնիսկ սովամահ է լինում այն պատճառով, որ շատ քիչ քրիստոնյաներ են ընդունում Աստվածային Հացը, իսկ շատերն այն առհասարակ չեն ստանում: Արդ, թո՛ղ որ նրանք, ովքեր նպատակադրել են միանալ Մարիամին՝ հոգիների հանդեպ նրա Մայրական հոգածության մեջ, կիսեն նրա մայրական անհանգստությունը և, նրա հետ միավորված, ջանան հագեցնել այդ քաղցը Քրիստոսի Մարմնում: Լեգեոնականի գործողության յուրաքանչյուր ուղղություն պետք է արթնացնի գիտելիք և սեր Սուրբ Հաղորդության հանդեպ և վերացնի մեղքը և անտարբերությունը, որոնք մարդկանց հեռու են պահում դրանից: Յուրաքանչյուր Սուրբ Հաղորդություն մի անսահման ձեռքբերում է: Անհատի հոգու միջոցով Սուրբ Հաղորդությունը սնում է Քրիստոսի ամբողջ Խորհրդավոր Մարմինը և օգնում է, որ Այն զարգանա «իմաստությամբ, հասակով և շնորհով՝ Աստծո և մարդկանց առջև» (Ղկ. 2:52):

«Մոր և Որդու այս միավորումը փրկագործության մեջ Գողգոթայի վրա հասնում է իր ավարտին, որտեղ Քրիստոս «Ինքն Իրեն, որպես անարատ պատարագ, մատուցեց Աստծուն» (Եբր. 9:14), և որտեղ Մարիամը կանգնած էր Խաչի կողքին (Հվհ. 19:25)՝ «ցավալի կերպով տանջվելով իր Միածին Որդու հետ: Այստեղ նա իր Մայրական սրտով միավորվեց Նրա զոհաբերությանը և սիրով համաձայնեց մահվան մատնել այդ Զոհին, Ում ինքն էր լույս աշխարհ բերել» և ընծայում էր Երկնավոր Հորը: Դարերի ընթացքում հավերժացնելու համար Խաչի Զոհը՝ Աստվածային Փրկիչը հաստատեց Հաղորդութենական Զոհաբերությունը՝ ի հիշատակ Իր մահվան և հարության, և հանձնեց այն Իր հարսին՝ Եկեղեցուն, որը հատկապես կիրակի օրերը ի մի է հավաքում հավատացյալներին՝ տոնակատարելու Տիրոջ Զատիկը՝ մինչև Նրա երկրորդ գալուստը: Եկեղեցին սա կատարում է Երկնքի սրբերի և հատկապես Սուրբ Կույսի հետ միավորված՝ ընդօրինակելով նրա ջերմեռանդ սերը ու աներեր հավատքը» (MCul 20):

9

ԼԵԳԵՈՆԱԿԱՆԸ ԵՎ ՔՐԻՍՏՈՍԻ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՄԱՐՄԻՆԸ

1. ԼԵԳԵՈՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆՎԱԾ Է ԱՅՍ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Լեգեոնականների առաջին իսկ հանդիպման ժամանակ ընդգծվում էր, որ նրանց ծառայությունը պետք է գերբնական բնույթ ունենար: Նրանց մոտեցումը մյուսների հանդեպ պետք է ճառագեր բարությամբ, բայց նրանց առաքելության դրդապատճառը չպետք է լիներ պարզապես այդ բնական մղումը: Բոլոր նրանց մեջ, ում իրենք ծառայում էին, պետք է տեսնեին հենց Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի՛ անձը: Լեգեոնականները պետք է միշտ հիշեին, որ ամեն ինչ, որ անում էին մյուսների համար, նույնիսկ ամենաթույլերի և ամենահետինների համար, անում էին Մեր Տիրոջ համար, ըստ Իր իսկ խոսքերի. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, քանի որ իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ՝ ի՛նձ համար արեցիք» (Մտթ. 25:40):

Ինչպես եղել է առաջին հանդիպման ժամանակ, այդպես շարունակվում է մինչ օրս: Ոչ մի ջանք չի խնայվել՝ համոզելու լեգեոնականներին, որ այդ դրդապատճա՛ռը պետք է լինի իրենց ծառայության հիմքը: Նմանապես, Լեգեոնի կարգապահությունը և ներքին ներդաշնակությունը հիմնված են գլխավորապես այդ նույն սկզբունքի վրա: Թե՛ սպաների, թե՛ միմյանց մեջ պետք է ճանաչել և հարգել Քրիստոսին: Որպեսզի այս փոխակերպող ճշմարտությունը ամրապնդվի անդամների մտքում, այն ներառել են «Հրահանգներ»-ի մեջ, որն ընթերցվում է ամեն ամիս պրեզիդիումի հանդիպման ժամանակ: Ի հավելումն, Հրահանգները ընդգծում են ևս մեկ լեգեոնական սկզբունք՝ այն, որ աշխատանքը պետք է արվի Մարիամի հետ այնպիսի միության ոգով, որ հստակ լինի, թե նա՛ է, ով իրականում կատարում է աշխատանքը՝ գործելով լեգեոնականների միջոցով:

Այս սկզբունքները, որոնց վրա հիմնված է Լեգեոնի համակարգը, Քրիստոսի Խորհրդավոր Մարմնի մասին վարդապետության արդյունքն են: Այս վարդապետությունը Պողոս առաքյալի նամակների գլխավոր գաղափարն է: Եվ սա զարմանալի չէ, քանի որ այդ վարդապետության հռչակումը հանգեցրեց Պողոսի դարձին: Երկնքից մի լույս եղավ: Քրիստոնյաների մեծ հալածիչը կուրացած գետնին ընկավ: Հետո նա լսեց այդ տպավորիչ խոսքերը. «Սավո՛ւղ, Սավո՛ւղ, ինչո՞ւ ես հալածում ինձ: Նա պատասխանեց. Ո՞վ ես, Տե՛ր»: Տերը պատասխանեց. «Հիսուսն եմ, Որին դու հալածում ես» (Գործք. 9:4-5): Հասկանալի է, որ այս խոսքերը բոցավառվեցին առաքյալի հոգու մեջ այնպես, որ նա մշտապես կխոսի և կգրի այդ խոսքերն արտահայտող ճշմարտության մասին:

Սուրբ Պողոսը Քրիստոսի և մկրտվածների միջև կապը պատկերում է այնպես, ինչպես գլխի և մարդու մարմնի բոլոր անդամների միջև գոյություն ունեցող կապն է: Յուրաքանչյուր անդամ ունի իր հատուկ նպատակն ու գործը: Որոշ մասեր առավել ազնիվ են, մյուսները՝ պակաս ազնիվ, բայց բոլորը կախված են միմյանցից, և նույն կյանքն է նրանց բոլորին կենդանություն տալիս: Մեկի ձախողմամբ կորցնում են բոլորը, ինչպես բոլորը շահում են մեկի հաջողությամբ:

Եկեղեցին Քրիստոսի Խորհրդավոր Մարմինն է և Նրա ամբողջությունը (Եփս. 1:22-23): Քրիստոսը Եկեղեցու գլուխն է, ղեկավարը, անհրաժեշտ և կատարյալ մասը, որից մարմնի բոլոր անդամները ստանում են իրենց ուժերը և կյանքն ինքնին: Մկրտության միջոցով մենք կապվում ենք Քրիստոսին ամենամտերիմ կապերով, որ կարելի է երևակայել: Ուրեմն գիտակցե՛ք, որ խորհրդավորը չի նշանակում անիրական: Օգտագործելով Սուրբ Գրքի ազդեցիկ արտահայտությունը՝ պետք է ասել, որ «Մենք Նրա Մարմնի անդամներն ենք...» (Եփս. 5:30): Գլխի և մյուս անդամների միջև և հենց անդամների միջև հաստատված են սիրո և ծառայության սրբազան պարտականություններ (Ա Հվի. 4: 15-21): Մարմնի պատկերն օգնում է հստակ կերպով հասկանալ և կատարել այդ պարտականությունները, և սա դրանց իրականացման կես ճանապարհն է:

Այս ճշմարտությունը բացատրվում է որպես քրիստոնեության կենտրոնական դոգմա: Որովհետև փաստացի ողջ գերբնական կյանքը, բոլոր շնորհները, որոնք տրվում են մարդուն, փրկագործության պտուղներն են: Փրկագործությունը ինքնին հիմնված է այն փաստի վրա, որ Քրիստոսն ու Եկեղեցին մեկ խորհրդավոր անձ են, այնպես որ Քրիստոսի կատարած հատուցումը, որը գլուխն է, Նրա չարչարանքների անհատնում վաստակները պատկանում են Նրա բոլոր անդամներին, այսինքն՝ բոլոր հավատացյալներին: Ահա՛ պատճառը, թե ինչու մեր Տերը կարողացավ չարչարվել մարդու համար և քավել մեղքերը, որոնք ինքը երբեք չգործեց: «Քրիստոսը գլուխն է Եկեղեցու, և Ինքն է Փրկիչը այդ մարմնի» (Եփս. 5:23): Խորհրդավոր Մարմնի գործունեությունը հենց Իր՝ Քրիստոսի գործունեությունն է: Հավատացյալներն ընդգրկված են Նրա մեջ, իսկ հետո ապրում, չարչարվում և մահանում են Նրա մեջ և հարություն են առնում Նրա Հարությամբ: Մկրտությունը միակ սրբացումն է, քանի որ հաստատում է Քրիստոսի և Նրա մարմնի միջև կենսական այն կապը, որի միջոցով սրբությունը հոսում է Գլխից դեպի Մարմնի անդամները: Մյուս Խորհուրդները և, ամենից առաջ, Սուրբ Հաղորդությունը, հաստատվել են մի նպատակով. որպեսզի ավելի ամրապնդվի կապը Խորհրդավոր մարմնի և Գլխի միջև: Ավելին, այդ միությունը ավելի է խորանում հավատքով և եղբայրասիրությամբ, Եկեղեցու կառավարման և փոխադարձ ծառայության կապերով, ճիշտ ձևով մատուցված աշխատանքով և տառապանքով և, առհասարակ, քրիստոնեական կյանքի յուրաքանչյուր գործողությամբ: Այդ ամենը հատկապես արդյունավետ է, երբ հոգին գործում է Մարիամի հետ վճռական համաձայնությամբ:

Մարիամը ստեղծում է միության մի գերազանց կապ Իր դիրքի շնորհիվ՝ որպես և՛ Գլխի, և՛ անդամների Մայրը: «Մենք Նրա մարմնի անդամներն ենք» (Եփս. 5:30) և, հետևաբար, Մարիամի զավակներն ենք՝ հավասարազոր իրականությամբ և ամբողջովին: Մարիամի գոյության միակ նպատակն է՝ հղանալ և ծնել ամբողջական Քրիստոսին, այսինքն՝ Քրիստոսի Խորհրդավոր Մարմինը՝ իր բոլոր

անդամներով՝ կատարյալ և պատշաճ կերպով կապված միմյանց և միացած՝ «Գլխի՝ Հիսուս Քրիստոսի հետ» (Եփս. 4:15-16): Մարիամը ամբողջացնում է դա՝ համագործակցելով Սուրբ Հոգու հետ և Նրա՛ զորությամբ, Ով Խորհրդավոր Մարմնի կյանքն ու հոգին է: Մարիամի գրկում և Մարիամի մայրական հոգատարության ներքո է, որ մարդկային հոգին աճում է Քրիստոսի մեջ և հասնում նրա «հասակի կատարյալ չափին» (Եփս. 4:13-15):

«Աստծո Փրկագործության ծրագրի մեջ Մարիամն ունի գլխավոր դերը, ինչպիսին չունի ոչ ոք: Խորհրդավոր Մարմնի անդամների մեջ նա զբաղեցնում է իր հատուկ տեղը՝ Գլխից հետո: Հիսուսի Աստվածային Մարմնի ամբողջականության մեջ Մարիամը կատարում է մի գործառույթ, որը սերտորեն կապված է ամբողջ Մարմնի կյանքի հետ: Նա է այդ Մարմնի սիրտը... Ավելի հաճախ Սուրբ Կույսի դերը համեմատում են պարանոցի հետ (հետևելով Սուրբ Բեռնարդոսին), որը միացնում է գլուխն ու մարմինը: Այս համեմատությունը շատ լավ ընդգծում է Աստվածամոր տիեզերական միջնորդությունը Գլխի ու Նրա անդամների միջև: Սակայն այս պարանոցի օրինակը այնքան էլ արդյունավետ չի արտահայտում, որքան սիրտը, Մարիամի կողմից գործադրվող հույժ կարևոր ազդեցության և նրա կողմից գերբնական կյանքի փոխանցման գաղափարը. չէ՞ որ Աստծուց հետո Մարիամը երկրորդն է գերբնական կյանքի ներգործությունների մեջ: Հակառակ պարանոցին, սիրտը կյանքի պահեստարանն է, որը առաջինն է ստանում հարստությունը և բաշխում ողջ մարմնին» (Մյուրա, «Le Corps Mystique du Christ»):

2. ՄԱՐԻԱՄԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՄԱՐՄԻՆԸ

Մարիամն իր կատարած տարաբնույթ պարտավորությունները՝ իր Աստվածային Որդու իրական մարմինը սնելը, խնամելը և սիրելը, շարունակում է կատարել նաև Քրիստոսի Խորհրդավոր Մարմնի յուրաքանչյուր անդամի՝ ամենափոքրից մինչև ամենապատվելիի համար: Հետևաբար, երբ «բոլոր անդամները հոգ են տանում մեկը մյուսի համար» (Ա Կրնթ. 12:25), նրանք չեն գործում Մարիամից անկախ, նույնիսկ երբ անհոգությամբ և անտեղյակությամբ չեն նկատում

նրա ներկայությունը: Իրականում նրանք իրենց ջանքերը միացնում են Մարիամի ջանքերին: Դա արդեն Մարիամի՛ գործն է, որով նա սքանչելիորեն զբաղվում է Ավետման պահից սկսած մինչև մեր օրերը: Ուստի լեգեոնականները չեն բերում Մարիամին՝ օգնելու իրենց Խորհրդավոր Մարմնի անդամներին ծառայելու մեջ, այլ Մարիամն ի՛նքն է կանչում նրանց իրեն օգնելու: Քանի որ դա Սուրբ Կույսի հատուկ և պատշաճ գործն է, ոչ ոք չի կարող մասնակցել դրան՝ առանց նրա բարեհաճ թույլտվության: Ովքեր ուզում են ծառայել իրենց մերձավորին և սակայն փոքրացնում են Աստվածածնի դերն ու առավելությունները, թող մտածեն Խորհրդավոր Մարմնի տրամաբանական արդյունքների մասին: Ի հավելումն, այս վարդապետությունը դաս է բոլոր նրանց համար, ովքեր ընդունում են Աստվածաշունչը, բայց միևնույն ժամանակ անտեսում և նվաստացնում են Աստվածամորը: Թող նրանք հիշեն, որ Քրիստոսը սիրում էր իր Մորը և հնազանդվում նրան (Ղկ. 2:51), և որ Քրիստոսի այդ օրինակը պարտավորեցնում է Խորհրդավոր Մարմնի բոլոր անդամներին. «Պատվի՛ր քո հորն ու մորը…» (Ելք 20:12): Աստվածային պատվիրանի համաձայն՝ մարդիկ պետք է որդիական սիրով սիրեն Աստվածամորը: Բոլոր սերունդները պետք է օրհնեն Սրբուհի Մարիամին (Ղկ. 1:48):

Ինչպես ոչ ոք չի կարող նույնիսկ փորձել ծառայել իր մերձավորին՝ առանց Մարիամի ընկերակցության, այնպես էլ ոչ ոք չի կարող կատարել այդ պարտականությունը՝ առանց ինչ-որ չափով մասնակցելու Մարիամի դիտավորություններին: Հետևաբար, որքան սերտ է միությունը Մարիամի հետ, այնքան ավելի անթերի ենք կատարում մերձավորին ծառայելու մասին աստվածային պատվիրանը՝ (Ա Հվհ. 4:19-21):

Խորհրդավոր Մարմնում լեգեոնականների հատուկ գործառույթն է՝ առաջնորդել, մխիթարել և լուսավորել մյուսներին: Այս դերը չի կարող պատշաճորեն կատարվել՝ առանց գիտակցելու Եկեղեցու դերը՝ որպես Քրիստոսի Խորհրդավոր Մարմին: Եկեղեցու դիրքն ու առավելությունը, միությունը, հեղինակությունը, աճը, տառապանքները, հրաշքները, հաղթանակները, շնորհները բաշխելն ու մեղքերը

ներելը կարող են գնահատվել՝ միայն հասկանալով, որ Քրիստոսն ապրում է Եկեղեցում և շարունակում է իր առաքելությունը Եկեղեցու միջոցով: Եկեղեցին արտացոլում է Քրիստոսի կյանքն ու Նրա կյանքի բոլոր փուլերը:

Եկեղեցու յուրաքանչյուր անդամը կանչված է Քրիստոսի կողմից, Ով Եկեղեցու գլուխն է, իր դերը կատարելու Խորհրդավոր Մարմնի աշխատանքում: «Lumen Gentium» սահմանադրության մեջ կարդում ենք. «Հիսուս Քրիստոսը, Իր Հոգին հաղորդելով Իր քույրերին ու եղբայրներին՝ կանչված բոլոր ազգերից՝ խորհրդավոր կերպով նրանց միավորեց Իր Մարմնի մեջ: Այդ Մարմնի մեջ Քրիստոսի կյանքը փոխանցվում է նրանց, ովքեր հավատում են... Ինչպես մեկ է մարմինը և ունի բազում անդամներ, և մարմնի այդ բազում անդամները բոլորը մեկ մարմին են, այդպես էլ բոլոր հավատացյալներն են Քրիստոսի մեջ» (Ա Կրնթ. 12:12): Նաև Քրիստոսի Մարմինը կառուցելիս Եկեղեցում կա անդամների և գործառույթների բազմազանություն»... Տիրոջ Հոգին տալիս է շնորհների լայն բազմազանություն՝ հրավիրելով մարդկանց ստանձնելու զանազան ծառայություններ» (CL 20):

Որպեսզի գնահատենք, թե ինչ կարգի ծառայություն է բնորոշ լեգեոնականներին Խորհրդավոր Մարմնի կյանքում, նայում ենք Աստվածամորը: Բացատրել ենք, որ Տիրամայրը Խորհրդավոր Մարմնի սիրտն է: Նրա դերը, ինչպես և սրտի դերը մարդկային մարմնում, Քրիստոսի արյունը մղելն է Խորհրդավոր Մարմնի զարկերակների ու երակների միջով՝ կյանք ու աճ տալով Մարմնին: Բայց, նախ և առաջ, այս ամենը սիրո գործ է: Այդ պատճառով լեգեոնականները, իրենց առաքելությունն իրականացնելով Կույս Մարիամի հետ, կոչված են մեկ լինելու նրա հետ՝ նրա կենսական գործում՝ որպես Խորհրդավոր Մարմնի սիրտը:

«Աչքը չի կարող ասել ձեռքին, թե ինձ պետք չես. և կամ նույն ձևով գլուխը՝ ոտքերին, թե ինձ պետք չեք» (Ա Կրնթ. 12:21): Սրանից թող լեգեոնականն իմանա առաքելությանը մասնակցելու կարևորությունը: Նա ոչ միայն մեկ է Քրիստոսի Մարմնի հետ և կախված Նրանից, այլ նմանապես և Քրիստոսը, Ով գլուխն է, իսկապես կախված է լեգեոնականից, այնպես որ, նույնիսկ մեր Տեր Քրիստոսը պետք է

ասի նրան. «Ես քո օգնության կարիքն ունեմ՝ հոգիները փրկելու և սրբացնելու իմ գործում»: Սուրբ Պողոս առաքյալը խոսում է մարմնից գլխի կախվածության մասին, երբ գրում է իր մարմնի մեջ Քրիստոսի նեղությունների պակասը լրացնելու վերաբերյալ (Կող. 1:24): Այս ցնցող արտահայտությունը չի նշանակում, որ Քրիստոսի գործն ինչ-որ կերպ անկատար էր, այլ պարզապես շեշտում է այն սկզբունքը, որ մարմնի յուրաքանչյուր անդամը պետք է տա այն ամենը, ինչը կարող է նպաստել իր և մյուսների փրկությանը (Փիլ. 2:12): Թող սա լեգեոնականին ուսուցանի նրա վսեմ կոչումը, որն ունի՝ լինելով Խորհրդավոր Մարմնի մեջ: Ինչպիսի՛ ոգեշնչող միտք լեգեոնականի համար. այն, որ Քրիստոսն ունի իր կարիքը՝ լույս և հույս բերելու խավարի մեջ գտնվողներին, մխիթարելու տառապյալներին, և կյանք տալու նրանց, ովքեր մեռած են մեղքի մեջ: Ինքնըստինքյան պարզ է, որ լեգեոնականի տեղն ու պարտքն է՝ շատ հատուկ կերպով նմանվել Քրիստոսի սիրուն և հնազանդությանը, որ Նա՝ որպես գլուխ, տալիս էր Իր Մորը, և որը պետք է վերարտադրի նաև Խորհրդավոր Մարմինը:

«Ինչպես Սուրբ Պողոսն է հավաստիացնում, որ ինքը լրացնում է Քրիստոսի չարչարանքները, այդպես կարող ենք ասենք, որ ճշմարիտ քրիստոնյան, որ Քրիստոսի Խորհրդավոր Մարմնի անդամն է և կապված է Նրա հետ շնորհով, Քրիստոսի ոգով կատարած գործողություններով շարունակում ու ավարտին է մոտեցնում այն գործերը, որոնք Քրիստոսն էր կատարում իր երկրային խաղաղ կյանքի ընթացքում: Ուստի երբ քրիստոնյան աղոթում է, նա շարունակում է այն աղոթքը, որ Քրիստոսն սկսեց իր երկրային կյանքի ընթացքում: Երբ քրիստոնյան աշխատում է, նա լրացնում է Քրիստոսի կյանքի ու խոսքի պակասը: Մենք պետք է լինենք կարծես բազում քրիստոսներ՝ երկրի վրա, շարունակելով Նրա կյանքը և գործերը՝ ամեն ինչ անելով և տառապելով Քրիստոսի ոգով, այսինքն՝ սուրբ և աստվածային դիտավորություններով» (Սբ Ջոն Եուդ. «Քրիստոսի թագավորությունը»):

3. ՏԱՌԱՊԵԼ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՄԱՐՄՆՈՒՄ

Լեգեոնականների առաքելությունը նրանց սերտորեն կապում է մարդկության հետ, և հատկապես տառապող մարդկության հետ: Ուստի նրանք պետք է քաջ գիտակցեն, թե աշխարհը, տառապանք ասելով, ինչ նկատի ունի: Չկա մարդ, որը կյանքի ընթացքում ծանր վիշտ ունեցած չլինի: Գրեթե բոլորն ապստամբում են դրա դեմ: Նրանք ջանում են հեռացնել դա իրենցից, իսկ եթե դա անհնար է, պարզապես ընդունում են դա: Այսպես խափանվում է փրկության այն ծրագիրը, ըստ որի, տառապանքը պետք է իր տեղն ունենա յուրաքանչյուր հաջողված կյանքում, ճիշտ ինչպես թելն անցնում է գործվածքով և միացնում այն: Մինչ կարող է թվալ, թե տառապանքը խոչընդոտում և խճճում է մարդու կյանքի ճանապարհը, իրականում տառապանքը կյանքին տալիս է լիակատարություն: Որովհետև ինչպես Սուրբ Գիրքը սովորեցնում է մեզ Իր յուրաքանչյուր էջում. «Աստվա՛ծ է, որ շնորհվեց ձեզ Քրիստոսի համար, որպեսզի ոչ միայն հավատաք Նրան, այլև Նրա համար չարչարվեք» (Փիլպ. 1:29), և դարձյալ. «Եթե Քրիստոսի հետ մեռանք, Նրա հետ էլ պիտի ապրենք, եթե համբերենք, Նրա հետ էլ պիտի թագավորենք» (Բ Տիմ. 2: 11-12):

Մեր մահվան պահը ներկայացված է մի խաչի վրա, որն ամբողջովին արյան մեջ է, որի վրա մեր Գլուխը հենց նոր վերջացրել է Իր գործը: Խաչի տակ կանգնած է այնքա՛ն հուսահատ մի անձնավորություն, որ թվում է, թե նրա համար անհնարին է շարունակել ապրել: Այդ կինը Փրկչի և փրկվածների Մայրն է: Նախ նրա՛ երակներով էր, որ քամվեց այդ Արյունը, որն այժմ շաղ է տված էժանագին կերպով, բայց որը փրկագնեց աշխարհը: Այդ Թանկարժեք Արյունը այդուհետ կհոսի Խորհրդավոր Մարմնի միջով, այսպես ասած՝ կյանք պարտադրելով Մարմնի յուրաքանչյուր բջջին: Բայց այս հոսքի բոլոր հետևանքները պետք է լինեն ընկալված, որպեսզի հնարավոր լինի դրանց կիրառումը: Այդ թանկարժեք վտակը հոգուն տալիս է Քրիստոսի նմանությունը, բայց դա ամբո՛ղջ Քրիստոսն է՝ ոչ միայն Բեթղեհեմի և Թաբորի Քրիստոսը, այսինքն՝ փառքի և ուրախության Քրիստոսը,

այլ դա նաև ցավի և զոհաբերության Քրիստոսն է, այսինքն՝ Գողգոթայի Քրիստոսը:

Յուրաքանչյուր քրիստոնյա պետք է հասկանա, որ չի կարելի ուղղակի վերցնել և ընտրություն կատարել Քրիստոսի մեջ: Մարիամը դա հասկացավ ամբողջությամբ՝ նույնիսկ երջանիկ Ավետման ժամանակ: Նա գիտեր, որ հրավիրված չէր դառնալու միայն Ուրախությունների Մայր, այլ նաև Ցավերի Կին: Բայց նա մշտապես իր անձն ամբողջովին նվիրում էր Աստծուն և, ուրեմն, ընդունեց Աստծուն ամբողջովին: Լի գիտակցությամբ՝ նա ընդունեց այդ մանկան կյանքն ամբողջությամբ: Սուրբ Կույսը ոչ պակաս պատրաստ էր Նրա հետ միասին դիմանալու տվայտանքին, որքան պատրաստ էր ճաշակելու երանությունը Նրա հետ: Այդ պահին այդ Սուրբ Սրտերն այնքան սերտորեն միացան իրար, որ գրեթե նույնացան: Այսուհետև նրանք բաբախելու են միասին և՝ Խորհրդավոր Մարմնի համար: Այդպիսով Մարիամը դարձել է Միջնորդ բոլոր շնորհների, Անոթ Հոգևորական, որն ընդունում և տալիս է մեր Տիրոջ Թանկարժեք Արյունը: Ինչպես դա եղավ Մարիամի համար, այդպես և կլինի բոլոր նրա զավակների համար: Մարդու օգտակարության աստիճանն Աստծո համար միշտ լինելու է մարդու միությունը Սուրբ Սրտին, որտեղ նա կարող է խորքերից վերցնել Թանկարժեք Արյունը, որպեսզի պարգևի ուրիշ հոգիներին: Բայց Քրիստոսի Սրտի և Արյան հետ այդ միությունը չպետք լինի մարդու կյանքի միայն մեկ փուլում, այլ նրա ամբողջ կյանքում: Ինչքան ապարդյուն է, այնքան էլ անարժան է՝ ընդունել Փառաբանության Թագավորին և մերժել Տառապող Մարդուն, որովհետև երկուսն էլ մեկ և նույն Քրիստոսն են: Նա, ով չի քայլում Տառապող Մարդու հետ, ոչ կմասնակցի հոգիների համար Նրա ստանձնած առաքելությանը, և ոչ էլ կհասնի Նրա փառքին:

Ուստի տառապանքը միշտ շնորհ է: Երբ այն բուժում չի պարգևում, ուրեմն զորություն տալու համար է: Այն երբեք միայն մեղքի համար պատիժ չէ: «Հասկացե՛ք,– ասում է Սուրբ Օգոստինոսը,– մարդկության տառապանքը պատժիչ օրենք չէ, որովհետև տառապանքի բնույթը բուժիչ է»: Եվ մյուս կողմից, մեր Տիրոջ Չարչարանքը, ինչպես մի

անգնահատելի առավելություն, հոսում է անմեղ և սուրբ մարմինների մեջ, որպեսզի նրանց ավելի կատարելապես նմանեցնի Տիրոջը: Տառապանքների այս փոխկապակցությունը և միահյուսումը բոլոր մահացումների (այսպես են կոչվում հոգևոր զոհողությունները և զրկանքները-թրգմ.) և հատուցումների հիմքն է:

Պարզ համեմատությունը մարդու մարմնի արյան շրջանառության հետ կօգնի ավելի լավ հասկանալ տառապանքի տեղն ու նպատակը: Դիտարկենք ձեռքը: Զարկերակը, որ ուժգին բաբախում է, սրտի բաբախյունն է: Ջերմ արյունը սրտից հոսում է դրա միջով: Այդ ձեռքը միացած է մարմնին, որին պատկանում է: Եթե ձեռքը սառչում է, երակները կծկվում են և խոչընդոտում արյան հոսքին: Երբ ավելի է սառչում, հոսքը դադարում է: Եթե այնքան սառնամանիք է, որ արյան շարժումը դադարում է, ցուրտը ներս է թափանցում, և հյուսվածքները սկսում են մահանալ, ձեռքը դառնում է անկենդան և անօգուտ: Եթե մահացած ձեռքը մնում է այս վիճակում, սկսում է ոսկրի փտախտ: Այս սառած վիճակի աստիճանները օգնում են հասկանալ Խորհրդավոր Մարմնի անդամների հնարավոր վիճակները: Սրանք կարող են դառնալ այնքան փակ՝ մարմնի միջով հոսող Թանկարժեք Արյունն ընդունելու համար, որ մահվան վտանգի մեջ լինեն, ինչպես փտախտավոր վերջույթը, որը պետք է կտրել: Պարզ է, թե ինչ պետք է անել սառած վերջույթների հետ: Պետք է այնպես անել, որ արյունը նորից շրջանառություն կատարի, որպեսզի վերջույթին վերադարձնի կյանքը: Ստիպել, որ արյունը հոսի կծկված երակների միջով՝ մի ցավալի գործընթաց է, բայց այդ ցավն ուրախալի նշան է: Հավատքը գործնականում ապրող կաթողիկէների մեծամասնությունն իրականում ցրտահարված վերջույթներ չեն: Նույնիսկ իրենց ինքնագոհության մեջ նրանք իրենք իրենց սառած չեն համարում: Բայց նրանք չեն ստանում Թանկարժեք Արյունն այնքան, որքան մեր Տերն ուզում է նրանց համար: Ուրեմն Նա պետք է Իր կյանքը պարտադրի նրանց մեջ: Նրա արյան շրջանառությունը, նրանց դժկամ երակներն ընդլայնելով, պատճառում է կյանքի ցավ և վշտեր: Երբ հասկանում ենք տառապանքի այս գաղափարը, մի՞թե դա չպետք է վիշտը

դարձնի ուրախություն: Տառապանքի իմաստը դառնում է Քրիստոսի մերձավոր ներկայության իմաստը:

«Հիսուս Քրիստոսը տառապեց այնքան, որքան պետք է տառապեր: Այլևս չկա պակաս իր տառապանքների չափին: Ուրեմն,Նրա Չարչարանքը վերջացե՞լ է: Գլխում՝ այո, բայց մնում է Նրա Մարմնի չարչարանքը: Ուստի, հիմնավոր է, որ Քրիստոսը շարունակում է տառապել իր Մարմնում՝ ցանկանալով, որ մենք էլ մասնակցենք Իր քավությանը: Հենց Նրա հետ մեր միությունն է պահանջում, որ մենք դա անենք, որովհետև քանի որ մենք Նրա Մարմինն ենք և միմյանց անդամներն ենք, ապա պետք է կրենք այն բոլոր տառապանքները, որոնք կրում է Գլուխը» (Սբ Օգոստինոս):

10

ԼԵԳԵՈՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Նկարագրելու համար առաքելական գործունեության արժանապատվությունը, որին Լեգեոնը կանչում է իր անդամներին, և դրա կարևորությունը Եկեղեցու համար, չկան առավել բնորոշող խոսքեր, քան հետևյալ հեղինակավոր հայտարարությունները.

«Քրիստոսի, այսինքն՝ Գլխի հետ միավորման փաստից բխում է աշխարհականների իրավունքը և պարտավորությունը՝ լինելու առաքյալներ: Մկրտությամբ միացած Քրիստոսի Մարմնին և Դրոշմով ամրապնդված Սուրբ Հոգու զորությամբ՝ նրանք հենց Տիրոջ կողմից նշանակված են առաքելության: Եթե նրանք նվիրագործված են լինելու թագավորական քահանայություն և սուրբ ազգ (Ա Պետ. 2:4-10), ապա դրա նպատակն այն է, որպեսզի նրանք իրենց

բոլոր գործերով ընծայաբերեն հոգևոր զոհաբերություններ և վկայեն Քրիստոսի մասին ամբողջ աշխարհով մեկ: Սուրբ Խորհուրդների, մասնավորապես, Սուրբ Հաղորդության միջոցով, նրանց է փոխանցվում եղբայրասիրությունը, որն ամբողջ առաքելության հոգին է» (AA 3):

Պիոս ԺԲ Պապը մի առիթով ասել է. «Հավատացյալները, ավելի ճիշտ աշխարհականները, կանգնած են Եկեղեցական կյանքի առաջին շարքերում. նրանց համար Եկեղեցին կենսաբեր սկզբունք է՝ մարդկային հասարակության մեջ: Դրա համար նրանք, մասնավորապես, պետք է ավելի ու ավելի հստակ գիտակցեն, որ **իրենք ոչ միայն պատկանում են Եկեղեցուն, այլև ինքնին Եկեղեցի՛ն են**, այսինքն՝ երկրագնդի վրա հավատացյալների համայնքը՝ առաջնորդությամբ Պապի, որը բոլորի գլուխն է, և նրան միավորված եպիսկոպոսների: Նրանք **են** կազմում Եկեղեցին…»» (CL 9):

«Մարիամը բարոյական ազդեցություն ունի մարդկային ցեղի վրա, որը մենք ավելի լավ չենք կարող բնութագրել, քան համեմատելով գրավչության, հոգեհարազատության և միության բնական ուժերի հետ, որոնք բնական աշխարհում միմյանց են կապում մարմինները և այն մասերը, որոնցից կազմված են մարմինները... Մենք, վստահաբար, փաստել ենք, որ Մարիամը մասնակցել է բոլոր մեծ շարժումներին, որոնց վրա հիմնված է հասարակությունների կյանքը և նրանց իրական քաղաքակրթությունը» (Պետիտալո):

2. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ԱՌԱՔԵԼԱԳՈՐԾ ԱՇԽԱՐՀԱԿԱՆՆԵՐ

Կա մի համարձակ կարծիք, ըստ որի՝ կաթողիկէ հասարակության առողջությունը կախված է առաքյալների մեծ դասի ներկայությունից, որոնք աշխարհականներ են, բայց կիսում են քահանայի աշխարհայացքը և ապահովում են կապը և մտերմությունը ժողովրդի հետ: Ապահովությունը կախված է քահանայի և ժողովրդի այս լիակատար միությունից:

Բայց առաքելության բուն միտքը գործունյա հետաքրքրությունն է Եկեղեցու աշխատանքով ու բարեկեցությամբ:

Եվ դժվար թե նման հետաքրքրություն գոյություն ունենա՝ առանց որևէ մասնակցության զգացումի: Այսպիսով, առաքելագործ կազմակերպությունը մի կաղապար է, որտեղ պատրաստվում են առաքյալներ:

Այնտեղ, որտեղ առաքելության որակը մանրակրկիտ կերպով մշակված չէ, հստակ է, որ Եկեղեցու հանդեպ իրական հետաքրքրության պակասի և պատասխանատվության որևէ զգացումի բացակայության պայմաններում հաջորդ սերունդները կառերեսվեն լուրջ խնդիրների: Ինչպիսի՞ լավ սպասելիքներ կարելի է ունենալ նման մանկամիտ կաթողիկէությունից, և որտե՞ղ է դրա ապահովությունը, եթե ոչ լիարժեք հանդարտության մեջ: Պատմությունը սովորեցնում է, որ այդպիսի նյարդազուրկ հոտը խառնաշփոթ փախուստի դեպքում ոտքի տակ կտա նույնիսկ իր հովիվներին կամ կդառնա երևան եկող առաջին դաժան գայլերի բաժինը: Երանելի Ջոն Հենրի Նյումանը հաստատում է դա որպես սկզբունք. «Բոլոր ժամանակներում աշխարհականները եղել են կաթողիկէ ոգու չափանիշը»:

«Մարիամի Լեգեոնի մեծ գործառույթը աշխարհականների կոչումը զարգացնելն է: Կա վտանգ, որ մենք՝ աշխարհականներս, նույնացնենք Եկեղեցին հոգևորականների և վանականների հետ, որոնց Աստված, անկասկած, տվել է այն, ինչը մենք չափազանց բացառիկության իմաստով ենք անվանում կոչում: Մենք անգիտակցաբար հակված ենք դիտարկելու ինքներս մեզ՝ իբրև անանուն ամբոխի, որ հնարավորություն ունենք փրկվելու, եթե կատարենք հանձնարարված նվազագույնը: Մենք մոռանում ենք, որ մեր Տերն իր գառներին կոչում է իրենց անուններով (Հվհ. 10:3), և որ ըստ Պողոս առաքյալի, ով, ինչպես և մենք, ֆիզիկապես ներկա չի եղել Գողգոթայի վրա. «Աստծո Որդին սիրեց **ինձ** և մահվան մատնեց Իրեն **ինձ** համար» (Գաղ. 2:20): Մեզնից յուրաքանչյուրը, լինի գյուղական հյուսն՝ Հիսուսի պես, կամ տնային տնտեսուհի՝ Նրա Մոր նման, ունի կոչում և Աստծո կողմից անհատապես կոչված է սիրելու և ծառայելու Աստծուն՝ մի առանձնահատուկ գործով, որին ուրիշները կարող են գերազանցել, սակայն ո՛չ երբեք փոխարինել: Ինձնից բացի՝ ո՛չ ոք չի կարող **ի՛մ** սիրտը տալ Աստծուն կամ կատարել **ի՛մ** գործը: Հենց այսպիսի անձնական կրոնական զգացումն է, որը խթանում է Լեգեոնին: Այլևս անդամը չի բավարարվում անգործությամբ կամ մակերեսայնությամբ. նա ցանկանում է լինել ինչ-որ մեկը և անել ինչ-որ բան Աստծո համար,

կրոնն այլևս երկրորդական հարց չէ նրա համար, և դառնում է իր կյանքի ներշնչանքը, ինչքան էլ մարդկայնորեն հասարակ բան է: Եվ այս անհատական կոչման համոզմունքը անխուսափելիորեն ստեղծում է առաքելության մի ոգի՝ Քրիստոսի գործը շարունակելու ցանկությունը, լինելու ևս մեկ Քրիստոս, ծառայելու Նրան՝ Իր ամենափոքր եղբայրների մեջ: Այսպիսով, Լեգեոնը աշխարհական փոխարինողն է վանական միաբանության, քրիստոնեական կատարելության գաղափարի թարգմանությունը աշխարհականների կյանքում, և Քրիստոսի թագավորության ընդարձակումը՝ ժամանակից աշխարհիկ հասարակության մեջ» (Գերի. Ալֆրեդ Օ'Ռահիլի):

3. ԼԵԳԵՈՆԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես շատ այլ մեծ սկզբունքներ, առաքելական գործունեությունն ինքնին վերացական և սառն է: Այդ պատճառով գոյություն ունի իրական վտանգ, որ այն կարող է պակաս գրավիչ լինել աշխարհականների համար, և նրանք չեն արձագանքի այն վսեմ ապագային, որ ունի առաքելական գործունեությունը, և, ավելի վատ, նրանց համար այն նույնիսկ կարող է թվալ իրենց ուժերից վեր: Սրա հետևանքը աղետալի կլիներ՝ կթողնվեին աշխարհականներին օգնելու ջանքերը, որպեսզի կատարեն իրենց հատուկ և անփոխարինելի դերը Եկեղեցու մղած պատերազմում:

Բայց խորագետ Կարդինալ Ռիբերին, որը եղել է նախկին միսիոներական Աֆրիկայի Առաքելական Նվիրակը, իսկ հետո՝ Չինաստանի Նվիրակը, ասել է. **«Մարիամի Լեգեոնն առաքելական պարտականություն է՝ զարդարված գրավիչ և հմայիչ ձևով, որն այնպե՛ս է բաբախում կյանքով, որ շահում է բոլորին: Այն գործում է Պիոս ԺԱ Պապի ցուցումների համաձայն, այսինքն՝ կախված է Աստվածամորից՝ պնդելով, որ որակն է անդամակցության հիմքը և նույնիսկ նրանց քանակական ուժի բանալին՝ ապահովագրված բազմաթիվ աղոթքներով և ինքնազոհաբերությամբ, հստակ համակարգով, և ամբողջությամբ համագործակցելով քահանայի հետ: Մարիամի Լեգեոնը մեր օրերի հրաշքն է»:**

Լեգեոնը հարգում և հնազանդվում է քահանաներին՝ որպես իր օրինավոր մեծավորներին, և դեռ ավելին: Լեգեոնի առաքելությունը կառուցված է այն փաստի վրա, որ շնորհը փոխանցվում է գլխավորապես Սուրբ Պատարագի և խորհրդակատարության համակարգի միջոցով, որի հիմնական կատարողները քահանաներն են: Այդ առաքելության ողջ ջանքերը պետք է ողղված լինեն մեկ մեծ նպատակի՝ բազմություններին, հիվանդներին և քաղցածներին բերել աստվածատուր սնունդ: Հետևաբար, Լեգեոնի գործի գլխավոր սկզբունքը պետք է լինի քահանային մոտեցնելն իր ժողովրդին, ոչ միշտ՝ անձնապես (ինչը կարող է անհնարին լինել), սակայն ամենուրեք՝ քահանայի ազդեցությամբ և քահանային ընկալելի դարձնելով:

Սա՛ է Լեգեոնի առաքելական գործունեության բուն գաղափարը: Լեգեոնը կլինի աշխարհական՝ անդամների կառուցվածքով, բայց նրանք կաշխատեն քահանաների հետ անբաժան միությամբ, նրանց գլխավորությամբ և շահերի բացարձակ նույնությամբ: Լեգեոնը պետք է եռանդուն կերպով ձգտի լրացնել քահանաների ջանքերը և ընդլայնել նրանց տեղը մարդկանց կյանքում, որպեսզի մարդիկ նրանց ընդունելով՝ ընդունեն նաև նրանց ուղարկողին:

«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, ով ընդունի նրան, ում ես կուղարկեմ, ինձ է ընդունում, և ով ինձ է ընդունում, ընդունում է նրան, ով ինձ ուղարկեց» (Հվի. 13:20):

4. ՔԱՀԱՆԱՆ ԵՎ ԼԵԳԵՈՆԸ

Գաղափարը քահանայի մասին՝ շրջապատված նվիրյալների խմբով, որոնք կիսում են նրա ջանքերը, հետևում է Փրկչի օրինակին, Ով աշխարհի փրկությունը պատրաստում էր՝ իր շուրջը համախմբելով իր ընտրյալներին, որոնց ուսուցանում էր և լցնում Իր ոգով:

Առաքյալները սովորեցին և կիրառեցին աստվածային դասերը և բոլորին կանչեցին օգնելու իրենց հոգիների փրկության գործում: Կարդինալ Փիցցարդոն հիանալի կերպով ասել է, թե շատ հնարավոր է, որ Հռոմից եկած

օտարականները (Գործք. 2:10), որոնք լսեցին առաքյալների քարոզը Հոգեգալստյան օրը, առաջինն էին, որոնք Հռոմում ավետեցին Հիսուս Քրիստոսին՝ այսպիսով սերմանելով սերմերը Մայր Եկեղեցու, որը շուտով պաշտոնապես հաստատեցին սուրբ Պետրոսն ու Պողոսը: «Ի՞նչ պետք է անեին տասներկու առաքյալներն հսկա աշխարհում, եթե իրենց շուրջը չհավաքվեին կանայք և տղամարդիկ, ծերերն ու երիտասարդները՝ ասելով. «Մենք մեզ հետ տանում ենք երկնավոր գանձը: Օգնե՛ք մեզ տարածելու այն երկրի վրա» (Պիոս ԺԱ Պապ):

Վերը բերված խոսքերը պատկանում են Պապերից մեկին: Կարող ենք ավելացնել մեկ այլ Պապի խոսքերը ևս՝ վերջիվերջո ցույց տալով, որ աշխարհը դարձի բերելու գործում մեր Տիրոջ և առաքյալների օրինակը պետք է լինի տիպար **յուրաքանչյուր քահանայի** համար՝ իր փոքրիկ աշխարհի հետ հարաբերություններում, լինի դա ժողովրդապետություն, շրջան կամ հատուկ աշխատանք:

Մի առիթով Սբ Պիոս Ժ Պապը, շրջապատված լինելով կարդինալներով, հարցրեց նրանց.

– Ո՞րն է ներկա ժամանակներում հասարակության փրկության համար ամենաանհրաժեշտ բանը:

– Կաթողիկէ դպրոցների կառուցումը,– պատասխանեց կարդինալներից մեկը:

– Ո՛չ,– ասաց Պապը:

– Եկեղեցիների թվաքանակի ավելացումը,– արձագանքեց մյուսը:

– Կրկին ո՛չ:

– Հոգևորականների թվի աճը,– առաջարկեց երրորդը:

– Ո՛չ, ո՛չ,– կրկնեց Պապը,– ամենակարևոր պայմանն այսօր յուրաքանչյուր ժողովրդապետության մեջ առաքինի, վճռական, ճշմարտապես առաքելական ոգով լցված աշխարհականների խումբ ունենալն է:

Իր վերջին օրերին այս սուրբ Քահանայապետն աշխարհի փրկության իր հույսը դրել էր հոգևորականների ջանքերով պատրաստված աշխարհականների վրա, որոնք նվիրվում են առաքելական գործունեությանը՝ իրենց խոսքով և գործով, իսկ ամենից առաջ՝ իրենց օրինակով: Թեմերում,

որտեղ նա կատարել է իր հովվական ծառայությունը Պապ դառնալուց առաջ, ավելի շատ ուշադրություն է դարձրել ոչ թե պարզապես հավատացյալների թվաքանակին, այլ այն հավատացյալների թվին, որոնք ընդունակ էին ճառագելու առաքելության լույսը: Նա այն կարծիքին էր, որ մարդկային ցանկացած խմբում կարելի է պատրաստել ընտրյալներ: Դրա համար նա դասակարգում էր իր քահանաներին՝ ըստ այն արդյունքների, որոնց նրանք կարողացել էին հասնել այդ ոլորտում՝ իրենց եռանդով և կարողություններով» (Շոտար, Առաքելության ոգին, 4, 1. գ.):

«Քահանայի պարտավորությունները չեն սահմանափակվում առանձին հոգիների հանդեպ հոգածությամբ: Դրանք պետք է ուղղված լինեն նաև ճշմարիտ քրիստոնյա համայնք ձևավորելուն: Բայց եթե համայնքի ոգին պետք է պատշաճ կերպով զարգացվի, պետք է ընդգրկվի ոչ միայն տեղական, այլ նաև Տիեզերական ողջ Եկեղեցին: Տեղական համայնքը չպետք է զբաղվի միայն իր հավատացյալների խնամքով, այլ պետք է համակվի միսիոներական ոգով և մարդկանց համար ճանապարհ հարթի դեպի Քրիստոս: Տեղական համայնքը պետք է հատկապես հոգ տանի նրանց հանդեպ, ովքեր առաջնորդության կարիք ունեն, նորադարձների հանդեպ, որոնց պետք է աստիճանաբար կրթել քրիստոնեական հավատքի ճանաչման և քրիստոնեական կյանքով ապրելու համար» (PO, 6):

«Մարդացած Աստված անհրաժեշտ համարեց երկրի վրա թողնել Իր Խորհրդավոր Մարմինը: Այլապես Նրա գործը ավարտված կլիներ Գողգոթայի վրա: Նրա մահը մարդկային ցեղին փրկություն պարգևեց, սակայն ովքե՞ր կկարողանային ձեռք բերել Երկինքը, եթե Եկեղեցին նրանց համար չբերեր կյանքը՝ Խաչի վրայից: Քրիստոսը հատուկ կերպով նույնացնում է Ինքն Իրեն և քահանային: Քահանան նման է օժանդակ սրտի, որը գերբնական կյանքի արյունը մղում է հոգիների մեջ: Նա էական մասն է Քրիստոսի Մարմնի հոգևոր փոխանցման համակարգի: Եթե նա ձախողվում է, համակարգն արգելափակվում է, և նրանք, ովքեր կախված են իրենից, չեն ստանում այն կյանքը, որը Քրիստոսն ուզում է, որ նրանք ստանան: Քահանան պետք է լինի իր ժողովրդի համար այն, ինչ Քրիստոսն է՝ Եկեղեցու համար՝ համապատասխան սահմաններում: Քրիստոսի մարմնի անդամները

Նրան շարունակողներն են, այլ ոչ թե պարզապես աշխատողներ, հետևորդներ, աջակիցներ: Նրանք ունեն Նրա՛ կյանքը: Նրանք կիսում են Նրա՛ գործը: Նրանք պետք է աշխարհին նայեն Նրա՛ աչքերով: Քահանաները Քրիստոսի հետ պետք է մեկ լինեն՝ բոլոր հնարավոր իմաստներով: Քրիստոսը հարկ համարեց իր համար ձևավորել հոգևոր մարմին, քահանան էլ պետք է նույնն անի: Նա պետք է իր համար ձևավորի անդամներ, որոնք իր հետ մեկ լինեն: Եթե քահանան չունի իր կողմից ձևավորված և իր հետ միացած կենդանի անդամներ, նրա աշխատանքը կունենա չնչին ծավալներ: Նա կլինի մեկուսացած և անօգնական: «Աչքը չի կարող ասել ձեռքին, թե ինձ պետք չես. և կամ նույն ձևով գլուխը՝ ոտքերին, թե ինձ պետք չեք» (Ա Կրնթ. 12.21):

Եվ եթե Քրիստոսն Իր Խորհրդավոր Մարմինը դարձրել է Իր Ճանապարհի, Իր Ճշմարտության և Իր Կյանքի սկզբունքը՝ հոգիների համար, նույն այս կարգը գործում է նաև Քրիստոսի քահանայի միջոցով: Եթե նա չի իրագործում այս գործառույթը մինչև այն աստիճան, որ հասնի Խորհրդավոր Մարմնի ամբողջական կառույցին, որի մասին խոսվում է Եփեսացիներին ուղղված նամակում (4.12, մի տեքստ, որը սովորաբար թարգմանվում է՝ «հաստատելու համար սրբերին»), Աստվածային կյանքը չի լցնի հոգիները և հետո էլ անպտուղ կլինի:

Առավել ևս, ինքը՝ քահանան էլ անպտուղ կլինի, որովհետև թև որպես մարմնի գլուխ, իր առաքելությունն է՝ կյանք տալ մարմնին, բայց պակաս կարևոր փաստ չէ այն, որ գլուխն ապրում է մարմնի կյանքով՝ աճելով մարմնի աճմանը զուգահեռ և կիսելով նրա թուլությունը, եթե այն տկարանում է:

Քահանան, որը չի հասկանում քահանայական առաքելության այդ օրենքը, կարող է իրագործել իր կարողության միայն փոքր չափաբաժինը, մինչդեռ նրա ճշմարիտ ապագան Քրիստոսի մեջ հորիզոններ բացելն է» (Կանոնիկոս Փ. Ռիփլի):

5. ԼԵԳԵՈՆԸ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Ներկա հանգամանքներում աշխարհականները հնարավորություն ունեն շատ բան անելու և, հետևաբար, պարտավո՛ր են շատ բան անել ժողովրդապետություններում ճշմարիտ եկեղեցական հաղորդության աճման համար, որպեսզի արթնացնեն առաքելական եռանդը՝ հավատացյալների և անհավատների հանդեպ, որոնք թողել են հավատքը կամ

թուլացել են քրիստոնեական կյանքում» (CL, 27): Ճշմարիտ համայնական ոգին կզարգանա Մարիամի Լեգեոնի հիմնադրման շնորհիվ: Լեգեոնի միջոցով աշխարհականները սովորում են աշխատել ժողովրդապետություններում՝ սերտ միության մեջ լինելով հոգևորականների հետ և մասնակցելով հովվական պարտականություններին: Ինքնին մեծ առավելություն է շաբաթական կանոնավոր ժողովներում ժողովրդապետական հարցերի կարգավորումը: Առավել կարևոր է այն, որ ժողովրդապետության աշխատանքների մեջ ներգրավված անձինք, դառնալով Լեգեոնի անդամ, կստանան հոգևոր կազմավորում, որը նրանց կօգնի հասկանալ, որ ժողովրդապետությունը Սուրբ Հաղորդության վրա հիմնված համայնք է, նաև կստանան մեթոդական մի համակարգ, որը նրանց կօգնի հասնել ժողովրդապետության բոլոր անդամներին՝ համայնքը կառուցելու նպատակով: 37-րդ Գլխում («Առաջարկություններ աշխատանքների համար») տրված են մի քանի ցուցումներ՝ առ այն, թե ինչպես կարելի է առաքելություն կատարել ժողովրդապետության մեջ:

«Աշխարհականների առաքելությունը քահանաների համար պետք է լինի իրենց աշխատանքի գլխավոր մասը, իսկ հավատացյալների համար՝ քրիստոնեական կյանքի պարտականություն» (Պիոս ԺԱ Պապ):

6. ՊՏՈՒՂՆԵՐՆ ԵՆ՝ ՀԱՄՈԶՎԱԾ ԻԴԵԱԼԻԶՄԸ ԵՎ ԳՈՐԾԸ

Դարձյալ պետք է ասել, որ եթե Եկեղեցին ապրեր միայն զգուշավոր առօրյայով, ապա շատ անբարենպաստ պայմաններ կստեղծեր ճշմարտության համար: Եթե երիտասարդությունը գործնական իդեալիզմի համար, որին ձգտում են առատաձեռն էությունները, որդեգրի մի սովորություն՝ իր հայացքն ուղղելու զուտ աշխարհիկ կամ նույնիսկ հակակրոնական համակարգերին, ապա սարսափելի վնաս կբերի, որի համար կվճարեն ապագա սերունդները:

Այստեղ Լեգեոնը կարող է օգնել՝ իր ծրագիրը դարձնելով նախաձեռնության, ջանադրության և զոհողության ծրագիր, որը կօգնի Եկեղեցու օգտին շահելու «կատարելություն» և «գործողություն» բառերը՝ դրանք դարձնելով Եկեղեցու ուսմունքի աղախինները:

Պատմաբան Լեքիի համոզմամբ՝ աշխարհը կառավարվում է իր իդեալներով: Եվ եթե այդպես է, նրանք, ովքեր առաջարկում են ավելի բարձր իդեալ, դրանով իսկ բարձրացնում են ամբողջ մարդկությունը. անշուշտ, սա պետք է հասկանալ այն իմաստով, որ իդեալը գործնական բան է և ակնհայտ է, որ պետք է ծառայի որպես կարգախոս: Կարելի է ասել, որ Լեգեոնի կողմից պաշտպանվող իդեալները համապատասխանում են այս երկու պահանջներին:

Լեգեոնի մի կարևոր հատկանիշ է, որ նրա աշխատանքը շնորհազարդվում է բազմաթիվ քահանայական կամ կրոնական կոչումներով, որ շնորհվում են Լեգեոնի անդամներին և նրանց զավակներին:

Առարկություն կարող է ծագել առ այն, որ համատարած եսասիրության մթնոլորտում ոչ ոք իր վրա չի վերցնի լեգեոնականի ծանր բեռը: Այս կարծիքը ճիշտ չէ: Շատերը, ովքեր արձագանքում են միայն ինչ-որ չնչին գործողության կանչին, արագորեն հիասթափվում են և անհետ կորում: Իսկ այն փոքրամասնությունը, որոնք պատասխանում են բարձր ջանադրության կանչին, հարատևում են, և նրանց ոգին քիչ-քիչ փոխանցվում է մյուսներին:

Լեգեոնի պրեզիդիումը քահանայի համար կարող է դառնալ աշխարհականների հետ համագործակցության հզոր միջոց՝ կատարելով իր խնամքին հանձնվածներին ավետարանելու առաջադրանքը: Հիրավի, շաբաթը մեկ անգամ ժամուկես տևող հանդիպումներին առաջնորդելով, քաջալերելով, հոգևորապես զորացնելով անդամներին՝ քահանան հնարավորություն է ունենում լինելու ամեն տեղ, իմանալու ամեն ինչ, ազդելու յուրաքանչյուրի վրա և հաղթահարելու իր սեփական ֆիզիկական սահմանափակումները: Հիրավի, կարծում ենք, որ քահանայի համար իր առաքելական եռանդը լավագույն ձևով գործադրելու միջոց կարող է լինել բազում պրեզիդիումներ առաջնորդելը:

Այսպիսով, զինված իր լեգեոնականներով (որոնք ունեն այդպիսի համեստ անձնակազմ՝ զինված գրություններով, պարսատիկով և քարերով, որոնք, սակայն, Մարիամի շնորհիվ վերածված են երկնային զենքերի)՝ քահանան, որպես մի նոր Դավիթ, կարող է առաջ գնալ՝ վստահ, որ կհաղթի մեծագույն հակառակորդ Գողիաթին՝ անհավատությանը և մեղքին:

«Բարոյական և ոչ նյութական ուժն է, որ կզորացնի ձեր առաքելությունը և կապահովի ձեր հաղթանակը: Հսկաները չեն, որ առավելագույնն են անում: Որքա՛ն փոքր էր Սուրբ Երկիրը, բայց այն գերակայեց ողջ աշխարհում: Որքա՛ն խեղճ մի տարածք էր Ատտիկան, բայց այն ձևավորեց մարդկային բանականությունը: Մովսեսը մեկ անձ էր, Եղիա մարգարեն մեկ անձ էր, Դավիթ արքան մեկ անձ էր, Սուրբ Պողոս առաքյալը մեկ անձ էր, Սուրբ Աթանասը մեկ անձ էր, Լևոն Պապը մեկ անձ էր: Աստվածային շնորհը միշտ գործում է քչերի միջոցով. խորաթափանց տեսողությունը, ամուր համոզմունքը, քչերի անպարտելի վճռականությունը, մարտիրոսների արյունը, սրբի աղոթքը, հերոսական արարքը, վայրկենական ճգնաժամը, խոսքի կամ հայացքի մեջ կենտրոնացված էներգիան. ահա՛ թե ինչն է երկնային գործիքը: Մի՛ վախեցիր, փոքրիկ հոտ, որովհետև ամենակարող է Նա, Ով քեզ հետ է, և Նա մեծամեծ գործեր կանի քեզ համար» (Երանելի Ջոն Հենրի Նյուման, «Կաթողիկէների ներկա վիճակը»):

7. ԿԱՋՄԱՎՈՐՄԱՆ ՎԱՐՊԵՏ-ԱՇԱԿԵՐՏ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Կա մի ընդհանուր կարծիք, թե առաքյալների պատրաստությունը հիմնականում դասախոսություն լսելու և ձեռնարկներ ուսումնասիրելու մեջ է: Բայց Լեգեոնը հավատում է, որ այդպիսի պատրաստությունը չի կարող բնավ արդյունավետ լինել, եթե չուղեկցվի աշխատանքով: Եվ իսկապես, գործնական աշխատանքից բաժանված առաքելության մասին տեսությունը կարող է ունենալ սպասվածին հակառակ արդյունք: Որովհետև աշխատանքի կատարման ձևը քննարկելու ժամանակ անհրաժեշտ է նկարագրել դժվարությունները և առաջարկել աշխատանքի կատարման բարձր

ոգի և չափանիշ: Այդ կերպ խոսելը նորակոչիկների հետ՝ առանց, միևնույն ժամանակ, գործնական կիրառությամբ ցույց տալու, որ աշխատանքն իրենց ուժերի սահմաններում է, և իրականում հեշտ է, միայն կվախեցնի նրանց, և կհրաժարվեն կատարել այն: Ավելին, դասախոսությունների համակարգը միտված է ունենալու տեսաբաններ և մարդիկ, որոնք մտածում են աշխարհը դարձի բերել բանականության խաղի միջոցով: Այսպիսիները հակված չեն լինի նվիրվել խոնարհ աշխատանքներին և անձնական հարաբերությունների ջանասեր զարգացմանը, որից իսկապես կախված է ամեն ինչ, որը, թույլ տվեք ասել, լեգեոնականն ընդունում է պատրաստակամորեն:

Լեգեոնի կազմավորման մասին գաղափարը վարպետ-աշակերտ մեթոդն է: Լեգեոնը փաստում է, որ այդ միջոցը պատրաստության կատարյալ ճանապարհն է և կիրառելի է, ակնհայտորեն առանց բացառության, յուրաքանչյուր մասնագիտության և արհեստի մեջ: Երկարաշունչ դասախոսություններ կարդալու փոխարեն վարպետը աշակերտի աչքերի առաջ է դնում աշխատանքը և գործնականում ցույց է տալիս, թե ինչպես պետք է այն կատարվի և գործողության ընթացքում մեկնաբանություններ է անում զանազան կետերի շուրջ: Ապա աշակերտն ինքն է փորձում կատարել գործը, և անհրաժեշտության դեպքում վարպետն այն ուղղում է: Այդ համակարգից է ծնվում հմուտ արհեստավորը: Բոլոր դասախոսությունները պետք է հիմնված լինեն հենց գործնական աշխատանքի վրա. յուրաքանչյուր բառ պետք է կապված լինի գործողությանը: Եթե ոչ՝ արդյունքը քիչ կլինի: Գուցե դասը նույնիսկ չհիշվի: Զարմանալի է, թե դասախոսությունների ինչպիսի նվազագույն մասն են հիշում նույնիսկ այն աշակերտները, որոնք կանոնավոր դասի հաճախողներ են:

Բացի դրանից՝ եթե որպես առաքելական հասարակության սկիզբ դնելու միջոց գործի է դրվում դասախոսության համակարգը, ապա քիչ մարդիկ կներկայանան որպես նորակոչիկ: Դպրոցն ավարտելուց հետո մարդկանց մեծամասնությունը վերջ է դնում ուսման գործընթացին: Դպրոցական դասարանում կրկին հայտնվելու հեռանկարը

հատկապես վախեցնում է պարզ մարդկանց, նույնիսկ եթե սուրբ է դասարանը: Ահա թե ինչու առաքելության ուսուցման համակարգերը չունեն լայն գրավչություն: Լեգեոնը հիմնվում է ավելի պարզ, առավել հոգեբանական ազդեցության վրա: Լեգեոնի անդամները մարդկանց ասում են. «Գնա՛նք և այս գործն անենք միասին»: Նրանք, ովքեր գալիս են, դասարանում չեն հայտնվում: Նրանց առաջարկում են մի աշխատանք, որը կատարվում է իր նման մարդկանց կողմից: Այդ պատճառով նրանք գիտեն, որ այդ գործն իրենց ուժերի սահմաններում է և պատրաստակամորեն միանում են այդ միությանը: Միանալով, տեսնելով և մասնակցելով կատարված աշխատանքին, լսելով այդ աշխատանքի մասին հաշվետվությունները, դա լավագույն մեթոդով կատարելու մասին մեկնաբանությունները և այդ ամենը սովորելով՝ նրանք շուտով հմտանում են առաքելության մեջ:

«Լեգեոնը երբեմն քննադատվում է իր անդամների ոչ բավարար փորձառու լինելու պատճառով կամ այն պատճառով, որ չի պահանջում երկարատև ուսում: Հետևաբար պետք է ասել.

ա) Լեգեոնն օգտագործում է իր առավել պատրաստված անդամների աջակցությունը,

բ) ուսման վրա ծայրահեղ շեշտադրություն չանելով՝ այն ջանում է պատշաճ միջոցներով յուրաքանչյուրին առաջարկել համապատասխան առաքելություն,

գ) բայց գլխավոր նպատակն է՝ ստեղծել մի այնպիսի համակարգ, որի միջոցով Լեգեոնը կարող է սովորական կաթողիկէ հավատացյալին ասել. «Եկ, բե՛ր քո բաժին տաղանդը, մենք կօգնենք քեզ զարգացնել այն և Մարիամի օգնությամբ այն օգտագործել Աստծո փառքի համար»:

Չի կարելի մոռանալ, որ Լեգեոնը ոչ միայն կրթվածների և ուժեղների համար է, այլ նաև փոքր և անօգնական մարդկանց համար է» (Հ. Թովմաս Փ. Օ'Ֆլինն՝ Մարիամի Լեգեոնի Կոնսիլիումի նախկին Հոգևոր Առաջնորդ):

11

ԼԵԳԵՈՆԻ ՍԽԵՄԱՆ

1. ԱՆՁՆԱԿԱՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆՊԱՏԱԿ ԵՎ ՄԻՋՈՑ

Ընդհանուր և հիմնական միջոցը, որով Մարիամի Լեգեոնը պետք է իրականացնի իր նպատակը, Սուրբ Հոգու ներգործությամբ անձնական ծառայություն կատարելն է՝ ունենալով աստվածային շնորհը՝ որպես մղիչ սկզբունք և աջակցություն, և Աստծո փառավորումն ու հոգիների փրկությունը՝ որպես վերջնական նպատակ:

Ուստի կյանքի սրբությունը, որը Մարիամի Լեգեոնը ցանկանում է զարգացնել իր անդամների մեջ, միևնույն ժամանակ նրա գործողության հիմնական միջոցն է. «Ես եմ որթատունկը, իսկ դուք՝ ճյուղերը: Ով բնակվում է իմ մեջ, և ես՝ նրա մեջ, նա շատ պտուղ է տալիս, որովհետև առանց ինձ՝ ոչինչ չէք կարող անել» (Հվի. 15:5):

«Մենք հավատում ենք, որ Եկեղեցին, որի առեղծվածը ներկայացվում է այս Սրբազան Ժողովում, անսխալ սուրբ է, ինչպես վստահ ենք՝ որպես հավատքի առարկա: Որովհետև Քրիստոսը՝ Աստծո Որդին, Ով Հոր և Սուրբ Հոգու հետ միասին «միակ Սուրբն» է, սիրեց Եկեղեցին՝ որպես իր Հարսը և մատնեց Ինքն Իրեն՝ հանուն նրա, որպեսզի սրբացնի նրան (հմմտ.՝ Եփս. 5:25-26), և միավորեց Իրեն, ինչպես Իր Մարմինը՝ լցնելով նրան Սուրբ Հոգու շնորհով՝ ի փառս Աստծո: Այդ պատճառով Եկեղեցու մեջ ամեն ոք՝ լինեն եկեղեցական նվիրապետության պատկանողներ կամ նրանք, ովքեր հոգևորականների խնամքի տակ են, կոչված են սրբության, ըստ առաքյալի խոսքերի. «Ա՛յս է Աստծո կամքը. որ դուք սուրբ լինեք» (հմմտ.՝ Ա Թես. 4:3; Եփս. 1:4): Եկեղեցու այս սրբությունը անդադար երևում է շնորհի պտուղներով, որոնք Սուրբ Հոգին տալիս է հավատացյալներին, և այդպես էլ պետք է լինի. դա արտահայտվում է տարբեր ձևերով, անհատների միջոցով՝ իրենց կյանքի իրավիճակներում փնտրելով սիրո կատարելությունը, օգնելով մյուսներին հասնել սրբության: Այս ամենն ի հայտ է գալիս, մասնավորապես, «ավետարանական» կոչվող խորհուրդ-

ների գործադրմամբ: Այդ խորհուրդների կատարումը, որ շատ քրիստոնյաներ ստանձնել են Սուրբ Հոգու ազդեցությամբ՝ անհատապես, կամ Եկեղեցու կողմից արտոնված կարգավիճակում կամ ձևով, տալիս է և պետք է տա այդ սրբության ապշեցուցիչ վկայություն և օրինակ» (LG 39):

2. ԽԻՍՏ ԿԱՐԳԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հզոր բնական աղբյուրները, առանց կառավարման, վատնվում են: Նմանապես և ջանքը՝ առանց համակարգի, խանդավառությունը՝ առանց ուղղորդման, երբեք մեծ ներքին կամ արտաքին արդյունքներ չեն բերում և հազվադեպ են լինում տևական: Սա գիտակցելով՝ Լեգեոնն իր անդամներին ավելի շատ առաջարկում է մի ապրելակերպ, քան կատարել մի աշխատանք: Լեգեոնը տրամադրում է խիստ կարգավորված մի համակարգ, որի մեջ մեծ տեղ է հատկացվում օրենքի ուժին, որն ուրիշ համակարգերում միայն առաջարկվում է կամ թողնվում է, որ հասկացվի, և յուրաքանչյուր մանրամասնության վերաբերյալ պահանջում է բծախնդիր հետևողականություն: Փոխարենը, Լեգեոնը խոստանում է հաստատակամություն և քրիստոնեական կատարելության որակների՝ հավատքի, Մարիամի նկատմամբ սիրո, քաջության, ինքնազոհության, եղբայրասիրության, աղոթասիրության, խոհեմության, համբերության, հնազանդության, խոնարհության, գոհության և առաքելական ոգու տեսանելի աճ:

««Աշխարհականների առաքելություն» կոչվող երևույթի զարգացումը մեր օրերի յուրահատուկ դրսևորումն է, որ ունի անսահման հնարավորություններ, նույնիսկ եթե միայն հաշվի առնենք նրանց թիվը, և ուրիշ ոչ մի այլ պատճառ: Սակայն դա բավարար չի թվում այս հսկա շարժման համար: Երբ նայում ենք բազմաթիվ գեղեցիկ կերպով ստեղծված հոգևոր միաբանություններին, որոնք խնամում են նրանց, ովքեր կարող են թողնել աշխարհական կյանքը, ապա ապշեցնում է հակադրությունը, երբ համեմատում ենք այն կազմակերպական ձևի հետ, որը տրվել է այդ աշխարհականների միավորմանը:

Մի կողմից, ինչպիսի՛ ուժգնություն և ճշգրիտ գիտություն, որը

թույլ է տալիս լավագույն արդյունքների հասնել: Մյուս կողմից, ինչպիսի՛ տարրական և մակերեսային բաներ են տրված նրանց: Ճիշտ է, համակարգն իր անդամներից պահանջում է որոշակի ծառայություն, բայց մեծամասնության համար այն պարզապես մի քիչ է ավելին, քան մի շաբաթական իրադարձություն, և չի էլ ձգտում զբաղեցնել նրանց ավելի շատ: Պետք է լինի ավելի բարձր մի հայեցակարգ: Մի՞թե դա չպետք է լինի նրանց երկրային ուխտագնացության էությունը և իրենց ամբողջ հոգևոր կյանքի ողնաշարը:

Անկասկած, վանական միաբանությունը համատեղ աշխատողների և հավասար այլ բաների համար պետք է ձևավորի բնորոշ գաղափարը. ըստ այդմ, կարելի է համարել, որ կատարված աշխատանքի որակը կբարելավվի, եթե մոտ լինի միաբանության գաղափարին: Սակայն դա իր հետ բերում է պարտադրվող կանոնների գործադրման ճշգրիտ աստիճանի հստակեցման դժվարություն: Չնայած ցանկալի կարգուկանոնը արդյունավետության օգտին է՝ միշտ վտանգ կա չափն անցնելու և փոքրացնելու կազմակերպության մեջ այդ կարգուկանոնի հասցեականությունը: Պետք է հաշվի առնել, որ խոսքը մշտապես աշխարհականներից կազմված կազմակերպության մասին է, այլ ոչ թե վանական միաբանությանը համարժեք հասարակության մասին, կամ՝ մի կազմակերպության, որն ի վերջո դառնալու է վանական միաբանություն, ինչպիսի օրինակներ պատմության մեջ շատ կան:

Նպատակը սա է, և ոչ թե մեկ այլ բան. արդյունավետ կազմակերպության մեջ ներգրավել մարդկանց, որոնք ապրում են իրենց սովորական կյանքը, ինչպես որ մենք նրանց ճանաչում ենք, և նրանց թույլ տալ ունենալ նաև զուտ կրոնականից տարբեր զանազան ճաշակներ և նպատակներ: Կարգուկանոնի ծավալը պետք է լինի ոչ ավելին, քան այն չափը, որը կընդունի միջին խումբն այն մարդկանց, որոնք ներգրավված են այդ կազմակերպության մեջ, բայց այն, իհարկե, չպետք է լինի այդ չափից պակաս» (Մայքլ Քրիդոն, Մարիամի Լեգեոնի Կոնսիլիումի առաջին հոգևոր առաջնորդ):

3. ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Լեգեոնը ցանկանում է, որ անդամակցության կատարելությունը գնահատվի իր համակարգին ճշգրտորեն հետևելու համաձայն, այլ ոչ թե ըստ լեգեոնականի ջանքերի

արդյունքում ձեռքբերված որևէ հաջողության աստիճանի: Անդամը համարվում է անդամ այնքանով, որքանով ենթարկվում է Լեգեոնի համակարգին, և ոչ ավելին: Պրեզիդիումների հոգևոր առաջնորդներին և նախագահներին հորդորում ենք այս գաղափարը միշտ պահել անդամների մտքում: Դա ձևավորում է մի իդեալ (որը հաջողությունը և մխիթարությունը չեն կարող ձևավորել), որը հասանելի է ամենքին, և միայն դրա իրականացման մեջ կգտնվի բուժումը միապաղաղության, դժվար աշխատանքի, իրական կամ երևակայական ձախողման ժամանակ, որոնք, հակառակ դեպքում, անխուսափելիորեն վերջ կդնեն ամենախոստումնալից սկիզբ ունեցող առաքելական աշխատանքին:

«Հարկ է նշել, որ մեր ծառայությունը՝ Մարիամի հասարակության հանդեպ, գնահատվում է ոչ թե մեր պաշտոնի կարևորությամբ, այլ մեր գերբնական հոգևոր ոգու աստիճանով և Մարիամին ծառայելու նախանձախնդրությամբ, որով մենք հնազանդությամբ նվիրվում ենք մեր գործին, որքան էլ հեզ և թաքնված լինի այն» (Petit Traite de Marialogie: Marianiste):

4. ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամենից առաջ Լեգեոնն իր համակարգում յուրաքանչյուր անդամի առջև դնում է ժողովներին հաճախելու հիմնական պարտականությունը: Ինչպես այրող ոսպնյակն է արևի ճառագայթների համար, այնպես էլ ժողովն է՝ անդամների համար: Կենտրոնացումը նրանց հավաքում է, առաջացնում է կրակ և բոցավառում է ամեն ինչ, որ մոտենում է դրան: Ժողովն է ձևավորում Լեգեոնը: Եթե այս կապն անջատվի և չգնահատվի, անդամները կցրվեն, և աշխատանքը կփլուզվի: Ընդհակառակը, որքանով ժողովները հարգվում են, այդքանով էլ կազմակերպության զորությունն ուժգնանում է:

Հետևյալ խոսքերը, որ գրվել են Լեգեոնի մասին ծագման առաջին իսկ օրերին, ցույց են տալիս մեր օրերում, ինչպես և այն ժամանակ, կազմակերպության մասին Լեգեոնի աշխարհայացքում ժողովի ունեցած կարևորությունը, որն

այդ կազմակերպության առանցքային կետն է: «Կազմակերպության մեջ առանձին անհատները, անգամ ամենահայտնիները, ուրախ են, որ համակարգի մի մասն են: Նրանք իրենց անկախության մեծ մասը զիջում են մեխանիզմին, այսինքն՝ իրենց համագործակիցներին՝ որպես մեկ մարմին, բայց դրանով աշխատանքը շահում է հարյուրապատիկ անգամ ավելի, քանի որ բազում անհատներ, որոնք հակառակ դեպքում կլինեին անարդյունավետ կամ անգործ կանգնած, գործի են դրվում՝ յուրաքանչյուրը ո՛չ իրենց անհատական տկարություններով, այլ իրենց մեծագո՛ւյն որակներով, եռանդով և ուժով: Ենթադրենք, որ ածուխի կտորները չեն օգտագործվում և ոչ էլ նետվում են կրակի օջախը, եթե կարող ենք այսպիսի համեմատություն անել:

Ուստի, կազմակերպված համակարգն ունի իր սեփական յուրահատուկ կյանքը՝ անկախ անհատներից, որոնք կազմում են այն, և ավելի շուտ այս առանձնահատկությունն է, և ոչ թե աշխատանքի գեղեցկությունը և անհրաժեշտությունը, որ գործնականում մագնիսի նման գրավում է նոր անդամներին: Միավորումը հաստատում է ավանդույթ և հավատարմություն, վայելում է հարգանք ու հնազանդություն և հզոր կերպով ոգեշնչում է իր անդամներին: Խոսե՛ք նրանց հետ և կտեսնեք, որ նրանք հենվում են դրա վրա՝ որպես մի իմաստուն և մեծ մոր վրա: Եվ այդպես էլ կա: Մի՞թե այն չի փրկում նրանց բոլոր ծուղակներից՝ եռանդի սխալներից, ձախողման հիասթափությունից, հաջողության հասնելու հետևանքով մեծամտանալուց, անհիմն կարծիքներից և կասկածներից, միայնության վախից և, ընդհանրապես, անփորձության սորուն ավազից: Այն վերցնում է պարզապես լավ նպատակի հումքը և կրթում է այն, պլանավորում է իր աշխատանքը կանոնավոր ծրագրով, ապահովում է ընդլայնումը և շարունակականությունը» (Հ. Մայքլ Քրիդոն, Մարիամի Լեգեոնի Կոնսիլիումի առաջին հոգևոր առաջնորդ):

«Մեզ՝ նրա անդամների համար, Մարիամի հասարակությունը մեր Երկնային Մոր՝ Մարիամի շարունակությունն է, տեսանելի արտահայտությունը: Մարիամը ընդունել է մեզ այդ հասարակության մեջ՝ իբրև իր մայրական գրկում, որպեսզի մեզ ձևավորի Հիսուսի նման և այդպես մեզ դարձնի իր արտոնյալ զավակնե-

ը, որպեսզի մեզ տա առաքելական հանձնարարություն և այդ-պիսով մեզ մասնակից դարձնի իր առաքելությանը՝ որպես հոգի-ների Համա-Փրկագնող: Մեզ համար Մարիամի հասարակության նպատակն ու շահերը նույնականացվում են Մարիամի՛ նպատակի ու շահերի հետ» (Petit Traite de Marialogie: Marianiste):

5. ՊՐԵԶԻԴԻՈՒՄԻ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Պրեզիդիումն անցկացնում է իր շաբաթական ժողովը մի մթնոլորտում, որը գերբնական է դառնում հարուստ աղոթքով, ջերմեռանդությամբ, եղբայրության քաղցր ոգով, որտեղ յուրաքանչյուր լեգեոնականի հանձնարարվում է աշխատանք, և յուրաքանչյուր լեգեոնական հաշվետվու-թյուն է տալիս իր կատարած աշխատանքի մասին: Այս ամենշաբաթյա ժողովը Լեգեոնի սիրտն է, որից կենարար արյունը հոսում է բոլոր անոթների և զարկերակների մեջ: Ժողովն էլեկտրակայան է, որից բխում է լույսը և էներգիան: Դա մի գանձարան է, որտեղից ապահովվում են Լեգեոնի հատուկ կարիքները: Դա համայնքային մեծ վարժանք է, որտեղ ինչ-որ Մեկը, ըստ իր խոստման, անտեսանելի կեր-պով նստած է նրանց մեջ, որտեղ տրվում է աշխատանքի հատուկ շնորհը, և որտեղ անդամները լցվում են հոգևոր կարգուկանոնի ոգով, որը նախ և առաջ ձգտում է վայե-լել Աստծո բարեհաճությունը և հասնել անձնական սրբու-թյան. այսպիսով՝ ստեղծվում է մի կազմակերպություն, որը լավ հաշվարկված է՝ հասնելու համար այդ նպատակներին, և ապա սկսում է կատարել հանձնարարված աշխատանքը՝ ստորադասելով անձնական նախասիրությունները:

Հետևաբար, լեգեոնականները պրեզիդիումի շաբա-թական ժողովին ներկա լինելը պետք է համարեն Լեգեոնի նկատմամբ իրենց առաջնային և ամենասրբազան պարտա-կանությունը: Ոչինչ չի կարող փոխարինել սրան, առանց որի՝ նրանց աշխատանքը կլինի մարմին՝ առանց հոգու: Բանա-կանությունը հուշում է, իսկ փորձառությունը՝ ապացուցում, որ այս առաջնահերթ պարտականության հանդեպ արհա-մարհանքին կհաջորդի անարդյունավետ աշխատանքը

և շուտով կհանգեցնի Լեգեոնի շարքերից անդամների հեռանալուն:

«Նրանց համար, ովքեր չեն քայլում Մարիամի հետ, մեջբերենք Սուրբ Օգոստինոսի խոսքերը՝ «Bene curris sed extra viam», այսինքն՝ «Դուք շատ լավ եք վազում, բայց շեղված եք ճանապարհից»: Ի վերջո, ո՞ւր եք հասնելու» (Փեթիթալոթ):

12
ԼԵԳԵՈՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾԸ

Լեգեոնի նպատակը որևէ առանձնահատուկ աշխատանքի կատարումը չէ, այլ գլխավորապես իր անդամների սրբացումն է: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է, առաջինը, Լեգեոնի բոլոր անդամների մասնակցությունը Լեգեոնի տարբեր ժողովներին, որոնք այնքան ողողված և ներշնչված են աղոթքներով ու ջերմեռանդությամբ, որ դրանցով գունավորվում է ժողովների ամբողջ ընթացքը: Ապա Լեգեոնը նպատակամղվում է հատուկ կերպով զարգացնելու այդ սրբությունը՝ դրան հաղորդելով առաքելության որակ և այնպես ուժգին ջերմացնելով այն, որ ինքն իրեն տարածվի: Այս տարածումը պարզապես առաջացրած ուժի օգտագործումը չէ, այլ (որպես ինչ-որ պատասխան) այդ ուժի ինքնին զարգացման անհրաժեշտ մասն է: Որովհետև առաքելական ոգին լավագույն կերպով զարգանում է առաքելությա՛ն միջոցով: Ուստի, որպես էական պարտավորություն, Լեգեոնը յուրաքանչյուր անդամի հանձնարարում է ամեն շաբաթ կատարել պրեզիդիումի կողմից նշանակված որոշակի աշխատանք: Աշխատանքը գալիս է ժողովից՝ որպես ժողովի նկատմամբ հնազանդության գործողություն, և որոշ բացառություններով, որոնց մասին կխոսենք ավելի ուշ, պրեզիդիումը կարող է ընդունել ցանկացած

ակտիվ աշխատանք՝ որպես անդամների ամենշաբաթյա գոհացուցիչ պարտականություն: Գործնականում, այնուամենայնիվ, Լեգեոնի ոգին կպահանջի աշխատանքն ուղղել դեպի փաստացի ամենածանր կարիքներին: Որովհետև այդ եռանդի ուժը, որը Լեգեոնը փորձում է իր անդամների մեջ զարգացնել, պահանջում է արժեքավոր նպատակ: Չնչին աշխատանքը դրա վրա կազդի ո՛չ բարենպաստ կերպով, այնպես որ այն սրտերը, որոնք պատրաստ էին իրենք իրենց սպառել հոգիների փրկության համար և փոխադարձ սիրով պատասխանել Քրիստոս-Սիրուն, ջանալ և զոհաբերվել՝ ի երախտագիտություն Քրիստոսի տառապանքներին և մահվանը, ավարտում են խեղճությամբ և գաղջությամբ:

«Ես չեմ վերստեղծվել նույնպիսի հեշտ կերպով, ինչպես ստեղծվել եմ: Նա խոսեց, և ամեն ինչ ստեղծվեց: Բայց եթե Նա ինձ ստեղծեց պարզ կերպով և միանգամից՝ մեկ խոսքով, ապա ինձ վերստեղծելիս Նա բազմաթիվ խոսքեր ասաց և հրաշքներ արեց ու շատ տառապեց» (Սուրբ Բեռնարդ):

2. ԱՌԱՎԵԼ ՀԵՌԱՎՈՐ ԵՎ ՄԵԾ ՆՊԱՏԱԿԸ. ԼԻՆԵԼ ԹԹԽՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՋ

Չնայած ընթացիկ աշխատանքների ողջ կարևորությանը՝ Լեգեոնն այն չի համարում անդամների առաքելության վերջնական կամ նույնիսկ գլխավոր նպատակը: Այսպիսի աշխատանքը լեգեոնականից շաբաթական տանում է երկու, երեք կամ ավելի ժամ, մինչդեռ Լեգեոնը շաբաթվա յուրաքանչյուր ժամի մեջ տեսնում է ցոլարձակումն առաքելության այն կրակի, որը վառվում է Լեգեոնի օջախում: Համակարգը, որն այս կրակի առանձնահատկությունը փոխանցում է հոգիներին, հզոր ուժ է տարածում: Առաքելության ոգին մուտք է գործում միայն որպես տեր՝ գերիշխելով յուրաքանչյուր մտքի, բառի և գործողության վրա, և իր արտաքին ինքնարտահայտման մեջ այն չի սահմանափակվում ժամանակով և տարածությամբ: Նույնիսկ ամենաանվստահ կամ ամենաանպատրաստ անձն էլ օժտվում է մյուսների վրա ազդելու առանձնահատուկ կարողությամբ,

այնպես որ՝ ինչպիսին էլ լինի միջավայրը, նույնիսկ առանց գիտակցաբար առաքելության ձգտելու, մեղքն ու անտարբերությունն ի վերջո կխոնարհվեն իրենցից ավելի մեծ ուժի առջև: Համընդհանուր փորձառությունն այսպես է սովորեցնում: Ուստի այն գեներալի նման, որ գոհ է իր մարտական կարևոր դիրքերի գրավմամբ, Լեգեոնը մտածում է այն մասին, որ յուրաքանչյուր տանը, խանութում, դպրոցում, գործարանում և աշխատանքի ու հանգստի այլ վայրերում հանգամանքների բերումով լինի գոնե մեկ ճշմարիտ լեգեոնական: Նույնիսկ այնտեղ, որտեղ գայթակղությունը և անկրոնությունը հասել են ծայրագույն աստիճանի կամ, այսպես ասած, արմատավորված են, Դավթի Աշտարակի այս ևս մեկ նմանության ներկայությունը կարգելափակի և կսպառնա չարի հետագա առաջխաղացմանը: Ապականությանը երբևէ զիջում չի արվի, կգործադրվեն բուժման ջանքեր, մեղքի պատճառով ցավ կզգան և կաղոթեն, վճռականորեն և անզիջում կպայքարեն մեղքի դեմ, և, հավանաբար, վերջում պայքարը կպսակվի հաջողությամբ:

Այսպիսով, Լեգեոնը սկսում է միավորել իր անդամներին իրենց Թագուհու հետ՝ մեկ մտքով և աղոթքով: Այնուհետև ուղարկում է նրանց մեղավոր և տխուր վայրեր լավ աշխատանք կատարելու համար և խանդավառելով նրանց անել ավելին: Վերջապես, Լեգեոնն ամենօրյա կյանքի խորդուբորդերում առաքելության համար փնտրում է ավելի մեծ նպատակ: Գիտակցելով, թե ինչ է արվել անդամների սահմանափակ թվով, և հասկանալով, որ իրենց շարքերը կարող են աճել գրեթե մինչև անվերջություն, հավատալով, որ Լեգեոնի համակարգը, Եկեղեցու կողմից եռանդուն կերպով կիրառելու դեպքում, տրամադրում է տարօրինակ կերպով արդյունավետ միջոց մեղավոր աշխարհը մաքրելու համար, Լեգեոնը տենչում է բազմապատկել իր անդամների քանակը, որպեսզի այն լինի լեգեոն նաև թվաքանակով, ինչպես անունով է:

Միավորելով իր ակտիվ անդամներին և օժանդակներին, ինչպես նաև նրանց, ում համար նրանք աշխատում են՝ Լեգեոնը կարող է իր գործունեությամբ աստիճանաբար ներգրավել ողջ հասարակությանը՝ մարդկանց

բարձրացնելով արհամարհանքի կամ միապաղաղության մակարդակից վեր՝ դեպի խանդավառ անդամակցությունը Եկեղեցու կյանքին: Անդրադարձե՛ք, թե սա ի՛նչ կնշանակի քաղաքի կամ գյուղի համար, ոչ միայն Եկեղեցում, այլև որպես շարժիչ ուժ, ուղիղ կամ Սրբերի Հաղորդության միջոցով ուղարկելով ազդակներ մինչև աշխարհի ծայրերը և խավար ծայրերը: Ինչպիսի՛ իդեալ է սա. մի ամբողջ հասարակություն՝ կազմակերպված Աստծո համար: Եվ սակայն սա իդեալ չէ: Սա ամենագործնական և ամենահնարավոր բանն է այսօրվա աշխարհում, եթե միայն մեր աչքերը վեր են բարձրացված, և բազուկները՝ պատրաստ աշխատելու:

«Այո՛, աշխարհականները «ընտրյալ ցեղ են, սուրբ քահանայություն», նաև կոչված լինելու «երկրի աղը» և «աշխարհի լույսը»: Նրանց հատուկ կոչումը և առաքելությունն է՝ Ավետարանն արտահայտել իրենց կյանքում և ներդնել այն որպես թթխմոր աշխարհի իրականության մեջ, որտեղ նրանք ապրում և աշխատում են: Աշխարհը ուրվագծող հզոր ուժերը՝ քաղաքականությունը, զանգվածային լրատվության միջոցները, գիտությունը, տեխնոլոգիան, մշակույթը, կրթությունը, արդյունաբերությունը և աշխատանքը ճիշտ այն ոլորտներ են, որտեղ աշխարհականները կարող են կատարել իրենց առաքելությունը: Եթե այս ուժերն առաջնորդվում են մարդկանց կողմից, որոնք Քրիստոսի ճշմարիտ աշակերտներ են, և որոնք, միևնույն ժամանակ, լիովին գիտակ են աշխարհիկ գիտության և հմտությունների մեջ, ապա Քրիստոսի փրկարար ուժն իրապես ներսից կկերպարանափոխի աշխարհը» (Հովհաննես Պողոս Բ Պապի ուղերձը, Լիմերիկ, Իռլանդիա, 1979թ. հոկտեմբեր):

3. ՄԻԱՎՈՐԵԼ ԱՄԵՆՔԻՆ

«Նախ Աստծո արքայությունը և Նրա արդարության որոնումը» (Մտթ. 6:33), այսինքն՝ հոգիների համար ուղղակի աշխատանքը ամբողջովին կլանում է Լեգեոնին: Այնուամենայնիվ, չպետք է չնկատենք, որ այլ բաներ են «հավելվել դրան»: Օրինակ՝ Լեգեոնն ունի սոցիալական արժեք: Սա դառնում է ազգային առավելություն առանձին երկրի համար և հոգևոր ձեռքբերում՝ այդ երկրի մարդկանց համար:

Սոցիալական մեխանիզմի հաջող աշխատանքը, ինչպես յուրաքանչյուր այլ մեխանիզմում, պահանջում է իր բաղկացուցիչ մասերի ներդաշնակ համագործակցությունը: Յուրաքանչյուր մասը՝ անհատ քաղաքացին, պետք է հստակորեն անի այն, ինչ նախատեսված է, որ ինքն անի, և նվազագույն հնարավոր շեղումներով: Եթե յուրաքանչյուրն ամբողջությամբ չի ծառայում, ապա լինում է վատնում, և խախտվում է այդ անհրաժեշտ հավասարակշռությունը՝ փչացնելով մասնիկների հավասարությունն իրար նկատմամբ: Վերանորոգումն այստեղ անհնարին է, քանի որ չափազանց բարդ է գտնել խնդրի աստիճանը կամ աղբյուրը, ուստի գտնվելիք լուծումը պետք է լինի ավելի մեծ ուժ գործադրելը կամ ավելի թանկ յուղ օգտագործելը: Այս լուծումը վնասում է ծառայելու կամ ինքնաբուխ համագործակցելու գաղափարներին, այնպես որ դրանք աստիճանաբար ձախողվում են: Համայնքներն ունեն այնպիսի կենսունակություն, որ նրանք շարունակում են կատարել իրենց գործառույթները, նույնիսկ եթե նրանց մի մասը չունի համապատասխան կարողություններ: Բայց նրանք աշխատում են չքավորության, հիասթափության և դժբախտության սարսափելի գնով: Փող ու ջանքեր են ծախսվում շարժման մեջ դնելու համար մասեր, որոնք պետք է առանց ջանքերի աշխատեին, կամ, որոնք իրոք պետք է լինեին զորության աղբյուրներ: Հետևանքում՝ խնդիրներ, իրարանցում և ճգնաժամ:

Ո՞վ կարող է մերժել, որ սա այսօր պատահում է նույնիսկ ամենալավ կառավարվող երկրներում: Եսասիրությունն անհատապաշտ կյանքի օրենքն է: Ատելությունը շատերի կյանքը վերածում է զուտ ոչնչացնող ուժի, և յուրաքանչյուր նոր օր իր հետ բերում է նոր և համատարած ապացույցը մի կենսական ճշմարտության, որը կարելի է արդյունավետ կերպով արտահայտել այսպես. «Մարդիկ, որոնք ժխտում են Աստծո գոյությունը, որոնք ուրանում են Աստծուն, կեղծավորներ են յուրաքանչյուր մեկի և այն ամենի նկատմամբ, ինչը ցածր է Աստծուց, ամեն ինչի հանդեպ՝ թե՛ երկրի վրա, թե՛ երկնքում» (Բրայան Օ'Հիգգինս): Եթե պետությունը միայն անհատական կյանքերի հանրագումարն է, ապա ի՞նչ բարձունքների կարող է այն հասնել: Վտանգներ և ցավեր՝

իրենք իրենց համար. ուրիշ ի՞նչ են առհասարակ ազգերն առաջարկում աշխարհին, բացի միայն իրենց սեփական թոհուբոհից:

Բայց ենթադրենք, որ հասարակության մեջ մտնում է մի զորություն, որը վարակի պես փոխանցվում է մեկից մյուսը և ինքնազոհաբերման, փոխադարձ սիրո, կատարելության գաղափարները հաճելի է դարձնում անհատներին: Ինչպիսի՛ փոփոխություն է կատարվում: Ցավոտ վերքերը բուժվում են, և կյանքն ապրում են այլ մակարդակի վրա: Ենթադրենք՝ ծնվեր մի ազգ, որը կկառուցեր իր կյանքը վսեմ չափանիշների վրա և աշխարհին ցույց կտար մի ժողովրդի օրինակ, որ գործադրում է իր հավատքը և այսպիսով, անկասկած, կլուծեր իր խնդիրները: Ո՞վ կարող է կասկածել, թե նման ազգը կլինի լույս աշխարհի համար, այնպես, որ աշխարհը կգա նրա ոտքերի մոտ նստելու, որպեսզի սովորի նրանից:

Այժմ անվիճելի է, որ Լեգեոնն ունի զորություն՝ աշխարհականների մեջ արթնացնելու կենսական հետաքրքրություն սեփական կրոնի հանդեպ, և ջերմեռանդ իդեալիզմ հաղորդելու նրանց, ովքեր գալիս են Լեգեոնի ազդեցության տակ, այնպես որ նրանք հակված են մոռանալու իրենց աշխարհիկ բաժանումները, տարբերությունները և հակամարտությունները և ոգեշնչվում են ջանք թափելու և սիրելու՝ հանուն ողջ մարդկության: Կրոնում արմատացած այս իդեալիզմը զուտ զգացմունք չէ: Այն անհատին ստիպում է մտածել ծառայելու մասին, պատճառ է դառնում մեծ զոհաբերություններ կատարելու, հասցնում է հերոսության բարձունքների և չի անհետանում:

Ինչո՞ւ: Պատճառը շարժառիթն է: Ուժը պետք է մի աղբյուր ունենա: Լեգեոնն ունի համոզիչ շարժառիթ՝ ծառայել հասարակությանը: Պատճառն այն է, որ Հիսուսը և Մարիամը Նազարեթի քաղաքացիներ էին: Նրանք կրոնական նվիրվածությամբ սիրում էին այդ քաղաքը և իրենց երկիրը, որովհետև հրեաների համար հավատքը և հայրենիքն այնքա՛ն աստվածայնորեն միաձուլված էին, որ ասես մեկ լինեին: Հիսուսը և Մարիամը կատարելապես ապրում էին իրենց համայնքի ընդհանուր կյանքը: Այնտեղ նրանք խորապես հետաքրքրված էին յուրաքանչյուր անձով և

առարկայով: Անհնար կլիներ մտածել, թե նրանք կարող էին անտարբեր կամ արհամարհող լինել որևէ առումով:

Այսօր աշխարհը Հիսուսի և Մարիամի երկիրն է, և յուրաքանչյուր վայրը՝ Նրանց Նազարեթը: Մկրտված համայնքում Նրանք ավելի ամուր են կապված մարդկանց հետ, քան իրենց ազգականների հետ էին: Բայց Նրանց սերն այժմ պետք է բխի Խորհրդավոր Մարմնի միջոցով: Եթե Խորհրդավոր Մարմնի անդամներն այս ոգով իրենք իրենց հորդորում են ծառայել այն վայրում, որտեղ ապրում են, ապա Հիսուսը և Մարիամը կանցնեն այդ վայրով՝ հեղելով Իրենց արդյունավետ ազդեցությունները ոչ միայն հոգիների վրա, այլ նաև ողջ շրջապատի վրա: Կլինի նյութական բարելավում, խնդիրները կնվազեն: Այլապես իրական բարելավում չի կարելի ձեռք բերել որևէ այլ աղբյուրից:

Քրիստոնեական պարտականության հանդեպ այս ուշադրությունը յուրաքանչյուր վայրում կարող է նպաստել հայրենասիրությանը: Այս բառը ցույց է տալիս չբացահայտված մի ոլորտ, որովհետև ի՞նչ է իսկական հայրենասիրությունը: Ողջ աշխարհում չկա դրա մասին որևէ ուղեցույց կամ նմուշ: Թերևս հայրենասիրության մի մոտ բացատրություն է՝ նվիրվածությունն և ինքնազոհողությունը, որոնք զարգանում են պատերազմի ընթացքում: Բայց այս շարժառիթը բխում է ավելի շատ ատելությունից, քան սիրուց, և ըստ այդմ, այն ուղղված է դեպի ոչնչացնելը: Ուստի հրամայական է, որ առաջարկվի խաղաղասեր հայրենասիրության մի ձև:

Համայնքի հենց այս հոգևոր ծառայությունն է, որը Լեգեոնը հորդորում է կատարել հետևյալ վերնագրով. «Ճշմարիտ նվիրում՝ ազգին»: Իմաստը ոչ միայն այն է, որ այս ծառայությունը պետք է իրականացվի հոգևոր նպատակով, այլ նաև այն, որ այդ ծառայությունը և դրանից բխող բոլոր հարաբերությունները պետք է օգտագործվեն՝ առաջ տանելու համար հոգևորը: Այն գործողությունները, որոնք առաջընթաց ունեն միայն նյութական մակարդակի վրա, կեղծում են ամբողջ «Ճշմարիտ նվիրում՝ ազգին» գաղափարը: Երանելի Ջոն Հենրի Նյումանը գերազանց կերպով է արտահայտում այս հիմնարար գաղափարը, երբ ասում է, որ

չափազանց սարսափելի է պատկերացնել նյութական առաջընթացը, որը չի զուգորդվում համապատասխան բարոյական առաջընթացով: Պետք է պահպանվի ճիշտ հավասարակշռությունը:

Նայե՛ք, աշխարհի ազգե՛ր: Եթե Լեգեոնը այսպիսին է, արդյոք այն տպավորությունը չե՞ք ստանում, թե Լեգեոնն առաջարկում է օգտագործել իր ուժերը՝ որպես հրաշագործ ասպետների զորություն, որոնք կարող են միավորել մարդկանց՝ կատարելու մեծ գործեր Աստծո համար. մի ծառայության, որը մեծապես գերազանցում է Արթուր թագավորի լեգենդար պատերազմին, որը Թեննիսոնի խոսքերով, «միավորեց իր աշխարհի բոլոր ասպետներին Կլոր Սեղանի միաբանության մեջ՝ մի փառավոր ընկերություն, մարդկանց մի ծաղկաքաղ, որը ծառայում է որպես տիպար՝ հզոր աշխարհի համար, և նոր ժամանակի մի ազնիվ սկիզբ էր»:

«Այսպիսով, Եկեղեցին, լինելով միաժամանակ և՛ «տեսանելի կազմակերպություն, և՛ հոգևոր համայնք», անցնում է միևնույն ճամփորդությունը, ինչպես ողջ մարդկությունը, և աշխարհի հետ միասին կիսում է միևնույն երկրային վիճակը. Եկեղեցին պետք է լինի մի թթխմոր և, որպես այդպիսին, մարդկային հասարակության հոգին՝ նորոգվելով Քրիստոսով և վերափոխվելով Աստծո ընտանիքի:

Վատիկանի Բ Ժողովը հորդորում է քրիստոնյաներին՝ որպես երկու քաղաքների քաղաքացիների, հավատարմորեն կատարել իրենց պարտականությունները՝ Ավետարանի ներշնչմամբ: Սխալ է մտածելը, թե քանի որ այստեղ չունենք հավերժական քաղաք, այլ փնտրում ենք գալիք քաղաքը, ապա մեզ արտոնված է սահմանափակել մեր երկրային պատասխանատվությունը. սա նշանակում է՝ մոռանալ, որ մեր հավատքի շնորհիվ մենք ավելի շատ ենք պատասխանատվություն կրում կատարելու համար այս պարտականությունները՝ ըստ յուրաքանչյուրի կոչման» (GS 40.43):

«Վատիկանի Բ Ժողովի Հրամանագրի կողմից ընդգծված այս անհրաժեշտության և պարտականության գործնական պատասխանը կարելի է գտնել 1960թ. սկիզբ առած լեգեոնական մի շարժման մեջ, որը կոչվում է «Ճշմարիտ նվիրում՝ ազգին»: Արդեն ապահովված հաջողության չափը տանում է դեպի զարգացման լայն հնարավորությունների: Բայց պետք է շեշտել, որ այն, ինչ Լեգեոնն առաջարկում է ժամանակավոր աշխարհին, բացառիկ գիտելիք կամ փորձագիտություն չէ, արտակարգ հմտություններ չեն,

ոչ էլ նույնիսկ բազմաթիվ աշխատողներ, այլ հոգևոր մի զարգացում, որը Լեգեոնը դարձրել է համաշխարհային ուժ, և որը կարող է օգտագործվել՝ բարձրացնելու ժողովրդի որևէ հատվածի, որոնք ունեն խորաթափանցություն և լավ ընկալում այն կիրառելու համար: Բայց նախաձեռնությունը պետք է բխի Լեգեոնից: Խուսափելով հանդերձ որևէ աշխարհիկ մտայնությունից, այնուամենայնիվ, Լեգեոնը պետք է նկատի ունենա աշխարհը՝ ըստ վերը նշված Հրամանագրի: Պետք է գիտակցել, որ մարդը ստիպված է ապրել նյութական աշխարհի մեջ, և մարդու փրկությունը մեծ չափով կապված է դրա հետ» (Հ. Թովմաս Պ. Օ՛Ֆլինն՝ Մարիամի Լեգեոնի Կոնսիլիումի նախկին հոգևոր առաջնորդ):

4. ՄԵԾ ԳՈՐԾԵՐ ԱՍՏԾՈ ՀԱՄԱՐ

Նման ասպետություն անհրաժեշտ է կրոնի համար՝ հատկապես վտանգավոր այս ժամանակաշրջանում: Աշխարհիկությունը (secularism) և անկրոնությունը՝ հզոր քարոզչության աջակցությամբ, տարածում են իրենց ապականող ազդեցությունն անդադար ընդլայնվող շրջանակներում, և թվում է, թե ունակ են գրավելու աշխարհը:

Այս հսկա ուժերի համեմատությամբ, Լեգեոնը թվում է մի համեստ երամ: Բայց հենց այս հակադրությունն է քաջալերում մեզ: Լեգեոնը բաղկացած է հոգիներից, որոնք միավորված են Ամենահզոր Կույսի հետ: Ավելին, այն պարունակում է մեծ սկզբունքներ, և գիտի, թե ինչպես կիրառել դրանք արդյունավետ կերպով: Հնարավոր է, որ Ով հզոր է, Լեգեոնի համար և Լեգեոնի միջոցով կանի մեծ գործեր:

Մարիամի Լեգեոնի նպատակները տրամագծորեն հակառակ են այլ լեգեոնների նպատակներին, որոնք մերժում են «մեր միակ Վարդապետին և Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին» (Հուդ. 1.4): Լեգեոնի նպատակը Աստծուն և կրոնը մոտեցնելն է յուրաքանչյուր մարդկային հոգուն, իսկ այլ ուժերի նպատակը ճիշտ հակառակին հասնելն է: Բայց չպետք է մտածել, որ Լեգեոնի կառուցվածքը դիտավորյալ ստեղծված էր անհավատների այս կայսրության դեմ: Իրականում ամեն ինչ ավելի պարզ էր: Մի փոքրիկ խումբ հավաքվեց Աստվածամոր արձանի շուրջ և խնդրեց նրան.

«Առաջնորդի՛ր մեզ»: Միավորված նրա հետ՝ նրանք սկսեցին այցելել մի մեծ քաղաքի հիվանդանոց, որը լի էր հիվանդներով, տառապյալներով և հուսահատներով՝ նրանց յուրաքանչյուրի մեջ տեսնելով Մարիամի Սիրելի Որդուն: Նրանք քիչ-քիչ հասկացան, որ Հիսուսը նաև յուրաքանչյուր մարդ արարածի մեջ է, և որ պետք է միանան Աստվածամոր մայրական գործին՝ հանուն Քրիստոսի, Ով ներկա է յուրաքանչյուր անձի մեջ: Այսպիսով, Սուրբ Կույսի հետ ձեռք ձեռքի բռնած՝ նրանք սկսեցին այս համեստ ծառայության աշխատանքը, և ահա՛, նրանք աճեցին-դարձան մի լեգեոն, և Լեգեոնը աշխարհով մեկ կատարում է մարդու հանդեպ Աստծո սիրո և Աստծո հանդեպ մարդկանց սիրո պարզ գործերը, և ամենուրեք այդ սերը ցույց է տալիս իր ուժը՝ արթնացնելով և գրավելով մարդկային սրտերը:

Նմանապես, աշխարհիկ համակարգերն էլ կարևորում են մարդու հանդեպ ծառայությունն ու սերը: Նրանք քարոզում են եղբայրասիրության դատարկ մի ավետարան: Միլիոնավոր մարդիկ հավատում են այդ ավետարանին: Հանուն դրա՝ նրանք թողնում են մի կրոն, որը նրանք համարում են իներտ: Բայց այս վիճակն անհույս չէ: Կա միջոց՝ այդ որոշում կայացրած միլիոնավոր մարդկանց վերադարձնելու դեպի հավատքը և փրկելու միլիոնավոր այլ մարդկանց: Հույսը այն սկզբունքի կիրառման մեջ է, որը կառավարում է աշխարհը, և որի մասին Սուրբ Ժան Վիաննեյը՝ Արսի Վարդապետը, վկայել է այսպես. «Աշխարհը պատկանում է նրան, ով ամենաշատն է սիրում և ապացուցում է այդ սերը»: Մարդիկ չեն կարող չտեսնել և չազդվել մի ճշմարիտ հավատքով, որը գործում է իսկական հերոսական սիրով բոլորի նկատմամբ: Համոզե՛ք նրանց, որ Եկեղեցին առավելագույնս սիրում է նրանց, և նրանք կվերադառնան հավատքին՝ հակառակ ամեն ինչի: Նրանք իրենց կյանքն էլ կտան այդ հավատքի համար:

Ոչ մի սովորական սեր չի կարող այդպես մարդկանց գրավել: Դա ոչ էլ կարող է անել միջակ կաթողիկէությունը, որն ինքը հազիվ է կարողանում գոյատևել: Դա կարող է անել այնպիսի կաթողիկէությունը, որը սիրում է իր Տիրոջը՝ Քրիստոսին, իր ողջ սրտով, և ապա տեսնում և սիրում է

Նրան՝ բոլոր մարդկանց մեջ՝ անկախ նրանց նկարագրից: Բայց Քրիստոսի այս վսեմագույն եղբայրասիրությունը պետք է կիրառվի այնպիսի չափով, որ կողքից դիտողները ընդունեն, որ դա իսկապես Եկեղեցու բնութագիրն է և ոչ թե պարզապես Եկեղեցու մի քանի վեհ անդամների գործողությունները: Ուստի այն պետք է երևա աշխարհականների ընդհանուր կյանքում:

Բայց արդյոք անհույս չէ՞ բոցավառել ողջ Եկեղեցին այս վերամբարձ ոգով: Այո՛, սա հերկուլեսյան առաջադրանք է: Իսկապես, այնքա՛ն անվերջ են խնդրի հեռանկարները, այնքա՛ն անվերջ են բանակները, որոնք տիրում են երկրին, որ նույնիսկ ամենաուժեղ սիրտը կարող է նվաղել: Սակայն Լեգեոնի սիրտը Մարիամն է, իսկ այդ սիրտը լի է անասելի հավատքով և սիրով: Այսպես մտածելով՝ Լեգեոնը նայում է աշխարհին, և անմիջապես ծնվում է հույսը. «Աշխարհը պատկանում է նրան, ով ամենաշատն է սիրում»: Ապա, ինչպես սկզբում, Լեգեոնը դիմում է իր մեծ Թագուհուն՝ ասելով. «Առաջնորդի՛ր մեզ»:

«Մարիամի Լեգեոնը և նրան ընդդիմադիր ուժերը՝ աշխարհիկությունն ու անկրոնությունը, բախվում են մեկմեկու: Այս ուժերը, որոնց մշտական քարոզչությամբ աջակցում են թերթերը, հեռուստատեսությունը և տեսանկարահանումը, յուրաքանչյուր ընտանիքի սիրտն են բերել-մտցրել արհեստական վիժեցումը, ամուսնալուծությունը, հակաբեղմնավորիչ միջոցները, թմրանյութերը և անպարկեշտության ու դաժանության ամեն տեսակ դրսևորումներ: Հետևաբար, յուրաքանչյուր նորածին մանկան պարզությունը և անմեղությունը բաց և անպաշտպան են այդ կործանարար ազդեցությունների առջև:

Միմիայն կաթողիկէ ժողովրդի ամբողջական համախմբումը կկարողանա դիմադրել այդ գաղափարական ազդեցությանը (indoctrination): Այս նպատակի համար Մարիամի Լեգեոնն ունի կատարյալ մեխանիզմ: Բայց մեխանիզմն ինքնին անօգուտ է՝ առանց բավականաչափ ուժի: Այդ շարժիչ ուժը հիմնված է Լեգեոնի հոգևոր էության վրա, որը ճշմարիտ գնահատում և վստահություն է Սուրբ Հոգու և Սուրբ Կույսի՝ Մարիամի հանդեպ, Ճշմարիտ Ջերմեռանդության նկատմամբ՝ սնված Սուրբ Հաղորդությամբ՝ Կյանքի Հացով:

Երբ այս երկու ուժերը մտնեն պայքարի մեջ, Լեգեոնի ոգին կհաղթի: Ամեն օր կրելով Իրենց Տիրոջ Խաչը՝ լեգեոնականները

բարեհաջող արդյունքով կմարտնչեն ժամանակակից փափկության, զիջողականության և թուլության դեմ, որոնք այսօր կործանում են մեր հասարակությունը, և Լեգեոնը վերջիվերջո կհաղթի»: (Հայր Աէդան ՄքԳրաթ S.S.C):

13

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

1. Մարիամի Լեգեոնը բաց է բոլոր այն կաթողիկէների համար, որոնք.

ա) հավատարմորեն գործադրում են իրենց կրոնը,

բ) ներշնչված են ցանկությամբ՝ կատարելու իրենց դերը Եկեղեցու առաքելության մեջ՝ անդամակցելով Լեգեոնին,

գ) պատրաստ են կատարելու յուրաքանչյուր պարտականություն, որ պահանջում է ակտիվ անդամակցությունը Լեգեոնին:

2. Անձինք, որոնք ցանկություն ունեն միանալու Լեգեոնին, պետք է դիմեն անդամակցելու համար որևէ պրեզիդիումի:

3. Տասնութից ցածր տարիքի թեկնածուները կարող են ընդունվել միայն կրտսեր պրեզիդիումներում (տե՛ս Գլուխ 36):

4. Ոչ ոք չի կարող ընդունվել որպես Մարիամի Լեգեոնի անդամակցության թեկնածու, մինչև այն Պրեզիդիումի նախագահը, որտեղ թեկնածուն ուզում է ընդունվել, ուշադիր հետաքննությունից հետո, համոզված չլինի, որ անդամակցության դիմող անձը համապատասխանում է պահանջվող պայմաններին:

5. Մինչև թեկնածուն անդամագրվի Լեգեոնի շարքերում, պահանջվում է առնվազն երեք ամսվա գոհացնող փորձաշրջան, բայց սկզբում թեկնածուն կարող է լիարժեք մասնակցել Լեգեոնի աշխատանքներին:

6. Յուրաքանչյուր թեկնածուի տրվում է Լեգեոնի Տեսսերայի մի օրինակ:

7. Պաշտոնական մուտքը հիմնականում տեղի է ունենում լեգեոնական խոստմամբ և թեկնածուի անունը մուտքագրելով պրեզիդիումի անդամների ցուցակում: Լեգեոնականի խոստման ձևակերպումը տրված է 15-րդ Գլխում: Այն տրված է հեշտ ընթեռնելի ձևով:

Գերհարգելի Մոնթինին (հետագայում՝ Պողոս Զ Պապը), գրելով Պիոս ԺԲ Պապի անունից, ասում էր. «Այս Առաքելական և Մարեմյան խոստումը զորացրել է լեգեոնականներին աշխարհով մեկ նրանց մղած քրիստոնեական պատերազմում, հատկապես նրանց, ովքեր հալածվում են հավատքի համար»:

Խոստման վերաբերյալ մի մեկնաբանություն՝ «Առաքելության աստվածաբանությունը», գրվել է Կարդինալ Սուենենսի կողմից և հրատարակվել տարբեր լեզուներով: Այս անգնահատելի աշխատությունը պետք է լինի յուրաքանչյուր լեգեոնականի ձեռքին: Այն նաև պետք է ընթերցի յուրաքանչյուր պատասխանատու կաթողիկէ, որովհետև այն պարունակում է մի նշանակալի բացատրություն քրիստոնեական առաքելության սկզբունքների վերաբերյալ:

ա) Երբ փորձաշրջանի ժամանակահատվածը համարվում է ամբողջովին գոհացնող, թեկնածուին տրվում է գոնե մեկ շաբաթ՝ պատրաստվելու ընդունելության Լեգեոնի շարքերում: Այդ շաբաթվա ընթացքում թեկնածուն պետք է ջանա ծանոթանալ խոստման բառերին և գաղափարներին, որպեսզի ընդունելության ժամանակ խոստումը ընթերցի հեշտությամբ, ըմբռնումով և ազնվությամբ:

բ) Ապա պրեզիդիումի սովորական հանդիպման ժամանակ, Կատենա աղոթքից անմիջապես հետո բոլոր անդամները շարունակում են մնալ կանգնած, Լեգեոնի Վեքսիլլումը մոտեցնում են թեկնածուին, նա ձախ ձեռքով վերցնում է Խոստման տեքստը և բարձրաձայն կարդում այն՝ իր անունը դնելով համապատասխան տեղում: Խոստման երրորդ պարբերությանը հասնելով՝ թեկնածուն աջ ձեռքը դնում է Վեքսիլլումի վրա և պահում է այն մինչև խոստումն ընթերցելու ավարտը: Դրանից հետո նորընծա լեգեոնականը ստանում է քահանայի օրհնությունը (եթե նա ներկա է): Նրա

անունն այնուհետև ընդգրկվում է Լեգեոնի անդամների ցուցակում:

գ) Դրանից հետո անդամները նստում են, ասվում է քարոզը, և ժողովը շարունակվում է իր բնական հունով:

դ) Եթե պրեզիդիումը չունի Վեքսիլլում, ապա թեկնածուն պետք է բռնի Վեքսիլլումը ներկայացնող պատկերը: Տեսսերան ևս կարող է փոխարինել:

8. Երբ թեկնածուն պատրաստ է, պետք չէ հետաձգել խոստումը: Երկու կամ ավելի թեկնածուների կարելի է ընդունել միաժամանակ, սակայն ցանկալի չէ: Որքան շատ անդամներ ընդունվեն միաժամանակ, այնքան կնվազի արարողության հանդիսավորությունը յուրաքանչյուրի համար:

9. Ընդունելության արարողությունը կարող է լինել փորձություն հատկապես զգայուն մարդկանց համար: Բայց նրանց հանդեպ պետք է իրապես ուշադիր լինել, քանի որ այդ արարողությունը նրանց համար յուրահատուկ հանդիսավորություն և լրջություն ունի, որն ազդեցություն կունենա նրանց ապագա անդամակցության վրա:

10. Թեկնածուների ընդունման պատասխանատվությունը, նրանց իրենց պարտականությունները սովորեցնելը և օգնելը փորձաշրջանի ընթացքում և հետո, հատկապես փոխնախագահի գործն է, բայց սա մի պարտականություն է, որի մեջ բոլորը պետք է ներառվեն:

11. Եթե թեկնածուն որևէ պատճառով չի ցանկանում խոստում տալ, փորձաշրջանը կարող է երկարացվել ևս երեք ամսով: Պրեզիդիումն իրավունք ունի հետաձգել խոստումը՝ մինչև վստահ լինի թեկնածուի համապատասխանության մեջ: Նմանապես, արդար է, որ թեկնածուին տրվի անհրաժեշտ ժամանակ, որպեսզի նա վերջնականապես կողմնորոշվի: Բայց երբ լրացուցիչ ժամանակը վերջանա, թեկնածուն պետք է ընդունի խոստումը՝ առանց գաղափարային վերապահումների, կամ հեռանա պրեզիդիումից:

Եթե անդամը, որ տվել է խոստումը, հետագայում ներքուստ՝ իր մտքում, ժխտում է այդ խոստումը, արժանապատիվ կլինի, որ դուրս գա Լեգեոնից:

Փորձաշրջանը և խոստումը Լեգեոնի մուտքն են: Այն չի կարելի մակերեսայնորեն բաց պահել անհամապատասխան

մարդկանց առջև, չի կարելի իջեցնել չափանիշները և թուլացնել ոգին:

12. Հոգևոր Առաջնորդը պարտավոր չէ խոստում տալ, սակայն ընդունելի, հաճելի և պրեզիդիումի համար մեծ պատիվ կլինի, եթե նա վարվի այդպես:

13. Խոստումը պետք է պահպանվի իր հատուկ նպատակի համար: Այն չպետք է օգտագործվի որպես նվիրագործման գործողություն՝ Ասիեսի (Acies) կամ այլ գործառույթների համար: Բայց, իհարկե, կարող է օգտագործվել, ըստ ցանկության, լեգեոնականի առանձին աղոթքներում:

14. Պրեզիդիումի ժողովներից բացակայությունները պետք է դիտարկվեն չափավոր ըմբռնումով՝ հաշվի առնելով բացակայության հանգամանքները: Անունները չպետք է թեթև ձեռքով հանել ցուցակից, հատկապես երբ կա հիվանդություն, նույնիսկ եթե, ըստ երևույթին, այն երկարատև է լինելու: Բայց երբ անդամակցությունը համարվում է ոչ շարունակելի, և անունը պաշտոնապես հանվում է ցուցակից, ապա վերստին ընդունման համար պահանջվում է նորից փորձաշրջան անցնել և խոստում տալ:

15. Լեգեոնի աշխատանքի նպատակների համար, և միայն ա՛յդ նպատակների համար, անդամները միմյանց դիմում են «եղբայր» կամ «քույր» դիմելաձևով:

16. Անդամները կարող են կազմել տղամարդկանց, կանանց, տղաների, աղջիկների, կամ խառը պրեզիդիումներ՝ ըստ կարիքի և Կուրիայի համաձայնության:

Լեգեոնը ստեղծվեց որպես կանանց կազմակերպություն, և միայն ութ տարի անց հիմնադրվեց առաջին տղամարդկանց պրեզիդիումը: Բայց այն ձևավորում է հավասարապես պատշաճ հիմք՝ նաև տղամարդկանցից բաղկացած կազմակերպության համար: Եվ հիմա կան տղամարդկանց և խառը անդամակցությամբ բազմաթիվ պրեզիդիումներ: Առաջին պրեզիդիումներն Ամերիկայում, Աֆրիկայում և Չինաստանում կազմված էին տղամարդկանցից:

«Եկեղեցին հիմնվել է՝ ամբողջ աշխարհում տարածելու համար Քրիստոսի Արքայությունը՝ Հայր Աստծո փառքի համար, բոլոր մարդկանց մասնակից դարձնելու համար քավությանը և փրկությանը, և նրանց միջոցով ճիշտ հարաբերություն հաստա-

տելու համար ամբողջ աշխարհի և Քրիստոսի միջև: Խորհրդավոր Մարմնի յուրաքանչյուր գործունեություն, որն ուղղված է այդ նպատակին, կոչվում է «առաքելություն». Եկեղեցին գործադրում է այն իր բոլոր անդամների միջոցով, սակայն տարբեր ձևերով: Իրականում, քրիստոնեական կոչումն իր բնույթով նաև առաքելություն կատարելու կոչում է: Կենդանի մարմնի ոչ մի անդամ չի կարող զուտ անգործ դեր ունենալ. մասնակցելով մարմնի կյանքին՝ այն միաժամանակ մասնակցում է նաև նրա գործունեությանը: Նույնը վերաբերում է Եկեղեցուն, որը Քրիստոսի Մարմինն է. «Երբ մարմնի յուրաքանչյուր մասը գործում է ինչպես պետք է, ամբողջ մարմինն աճում է» (Եփս. 4:16): Այդ մարմնի անդամների միջև կա այնպիսի միություն և ներդաշնակություն (հմմտ.՝ Եփս. 4:16), որ այն անդամը, որը չի աշխատում՝ իր կարողությունների չափով նպաստելով մարմնի աճմանը, պետք է համարվի անպիտան թե՛ Եկեղեցու, թե՛ իր համար» (ԱԱ 2):

14

ՊՐԵԶԻԴԻՈՒՄԸ

1. Մարիամի Լեգեոնի միավորը կոչվում է պրեզիդիում: Լատիներեն այս բառն օգտագործվել է հռոմեական Լեգեոնի ջոկատի իմաստով, որը կատարում էր ինչ-որ հատուկ պարտականություն, օրինակ՝ զինվորական շարքի մի մասն էր և պահում էր մի ամրապնդված դիրք կամ կայազոր: Հետևաբար, պրեզիդիում բառը համապատասխանում է Մարիամի Լեգեոնի խմբին:

2. Յուրաքանչյուր պրեզիդիում կոչվում է Աստվածածնի մի տիտղոսով, օրինակ՝ «Ողորմության Տիրամայր», կամ նրա առավելություններից մեկով, օրինակ՝ «Անարատ Հղություն», կամ նրա կյանքի իրադարձություններով, օրինակ՝ «Այցելություն»:

Երջանիկ է այն եպիսկոպոսը, որ իր թեմում ունի բավական թվով պրեզիդիումներ, որոնք կազմում են Մարիամի Լիթանիայի կենդանի աղոթքը:

3. Պրեզիդիումն իշխանություն ունի իր բոլոր անդամների վրա և լիազորություն ունի կառավարելու նրանց

գործողությունները: Լեգեոնականներն իրենց հերթին պետք է հավատարմորեն հնազանդվեն պրեզիդիումի բոլոր օրինական հրամաններին:

4. Յուրաքանչյուր պրեզիդիում պետք է անմիջականորեն կամ մի արտոնված խորհրդի միջոցով կապված լինի Կոնսիլիում Լեգեոնիսի հետ: Հակառակ դեպքում չի կարող լինել անդամակցություն Լեգեոնին: Հետևաբար, ոչ մի նոր պրեզիդիում չի կարող հաստատվել առանց Կուրիայի պաշտոնական թույլտվության, իսկ եթե չկա այդպիսին, ապա՝ ուրիշ ամենամոտ վերադաս խորհրդի կամ, ծայրահեղ դեպքում, Կոնսիլիումի թույլատվությամբ: Պրեզիդիումը պետք է անմիջականորեն կապված լինի Լեգեոնի որևէ ղեկավար մարմնի հետ:

5. Ոչ մի պրեզիդիում որևէ ժողովրդապետության մեջ չի կարող հաստատվել՝ առանց ժողովրդապետի կամ հոգևոր առաջնորդի համաձայնության: Ժողովրդապետը կամ հոգևոր առաջնորդը պետք է հրավիրված լինեն՝ կատարելու պրեզիդիումի բացման արարողությունը:

6. Պրեզիդիումը պետք է **ժողով հրավիրի յուրաքանչյուր շաբաթ**՝ ըստ 18-րդ Գլխում նկարագրած կարգի՝ «Պրեզիդիումի ժողովի կարգը»:

Այս օրենքը բացարձակապես փոփոխության ենթակա չէ: Զանազան լուրջ պատճառներով շատ հաճախ ասվում է, թե դժվար է հավաքվել ամեն շաբաթ, և թե ամսական մեկ կամ տասնչորս օրը մեկ անգամ ժողովը բավական է բոլոր նպատակներին հասնելու համար:

Սրան անհրաժեշտ է պատասխանել, որ Լեգեոնը ո՛չ մի դեպքում չի կարող համաձայնել հանդիպում անել ավելի քիչ, քան յուրաքանչյուր շաբաթ, և ոչ էլ իր խորհուրդներից որևէ մեկին տալիս է իշխանություն՝ փոխելու այս օրենքը: Եթե խոսքը միայն ընթացիկ աշխատանքի մասին լիներ, ապա միգուցե ամսական ժողովները լինեին բավարար, չնայած կասկածելի է, որ առաջադրանքն ամեն շաբաթ կատարվի ըստ կարգի: Բայց ժողովի կենսական նպատակն է՝ ամեն շաբաթ միասին աղոթելը, և ավելորդ է նշել, որ այս նպատակը չի իրականացվի որևէ այլ կերպ, քան միայն ամենշաբաթյա ժողովներով:

Ամենշաբաթյա հանդիպմանը մասնակցելը պահանջում է ինքնազոհություն: Եթե Լեգեոնը վստահությամբ չի կարողանում պահանջել սա, ապա որտե՞ղ է հիմքը, որի վրա կկառուցի իր համակարգը:

7. Յուրաքանչյուր պրեզիդիում պետք է ունենա մի քահանա՝ որպես հոգևոր առաջնորդ: Նաև պետք է ունենա նախագահ, փոխնախագահ, քարտուղար և գանձապահ:

Վերը նշված անձինք պրեզիդիումի սպաներն են և պրեզիդիումի ներկայացուցիչները՝ Կուրիայում: Նրանց պարտականությունները նկարագրված են 34-րդ Գլխում, բայց նրանց գլխավոր պարտականությունն է՝ կատարել պահանջվող սովորական աշխատանքն այնպես, որ օրինակ լինեն մյուս անդամների համար:

8. Սպաները պարտավոր են զեկուցել իրենց պրեզիդիումներին Կուրիայի յուրաքանչյուր ժողովի մասին՝ այսպիսով կապի մեջ պահելով իրենց անդամներին Կուրիայի ընթացակարգերի հետ:

9. Հոգևոր առաջնորդը նշանակվում է ժողովրդապետի կամ թեմի առաջնորդի կողմից, և նա իր պաշտոնը կատարում է ըստ նրանց հայեցողության:

Հոգևոր առաջնորդը կարող է ղեկավարել մեկից ավելի պրեզիդիումներ:

Եթե նա չի կարող մասնակցել պրեզիդիումի հանդիպումներին, ապա նա կարող է նշանակել մեկ այլ քահանայի, կրոնավորի կամ, հատուկ հանգամանքներում, որակավորված մի լեգեոնականի (որը կոչվում է «տրիբուն»), որպեսզի փոխարինի իրեն:

Չնայած հոգևոր առաջնորդը պետք է տեղյակ լինի հանդիպումներից, նրա ներկայությունը պարտադիր չէ, որպեսզի հանդիպումը վավեր լինի:

Հոգևոր առաջնորդը համարվում է պրեզիդիումի սպա և պետք է ունենա լեգեոնական ամբողջ պատշաճ հեղինակությունը:

10. Հոգևոր առաջնորդը վճռորոշ հեղինակություն ունի բարոյական կամ կրոնական հարցերում, որոնք քննարկվում են պրեզիդիումի ժողովի ժամանակ, և նա իրավունք ունի դադարեցնել պրեզիդիումի ցանկացած գործողություն՝

մինչև կայացվի ժողովրդապետի կամ թեմի առաջնորդի որոշումը:

«Այդ իրավունքն անհրաժեշտ զենք է, բայց ինչպես յուրաքանչյուր զենք, այն պետք է օգտագործվի մեծ խելամտությամբ և զգուշությամբ, որպեսզի այն լինի ոչ թե կործանարար, այլ պաշտպանող ուժ: Լավ կազմակերպված և լավ ղեկավարվող կազմակերպության մեջ այդ զենքը երբեք անհրաժեշտ չի լինի գործածել» (Սիվարդի, «Կաթողիկէ գործունեության ձեռնարկ»):

11. Պրեզիդիումի սպաները, բայց ոչ հոգևոր առաջնորդը, նշանակվում են Կուրիայի կողմից: Եթե Կուրիա չկա, ապա նրանք նշանակվում են այլ վերադաս խորհրդի կողմից:

Ցանկալի է խուսափել հնարավոր սպաների արժանիքների մասին բաց քննարկումից, նրանցից ոմանք գուցե ներկա լինեն: Հետևաբար, եթե առաջանում է պաշտոնի համար թափուր տեղ, ընդունված է, որ Կուրիայի նախագահը ուշադիր հարցադրումներից հետո (նախ և առաջ, պրեզիդիումի հոգևոր առաջնորդին լսելուց հետո), ամենահարմար անձին հաստատելու համար նրա անունը ներկայացնի Կուրիային, և եթե Կուրիան պատշաճ է համարում այդ անձին, ապա նշանակում է:

12. Յուրաքանչյուր սպայի նշանակումը (և ոչ հոգևոր առաջնորդինը) պետք է լինի եռամյա ժամկետով, որի ավարտից հետո այդ ժամկետը կարող է երկարացվել նույնքան տևողությամբ, այսինքն՝ ընդհանուր վեց տարի: Ժամկետը լրանալուց հետո սպան չի կարող շարունակել կատարել իր պարտականությունները:

Սպայի տեղափոխությունը այլ պաշտոնի կամ այլ պրեզիդիումում նույն պաշտոնին, համարվում է նոր նշանակում:

Եռամյա ընդմիջումից հետո սպան իրավունք ունի ստանձնել նույն պաշտոնը նույն պրեզիդիումում:

Եթե սպան այս կամ այն պատճառով չի վերջացրել իր եռամյա պաշտոնը, ապա այն օրը, երբ լքել է իր պաշտոնը, համարվում է, որ իր պաշտոնը կատարել է երեք տարի: Դրանից հետո գործում է պաշտոնի վերականգնման սովորական օրենքը, այսինքն.

ա) Եթե խոսքն առաջին ժամկետի մասին է, ապա նա կարող է դեռ չլրացած ժամկետի ընթացքում երկրորդ ժամկետի համար նշանակվել նույն պաշտոնին:

բ) Եթե երկրորդ ժամկետի մասին է, ապա նա նույն պաշտոնին կարող է նշանակվել միայն պաշտոնը թողնելուց երեք տարի հետո:

«Պաշտոնի երկարատևության մասին հարցը պետք է որոշվի հիմնական սկզբունքի հիման վրա: Վտանգը, որ պետք է լիարժեք հաշվի առնել բոլոր տեսակի կազմակերպություններում, մանավանդ կամավոր և հոգևոր կազմակերպության մեջ, այն է, որ բաժիններից որևէ մեկը չկարծրանա: Սրա վտանգն իրոք մեծ է: Մարդկային հակվածությունն այնպիսին է, որ խանդավառությունը մարում է, ներս է սողոսկում միապաղաղության ոգին, և մեթոդները դառնում են կարծրատիպային, մինչդեռ չարիքները, որոնց պետք է դեմ կանգնել, մշտապես փոխվում են:

Այս քայքայման ընթացքն ավարտվում է անարդյունավետ աշխատանքով և անտարբերությամբ, այնպես որ կազմակերպությունը չի կարողանում գրավել կամ պահել իր ամենացանկալի անդամներին: Դրան հետևում է կիսամեռ վիճակը: Լեգեոնն ամեն գնով պետք է պաշտպանված լինի սրանից: Անդադար խանդավառության զարթոնքը պետք է ապահովված լինի յուրաքանչյուր խորհրդի և պրեզիդիումի մեջ: Ակնհայտ է, որ նախ և առաջ պետք է հոգ տանել եռանդի բնական աղբյուրների՝ սպաների մասին: Նրանց պետք է միշտ պահել սկզբնական ջերմեռանդության մեջ, որի ամենաարդյունավետ միջոցը փոփոխությունն է: Սպաների ձախողման դեպքում ամեն ինչ նույնպես կձախողվի: Եթե նրանք կորցնում են ոգևորությունը և խանդավառությունը, նույնը կատարվում է Լեգեոնում: Եվ, ամենավատը, անդամները գոհ են լինում այն վիճակից, որին սովորել են, այնպես որ լուծման հույսը կարող է լինել միայն դրսից: Տեսականորեն, այսպիսի լուծումը կլինի սպաների կառավարման ժամանակահատվածի փոփոխության օրենքի ստեղծումը: Բայց իրականում սա արդյունավետ չի լինի, որովհետև նույնիսկ կառավարող խորհուրդները չեն գիտակցի, որ ամեն ինչ վատացել է, և

իրականում մեխանիկորեն նորից ու նորից կերկարացնեն կառավարման ժամանակահատվածը:

Ըստ այդմ թվում է, որ միակ հստակ միջոցը սպաներին փոխելու համակարգն է՝ հաշվի չառնելով նրանց արժանիքները կամ այլ հանգամանքներ: Հոգևոր միաբանությունների փորձը առաջարկում է մի մոդել, որի վրա Լեգեոնը կարող է ձևավորել իր ընթացքը, այսինքն՝ սպաների ժամկետը սահմանափակել վեց տարով՝ մի պայմանով, որ առաջին երեք տարին լրանալուց հետո անհրաժեշտ է վերահաստատություն» (Լեգեոնի որոշումը՝ սահմանափակելու սպաների ժամկետը):

13. «Վատ զինվորներ չեն լինում,– ասել է Նապոլեոնը,– լինում են միայն վատ սպաներ», այսինքն՝ զինվորները կլինեն այնպիսին, ինչպիսին սպաները կձևավորեն նրանց: Լեգեոնականները նույնպես երբեք ավելի վեր չեն բարձրանա իրենց սպաների կողմից մշակված ոգու և աշխատանքի չափանիշներից: Ուստի դրանք պետք է լինեն լավագույն կերպով հասանելի: Եթե աշխատողը պետք է համարվի արժանի իր գործատուի համար, ապա անկասկած, լեգեոնականը պետք է արժանի լինի առաջնորդելու:

Լավ սպաների հաջորդական նշանակումը խոսում է այն մասին, որ պրեզիդիումի որակն անընդհատ կբարելավվի: Քանի որ յուրաքանչյուր նոր սպա, մինչ նախանձախնդրորեն պաշտպանում է գոյություն ունեցող չափանիշները արժեզրկման փորձերից, կատարում է իր առանձնահատուկ ներդրումը, որն իր հերթին կդառնա պրեզիդիումի հենքի մի մասը:

14. Նախագահի նշանակումը հատկապես պետք է լինի լուրջ մտածմունքի առարկա: Այս ուղղությամբ գործված սխալը կարող է քանդել պրեզիդիումը: Ընտրությունը պետք է կատարվի միայն յուրաքանչյուր հնարավոր անձի թեկնածությունը, ավելի ներքև՝ 34-րդ Գլխի 2-րդ կետում, նախագահի համար ներկայացվող պահանջների լույսի ներքո դիտարկելուց հետո: Մարդիկ, որոնք, ըստ ուսումնասիրության, ամենայն հավանականությամբ կձախողեն այս ասպարեզում, ոչ մի դեպքում չպետք է ընտրվեն, նույնիսկ եթե նրանց արժանիքներն այլ ասպարեզներում շատ լավն են:

15. Բացի հատուկ պատճառներից, որոնք կարող են խոչընդոտել, Կուրիայի կողմից նախագահի փոփոխությունը պետք է զուգահեռ ընթանա թերացող պրեզիդիումի վերակազմավորմանը: Գրեթե յուրաքանչյուր դեպքում պրեզիդիումի փլուզման պատճառը նախագահի թերացումն է կամ կառավարման անկարողությունը:

16. Լեգեոնականը փորձաշրջանի ժամանակահատվածում կարող է լինել միայն գործող կամ ժամանակավոր սպա չափահասների պրեզիդիումի մեջ: Եթե տվյալ սպան այդ պաշտոնից չի զրկվում փորձաշրջանի ընթացքում, ուրեմն դառնում է լիարժեք սպա, և այդ ժամանակը, որ նա ծառայել է, համարվում է երեք տարվա մի մաս, ինչպես նկարագրված է վերևում:

17. Առանց իր նախագահի թույլտվության, լեգեոնականներից որևէ մեկն իրավունք չունի լքել իր պրեզիդիումը՝ ընդգրկվելու համար այլ պրեզիդիումում, և այդ անդամի ընդունելությունն այլ պրեզիդիումի մեջ պետք է տեղի ունենա կանոնադրության և անդամակցության օրենքի համաձայն՝ բացառությամբ Խոստման և փորձաշրջանի: Երբ նշված թույլտվությունը խնդրվել է, չի կարելի անհիմն մերժել: Այս հարցի բողոքարկումը պետք է անել Կուրիային:

18. Այլ սպաների հետ խորհրդակցությունից հետո Պրեզիդիումի նախագահն իրավունք ունի կասեցնել Պրեզիդիումի ցանկացած անդամի մասնակցությունը Լեգեոնին՝ որևէ պատճառով, որը նա համարում է բավարար, և ընդ որում՝ առանց պրեզիդիումին հաշվետվություն տալու պարտավորության:

19. Կուրիան իրավունք ունի արտաքսել պրեզիդիումի ցանկացած անդամի կամ կասեցնել նրա անդամակցությունը: Դա ենթակա է բողոքարկման՝ հաջորդ աստիճանում գտնվող կառավարող խորհրդին: Այդ հաջորդ կառավարող խորհրդի որոշումը կլինի վերջնականը:

20. Ցանկացած տարաձայնություն՝ կապված պրեզիդիումների միջև աշխատանքի նշանակման հետ, լուծվում է Կուրիայի կողմից:

21. Պրեզիդիումի կարևորագույն պարտականություններից մեկն է՝ հզոր օժանդակ անդամների խմբի ստեղծումը և պահպանումը:

Պատկերացնե՛նք հմուտ հրամանատարների ղեկավարության տակ գտնվող քաջ, լավ պատրաստված և զինված զինվորների մի ստորաբաժանում, որ մի անդիմադրելի ուժ է: Բայցևայնպես, այդ ստորաբաժանումն ինքնին միայն կարճատև արդյունավետություն ունի: Այն ամեն օր կախված է աջակից աշխատողների մի մեծ խմբից, որոնք մատակարարում են զենք, սնունդ, հագուստ և բժշկական օգնություն: Եթե այս աջակցությունից կտրված լինեն, ընդամենը մի քանի օր տևող կռվի հետևանքով ի՞նչ կլինի այդ ընտիր մարդկանց վիճակը:

Այն, ինչ աջակցող խումբն է՝ ստորաբաժանման համար, նույնը և օժանդակ անդամներն են՝ պրեզիդիումի համար: Օժանդակ անդամները համակարգի մի մասն են: Պրեզիդիումը լիարժեք չէ՝ առանց օժանդակ անդամների:

Օժանդակ անդամների հետ կապ պահելու ամենահարմար մեթոդն անձնական շփումն է: Տեղեկագրեր տրամադրելն ինքնին բավարար չէ, որպեսզի կատարենք այս կարևոր պարտականությունը:

22. Բանակը միշտ հոգ է տանում իր ապագայի մասին՝ հիմնելով ռազմական կրթության դպրոցներ: Համարժեք կերպով, յուրաքանչյուր ավագ պրեզիդիումի համակարգի անհրաժեշտ մաս պետք է համարվի ունենալ մի կրտսեր պրեզիդիում. ավագ պրեզիդիումից երկու լեգեոնականներ պետք է նշանակվեն որպես սպաներ կրտսեր պրեզիդիումի մեջ: Քանի որ կրտսեր սերնդին պատրաստելը պահանջում է որոշակի որակներ, ոչ բոլոր ավագ լեգեոնականներն են համապատասխանում այդ պաշտոնին: Այդ պատճառով նրանք պետք է զգուշորեն ընտրվեն: Նրանց աշխատանքը՝ որպես կրտսեր պրեզիդիումի սպաներ, կարող է բավարար համարվել նրանց առաքելության պարտականության համար՝ ավագ պրեզիդիումի մեջ: Նրանք կներկայացնեն կրտսեր պրեզիդիումը Կուրիայում կամ կրտսեր Կուրիայում, եթե այդպիսին գոյություն ունի:

Մնացած երկու սպայական պաշտոնները կրտսեր պրեզիդիումում զբաղեցնում են անչափահասները, որոնք այդպիսով կստանան հիանալի ուսուցում պատասխանատվություն ստանձնելու մեջ: Նրանք կներկայացնեն իրենց պրեզիդիումը կրտսեր Կուրիայում: Անչափահասները չեն կարող մասնակցել ավագ Կուրիային:

«Արևի շողերը բազմաթիվ են, բայց լույսը մեկն է: Բազում են ծառերի ճյուղերը, բայց բունը մեկն է՝ ամուր կանգնած անշարժ արմատների վրա» (Սուրբ Կիպրիանոս. «Եկեղեցու միասնության մասին»):

15

ԼԵԳԵՈՆԱԿԱՆԻ ԽՈՍՏՈՒՄԸ

Ամենասուրբ Հոգի, ես՝ (թեկնածուի անունը),

Այսօր, ցանկություն ունենալով ընդունվել Մարիամի Լեգեոնի շարքերը,

Սակայն, իմանալով, որ ինքնուրույն չեմ կարող արժանի ծառայություն մատուցել,

Աղաչո՛ւմ եմ Քեզ, ե՛կ ինձ վրա և լցրո՛ւ ինձ Քեզնով,

Որպեսզի իմ խեղճ գործերը զորանան Քո զորությամբ և դառնան գործիք Քո ամենազոր նպատակների համար:

Բայց ես գիտեմ, որ Դու, որ եկել ես վերածնելու աշխարհը Հիսուս Քրիստոսով,

Չցանկացար կատարել դա այլ կերպ, քան միայն Մարիամի միջոցով,

Որ առանց Մարիամի մենք չենք կարող ճանաչել կամ սիրել Քեզ,

Որ նրա միջոցով է, որ Քո պարգևները, առաքինությունները և շնորհները բաշխվում են նրանց, ում նա կցանկանա, երբ նա կցանկանա և այն քանակությամբ և ձևով, որ նա կցանկանա:

Եվ ես գիտակցում եմ, որ կատարյալ լեգեոնական ծառայության գաղտնիքը լիակատար միությունն է Մարիամի հետ, ով այնքա՛ն լիակատար ձևով միացած է Քեզ հետ:

Եվ այսպես, իմ ձեռքը վերցնելով Լեգեոնի դրոշը, որն այս ամենի արտացոլումն է,
Ես կանգնած եմ Քո առջև՝ որպես Մարիամի զինվորը և զավակը:
Եվ այս կերպ հայտարարում եմ իմ ամբողջական կախվածությունը Մարիամից.
Նա Մայրն է իմ հոգու, նրա և իմ սրտերը մեկ են,
Եվ այդ մեկ սրտից նա կրկին ասում է այդ հին բառերը. «Ահավասի՛կ, ես Աստծո աղախինն եմ»:
Եվ Դու կրկին գալիս ես նրա միջոցով, որպեսզի մեծ գործեր անես:

Թող Քո հզորությունը հովանի լինի ինձ և գա իմ հոգու մեջ՝ սիրով ու կրակով,
Եվ միավորի այն՝ Մարիամի սիրուն և Մարիամի կամքին՝ փրկելու աշխարհը,
Որպեսզի ես կարողանամ լինել մաքուր՝ նրանով, Ում Դու ստեղծեցիր Անարատ,
Որպեսզի իմ Տերը՝ Քրիստոսը, նմանապես աճի իմ մեջ՝ Քո միջոցով,
Որպեսզի ես Նրա Մոր հետ միասին կարողանամ Նրան բերել աշխարհ և այն հոգիների մոտ, որոնք Նրա կարիքն ունեն:

Որպեսզի Նրանք և ես ճակատամարտը հաղթելուց հետո կարողանանք հավերժ թագավորել Մարիամի հետ միասին՝ Ամենասուրբ Երրորդության փառքի մեջ:
Վստահ լինելով, որ դու այսպես կընդունես ինձ և կօգտագործես ինձ՝ իմ անկարողությունն այսօր վերածելով զորության,
Ես զբաղեցնում եմ իմ տեղը Լեգեոնի շարքերում և համարձակվում եմ խոստանալ հավատարիմ ծառայություն:

Ես ամբողջությամբ կհետևեմ Լեգեոնի կարգապահությանը,

Որը կապում է ինձ իմ եղբայրակից լեգեոնականների հետ և

Ձևավորում է մեզ որպես մի բանակ,

Եվ պահում է մեր շարքերը, մինչ մենք առաջ ենք արշավում Մարիամի հետ միասին,

Որպեսզի կատարենք Քո կամքը, գործադրենք Քո շնորհի հրաշքները,

Որոնք կնորոգեն աշխարհի երեսը,

Եվ բոլորի վրա կհաստատեն Քո թագավորությունը, Ո՛վ Ամենասուրբ Հոգի,

Հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու. ամեն:

«Մատնացույց արվեց այն փաստը, որ լեգեոնական խոստումն ուղղված է Սուրբ Հոգուն, Ում հանդեպ կաթողիկէներն առհասարակ չափազանց սակավ ջերմեռանդ են եղել, բայց լեգեոնականները պարտավոր են հատուկ սեր տածել Սուրբ Հոգու հանդեպ: Լեգեոնականների գործը, որ իրենց և Քրիստոսի Խորհրդավոր Մարմնի մյուս անդամների սրբացումն է, կախված է Սուրբ Հոգու զորությունից և ներգործությունից, և այդ պատճառով անհրաժեշտ է սերտ միություն հաստատել Նրա հետ: Այսպիսի միասնության հասնելու համար անհրաժեշտ է երկու նախապայման. վճռական ուշադրություն՝ դեպի Սուրբ Հոգին, և նվիրվածություն՝ Սուրբ Կույս Մարիամի հանդեպ, ում հետ Սուրբ Հոգին գործում է անբաժան միությամբ: Հնարավոր է, որ հենց երկրորդ պայմանի պակասը, և ոչ թե առաջինի պակասն է հանգեցրել Սուրբ Հոգու հանդեպ ճշմարիտ ջերմեռանդության ընդհանուր բացակայությանը, չնայած որ այս թեմայի շուրջ շատ գրքեր են գրվել և շատ քարոզներ են խոսվել: Լեգեոնականներն արդեն լցված են սիրով իրենց երկնային Թագուհու և Մոր նկատմամբ: Եթե նրանք դա միացնեն Սուրբ Հոգու նկատմամբ վճռական նվիրումին, նրանք ավելի ամբողջապես կմտնեն աստվածային ծրագրի մեջ, որը պահանջում է Սուրբ Հոգու և Մարիամի միությունը աշխարհի վերածննդյան գործում: Այդպիսի ջանքերի հետևանքով լեգեոնականները կստանան հզոր աջակցություն և կհասնեն հաջողության:

Լեգեոնականների առաջին աղոթքները եղել են Սուրբ Հոգուն ուղղված խնդրանքը և Վարդարանը: Մինչ օրս յուրաքանչյուր հանդիպում սկսվում է նույն աղոթքներով. այդ պատճառով

պատշաճ է, որ Լեգեոնի նոր անդամների ընդունելությունը տեղի է ունենում նույն աղոթքներով: Այդ արարողությունը հիշեցնում է Հոգեգալուստը, երբ առաքելական շնորհը Սուրբ Հոգու կողմից տրվեց Մարիամի միջոցով: Սուրբ Հոգուն փնտրելով Աստվածամոր միջոցով՝ լեգեոնականն առատորեն բաժին կստանա Սուրբ Հոգու պարգևներից, և այդ պարգևներից կլինի ինքնին Ամենասուրբ Կույսի նկատմամբ լուսավորված սերը:

Ավելին, խոստման տեքստի ձևը համաձայնության մեջ է լեգեոնական ջերմեռանդության հետ, ինչպես պատկերված է դրոշի վրա, որտեղ տեսնում ենք Աղավնուն, որը Կույս Մարիամի միջոցով ղեկավարում է Լեգեոնը և նրա գործունեությունը՝ հանուն մարդկային հոգիների փրկության» (Լեգեոնի Կոնսիլիումի 88-րդ հավաքի արձանագրություններից):

[Այս մեջբերումը չի մտնում լեգեոնականի խոստման տեքստի մեջ]:

16

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ

Ի հավելումն սովորական ակտիվ անդամակցության, Լեգեոնն ընդունում է երկու այլ անդամակցության աստիճաններ ևս:

1. ՊՐԵՏՈՐԱԿԱՆՆԵՐԸ

Պրետորական* աստիճանը ակտիվ անդամակցության առավել բարձր կարգ է, որի մեջ մտնում են նրանք, ովքեր իրենց սովորական պարտականություններին ավելացնում են հետևյալը.

1) Լեգեոնի Տեսսերայի բոլոր աղոթքների ամենօրյա կատարում,

* Պրետորական պահապանը հռոմեական բանակի ընտիր զինվոր էր:

2) ամենօրյա մասնակցություն Սուրբ Պատարագին և Սուրբ Հաղորդության ճաշակում: Ոչ ոք չպետք է հրաժարվի պրետորականի աստիճանից այն պատճառաբանությամբ, թե վախենում է, որ չի հաջողվի ներկա լինել Սուրբ Պատարագին կամ ճաշակել Սուրբ Հաղորդությունը՝ ամեն օր հաստատուն ձևով: Ոչ ոք չի կարող վստահ լինել այդպիսի կանոնավորության մեջ: Որևէ մեկը, ով կկարողանա Պատարագին մասնակցել շաբաթվա մեջ առնվազն մեկ կամ երկու անգամ, կարող է վստահաբար գրանցվել որպես պրետորական,

3) ամեն օր աղոթել Եկեղեցու կողմից արտոնված մեկ Ժամերգություն կամ դրա մեծ մասը, օրինակ՝ Առավոտյան և Երեկոյան Ժամերգությունները: Արտոնված է օգտագործել նաև համառոտ մի Ժամագիրք՝ այս աղոթքներով և գիշերային աղոթքով:

Երբեմն առաջարկվում է, որ խորհրդածությունը փոխարինի Ժամերգությանը, կամ լինի դրա այլընտրանքը: Բայց այս առաջարկը չի համապատասխանում պրետորական անդամակցության գաղափարին, որն է՝ լեգեոնականներին միավորել Տիրոջ Խորհրդավոր Մարմնի պաշտոնական մեծ գործողություններին: Լեգեոնականի ակտիվ աշխատանքը մի մասնակցություն է Եկեղեցու պաշտոնական առաքելությանը: Պրետորական անդամակցության նպատակն է՝ լեգեոնականին ավելի խորապես ընկղմել Եկեղեցու հավաքական կյանքի մեջ: Ակնհայտ է, որ այն պետք է կոչ անի մասնակցելու Սուրբ Պատարագին և Սուրբ Հաղորդությանը, որովհետև սրանք են Եկեղեցու առանցքային արարողությունները, որոնք ամեն օր նորոգում են վսեմաագույն քրիստոնեական նվիրումը:

Պատարագից անմիջապես հետո ժամերգությունն է՝ Եկեղեցու հավաքական աղոթասացությունը, որտեղ Քրիստոսն է աղոթում: Սաղմոսներից կազմված յուրաքանչյուր ժամերգության մեջ ասում ենք Սուրբ Հոգուց ներշնչված աղոթքներ և այսպիսով միանում ենք այն հավաքական Ձայնին, որը պետք է լսի Հայրը: Այդ է պատճառը, որ պրետորական անդամակցության պայմանը Ժամերգությունն է, այլ ոչ թե խորհրդածությունը:

«Մինչ շնորհը զարգանում է մեր մեջ, մեր սերը պետք է ունենա նոր ձևեր»,– ասել է արքեպիսկոպոս Լինը իր լեգեոնականներին: Նրանց համար, ովքեր ի վիճակի են աղոթել ամբողջ Ժամերգությունը, դա կլինի սիրո մի ընդլայնում:

Պետք է հասկանալ հետևյալը.

ա) Սա միայն անդամակցության աստիճան է, և ոչ թե կազմակերպության առանձին բաժին: Ուստի, պրետորականների համար առանձին պրեզիդիում չպետք է ստեղծվի:

բ) Պրետորական անդամակցության աստիճանը պետք է դիտարկվի ոչ ավելին, քան որպես անհատական լեգեոնականի առանձին պայմանագիր:

գ) Այն ամենը, ինչ ենթադրում է թեկուզ նվազագույն բարոյական հարկադրանք, չի կարելի օգտագործել պրետորականներ ունենալու համար: Ուստի, թեև լեգեոնականներին հաճախակի պետք է խորհուրդ տալ ընդունել այս աստիճանը, սակայն ոչ մի անուն չպետք է հրապարակայնորեն բարձրաձայնել:

դ) Անդամակցությունը հաստատվում է անունը գրելով հատուկ ցուցակում:

ե) Հոգևոր առաջնորդը և նախագահները պետք է ձգտեն ավելացնել իրենց պրետորական անդամների թիվը, բայց պետք է կապ պահեն նաև իրենց գործող անդամների հետ, որպեսզի վերջիններս չհոգնեն իրենց ասպետական ձեռնարկներում:

Եթե հոգևոր առաջնորդը կամենում է իր անունը գրանցել պրետորականների ցուցակի մեջ, ապա դա կամրացնի իր լեգեոնական անդամակցությունը և ավելի ամուր կկապի նրան իր պրեզիդիումի հետ: Բացի դրանից՝ սա դրական կազդի նաև պրեզիդիումի նոր պրետորականների անդամակցության աճի վրա:

Լեգեոնը մեծ ակնկալիքներ ունի պրետորական աստիճանից: Այն շատ անդամների կառաջնորդի դեպի Աստծո հետ ավելի սերտ միության կյանք՝ աղոթքի միջոցով: Սա նշանակում է Լեգեոնի համակարգում ընդգրկել աղոթող մի սիրտ, որի մեջ ընկղմվել կուզենան ավելի ու ավելի շատ լեգեոնականներ: Սա անխուսափելիորեն կազդի Լեգեոնի

ամբողջ հոգևոր շրջանառության վրա և կստիպի Լեգեոնին իր բոլոր աշխատանքներում աճել աղոթքի հանդեպ վստահության մեջ: Իրականում դա պատճառ կհանդիսանա, որ Լեգեոնն առավել լիարժեք կերպով գիտակցի, որ իր գլխավոր և ճշմարիտ նպատակն իր անդամների հոգևոր կյանքը վսեմացնելն է:

«Դուք պետք է աճեք: Ես դա գիտեմ. դա՛ է ձեր ճակատագիրը: Դա կաթողիկէ անվան անհրաժեշտությունն է, դա առաքելական ժառանգության արտոնությունն է, սակայն սարսափելի է պատկերացնել նյութական աճը՝ առանց համապատասխան բարոյական աճի» (Սուրբ Ջոն Հենրի Նյուման, «Կաթողիկէների ներկա վիճակը»):

2. ՕԺԱՆԴԱԿ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Այս անդամակցությունը հասանելի է քահանաներին, վանականներին և աշխարհականներին: Այն ընդունում են մարդիկ, որոնք ի վիճակի չեն կամ չեն ցանկանում իրենց վրա վերցնել ակտիվ անդամակցության պարտականությունները, բայց ուզում են միանալ Լեգեոնին՝ հանձն առնելով աղոթքի ծառայությունը Լեգեոնի անունից:

Օժանդակ անդամակցությունն ունի երկու աստիճան.

ա) հիմնական աստիճանի անդամներ, որոնք ուղղակի կոչվում են օժանդակ,

բ) առավել բարձր աստիճանի անդամներ, որոնք ավելի հատուկ ձևով կոչվում են Ադյուտորես Լեգեոնիս կամ Ադյուտորներ:

Օժանդակ անդամակցության համար տարիքային սահմանափակումներ չկան:

Կարիք չկա, որ այս ծառայությունը մատուցվի հենց Լեգեոնի համար: Բավական է այն նվիրել մեր Երանելի Տիրամորը: Հետևաբար, հասկանալի է, որ Լեգեոնը կարող է դրանից ոչինչ չստանալ, և Լեգեոնը ոչ էլ ցանկություն ունի ստանալու որևէ բան, ինչը կարող է ավելի օգտակար լինել այլ տեղում: Բայց քանի որ այս ծառայությունը լեգեոնական

է, հնարավոր է, որ դա Լեգեոնի Թագուհուն մղի իր հայացքը դարձնելու Լեգեոնի կարիքների վրա:

Հետևաբար, ջերմորեն խրախուսում ենք, որ այս և մնացած բոլոր լեգեոնական ծառայությունները նվիրվեն Աստվածածնին՝ որպես մի անվերապահ ընծա, որոնք նա կարող է տնօրինել ըստ իր դիտավորությունների: Սա առավել կբարձրացնի հոգևոր առատաձեռնության աստիճանը և այսպիսով մեծապես կավելացնի դրա արժեքը: Այս նպատակը պետք է միշտ լինի մեր առջև՝ կրկնելով ամենօրյա նվիրման նույն բանաձևը. «Մա՛յր Անարատ, Միջնո՛րդ Բոլոր Շնորհների, Քո տրամադրության տակ եմ դնում աղոթքներս, գործերս և տառապանքներս՝ այնքանով, որքանով թույլատրված է ինձ»:

Այս երկակի օժանդակ անդամակցությունը Լեգեոնի համար նույնն է, ինչ թևերը՝ թռչնի համար: Այս թևերով, որոնք լայնորեն տարածվում են՝ ունենալով շատ անդամներ, և ճախրելով նրանց հավատարիմ աղոթքների ուժեղ ռիթմիկ շարժումով, Լեգեոնը կարող է թևածել դեպի գերբնական իդեալի և ջանքերի ավելի բարձր ոլորտները, հեզասահ թռչել ուր կամենա, և նույնիսկ լեռները չեն կարող խոչընդոտել նրա ընթացքը: Բայց եթե այդ թևերը փակ են, Լեգեոնը անշնորհք կերպով և դանդաղորեն քարշ կգա գետնի վրա, և ամենափոքր խոչընդոտն անգամ կարող է կանգնեցնել նրան:

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ՝ ՕԺԱՆԴԱԿ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Այս աստիճանը, որ կոչվում է օժանդակ անդամներ, Լեգեոնի աղոթող բանակի մի թևն է: Նրանց ծառայությունը կայանում է ամեն օր Տեսսերայի աղոթքներն ասելու մեջ, այսինքն՝ Սուրբ Հոգու խնդրանքը և աղոթքը, Վարդարանի հինգ տասնյակները և դրանց հաջորդող խնդրանքները, Կատենան և վերջին աղոթքները, որոնք կոչվում են «եզրափակիչ աղոթքներ»: Սա կարելի է բաժանել օրվա մեջ, ըստ հարմարության:

Մարդիկ, որոնք արդեն աղոթում են ամենօրյա Վարդարանը՝ որևէ դիտավորությամբ, կարող են դառնալ օժանդակ

անդամներ՝ առանց լրացուցիչ Վարդարան աղոթելու պարտավորության:

«Նա, ով աղոթում է, օգնում է բոլոր մարդկանց հոգիներին: Նա, ով հավատում է, գիտի և կամենում է, օգնում է իր եղբայրներին իր հոգու փրկարար և զորեղ ձգողականությամբ: Նա մատակարարում է այն, ինչ մեզնից պահանջում է Պողոս առաքյալը՝ որպես առաջնահերթություն՝ աղոթքներ, խնդրանքներ և շնորհակալության քայլեր բոլոր մարդկանց համար: «Անդադար աղոթեցե՛ք ամեն տեսակ աղոթքներով ու խնդրանքներով՝ Հոգու օգնությամբ» (Եփս. 6:18): Ձեզ չի՞ թվում, որ եթե դուք դադարեք տեսնել, պնդել, ջանալ, ամուր մնալ, ապա ամեն ինչ կթուլանա, աշխարհը կվերադառնա հին վիճակին, ձեր եղբայրներն իրենց կզգան պակաս ուժեղ և անպաշտպան: Այո՛, իհարկե, այդպես է: Մեզնից յուրաքանչյուրը ինչ-որ չափով իր վրա է պահում աշխարհը, և նրանք, ովքեր դադարում են աշխատել և տեսնել, գերծանրաբեռնում են մյուսներին» (Գրաթրի, «Les Sources»):

ԱՌԱՎԵԼ ԲԱՐՁՐ ԱՍՏԻՃԱՆԸ՝ ԱԴՅՈՒՏՈՐՆԵՐԸ

Սա Լեգեոնի աղոթող բանակի մյուս թևն է: Այն ներառում է նրանց, ովքեր.

ա) ամեն օր ասում են Տեսսերայի բոլոր աղոթքները, և ի հավելումն.

բ) պատրաստ են ամեն օր մասնակցել Սուրբ Պատարագին և ճաշակել Սուրբ Հաղորդություն, ամեն օր աղոթել Եկեղեցու պաշտոնական մեկ ժամերգություն:

Ժամերգությունը աղոթելու կարևորության մասին տե՛ս պրետորականների մասին հատվածում:

Համապատասխանաբար ադյուտորի անդամակցությունը սովորական օժանդակ անդամակցության համեմատ նույնն է, ինչ պրետորական անդամակցությունը՝ սովորական ակտիվ լեգեոնական անդամակցության համեմատ: Նրանք ունեն նույն լրացուցիչ պարտականությունները:

Շաբաթվա մեջ մեկ կամ երկու անգամ պահանջվող պայմանները չկատարելը չպետք է համարվի ծանր ձախողում անդամակցության պարտականության մեջ:

Ժամերգություն աղոթելը չի պահանջվում այն կրոնավորներից, որոնք պարտադրված չեն ըստ իրենց կանոնների:

Պետք է ջանալ սովորական օժանդակ անդամներին բերել ադյուտորական անդամակցությանը, քանի որ վերջինս առաջարկում է մի ճշմարիտ կյանքի ձև: Այն ամենը, ինչ ասվել է պրետորականների բաժնում՝ Եկեղեցու աղոթքներին լեգեոնականի միանալու և ժամերգության կարևորության մասին, հավասար կերպով վերաբերում է նաև ադյուտորներին:

Հատուկ կոչ է արվում քահանաներին և կրոնավորներին՝ դառնալու ադյուտորներ: Լեգեոնը ջանասիրաբար ցանկանում է միավորվել այս նվիրյալներին, որոնք հատուկ կոչված են ապրելու աղոթքի կյանքով և ավելի մտերիմ լինելու Աստծո հետ, և որոնք Եկեղեցում կազմում են հոգևոր ներուժի մի փառավոր էներգակայան: Արդյունավետ կերպով կապված լինելով այդ էներգակայանի հետ՝ լեգեոնական մեքենան կաշխատի անդիմադրելի ուժով:

Եթե նայենք, կտեսնենք, որ այս անդամակցությունը շատ քիչ բան կավելացնի գոյություն ունեցող պարտականություններին, այսինքն՝ ոչ ավելին, քան Կատենան, Լեգեոնի աղոթքը և որոշ խնդրանքներ, այսինքն՝ մի քանի րոպե միայն: Բայց Լեգեոնի հետ իրենց այդ կապի միջոցով նրանք կդառնան Լեգեոնն առաջ մղող ուժը:

«Տվե՛ք ինձ մի լծակ և հենակ, և ես կբարձրացնեմ Երկիրը», ասել է Արքիմեդը հնում: Լեգեոնի հետ միացած՝ այդուտորները Լեգեոնում կգտնեն այդ էական հենակը, որի վրա կկարողանան հենել իրենց աղոթքների լծակը, որը հետո կդառնա ամենակարող՝ բարձրացնելու ամբողջ աշխարհի ծանրացած հոգիները և մի կողմ տանելու ծառացած մեծ խնդիրները:

«Վերնատանը, որտեղ Եկեղեցին վերջնականապես հաստատվեց Սուրբ Հոգու հեղմամբ, Մարիամն ի մի հավաքված առաքյալների և աշակերտների մոտ տեսանելիորեն սկսում է կատարել մի դեր, որը հետագայում կշարունակի կատարել ավելի գաղտնի և մտերիմ կերպով, որն է՝ միացնել սրտերը աղոթքի մեջ և կյանք տալ հոգիներին իր ամենազոր միջնորդության վաստա-

կով. «Նրանք բոլորը, միատեղ, հարատև աղոթքի մեջ էին՝ կանանց և Հիսուսի մոր՝ Մարիամի ու նրա եղբայրների հետ» (Գործք. 1:14) (Մյուրա, «Les Corps Mystique du Christ»):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՈՒ ՕԺԱՆԴԱԿ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Ա) Լրացուցիչ ծառայություն. Լեգեոնը խնդրում է երկու աստիճանների անդամներին անդամակցության այս էական պայմանները համարել ոչ թե ծառայության սահմանափակում, այլ այն նվազագույնը, ինչն ասպետների նման կանեն այլ բազմաթիվ աղոթքներով և գործերով, որոնք կատարվում են այդ հատուկ դիտավորությամբ:

Ադյուտոր քահանաներին առաջարկվում է, որ իրենց բոլոր Սուրբ Պատարագներում կատարեն հատուկ հիշատակություն և նույնիսկ երբեմն Սուրբ Պատարագ մատուցեն Մարիամի և Լեգեոնի դիտավորությունների համար: Այլ օժանդակները երբեմն կարող են նույնիսկ իրենց նվիրատվությունների հաշվին խնդրել Սուրբ Պատարագ նույն դիտավորությունների համար:

Օժանդակ անդամն ինչքան էլ առատաձեռնորեն նվիրվի Լեգեոնին, այնուամենայնիվ դրա դիմաց կստանա հարյուրապատիկ, հազարապատիկ, միլիոնապատիկ ավելի շատ: Ինչպե՞ս: Որովհետև Լեգեոնը սովորեցնում է իր օժանդակ անդամներին, ոչ պակաս, քան գործող անդամներին, թե որքան մե՛ծ է Մարիամը, զորակոչում է նրանց զինվորի նման ծառայելու նրան և սովորեցնում է պատշաճ կերպով սիրել նրան: Այս ամենն այնքա՛ն մեծ մի բան է, որ «միլիոնապատիկ» բառը չի կարող չափել այդ ձեռքբերումը: Այն բարձրացնում է հոգևոր կյանքն ավելի վեր և այդպիսով ապահովում է ավելի փառավոր մի հավերժություն:

(Բ) Ո՞վ կարող է հրաժարվել Մարիամին այս տեսակի ընծա մատուցելուց: Չէ՞ որ նա, որ Լեգեոնի Թագուհին է, նաև ողջ տիեզերքի և նրա բոլոր մասերի և առնչությունների Թագուհին է, այնպես որ նրան ընծա մատուցել՝ նշականում

է նվիրել այնտեղ, որտեղ ամենաշա՛տը կարիք կա, որտեղ մեր աղոթքները կհասնեն առավելագույն արդյունքի:

(Գ) Իրեն հանձնված այս պահոցը տնօրինելիս Անարատ Մարիամը հաշվի կառնի յուրաքանչյուրի ամենօրյա կյանքի կարիքները և պարտականությունները: Գուցե հարց առաջանա. «Ես կցանկանայի միանալ, սակայն արդեն ամեն ինչ տվել եմ Մարիամին ամբողջովին, կամ՝ սրբակյաց հոգիներին, կամ՝ առաքելություններին: Ամեն ինչ վերջացած է: Ոչինչ չմնաց Լեգեոնի համար, ուրեմն, ի՞նչ օգուտ եմ տալու՝ լինելով օժանդակ անդամների շարքերում»: Լեգեոնը պատասխանում է. Լեգեոնի համար մեծ շահ է՝ ձեռք բերել այսքան անձնուրաց մի անձնավորության: Լեգեոնին օգնելու մասին քո մտահոգությունն ինքնին մի հավելյալ աղոթք է, դիտավորության հատուկ մաքրության ապացույց, աստվածային գանձարանի պահապանի անսահման առատաձեռնությանն ուղղված մի անդիմադրելի աղերս: Հաստատ է, որ եթե միանաս, Տիրամայրը կպատասխանի, և նոր դիտավորությունները կշահեն, իսկ նախկին դիտավորությունները չեն կորցնի ոչինչ: Որովհետև սա ամենահրաշալի Թագուհու և Մոր արվեստն է, որ թեև նա օգտվել է մեր ընծայից և օգնել ուրիշներին՝ ըստ իր հայեցողության վերցնելով մեր հոգևոր գանձերից, բայց մենք ինքներս տարօրինակ կերպով դարձել ենք ավելի հարուստ: Իր միջամտությունը հավելյալ աշխատանք է: Տեղի է ունեցել մի հրաշալի բազմապատկում, որը Սուրբ Լուի-Մարի դը Մոնֆորը կոչում է «շնորհի գաղտնիք» և նկարագրում այսպես. «Այնքանով, որքանով մեր լավ գործերը անցնում են Մարիամի ձեռքերով, դրանց մաքրությունը և, հետևաբար, վաստակը, գոհացուցիչ և աղաչական արժեքն ավելանում է: Մարիամի շնորհիվ մեր գործերն ավելի ընդունակ են դառնում՝ մխիթարելու քավարանի հոգիներին և դարձի բերելու մեղավորներին, քան եթե չանցնեին Մարիամի կուսական և ազատ ձեռքերով»:

Յուրաքանչյուր կյանք այս հիանալի գործարքի հնարավորության կարիքն ունի, որտեղ վերցվում է մեզնից մեր ունեցածը, դրվում է գրավատանը, ծառայում է իր նպատակին և ապա վերադարձվում հավելյալ շահույթով: Այս զորությունը

կարելի է գտնել՝ Մարիամին ընծայելով մեր հավատարիմ օժանդակ անդամակցությունը:

(Դ) Քանի որ Լեգեոնը կապված է բազմաթիվ տառապյալ հոգիների հետ, թվում է, թե Մարիամը Լեգեոնին տվել է սրտերը գրավելու իր անդիմադրելի ունակության մի փոքր մասը: Լեգեոնականների համար դժվար չի լինի իրենց ընկերներին բերել այս օժանդակ ծառայության մեջ, որն այնքա՛ն կենսական կարևորություն ունի Լեգեոնի համար և այնքա՛ն արժեքավոր է օժանդակ անդամների համար: Այդպիսով, նրանք կապված են Լեգեոնի անդամակցությանը՝ կիսելով Լեգեոնի աղոթքները և աշխատանքները:

(Ե) Հայտնի է նաև, որ Լեգեոնի օժանդակ անդամակցությունը կամ աղոթողների խումբը ունեն միևնույն ոգևորելու ուժը, ինչպես ակտիվ անդամները: Մարդիկ, որոնք չէին էլ կարող մտածել ամեն օր Վարդարան աղոթելու մասին, պարզվում է՝ հավատարմորեն կատարում են օժանդակ անդամակցության պարտականությունները, որոնք պահանջում է ամեն օր աղոթել Լեգեոնի Տեսսերայի բոլոր աղոթքները: Հիվանդանոցներում և այլ վայրերում շատերը, որ հուսահատված էին, վերագտել են կյանքի իմաստը՝ միանալով Լեգեոնի օժանդակ անդամներին, բազմաթիվ գյուղերի մարդիկ կամ ուրիշներ, որոնք ապրում են այնպիսի պայմաններում, որում հակված են կրոնին վերաբերվելու որպես ձանձրալի, եթե ոչ առօրյական մի երևույթի, օժանդակ անդամակցության միջոցով հասկացել են, որ իրենք կարևոր են Եկեղեցու համար, և նրանք ունեն ուրույն հետաքրքրասիրություն Լեգեոնի հանդեպ՝ ուշադրությամբ ընթերցելով Լեգեոնի մասին ցանկացած լրատվական տեղեկություն: Նրանք իրենց զգում են հոգիների փրկության համար մղվող հեռավոր ճակատամարտերի մասնակիցներ: Նրանք գիտակցում են, որ այդ ճակատամարտերի ելքը կախված է իրենց աղոթքներից: Հոգիների փրկության համար ազնիվ և հուզիչ գործերի մասին զանազան վայրերից եկող պատմությունները նրանց միապաղաղ կյանքերը լցնում են հեռավոր գործերի հանդեպ ոգևորությամբ:

Նրանց գոյությունը փոխակերպվում է այդ շատ ոգևորիչ գաղափարներով և խաչակրաց արշավանքներին մասնակցելու զգացումով: Նույնիսկ ամենասուրբ հոգիներին անհրաժեշտ է նման գաղափարական մի խթան:

(Զ) Յուրաքանչյուր պրեզիդիումի նպատակը պետք է լինի իր տարածքի բոլոր կաթողիկէներին օժանդակ անդամակցության բերելը: Այդպիսով, բարենպաստ հող է ապահովվում Լեգեոնի առաքելության այլ ուղղությունների իրականացման համար: Օժանդակ անդամակցության առաջարկության նպատակով կատարված այցելությունը, մարդկային ջերմ խոսքերով հանդերձ, ամենուրեք լավ կընդունվի, և կարելի է ակնկալել դրական արձագանք:

(Է) Եթե այլ կաթողիկէ միությունների անդամներ և նրանց գործունեությունը ներառվեն օժանդակ անդամակցության մեջ, դա կլինի այդ ամբողջ տարատեսակ գործունեության ցանկալի միավորումը: Նրանք այսպիսով միավորված կլինեն աղոթքով, համակրանքով, իդեալիզմով՝ Մարիամի հովանու ներքո, առանց Լեգեոնի կողմից իրենց սեփական ինքնավարության և առանձնահատկությունների մեջ նույնիսկ չնչին միջամտության և առանց նրանց աղոթքները իրենց շարժումներից հեռացնելու: Որովհետև նկատենք, որ այդ օժանդակ աղոթքները նվիրվում են Աստվածամորը, այլ ոչ թե Լեգեոնին:

(Ը) Ոչ կաթողիկէ անձը չի կարող լինել օժանդակ անդամ: Բայց եթե ինչ-որ մեկը ցանկանում է աղոթել Լեգեոնի բոլոր ամենօրյա աղոթքները (ինչը հազվադեպ է պատահում), նրան պետք է տրվի Տեսսերան և քաջալերվի իր այդ առատաձեռն ծրագրում: Նրա անունը պետք է հատուկ արձանագրվի, որպեսզի կապ պահպանվի նրա հետ: Միանշանակ է, որ Աստվածածինը ուշադիր կլինի այդ մարդու կարիքների հանդեպ:

(Թ) Օժանդակ անդամներին, որպես իրենց աղոթական ծառայության նպատակ, պետք է ներկայացվի Լեգեոնի

համաշխարհային պայքարը՝ հոգիների փրկության համար, և ոչ թե տեղական կարիքները: Նրանց պետք է հստակ բացատրվի, թե չնայած նրանք մարտնչողների շարքում չեն, այնուամենայնիվ, կարևոր դեր ունեն, որը կարելի է համեմատել ռազմամթերք և այլ ծառայություններ մատակարարողների դերակատարության հետ, առանց որոնց՝ կռվող ուժերն անզոր են:

(Ժ) Չպետք է հեշտությամբ ընդունել որպես օժանդակ անդամներ: Թեկնածուներին պետք է նախօրոք ամբողջությամբ ծանոթացնել բոլոր պարտականությունների հետ և պետք է վստահ լինել, որ նրանք անվերապահորեն կատարելու են դրանք:

(ԺԱ) Ստանձնած ծառայության մեջ օժանդակ անդամների հետաքրքրություններն ավելացնելու համար և այսպիսով 1. ներկա ծառայության որակը բարելավելու և նրանց հավատարմությունը ապահովելու համար, և 2. ապագայում նրանց դեպի ադյուտորական և ակտիվ անդամակցության առաջնորդելու համար նրանց պետք է ծանոթացնել Լեգեոնի աշխատանքին:

(ԺԲ) Անհրաժեշտ է օժանդակ անդամների հետ կապ պահել՝ աջակցելու համար նրանց անդամակցությանն ու հետաքրքրությանը, և սա փայլուն աշխատանքի հնարավորություն կընձեռի որոշ ակտիվ լեգեոնականների, որոնց իդեալը պետք է լինի՝ առաջնորդել նրանց ավելի առաջ՝ իրենց պարտականությունների կատարման մեջ:

(ԺԳ) Յուրաքանչյուր օժանդակ անդամի ուշադրությունը պետք է հրավիրել այն բանի վրա, թե ինչ մե՛ծ օգուտ է բերել նրանց Սուրբ Վարդարանի Եղբայրությանն անդամակցելը: Քանի որ օժանդակ անդամներն արդեն ավելի շատ աղոթք են ասում, քան պահանջում է եղբայրությունը, ապա միակ հավելյալ պարտավորությունը վերջինիս միանալու համար՝ իրենց անունը գրանցելն է եղբայրության ցուցակում:

(ԺԴ) Նմանապես, Մարիամի օժանդակ զինվորների հետաքրքրության լիարժեք զարգացման համար պետք է նրանց բացատրել «Սուրբ Կույս Մարիամի հանդեպ ճշմարիտ ջերմեռանդությունը» կամ սեփական կյանքի ամբողջական նվիրումը Մարիամին: Հնարավոր է, որ նրանցից շատերը երջանիկ լինեն ստանձնելու այս ավելի լիարժեք ծառայությունը Մարիամի հանդեպ, որը պահանջում է սեփական հոգևոր գանձերը նվիրել Մարիամին, ում Աստված արդեն նշանակել է Իր սեփական գանձապահը: Մտահոգությունն այստեղ անտեղի է, որովհետև Մարիամի և Քրիստոսի Սուրբ Սրտի դիտավորությունները նույնն են. դրանք ներառում են Եկեղեցու բոլոր կարիքները, վերաբերում են ամբողջ առաքելությանը և տարածվում են ամբողջ աշխարհով մեկ: Այդ դիտավորությունները վերաբերում են նաև քավարանի հոգիներին: Մարիամի դիտավորությունների համար նախանձախնդիր լինելը նշանակում է ամբողջովին հոգալ Տիրոջ Խորհրդավոր Մարմնի կարիքների մասին: Որովհետև Մարիամը պակաս հոգատար Մայր չէ այժմ, քան էր Նազարեթում եղած օրերին: Մարիամի դիտավորություններն ընդունելով՝ մենք գնում ենք ուղիղ դեպի նպատակը, որն է՝ Աստծո կամքը: Բայց մեր անձնական մոտեցմամբ շարժվելիս ինչպիսի՛ տանջալի ճանապարհ է սպասվում. արդյոք այն մեզ կհասցնի՞ ճամփորդության նպատակին:

Որպեսզի ոմանք չկարծեն, որ այս ջերմեռանդությունը կիրառելի է միայն բարձր հոգևոր մակարդակով անձանց համար, կարևոր է նշել, որ Սուրբ Լուի-Մարի դը Մոնֆորը Վարդարանի, Մարիամի ջերմեռանդության և սիրո սուրբ ստրկության մասին խոսում էր այն մարդկանց հետ, որոնք նոր էին ազատագրվում մեղքի գերությունից, և որոնց մթագնած հիշողությունները թարմացնելու համար պետք էր բարձրաձայնել քրիստոնեական պարզ ճշմարտությունները:

(ԺԵ) Ցանկալի և անհրաժեշտ է օժանդակ անդամների համար ստեղծել կազմակերպական ազատ ինչ-որ ձև՝ գումարելով սեփական ժողովներն ու կազմակերպել արշավներ: Այդպիսի ցանցը կարող է ձգտել համայնքում արմատավորել Լեգեոնի առաքելական և աղոթական իդեալները,

որպեսզի շուտով բոլորը սկսեն այդ իդեալները կիրառել հեղափոխական ոգով:

(ԺԶ) Օժանդակ անդամներից կազմված մի Եղբայրություն հավասարազոր կլիներ որևէ այլ Եղբայրության: Ավելին, այն կլիներ Լեգեոնը՝ Լեգեոնի ողջ ջերմությամբ և գույնով: Այսպիսի եղբայրության պարբերաբար անցկացվող ժողովները կպահեն անդամների կապը Լեգեոնի ոգու և կարիքների հետ՝ նրանց դարձնելով ավելի խանդավառ Լեգեոնին ծառայելու մեջ:

(ԺԷ) Նպատակ պետք է դրվի յուրաքանչյուր օժանդակ անդամի ընդգրկել Պատրիկների մեջ (տե՛ս Գլուխ 38), քանի որ օժանդակները և Պատրիկները կատարելապես լրացնում են միմյանց: Պատրիկների ժողովի միջոցով կիրականացվեն պարբերական հանդիպումներ, որոնք առաջադրված են օժանդակ անդամների համար որպես նպատակ: Դա թույլ կտա, որ նրանք կապ պահպանեն Լեգեոնի հետ և զարգանան կարևոր միջոցներով: Մյուս կողմից, եթե Պատրիկներն են դառնում օժանդակ անդամներ, ապա դա նրանց համար կլինի ևս մեկ քայլ դեպի վեր և դեպի առաջ:

(ԺԸ) Օժանդակ անդամները չպիտի մասնակցեն Լեգեոնի սովորական ակտիվ գործունեությանը: Նրանց այս կերպով ներգրավելու առաջարկներն առաջին հայացքից թվում են գայթակղիչ: Թվում է, թե օժանդակներին դեպի առաջ մղելը լավ է: Բայց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ լեգեոնականի աշխատանքը կիրականացվի առանց Լեգեոնի ժողովին մասնակցելու, այլ կերպ ասած՝ կթողնվի ակտիվ անդամակցության այդ էական պայմանը:

(ԺԹ) Որտեղ հնարավոր կամ ցանկալի է, օժանդակ անդամները կարող են մասնակցել Ասիեսին (Acies), որն այդպիսի հանգամանքներում մի հիանալի միջոցառում է նրանց համար և ավելի մտերիմ կապով նրանց մոտեցնում է ակտիվ լեգեոնականներին: Օժանդակ անդամները, որոնք պատրաստ են կատարել անհատական Նվիրագործման

արարողությունը, պետք է դա կատարեն ակտիվ լեգեոնականներից հետո:

(Ի) Աղոթական խնդրանքը, որը պետք է ընդգրկված լինի օժանդակ անդամների Տեսսերայում, պետք է լինի հետևյալը. «Անարատ Կույս Մարիա՛մ, Միջնորդ Բոլոր Շնորհների, աղոթի՛ր մեզ համար»:

(ԻԱ) Ակտիվ լեգեոնականներին ուղղված Լեգեոնի կոչը՝ «Միշտ պատրաստ լինել ծառայելու հոգիներին», նաև վերաբերում է օժանդակ անդամներին: Ինչպես ակտիվ լեգեոնականները, այդպես էլ օժանդակները պետք է ջանան ներգրավել ուրիշներին Լեգեոնի ծառայության մեջ: Այսպես օղակ առ օղակ հյուսվելով՝ Կատենա Լեգեոնիսը կարող է դառնալ աղոթքի ոսկե ցանց՝ տարածվելով ողջ աշխարհում:

(ԻԲ) Հաճախ առաջարկվում է, որ օժանդակ անդամների աղոթքները կրճատվեն կամ փոխվեն՝ հարմարեցվելու համար կույրերին, անգրագետներին կամ երեխաներին: Ակնհայտ է այսպիսի զիջում կատարելու անհնարինությունը. փաստ է, որ պարտականությունը, անորոշ դառնալով, կորցնում է իր պարտավորիչ ուժը: Չի կարելի և չպետք է այդ աղոթքները երկար ժամանակով հեռու պահել գրագիտության խնդիր ունեցողներից, մասնակի կուրություն ունեցողներից կամ շատ զբաղվածներից: Ժամանակի ընթացքում այդ թողտվությունը կդառնա սովորական գործելաոճ:

Ո՛չ, Լեգեոնը պետք է պնդի միաձև ծառայության կատարման վրա: Եթե սա որոշ մարդկանց ուժերից վեր է, ապա նրանք չեն կարող լինել օժանդակ անդամներ, բայց նրանք կարող են անգնահատելի օգնություն ցուցաբերել՝ աղոթելով Լեգեոնի համար իրենց սեփական ձևով, և պետք է նրանց քաջալերել այդ բանում:

(ԻԳ) Թույլատրվում է վերցնել օժանդակ անդամներից Լեգեոնի Տեսսերայի և անդամակցության վկայականի արժեքը: Բայց օժանդակ անդամներից անդամավճարներ չպետք է պահանջել:

(ԻԴ) Յուրաքանչյուր պրեզիդիում պետք է ունենա օժանդակ անդամների ցուցակը՝ ներառելով ադյուտորների և սովորական օժանդակ անդամների անունները և հասցեները, և այդ ցուցակները պետք է պարբերաբար ներկայացվեն Կուրիային կամ նրա կողմից արտոնված այցելողներին: Այս ցուցակը մանրամասնորեն պետք է քննվի, որպեսզի համոզված լինենք, որ այն պատշաճ կերպով պահվում է, որ խանդավառ կերպով փնտրվում են նոր անդամներ, և որ պարբերաբար այցելում են արդեն արձանագրված անդամներին՝ համոզվելու համար, թե արդյոք նրանք, ձեռքը մաճի վրա դրած լինելով, հետ չե՞ն դարձել (հմմտ.՝ Ղկ. 9:62):

(ԻԵ) Օժանդակ աստիճանի անդամակցությունը դառնում է վավեր՝ ցանկացած պրեզիդիումի օժանդակ անդամների ցուցակում անձի անունը գրանցելուց հետո: Այս ցուցակը գտնվում է փոխնախագահի հսկողության տակ:

(ԻԶ) Օժանդակ անդամների թեկնածուների անունները մտցվում են պայմանական ցուցակի մեջ՝ մինչև եռամսյա փորձաշրջանի լրանալը: Թեկնածուի անունը մշտական ցուցակում գրանցելուց առաջ պրեզիդիումը պետք է համոզված լինի, որ նա հավատարմորեն կատարել է անդամակցության պարտականությունները:

«Ինչպիսի՞ փոխհատուցում կտա մեզ մեր բարի Հիսուսը՝ մեր բոլոր բարի գործերն Իր Սուրբ Մոր ձեռքերով, հերոսական և անշահախնդիր ձևով Իրեն հանձնելու համար: Եթե Նա, նույնիսկ այս աշխարհում, հարյուրապատիկ անգամ տալիս է նրանց, ովքեր, հանուն Իր սիրո, հրաժարվում են հասարակական, ժամանակավոր և անցողիկ բարիքներից, ապա ինչպիսի՞ն կլինի այն հարյուրապատիկը, որը Նա կտա այն մարդուն, որը Նրա համար զոհաբերում է իր ներքին և հոգևոր բարիքները» (Սուրբ Լուի-Մարի դը Մոնֆոր):

17

ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ԼԵԳԵՈՆԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԳԻՆԵՐԸ

Հաղթարշավն ավարտված է, և լեգեոնականն ազնիվ մահով վախճանված է: Նա վերջնականապես հաստատված է լեգեոնական ծառայության մեջ: Նա կլինի հավերժ լեգեոնական, որովհետև Լեգեոնը նրա համար պատրաստել է այդ հավերժությունը: Լեգեոնը եղել է նրա հոգևոր կյանքի մանրաթելն ու ձուլվածքը: Ավելին, այն միասնական զորավոր խնդրանքը, որ ակտիվ և օժանդակ անդամների կողմից աղոթքով բարձրացվել է ամեն օր և անկեղծորեն՝ առ այն, որ Լեգեոնը վերստին հավաքվի՝ առանց որևէ մեկի կորստյան, օգնել է նրան՝ անցնելու վտանգների և դժվարությունների երկար ճանապարհը: Ինչպիսի՛ երջանիկ մտածում՝ բոլոր լեգեոնականների՝ թե՛ իր, թե՛ բոլորի համար: Բայց այս պահին կա վիշտ ընկերոջ և զինակցի կորստյան պատճառով, և կա աղոթքի կարիքը, որպեսզի հանգուցյալ զինվորը շուտափույթ ազատվի քավարանից:

Պրեզիդիումը պետք է, առանց հետաձգելու, Սուրբ Պատարագ խնդրի իր վախճանված յուրաքանչյուր ակտիվ անդամի համար, և պրեզիդիումի յուրաքանչյուր անդամ պետք է հատուկ կերպով կատարի Լեգեոնի բոլոր աղոթքները՝ ներառյալ Վարդարանը, առնվազն մեկ անգամ՝ նույն դիտավորության համար: Բայց այս պարտականությունները չեն տարածվում անդամների վախճանված ազգականների վրա: Պատարագին և թաղմանը պետք է մասնակցեն ոչ միայն տվյալ պրեզիդիումի անդամները, այլ հնարավորինս մեծ թվով լեգեոնականներ:

Խորհուրդ է տրվում, որ թաղման ընթացքում աղոթեն Վարդարանը և Լեգեոնի մյուս աղոթքները: Սա կարող է կատարվել Եկեղեցու պաշտոնական աղոթքից անմիջապես հետո: Այս աղոթասացությունը, բացի հանգուցյալին օգտակար լինելուց, մեծ մխիթարություն կլինի վշտի մեջ գտնվող ազգականների, լեգեոնականների և բոլոր ներկա ընկերների համար:

Վստահ ենք, որ նույն աղոթքները հուղարկավորության ընթացքում կկարդացվեն մեկից ավելի անգամներ: Չպետք է դադարեցնել նաև հիշատակի պարտականությունը:

Ամեն տարի՝ նոյեմբեր ամսին, յուրաքանչյուր պրեզիդիում պետք է խնդրի Սբ Պատարագ՝ ոչ միայն տվյալ պրեզիդիումի, այլ նաև ողջ աշխարհի վախճանված լեգեոնականների համար: Այս և բոլոր մյուս դեպքերում, երբ աղոթքներ են կատարվում հանգուցյալ լեգեոնականների համար, ներառվում են անդամակցության բոլոր աստիճանները:

«Քավարանը մաս է կազմում Մարիամի իրականության: Այնտեղ էլ կան նրա զավակները, որոնք ցավի անցողիկ տառապանքի մեջ սպասում են անանց փառքի ծնունդյանը:

Սբ Վինսենթ Ֆերրերը, Սբ Բեռնարդին Սիենացին, Լուի դը Բլուան և այլոք հստակորեն հռչակում են Մարիամին որպես քավարանի Թագուհի, և Սբ Լուի-Մարի դը Մոնֆորը հորդորում է մտածել և գործել այս ուսմունքի համաձայն: Նա ցանկանում է, որ մենք Մարիամի ձեռքերին հանձնենք մեր աղոթքների և գոհացումների արժեքը: Նա խոստանում է, որ ի պատասխան այդ ընծայման, այն հոգիները, որոնք թանկ են մեզ համար, ավելի առատորեն կշահեն, քան եթե մենք ուղղեինք մեր աղոթքները՝ առանց Տիրամոր միջնորդության» (Lhoumeau, «La Vie Spirituelle a l'Ecole de St. Louis-Marie de Monfort»):

18

ՊՐԵԶԻԴԻՈՒՄԻ ԺՈՂՈՎԻ ԿԱՐԳԸ

1. Յուրաքանչյուր ժողովի կարգը պետք է լինի միանման: Անդամները պետք է նստեն մեկ սեղանի շուրջ, որի մի ծայրում հատուկ ժողովի համար դրվում է մի ժամանակավոր խորան: Բավարար չափերով սպիտակ սփռոցի վրա դրվում է Անարատ Հղության արձանը (շնորհների բաշխման դիրքով)՝ նախընտրելի երկու ոտնաչափ (60 սմ) բարձրությամբ, որի կողքերին դրվում է երկու ծաղկաման՝ ծաղիկներով, և երկու մոմակալ՝ վառված մոմերով: Արձանից մի փոքր առաջ

և մի փոքր դեպի աջ դրվում է Վեքսիլլումը, որի նկարագրությունը տրված է 27-րդ Գլխում:

Խորանի և Վեքսիլլումի տեղադրման լուսանկարները կարելի է գտնել այս ձեռնարկի 492-493 էջերում:

Քանի որ գաղափարն այն է, որ արձանը ներկայացնում է Թագուհուն, որը ներկա է իր զինվորների մեջ, խորանը չպետք է լինի ժողովի սեղանից առանձնացված կամ չպետք է դրվի անդամների շրջանից դուրս: Որդիական սերը մեր Երկնային Մոր հանդեպ թելադրում է, որ իրերը և ծաղիկները հնարավորինս լավը լինեն, քանի որ այդ իրերի համար գումար է ծախսվում միայն մեկ անգամ: Հնարավոր է՝ որևէ հովանավորի շնորհիվ կամ Աստծո հաջողությամբ պրեզիդիումը ունենա արծաթյա ծաղկամաններ և մոմակալներ: Լեգեոնականներից մեկն իր համար պետք է պատվավոր պարտականություն համարի Վեքսիլլումը, ծաղկամաններն և մոմակալները մաքուր, փայլուն և պատշաճ կերպով պահելը և ծաղիկներն ու մոմերը մշտապես ապահովելը՝ պրեզիդիումի ծախսերով:

Եթե բնական ծաղիկներ բացարձակապես անհնար է ձեռք բերել, ապա թույլատրվում է օգտագործել արհեստականը՝ ավելացնելով բնական կանաչ բուսականություն՝ կենդանի բնության տպավորություն ստեղծելու համար:

Եթե եղանակի պատճառով կարիք կա պաշտպանելու մոմերի կրակը, թույլատրվում է դնել ապակյա բաժակ կամ անոթ, որպեսզի մոմերը չհանգչեն, բայց չի կարելի ամբողջությամբ քողարկել մոմերը:

«Legio Mariae» բառերը կարող են ասեղնագործված լինել կտորի վրա, բայց ոչ՝ պրեզիդիումի անունը: Շեշտը պետք է դրվի միության կետերի վրա, այլ ոչ թե տարբերության:

«Իրականում, Մարիամի միջնորդությունը **սերտորեն կապված է նրա մայրության հետ:** Այն ունի հատուկ մայրական բնույթ, ինչն այն տարբերում է այլ մարդկանց միջնորդությունից, որոնք տարբեր և միշտ ենթակա կերպով մասնակցում են Քրիստոսի միջնորդությանը, թեև Տիրամոր միջնորդությունը նույնպես մասնակցային միջնորդություն է: Ըստ էության, թեև ճիշտ է, որ «ոչ մի արարած չի կարող դասվել Մարմնացած Խոսքի և Փրկչի հետ», միևնույն ժամանակ, «Փրկչի յուրահատուկ միջնորդությունը չի բացառում, այլև արարածների համար ստեղծում է համագործակ-

ցության բազմակողմանի հնարավորություններ, որը ոչ այլ բան է, քան մասնակցություն այդ եզակի միջնորդության աղբյուրին»: Եվ այսպիսով, «Աստծո միակ բարությունը, ըստ էության, զանազան կերպերով է փոխանցվում Իր արարածներին» (RMat38):

2. Նշանակված ժամին պարտաճանաչ կերպով պրեզիդիումի անդամները պետք է լինեն իրենց տեղերում, որպեսզի ժողովը սկսվի: Բայց պարտաճանաչ ձևով սկսելը (որն այնքան անհրաժեշտ է պրեզիդիումի արդյունավետ աշխատանքի համար) անհնարին կլինի, եթե սպաները փոքր-ինչ վաղ չներկայանան, որպեսզի կարողանան կատարել անհրաժեշտ պատրաստությունները:

Ոչ մի պրեզիդիումի ժողով չպետք է սկսել առանց գրված ծրագրի, որը կոչվում է «**Աշխատանքային թերթիկ**»: Այն պետք է կազմվի յուրաքանչյուր ժողովից առաջ, և նախագահը պետք է առաջնորդվի դրանով: «Աշխատանքային թերթիկի» մեջ մանրամասնորեն ներկայացվում է պրեզիդիումի տվյալ պահի գործունեությունը, և ամեն հանձնարարության առջև գրվում են անդամների անունները, որոնց այն տրվել է: Հաջորդ ժողովներին պարտադիր չէ, որ բոլոր հարցերը հետևեն նույն հերթականությամբ, բայց պետք է հնչեցվի յուրաքանչյուր անդամի անունը և հաշվետվություն ընդունվի յուրաքանչյուրից, եթե նույնիսկ նրանք աշխատում են երկուսով կամ ավելի անդամներով:

Ժողովի ավարտից առաջ հարկավոր է համոզվել, որ յուրաքանչյուր անդամ ստացել է աշխատանք հաջորդ շաբաթվա համար:

Նախագահը պետք է ունենա մի ամփոփագիրք, որտեղ կարելի է հավաքել յուրաքանչյուր շաբաթվա Աշխատանքային թերթիկները:

«Իդեալիզմը, չնայած իր բուռն և կլանող լինելուն, երբեք չպետք է լինի արդարացում անորոշ և ոչ գործնական զգացմունքի համար: Ինչպես արդեն նշել ենք, Սուրբ Իգնատիոսի հանճարն իր կրոնական էներգիայի ողջամիտ և մեթոդական կիրառման մեջ է: Գոլորշին անօգուտ կամ ավելորդ է, եթե դրա համար չունենք գլան և մխոց: Որքա՛ն հոգևոր եռանդ է անօգուտ կորչում՝ առանց ուշադիր ուսումնասիրության և հստակ կիրառության: Բենզինի տարան կարելի է սխալ կերպով օգտագործել ավտոմեքենան

պայթեցնելու համար, բայց բենզինը զգուշությամբ և հնարամտորեն օգտագործելու դեպքում մեքենան կարելի է հասցնել մինչև լեռան գագաթը» (Գերհ. Ալֆրեդ Օ'Ռահիլլի. «Հայր Ուիլյամ Դոյլի Կյանքը»):

3. Ժողովը բացվում է Սուրբ Հոգուն ուղղված կոչման աղոթքով, Ով այդ շնորհի, կյանքի և սիրո աղբյուրն է, որոնց փոխանցողն ենք համարում Մարիամին մեծ ուրախությամբ:

«Այն պահից, երբ Տիրամայրն իր արգանդում հղացավ Աստծո Որդուն, նա, այսպես ասած, ձեռք բերեց որոշակի իշխանություն և իրավասություն Սուրբ Հոգու յուրաքանչյուր շնորհատվության նկատմամբ, այնպիսի ձևով, որ ոչ մի արարած չի կարող ստանալ Աստծո շնորհը՝ առանց Մարիամի միջնորդության:

...Սուրբ Հոգու բոլոր պարգևները, առաքինությունները և շնորհները Մարիամի կողմից տրվում են նրան, ում Տիրամայրը ցանկանում է, երբ ցանկանում է և այնքան, որքան և այնպես, ինչպես Մարիամը ցանկանում է» (Սբ Բեռնարդին. «Քարոզ Սուրբ Ծննդյան մասին»):

4. Ապա հետևում է Վարդարանի հինգ տասնյակների աղոթքը. ընդ որում՝ հոգևոր առաջնորդը սկսում է ասել առաջին, երրորդ և հինգերորդ տասնյակները, իսկ անդամները՝ երկրորդը և չորրորդը: Ոչ մի անդամ չպետք է Վարդարանն արտասանի լռությամբ: Նույն չափ հարգանք և արժանապատվություն է պետք ցուցաբերել արտասանության ընթացքում՝ այնպես, կարծես այն Անձնավորությունը, որին ուղղված է աղոթքը, ներկա է իրեն ներկայացնող արձանի փոխարեն:

«Ողջույն...» աղոթքի երկրորդ մասը չպետք է սկսվի, մինչ առաջին հատվածը չավարտվի, և Հիսուսի սուրբ անունը պետք է արտասանվի պատկառանքով: Վարդարանի աղոթքը, որպես կանոն և որպես քաջալերանք, լեգեոնականի կյանքում մեծ դեր է խաղում, ուստի բոլորին հորդորում ենք գրանցվել Վարդարանի եղբայրակցության մեջ (տե՛ս Հավելված 7):

Պողոս Զ Պապը պնդում է, որ Վարդարանը պետք է պահպանել: Այն մաքուր աղոթք է: Դրա բովանդակությունը մեծապես աստվածաշնչյան է: Այն արդյունավետ ձևով

ամփոփում է փրկության ողջ պատմությունը և ծառայում է իր հիմնական նպատակին, որն է՝ այդ պատմության մեջ ցույց տալ Մարիամին՝ իր զանազան դերակատարություններով:

«Աղոթքի տարատեսակ ձևերի շարքում Վարդարանից ավելի գերազանց աղոթք չկա: Այն իր մեջ խտացնում է այն ամբողջ հարգանքը, որը պետք է ցուցաբերվի Տիրամոր հանդեպ: Վարդարանը լավագույն դեղամիջոցն է մեր բոլոր չարիքների դեմ, և արմատն է մեր բոլոր օրհնությունների» (Լևոն ԺԳ Պապ):

«Վարդարանը բոլոր աղոթքներից ամենագեղեցիկն է և շնորհներով ամենահարուստը, այն ամենահաճելին է Ամենասուրբ Կույս Մարիամին: Ուստի, սիրե՛ք Վարդարանը և ամեն օր աղոթե՛ք այն ջերմեռանդորեն, սա՛ է այն ժառանգությունը, որը ես թողնում եմ ձեզ, որպեսզի դուք հիշեք ինձ դրանով» (Սբ Պիոս Ժ Պապ):

«Քրիստոնյաների համար ամենակարևոր գիրքն Ավետարանն է, իսկ Վարդարանն Ավետարանի համառոտությունն է» (Լաքորդեր):

«Անհնար է, որ բազում մարդկանց աղոթքները չլսվեն, եթե այդ բազմաթիվ աղոթքները դառնան մեկ աղոթք» (Սբ Թովմա Աքվինացի, «Մատթեոս 18-ի մասին»):

5. Վարդարանի աղոթքին անմիջապես հետևում է հոգևոր ընթերցումը, որը կատարում է հոգևոր առաջնորդը (կամ իր բացակայության դեպքում՝ նախագահը): Ընթերցումը պետք է տևի մոտ հինգ րոպե: Հոգևոր ընթերցման ընտրությունը ազատ է, բայց առնվազն պրեզիդիումի գոյության առաջին տարիներին խորհուրդ է տրվում ընթերցել Լեգեոնի ձեռնարկը, որպեսզի անդամները ծանոթանան դրա բովանդակությանը և քաջալերվեն այն լրջորեն ուսումնասիրելու համար:

Համաձայն սովորության՝ ընթերցումից հետո բոլորը միասին խաչակնքվում են:

«Կասկածից վեր է, որ Տիրամայրն արժանի է օրհնության, որովհետև նա դարձավ Հիսուսի Մայրը՝ ըստ մարմնի («Օրհնյալ է այն արգանդը, որ կրել է Քեզ, և այն կուրծքը, որ կերակրել է Քեզ»), բայց նաև և մանավանդ այն պատճառով, որ Ավետման պահին Մարիամն ընդունեց Աստծո խոսքը, որովհետև հավա-

տաց և հնազանդվեց Աստծուն, և որովհետև նա «պահում էր» այդ խոսքը և «խորհում էր այդ մասին իր սրտում» (Ղկ. 1:38,45; 2:19,51) և իր ամբողջ կյանքով իրականացրեց այն: Այսպիսով, մենք կարող ենք ասել, որ Քրիստոսի հռչակած երանությունը չի հակասում անծանոթ կնոջ կողմից ասված օրհնությանը՝ չնայած արտաքին երևույթներին, այլ ընդհակառակը, համընկնում է դրա հետ Տիրամոր անձի մեջ, որն ինքն իրեն անվանում է պարզապես «Տիրոջ աղախինը» (RMat 20):

6. Ընթերցվում է նախորդ ժողովի արձանագրությունը, և եթե այն հավանության է արժանանում ներկա լեգեոնականների կողմից, նախագահը ստորագրում է այն: Արձանագրությունը պետք է լինի ո՛չ շատ երկար, ո՛չ էլ շատ կարճ. հարկավոր է գտնել ոսկե միջինը: Յուրաքանչյուր արձանագրություն պետք է ունենա համապատասխան կարգաթիվ:

Արձանագրության կարևորությունը կընդգծվի քարտուղարի մասին բաժնում: Արձանագրությունը, լինելով ժողովի ժամանակ քննարկվող առաջին հարցը, ռազմավարական նշանակություն ունի: Կախված նրանից, թե ինչպիսին է այն և ինչպես է ընթերցվում, արձանագրությունը կարող է ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն ժողովի հետագա ընթացքի վրա:

Լավ արձանագրությունը նման է լավ օրինակի: Վատ արձանագրությունը նման է վատ օրինակի, և հարկավոր է պնդել, որ լավ գրված, բայց վատ ընթերցված արձանագրությունը համարվում է վատ: Այդ օրինակը մեծ ազդեցություն ունի անդամների վրա: Նրանց զգոնությունը, հաշվետվությունները կրում են արձանագրության ազդեցությունը, այնպես որ ժողովը կարող է լինել լավը կամ վատը՝ պարզապես որովհետև արձանագրությունը լավն էր կամ վատը: Իսկ աշխատանքի որակը կախված կլինի ժողովի որակից:

Ուրեմն, քարտուղարը, որն առանձին զբաղված է արձանագրության պատրաստմամբ, թող մտածի այս ամենի մասին, իսկ պրեզիդիումը, հանուն իր սեփական արդյունավետ աշխատանքի, թող վերանայի այն:

«Իսկապես ամոթ կլինի, եթե այդ առումով հաստատվեն Քրիստոսի խոսքերը. «Այս աշխարհի որդիները ավելի հնարա-

միտ են, քան լույսի որդիները» (Ղկ. 16:8)։ Մենք տեսնում ենք, թե ինչպիսի ջանասիրությամբ են նրանք զբաղված իրենց գործերով, ինչքան հաճախ են հավասարակշռում իրենց ծախսերն ու եկամուտները, ինչպիսի ճշտությամբ են կազմում իրենց հաշիվները, ինչպես են նրանց վշտացնում կորուստները, և ինչպես են նրանք ջանում փոխհատուցել դրանք» (Սուրբ Պիոս Ժ Պապ)։

7. Մնայուն հրահանգը: Հետևյալ Մնայուն հրահանգը պետք է գրված լինի Աշխատանքային թերթիկում (կամ դրվի այնպես, որ չանտեսվի ճիշտ ժամանակին) և ընթերցվի նախագահի կողմից, արձանագրության ստորագրումից անմիջապես հետո՝ ամեն ամսվա առաջին հանդիպման ժամանակ։

ՄՆԱՅՈՒՆ ՀՐԱՀԱՆԳ

«լեգեոնականները պարտավոր են կատարել հետևյալ պարտականությունները.

1) Ամեն շաբաթ պարտաճանաչ և կանոնավոր կերպով ներկա գտնվել պրեզիդիումի հանդիպմանը՝ ներկայացնելով կատարված աշխատանքի հաշվետվությունը։

2) Ամեն օր աղոթել Կատենա Լեգեոնիս աղոթքը։

3) Կատարել բովանդակային և գործունյա լեգեոնական աշխատանք՝ հավատքի և Աստվածամոր հետ միության ոգով, այնպիսի ձևով, որ նրանց մեջ, ում համար աշխատում է լեգեոնականը, և իր լեգեոնական եղբայրների և քույրերի մեջ, վերստին տեսանելի դառնա մեր Տերը, և լեգեոնական աշխատանքի միջոցով Տիրոջը ծառայություն մատուցվի Նրա Մոր՝ Մարիամի կողմից։

4) Խիստ գաղտնի պահել որոշ հարցեր, որոնք քննարկվում են Լեգեոնի հանդիպումների ժամանակ, կամ որոնց մասին տեղեկացել են լեգեոնական առաքելության ընթացքում»։

«Իմ միջոցով Մարիամը ցանկանում է սիրել Հիսուսին նաև բոլոր նրանց սրտերում, ում ես կարող եմ լուսավորել իմ սիրով՝ որպես իմ առաքելության և մշտական աղոթքների արդյունք։ Եթե

ես ամբողջովին ինքս ինձ նույնացնեմ Տիրամոր հետ, ապա նա ինձ այնպե՛ս կողողի իր շնորհներով և սիրով, որ ես կնմանվեմ մի մշտապես բխող աղբյուրի, և որն իր հերթին կողողի ուրիշների հոգիները: Իմ շնորհիվ Մարիամը հնարավորություն կստանա սիրելու Հիսուսին և համակելու Նրան ուրախությամբ՝ ո՛չ միայն իմ սրտի միջոցով, այլև ինձ հետ միավորված անթիվ սրտերի միջոցով» (Դը Ցագգեր. «Վստահության առաքինությունը») [Այս մեջբերումը պետք չէ ընթերցել՝ որպես Մնայուն հրահանգի մաս]:

8. Գանձապահի զեկույցը: Գանձապահը ներկայացնում է պրեզիդիումի յուրաքանչյուր շաբաթվա ֆինանսական մուտքերն ու ելքերը, ինչպես նաև պրեզիդիումի ներկա ֆինանսական վիճակը:

«Երբեմն հոգիները կորսվում են փողի պակասության պատճառով կամ, այլ կերպ ասած, լիակատար առաքելության կատարելու անհնարինության պատճառով» (Ջեյմս Մելլեթ, Ս.Ս. Սփ.):

9. Ներկայացվում է անդամների աշխատանքի հաշվետվությունը: Անդամները հաշվետվությունը ներկայացնելիս պետք է նստած լինեն: Հաշվետվությունը պետք է լինի բանավոր, չնայած անդամները կարող են օգտվել նշումներից:

Պրեզիդիումը լեգեոնականի կողմից պարտականության չկատարումը չպետք է համարի սովորական մի բան: Եթե անդամները հարգելի պատճառով չեն կարողացել իրականացնել աշխատանքը, նրանք պետք է որոշ բացատրություն տան, եթե հնարավոր է: Առանց բացատրության՝ հաշվետվության բացակայությունը տպավորություն է թողնում, որ պարտականությունն անտեսվել է, իսկ դա վատ օրինակ է յուրաքանչյուր անդամի համար:

Եթե անդամները իրենց աշխատանքին մոտենում են բավարար լրջությամբ, ապա արդարանալու անհրաժեշտություն հազվադեպ կծագի, ինչը լավ է, քանի որ արդարանալու մթնոլորտում նվազում է եռանդն ու կարգապահությունը:

Հաշվետվությունը չպետք է ուղղվի միայն նախագահին, քանի որ պետք է հաշվի առնել հետևյալը. երբ որևէ մեկը խոսում է մյուսի հետ անհատական ձևով, մեխանիկորեն կարգավորվում է իր ձայնը ըստ այդ անհատական

հեռավորության: Սա նշանակում է, որ միայն նախագահին ուղղված խոսքերը դժվարությամբ կլսեն հեռու նստած անդամները:

Հաշվետվությունը և դրա բոլոր քննարկումները պետք է ասվեն այնպիսի ձայնային տոնայնությամբ, որ խոսքը հասանելի լինի սենյակի բոլոր մասերում: Հաշվետվությունը, թեև լիարժեք և ճշգրիտ լինի, եթե լսելի չէ ներկա անդամների մեծ մասին, ճնշող ազդեցություն է թողնում ժողովի վրա և ավելի է վատ է, քան հաշվետվության բացակայությունը: Շշուկով խոսելը համեստության կամ քաղաքավարության նշան չէ, ինչպես շատերն են կարծում: Ո՞վ է այնքան համեստ և նուրբ, որքան Մարիամը: Բայց մի՞թե կարելի է պատկերացնել Մարիամին փնթփնթալիս կամ խոսելիս այնպես, որ լսելի չլինի նրա մոտ գտնվող անձանց: Ո՛վ լեգեոնականներ, սրանում նմանվե՛ք ձեր Թագուհուն, ինչպես ամեն հարցում:

Նախագահները պետք է հրաժարվեն ընդունել հաշվետվություններ, որոնք դժվար է լսել: Բայց, նախ, նա ինքը պետք է օրինակ ծառայի մյուսների համար: Նախագահը սահմանում է տոնայնությունը մյուս անդամների համար: Սովորաբար ներկաները նախագահից ցածր են խոսում, և եթե նա խոսում է միջին և երկխոսության տոնով, ապա անդամների հաշվետվությունները կլինեն շշուկով: Քանի որ եթե անդամները խոսում են հստակ, մինչդեռ նախագահը խոսում է ցածրաձայն, կկարծեն, թե բղավում են և կիջեցնեն իրենց տոնայնությունն այնքան, որ ոչինչ այլևս չի լսվի: Բոլոր անդամները, ներառյալ նախագահը, պետք է պնդեն, որ բոլորը բարձր խոսեն: Հոգևոր առաջնորդը, բժշկի նման, պետք է պահանջի խոսել բարձր՝ որպես կենսական տարր՝ պրեզիդիումի առողջության համար:

Ուրույն ձևով հաշվետվությունը նույնքան կարևոր է ժողովի համար, որքան աղոթքները: Դրանք լրացնում են միմյանց: Պրեզիդիումի ժողովի համար երկուսն էլ անհրաժեշտ են:

Հաշվետվությունը աշխատանքը կապում է պրեզիդիումի հետ, և հետևաբար, այն պետք է լինի Լեգեոնի անդամի աշխատանքի հստակ ներկայացումը, այսինքն՝ այնքան

ակնառու, որքան շարժապատկերը՝ կինոթատրոնի էկրանին, որպեսզի մյուս անդամները մտովի մասնակցեն այդ աշխատանքին, որպեսզի դատեն ու մեկնաբանեն այն և սովորեն դրանից: Ուստի, հաշվետվությունը պետք է ցույց տա, թե ինչ է ձեռնարկվել և ձեռք բերվել և ինչ ոգով, տեղեկացնի առաքելությանը հատկացրած ժամանակի, օգտագործված մեթոդների մասին, նրա մասին, ինչը չի հաջողվել կատարել, և այն մարդկանց մասին, որոնց վրա հնարավոր չի եղել ազդել դրական ձևով:

Հանդիպումը պետք է լինի պայծառ և ուրախ: Հետևաբար, հաշվետվությունները պետք լինեն այնպիսին, որ և՛ հետաքրքիր լինեն, և՛ տեղեկացնեն: Անհնար է հավատալ, թե պրեզիդիումը առողջ է, եթե ժողովը մահացու ձանձրալի է, և, անկասկած, այն կվանի երիտասարդ անդամներին:

Աշխատանքի որոշ տեսակներ այնքա՛ն լի են բազմազանությամբ, որ հեշտ է լավ հաշվետվություն կազմելը: Այլ աշխատանքներ չունեն նույն հնարավորությունները, այնպես որ յուրաքանչյուր անսովոր առանձնահատկություն, ինչքան էլ փոքր լինի, պետք է հիշվի, որպեսզի նշվի հաշվետվության մեջ:

Հաշվետվությունը պետք է լինի ո՛չ շատ երկար, ո՛չ էլ շատ կարճ և, ամենակարևորը, չպետք է լինի առօրյա արտահայտություններով լի: Ձախողումն այս ուղղություններում ցույց է տալիս, որ ոչ միայն տվյալ անդամն է անտեսում պարտականությունը, այլ նաև մյուսներն էլ անմասն չեն այդ անտեսման մեջ: Սա վնասում է ամբողջ լեգեոնական աշխատանքի վերահսկողության գաղափարին: Պրեզիդիումը չի կարող վերահսկել աշխատանքը, եթե ամբողջովին տեղեկացված չէ դրա մասին:

Հիմնականում Լեգեոնի աշխատանքը այնքան դժվար է, որ եթե անդամների ջանքերը հանդիպման ժամանակ չքաջալերվեն արձանագրության միջոցով, նրանք հակված կլինեն խնայելու սեփական ուժերը: Այսպես չպե՛տք է լինի: Նրանք Լեգեոնում են, որպեսզի հնարավորինս մեծ բարիք գործեն, և հնարավոր է, որ հենց այն դեպքերում, երբ լեգեոնականները հանդիպում են ամենամեծ բնական մերժողական վերաբերմունքին, նրանց աշխատանքի կարիքն

ամենաշա՛տն է զգացվում: Հիմնականում ժողովի միջոցով է, որ կիրառվում է լեգեոնական կարգուկանոնը, որը հաղթահարում է տկարությունները և անդամներին մղում է դեպի ձեռքբերումներ: Բայց եթե հաշվետվությունը լեգեոնականի կատարած աշխատանքի մասին քիչ տեղեկություն է տալիս, ուրեմն պրեզիդիումը լեգեոնականի գործողությունների վրա կարող է կիրառել միայն անորոշ վերահսկողություն: Դա չի քաջալերի և չի զորացնի նրան: Նա կզրկվի պրեզիդիումի ուշադրությունից և առաջնորդությունից, իսկ նա չի կարող իրեն թույլ տալ զրկվել կենսական գործոններից: Լեգեոնի կարգուկանոնը կկորցնի իր վերահսկողությունը այդպիսի անդամի հանդեպ՝ զանազան դժբախտ հետևանքներով:

Չմոռանա՛ք, որ վատ հաշվետվությունը կարող է ազդեցիկ վատ օրինակ դառնալ ուրիշ անդամների համար: Այսպիսով, մեկը, ով շատ է ցանկանում ծառայել Լեգեոնին, կստացվի, որ աղետալի վնաս է հասցնում:

Ոչ մի լեգեոնական չպետք է բավարարվի պարզապես լավ հաշվետվություն ներկայացնելով: Ինչո՞ւ չձգտել բարձունքների և գիտակցված կերպով աշխատանքի գերազանց կատարմանը չհավելել մի օրինակելի հաշվետվություն, և այսպիսով սովորեցնել մյուս անդամներին աշխատանքի կատարման և դրա մասին հաշվետվություն ներկայացնելու ձևը: Ինչպես ասում է Էդմունդ Բըրքը. «Օրինակը մարդկության դպրոցն է, այլ կերպ մարդիկ չեն էլ սովորում»: Այսպես վարվելով՝ մի անհատ կարող է ամբողջ պրեզիդիումը բարձրացնել արդյունավետության ամենաբարձր աստիճանի: Թեև հաշվետվությունը ամբողջ հանդիպումը չէ, բայց ժողովի կենտրոնական նյարդային համակարգն է, այնպես որ ազդում է պրեզիդիումի վրա՝ թե՛ լավ, թե՛ վատ կերպով:

Ինչպես նշված է վերևում, Աստվածածինը հաշվետվության ենթակետերից մեկի ոգեշնչման աղբյուրն է: Բայց նրա մասին մտածելը կարող է օգնել նաև բոլոր մյուս առումներով: Բավական է հաշվետվությունը սկսելուց առաջ մեկ հայացք դարձնել նրա արձանին, որպեսզի համոզվենք դրանում: Անկասկած, եթե ձգտենք հաշվետվությունը կազմել

այնպես, ինչպես նա կաներ, չենք ներկայացնի որևէ առումով թերի հաշվետվություն:

«Որոշ քրիստոնյաներ Մարիամի մեջ տեսնում են միայն մի անսահման մաքուր, նուրբ, գորովալիր և մեղմաբարո Կնոջ, որ երբևէ գոյություն է ունեցել: Այդպիսով, նրանք Մարիամին միայն զգացմունքային ձևով մեծարելու վտանգի մեջ են, կամ եթե նրանք բնավորությամբ ուժեղ են, Մարիամով նվազ չափով հիանալու վտանգի մեջ են: Նրանք երբեք չեն անդրադարձել, որ այսքան գորովալիր Կույսը, այսքան մեղմաբարո Մայրը, նախ և առաջ, ամենասանկոտրում Կինն է, և որ այս Կնոջ նման ուժեղ բնավորությամբ տղամարդ երբեք չի եղել» (Նյուբերթ, «Marie dans le Dogme»):

10. Կատենա Լեգեոնիս աղոթքի արտասանությունը: Հանդիպման ընթացքում՝ մի հաստատված պահի, ինչպես փորձը ցույց է տալիս, մոտավորապես արձանագրության ստորագրման և ժողովի ավարտի միջև ընկած ժամանակի միջնահատվածում (ժողովի սկսելուց մեկ ժամ հետո, իսկ ժողովը սովորաբար տևում է մեկուկես ժամ) արտասանվում է Կատենան, և բոլորը պետք է լինեն կանգնած (տե՛ս Գլուխ 22՝ Լեգեոնի Աղոթքները):

Բոլոր ներկա գտնվողների կողմից ընթերցվում է Կցուրդը, ապա հաջորդում է «Մեծացուսցէ»-ի ընթերցանությունը՝ մեկընդմեջ՝ հոգևոր առաջնորդի (կամ նրա բացակայության դեպքում՝ նախագահի կողմից) և անդամների կողմից, իսկ աղոթքը կատարում է միայն հոգևոր առաջնորդը, կամ նախագահը:

Խաչակնքումը կատարվում է ոչ թե Կատենայից առաջ, այլ «Մեծացուսցէ»-ի առաջին տողն ասելիս, և չի կատարվում վերջին աղոթքից հետո, քանի որ դրան անմիջապես հետևում է քարոզը:

Լեգեոնում չկա առավել գեղեցիկ պահ, քան այս միասնական Կատենայի աղոթքը: Եթե պրեզիդիումը ուրախության կամ հիասթափության մեջ է, կամ հոգնած անցնում է առօրյա ճանապարհը, Կատենան գալիս է Երկնքի մեղմ զեփյուռի նման՝ ամբողջությամբ համեմված Սուրբ Կույսի բուրմունքով, ով Շուշան ու Վարդ է, որ հրաշալիորեն թարմացնում և գոհացնում է: Սա պարզապես մի պատկերավոր

նկարագրություն չէ, և յուրաքանչյուր լեգեոնական դա լավ գիտի:

«Ես առանձնահատուկ ձևով շեշտում եմ «Մեծացուսցէ»-ի վրա, քանի որ, իմ կարծիքով, այն պետք է համարվի անչափ կարևոր մի փաստաթուղթ Մարիամի շնորհի՝ Մայրության վերաբերյալ: Ամենասուրբ Կույսը՝ ճանաչված Քրիստոսի հետ միասին, ինչպես գիտենք Ավետման պահից, ինքն իրեն հոչակել է որպես ողջ մարդկության ներկայացուցիչ և սերտորեն կապված է «բոլոր սերունդներին» և նրանց ճակատագրերի հետ, որոնք ճշմարտապես պատկանում են իրեն: Մարիամի այս օրհներգությունն իր հոգևոր Մայրության երգն է» (Բեռնարդ, Օ. Փ., «Le Mystère de Marie»):

««Մեծացուսցէ»-ն գերազանցապես Մարիամի՛ աղոթքն է, մեսիական ժամանակների երգը, որի մեջ միաձուլվում է հին ու նոր Իսրայելի ուրախությունը: Ինչպես Սուրբ Իրինեուսն է ըստ երևույթին ենթադրում, Մարիամի օրհներգության մեջ է, որ կրկին անգամ լսվում է Աբրահամի ուրախությունը (հմմտ.՝ Հվի. 8:56), որը կանխատեսեց Մեսիային, և մարգարեական կանխատեսման մեջ հնչեց Եկեղեցու ձայնը… Եվ իրականում, Մարիամի օրհներգությունը տարածվել է ամենուր և դարձել ամբողջ Եկեղեցու աղոթքը բոլոր ժամանակներում» (MCul 18):

11. Քարոզը՝ Allocutio*: Երբ բոլոր անդամները դարձյալ նստում են, հոգևոր առաջնորդը տալիս է մի կարճ քարոզ: Բացի հատուկ հանգամանքներից, այն պետք է լինի ձեռնարկի մեկնաբանությունը, որպեսզի, ի վերջո, անդամներն ամբողջությամբ յուրացնեն գրքի յուրաքանչյուր միտքը: Քարոզը՝ Allocutio-ն, մեծապես կգնահատվի անդամների կողմից և կարևոր դեր կունենա նրանց զարգացման համար: Պետք է ստանձնել այս զարգացման պատասխանատվությունը. թե՛ անդամների և թե՛ Լեգեոնի հանդեպ անարդար կլինի, եթե չբացահայտվեն նրանց բոլոր հնարավորությունները: Դրան հասնելու համար շատ կարևոր է, որ նրանց խոր գիտելիք տրվի իրենց կազմակերպության մասին: Ձեռնարկի քննարկումը շատ կօգնի այս նպատակին հասնելու համար, բայց չպետք է համարվի քարոզի

* Allocutio-ն հռոմեական գեներալի խոսքն էր՝ ուղղված իր լեգեոնականներին:

փոխարինում: Լեգեոնականները կմտածեն, թե ուսումնասիրել են ձեռնարկը, երբ այն ուշադիր կարդացած լինեն երկու կամ երեք անգամ: Բայց նույնիսկ տասը կամ քսան անգամ ընթերցելը չի տա Լեգեոնի համար ցանկալի գիտելիքների մակարդակը: Սրան կարելի է հասնել միայն ձեռնարկի համակարգված բանավոր և ընդլայնված բացատրությամբ, որ պետք է տրվի ամեն շաբաթ, տարեց տարի՝ մինչև անդամները լիակատար ձևով հասկանան ձեռնարկի յուրաքանչյուր գաղափարը:

Հոգևոր առաջնորդի բացակայության ժամանակ մեկնաբանությունը պետք է կատարվի նախագահի կամ նրա կողմից նշանակված այլ անդամի կողմից: Պետք է ընդգծել, որ ձեռնարկի կամ որևէ այլ գրվածքի ընթերցումը չի կարող փոխարինել քարոզին:

Քարոզը պետք է տևի ոչ ավելին, քան 5-6 րոպե:

Լավ քարոզ ունեցող պրեզիդիումի և վատ քարոզ ունեցող պրեզիդիումի միջև տարբերությունը կլինի ճիշտ և ճիշտ այն տարբերությանը, որը կա լավ պատրաստված և վատ պատրաստված բանակների միջև:

«Ինձ մոտ արդեն վաղուց տպավորություն է ստեղծվել առ այն, որ այս աշխարհը, որը տարեցտարի վատթարանում է, և որտեղ Աստված կորցրել է Իր ազդեցությունը և այլևս չի տիրում մարդկանց սրտերին, Աստված առավել մեծ ցանկությամբ և հուզմունքով է սպասում մեծ գործեր նրանցից, ովքեր հավատարիմ են Իրեն: Միգուցե, Նա չի կարող Իր զինադրոշի ներքո հավաքել մեծ թվով զինվորներ, բայց Նա ցանկանում է, որ Իր զինվորներից յուրաքանչյուրը լինի մի **հերոս**՝ ամբողջ հոգով և սիրով նվիրվելով Իրեն: Եթե միայն կարողանանք մտնել այդ վեհանձն մարդկանց դյութիչ միջավայրի մեջ, կարծում եմ, չի կարող լինել որևէ մի շնորհ, որ Նա չտա մեզ՝ հանուն այն բանի, ինչն այդքան թանկ է Իր համար, այսինքն՝ հանուն մեր սրբության» (Գերհ. Ալֆրեդ Օ'Ռահիլի, «Հայր Ուիլյամ Դոյլի կյանքը»):

12. Քարոզի ավարտից հետո բոլոր ներկաները խաչակնքվում են: Ապա շարունակում են լեգեոնականների կատարած աշխատանքների հաշվետվությունները և այլ գործերը:

«Պատմական փաստ է այն, որ Աստվածածնի խոսքը արտա-

կարգ նուրբ մի կնոջ խոսք էր: Իր բնատուր օժտվածությամբ նա կարող էր հեշտությամբ լինել մի բանաստեղծ: Ամեն անգամ, երբ նա խոսում էր, նրա խոսքերը հնչում էին մի հանգավորմամբ, որն իրականում բանաստեղծություն էր: Նա խոսում էր խոսքի վարպետների գունեղ ու պատկերավոր լեզվով» (Լորդ, «Աստվածածինը՝ մեր օրերում»):

13. Գաղտնի նվիրատվություն: Քարոզի ավարտից անմիջապես հետո կատարվում է գաղտնի նվիրատվություն, որին յուրաքանչյուր անդամ մասնակցում է ըստ իր հնարավորության: Գաղտնի նվիրատվության նպատակն է՝ հոգալ պրեզիդիումի զանազան ծախսերը և օգնել Կուրիային և ավելի բարձր Խորհուրդներին: Կրկնե՛նք, որ այս վերջիններն իրենց կառավարման և ընդլայնման պարտականությունների համար չունեն այլ ֆինանսական աջակցություն, բացի նրանից, ինչ տրվում է նրանց պրեզիդիումների կողմից (Տե՛ս Գլուխ 35՝ Ֆինանսական միջոցները):

Հանդիպումը չպետք է ընդհատվի գաղտնի նվիրատվության պատճառով: Պարկը պետք է փոխանցվի աննկատ կերպով՝ անդամից անդամ, և յուրաքանչյուր անդամ իր ձեռքը պետք է մտցնի պարկի մեջ՝ նույնիսկ եթե հնարավորություն չունի այդտեղ որևէ գումար դնելու:

Նվիրատվությունների համար անհրաժեշտ է համապատասխան պարկ ունենալ: Հարմար չէ այն փոխարինել ձեռնոցով կամ թղթե տուփով:

Նվիրատվությունն անհրաժեշտ է կատարել գաղտնի կերպով, որպեսզի պրեզիդիումի առջև պահպանվի Լեգեոնի անդամների հավասարությունը՝ անկախ նրանց նյութական հնարավորություններից: Այդ պատճառով պահանջվում է հարգել գաղտնիության սկզբունքը, և ոչ մի անդամ չպետք է հաղորդի մյուսին իր նվիրատվության չափը: Մյուս կողմից բոլոր անդամները պետք է գիտակցեն, որ յուրաքանչյուր լեգեոնականի նվիրատվությունից է կախված ոչ միայն պրեզիդիումի, այլև ամբողջ Լեգեոնի գործունեությունը: Եվ ուրեմն, չպետք է դրան վերաբերվել որպես դատարկ ձևականության: Նվիրաբերելու պարտականությունը չպիտի իրականացվի այնքան քիչ գումարով, որ նվիրաբերողի համար ոչ մի արժեք չունենա, քանի որ լեգեոնականն այդպիսով

հնարավորություն ունի ավելի լայն մասնակցություն ունենալու Լեգեոնի առաքելությանը: Հետևաբար նվիրատվություն կատարելով՝ յուրաքանչյուրն իր մեջ դաստիարակում է պատասխանատվության և մեծահոգության զգացում:

Գաղտնի է միայն անհատական նվիրատվության չափը: Ամբողջական գումարը կարող է հայտարարվել, և իհարկե պետք է արձանագրվի և հաշվետվություն տրվի:

«Երբ Հիսուսը գովում է այրի կնոջ նվիրաբերությունը, «որը գցեց ոչ թե իր ավելորդից, այլ իր չքավորության մեջ գցեց իր ունեցած ամբողջ ապրուստը» (Ղկ. 21:3-4), ենթադրում ենք, որ Նա մտածում էր Մարիամի՝ Իր Մոր մասին» (Օրսինի, «Երանելի Կույսի պատմությունը»):

14. Ժողովի ավարտը: Երբ բոլոր ընթացիկ խնդիրները քննարկված են, յուրաքանչյուր անդամին տրված է աշխատանք, և ներկաների, և բացակաների անունները գրանցված են, ժողովն ավարտվում է Լեգեոնի աղոթքով և քահանայի օրհնությամբ:

Ժողովը չպետք է տևի ավելի, քան մեկուկես ժամ՝ ժողովի նշանակված մեկնարկից հաշված:

«Դարձյալ ձեզ ասում եմ. եթե ձեզնից երկուսը միաբանվեն երկրի վրա որևէ խնդրանքի համար, ինչ էլ որ խնդրեն, կկատարվի նրանց համար իմ Հոր կողմից, որ երկնքում է, որովհետև ուր երկու կամ երեք հոգի հավաքված լինեն Իմ անունով, այնտեղ եմ Ես՝ նրանց մեջ» (Մտթ. 18:19-20):

19

ԺՈՂՈՎԸ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԸ

1. Հարգանք ժողովի նկատմամբ: Ամեն տեղ, ըստ բնության կանոնի, ուժի փոխանցումը կախված է կապ ստեղծելու կամ կտրելու հետ: Նմանապես, Լեգեոնի համակարգի մի կետում կարող է լինել կենսական ընդհատում: Որևէ անդամ կարող է մասնակցել ժողովներին և կարող է

սակավ հաղորդակցվել կամ ընդհանրապես չհաղորդակցվել այն ոգևորությանը, ջերմեռանդությանը և զորությանը, որոնց մասին պատմվել է վերևում՝ որպես Լեգեոնի կյանքը: Ժողովի և անդամների միջև պետք է լինի միություն, և այս միությանը հնարավոր չէ հասնել անդամների պարզապես մեխանիկական մասնակցությամբ: Ինչ-որ գործոն պետք է լինի, որպեսզի մասնակցությունը դառնա արդյունավետ կապ ժողովի և անդամների միջև, և այդ գործոնը **հարգանքն** է: Լեգեոնի համակարգում ամեն ինչ կախված է ժողովի հանդեպ անդամների հարգանքից, որը դրսևորվում է հնազանդությամբ, հավատարմությամբ և գնահատմամբ:

2. Պրեզիդիումը պետք է արժանի լինի այս հարգանքին: Կազմակերպությունը, որը անդամների միջին չափանիշներից ավելի վեր չի բարձրանում, չունի առաջնորդողի անհրաժեշտ բնութագիր, և անդամների հարգանքը այդ կազմակերպության հանդեպ երկար չի տևի:

3. Պրեզիդիումը պետք է հարգի կանոնները: Այն չափով, որ լեգեոնականը հարգում է պրեզիդիումին, այդ չափով էլ կհաղորդակցվի լեգեոնական կյանքին, և քանի որ Լեգեոնի ոգու էությունը կատարելության հասնելու եռանդն է, պրեզիդիումը պետք է ձգտի առավելագույն չափով շահել իր անդամների հարգանքը, որպեսզի կարողանա համապատասխան կերպով ազդել նրանց վրա: Այն պրեզիդիումը, որը հարգանք է պահանջում իր անդամներից, բայց ինքը չի տածում այդ նույն հարգանքն իր իսկ աշխատանքային կանոնների հանդեպ, կառուցված է ավազի վրա. փաստ, որով բացատրվում է, թե ինչու ամբողջ ձեռնարկում շեշտվում է ժողովների կարգին և ընդհանուր ընթացակարգին ճշգրտորեն հետևելու անհրաժեշտությունը:

4. Պրեզիդիումը պետք է լինի կայունության օրինակ: Լեգեոնը պահանջում է, որ այն ամենը, ինչի մասին խոսվում և կատարվում է ժողովների ժամանակ, օրինակ ծառայի նույնիսկ ամենաեռանդուն անդամի համար, և Լեգեոնի հարուստ կյանքը թույլ է տալիս կատարել այդ դերը: Անդամակցության

պարտականությունների կատարման համար լեգեոնականին կարող են խանգարել հիվանդությունը, արձակուրդը կամ այլ անխուսափելի հանգամանքներ: Բայց պրեզիդիումը, բաղկացած լինելով մեկից ավելի անդամներից, որոնք տվյալ պահին չեն ունենա այդ խանգարող հանգամանքները, կկարողանա հաղթահարել այդ անհատական սահմանափակումները: Շաբաթական ժողովը չպետք է բաց թողնել որևէ պատճառով, բացի այն դեպքերից, երբ իսկապես անհնարին է ժողով կազմակերպել: Եթե անհնար է ժողովը անցկացնել նշանակված օրը, այն պետք է տեղափոխվի մեկ այլ օր: Այն փաստը, որ անդամների մեծամասնությունը կարող է բացակայել, պատճառ չէ ժողովը չանցկացնելու համար: Ավելի լավ է փոքրաթիվ անդամների մասնակցությամբ անցկացնել ժողովը, քան այն ընդհանրապես բաց թողնել: Ճիշտ է, քիչ հարցեր կքննարկվեն ժողովի ընթացքում, բայց, առնվազն, պրեզիդիումն իր գլխավոր պարտականությունը կկատարի, և իր ապագա ժողովների աշխատանքը մեծապես կշահի այն հարգանքի շնորհիվ, որն անդամները բնազդաբար կտածեն մի իրողության նկատմամբ, որը շարունակվում է կայուն և ինքնուրույն ձևով՝ չնայած լեգեոնականների տկարություններին, սխալներին և տարբեր զբաղվածություններին՝ այսպիսով յուրահատուկ ձևով արտացոլելով Եկեղեցու գլխավոր առանձնահատկությունը:

5. Ջերմությունը և լույսը: Սենյակը պետք է լավ լուսավորված և ջեռուցվող լինի: Այդ մասով թերությունների դեպքում ժողովները, որոնք պետք է լինեն հաճելի, կդառնան պատիժ և շատ վատ կազդեն պրեզիդիումի ապագայի վրա:

6. Նստելու հարմարավետությունը: Նստելու համար պետք է տրամադրվեն աթոռներ կամ նստարաններ: Եթե անդամները նստած են դպրոցական կամ այլ անհարմար նստարանների վրա, կստեղծվի անկանոն վիճակ, որտեղ Լեգեոնի կարգուկանոնի մթնոլորտը չի կարող ծաղկել:

7. Պրեզիդիումները պետք է ժողովը կազմակերպեն հարմար ժամերին: Այն փաստը, որ մարդիկ օրվա

ընթացքում աշխատանքի են, թելադրում է, որ ժողովները սովորաբար տեղի ունենան երեկոյան կամ կիրակի օրերին: Բայց շատերը աշխատում են երեկոյան և գիշերը, և նրանց պետք է տրամադրվեն ժողովներին մասնակցելու հարմար ժամեր:

Նմանապես պետք է հաշվի առնվեն հերթափոխով աշխատողները, որոնց աշխատանքի ժամերը պարբերաբար փոխվում են: Երկու պրեզիդիումներ, որոնք ունեն տարբեր հանդիպման ժամեր, պետք է համագործակցեն նրանց ընդունելու համար: Այդ լեգեոնականները կարող են ընտրել երկու պրեզիդիումների մեջ՝ ըստ իրենց ազատ ժամերի: Որպեսզի վստահ լինեն, որ լեգեոնականները շարունակում են աշխատանքը և մասնակցությունը, այդ երկու պրեզիդիումները պետք է միմյանց հետ կապ պահեն:

8. Ժողովի տևողությունը: Ժողովի տևողությունը չպետք է գերազանցի մեկուկես ժամը՝ մեկնարկի պահից սկսած: Եթե ժողովն անցկացվել է արդյունավետ ձևով, բայց այնպես է ստացվում, որ ստիպված են հաճախակի ընդհատել աշխատանքը և փակել ժողովը մեխանիկորեն, որպեսզի սահմանված ժամանակից ավելին չտևի, ապա դա նշանակում է, որ պրեզիդիումը շատ անելիք ունի, ուստի պետք է մտածել պրեզիդիումի ենթաբաժին ունենալու մասին:

9. Ժողովի անհամապատասխան երկարությունը: Գոյություն չունի ժողովի անցկացման սահմանված նվազագույն տևողություն, բայց եթե ժողովները սովորաբար տևում են մոտավորապես մեկ ժամից պակաս (որի մեջ աղոթքները, հոգևոր ընթերցումը, արձանագրությունը և քարոզը զբաղեցնում են կես ժամը), թվում է, ինչ-որ տեղ կա թերություն: Եթե դա պայմանավորված է անդամների քանակով, աշխատանքի ծավալով կամ հաշվետվությունների որակով, ինչ էլ լինի, դա պետք է շտկվի: Արդյունաբերության մեջ ողջ կարողությամբ չաշխատելը համարվում է համակարգի մեծ սխալ, եթե ապրանքի համար կա շուկա: Լեգեոնի համակարգը նույնպես պետք է գործի իր առավելագույն կարողությամբ:

Ոչ ոք չի կարող ասել, որ կարիք չկա հասնելու հնարավոր ամենաբարձր հոգևոր արդյունքին:

10. Ուշանալը կամ շուտ հեռանալը: Լեգեոնականները, որոնք ուշանում են բացման աղոթքից, պետք է ծնկի գան և առանձին ասեն Տեսսերայի աղոթքները, որոնք նախորդում են Վարդարանին, ինչպես նաև հայցողական աղոթքները: Բայց պրեզիդիումի հետ միասին Վարդարան չաղոթելը մի կորուստ է, որը հնարավոր չէ վերականգնել: Նմանապես, այն անդամները, որոնք ստիպված են հեռանալ ժողովը վերջանալուց առաջ, պետք է նախ նախագահից թույլտվություն խնդրեն, ծնկի գան և աղոթեն «Ընդ հովանեաւ պաշտպանութեան քո...» և հաջորդ աղոթքները:

Ոչ մի դեպքում նախագահը չի կարող թույլատրել, որ անդամներն ուշ գան կամ շուտ հեռանան: Ճիշտ է, որ աշխատանքը կարող է կատարվել, և հաշվետվությունը տրվել, բայց անտարբերությունը բացման և փակման աղոթքների նկատմամբ կարող է նշան լինել Լեգեոնի ճշմարիտ ոգու նկատմամբ խորթ մտածողության, նույնիսկ թշնամանքի, մինչդեռ Լեգեոնի ոգին աղոթքի ոգի է: Այդպիսի անդամակցության պտուղը կլինի վնասակար և ոչ բարի:

11. Կարգուկանոնը՝ որպես կարգապահության հիմք:

Հիմնվելով հետևյալ կանոնների վրա՝

ա) ժողովները հավատարմորեն անցկացնել ըստ կանոնների,

բ) կանոնավոր ձևով պահել ժողովի կարգի հաջորդականությունը,

գ) ժամանակին կատարել նախատեսված աշխատանքները,

դ) միշտ հիշել Մարիամի մասին՝ որպես այդ կարգապահության աղբյուրի:

Լեգեոնը զարգացնում է կարգապահությունը իր անդամների մեջ, առանց որի՝ հանդիպումը նման է հստակ բանականությամբ մի անդամալույծի, որը չի կարող ո՛չ զսպել իր անդամներին, ո՛չ առաջ մղել նրանց, ո՛չ էլ ձևավորել նրանց որևէ կերպ: Առանց կարգապահության՝ անդամները

կտրվեն մարդկային բնական ցանկությանը՝ աշխատելու մենակ կամ հնարավորինս քիչ հսկողության տակ և ըստ պահի թելադրանքի, որից ոչ մի լավ բան դուրս չի գա:

Մյուս կողմից, կրոնական նպատակների համար կամավոր կերպով ստանձնած կարգապահությունն աշխարհի ամենակարող ուժերից մեկն է: Այսպիսի կարգապահությունը կլինի անդիմադրելի, եթե գործի առանց շեղվելու, բայց, միևնույն ժամանակ, առանց մռայլության խառնուրդի և անկեղծ բացվածությամբ եկեղեցական իշխանության նկատմամբ:

Լեգեոնը, իր հատուկ կարգապահության ոգով, ունի մի գանձ, որը կարող է փոխանցել նաև նրանց, ովքեր Լեգենից դուրս են: Սա անգնահատելի պարգև է, որովհետև աշխարհն անօգուտ կերպով տատանվում է երկու հակասական բևեռների՝ բռնության և թողտվության միջև: Ներքին կարգապահության պակասը կարող է ծածկվել արտաքին խիստ կարգապահությամբ՝ ավանդության արդյունքով կամ ուժով: Այնտեղ, որտեղ անհատները կամ հասարակությունները կախված են լոկ այդ արտաքին կարգապահությունից, ապա նրանք կքանդվեն, եթե այդ կարգապահությունը վերցվի, օրինակ, ճգնաժամի պահին: Թեև ներքին կարգապահությունն անհամեմատելիորեն ավելի կարևոր է, քան որևէ արտաքին կարգապահության համակարգ, այնուամենայնիվ, պետք չէ անկարևոր համարել երկրորդը: Իրականում, մեկը պահանջում է մյուսը: Երբ այդ երկուսը միանում են ճիշտ չափաբաժնով՝ կրոնական քաղցր դրդապատճառով փոխներթափանցված, կունենանք երեքտակ թել, որը, ինչպես ասում է Սուրբ Գիրքը, «հեշտ չի կտրվում» (Ժող. 4:12):

12. Ճշտապահությունը առաջնային է: Առանց ճշտապահության՝ հնարավոր չէ կատարել Տիրոջ պատվիրանը. «Մաքուր պահի՛ր քո տունը» (Ես. 38:1): Այն կազմակերպությունը, որն իր անդամներին վարժեցնում է անկարգության մեջ, արմատապես աղավաղում է նրանց: Ավելին, կորցնում է այն հարգանքը, որի վրա հիմնված է ճշմարիտ դաստիարակությունը և կարգապահությունը: Իհարկե, կարևոր մի բան անտեսելը, որը հեշտորեն կարող էր ապահովվել,

հիմարություն է՝ ճիշտ ինչպես թույլ տալը, որ նավը կործանվի էժանագին ձյութի պատճառով:

Երբեմն սեղանի վրա դրված է մի ժամացույց, բայց այն ոչ մի ազդեցություն չունի ժողովի ընթացքի վրա: Այլ դեպքերում ժամացույցը կարևոր դեր է խաղում սկզբում, ընթացքում և ժողովի վերջում, բայց ոչ հաշվետվությունների կարգավորման և այլ գործերի վրա, մինչդեռ ճշտապահության և կարգապահության սկզբունքը պետք է կիրառվի բոլոր պարագաներում՝ սկզբից մինչև վերջ:

Եթե սպաները մեղավոր են վերոհիշյալ պարագաներում, անդամները պետք է բողոքեն, այլապես նրանք աջակցում և մասնակից են լինում:

13. Աղոթքներն ասելու ձևը: Կան պոռթկուն մարդիկ, որոնք չեն կարող զուսպ լինել նույնիսկ աղոթքի հարցում, և այդպիսի սխալ առաջնորդությամբ կարող են պատճառ դառնալ, որպեսզի ամբողջ պրեզիդիումը անհարգալից վերաբերմունք ունենա աղոթքի նկատմամբ: Իրականում, եթե մի սխալ կա, որը քիչ թե շատ ընդհանուր է, այն է, որ աղոթքներն ասվում են շատ արագ, որը, կարծես, խոսում է նրա մասին, որ չի պահվում այն հրահանգը, թե պետք է աղոթել այնպես, կարծես Աստվածածինն ի՛նքը ներկա է լեգեոնականների մեջ՝ իր արձանիկի փոխարեն:

14. Աղոթքները և ժողովը մեկ են: Ժամանակ առ ժամանակ առաջարկվել է ժողովների ընթացքում Վարդարանն ասել Սուրբ Հաղորդության առջև, որից հետո անդամները կարող են գնալ հանդիպման սենյակ: Բայց այս առաջարկությունը ընդունելի չէ, քանի որ Լեգեոնի հիմնական սկզբունքը պահանջում է, որ ժողովը լինի մեկ ամբողջություն, որը կարևոր է Լեգեոնի ողջ համակարգի համար: Եթե ժողովի ամբողջականությունը պահպանվում է, ողջ գործընթացը կրում է առանձնահատուկ աղոթական բնույթ (որի գերազանց պտուղներ են՝ հերոսությունը և ջանքերը). այս ամենը կկորսվի, եթե աղոթքներն ասվեն որևէ այլ վայրում: Այսպիսի փոփոխությունը կփոխեր հանդիպման ողջ բնույթը և, հետևաբար, ինքնին Լեգեոնի բնույթը,

որը կառուցված է ժողովի վրա: Եվ ըստ էության, այդպիսի կազմակերպությունը, որքան էլ մեծ վաստակներ ունենար, բոլորովին Մարիամի Լեգեոնը չեր լինի: Այսքանից հետո, հասկանալի է և անհրաժեշտություն չկա ասելու, որ առավել ևս ընդունելի չէ Վարդարանի կամ այլ աղոթքների բացթողումը՝ անկախ որևէ հանգամանքից: Ինչ նշանակություն որ ունի շնչելը մարդու համար, այդպիսի նշանակություն ունի Վարդարանը Լեգեոնի ժողովների համար:

15. Եկեղեցու այլ աղոթքները և ժողովը: Վերոնշյալ հիմնավորմամբ, այն պրեզիդիումը, որը ժողովից առաջ եկեղեցում կամ որևէ այլ տեղ ասել է Լեգեոնի աղոթքները, պարտավոր է կրկնել բոլոր աղոթքները նաև պրեզիդիումի ժողովին:

16. Հատուկ աղոթքներ ժողովի ժամանակ: Հաճախ հարց են տալիս՝ կարելի՞ է արդյոք նվիրել ժողովի աղոթքները հատուկ դիտավորության համար: Քանի որ շատ են դիմել նման առաջարկով, ապա անհրաժեշտ է սահմանել դիրքորոշումը.

1) եթե խոսքը Լեգեոնի սովորական աղոթքները հատուկ դիտավորությամբ կատարելու մասին է, ապա այդ աղոթքները պետք է բացառապես նվիրված լինեն Երանելի Տիրամոր՝ Լեգեոնի Թագուհու դիտավորություններին, և ոչ՝ որևէ այլ դիտավորության,

2) եթե խոսքը Լեգեոնի աղոթքներին տարբեր դիտավորություններով այլ աղոթքների ավելացման մասին է, ապա պետք է նկատի ունենալ, որ գոյություն ունեցող աղոթքները արդեն բավական երկար են, և չպետք է դրանց ավելացնել այլ աղոթքներ: Սակայն ընդունելի է, որ ժամանակ առ ժամանակ լեգեոնական բացառիկ ուշադրության պարագաների համար լինեն հատուկ աղոթքներ, և այդ ժամանակ որոշ կարճ աղոթքներ կարող են ավելացվել ժողովի հիմնական աղոթքներին: Ընդգծում ենք, որ այդպիսի ավելացումները պետք է լինեն հազվադեպ,

3) անշուշտ, թույլատրելի է առաջարկել անդամներին հատուկ դիտավորություններով աղոթել իրենց առանձնական աղոթքների ժամանակ:

17. Արդյոք հաշվետվությունը դե՞մ է խոնարհությանը: Որոշ լեգեոնականներ իրենց հաշվետվության թերություններն արդարացնում են՝ ասելով, թե կարծում են, որ խոնարհության դեմ է ցույց տալ իրենց կատարած լավ գործերը: Սակայն գոյություն ունի հպարտության մի տեսակ, որը նմանակում է խոնարհությանը, և բանաստեղծները դա անվանում են սատանայի ամենասիրելի մեղքը: Հետևաբար, այդ անդամները պետք է զգուշանան, քանի որ այդ մտքերի հիմքում կարող է ընկած լինել հպարտությունը՝ խոնարհության փոխարեն, և ցանկությունը՝ ազատվելու պրեզիդիումի կողմից սեփական գործողությունները վերահսկելուց: Վստահաբար, իրական խոնարհությունը չի կարող հանգեցնել բացասական վարքագծի, որն իր հերթին կարող է նպաստել պրեզիդիումի կործանմանը, եթե նրա մյուս անդամները հետևեն դրան: Ո՛չ, ընդհակառակը, քրիստոնեական հնազանդությունը մղում է անդամներին խուսափել միայնությունից, ենթարկվել իրենց կազմակերպության կանոններին և սովորություններին և ամբողջովին կատարել իրենց անհատական, բայց էական դերը ժողովների կազմակերպման մեջ, որտեղ ամեն հաշվետվություն, ինչպես ասել ենք, մի աղյուս է:

18. Ներդաշնակությունը՝ որպես միասնության արտահայտություն: Ներդաշնակությունը, լինելով ժողովների սիրո արտահայտություն, պետք է գերիշխի, և արդյունավետությունը, ինչպես ընկալում է Լեգեոնը, երբեք չպետք է բացառի ներդաշնակության գաղափարը: Լավ արարքը, որը կատարվում է ի վնաս ներդաշնակության, կասկածելի ձեռքբերում է, մինչդեռ այն ձախողումները, որոնք հակառակ են դրան, կարծես իսկական ժանտախտ լինեն և տեղ չունեն Լեգեոնում: Սա վերաբերում է ինքնահաստատմանը, ուրիշների սխալները մատնացույց անելուն, բռնկուն բնավորությանը, ցինիզմին և ամբարտավանության դրսևորումներին,

որոնք, եթե մտնեն ժողովից ներս, ներդաշնակությունը անհետանում է:

19. Յուրաքանչյուրի աշխատանքը վերաբերում է բոլորին: Ժողովը սկսվում է աղոթքով, և բոլորը գիտակցում են, որ մասնակցում են հավասարապես բոլորը: Այս հավասար մասնակցության զգացումը պետք է ուղեկցի ժողովի յուրաքանչյուր մասնակցին նաև ժողովի հետագա ընթացքում: Ահա՛ թե ինչու ժողովի ժամանակ չեն թույլատրվում կողմնակի ծիծաղ կամ զրույցներ: Անդամներին պետք է սովորեցնել, որ յուրաքանչյուր քննարկվող հարց վերաբերում է ոչ թե առանձին անհատների, այլ ժողովի բոլոր մասնակիցներին, այնպես որ, յուրաքանչյուրը հոգևոր այցելություն է իրականացնում այն մարդուն, կամ վայրը, որի վերաբերյալ, որպես կատարված աշխատանք, հաշվետվություն է ներկայացնում: Առանց այս ընկալման՝ անդամները կհետևեն մյուսների կատարած աշխատանքի հաշվետվությանը պարզ ուշադրությամբ և մակերեսորեն, մինչդեռ յուրաքանչյուր վայրկյան պետք է հագեցած լինի ոչ թե պարզապես ուշադրությամբ, որով կարելի է լսել կատարված աշխատանքի մասին հետաքրքիր զեկույցը, այլ նաև մտերիմ հարաբերության և անձնական մտահոգության զգացումով:

20. Գաղտնիության գերագույն կարևորությունը: Յուրաքանչյուր ամիս անդամների համար ընթերցվող «Մնայուն հրահանգի» առաջնային նպատակը Լեգեոնի համակարգի մեջ քննարկվող խնդիրների գաղտնիությունը պահելու կարևորությունն է:

Եթե վախկոտությունը զինվորի համար ամոթալի է, ապա դավաճանությունը շատ ավելի վատ է: Գաղտնի բնույթի խոսակցության կամ քննարկման մասին պրեզիդիումի հանդիպումից դուրս խոսելը հավասարազոր է Լեգեոնին դավաճանելուն: Միևնույն ժամանակ, ամեն ինչի համար պետք է լինի պատճառ: Երբեմն չափից ավելի նախանձախնդիր անձինք կարող են պնդել, որ, եղբայրասիրության դրդապատճառներով լեգեոնականները պրեզիդիումին չպետք է բացահայտեն այն մարդկանց անունները, որոնք մերժում են կրոնը:

Այս թվացյալ ճշմարտանման առաջարկի մեջ կա սխալ և սպառնալիք Լեգեոնի կյանքի համար, քանի որ պրեզիդիումը չի կարող գոհացնող աշխատանք կատարել նման պայմաններում:

1. Նման վարվելակերպի որդեգրումը կլինի հակառակ հոգևոր միաբանությունների ընդհանուր փորձառությանը, որոնք բոլորն էլ սովոր են քննարկել իրենց հարցերը:

2. Ըստ այդ առաջարկի տրամաբանության, համատեղ այցելություն կատարողները պետք է պահեն գաղտնիությունը նույնիսկ միմյանց միջև:

3. Գործողության, գիտելիքի և եղբայրասիրության գործադրողը ոչ թե առանձին լեգեոնականն է կամ համատեղ այցելություն կատարող երկու լեգեոնականները, այլ ամբողջ պրեզիդիումը, և բոլոր առաքելությունների մանրամասները պատկանում են պրեզիդիումին: Եթե հաշվետվություն չի ներկայացվում, ապա պրեզիդիումի աշխատանքն անարդյունավետ է: Եղբայրասիրության պատճառաբանության անվան տակ տուժում է հենց բուն եղբայրասիրությունը:

4. Չկա ոչ մի նմանություն քահանայի կարգավիճակի հետ, որի սրբազան պարտականությունները տարբերում են նրան լեգեոնականից: Լեգեոնականն այցելությունների ընթացքում չի տեղեկանում ավելին, քան որևէ այլ հարգարժան անձ, և այն, ինչ արդեն հայտնի է հարևան տներում կամ թաղամասում:

5. Անդամներից պատշաճ հաշվետվություն տալու պարտականությունը վերցնելը՝ նշանակում է վերցնել հաշվետվությունը պատշաճ կերպով վերահսկելու իմաստը, որն այնքա՛ն կարևոր է Լեգեոնի համակարգում: Այդ պարագայում հնարավոր չէ արդյունավետ խորհուրդ տալ, առաջնորդել կամ քննադատել, հետևաբար, պրեզիդիումի հիմնական գաղափարը կկորի:

Այդպես, անհնարին կլինի անդամների կրթությունն ու պաշտպանությունը, որոնք հիմնված են հաշվետվությունների վրա: Եթե անդամներից չպահանջվի իրենց պարտականությունների վերաբերյալ ամենշաբաթյա հանգամանալից հաշվետվություն՝ ապահովելով վերը նշված

վերահսկողությունը, կարող են թույլատրվել անզգուշություններ, որոնք կվնասեն Լեգեոնին:

6. Ամենատարօրինակն այն է, որ այդ դեպքում Լեգեոնը կկորցնի գաղտնիության պարտավորությունը: Որովհետև Լեգեոնի գաղտնիության երաշխիքը (որն այնքան հիանալի կերպով հարգվել է մինչ օրս) պրեզիդիումի վերահսկողությունն է անդամի նկատմամբ: Եթե այդ վերահսկողությունը թուլանա, գաղտնիության պարտավորությունը նույնպես կթուլանա: Մեկ խոսքով, պրեզիդիումը ոչ միայն եղբայրասիրության և գաղտնիության վայր է, այլ նաև դրանց երաշխավորը:

Ժողովների ժամանակ հաշվետվություններին անհրաժեշտ է վերաբերվել նույն կերպ, ինչպես ընտանեկան գաղտնիքների քննարկմանը, և անդամները պետք է նույնչափ ազատ լինեն խոսելու մեջ՝ այնքան ժամանակ, քանի դեռ չի նկատվել տեղեկությունների արտահոսք: Եվ նույնիսկ ընտանիքի դեպքում լուծումը կլինի ոչ թե զրույցները սահմանափակելը, այլ պարզապես մատնիչին հեռացնելը:

Իհարկե պարզ է, որ կարող է լինել բացառիկ ծայրահեղ իրավիճակ, երբ հանգամանքները պահանջում են, որ բացարձակ գաղտնիություն պահվի: Այս պարագայում հարկավոր է անմիջապես դիմել հոգևոր առաջնորդին (կամ ուրիշ ավելի փորձառու խորհրդատուի), որը կլուծի խնդիրը:

21. Խոսքի ազատություն: Կարո՞ղ ենք արդյոք արտահայտել մեր անհամաձայնությունը ժողովի մեթոդների նկատմամբ: Պրեզիդիումի մթնոլորտը չպետք է լինի զինվորական, այլ ավելի շատ՝ ընտանեկան:

Հետևաբար, անդամները պետք է ողջունեն «արդար դիտողությունը»: Բայց պարզ է, որ այդ մեկնաբանությունները երբեք չպետք է լինեն մարտահրավեր նետող տոնով և սպաների նկատմամբ անհարգալից վերաբերմունքով:

22. Ժողովն անդամակցության հիմքն է: Մարդն իր բնությամբ անընդմեջ ձգտում է շոշափելի արդյունքների և սովորաբար դժգոհ է լինում ձեռքբերածից: Սակայն տեսանելի արդյունքները միշտ չէ, որ հանդիսանում են հաջող

աշխատանքի գրավական: Մեկն անմիջապես հասնում է հաջողության, մինչդեռ մյուսի հերոսական հավատարմությունը մնում է անպտուղ: Բոլոր ջանքերի անիմաստ լինելու զգացողությանը հաջորդում է աշխատանքը թողնելը, հետևաբար, աշխատանքը միայն արդյունքներով գնահատելը հավասարազոր է սորուն ավազի վրա հիմնվելուն, որը չի կարող անդամներին օգնել հարատևելու առաքելության մեջ: Բայց էական է, որ անդամները կոնկրետ աջակցություն գտնեն Լեգեոնում: Դրանք են՝ աղոթքների հարստությունը, ծիսակատարությունը, հատուկ մթնոլորտը, կատարած աշխատանքի հաշվետվությունները, օրհնված ընկերությունը, գրավիչ կարգապահությունը, կենդանի հետաքրքրությունը և ճշտապահությունն ինքնին, որոնցից կազմված է յուրաքանչյուր շաբաթվա պրեզիդիումի ժողովը:

Չպետք է մտածել ջանքերը վատնելու և անդամակցությունը թուլացնելու մասին, այլ ամեն ինչ պետք է արվի անդամակցությունն ավելի ամրացնելու համար: Պարբերականորեն և հետևողականորեն անցկացվող ժողովները ստեղծում են անդադրում աշխատող մեխանիզմի տպավորություն, որը կարողանում է հասնել իր առջև դրված նպատակին՝ անդամներին հաղորդելով հաջողության նկատմամբ վստահություն, որից կախված է նրանց հարատևությունը: Թող լեգեոնականներն ավելի հեռատես լինեն և այդ մեխանիզմի մեջ տեսնեն այն պատերազմի շարժիչը, որի միջոցով Մարիամը պայքարում է երկրի վրա Իր Որդու թագավորության տարածման համար: Նրանք հանդիսանում են այդ մեքենայի մասնիկները: Այդ մեխանիզմի աշխատանքը կախված է նրանից, թե ինչպես են նվիրվում այդ աշխատանքին: Հավատարիմ անդամակցությունը նշանակում է մեխանիզմի կատարյալ աշխատանք, որը Մարիամն օգտագործում է իր ցանկացած արդյունքին հասնելու համար: Դրանք կլինեն կատարյալ արդյունքներ, քանի որ «միայն Մարիա՛մը գիտի, թե ինչպես առավելագույնս փառավորել Ամենաբարձրյալին» (Սբ Լուի-Մարի դը Մոնֆոր):

23. Պրեզիդիումը Մարիամի «ներկայություն» է: Այս բաժնի խորհրդատվության նպատակն է՝ անհատների

առավել կատարյալ համախմբումը մեկ կառույցի մեջ՝ ընկալելի ձևով օգտակար լինելու համար Եկեղեցու պաշտոնական հովվական առաքելությանը: Անձնական և համայնքային առաքելությունների միջև հարաբերությունը կարելի է նմանեցնել անձնական և ծիսական աղոթքի միջև հարաբերությանը:

Այդ առաքելությունը իրականացվում է և միավորված է Մարիամի մայրական հոգատարությամբ, ով «աշխարհին տվել է Կյանքը, Որով նորոգվում է ամեն ինչ, և Մարիամը հարստացել է Աստծո ընծաներով՝ արժանի լինելով այդպիսի ծառայությանը» (LG 56): Սուրբ Կույսը շարունակում է կատարել իր այդ գործը նրանց ծառայության միջոցով, ովքեր ձգտում են օգնել իրեն: Պրեզիդիումը Մարիամին է տրամադրում մի քանի նվիրյալ անձանց, որոնք փափագում են օգնել նրան այդ առաքելության մեջ: Ակնհայտ է, որ նա կընդունի այդ օգնությունը: Ահա՛, թե ինչու պրեզիդիումը կարելի է համարել Մարիամի ներկայության վայրը, որի միջոցով Մարիամը շնորհում է իր բացառիկ պարգևները և հարատև շարունակում իր մայրական հոգատարությունը: Ուստի կարելի է ակնկալել, որ իր իդեալներին հավատարիմ պրեզիդիումը իր շուրջը կսփռի կյանք, թարմացում, բուժում և լուծումներ: Որտեղ շատ խնդիրներ կան, պետք է գործադրվի այս սկզբունքը:

«Խոնարհեցրո՛ւ քո ուսը, վերցրո՛ւ այն և մի՛ ձանձրացիր նրա կապանքներից: Քո բովանդակ հոգով մոտեցիր նրան և քո բովանդակ զորությամբ պահի՛ր նրա ճանապարհները: Քննի՛ր, փնտրի՛ր, և դու կճանաչես այն, և երբ բռնես, մի՛ թող նրան, որովհետև ի վերջո դու հանգիստ կգտնես նրա մեջ, և քեզ համար նա կդառնա ուրախություն: Քեզ համար նրա կապանքները կլինեն զորության պատվար, և նրա շղթաները՝ փառքի պատմուճան: Արդարև, ոսկեղեն զարդ կա նրա վրա, և նրա կապանքները հակինթի շար են» (Սիր. 6:26-30):

20

ԼԵԳԵՈՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԱՆՓՈՓՈԽԵԼԻ Է

1. Լեգեոնի անդամները չեն կարող իրենց հայեցողությամբ փոխել կանոններն ու սովորությունները: Այստեղ նկարագրված համակարգը Լեգեոնի համակարգն է: Ցանկացած, նույնիսկ աննշան փոփոխություն, կհանգեցնի դրան հաջորդող նոր փոփոխությունների՝ կազմալուծելով ներկայիս կառուցվածքը՝ թողնելով միայն անվանումը և շատ քիչ բան Լեգեոնից: Այսպիսի փոփոխված կառույցից Լեգեոնը պետք է հրաժարվի, ինչքան էլ արժեքավոր աշխատանք կատարված լինի:

2. Փորձը ցույց է տվել, որ կազմակերպության անունը անդամներից շատերի համար նշանակություն չունի: Նրանք վիրտուալ բռնություն են համարում այն կանոնը, ըստ որի՝ արգելված է, որ իրենց սեփական մտքով անցած մի սովորական անուն դնեն այս կազմակերպությանը:

Երբեմն էլ «արդիականացնողները» Լեգեոնում փոխում են գրեթե ամեն ինչ՝ թողնելով միայն անվանումը: Արդյոք նրանք չե՞ն տեսնում, որ Լեգեոնում իրենց շնորհված դիրքը և անդամակցության իրավունքն այսպիսի անօրինական ձևով սեփականացնելը Լեգեոնի հանդեպ ամենավատ հարձակումն է, որովհետև Լեգեոնը հոգևո՛ր կառույց է:

3. Որոշ կառույցներ, ինչպես մարդիկ, հակված են մտածելու, որ իրենք արտառոց են, և նրանց դեպքում հնարավոր են հատուկ օրենքներ: Ուստի ժամանակ առ ժամանակ առաջարկներ են արվում, թե պետք է Լեգեոնի համակարգը ճկուն դարձնել՝ ենթադրյալ հանգամանքներին համապատասխան ձևով արձագանքելու համար: Այսպիսի ձևափոխությունները, եթե կատարվեն, կբերեն ցավալի հետևանքների: Որովհետև, գրեթե երբեք դրանք չեն բխում անհրաժեշտությունից (քանի որ Լեգեոնն արդեն ապացուցել է իր ընդունելությունն ամենուրեք), այլ բխում են անկախության կեղծ ոգուց: Սա երբեք չի բերելու երկնային հատուկ օրհնություններ, և այդ անկախության պտուղը միշտ կլինի

Լեգեոնից հեռանալը: Այնուամենայնիվ, քանի որ միշտ չէ, որ հնարավոր կլինի մարդկանց համոզել սրանում, հարկավոր է առնվազն ասել նրանց, ովքեր իրենք իրենց իրավունք են վերապահում սեփական դատողություններն անել Լեգեոնի կանոնների վերաբերյալ, որ նրանց համար միակ պատվաբեր քայլը կլինի այն, որ իրենց գործողությունները չկատարեն Լեգեոնի անվան տակ:

4. Ավելին, Լեգեոնի համակարգի բաղադրիչների այսպիսի հնարամիտ խտրական ընտրությունը, որոնցով հաճախ տարվում են խորամանկ մարդիկ, երբեք չի ունենա Լեգեոնին բնորոշ բնական քաղցրության և ներշնչանքի որակը, այնպես որ, այսպիսի վիրահատությունը կունենա սովորական մահվան ելք: Լավագույն դեպքում՝ կստացվի մի գեղեցիկ մեխանիզմ, և ոչինչ ավելին: Երբ դրան հետևում են խղճուկ արդյունքներ կամ ձախողում, պետք է առերեսվել ծանր պատասխանատվության:

5. Լեգեոնի բազմաթիվ խորհուրդները գլխավորապես անհրաժեշտ են Լեգեոնի համակարգն անձեռնմխելի պահելու նպատակով: Նրանք ամեն գնով պետք է հավատարիմ մնան իրենց վստահված պատասխանատվությանը:

«Մարիամի Լեգեոնի համակարգը գերազանց մի բան է» (Սբ Հովհաննես ԻԳ Պապ):

«Պետք է կամ ամեն ինչ ընդունել, կամ ամեն ինչ մերժել. նվազեցումը միայն թուլացնում է, և ամպուտացնելը խեղում է: Անհեթեթ է ընդունել ամեն ինչ՝ բացառությամբ մի բանի, որը նույնքան կարևոր է ընդհանուրի համար, որքան մյուս մասերը» (Երանելի Ջոն Հենրի Նյուման, «Էսսե զարգացման մասին»):

21

ՆԱԶԱՐԵԹԻ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՏՈՒՆԸ

Քրիստոսի Խորհրդավոր Մարմնի վերաբերյալ վարդապետությունը հատկապես հստակ ձևով կարելի է տեսնել Լեգեոնի ժողովներում, մանավանդ պրեզիդիումի ժողովներում, որը Լեգեոնի համակարգի սիրտն է:

«Որտեղ երկու կամ երեք հոգի հավաքված են իմ անունով, այնտեղ եմ ես նրանց մեջ» (Մտթ. 18:20): Տիրոջ այս խոսքերը մեզ վստահեցնում են, որ Իր Խորհրդավոր Մարմնի անդամների մեջ Տիրոջ ազդեցիկ ներկայությունն ավելի է զորանում՝ ըստ անդամների թվի, որոնք միավորվել են ծառայելու Իրեն: Նա հստակեցնում է մարդկանց թիվը՝ որպես Իր զորության լիակատար ներգործության պայման: Գուցե սա մեր անհատական թերությունների հետևանք է. յուրաքանչյուրի առաքինություններն այնքա՛ն սահմանափակ են, որ Քրիստոսին միայն մասնակիորե՛ն են թույլատրում յուրաքանչյուրի միջոցով ցույց տալ Ինքն Իրեն:

Մի հասարակ բնական պատկեր կարող է բացատրել, թե ինչպես կարող է դա լինել: Գունավոր ապակին կարող է փոխանցել միայն լույսի իր սեփական երանգավորումը՝ աղավաղելով բոլոր այլ երանգավորումները: Բայց երբ տարբեր գունավոր ապակիներ տարածեն լույսի իրենց երանգավորումները, սրանք բոլորը կմիավորվեն, և լույսի երանգը լիակատար կլինի: Նմանապես, երբ քրիստոնյաները որևէ թվաքանակով միավորվեն Տիրոջ նպատակների համար, նրանց որակները կլրացնեն միմյանց, և Տերը կկարողանա նրանց միջոցով առավել լիարժեք ձևով ցույց տալ իր կատարելությունը և զորությունը:

Ուրեմն, երբ լեգեոնականները հավաքվում են պրեզիդիումի մեջ՝ Նրա անունով և Նրա գործի համար, Նա ներկա է այդ զորավոր ձևով. ակնհայտ է, որ այդտեղ փոխանցվում է Նրա զորությունը (Մրկ. 5:30):

Այդ փոքրիկ Լեգեոնի ընտանիքում Հիսուսի հետ են նաև Նրա Մայրը և Սբ Հովսեփը, ովքեր պրեզիդիումի հանդեպ ունեն նույն հարաբերությունը, որ ունեն Նրա հանդեպ, ինչը թույլ է տալիս մեզ պրեզիդիումը դիտել որպես Նազարեթի տան արտացոլումը, և սա պարզապես մի ջերմեռանդական վարժանք չէ, այլ մի բան, որ հիմնված է իրականության վրա. «Մենք պարտավոր ենք,– ասում է Բերուլը,– Հիսուսի կյանքն ու առեղծվածները համարել ոչ թե անցած և մեռած բաներ, այլ կենդանի, ներկա և նույնիսկ հավերժական իրողություններ»: Նմանապես, մենք կարող ենք պրեզիդիումի սենյակն ու կահավորումը բարեպաշտորեն նմանեցնել Նազարեթի

Սուրբ Տան մթնոլորտին և կահավորմանը: Նաև կարող ենք լեգեոնականների վերաբերմունքն այդ իրողությունների հանդեպ համարել մի ստուգում, թե ինչպես են նրանք գնահատում այն ճշմարտությունը, թե Հիսուսն ապրում է մեր մեջ և գործում է մեր միջոցով՝ անշուշտ, օգտվելով այն իրերից, որոնք մենք օգտագործում ենք:

Այս միտքն ապահովում է մի քաղցր և անհրաժեշտ մղում՝ հոգատար ուշադրություն դարձնելու պրեզիդիումի հետ կապված իրերին և սենյակին:

Լեգեոնականները կարող են լիակատար ձևով չտնօրինել այն սենյակը, որտեղ անցկացնում են իրենց հանդիպումները, բայց ժողովի այլ պարագաներն ամբողջությամբ նրանց տրամադրության տակ են, ինչպես, օրինակ, սեղանը, աթոռները, խորանը, գրքերը: Ինչպե՞ս են լեգեոնականներն օգնում Նազարեթի պրեզիդիումի Տան Մայրիկին՝ այդտեղ վերարտադրելու այն տնային տնտեսության խնամքը, որը նա շատ վաղուց սկսել է Գալիլիայում: Լեգեոնականների օգնությունն անհրաժեշտ է Մարիամին: Նրանք կարող են հրաժարվել օգնել Մայրիկին կամ անել դա մատների արանքով՝ այդպիսով, սակայն, խոչընդոտելով Քրիստոսի Խորհրդավոր Մարմնի նկատմամբ նրա խնամքին: Առերեսվելով այս գաղափարին՝ լեգեոնականները թո՛ղ ջանան պատկերացնել, թե ինչպես էր Մարիամը հոգ տանում իր տան մասին:

Այդ տունն աղքատ էր, և կահույքը, անշուշտ, ոչ շքեղ: Բայց այն պե՛տք է որ լիներ ամենագեղեցիկ տունը: Որովհետև բոլոր ժամանակների կանանց և մայրերի մեջ այս մեկը եզակի էր՝ օժտված նուրբ ճաշակով և դաստիարակությամբ, որոնք չէին կարող չարտահայտվել նրա տան յուրաքանչյուր առարկայի մեջ: Յուրաքանչյուր հասարակ մանրուք անպայմանորեն ինչ-որ մի սիրունություն պետք է ունենար, ամեն մի սովորական բան՝ մի գրավչություն: Որովհետև Սուրբ Կույսը սիրում էր՝ ինչպես ոչ ոք իր նման, այս բոլոր բաները՝ հանուն Նրա, ով ստեղծել էր դրանք և հիմա մարդկայնորեն օգտագործում էր դրանք: Աստվածամայրը խնամում, մաքրում և փայլեցնում էր դրանք և ջանում էր սիրունացնել ամեն ինչ. դրանք պետք է լինեին յուրովի կատարյալ:

Կարող ենք վստահ լինել, որ այդ ամբողջ տան մեջ չկար ոչ մի բարձիթողի բան: Այդպես ուղղակի չէր կարող լինել, որովհետև այդ փոքրիկ տունը ոչ մի այլ տան նման չէր: Այն փրկագործության օրորոցն էր, աշխարհի Տիրոջ դարբնոցը: Այդ տանն ամեն ինչ տարօրինակ ձևով ծառայում էր Տիրոջ ձևավորմանը, Ով ստեղծել էր ամեն ինչ: Հետևաբար, ամեն ինչ պետք է լիներ համապատասխան՝ ծառայելու այս վսեմ նպատակին, և ամեն ինչ պատշաճ էր՝ կարգուկանոնի, մաքրության, պայծառության և անբնորոշելի մի որակի մեջ, որը Մարիամը ջանում էր հաղորդել ամեն ինչին:

Պրեզիդիումի մեջ ամեն բան ուրույն ձևով իր դերն ունի լեգեոնականին ձևավորելու գործում և, հետևաբար, պետք է արտացոլի Սուրբ Ընտանիքի Տան այդ յուրահատկությունները, ճիշտ ինչպես լեգեոնականներն իրենք պետք է ներկայացնեն Հիսուսին և Մարիամին:

Մի ֆրանսիացի հեղինակ գրել է մի գիրք, որ կոչվում է «Ճամփորդություն իմ սենյակով մեկ»: Այդպիսի մի ճամփորդություն կատարե՛ք ձեր պրեզիդիումի մեջ և քննական հայացքով վերլուծե՛ք ամեն ինչ, որ տեսնում է աչքը, և լսում է ականջը՝ հատակը, պատերը, պատուհանները, կահույքը, խորանի տարրերը, մասնավորապես արձանը, որը տան առանցքն է, տան մայրիկն է: Ամենից շատ ուսումնասիրե՛ք անդամների պահվածքը և ժողովը վարելու մեթոդը:

Եթե ձեր տեսածի և լսածի հանրագումարը չի համապատասխանում Նազարեթի տանը, ապա քիչ հավանական է, որ Նազաթերի ոգին ապրում է այդ պրեզիդիումի մեջ: Իսկ առանց այդ ոգու՝ պրեզիդիումը մեռյալից ավելի վատն է:

Երբեմն սպաները՝ որպես անարժան ծնողներ, շեղում են իրենց խնամքին հանձնված անդամներին: Գրեթե միշտ պրեզիդիումի թերությունների համար մեղավոր են սպաները: Եթե անդամները հաճախում են ոչ պարտաճանաչ և անկանոն ձևով, կատարում են անբավարար աշխատանք կամ անում են ոչ կանոնավոր ձևով, ժողովի ժամանակ թերանում են իրենց վերաբերմունքի մեջ, ապա պատճառն այն է, որ նրանց արատավոր վերաբերմունքն ընդունվել է, և նրանց չեն սովորեցրել լինել ավելի լավը: Նրանք շեղվում են՝ սպաներից ստացած թերի պատրաստության հետևանքով:

Այդ ամբողջ անհամապատասխանությունը հակադրե՛ք Նազարեթի տան հետ: Երևակայե՛ք, որ Տիրամայրն այդպես մատների արանքով նայեր մանրուքներին և կարգուկանոնին, որ իր մանկանն այդպիսի աղավաղիչ դաստիարակություն տար: Փորձե՛ք, դժվար է, բայց փորձե՛ք մտածել, որ Մարիամը թափթփված էր, թույլ, անվստահելի, անտարբեր, որ թողնում էր, որ ամբողջ տունը կորչի աղբի ու ավերակների մեջ, որ դառնա հարևանների արհամարհական խոսակցությունների առարկան: Անշուշտ, այդ գաղափարն ինքնին ֆանտաստիկ է: Բայց քիչ չեն այն լեգեոնական սպաները, որոնք թույլ են տալիս, որ պրեզիդիումի Նազարեթի տունը հայտնվի այդպիսի ամոթալի վիճակում, պրեզիդիումներ, որոնք, ինչպես նրանք խոստովանում են, պետք է լինեն Տիրամոր ճշգրիտ մարմնավորումները:

Բայց եթե մյուս կողմից այս բոլոր իրողությունները, կատարյալ լինելով, ապացուցեն պրեզիդիումի նվիրումը, ապա կարող ենք իմանալ, որ մեր Տերն այդտեղ է՝ այն լիությամբ, որի մասին խոսում է:

Սուրբ Ընտանիքի ոգին չսահմանափակվեց միայն Նազարեթի Սուրբ Տան մեջ, ոչ էլ միայն Հուդայի երկրով կամ որևէ այլ սահմաններով: Հետևաբար, չի կարող սահմանափակվել նաև պրեզիդիումի ոգին:

«Տիրամոր հանդեպ կաթողիկէ սերը ցույց է տալիս արվեստի մի գնահատելի զգացում՝ նրանով, որ չի հարցնում Նազարեթի կյանքի զանազան մանրամասների մասին: Գիտենք, որ Նազարեթում կա մի կյանք, որը ենթակա չէ մարդկային փորձառությանը, և հազիվ թե մարդը կարողանա ընկալել այն: Կա՞ արդյոք երկրիս երեսին մեկը, ով կարողանար նկարել այդ երկու գերմարդկային ուժգնությամբ բաբախող կյանքերը, որոնց այդ ուժգնության մե՛ջ է գտնվում նրանց շարժումների, զգացումների և ձգտումների ամենալիակատար համաձուլվածքը: Ես ուզում եմ Նազարեթի բլրի վրայից դիտել, թե ինչպես է մի կին՝ սափորը գլխին, գնում դեպի ջրհորը, և նրա հետ՝ մի տասնհինգ տարեկան տղա: Գիտեմ, որ այդ երկուսի միջև կա մի այնպիսի սեր, որը կարելի չէ գտնել Աստծո գահի առջև բնակվող բոլոր հոգիների մեջ: Բայց գիտեմ նաև, որ ինձ արտոնված չէ տեսնել ավելին, որ չլինի թե՝ հետաքրքրասիրությունից մեռնեմ» (Վոնիե, «Աստվածային Մայրությունը»):

22

ԼԵԳԵՈՆԻ ԱՂՈԹՔՆԵՐԸ

Ստորև ներկայացված են Մարիամի Լեգեոնի աղոթքները՝ բաժանված այնպես, ինչպես պետք է ասվեն ժողովների ժամանակ: Առանձին աղոթելու դեպքում պարտադիր չէ, որ այս հերթականությունը պահվի:

Օժանդակ անդամներն այս բոլոր աղոթքները պետք է ասեն ամեն օր:

Խաչակնքվելու նշանը՝ աղոթքի յուրաքանչյուր բաժնի սկզբում և վերջում, հիմնված է աղոթքների բաժանումների վրա: Երբ աղոթքները բաժանված չեն, պետք է խաչակնքվել միայն ամենասկզբում և վերջում:

1. Միայն ժողովի սկզբում ասվող աղոթքները

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Ե՛կ, Ո՛վ Սուրբ Հոգի, լցրո՛ւ հաւատացեալներիդ սրտերը, և բոցավառի՛ր նրանց մէջ Քո սիրոյ կրակը:

Ն. Ուղարկի՛ր Հոգիդ, Ո՛վ Տէր, եւ ամէն ինչ կը ստեղծուի:

Պ. Եւ կը վերանորոգես աշխարհը:

ԱՂՕԹՔ

Աստուա՛ծ, Հա՛յր մեր, հեղի՛ր Սուրբ Հոգուդ պարգևներն աշխարհի վրա: Դու առաքեցիր Սուրբ Հոգուն Քո Եկեղեցուն, որպէսզի սկսի ուսուցանել Աւետարանը. այժմ թո՛ղ Սուրբ Հոգին շարունակի գործել աշխարհում բոլոր նրանց սրտերի միջոցով, ովքեր հաւատում են: Մեր Տեր Յիսուս Քրիստոսով. ամէն:

Ն. Տէ՛ր, եթէ շրթունքներս բանաս,

Պ. Բերանս օրհնութիւնդ կը երգի:

Ն. Տէ՛ր, հասի՛ր ինձ օգնութեան:

Պ. Տէ՛ր, փութա՛ ինձ փրկել:

Ն. Փա՛ռք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ.

Պ. Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Այստեղ աղոթում ենք Վարդարանի հինգ տասնյակները, որից հետո.

Ո՛ղջ լեր, Թագուհի, Մա՛յր ողորմութեան, կեանք, քաղցրութիւն և յոյս մեր, ո՛ղջ լեր: Առ քեզ գոչեմք աքսորեալ որդիքս ևայի. առ քեզ աղաչեմք հեծելով և ողբալով յայսմ արտասուաց վայրի: Արդ, ո՛վ Բարեխօս մեր, դարձո՛ առ մեզ զաչս ողորմութեան քոյ. և զՅիսուս զօրհնեալ պտուղն որովայնի քոյ, յետ այսր աքսորանաց ցո՛յց մեզ. ո՛վ գթած, ո՛վ բարեգութ, ո՛վ քաղցր Կո՛յս Մարիամ:

Ն. Աղաչեա՛ վասն մեր, Սո՛ւրբ Աստուածածին,

Պ. Զի արժանի լիցուք խոստմանցն Քրիստոսի:

ԱՂՕԹՔ

Ո՛վ Աստուած, Քո Միածին Որդին, Իր կեանքով, մահով և յարութեամբ մեզ համար ձեռք բերեց յաւիտենական փրկութեան պարգևները, աղաչում ենք, շնորհի՛ր, որ մենք, խորհրդածելով Օրհնեալ Կոյս Մարիամի Սուրբ Վարդարանի Խորհուրդների մասին, հետևե՛նք այդ Խորհուրդների մէջ գտնուող օրինակներին և ընդունենք այն, ինչ որ խոստանում են: Նոյն մեր Տէր Քրիստոսով. Ամէն:

Ն. Ամենասուրբ Սի՛րտ Յիսուսի,	Պ. Ողորմի՛ր մեզ:
Ն. Անարատ Սի՛րտ Մարիամի,	Պ. Աղօթի՛ր մեզ համար:
Ն. Սուրբ Յովսէ՛փ,	Պ. Աղօթի՛ր մեզ համար:
Ն. Սուրբ Յովհաննէ՛ս Աւետարանիչ,	Պ. Աղօթի՛ր մեզ համար:
Ն. Սբ Լուի-Մարի Մոնֆորտացի՛,	Պ. Աղօթի՛ր մեզ համար:

Փա՛ռք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

2. Կատենա Լեգէոնիս. պետք է ասել ժողովի կեսին, բայց լեգեոնականներն այս աղոթքը պետք է ասեն ամեն օր:

Կցուրդ. Ո՞վ է սա, որ ելնում է ինչպէս առաւօտ, և գեղեցիկ է, ինչպէս լուսին, ընտիր՝ ինչպէս արեգակ՝ զարմանալի հորինուած... որ դէպի մեզ է գալիս բանակների գնդերի պէս:

– Իմ անձը կը փառաւորի Տիրոջը, և իմ հոգին ցնծաց իմ Փրկիչ Աստուծով,

– Որովհետև Նա Իր հայեացքը դարձրեց Իր աղախնի խոնարհութեան վրայ:

– Եւ ահա այսուհետեւ բոլոր սերունդներն ինձ երանի կը տան,

– Որովհետև ամենազօր Աստուած մեծամեծ գործեր արեց ինձ համար, և Նրա անունը սուրբ է:

– Նրա ողորմութիւնը սերնդից սերունդ Իր երկիւղածների վրայ է:

– Նա Իր բազուկով զօրութիւն ի գործ դրեց, ցրեց ամբարտաւաններին՝ իրենց սրտի խորհուրդներով, հզօրներին տապալեց իրենց աթոռներից և բարձրացրեց խոնարհներին:

– Քաղցածներին լիացրեց բարիքներով և մեծահարուստներին ձեռնունայն արձակեց:

– Նա պաշտպան կանգնեց Իր ծառային՝ Իսրայելին՝ յիշելով Իր ողորմութիւնները, ինչպէս ասել էր մեր հայրերին՝ Աբրահամին և նրա սերնդին, յաւիտեան:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ:

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Կցուրդ. Ո՞վ է սա, որ ելնում է ինչպէս առաւօտ, և գեղեցիկ է, ինչպէս լուսին, ընտիր՝ ինչպէս արեգակ՝ զարմանալի հորինուած... որ դէպի մեզ է գալիս բանակների գնդերի պէս:

Ն. Ո՛վ Կոյս Մարիամ, անարատ յղացեալ,

Պ. Աղօթի՛ր մեզ համար, որ Քո պաշտպանութեանն ենք դիմում:

ԱՂՕԹՔ

Տէ՛ր Յիսուս Քրիստոս, Միջնորդ մեր և Հօր միջև, որ հաճեցիր Քո Մօրը՝ Ամենասուրբ Կոյսին, կարգել մեզ համար Մայր և Բարեխօս քո առջև, շնորհի՛ր Քո ողորմութեամբ, որպէսզի ամէն ոք, ով Քեզ մօտ է գալիս շնորհներդ խնդրելու, ուրախանայ՝ ընդունելով դրանք Մօրդ բարեխօսութեամբ. Ամէն:

3. Լեգէոնի աղօթքը. այս աղոթքը պետք է ասել ժողովի ավարտին, այն գրված է դյուրին ընթեռնելի ձևով:

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Ընդ հովանեաւ պաշտպանութեան քոյ ապաւինիմք, Սուրբ Աստուածածի՛ն, զաղաչանս մեր մի՛ անտես առներ ի կարիս մեր: Այլ միշտ փրկեա՛ զմեզ յամենայն վտանգից, փառաւորեալ և օրհնեալ Կո՛յս:

Ն. (Պրեզիդիումի հատուկ տիտղոսը)	Պ. Աղօթի՛ր մեզ համար:

[Մյուս բոլոր դեպքերում՝ ոչ պրեզիդիումի ժողովներին, պետք է ասել հետևյալը]

Ն. Անարատ Կոյս Մարիա՛մ, Միջնորդ բոլոր շնորհների,	Պ. Աղօթի՛ր մեզ համար:
Ն. Սբ Միքայէ՛լ, Սբ Գաբրիէ՛լ և Սբ Ռաֆայէ՛լ,	Պ. Աղօթեցէ՛ք մեզ համար:
Ն. Երկնային ամենայն զօրութիւններ՝ Մարիամի հրեշտակների Լեգէո՛ն,	Պ. Աղօթեցէ՛ք մեզ համար:
Ն. Սբ Յովհաննէս Մկրտի՛չ,	Պ. Աղօթի՛ր մեզ համար:
Ն. Սբ Պետրո՛ս և Սբ Պօղո՛ս,	Պ. Աղօթեցէ՛ք մեզ համար:

Հետո պետք է միասին ասել հետևյալ աղոթքը՝ մինչև առաջին «Ամէն»-ը, որից հետո քահանան ավարտում է աղոթքը՝ առանձին:

Ո՛վ Տէր, շնորհի՛ր մեզ, որ ծառայում ենք Սուրբ Կոյս Մարիամի դրօշի տակ, այնպիսի լիարժէք հաւատք Քո

հանդէպ, և վստահութիւն Աստուածածնի հանդէպ, որպէսզի յաղթենք աշխարհին:

Շնորհի՛ր մեզ սիրով լի կենդանի հաւատք, որպէսզի կարողանանք մեր բոլոր գործերը կատարել՝

Քո հանդէպ մաքուր սիրուց մղուած, և մերձաւորի մէջ կարողանանք միշտ տեսնել Քեզ և ծառայել Քեզ: Շնորհի՛ր մեզ վէմի նման ամուր և անսասան հաւատք, որպէսզի ի զօրու լինենք մնալու հանդարտ և հաստատուն կեանքի խաչերի, հոգնութիւնների և յուսախաբութիւնների մէջ, խիզախ հաւատք, որ մեզ ներշնչի անվարան ձեռնարկել և կատարել Քո փառքին և հոգիների փրկութեանը ծառայող մեծ գործեր, հաւատք, որը կլինի մեր Լեգէոնի Հրեղէն Սիւնը, որպէսզի առաջնորդի մեզ միութեան մէջ, ամէն տեղ վառի աստուածային սիրոյ կրակը, լուսաւորի խաւարի և մահուան ստուերի մէջ գտնուողներին, բոցավառի նրանց, ովքեր հոգևոր գաղջութեան մէջ են, վերակենդանացնի նրանց, ովքեր մեռած են մեղքի մէջ, և մեր ոտքերն առաջնորդի խաղաղութեան ճանապարհով, որպէսզի երբ այս կեանքի ճակատամարտն աւարտուի, մեր Լեգէոնը, առանց կորցնելու որևէ մէկին, կարողանայ վերստին հաւաքուել Քո սիրոյ և փառքի թագաւորութեան մէջ. Ամէն:

Թո՛ղ Աստծոյ ողորմութեամբ մեր բոլոր ննջեցեալ լեգէոնականների և հաւատացեալների հոգիները հանգչեն խաղաղութեան մէջ. ամէն:

[Ապա անմիջապես քահանան աղոթում է օրհնության համար, իսկ եթե քահանան ներկա չէ, ապա ասում են՝ «Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն»]:

«Մարիամի հավատքը գերազանցեց բոլոր մարդկանց և բոլոր հրեշտակների հավատքը: Մարիամը տեսավ իր Որդուն՝ Բեթղեհեմի մսուրի մեջ և հավատաց, որ Նա աշխարհի Արարիչն է: Մարիամը տեսավ, թե ինչպես էր Նա փախչում Հերովդեսից և երբեք չերկմտեց իր հավատքի մեջ, թե Նա թագավորների Թագավորն է: Մարիամը տեսավ Նրա ծնվելը և հավատաց, որ Նա հավիտենական է: Մարիամը տեսավ Նրան աղքատ և նույնիսկ առանց տարրական անհրաժեշտությունների, և այնուամենայնիվ

հավատաց, որ Նա տիեզերքի Տերն է: Մարիամը տեսավ Նրան՝ հարդի վրա պառկած, և հավատքն իրեն ասաց, որ Նա Ամենակարողն է: Մարիամը տեսավ, որ Նա չի ասում ոչ իսկ մի բառ, բայց հավատում էր, որ Նա՝ Ինքը, հավիտենական Իմաստությունն է: Մարիամը տեսավ, թե ինչպես էր Նա լացում, և հավատաց, որ Նա Դրախտի բերկրանքն է: Եւ վերջում Մարիամը տեսավ Նրա մեռնելը՝ ամեն տեսակի հարվածների տակ, գամված խաչին, ու թեև բոլոր մյուսների հավատքը երերաց, բայց Մարիամը հարատևեց իր աներկբա համոզման մեջ, թե Նա Աստված է» (Սբ Ալֆոնսուս Լիգուորացի):

[Այս մեջբերումը Լեգեոնի աղոթքների մաս չի կազմում]

23

ԱՂՈԹՔՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՄՆԱՆ ԱՆՓՈՓՈԽ

Լեգեոնի աղոթքները պետք է համարել անփոփոխելի: Նույնիսկ խնդրանքների մեջ չպետք է արվի որևէ փոփոխություն կամ հավելում՝ ո՛չ ի պատիվ ազգային, ո՛չ տեղական, ո՛չ էլ հատուկ սրբերի, եթե որևէ տեղ քննարկվում է այդպիսի փոփոխություն կամ հավելում կատարելու հնարավորությունը:

Սա պահանջում է զոհաբերություն, բայց այս պահանջը միայն հետևում է այն զոհաբերությանը, որը մեծագույնն է իր տեսակի մեջ. սա պատրաստակամորեն կընդունեն նրանք, ովքեր գիտեն այն երկիրը, որտեղից գալիս են այս սահմանադրությունները, և ովքեր հասկանում են ազգային առաքյալի հետ դրանց կապվածության զորությունը:

Ճիշտ է, որ եթե մտցվի մի հատուկ խնդրանք, դա շատ մեծ շեղում չի լինի ընդհանուր սովորությունից, բայց դրանում կներդրվի համակարգից շեղման սերմը, իսկ Լեգեոնը վախենում է նույնիսկ սերմից:

Դարձյալ ասենք, որ Լեգեոնի ոգին դրսևորվում է իր աղոթքների մեջ, և ուստի պատշաճ է, որ աղոթքներն

ամենահստակ միաձևությամբ, ինչ լեզվով էլ ասվեն, ձևավորեն մտքի, սրտի, կանոնների և սովորության լիակատար միասնություն, որին Լեգեոնը կոչ է անում բոլորին, ովքեր որևէ տեղ ծառայում են Լեգեոնի դրոշի ներքո:

«Քանի որ դուք Քրիստոսի զավակներն եք, ուրեմն եղե՛ք նաև Հռոմի զավակներ» (Սբ Փաթրիք):

«Սիրելի Տե՛ր, այն բաները, որոնց համար աղոթում եմ, շնորհ տո՛ւր, որ նաև աշխատեմ դրանց համար» (Սբ Թոմաս Մոր):

24
ԼԵԳԵՈՆԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐԸ

1. ՍՈՒՐԲ ՀՈՎՍԵՓԸ

Լեգեոնի աղոթքներում Սբ Հովսեփի անունը հետևում է Հիսուսի Սուրբ Սրտին և Մարիամին ուղղված խնդրանքներին, որովհետև նա հաջորդում է նրանց Երկնային Ատյանում: Հովսեփը Սուրբ Ընտանիքի գլուխն էր՝ Հիսուսի և Մարիամի համար կատարելով մի կարևոր և հատուկ առաքելություն: Այս մեծագույն սուրբն այդ նույն բանը՝ ոչ ավելի, ոչ պակաս, շարունակում է կատարել Հիսուսի Խորհրդավոր Մարմնի և Նրա Մոր համար: Հետևաբար, նա պահում է Եկեղեցու և Լեգեոնի գոյությունը և գործունեությունը: Սբ Հովսեփի հոգատարությունն աննահանջ է, կենսական, ծնողական մտերմությամբ, իր ազդեցությամբ նա երկրորդն է՝ միայն Մարիամի մայրական խնամքից հետո, և ուստի պետք է մեծապես գնահատվի Լեգեոնի կողմից: Եթե ուզում ենք, որ նրա սերը ներգործի մեր մեջ, ապա ինքներս մեզ պետք է բացենք նրա առջև և որդեգրենք մի վարքագիծ, որն ամբողջովին համապատասխանում է այն ուժգին նվիրումին, որ Սբ Հովսեփը տածում է մեր հանդեպ: Հիսուսն ու Մարիամը միշտ հիշել են նրան և երախտապարտ են եղել այն ամենի համար,

որ նա արել է հանուն Իրենց: Նմանապես, լեգեոնականները պետք է մշտապես ուշադիր լինեն Սուրբ Հովսեփի հանդեպ:

Երանելի Կույս Մարիամի ամուսին Սբ Հովսեփի տոնը նշվում է մարտի 19-ին, իսկ Սբ Հովսեփ աշխատավորի տոնը՝ մայիսի 1-ին:

«Մենք չենք կարող Հիսուսի պատմական կյանքը տարանջատել Նրա խորհրդավոր կյանքից, որը շարունակվում է Իր Եկեղեցում: Պատահական չէ, որ պապերը Սբ Հովսեփին հռչակել են Եկեղեցու պաշտպան: Ժամանակի և միջոցների փոփոխությունների հոլովույթում նրա հանձնառությունը միշտ մնացել է նույնը: Որպես Քրիստոսի Եկեղեցու պաշտպան՝ նա նույնությամբ շարունակում է իր երկրային առաքելությունը: Նազարեթի օրերից սկսած՝ Աստծո ընտանիքն աճել ու տարածվել է մինչև աշխարհի ծայրերը: Հովսեփի սիրտն ընդարձակվել է իր նոր հայրության չափերին համապատասխան, որն ավելի երկարատև է և գերազանցում է այն հայրությունը, որն Աստված խոստացավ Աբրահամին, որը բյուրավորների համար հայր եղավ: Աստված երբեք չի փոփոխվում մեզ վերաբերող Իր գործերի մեջ. Նրա ծրագրում չկան երկրորդ մտքեր, միջամտող փոփոխություններ: Ամեն բան միասնական է, կարգավորված, հետևողական և շարունակական: Հովսեփը՝ որպես Հիսուսին որդեգրող հայր, որդեգրում է նաև Հիսուսի եղբայրներին, այսինքն՝ բոլոր դարերի քրիստոնյաներին: Հովսեփը՝ որպես Հիսուսին ծնող Մարիամի ամուսին, խորհրդավոր կերպով միացած է մնում Մարիամի հետ՝ աշխարհում Եկեղեցու խորհրդավոր ծննդյան ընթացքում: Ուրեմն, Մարիամի լեգեոնականը, որն աշխատում է Աստծո Արքայության համար, այսինքն՝ Եկեղեցու համար, իրավացիորեն խնդրում է պաշտպանությունը նրա, ով նորածին Եկեղեցու կամ Սուրբ Ընտանիքի գլուխն էր» (Կարդինալ Լ. Յ. Սուենենս):

2. ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԱՐԱՆԻՉԸ

Սբ Հովհաննեսը, որն Ավետարանում ներկայացված է որպես «այն աշակերտը, որին Հիսուսը սիրում էր», մեր առջև հայտնվում է որպես Սուրբ Սրտի նկատմամբ ջերմեռանդության տիպար: Հավատարիմ մնալով մինչև մահ՝ նա կառչեց այդ Սրտից՝ մինչև տեսավ Այն՝ հանդարտված և տիգախոց, մահվան մեջ: Հետագայում նա ի հայտ է գալիս

որպես Մարիամի Անարատ Սրտի հանդեպ ջերմեռանդության տիպար: Հովհաննեսը, լինելով հրեշտակի նման մաքուր, զբաղեցրեց այն տեղը, որը Հիսուսն Ի՛նքն էր զբաղեցնում, և շարունակեց Մարիամին տալ որդիական սեր՝ մինչև Մարիամի մահը:

Բայց մեր Տիրոջ՝ Խաչի վրա ասված երրորդ խոսքը պարունակում էր ավելի շատ, քան որդիական խնամքի ապահովություն Իր Երանելի Մոր համար: Հանձին Հովհաննես Ավետարանչի, Հիսուսը մատնացույց արեց ամբողջ մարդկությանը, բայց նախևառաջ նրանց, ովքեր հավատքով միանում են Հովհաննեսին: Այդպես հռչակվեց Մարիամի մայրությունը մարդկության համար, որոնք եղբայրներն ու քույրերն են Նրա, Ով անդրանիկն է բոլորի: Սբ Հովհաննեսն այս բոլոր նոր զավակների ներկայացուցիչն էր, առաջի՛նը, որը մտավ ժառանգության մեջ, տիպար բոլոր նրանց համար, ովքեր պետք է գային իրենից հետո, և մի սուրբ, որին Լեգեոնը պարտական է ջերմագին նվիրումով:

Հովհաննեսը սիրեց Եկեղեցին և յուրաքանչյուր հավատացյալ հոգու և իր բոլոր ունակությունները գործադրեց՝ ծառայելով Եկեղեցուն: Նա առաքյալ էր, ավետարանիչ և վաստակեց նաև նահատակության պսակը:

Նա Մարիամի քահանան էր, և ուստի հատուկ հովանավորն է լեգեոնական քահանայի, որը ծառայում է մի կազմակերպության համար, որի նպատակն է՝ լինել Մարիամի կենդանի պատճեն:

Հովհաննես Ավետարանչի տոնը նշվում է դեկտեմբերի 27-ին:

«Երբ Հիսուսը տեսավ մորն և նրա մոտ կանգնած սիրելի աշակերտին, մորն ասաց. «Ո՛վ կին, ահա՛ քո որդին»: Ապա աշակերտին ասաց. «Ահա՛ քո մայրը»: Եվ այդ պահից սկսած՝ աշակերտը նրան իր մոտ վերցրեց» (Հվի. 19:26-27):

3. ՍԲ ԼՈՒԻ-ՄԱՐԻ ԴԸ ՄՈՆՖՈՐԸ

«Նկատի առնելով այն որոշումը, որ անընդունելի է Լեգեոնի աղոթքներում ներառել հատուկ կամ

տեղական հովանավոր սրբերի անուններ, Երանելի Գրինյոն դը Մոնֆորի անվան ներառումը կարող է վիճելի թվալ: Բայց կարող ենք վստահաբար ասել, որ Լեգեոնի զարգացման մեջ ոչ մի այլ սուրբ չի ունեցել ավելի մեծ դերակատարություն, քան նա: Այս ձեռնարկը լի է նրա ոգով: Աղոթքները վերստին արձագանքում են նրա խոսքերին: Նա իսկապես Լեգեոնի ուսուցիչն է, հետևաբար, Լեգեոնի կողմից խնդրանքներով նրան դիմելը բարոյական պարտավորություն է»: (Լեգեոնի որոշումը՝ Երանելի Գրինյոն դը Մոնֆորի անունը բարեխոս սրբերի անվանացանկում ներառելու մասին):

Նա սրբադասվել է 1947թ. հուլիսի 20-ին, և նրա տոնը նշվում է ապրիլի 28-ին:

«Նա ոչ միայն հիմնադիր է, այլև միսիոներ: Եվ ավելի քան միսիոներ, որովհետև մենք տեսնում ենք ևս մեկ կողմ. նա վարդապետ և աստվածաբան է, որը մեզ տվել է մի աստվածաբանություն, որպիսին իրենից առաջ չէր տվել ոչ ոք: Նա այնքա՛ն խորությամբ էր ուսումնասիրել մարեմական ջերմեռանդության արմատները, այնքա՛ն էր ընդարձակել դրա հորիզոնները, որ, անկասկած, դարձել է Մարիամի բոլոր ժամանակակից երևումների ազդարարողը՝ Լուրդից մինչև Ֆաթիմա, Անարատ Հղության դոգմայի ձևակերպումից մինչև Մարիամի Լեգեոնը: Նա ինքն իրեն հաստատել է որպես մունետիկ՝ Մարիամի միջոցով Աստծո թագավորության գալստյան և նախակարապետն այն երկար սպասված փրկության, որը ժամանակների լրումին Սուրբ Կույս Աստվածածինը կբերի աշխարհին Իր Անարատ Սրտով» (Կարդինալ Ֆեդերիկո Թեդեսչինի, Սբ Պետրոսի տաճարի լուսարարապետ, «Ճառ՝ արտասանված Սուրբ Պետրոսի տաճարում՝ Սբ Լուի-Մարի դը Մոնֆորի արձանի բացման առիթով», 8 դեկտեմբերի, 1984թ.):

«Ես հստակորեն կանխատեսում եմ, որ կատաղի գազանները մոլագարությամբ կհարձակվեն՝ իրենց սատանայական ատամներով բզկտելու այս փոքրիկ գիրքը և նրան, ում Սուրբ Հոգին օգտագործել է՝ գրելու համար այդ գիրքը, կամ առնվազն թաղելու այն դագաղի խավարի և լռության մեջ, որպեսզի ի հայտ չգա: Նրանք նույնիսկ կհարձակվեն և կհալածեն նրանց, ովքեր կկարդան այն և կգործադրեն: Բայց ի՞նչ օգուտ կունենան դրանից: Թո՛ղ անեն, ավելի լա՛վ: Այս տեսլականը քաջալերում է ինձ և մղում հուսալու մեծ հաջողության, այսինքն՝ Հիսուսի և Մարիամի քաջ և համառ զինվորների զորավոր մի Լեգեոնի գոյության, որի

մեջ կլինեն և՛ տղամարդիկ, և՛ կանայք՝ կռվելու ընդդեմ սատանայի, կռվելու աշխարհի և ապականված իրականության դեմ՝ այն առավել քան վտանգավոր ժամանակներում, որ դեռ պիտի գան» (Սբ Լուի-Մարի դը Մոնֆոր (մահ.՝ 1716թ.), «Ճշմարիտ ջերմեռանդություն Երանելի Սուրբ Կույս Մարիամի հանդեպ»):

4. ՍՈՒՐԲ ՄԻՔԱՅԵԼ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԸ

«Երկնային բոլոր զորքերի իշխան Սուրբ Միքայելն ամենանախանձախնդիրն է՝ Մարիամին պատվելու մեջ, և պատճառ է դառնում, որ Մարիամին պատվեն, և նա միշտ սպասում է, որ արժանանա այն պատվին, որ Մարիամի խնդրանքով ծառայություն մատուցի Մարիամին ծառայողներից որևէ մեկին» (Սբ Օգոստինոս):

Սբ Միքայելը՝ «Տիրոջ բանակի հրամանատարը» (Հես. 5:14), միշտ եղել է ընտրյալ ժողովրդի հովանավորը՝ նախ Հին Օրենքում, ապա՝ Նոր Ուխտի ժամանակներում: Նա մնում է Եկեղեցու հավատարիմ պաշտպանը, բայց շարունակում է պաշտպանել նաև հրեաներին, թեև նրանք երես թեքեցին Հիսուսից: Ավելի շուտ, այդ պաշտպանությունն ավելի զորացավ, քանի որ հրեաները դրա կարիքն ունեն և որովհետև նրանք Հիսուսի, Մարիամի և Հովսեփի արյունակիցներն են: Լեգեոնը ծառայում է Սբ Միքայելի հովանու ներքո: Նրա քաջալերմամբ Լեգեոնը պետք է ձգտի վերականգնել այն ժողովրդին, որի հետ Աստված կնքեց հավիտենական սիրո ուխտ:

Սբ Միքայել, Սբ Գաբրիել և Սբ Ռաֆայել Հրեշտակապետերի տոնը նշվում է սեպտեմբերի 29-ին:

«Ըստ Հայտնության, հրեշտակները, որոնք մասնակցում են Սուրբ Երրորդության կյանքում՝ փառքի լույսի մեջ, կոչված են իրենց դերակատարությունն ունենալու մարդու փրկության պատմության մեջ, աստվածային նախախնամությամբ հաստատված պահերին:

«Չէ՞ որ բոլորն էլ սպասավորող հոգիներ են, որոնք ուղարկվում են ի սպասավորություն նրանց, որ ժառանգելու են փրկությունը» (Եբր. 1:14): Եկեղեցին այս է ուսուցանում՝ հիմնվելով Սուրբ Գրքի վրա, որից սովորում ենք, թե բարի հրեշտակների

խնդիրն է՝ մարդկանց պաշտպանությունը և նրանց փրկության համար բարեխոսելը» (Սբ Հովհաննես Պողոս Բ, Ընդհանուր ունկնդրություն, 6 օգոստոսի, 1986թ.):

5. ՍԲ ԳԱԲՐԻԵԼ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԸ

Որոշ ծեսեր Սբ Գաբրիելին և Սբ Միքայելին միացյալ ձևով ողջունում են որպես հաղթողների և իշխանների, երկնային զորքերի առաջնորդների, հրեշտակների ղեկավարների, աստվածային փառքի սպասավորների, մարդկային արարածների պահապանների և առաջնորդողների: Սբ Գաբրիելը Ավետման հրեշտակն է: Նրա միջոցով էր, որ Սուրբ Երրորդության հաճոյախոսությունները փոխանցվեցին Մարիամին, և Երրորդության Խորհուրդն առաջին անգամ հռչակվեց մարդուն, որ ազդարարվեց Մարդեղությունը, որ հայտարարվեց Անարատ Հղությունը, որ հնչեցվեցին Վարդարանի առաջին նոտաները:

Վերևում խոսվեց հրեաների հանդեպ Սբ Միքայելի հոգատարության մասին: Հավանաբար՝ նույնը կարելի է ասել մահմեդականների նկատմամբ Սբ Գաբրիելի հոգատարության մասին: Նրանք համոզված են, որ Գաբրիելն է շնորհել իրենց կրոնը: Այդ պնդումը, թեև հիմքեր չունի, բայց խոսում է Գաբրիելի նկատմամբ ուշադրության մասին, որը նա կձգտի վարձատրել պատշաճ կերպով, այսինքն՝ լուսավորելով նրանց քրիստոնեական հայտնության վերաբերյալ, որի պահապանն է ինքը: Բայց նա ինքնուրույն չի կարող հասնել այդպիսի փոխակերպման: Մարդկային համագործակցությունը պետք է միշտ ունենա իր դերակատարությունը:

Հիսուսն ու Մարիամը տարօրինակ կերպով գերիշխող տեղ ունեն Ղուրանում և ներկայացված են գրեթե այնպես, ինչպես Ավետարաններում, բայց առանց որևէ դերակատարության: Այդ Սուրբ Զույգը իսլամում սպասում է, որ մեկը գնա և օգնի նրանց, որ բացահայտեն Իրենք Իրենց և հաստատվեն: Ապացուցվել է, որ այստեղ Լեգեոնն ունի հատուկ պարգև, և Լեգեոնի անդամները գնահատանքով են

ընդունվում մահմեդականների կողմից: Ինչքա՛ն հարուստ նյութ կա Ղուրանում, որ բացատրության կարիք ունի:

Սբ Միքայել, Սբ Գաբրիել և Սբ Ռաֆայել Հրեշտակապետների տոնը նշվում է սեպտեմբերի 29-ին:

«Սուրբ Գիրքը պատմում է, թե ինչպես է երկնային ազնվազարմներից բարձրագույնը տեսանելի կերպարանքով ուղարկվում՝ Մարիամին ավետելու մարդեղության խորհուրդը: Մարիամին հրեշտակը խնդրեց դառնալ Աստծո Մայրը, որովհետև իր աստվածային մայրությամբ բոլոր հրեշտակների նկատմամբ նա ունենալու էր ինքնակալություն, զորություն և տիրապետություն: «Կարելի է ասել,– գրում է Պիուս ԺԲ Քահանայապետը,– որ Գաբրիել հրեշտակապետը Մարիամի թագավորական պաշտոնի երկնային առաջին բամբերն է» (Ad Caeli Reginam): Գաբրիելին պատվում ենք՝ որպես հովանավոր նրանց, ովքեր ձեռնարկում են կարևոր առաքելություններ, ովքեր Աստծո համար կարևոր լուրեր են բերում: Նա Աստծո ուղերձը բերեց Մարիամին: Այդ պահին Մարիամը ներկայացնում էր ամբողջ մարդկությանը, իսկ Գաբրիելը՝ բոլոր հրեշտակներին: Նրանց երկխոսությունը, որը կոգեշնչի մարդկանց մինչև ժամանակների վախճանը, հաստատեց մի դաշինք, որից «կծագի նոր երկինք ու նոր երկիր»: Ուրեմն, որքա՛ն հրաշալի խոսեց նա Մարիամի հետ: Որքա՛ն սխալ է նրա դերը իջեցնել պարզապես մի անգործ խոսողի մակարդակին: Նա ամբողջովին լուսավորված էր և տվեց հնարավորինս ընդարձակ վկայություն: Գաբրիելը Մարիամի հարցերին տվեց լիարժեք պատասխաններ, որովհետև նա Աստծո խոսնակն էր և վստահված հրեշտակը: Գաբրիելի և Տիրամոր հանդիպմամբ սկսվեց արարչագործության նորացումը: Նոր Եվան նորոգեց այն ավերը, որ գործել էր առաջին Եվան: Նոր Ադամը՝ որպես Գլուխը Խորհրդավոր Մարմնի, որի մեջ են մտնում նաև հրեշտակները, վերականգնեց ոչ միայն մարդկությունը, այլ նաև հրեշտակների պատիվը, որն ստվերել էր կեղծ հրեշտակը» (Դկտ. Մայքլ Օ'Քարոլ):

6. ՍԲ ՌԱՖԱՅԵԼ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԸ

Սուրբ Ռաֆայելը հայտնի է որպես բժշկության հրեշտակ, նախևառաջ, հոգևոր բժշկության: «Ռաֆայել» եբրայական անունը նշանակում է՝ «Աստված բուժում է»: Ռաֆայելը նաև հայտնի է որպես ճանապարհորդների, կույրերի, երջանիկ հանդիպումների և քրիստոնեական ամուսնության հովանավոր սուրբ:

Նրան հանդիպում ենք Հին Կտակարանի Տոբիթի գրքում, որտեղ նա քողարկվում է՝ հանձին Ազարիա անունով մի մարդու, և ընկերակցում է Տուբիին՝ դեպի Միդիա ճամփորդության ընթացքում և օգնում նրան: Այդ ճամփորդության ժամանակ Ռաֆայել հրեշտակապետը նրան պաշտպանում է տարբեր ձևերով՝ ներառյալ չար ոգուն կապելը Վերին Եգիպտոսի անապատում: 3-րդ Գլխում (Տոբ. 3:24-25) նրա մասին կարդում ենք հետևյալը. «Եվ երկուսի (Տոբիթի և Սառայի) աղոթքներն էլ լսելի եղան Աստծու առջև, և Ռաֆայելն ուղարկվեց բժշկելու երկուսին էլ»: 12-րդ Գլխում պատմվում է Ռաֆայելի բժշկության զորության մասին. «Աստված ինձ ուղարկեց բժշկելու քեզ և քո հարս Սառային: Ես Ռաֆայելն եմ՝ մեկն այն յոթը սուրբ հրեշտակներից, որոնք վեր են հանում աղոթքները, մտնում սուրբ և փառավոր Աստծու մոտ և մատուցում նրան»: Նրանք երկուսն էլ շփոթվեցին և երեսնիվայր ընկան գետնին, որովհետև շատ էին վախեցել: Հրեշտակն ասաց նրանց. «Մի՛ վախեցեք, թող խաղաղություն լինի ձեզ, օրհնեցե՛ք Աստծուն, որովհետև ես ոչ թե իմ շնորհով եկա, այլ ձեր Աստծո կամքով, նրա՛ն օրհնեցեք հավիտյան» (Տոբ. 12:14-18):

Հովհաննեսի Ավետարանում (Հվի. 5:1-4) պատմվում է Բեթհեզդայի ավազանի մասին, որտեղ բազմաթիվ հիվանդներ սպասում էին ջրերի խառնվելուն, «...որովհետև ժամանակ առ ժամանակ Տիրոջ հրեշտակն իջնում էր ավազանի մեջ, և ջրերը խառնվում էին, և ով ջրերի խառնվելու ժամանակ առաջինն էր մտնում ավազանի մեջ, բուժվում էր՝ իր հիվանդությունից նշան անգամ չպահելով»: Ռաֆայելին վերագրվող բժշկության դերակատարության պատճառով համարում են, որ այդ հրեշտակը Ռաֆայելն էր:

Սուրբ Միքայել, Գաբրիել և Ռաֆայել Հրեշտակապետների տոնը նշվում է սեպտեմբերի 29-ին:

7. ԵՐԿՆԱՅԻՆ ԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԱՐԻԱՄԻ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ԼԵԳԵՈՆԸ

«Regina Angelorum! Հրեշտակների Թագուհի՛, ինչպիսի՛ հմայք, ինչպիսի՛ երկնային նախաճաշակում է այսպես

մտածելը Մարիամի՝ մեր մոր մասին, Ում անդադար ուղեկցում են հրեշտակների լեգեոնները» (Սբ Հովհաննես ԻԳ):

«Մարիամը Աստծո բանակների գեներալն է: Հրեշտակները կազմում են Մարիամի ամենափառավոր գնդերը՝ պատրաստ պատերազմի» (Բուդոն, «Հրեշտակները»):

Հենց սկզբից Լեգեոնի աղոթքներում դիմել են հրեշտակներին: Նրանց ուղղված աղոթքը հետևյալն էր.

Սբ Միքայել Հրեշտակապե՛տ, աղոթի՛ր մեզ համար,

Մեր պահապան հրեշտակնե՛ր, աղոթեցե՛ք մեզ համար:

Պետք է ենթադրել, որ Լեգեոնն այսպես էր առաջնորդվում, քանի որ այն ժամանակ դեռևս հստակ պատկերացում չկար Լեգեոնի հետ հրեշտակների առնչության վերաբերյալ: Ժամանակի ընթացքում առավել ակնհայտ դարձավ հրեշտակներին դիմելու անհրաժեշտությունը, և սկսեցին գիտակցել, որ լեգեոնականները հրեշտակների լեգեոնական արշավի երկնային ուղեկիցներն են: Այս միասնությունը տարբեր կողմեր ունի: Յուրաքանչյուր լեգեոնական՝ ակտիվ կամ օժանդակ, ունի մի պահապան հրեշտակ, որն անդադար մարտնչում է նրա կողքին: Որոշ իմաստով այդ պայքարն ավելի մեծ կարևորություն ունի հրեշտակի համար, քան՝ լեգեոնականի, որովհետև հրեշտակը հստակ պատկերացում ունի, թե ինչ բաներ են վտանգված՝ Աստծո փառքը և անմահ հոգու արժեքը: Հետևաբար, հրեշտակի շահագրգռությունն ամենաուժեղն է, և նրա օգնությունը երբեք չի դադարում: Բայց մյուս բոլոր հրեշտակներն էլ նմանապես մտահոգ են այս պատերազմով: Օրինակ, բոլոր նրանք, ում համար Լեգեոնն աշխատում է, ունեն իրենց օգնական պահապան հրեշտակներ:

Ի հավելումն, երկնային բոլոր զորությունները շտապում են դեպի թատերաբեմ, որովհետև մեր ճակատամարտը մի մասն է այն հիմնական պայքարի, որը նրանք ի սկզբանե մղում են սատանայի և նրա սպասարկուների դեմ:

Հին և Նոր Կտակարաններում կարևոր տեղ է հատկացված հրեշտակներին՝ նրանց մասին մի քանի հարյուր հիշատակումներով: Նրանք ներկայացված են որպես մարդկային պատերազմի հետ զուգահեռ պայքարողներ, որոնք մարդկանց համար ունեն հատուկ պաշտպանական գործառույթ:

Նրանք միջամտում են կարևոր հանգուցակետերում: Մշտապես կրկնվում է հետևյալ արտահայտությունը. «Աստված ուղարկեց իր հրեշտակին»: Հրեշտակների բոլոր ինը դասերն ունեն որոշ տեսակի պահապան առաքելություն անհատների, վայրերի, քաղաքների, երկրների, բնության նկատմամբ, ոմանք՝ նույնիսկ իրենց ընկերակից հրեշտակների նկատմամբ: Սուրբ Գիրքը ցույց է տալիս, որ նույնիսկ հեթանոսական թագավորություններն ունեն իրենց պահապան հրեշտակները (Դան. 4:10-20, 10:13): Դասերի անվանումներն են՝ Հրեշտակներ, Հրեշտակապետներ, Քերովբեներ, Սերովբեներ, Իշխանություններ, Զորություններ, Գահեր, Առաքինություններ և Տիրապետություններ:

Հրեշտակներն օգնում են և՛ որպես ամբողջական դաս, և՛ անհատապես՝ նմանվելով օդային զորքերին՝ ցամաքային զորքերի համեմատ:

Վերջապես գիտակցվեց, որ հրեշտակներին ուղղված արդեն գոյություն ունեցող աղոթքը չէր արտահայտում հրեշտակների այդ տիեզերական պաշտպանական դերակատարությունը: Հետևաբար, որոշվեց, որ.

Ա. Այն պետք է խմբագրվի:

Բ. «Լեգեոն» բառը պետք է կապված լինի հրեշտակների հետ. մեր Տերն Ի՛նքն է օգտագործել այդ բառը հրեշտակների վերաբերյալ՝ այդպիսով Իր շուրթերով սրբացնելով այդ բառը: Երբ եկան Հիսուսին ձերբակալելու, նա ասաց. «Կարծում ես՝ չե՞մ կարող աղաչել իմ հորը, որ այստեղ այս պահին ինձ համար հասցնի հրեշտակների ավելի քան տասներկու լեգեոններ» (Մտթ. 26:53):

Գ. Մարիամի անունը պետք է ներմուծվի խնդրանքի մեջ: Նա հրեշտակների Թագուհին է: Նա իսկապես Հրեշտակային Լեգեոնի հրամանատարն է, և մեր Լեգեոնի համար նոր շնորհ կլինի Սուրբ Կույսին ողջունելն այդ խորապես նշանակալից տիտղոսով:

Այս հարցի շուրջ Լեգեոնում տևական քննարկումների արդյունքը եղավ այն, որ 1962թ. օգոստոսի 19-ին որդեգրվեց աղոթքի հետևյալ ձևը.

«Երկնային ամենայն զօրութիւննե՛ր, Մարիամի հրեշտակների Լեգէո՛ն, աղօթեցէ՛ք մեզ համար»:

Պահապան հրեշտակների տոնը կատարվում է հոկտեմբերի 2-ին:

«Տիրամոր՝ Հրեշտակների Թագուհի լինելը չպետք է ընդունել որպես միայն պատվո հասկացություն: Նրա թագավորական պաշտոնը մասնակցություն է Հիսուսի թագավորական պաշտոնին, իսկ Հիսուսը բացարձակ տիեզերական տիրապետություն ունի ամբողջ արարչագործության նկատմամբ: Աստվածաբանները դեռևս չեն բացատրել Տիրամոր թագավորությունը՝ Քրիստոս Թագավորի հետ միասին: Բայց պարզ է, որ Մարիամի թագավորությունը գործունեության սկզբունք է, և որ այս գործունեության արդյունքները հասնում են տեսանելի և անտեսանելի տիեզերքի ծայրերը: Մարիամը կառավարում է բարի հոգիներին և վերահսկում վատ հոգիներին: Նրա շնորհիվ իրականություն է դառնում մարդկային և հրեշտակային հասարակությունների անբաժանելի միությունը, որի միջոցով ամբողջ արարչագործությունը կառաջնորդվի դեպի իր ճշմարիտ նպատակը՝ Սուրբ Երրորդության փառավորումը: Մարիամի՝ Թագուհի լինելը մեզ համար մի վահան է, որովհետև մեր Մայրն ու Պաշտպանն իշխանություն ունի հրամայելու հրեշտակներին, որպեսզի մեզ օգնեն: Նրա համար դա նշանակում է Իր Որդու հետ ակտիվ գործակցություն մարդկանց նկատմամբ Սատանայի կայսրության թուլացման և կործանման համար» (Դկտ. Մայքլ Օ'Քարոլլ):

8. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉԸ

Տարօրինակ և ոչ դյուրին բացատրելի մի փաստ է, որ միայն 1949թ. դեկտեմբերի 18-ին էր, որ Սբ Հովհաննես Մկրտիչը պաշտոնապես ներառվեց Լեգեոնի հովանավոր սրբերի շարքում: Որովհետև նա ավելի սերտորեն է կապված Լեգեոնի ջերմեռանդական համակարգի հետ, քան մյուս բոլոր հովանավոր սրբերը՝ բացառությամբ Սբ Հովսեփի:

Ա. Նա բոլոր լեգեոնականների համար տիպար է, այսինքն՝ Տիրոջ Նախակարապետը, որ գնում էր Նրանից առաջ՝ պատրաստելու Նրա ճանապարհները և ուղղելու շավիղները: Նա տիպար է՝ հաստատուն զորության և իր գործի հանդեպ նվիրման, որի համար նա պատրաստ էր մեռնել և որի համար իր կյանքը տվեց:

Բ. Ավելին, նա իր գործը կատարելու համար ձևավորվեց հենց իր՝ Երանելի Կույսի կողմից, ինչպես պետք է լինի բոլոր լեգեոնականների պարագայում: Սբ Ամբրոզիուսը հայտարարում է, որ Տիրամոր՝ Եղիսաբեթի մոտ երկար ժամանակով մնալու նպատակը մանկահասակ Մեծ Մարգարեի ձևավորումն ու նշանակումն էր: Այդ ձևավորման պահը տոնակատարվում է Կատենայի մեջ, որը մեր կենտրոնական աղոթքն է՝ լեգեոնականներին հանձնարարված որպես ամենօրյա պարտականություն:

Գ. Այցելության այդ դրվագը առաջին անգամ Տիրամորը ներկայացնում է որպես Միջնորդ, իսկ Սբ Հովհաննեսին՝ որպես առաջին անձը, որ օգտվեց Նրա բարեխոսությունից: Այդ պատճառով Սբ Հովհաննեսն ի սկզբանե ներկայացվում էր որպես հատուկ հովանավոր՝ լեգեոնականների և լեգեոնականների հետ կապված բոլոր անձանց, բոլոր տեսակի այցելությունների, աշխատանքի և, հիրավի, լեգեոնական բոլոր գործողությունների, որոնք ոչ այլ ինչ են, քան Մարիամի հետ համագործակցության ջանքեր նրա միջնորդական առաքելության մեջ:

Դ. Հովհաննեսը Տիրոջ առաքելության էական բաղադրիչներից մեկն է: Այս բոլոր բաղադրիչները պետք է տեղ գտնեն որևէ համակարգում, որը ձգտում է վերարտադրել այդ առաքելությունը: Նախակարապետը միշտ անհրաժեշտություն է: Եթե նա չլիներ՝ ներկայացնելու Հիսուսին և Մարիամին, գուցե նրանք ընդհանրապես չհայտնվեին տեսադաշտում: Լեգեոնականները պետք է հասկանան Սբ Հովհաննեսի այս հատուկ տեղը և նրա նկատմամբ իրենց հավատքով ի զորու դարձնեն նրան՝ կատարելու իր առաքելությունը: «Եթե Հիսուսը մշտապես «Նա է, Ով գալիս է», ապա նմանապես Սբ Հովհաննեսն այն մեկն է, որը մշտապես նախորդում է Նրան, որովհետև Քրիստոսի պատմական Մարդեղության տնօրինությունը շարունակվում է Նրա Խորհրդավոր Մարմնի մեջ» (Դանիելու):

Ե. Սբ Հովհաննեսին դիմելու պատշաճ տեղը Եզրափակիչ աղոթքների մեջ է՝ հրեշտակներից հետո: Դրանից հետո այդ աղոթքները պատկերում են Լեգեոնը՝ դեպի առաջ մղվող արշավի մեջ, որը Սուրբ Հոգու գերիշխանության

տակ է, Ով Ինքն Իրեն ցույց է տալիս Տիրամոր միջոցով՝ որպես Կրակի Սյուն, որին աջակցում են Հրեշտակների Լեգեոնը և նրանց առաջնորդները՝ Սբ Միքայելը, Սբ Գաբրիելը և Սբ Ռաֆայելը, որոնցից առաջ գնում է նրանց առաջամարտիկը կամ նախակարապետը՝ Սբ Հովհաննեսը, որը մշտապես կատարում է իր համար նախասահմանված առաքելությունը, հետո դիմում ենք Լեգեոնի գեներալներին՝ Սբ Պետրոսին և Սբ Պողոսին:

Զ. Սբ Հովհաննես Մկրտիչն ունի երկու ծիսական տոնակատարություն. նրա ծննդյան տոնը նշվում է հունիսի 24-ին, իսկ նահատակությունը հիշատակվում է օգոստոսի 29-ին:

«Ես համոզված եմ, որ Հովհաննեսի խորհուրդը շարունակվում է կատարվել այսօրվա աշխարհում: Ով հավատում է Քրիստոս Հիսուսին, նախ Հովհաննեսի ոգին և առաքինությունները պետք է թափանցեն նրա հոգու մեջ՝ Տիրոջ համար պատրաստելու մի կատարյալ ժողովուրդ, հարթեցնելու նրա սրտի շավիղները և դյուրացնելու ճանապարհները: Մինչև այժմ Հովհաննեսի ոգին և առաքինությունները նախապատրաստում են Տիրոջ և Փրկչի գալուստը» (Որոգինես):

9. ՍԲ ՊԵՏՐՈՍԸ

«Սբ Պետրոսը՝ որպես առաքյալների իշխան, նախևառաջ հովանավորն է առաքելագործող մի կազմակերպության: Նա առաջին Պապն էր և օրինակ է ծառայում Պապերի ամբողջ պերճախոս շարքի համար, նաև՝ ներկայիս Սրբազան Քահանայապետի համար: Սբ Պետրոսին դիմելով՝ մենք դարձյալ արտահայտում ենք Լեգեոնի հավատարմությունը Հռոմին՝ մեր հավատքի կենտրոնին, հեղինակության, կարգապահության, միության աղբյուրին» (Լեգեոնի որոշումը՝ Սբ Պետրոսի անունը ներառելու խնդրական աղոթքների ցանկում):

Սբ Պետրոսի և Պողոսի տոնը կատարվում է հունիսի 29-ին:

«Ես էլ քեզ ասում եմ, որ դու վեմ ես, և այդ վեմի վրա եմ շինելու իմ Եկեղեցին, և դժոխքի ուժերը նրան չեն կարողանա հաղթել:

Քեզ եմ տալու երկնքի արքայության բանալիները. ինչ որ կապես երկրի վրա, կապված կլինի երկնքում, և ինչ որ արձակես երկրի վրա, արձակված կլինի երկնքում» (Մտթ. 16:18-19):

10. ՍԲ ՊՈՂՈՍԸ

Այն հոգին, որն ուզում է շահել այլոց, պետք է լինի օվկիանոսի պես ընդարձակ: Աշխարհը դարձի բերելու համար մարդու հոգին պետք է լինի ավելի մեծ, քան աշխարհը: Այսպիսին էր Սբ Պողոսն այն օրվանից, երբ երկնքից մի հանկարծակի լույս փայլատակեց նրա շուրջը և իր ճառագայթները տարածեց նրա հոգում և այնտեղ վառեց մի այրող ցանկություն՝ աշխարհը լցնելու Քրիստոսի անվամբ ու հավատքով: «Առաքյալ հեթանոսների»՝ այս անվան մեջ է նրա գործը: Նա ջանք թափեց առանց հոգնելու՝ մինչև որ դահճի սուրը նրա անդադրում հոգին ուղարկեց Աստծո մոտ, և ապա նրա գրվածքները շարունակեցին ապրել և մշտապես կապրեն՝ շարունակելու համար նրա առաքելությունը:

Եկեղեցու ճանապարհն է՝ միշտ աղոթքով միանալ նրան Սբ Պետրոսի հետ միասին, ինչն իրականում մի գովաբանություն է: Սա ևս պատշաճ է, որովհետև այս երկու մեծերը միասին նվիրագործում են Հռոմն իրենց մարտիրոսությամբ:

Եկեղեցին նրանց տոնը կատարում է միևնույն օրը՝ հունիսի 29-ին:

«Եթե վաստակով՝ առավել, եթե գանակոծությամբ՝ առավել ևս, եթե բանտարկությամբ՝ ավելի, քան նրանք, եթե մահվան վտանգով՝ բազում անգամ: Հրեաներից հինգ անգամ քառասունից մեկով պակաս հարված եմ կերել, երեք անգամ խարազանվել, մեկ անգամ քարկոծվել, երեք անգամ նավաբեկության ենթարկվել, մեկ ցերեկ ու մեկ գիշեր տառապել եմ ծովի անդունդներում: Բազմաթիվ ճանապարհորդություններ, վտանգներ գետերից, վտանգներ ավազակներից, վտանգներ ազգակիցներից, վտանգներ հեթանոսներից, վտանգներ քաղաքում, վտանգներ անապատում, վտանգներ ծովում, վտանգներ սուտ եղբայրներից: Բազում անգամ եղա աշխատանքների և հոգնությունների մեջ՝ հաճախ անքուն մնալով, քաղցի ու ծարավի մեջ, բազմիցս ծոմի մեջ, ցրտահար և մերկ» (Բ Կրնթ. 11:23-27):

25

ԼԵԳԵՈՆԻ ՆԿԱՐԸ

1. Այս ձեռնարկում կա Լեգեոնի նկարի վերատպությունը: Բնօրինակը նկարել է մի հոյակապ երիտասարդ իռլանդացի նկարիչ՝ որպես նվեր Լեգեոնին: Ինչպես կարելի էր սպասել այս ոգով նկարված գործից, այն չափազանց գեղեցիկ և ոգեշնչված մի նկար է, որը կարելի է հասկանալ՝ նույնիսկ նայելով մի փոքրիկ վերատպության:

2. Այդ նկարը Լեգեոնի ջերմեռանդական աշխարհայացքի մի լիակատար, ըստ էության, ապշեցնող արտացոլում է:

3. Լեգեոնական աղոթքները նկարում տեսանելի են: Սուրբ Հոգուն նվիրված խնդրանքն ու աղոթքը, Վարդարանը, որոնցից կազմված են բացման աղոթքները, պատկերված են աղավնու տեսքով, որ հովանի է լինում Մարիամին՝ հեղելով նրա վրա Սուրբ Հոգու լույսն ու աստվածային սիրո կրակը: Այս աղոթքներով Լեգեոնը պատվում է այն պահը, որը եղավ բոլոր ժամանակների առանցքային կետը: Մարիամի համաձայնությունը Աստծո Որդու Մարմնացման համար նրան դարձրեց Աստծո Մոր և Աստվածային Շնորհների Մոր նման: Այդ պատճառով Մարիամի որդիներն իրենք իրենց կապում են նրա հետ Վարդարանով՝ իրենց սրտերում ընդունելով Երանելի Պիուս Թ Պապի խոսքերը. «Ես կկարողանայի նվաճել աշխարհը, եթե ունենայի Վարդարան աղոթողների մի բանակ»:

Դարձյալ այստեղ ակնարկություն կա Հոգեգալուստի մասին, որտեղ Մարիամը Սուրբ Հոգու հեղման փոխանցող խողովակն էր, հեղման, որը կարելի է անվանել Եկեղեցու դրոշմը: Տեսանելի նշաններով Սուրբ Հոգին առաջնորդեց Եկեղեցին՝ լցնելով այն առաքելական կրակով, որը պետք է նորոգեր երկրի երեսը: «Մարիամի ամենազոր բարեխոսությո՛ւնն էր, որ նորածին Եկեղեցու համար ձեռք բերեց Աստվածային Փրկագնողի Սուրբ Հոգու այդ վիթխարի հեղումը» (MC 110): Առանց Սուրբ Կույսի՝ այդ կրակը մարդկանց սրտերում չի վառվի:

4. Կատենա աղոթքը նկարում ներկայացված է, ինչպես անունն է հուշում, որպես մի եզրագծող շղթա: Կատենայի սկզբում դրված կցուրդին իսկապես պատշաճում է, որ նկարում պատկերված է Մարիամը, Ով գալիս է առաջ՝ ինչպես ծագող առավոտ, գեղեցիկ՝ ինչպես լուսին, և ընտիր, ինչպես արեգակ՝ զարմանալի հորինված, որ դեպի մեզ է գալիս սարսափելի բանակների գնդերի պես: Իր հոնքերի վրա Մարիամը կրում է մի պայծառ աստղ, որն ընդգծում է նրան՝ որպես ճշմարիտ Առավոտյան Աստղ՝ ի սկզբանե լվացված փրկարար շնորհի ճառագայթների մեջ և ազդարարելով փրկության արշալույսը:

«Մեծացուսցէ»-ն ներկայացված է իր բացման տողով՝ Մարիամի մշտապես ներկա մտածումը, որը պատշաճ ձևով գրված է հրավառ տառերով նրա գլխի վերևում: «Մեծացուսցէ»-ն երգում է նրա խոնարհության հաղթանակի մասին: Ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա՝ ոչ պակաս ձևով, Աստծո կամքը կախված է Նազարեթի խոնարհ Կույսից, որպեսզի կարողանա հաղթանակ տանել: Մարիամի հետ միացած անձանց միջոցով Տերը շարունակում է մեծ գործեր կատարել Իր փառքի համար:

Խոսքն ու պատասխանը վերաբերում են Անարատ Հղությանը, որը Լեգեոնի առաջնակարգ ջերմեռանդությունն է և որն արտահայտված է օձի ջախջախման պատկերով: Եզրագծում գրված բառերը՝ «Թշնամություն պիտի դնեմ քո և կնոջ միջև, քո սերնդի և նրա սերնդի միջև, նա կջախջախի քո գլուխը» (Ծնն. 3:15)*, նույն իմաստն ունեն: Նկարը ցույց է տալիս այն անդադար պատերազմը, որ մղվում է Մարիամի և օձի միջև, Մարիամի զավակների և օձի սերնդի միջև, Լեգեոնի և չարի ուժերի միջև, որոնք հետ են շպրտվում ցրված և պարտված:

Կատենան աղոթքն է Մարիամի՝ Բոլոր Շնորհների Մոր, Աստվածածնի և համայն մարդկության Մոր:

Նկարի ամենավերևում Սուրբ Հոգին է՝ բոլոր բարի պարգևների տվողը, ներքևում երկրագունդն է՝ ամբողջությամբ պատված բարիներով և չարերով, հոգիների

* Լատ.՝ «Inimicitias ponam inter te et mulierem et semen tuum et semen illius; ipsum conteret caput tuum» (Ծնն. 3:15):

աշխարհների նման: Նրանց մեջտեղում Մարիամն է՝ լի շնորհներով, ամբողջությամբ սիրավառ, բարեխոսության և շնորհաբաշխման տիեզերական փոխանցողը: Բայց նախ Մարիամը կհարստացնի այն ճշմարտագույն զավակներին, որոնք Սբ Հովհաննեսի նման, հանգստացել են Հիսուսի Սրտի վրա և Մարիամին ընդունել որպես իրենց Մայրը: Եզրագծի մյուս բառերը՝ «Ո՛վ կին, ահա՛ քո որդին… Ահա՛ քո մայրը» (Հվհ. 19:26-27)*, ցույց են տալիս Մարիամի մայրությունը Գողգոթայի անասելի ցավերի մեջ:

5. Եզրափակիչ աղոթքներն արտացոլված են նկարի յուրաքանչյուր գծում: Լեգեոնը պատկերված է՝ որպես անթիվ մի բանակ, որն արշավում է պատերազմի՝ իր Թագուհու առաջնորդությամբ և կրելով նրա դրոշները, «աջ ձեռքում՝ խաչելությունը և ձախում՝ Վարդարանը, սրտերում՝ Հիսուսի և Մարիամի սուրբ անունները և Հիսուս Քրիստոսի համեստությունն ու զոհողությունները» (Սբ Լուի-Մարի դը Մոնֆոր): Լեգեոնականներն աղոթում են մի հավատքի համար, որը գերբնական կդարձնի իրենց կյանքի յուրաքանչյուր բնազդ և գործողություն և իրենց ի զորու կդարձնի համարձակվելու և անելու ամեն բան Քրիստոս Թագավորի համար: Այդ հավատքը ներկայացված է Կրակե Սյան տեսքով, որը բոլոր լեգեոնականների սրտերը հալեցնում և դարձնում է մեկ և առաջնորդում է նրանց դեպի հաղթանակ և Հավիտենական Խոստման Երկիր՝ իր ճանապարհի ընթացքում տարածելով իր աստվածային սիրո կենսատու կրակե լեզուները: Սյունը Մարիամն է, ով աշխարհը փրկեց իր հավատքով («Երանի՛ նրան, ով կհավատա» (Ղկ. 1:45)**. այս բառերը ևս գրված են եզրագծում), և ով այժմ շրջապատող խավարի միջով անսխալ կերպով առաջնորդում է նրանց, ովքեր երանի են տալիս իրեն՝ մինչև Տեր Աստծո հավիտենական մեծությունն իջնի նրանց վրա:

6. Աղոթքներն ավարտվում են լեգեոնական աշխատանքի պսակով, որ հավիտենականության անվանականչն

---

* Լատ.՝ «Mulier, ecce filius tuus: …Ecce mater tua» (Հվհ. 19:26-27):

** Լատ.՝ «Beata quae credidit» (Ղկ. 1:45):

է, երբ հավատացյալ լեգեոնականները կկանգնեն ուս ուսի տված՝ առանց որևէ մեկին դուրս թողնելու, որպեսզի ստանան իրենց անդամակցության այդ անապական պսակը:

Իսկ մինչ այդ աղոթում ենք նրանց համար, ում պատերազմն ավարտվել է, և ովքեր սպասում են փառավոր Հարությանը, և ովքեր գուցե կարիքն ունեն իրենց ընկերների բարեխոսությանը:

«Հին Կտակարանում ընթերցում ենք, թե Տերն իր ժողովրդին Եգիպտոսից առաջնորդեց դեպի Ավետյաց Երկիր՝ «Ցերեկը՝ ամպի սյան և գիշերը՝ կրակի սյան միջոցով» (Ելք 13:21): Այս շատ տպավորիչ սյունը՝ մերթ ամպի, մերթ կրակի, պատկերում էր Մարիամին, և այն բազմաթիվ գործառույթները, որոնք նա կատարում է մեզ համար» (Սբ Ալֆոնսուս Լիգուորացի):

26

ՏԵՍՍԵՐԱ

«Տեսսերա» կոչվող թերթոնը, որի մեջ պարունակվում են Լեգեոնի աղոթքները, պետք տրամադրվի յուրաքանչյուր ակտիվ և օժանդակ անդամի:

Լատիներենում «Տեսսերա» բառը նշանակում է տարբերիչ նշան, որը տրվում էր ընկերներին կամ նրանց հետևորդներին, որպեսզի այդ նշանի միջոցով կարողանային ճանաչել միմյանց: Զինվորականության մեջ այդ իմաստով օգտագործվում էր մի քառակուսի տախտակ, որի վրա գրվում էր տարբերիչ բառը և տրվում լեգեոնական զինվորներին:

Մարիամի Լեգեոնը «Տեսսերա» բառն օգտագործում է մի թերթոնի համար, որում պարունակվում են Լեգեոնի աղոթքներն և պատկերը: Այս թերթոնը ևս կրում է հետևյալ գաղափարները. ա. Լեգեոնի համաշխարհային տարածումը, բ. Լեգեոնի բնօրինակ տարբերանշանի հաստատումը, որը Լեգեոնի աղոթքների ամբողջությունն է, գ. տարբեր վայրերում գտնվող բոլոր լեգեոնականների եղբայրության և միասնության նշանը: Այնպես է ստացվել, որ

համաշխարհայնության այդ միևնույն գաղափարն ընկած է նաև շատ այլ լատիներեն հասկացությունների կիրառման հիմքում, որոնք օգտագործվում են Լեգեոնի համակարգը բնորոշելու համար: Այդ հասկացություններն այնքան են օգնում փոխադարձ հաղորդակցությանը, որ անփոխարինելի են: Այն առարկությունը, թե այդ հասկացություններն օտար մարմին են Լեգեոնում, անընդունելի է: Դրանք այնքան են արմատավորվել, որ դարձել են լեգեոնական բառեր: Լեգեոնի համար մեծ անարդարություն կլինի, եթե Լեգեոնին զրկեն այդ օգտակար և առանձնահատուկ փետուրներից:

«Այս աշխարհում միասին ճամփորդելով՝ մենք բոլորս այնքա՛ն թույլ ենք, որ փոխադարձաբար կարիքն ունենք մեր եղբայրակցի աջակից ձեռքին՝ ճանապարհին չթուլանալու համար: Բայց փրկության և շնորհի համար Աստված հատկապես պահանջում է, որ մենք միասնական լինենք: Աղոթքը մի կապ է, որ այսպիսով միացնում է բոլոր սրտերն ու ձայները՝ մեկ դարձնելով դրանք: Մեր ուժը միասնական աղոթքի մեջ է. միայն դա կարող է մեզ դարձնել անխոցելի: Եկե՛ք, ուրեմն, միավորենք մեր աղոթքները, մեր ջանքերը և ցանկությունները, որոնք բոլորն էլ, ինքնին զորավոր լինելով, իրենց միության մեջ կլինեն անդիմադրելի» (Ռամիեր):

27

VEXILLUM LEGIONIS

ԼԵԳԵՈՆԻ ԴՐՈՇԸ

Vexillum Legionis-ը հռոմեական Լեգեոնի դրոշի որդեգրումն է: Հռոմեական դրոշի վերևում գտնվող արծիվը փոխարինվել է աղավնիով, որը Սուրբ Հոգու խորհրդանշանն է: Աղավնուց ներքև, խաչաձև տախտակի վրա գրված է «Legio Mariae» (Մարիամի Լեգեոն): Խաչաձև տախտակը

միանում է ձողին (միացման տեղում պատկերված է մի վարդ և մի շուշան) մի օվալաձև շրջանակով, որի վրա պատկերված է Անարատ Հղացյալը (Հրաշագործ Մեդալիոնը): Ձողը կանգնած է մի գլոբուսի վրա, որը, սեղանի վրա դրվելու դեպքում, հիմնված է մի քառակուսի պատվանդանի վրա: Այս ամբողջ պատկերը փոխանցում է մի գաղափար, թե աշխարհը պետք է նվաճվի Սուրբ Հոգու կողմից, Ով գործում է Մարիամի և նրա զավակների միջոցով:

Ա. Վեքսիլլումի պատկերը պետք է լինի Լեգեոնի պաշտոնական աշխատանքային թերթիկի վրա:

Բ. Վեքսիլլումի մեկ օրինակ պետք է դրված լինի սեղանին՝ Սուրբ Կույսի արձանիկից 15 սմ դեպի առաջ և 15 սմ դեպի աջ: Սեղանի համար պատրաստված օրինակը սովորաբար լինում է 32 սմ բարձրությամբ՝ ներառյալ պատվանդանը: Վեքսիլլումի լուսանկարը կարելի է գտնել այս ձեռնարկի 493-րդ էջում: Երկաթե և օնիքսե Վեքսիլլումներ կարելի է ձեռք բերել Կոնսիլիումից:

Գ. Վեքսիլլումի մեծ օրինակը (ինչպես տրված է լուսանկարում՝ այս ձեռնարկի մեջ, էջ՝ 494) հարկավոր կլինի թափորների և Ասիեսի ժամանակ օգտագործելու համար: Այն պետք է լինի մոտ 6,5 ոտնաչափ կամ 2 մ բարձրությամբ, որից 2 ոտնաչափը կամ 60 սմ-ը պետք է լինի գլոբուսից մինչև օվալաձև հատվածի ձողի երկարությունը: Մնացած մասը պետք է պատրաստվի այստեղ ներկայացված օրինակով: Ձողը դրվում է մի պատվանդանի մեջ (որը Վեքսիլլումի մաս չէ), որպեսզի ուղիղ կանգնի Ասիեսի ժամանակ կամ երբ չի օգտագործվում:

Այս մեծ Վեքսիլլումը չի տրամադրվում Կոնսիլիումի կողմից, բայց այն կարող է հեշտությամբ պատրաստվել կամ նկարվել տեղերում: Այն խորհուրդները կամ պրեզիդիումները, որոնք փափագում են ավելի գեղեցիկ ձևով պատրաստել այն, կարող են օգտագործել տարբեր նյութեր և ոչ միայն փայտ: Վեքսիլլումի պատկերման արվեստի համար կան լայն հնարավորություններ:

Դ. Սեղանի Վեքսիլլումն ունի հեղինակային իրավունք և կարող է վերարտադրվել միայն Կոնսիլիումի հատուկ թույլտվությամբ:

«Մարիամի Լեգեոնի դրոշն այնքա՛ն գեղեցիկ է» (Պիուս ԺԲ Քահանայապետ):

VEXILLUM LEGIONIS
Լեգեոնի դրոշը

«Սբ Լուի-Մարի դը Մոնֆորը գերազանց հստակությամբ հասկացել է, որ երբեք չի կարելի Սուրբ Կույսին անջատել Սուրբ Հոգուց: Մարիամի Լեգեոնի ուսմունքն այդ միության վերաբերյալ ներթափանցված է ամբողջական համոզմամբ և այդ պատճառով անկեղծորեն ձգտում է առավել խոր գիտելիքներ ունենալ Սուրբ Հոգու վարդապետության մասին» (Լորենտին):

28

ԼԵԳԵՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

1. ԲՈԼՈՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Լեգեոնի տեղական և կենտրոնական կառավարումը պետք է իրականացվի Լեգեոնի խորհուրդների կողմից, որոնց պարտականությունն իրենց բաժին ոլորտներում պետք է լինի միություն հաստատելը, Մարիամի Լեգեոնի սկզբնական իդեալները պահպանելը, Լեգեոնի ոգու, կանոնների և գործունեության ամբողջականությունը պաշտպանելը, ինչպես ներկայացված է Լեգեոնի պաշտոնական ձեռնարկում, և կազմակերպությունը տարածելը:

Որևէ վայրում Լեգեոնը կլինի այնքան լավը, որքան այս խորհուրդները կկամենան այն դարձնել:

2. Բոլոր խորհուրդները պետք է ունենան կանոնավոր հաճախակի ժողովներ, որոնք պետք է կազմակերպվեն, որպես կանոն, ոչ ուշ, քան նվազագույնը ամիսը մեկ անգամ:

3. Լեգեոնի որևէ խորհրդի աղոթքները, կառուցվածքը և կարգը պետք է լինի նույնը, ինչ հրահանգված է պրեզիդիումի համար, բացառությամբ՝ ա. տևողության սահմանափակման, բ. կարիք չկա ընթերցել մնայուն հրահանգները, գ. գաղտնի նվիրատվությունը պետք է լինի ըստ ցանկության:

4. Յուրաքանչյուր խորհրդի առաջնային պարտականությունը պետք է լինի հավատարմությունը՝ հաջորդ ավելի բարձր խորհրդին:

5. Ոչ մի պրեզիդիում կամ խորհուրդ չպետք է հիմնվի՝ առանց հաջորդ ավելի բարձր խորհրդի կամ Կոնսիլիում Լեգիոնիսի պաշտոնական թույլտվության և համապատասխան եկեղեցական իշխանության հավանության:

6. Գոյություն ունեցող պրեզիդիումի կամ խորհրդի լուծարման իրավունքը բացառապես վերապահված է միայն թեմի եպիսկոպոսին և Կոնսիլիում Լեգիոնիսին:

7. Յուրաքանչյուր խորհուրդ պետք է ունենա մի քահանա՝ որպես հոգևոր առաջնորդ, որը պետք է նշանակվի համապատասխան եկեղեցական իշխանության կողմից և պետք է զբաղեցնի այդ պաշտոնն այդ նույն իշխանության հայեցողությամբ: Նա ունի վճռորոշ իշխանություն բոլոր բարոյական և կրոնական հարցերում, որոնք բարձրացվում են խորհուրդների ժողովների ժամանակ, և նաև ունի կասեցնելու իրավունք բոլոր այն գործողությունների նկատմամբ, որոնց մասին այդպիսի որոշում կկայացնի նրան նշանակող հոգևոր իշխանությունը:

Հոգևոր առաջնորդը դասվում է խորհրդի սպաների շարքում և պետք է ունենա ամբողջական լեգեոնական իշխանություն:

8. Յուրաքանչյուր խորհուրդ պետք է նաև ունենա նախագահ, փոխնախագահ, քարտուղար և գանձապահ և այնպիսի այլ սպաներ, որոնց նշանակումն անհրաժեշտ համարի հաջորդ ավելի բարձր խորհուրդը: Նրանք պետք է ընտրվեն երեք տարվա ծառայության համար և կարող են վերընտրվել նույն պաշտոններում ևս երեք տարի ծառայելու համար (այսինքն՝ ընդհանուր վեց տարի): Այն լեգեոնականը, որի պաշտոնավարման ժամկետը լրացել է, չպետք է շարունակի կատարել այդ պաշտոնի պարտականությունները:

Երբ որևէ սպա որևէ պատճառով չի լրացնում իր պաշտոնավարման երեք տարին, ապա պետք է համարել, որ նա պաշտոնավարել է երեք տարի՝ այն օրը, երբ նա թողել է իր պաշտոնը: Դեռևս երեք տարին չլրացած ժամկետում նա կարող է նույն պաշտոնում վերընտրվել երկրորդ եռամյա պաշտոնավարման համար: Եթե որևէ սպա ամբողջությամբ չի լրացրել իր եռամյա պաշտոնավարման երկրորդ շրջանը, ապա պետք է համարել, որ նա լրացրել է իր պաշտոնավարման վեց տարիները՝ այն օրը, երբ թողել է պաշտոնը:

Եթե որևէ սպա լրացրել է իր պաշտոնավարման երկրորդ շրջանը, ապա պետք է անցնի եռամյա ընդմիջման մի շրջան, որպեսզի իրավունք ունենա վերընտրվելու նույն խորհրդի նույն պաշտոնում: Այդ ընդմիջման շրջանը չի պահանջվում, եթե խոսքը վերաբերում է նույն անձին նույն խորհրդում մեկ

այլ պաշտոնում ընտրվելուն կամ մեկ այլ խորհրդում որևէ պաշտոնում ընտրվելուն:

Յուրաքանչյուր խորհրդի սպա պետք է լինի որևէ պրեզիդիումի ակտիվ անդամ և ենթարկվի մնայուն հրահանգներին:

9. Որևէ խորհրդի կարգավիճակի բարձրացումը (օրինակ, եթե Կուրիան դառնում է Կոմիցիում և այլն) չպետք է ազդի գործող սպաների պաշտոնավարման ժամկետների վրա:

10. Խորհրդի սպաները պետք է ընտրվեն խորհրդի սովորական ժողովի ընթացքում խորհրդի անդամների կողմից (այսինքն՝ խորհրդի հետ ուղղակիորեն կապված պրեզիդիումների սպաների կողմից, ուղղակիորեն կապված խորհուրդների սպաների կողմից կամ խորհրդի ցանկացած ընտրված սպաների կողմից), որոնք ներկա են: Յուրաքանչյուր լեգեոնական իրավունք ունի այս ձևով ընտրվելու: Եթե ընտրվում է և եթե այդ խորհրդի անդամ չէ, նա դառնում է այդ խորհրդի անդամ՝ ի պաշտոնե, Սպաների բոլոր ընտրությունները պետք է ենթարկվեն վավերացման՝ հաջորդ ավելի բարձր խորհրդի կողմից, բայց մինչև վավերացվելը, ընտրված անձինք կարող են կատարել իրենց պաշտոնական պարտականությունները:

11. Բոլոր անդամները պետք է տեղեկացվեն առաջադրված թեկնածուների և ընտրության կայացման վերաբերյալ, եթե հնարավոր է, ընտրությանը նախորդող ժողովի ժամանակ: Ցանկալի է, որ թեկնածուները տեղեկացվեն իրենց առաջարկվող պաշտոնների պարտականություններին:

12. Թույլատրելի է, իհարկե, պատշաճ զսպվածությամբ, մեկնաբանություններ անել թեկնածուների համապատասխանության վերաբերյալ: Որևէ խորհրդի սպաներին թույլատրվում է, եթե բոլորը համաձայն են որևէ թեկնածուի համապատասխանության վերաբերյալ, հայտարարել, որ նրանք՝ որպես կառույց, երաշխավորում են այդ թեկնածուին: Բայց այդ երաշխավորությունը չպետք է գործի ընդդեմ այլ թեկնածուների առաջադրման կամ ընտրության ամբողջական գործընթացի:

13. Ընտրությունը պետք է կատարվի գաղտնի քվեարկությամբ: Այդպիսի ընտրության կարգը պետք է լինի հետևյալը.

Յուրաքանչյուր պաշտոնի ընտրությունը պետք է լինի առանձին՝ նվազման կարգով: Յուրաքանչյուր առաջադրված անուն պետք է ներկայացվի պաշտոնապես և կրկնվի: Եթե միայն մեկ անուն առաջադրվի, իհարկե, քվեարկության կարիք չկա: Եթե երկու կամ ավելի անուններ են առաջարկվում և կրկնվում, ապա պետք է քվեարկություն անցկացվի: Յուրաքանչյուր անդամի (ներառյալ հոգևոր առաջնորդներին), որը ներկա է և իրավունք ունի քվեարկելու, տրվում է քվեարկության թերթիկ: Այս վերջին պահանջին պետք է ուշադիր լինել. միայն խորհրդի անդամներն իրավունք ունեն քվեարկելու: Լրացվելուց հետո քվեաթերթիկները պետք է զգուշությամբ ծալվեն և հավաքվեն վերահսկողների կողմից: Քվեարկողի անունը չպետք է հայտնվի քվեաթերթիկի վրա:

Եթե հաշվարկը ցույց է տալիս, որ թեկնածուներից մեկը հավաքել է ձայների պարզ մեծամասնությունը, այսինքն՝ բոլոր մյուս թեկնածուների հավաքած ձայների հանրագումարից մեծ թիվը, ապա այդ թեկնածուն պետք է հայտարարվի ընտրված: Իսկ եթե թեկնածուներից ոչ մեկը չի հավաքել ձայների պարզ մեծամասնությունը, ապա քվեարկության արդյունքները պետք է ընթերցվեն բարձրաձայն, հետո պետք է դարձյալ քվեարկություն անցկացվի նույն թեկնածուների համար: Եթե այս երկրորդ քվեարկությամբ էլ ոչ մեկը չհավաքի ձայների պարզ մեծամասնությունը, ապա ամենաքիչ քվեներ հավաքած թեկնածուն պետք է դուրս գա, իսկ մնացած թեկնածուների համար պետք է դարձյալ քվեարկություն անցկացվի: Եթե այս երրորդ քվեարկությունն էլ անհաջող լինի, ապա դարձյալ պետք է հաջորդականորեն կիրառել ամենաքիչ քվեներ հավաքած թեկնածուների հեռացման միջոցը՝ այնքան ժամանակ, մինչև թեկնածուներից մեկը հավաքի քվեների անհրաժեշտ պարզ մեծամասնությունը:

Այն փաստը, որ ընտրությունը կատարվում է հոգևոր կազմակերպության պաշտոնյաների համար, չի կարող

արդարացնել պատահական մեթոդների կիրառումը: Ընտրությունները պետք է կազմակերպել հստակ և պատշաճ ձևով և պահելով անհատական քվեաթերթիկի գաղտնիության սկզբունքը:

Անհրաժեշտ է, որ կատարվի ընտրությունների լիակատար արձանագրություն՝ ներառյալ թեկնածություններն առաջադրողների և երկրորդողների և յուրաքանչյուր թեկնածուի ստացած քվեների թվերը (եթե կան մեկից ավելի թեկնածուներ), որը պետք է ներառվի ժողովի արձանագրության մեջ:

14. Հաջորդ ավելի բարձր խորհրդի մոտ պրեզիդիումի կամ խորհրդի ներկայացուցիչները պետք է լինեն դրա սպաները:

15. Փորձը ցույց է տվել, որ առավել բարձր աստիճանի խորհրդի համար նամակագրողների նշանակումը լավագույն ձևն է՝ իր հետ կապված հեռավոր խորհուրդներին վերահսկելուն ուղղված իր գործառույթը կատարելու համար: Նամակագիրը կանոնավոր կապ է պահում խորհրդի հետ և ամեն ամիս ստացված արձանագրություններից պատրաստում է մի զեկույց՝ ավելի բարձր խորհրդի ժողովներին ներկայացնելու համար, երբ պահանջվի: Նա հաճախում է ավելի բարձր խորհուրդների ժողովներին և մասնակցում է ժողովական գործընթացներին, բայց քվեարկելու իրավունք կունենա՝ միայն երբ ընտրվի որպես ավելի բարձր խորհրդի անդամ:

16. Խորհրդի թույլտվությամբ այլ անձինք, անկախ նրանից՝ Լեգեոնի անդամ են, թե ոչ, կարող են հաճախել խորհրդի ժողովներին՝ որպես այցելուներ, բայց չեն կարող քվեարկել ժողովում: Այդպիսի անձինք պետք է պահեն ժողովի որոշ հարցերի գաղտնիության սկզբունքը:

17. Լեգեոնի խորհուրդներն են՝ Կուրիան, Կոմիցիումը, Ռեգիան, Սենատուսը և Լեգեոնի Կոնսիլիումը և այլ խորհուրդներ, որոնք կարող են հաստատվել ըստ կանոնակարգի:

18. Այդ տարբեր խորհուրդների լատիներեն անվանումները շատ համապատասխան են այն գործառույթներին, որոնք այդ խորհուրդները կատարում են:

Լեգեոնում Մարիամը թագուհի է: Նա՛ է, որ իր լեգեոնական բանակները կանչում է փառապանծ պատերազմի, հրամայում է նրանց պատերազմի դաշտում, ոգեշնչում և անձամբ առաջնորդում նրանց դեպի հաղթանակ: Բնական է, որ Թագուհուն տեսանելիորեն ներկայացնում է հատուկ խորհուրդը՝ «Կոնսիլիումը», որը մասնակցում է Տիրամոր կողմից բոլոր այլ կառավարող մարմինների վերահսկմանը:

Շրջանային խորհուրդներն ըստ էության ներկայացուցչական մարմիններ են, իսկ ավելի բարձր խորհուրդները՝ ավելի քիչ շափով, քանի որ գործնականում անհնարին է նրանց ամբողջական մասնակցությունը ընդարձակ տարածքները ներկայացնող կենտրոնական խորհուրդներին: Այսպիսով, «Կուրիա», «Կոմիցիում», «Ռեգիա» և «Սենատուս» տիտղոսներն արտահայտում են այդ համապատասխան մարմինների բնույթը և պատշաճում են այն տարածքներին, որտեղ ծառայում են լեգեոնականները:

19. Ավելի բարձր խորհուրդը կարող է իր մասնահատուկ գործառույթների մեջ ներառել նաև առավել ցածր խորհրդի գործառույթները: Օրինակ՝ Սենատուսը կարող է գործել նաև որպես Կուրիա: Գործառույթների այս միավորումը կարող է առավելություն լինել՝ հետևյալ պատճառներով.

Ա. Սովորաբար նույն անձինք են, որոնք կառավարում են և՛ առավել բարձր խորհուրդը, և՛ շրջանային խորհուրդը: Ավելի արդյունավետ կլինի լեգեոնականների համար, եթե երկու ժողովի փոխարեն մեկ ժողով անեն՝ երկու նպատակներով:

Բ. Բայց կա նաև առավել կարևոր մի նկատառում: Առավել բարձր խորհուրդը սովորաբար ներկայացնում է ընդարձակ տարածք, հետևաբար, հնարավոր է, որ անհնարին լինի ապահովել այդ խորհրդի կանոնավոր ժողովներին անդամների ամբողջական մասնակցությունը: Հետևանքում ամենաազնիվ լեգեոնականների մի փոքրիկ խմբի ուսերին

կդրվի մի ծանր պարտականություն և լայնածավալ աշխատանք: Անխուսափելիորեն, աշխատանքի մեծ մասը կկատարվի անտարբերությամբ կամ չի կատարվի, ինչը լրջորեն կվնասի Լեգեոնին:

Առավել բարձր խորհուրդների գործառույթների միավորումը ցածր խորհուրդների գործառույթների հետ կապահովի անդամների առավել հաճախակի և մշտական ներկայությունը: Այդպիսով, անդամները ոչ միայն կկատարեն առավել ցածր խորհրդում իրենց պարտականությունները, այլև կհետաքրքրվեն և կսովորեն առավել բարձր խորհրդի աշխատանքը: Հետագայում հնարավոր կլինի նրանց ընդգրկել առավել բարձր խորհրդի՝ համակողմանիորեն կարևոր վերահսկողության, ընդարձակման և պաշտոնեական աշխատանքում:

Կարելի է առարկել, թե պետք չէ շրջանային խորհրդին օժտել ընդարձակ տարածքի կառավարման այդպիսի լայն իրավասությամբ: Ճիշտ չէ, որովհետև այդ ցածր խորհուրդը միջուկն է առավել բարձր խորհրդի, որը հարմար է շրջանին: Բոլոր խորհուրդների ներկայացուցիչներն ունեն ժողովներին հաճախելու պարտականությունը և, անկասկած, գիտակցաբար կատարում են դա իրենց լավագույն կարողությունների համաձայն: Առաջարկվող այլընտրանքն այն է, որ առավել բարձր խորհուրդը պետք է գործի առանձին՝ բավարարվելով, ասենք, տարվա մեջ չորս ժողով գումարելով: Այսպիսով հնարավոր կլինի ապահովել լայն ներկայացուցչական մասնակցություն: Թեև այսպիսի առաջարկը, ենթադրաբար, ներկայացուցչական կառավարման օգտին է, բայց իրականում այդպես չէ: Որովհետև ժողովների միջև երկարատև ընդմիջումների ընթացքում այդ խորհուրդն իր գործառույթների կատարումը պետք է անհրաժեշտաբար թողնի իր սպաների ուսերին: Այդպիսով, այդ խորհուրդը միայն անունով կկատարի իր կառավարման գործառույթը: Որպես հետևանք, այդ խորհրդի անդամները շուտով կկորցնեն պատասխանատվության զգացումը և խորհրդի աշխատանքի հանդեպ ամբողջ հետաքրքրությունը:

Ավելին, մի մարմին, որը ժողով է գումարում այդքան հազվադեպ, ավելի շատ կնմանվի Կոնգրեսի, քան թե

խորհրդի: Այն չի ունենա կառավարման որակներ, որոնցից ամենակարևորը շարունակականությունն է և վարչական աշխատանքին և դրա խնդիրներին մտովի մոտ լինելը:

20. Յուրաքանչյուր լեգեոնական իրավունք ունի առանձին կապվել Կուրիայի կամ Լեգեոնի որևէ այլ ավելի բարձր խորհրդի հետ: Այս հաղորդակցության հիման վրա որևէ գործընթաց ձեռնարկելիս խորհուրդը պետք է վարվի շրջահայացությամբ և, իհարկե, պատշաճ հարգանքով Լեգեոնի առավել ցածր մարմնի նկատմամբ: Կարելի է առարկել, թե առավել բարձր մարմինների հետ հաղորդակցման սովորական միջոցները շրջանցելը, այսինքն՝ անմիջապես տեղական մարմնի՝ պրեզիդիումի կամ այլ խորհրդի միջոցով առավել բարձր խորհրդի հաղորդակցվելը շրջանցելը կլինի անհավատարմության քայլ: Բայց այդպես չէ: Որովհետև պետք է ընդունենք այն փաստը, որ սպաները երբեմն առավել բարձր մարմիններից թաքցնում են բաներ, որոնց մասին է պետք է հաղորդեին, այնպես որ, եթե տեղեկատվության որևէ այլ ճանապարհ չլիներ, այդ առավել բարձր մարմինները զրկված կլինեին տեղեկացված լինելու հնարավորությունից: Յուրաքանչյուր խորհուրդ իրավունք ունի (և առանց որի՝ այն չէր կարողանա պատշաճ ձևով գործել) իմանալու, թե ինչ է իրականում տեղի ունենում իրեն հանձնված ոլորտում, և այս հիմնական իրավունքը պետք է երաշխավորվի:

21. Հաջորդ առավել բարձր խորհրդի ֆինանսական միջոցներին աջակցելու պարտականությունը դրված է յուրաքանչյուր լեգեոնական խորհրդի վրա: Այս առնչությամբ տե՛ս 34-րդ և 35-րդ Գլուխները:

22. Լեգեոնական խորհրդի էությունն իր գործերի և խնդիրների ազնիվ և ազատ քննարկումն է: Այն պարզապես վերահսկող և որոշում կայացնող մարմին չէ, այլ դպրոց սպաների համար: Բայց ինչպե՞ս կարող են նրանք կրթվել, եթե չլինեն քննարկումներ, լեգեոնական սկզբունքների և իդեալների պարզաբանումներ: Ավելին, այդ քննարկումը պետք է լինի բոլորի մասնակցությամբ: Ոչ մի դեպքում որևէ խորհուրդ չպետք է նմանվի թատրոնի, որտեղ մի փոքրիկ խումբ ներկայացում է տալիս լուռ լսարանի առջև: Խորհուրդը լիարժեք գործում է միայն այն ժամանակ, երբ բոլոր

անդամներն են մասնակցում: Եթե որևէ անդամ ակտիվորեն չի մասնակցում խորհրդին, ապա խորհուրդը լիարժեք չի գործում: Եթե որևէ անդամ ակտիվորեն չի մասնակցում խորհրդին, ապա նա չի գործում խորհրդում: Լսելով՝ նա գուցե ինչ-որ բան ստանում է խորհրդից, բայց ոչինչ չի տալիս: Նա, իրականում, կարող է ոչինչ չստանալ այն հոգեբանական պատճառով, որ չեզոքությունը ծանձրացնում է հիշողությունը: Խորհրդի մշտապես լուռ անդամը նման է մարդկային ուղեղի և/կամ մարմնի չեզոք բջջին, որը չի տալիս այն, ինչ պետք է տա, որը շեղվում է իր նպատակից, և որը հնարավոր վտանգ է ներկայացնում մարդու համար: Տխուր կլինի, եթե որևէ մեկը այդպիսի վտանգ ներկայացնի լեգեոնական մարմնի համար, որին այդքա՛ն ցանկանում է ծառայել: Անգործությունն այնտեղ, ուր ակտիվությունը կենսական անհրաժեշտություն է, նման է ապականության, իսկ ապականությունը տարածվելու հակում ունի:

Հետևաբար, որպես սկզբունքի հարց, ոչ մի անդամ չպետք է անգործ լինի, այլ պետք է իր ամբողջական նպաստը բերի մարմնի կյանքին՝ ոչ թե պարզապես ներկա լինելով և լսելով, այլ նաև խոսելով: Ծիծաղելի է ասել, բայց պետք է լրջորեն ընդգծել, որ յուրաքանչյուր անդամ գոնե տարվա մեջ մեկ անգամ պետք է խոսի: Որոշ ամաչկոտ անձանց համար շատ դժվար է խոսելու մասին մտածելն անգամ: Բայց նրանք պետք է հաղթահարեն իրենց դժկամությունը և մի քիչ դրսևորեն այն քաջությունը, որը Լեգեոնն ակնկալում է բոլոր իրավիճակներում:

Անվիճելի առարկություն է այն, որ բոլորը չեն կարող տեղավորվել ժամանակի մեջ և խոսել: Բայց եկե՛ք այդ խնդրի մասին խոսենք, երբ այն ի հայտ գա: Սովորաբար խնդիրը ճիշտ հակառակն է. այսինքն՝ ոչ պատշաճ մասնակցությունը, երբ հիմնականում խոսում են մի խումբ ծանրաբեռնված մշտական խոսողներ: Երբեմն մյուսների լռությունը քողարկվում է քչերի պերճախոսությամբ: Շատ ավելի հաճախ նախագահը, չափազանց շատ խոսելով, ճնշում է բոլոր մյուսներին: Պետք է խուսափել, երբ մեկի ձայնը լռեցնում է բոլորի ձայնը: Երբեմն նախագահը սրա համար ներողություն է խնդրում՝ ասելով, թե եթե ինքը չխոսի, մեռելային

լռություն կտիրի: Գուցե ճիշտ է, բայց նա չպետք է վախենա լուռ դադարից: Այդ լռությունը ամենապերճախոս հրավերքը կլինի անդամների համար՝ խորհուրդը կենդանացնելու համար իրենց խոսքով: Ամենաերկյուղածների համար դա մի վերահաստատում կլինի առ այն, որ հիմա խոսելու իրենց հերթն է, և իրենց խոսքով չեն խանգարի ոչ մեկին՝ ասելու ինչ-որ բան:

Նախագահի հաստատված քաղաքականությունը պետք է լինի՝ չասել ոչ մի անտեղի բառ: Նա պետք է ժողովի կառավարումը վերլուծի այս տեսանկյունից.

23. Օգնել ժողովին, չխոսել՝ մարտահրավեր նետելով, հարցադրում չանել՝ առանց պատասխանի համար մի գաղափար առաջարկելու, չխոսել դժվարության մասին՝ առանց ջանալու հաղթահարել այն: Պարզապես բացասական բաներ խոսելը նշանակում է միայն մի խղճուկ քայլ կատարել այդ քայքայող լռությունից դուրս գալու:

24. Օգնել՝ հաղթելու համար, և ոչ թե տապալել. սա պետք է լինի ամեն տեսակ լեգեոնական ժողովի առանցքային սկզբունքը: Աճապարանքով որոշում պարտադրելը կարող է երկու կողմերին դարձնել փոքրամասնություն և հաղթող մեծամասնություն՝ նյարդայնացած զգացումներով և կարծրացած տարբերություններով: Մյուս կողմից, այն որոշումները, որոնք կայացվել են համբերատար ուսումնասիրությունից և կարծիքների բավարար համադրությունից հետո, կընդունվեն բոլորի կողմից և այնպիսի ոգով, որ պարտվողը շահում է իր պարտությամբ, և հաղթողը չի կորցնում իր հաղթանակով:

Ուրեմն, երբ կարծիքների տարբերություն կա, նրանք, ովքեր ակնհայտորեն մեծամասնություն են, պետք է շատ համբերատար լինեն: Նրանք կարող են սխալվել, իսկ դա շատ վատ հետևանքներ կունենա, եթե նրանց դիրքորոշումը հաղթի: Եթե հնարավոր է, որոշման ընդունումը պետք է հետաձգվի այլ ժողովի համար, և գուցե նորից ու նորից հետաձգվի, որպեսզի միշտ ուսումնասիրվի: Անդամները պետք է ծանոթանան հարցի բոլոր կողմերին և սովորեն աղոթել՝ լուսավորվելու համար: Բոլորը պետք է հասկանան, որ սեղանին դրված է ոչ թե որևէ կարծիքի հաղթելը կամ

պարտվելը, այլ Աստծո կամքը խոնարհությամբ հասկանալը: Հետո բոլորը կհասկանան, որ միասնական դիրքորոշում է ձևավորվել:

25. Եթե պրեզիդիումն ուզում է եռանդուն կերպով պաշտպանել ներդաշնակությունը, երբ երբեմն կան կարծիքների տարբերություններ, ինչի՞ց պետք է զգուշանալ խորհուրդների մեջ, որովհետև.

Ա. Այդտեղ անդամները շատ վարժված չեն միասին աշխատելու:

Բ. Կարծիքների տարբերությունները շատ են, իսկ խորհուրդների գլխավոր գործառույթներից մեկը այդպիսի տարբերությունները համաձայնության մեջ դնելն է: Նոր աշխատանքների մասին խոսելը, բարձր չափորոշիչներին ձգտելը, կարգապահական առաջնահերթություններն ընդհանրապես, թերությունների քննարկումները՝ այս ամենն անհրաժեշտաբար միտված են կարծիքների տարբերություններ ձևավորելուն, որոնք կարող են զարգանալ տհաճ ձևով:

Գ. Երբ անդամները թվով շատ են, նրանց մեջ հեշտությամբ կարելի է գտնել փոքրաթիվ անձանց, որոնք, թեև կարող են լինել գերազանց աշխատողներ, բայց այն տեսակն են, որոնց ընդհանրապես անվանում են «տհաճ և տարօրինակ մարդիկ»: Այսպիսի անձինք մյուսների վրա թողնում են շատ տխուր ազդեցություն: Նրանք իրենց աշխատանքային կարողություններով կարող են ստեղծել վիճաբանության մթնոլորտ, որի հետևանքը տհաճությունն է: Սա կարող է հանգեցնել նրան, որ այն մարմինը, որը պետք է լիներ տիպար և օրինակ՝ սովորելու եղբայրասիրություն և աշխատելու մեթոդներ, վատ օրինակ է տալիս բոլոր լեգեոնականներին: Սիրտը սկսում է թթու մղել Լեգեոնի արյան շրջանառության մեջ:

Դ. Շատ հաճախ գործում է կեղծ հավատարմության երևույթը, երբ մեկն ընդդիմանում է իր տեղական կամ ավելի բարձր խորհրդին և մեղադրում նրան սեփական իրավասությունները չարաշահելու կամ անպատշաճ գործելու մեջ (ո՛հ, որքա՛ն հեշտությամբ են բողոքում և ընդունելության արժանանում):

Ե. «Մարդիկ երբեք մեծ թվերով չեն միավորվում, բայց կիրքը, ինքնակամությունը, հպարտությունը և անհավատությունը, որոնք գուցե շատ կամ քիչ չափով քնած են նրանց մեջ, կրակի նման բռնկվում են և դառնում միասնության շաղախ: Նույնիսկ երբ հավատքը գոյություն ունի ամբողջ ժողովրդի մեջ, նույնիսկ երբ կրոնավորները համախմբվում են կրոնական նպատակներով, երբ նրանք կազմավորվում են որպես մեկ գործող մարմին, շուտով դրսևորում են իրենց մարդկային բնության ի բնե թուլությունը և իրենց ոգով ու վարքագծով, իրենց խոստումներով և գործերով լրջորեն հակասում են քրիստոնեական պարզությանը և ուղղամտությանը: Սրբազան գրողներն «աշխարհ» ասելով՝ նկատի ունեն սա, և ահա՛ թե ինչու են մեզ զգուշացնում դրանից, և այդ մասին նրանց մեկնաբանությունները՝ համապատասխան չափաբաժնով, վերաբերում են մարդկանց բոլոր հավաքներին և խմբավորումներին՝ բարձր և ցածր, ազգային և մասնագիտական, աշխարհիկ և եկեղեցական» (Երանելի Ջոն Հենրի Նյուման, «Աշխարհում»):

Սրանք ապշեցնող բառեր են, բայց դրանք պատկանում են շատ խոր մտածող անձնավորության: Սբ Գրիգոր Նազիանզացին նույն բանն ասում է տարբեր բառերով: Երբ վերլուծում ենք, շատ տարօրինակ թվացող այս հաստատումը բացատրվում է հետևյալ կերպ. «աշխարհը» եղբայրասիրության պակասությունն է, եղբայրասիրությունը թույլ է մեզնում, այս թուլությունը երբեմն որոշ չափով քողարկված է մարդկային հարաբերության, սերտ մտերմության, ընկերության կապերով (բաներ, որոնք հատուկ են փոքր թվով միավորումներին), բայց երբ մարդկանց թվերը աճում են, և հայտնվում են քննադատություններն ու անհամաձայնությունները, այդ եղբայրասիրության մեջ տկարությունները սկսում են դրսևորվել ամենատխուր հետևանքներով հանդերձ: «Աստված Ինքը և սերը միևնույն իրողությունն են», ասում է Սբ Բեռնարդոսը: «Այնտեղ, ուր սերը չի թագավորում, մարմնի կրքներն ու ցանկություններն են թագավորում: Եթե հավատքի ջահը չվառվի սիրո կրակով, երբեք այնքան երկար չի վառվի, որպեսզի մեզ առաջնորդի դեպի

հավիտենական երջանկությունը… Առանց սիրո՝ չկա առաքինություն»:

Լեգեոնականների համար անօգուտ կլինի, եթե ընթերցեն վերը բերված վտանգների մասին և ապա խոստանան, որ իրենց շարքերում «այդպիսի բաներ չեն լինի»: Դրանք կարող են լինել և կլինեն, եթե նրանց ժողովների ժամանակ կան եղբայրասիրության թերացումներ, եթե թույլ են տվել, որ գերբնական ոգին թուլանա: Զգոնությունը պետք է միշտ արթուն լինի: Պատմության մեջ կարդում ենք, որ հռոմեական լեգեոնը երբեք չէր անցկացնում մի գիշեր, նույնիսկ ամենաերկար արշավների ժամանակ՝ առանց բանակատեղի դնելու և այն ամրացնելու ամենաբծախնդիր ձևով, և սա արվում էր, թեև միայն մեկ գիշեր էին անցկացնելու այդտեղ, նույնիսկ եթե թշնամին հեռու էր, նույնիսկ խաղաղության ժամանակ: Այս հստակ կարգապահությունն օրինակ վերցնելով՝ Մարիամի Լեգեոնը թող որ պաշտպանի իր բանակատեղիները (որոնք իր ժողովներն են)՝ ընդդեմ «աշխարհի ոգու» ճակատագրական ներխուժման հնարավորության: Այս պաշտպանությունը պետք է լինի այն, որ բացառվեն բոլոր այն խոսքերը և վարքագծերը, որոնք հակառակ են եղբայրասիրությանը, և բոլոր ժողովներն առհասարակ պետք է հագեցած լինեն աղոթքի և լեգեոնական ամբողջական նվիրումի ոգով:

«Շնորհը, ոչ պակաս, քան բնությունը, ունի իր զգացմունքներն ու կապվածությունները: Այն ունի իր սերը, իր եռանդը, իր հույսերը, իր ուրախությունները, իր վշտերը: Արդ, շնորհի այս բոլոր «զգացմունքները» լրիվությամբ եղել են մեր Երանելի Տիրամոր մեջ, ով շատ ավելի ապրում էր շնորհի կյանքով, քան թե բնական կյանքով: Հավատացյալների մեծամասնությունն ավելի շուտ շնորհի վիճակի մեջ են, քան թե ապրում են շնորհի կյանքով: Բոլորովին տարբեր էր Սուրբ Կույսի պարագան, ով մշտապես եղել է շնորհի մեջ, ավելի շուտ՝ ապրում էր շնորհի կյանքով և կատարելագործվում էր այդ շնորհի կյանքում երկրի վրա իր ապրելու ողջ ընթացքում» (Ժիբյոֆ, «De la Vierge Souffrante au pied de la Croix»):

2. ԿՈՒՐԻԱՆ ԵՎ ԿՈՄԻՑԻՈՒՄԸ

1. Երբ մի քաղաքում, բնակավայրում կամ շրջանում հիմնվել են երկու կամ ավելի պրեզիդիումներ, ապա պետք է այդ հիմնել «Կուրիա» անվամբ մի կառավարող մարմին: Կուրիան պետք է բաղկացած լինի այդ տարածքում գործող պրեզիդիումների բոլոր սպաներից (ներառյալ հոգևոր առաջնորդները):

2. Երբ անհրաժեշտ լինի Կուրիաներից մեկի վրա, իր արդեն գոյություն ունեցող գործառույթներից բացի, դնել հավելյալ իրավասություն՝ վերահսկելու ևս մեկ կամ մի քանի Կուրիաների, այդպիսի առավել բարձր դիրք ունեցող Կուրիան պետք է կոչվի «Կոմիցիում», և դրա բոլոր ժողովները պետք է համարվեն Կոմիցիումի ժողովներ՝ անկախ նրանից՝ իր հետ կապված Կուրիաների ներկայացուցիչները ներկա են այդ ժողովներին, թե ոչ:

Կոմիցիումը նոր խորհուրդ չէ: Այն շարունակում է գործել որպես Կուրիա՝ իր սեփական տարածքում և անմիջականորեն կառավարել իր պրեզիդիումները, բայց ի հավելումն, այն վերահսկում է ևս մեկ կամ մի քանի Կուրիաների: Այդ Կուրիաների սպաների ընտրությունները ենթակա են վավերացման Կոմիցիումի կողմից՝ որպես առավել բարձր խորհրդի:

Յուրաքանչյուր Կուրիա կամ պրեզիդիում, որ կապ ունի Կոմիցիումի հետ, պետք է արտոնված լինի ամբողջությամբ ներկայացված լինելու Կոմիցիումի մեջ, և հետևաբար նրանց սպաները իրավունք ունեն քվեարկելու Կոմիցիումի ընտրությունների ժամանակ:

Կոմիցիումի բոլոր ժողովներին մասնակցելու պարտավորությունից Կուրիայի ներկայացուցիչներին ազատելու համար (ինչը կարող է ուժերից վեր բեռ լինել՝ հաշվի առնելով, որ ներկա են լինում իրենց սեփական Կուրիայի ժողովներին) թույլատրելի է, որ նրանք զբաղվեն իրենց Կուրիայի գործերով և մասնակցեն Կոմիցիումի ամեն երկրորդ կամ երրորդ ժողովներին: Պարտադիր չէ, որ Կոմիցիումի հետ առնչվող բոլոր Կուրիաների ներկայացուցիչները Կոմիցիումի ժողովին ներկա լինեն միևնույն ամսում:

Սովորաբար Կոմիցիումը չպետք է ընդգրկի թեմից ավելի լայն տարածք, բայց կարող է ունենալ ավելի փոքր տարածք: Եթե թեմում կան շատ Կուրիաներ, և եթե դրանք միմյանցից հեռու են գտնվում, ապա գուցե անհրաժեշտ և ցանկալի լինի հիմնել մի քանի Կոմիցիումներ: Կարող են լինել հանգամանքներ, երբ լավ ղեկավարման նպատակով և եկեղեցական իշխանությունների արտոնությամբ, Կոմիցիումին խնդրվի վերահսկել նաև մեկ կամ մի քանի Կուրիաներ՝ այլ թեմում կամ թեմերում:

3. Հոգևոր առաջնորդը պետք է նշանակվի այն թեմի Առաջնորդի կողմից, որտեղ գործում է Կուրիան (կամ Կոմիցիումը):

4. Կուրիան իր ենթակա պրեզիդիումները կառավարում է Լեգեոնի կանոնների համաձայն: Կուրիան պետք է նշանակի նրանց սպաներին և հետևի պաշտոնավարման ժամկետներին:

Նշանակման ձևի մասին տե՛ս Գլուխ 14-ի պարագրաֆ 11-ը՝ «Պրեզիդիումը»:

5. Կուրիան պետք է հետևի, որ պրեզիդիումները և նրանց անդամները բծախնդրորեն պահեն կանոնները:

Կուրիայի աշխատանքի կարևոր ուղղությունները պետք է լինեն հետևյալը.

Ա. սպաների կրթությունն ու վերահսկումը իրենց պարտականությունների կատարման և պրեզիդիումների ընդհանուր կառավարման մեջ,

Բ. հաշվետվություն ընդունելը յուրաքանչյուր պրեզիդիումից՝ ոչ ուշ, քան տարին մեկ անգամ,

Գ. փորձառության փոխանակումը,

Դ. նոր աշխատանքների ուսումնասիրությունը,

Ե. բարձր չափանիշների սահմանումը,

Զ. հետևելը, որ յուրաքանչյուր լեգեոնական գոհացուցիչ կերպով կատարի իր աշխատանքային պարտականությունը,

Է. Լեգեոնի ընդարձակումը և պրեզիդիումներին խթանելը, որպեսզի հավաքագրեն օժանդակ անդամներ (ներառյալ՝ հետագայում նրանց մասին հոգ տանելը և նրանց կազմակերպելը):

Հետևաբար ակնհայտ է, որ Կուրիայից և հատկապես սպաներից կպահանջվի բարոյական քաջության բարձր աստիճան իրենց գործառույթների պատշաճ կատարման համար:

6. Լեգեոնի ճակատագիրը Կուրիաների ձեռքերում է, և Լեգեոնի ապագան կախված է նրանց զարգացումից: Որևէ շրջանում Լեգեոնի գոյությունը վտանգված կլինի, եթե այնտեղ Կուրիա չհաստատվի:

7. 18 տարեկանը չլրացած լեգեոնականները չեն կարող մասնակցել մեծահասակների Կուրիային: Բայց եթե Կուրիան հարմար գտնի, կարող է հիմնվել Կուրիային ենթակա կրտսեր Կուրիա:

8. Բացարձակ կարևորություն ունի այն, որ Կուրիայի սպաները և մանավանդ նախագահը, հեշտությամբ հասանելի լինեն բոլոր այն լեգեոնականների համար, որոնք ենթակա են տվյալ Կուրիային, այնպես որ դժվարություններն ու առաջարկները, կամ այլ հարցեր, որոնք չեն հասունացել ավելի հրապարակային քննարկման համար, հնարավոր լինի քննարկել:

9. Մեծապես ցանկալի է, որ սպաները և հատկապես նախագահը կարողանան բավականաչափ ժամանակ տրամադրել իրենց պաշտոնական պարտականությունների կատարմանը, որից շատ բան է կախված:

10. Երբ որևէ Կուրիայի հատկացված է բավական մեծ թվով պրեզիդիումներ, ապա շատ կլինեն նաև նրանց ներկայացուցիչները Կուրիայում: Հնարավոր է, որ այս փաստը դժվարություններ ստեղծի նրանց տեղավորման և կառավարման արդյունքների իմաստով, բայց Լեգեոնը համոզված է, որ այդ դժվարությունները կփոխհատուցվեն այլ ճանապարհներով: Լեգեոնն ակնկալում է, որ իր Կուրիաները կկատարեն մեկ այլ գործառույթ, քան պարզապես վարչական մեքենայի դերը: Յուրաքանչյուր Կուրիա սիրտը և ուղեղն է պրեզիդիումների այն խմբի, որոնք նրա ենթակայության տակ են: Քանի որ Կուրիան միության կենտրոն է, կարելի է հետևություն անել, որ ինչքան շատ են կապերը (այսինքն՝ ներկայացուցիչները), որոնցով Կուրիան կապվում է առանձին պրեզիդիումների հետ, այնքան ավելի

ուժեղ կլինի միությունը, և այնքան ավելի հստակորեն պրեզիդիումները կարող են վերարտադրել Լեգեոնի ոգին և մեթոդները: Միայն Կուրիայի ժողովների ժամանակ է, որ հնարավոր կլինի պատշաճ կերպով քննարկել և սովորել բաներ, որոնք վերաբերում են Լեգեոնի էությանը: Այդտեղից այդ ամենը կփոխանցվի պրեզիդիումներին և այդտեղ էլ՝ անդամներին:

11. Կուրիան պետք է հետևի, որպեսզի յուրաքանչյուր պրեզիդիումին պարբերաբար այցելություն տրվի, եթե հնարավոր է, տարին երկու անգամ՝ քաջալերելու նպատակով և տեսնելու, թե արդյոք ամեն ինչ ճիշտ է արվում: Բայց շատ կարևոր է, որ այս պարտականությունը կատարվի ոչ տրտնջացող և սխալներ գտնող գործելաոճով, որպեսզի այցելություններից չվախենան, և նրանց առաջարկները չմերժվեն, այլ պետք է կատարվի սիրո և խոնարհության ոգով, ինչը ենթադրում է, որ նույնքան շատ բան կա սովորելու այն պրեզիդիումից, որին կատարվում է այցելությունը որքան սովորեցնելու:

Այցելությունից առնվազն մեկ շաբաթ առաջ պետք է այցի մասին տեղեկացնել պրեզիդիումին: Երբեմն լսում ենք, որ այդ այցելությունների մասին մտածում են, թե նման է «դրսից միջամտության»: Այսպիսի վերաբերմունքը անհարգալիր է Լեգեոնի հանդեպ, քանի որ պրեզիդիումները դրանց մասն են և պետք է լինեն հավատարիմ մասերը. կարո՞ղ է արդյոք ձեռքը գլխին ասել. «Ես քո կարիքը չունեմ»: Ավելին, դա անշնորհակալ վերաբերմունք է, մի՞թե այդ ստորաբաժանումներն իրենց գոյությամբ պարտական չեն այդ «արտաքին միջամտությանը»: Այստեղ հակասություն կա, որովհետև որքա՛ն հաճույքով են նույն ստորաբաժանումները կենտրոնական իշխանությունից ստանում բաներ, որոնք իրենց համար շահեկան են համարում: Սա հիմարություն է, որովհետև դրանով նրանք ընդդիմանում են համաշխարհային փորձառությանը: Ամեն տեսակ կազմակերպված կյանքի (լինի կրոնական, քաղաքացիական կամ զինվորական) դասն է, թե պետք է առանց բողոքելու,

ամբողջական ընկալմամբ և գործնականում ճանաչել, որ «կենտրոնական իշխանությունը» էական նշանակություն ունի կազմակերպության ոգին պահելու և արդյունավետ աշխատանքի համար: Կազմակերպության ստորաբաժանումներին տրվող կանոնավոր այցելություններն այդ սկզբունքի գործադրության շատ կարևոր մասն են, և ոչ մի գործունյա իշխանություն չի արհամարհում իր պարտականությունն այս առումով:

Ավելին, բացի նրանից, որ Կուրիայի կողմից կատարվող այցելությունն անհրաժեշտ է պրեզիդիումի առողջ աշխատանքի համար, յուրաքանչյուր պրեզիդիում պետք է հիշի, որ դա Կանոնակարգի մի մաս է, և ուրեմն պետք է պնդի, որ Կուրիան չարհամարհի իր այդ պարտականությունը: Ավելորդ է ասելը, որ այցելուներին պետք է դիմավորել ջերմությամբ:

Այդ այցելությունների ժամանակ պետք է ստուգել քարտուղարի, գանձապահի գրքերը, աշխատանքային թերթիկները և պրեզիդիումի այլ պարագաները՝ հասկանալու համար, թե արդյոք դրանք պատշաճ վիճակում են, և համոզվելու համար, թե արդյոք լեգեոնականներն ընդունել են Լեգեոնի Խոստումը պահանջվող փորձաշրջանն անցնելուց հետո:

Այս ստուգումը պետք է իրականացնեն Կուրիայի երկու ներկայացուցիչներ: Սա չպետք է վերապահվի միայն Կուրիայի սպաներին. կարող է նշանակվել ցանկացած փորձառու լեգեոնական: Այցելուները պետք է Կուրիային ներկայացնեն գրավոր հաշվետվություն իրենց այցելության վերաբերյալ: Հաշվետվության ձևը կարելի է ձեռք բերել Կոնսիլիումից:

Հայտնաբերված թերությունները չպետք է միանգամից բաց ձևով քննարկվեն պրեզիդիումում կամ Կուրիայում: Դրանք պետք է քննարկվեն պրեզիդիումի հոգևոր առաջնորդի և նախագահի հետ: Եթե դրանից հետո թերությունները չուղղվեն, հարցը պետք է քննարկվի Կուրիայի ժողովում:

12. Կուրիան իր անդամների նկատմամբ ունի նույն հարաբերությունը, ինչ պրեզիդիումը՝ իր անդամների նկատմամբ:

Այսպիսով, այն ամենը, ինչ այս էջերում ասվել է պրեզիդիումի ժողովներին լեգեոնականների մասնակցության և վարքագծի մասին, նույնը հավասարապես վերաբերում է նաև պրեզիդիումների ներկայացուցիչներին՝ Կուրիայի ժողովներին մասնակցելու առումով: Այլ աշխատանքների մեջ եռանդուն ջանքերը չեն կարող փոխհատուցել սպաների կողմից Կուրիայի ժողովներին թերի հաճախելը:

13. Կուրիան պետք է ժողով գումարի այն ժամանակ և այն վայրերում, որոնք ինքն է որոշում՝ հաջորդ առավել բարձր աստիճանի խորհրդի հավանությամբ: Այդպիսի ժողովները, եթե հնարավոր է, պետք է անցկացնել ոչ ավելի ուշ, քան ամիսը մեկ անգամ: Այսպիսի հաճախականության պատճառների մասին տե՛ս այս Գլխի 19-րդ պարագրաֆի 1-ին բաժինը:

14. Ժողովի օրակարգը պետք է պատրաստվի նախապես՝ Կուրիայի քարտուղարի կողմից՝ նախագահի հետ խորհրդակցելով և ուղարկվի բոլոր հոգևոր առաջնորդներին և նախագահներին՝ պրեզիդիումների ժողովներից և անմիջապես Կուրիայի ժողովից առաջ: Պրեզիդիումի նախագահը պարտավոր է Կուրիայի ժողովի մասին տեղյակ պահել պրեզիդիումի մյուս անդամներին:

Կուրիայի ժողովի նախապես կազմված օրակարգը պետք է լինի պայմանական. Կուրիայի անդամները լիովին ազատ են դրանում ավելացնել քննարկման այլ կետեր, ինչքան որ հարկավոր է:

15. Կուրիան պետք է արթուն կերպով հսկի, որպեսզի պրեզիդիումները չսկսեն նյութական օգնություն տրամադրել, ինչը կնշանակեր ամբողջ օգտակար լեգեոնական աշխատանքի վերջը: Գանձապահի հայտարարությունների պարբերական ստուգումը Կուրիային կօգնի նկատել ցանկացած սխալի սկզբնավորումը:

16. Նախագահը (և, իհարկե, սա վերաբերում է նաև վարչական մարմնի այլ անդամներին) պետք է զգույշ լինի, որպեսզի չընկնի այն համընդհանուր սխալի մեջ, երբ նախագահը պատասխանատվության նույնիսկ ամենափոքրիկ մանրամասնը ուզում է պահել իր ձեռքում: Այսպիսի հակվածության հետևանքներից մեկն աշխատանքի դանդաղումն

է: Դա կարող է նույնիսկ կաթվածահար անել ամբողջ համակարգը մեծ կենտրոններում, որտեղ վիթխարի աշխատանք է կատարվում: Որքան նեղ է 22ի բերանը, այնքան դանդաղ դուրս կլցվի 22ի պարունակությունը, մինչև ոմանք անհամբերությամբ չկոտրեն 22ի նեղ հատվածը:

Բայց մեկ այլ լուրջ խնդիր է այն, որ մերժելը պարտականություն հանձնարարել նրանց, ովքեր համապատասխանում են այդ պաշտոնին, անարդար է և՛ այդ անհատների, և՛ ամբողջ Լեգեոնի նկատմամբ: Պատասխանատվության որոշակի չափաբաժնի ստանձնումն ու կատարումը անհրաժեշտություն է անհատի մեծ որակները զարգացնելու համար: Իսկապես, պատասխանատվությունը կարող է պարզ ավազը փոխակերպել ոսկու:

Քարտուղարին չպետք է սահմանափակել միայն քարտուղարությամբ, ոչ էլ գանձապահին՝ միայն հաշվետարությամբ: Բոլոր սպաներին և նույնիսկ ավագ և խոստումնալից անդամներին պետք է վստահել նախաձեռնություններ և վերահսկողության իրականացում, որոնց համար նրանք, իհարկե, ենթարկվելով առավել բարձր իշխանության, կկրեն պատասխանատվություն: Վերջնանպատակը պետք է լինի յուրաքանչյուր լեգեոնականի պատասխանատվության զգացումով օժտելը՝ Լեգեոնի բարեկեցության և ընդարձակման համար՝ որպես ունակ միջոց հոգիներին օգնելու համար:

«Աստծո բոլոր գործերը հիմնված են միասնության վրա, որովհետև հիմնված են Տիրոջ վրա, Ով ամենագեղեցիկ կերպով պարզն ու թափանցիկն է հնարավոր բոլոր միասնություններից: Նա հստակորեն Մեկ է, և քանի որ Տերը նաև բազմաձև է՝ Իր հատկանիշներով և Իր գործերով, ինչպես դրանք ներկայանում են մեր մտքին, հետևաբար, կարգը և ներդաշնակությունը պետք է որ լինեն Նրա ճշմարիտ էությունը» (Սբ Ջոն Հենրի Նյուման, «Միասնության կարգը, վկայությունը և գործիքը», այս և հաջորդ երեք մեջբերումները բնագրում կազմում են մեկ հատված):

3. ՌԵԳԻԱՆ

1. Կոնսիլիումի կողմից նախատեսված խորհուրդը, որը պետք է իշխանություն ունենա Մարիամի Լեգեոնի վրա՝ մեծ տարածաշրջանում և կարգավիճակով լինի հաջորդը Սենատուսից հետո, պետք է կոչվի «Ռեգիա»: Կոնսիլիումը կորոշի՝ Ռեգիան ուղղակիորեն պետք է կապված լինի Կոնսիլիումի՞ն, թե՞ Սենատուսին:

2. Երբ գոյություն ունեցող խորհրդին տրվում է Ռեգիայի կարգավիճակ, այն պետք է շարունակի իրականացնել իր նախնական գործառույթները՝ ի հավելումն իր նոր պարտականությունների (տե՛ս Լեգեոնի կառավարման մասին այս Գլխի 1-ին բաժնի 19-րդ պարագրաֆը):

Ռեգիային անդամակցությունը պետք է բաղկացած լինի.

Ա. Ռեգիայի հետ ուղղակիորեն առնչվող յուրաքանչյուր լեգեոնական մարմնի սպաներից և

Բ. այն խորհրդի անդամներից, որոնց շնորհվել է Ռեգիայի կարգավիճակ, եթե այդպիսին է պարագան:

3. Ռեգիայի հոգևոր առաջնորդը պետք է նշանակվի այն թեմերի եպիսկոպոսների կողմից, որոնցում Ռեգիան ունի իրավասություն:

4. Ուղղակիորեն առնչվող խորհուրդների սպաների ընտրությունը պետք է վավերացվի Ռեգիայի կողմից: Այս սպաները պարտավոր են հաճախել Ռեգիայի ժողովներին, եթե հանգամանքները (այսինքն՝ հեռավորությունը և այլն) չեն խանգարում:

5. Փորձը ցույց է տվել, որ նամակագրողների նշանակումը Ռեգիայի համար ամենակարևոր ձևն է՝ իր հետ առնչվող հեռավոր խորհուրդներին վերահսկելու համար: Նամակագրողը կանոնավոր կապ է պահում խորհրդի հետ և արձանագրությունների հիման վրա պատրաստում է զեկույց Ռեգիային ներկայացնելու համար, երբ պահանջվի: Նա հաճախում է Ռեգիայի ժողովներին, մասնակցում է ընթացակարգերին, բայց եթե Ռեգիայի անդամ չէ, քվեարկելու իրավունք չունի:

6. Ռեգիայի արձանագրությունների պատճեն պետք է ուղարկվի այն խորհրդին, որի հետ Ռեգիան անմիջականորեն կապված է:

7. Ռեգիայի կառուցվածքի որևէ փոփոխության առաջարկ, որը կարող է ազդել ժողովի վրա, պետք է պաշտոնապես հավանության արժանանա Կոնսիլիումի կողմից՝ անկախ նրանից՝ Ռեգիան կապված է անմիջականորեն Կոնսիլիումի, թե Սենատուսի հետ:

8. Հռոմեական կայսրության օրերին Ռեգիան համարվում էր Գերագույն Առաջնորդի (Pontifex Maximus) նստավայրն ու աշխատավայրը, ավելի ուշ՝ թագավորի մայրաքաղաքն էր կամ ատյանը:

«Լինել բազում և զանազան՝ իր հատկանիշներով, և ի վերջո լինել Մեկ՝ լինել սրբություն, արդարություն, ճշմարտություն, սեր, զորություն, իմաստություն, լինել միանգամից այս ամենից յուրաքանչյուրը՝ այնպես, կարծես Նա միայն այդ մեկն է, ու վերջ, և կարծես մնացածը չլինեն. սա ենթադրում է, որ Աստվածային Բնությունը անսահմանորեն ինքնակալ և բացարձակապես անըմբռնելի է, և սա ևս մի հրաշալի հատկանիշ է, ինչպես Նրա բոլոր հատկանիշները, և արդյունքը՝ բոլոր մնացած հատկանիշների» (Սբ Ջոն Հենրի Նյուման, «Միասնության կարգը, վկայությունը և գործիքը»):

4. ՍԵՆԱՏՈՒՍԸ

1. Այն խորհուրդը, որը Կոնսիլիումի կողմից նախատեսված է կառավարելու Մարիամի Լեգեոնը որևէ երկրում, պետք է կոչվի «Սենատուս»: Այն պետք է անմիջականորեն կապված լինի Կոնսիլիումին:

Այն երկրներում, որտեղ տարածքի կամ այլ պատճառներով մեկ Սենատուսը հարմար չի լինի, կարել է հավանություն տալ երկու կամ ավելի Սենատուսների գոյությանը, որոնցից յուրաքանչյուրը պետք է անմիջականորեն կապված լինի Կոնսիլիումին և պետք է իշխանություն ունենա Լեգեոնի վրա՝ այն տարածքում, որը նրան կհատկացնի Կոնսիլիումը:

2. Երբ արդեն գոյություն ունեցող խորհրդին շնորհվում է Սենատուսի կարգավիճակ, ապա այն պետք է շարունակի կատարել իր նախնական գործառույթները՝ ի հավելումն իր ստանձնած նոր պարտավորությունների (տե՛ս Լեգեոնի կառավարման մասին այս Գլխի պարագրաֆ 19-ի 1-ին բաժինը):

Սենատուսի կազմը պետք է բաղկացած լինի՝ ա. Սենատուսի հետ կապված յուրաքանչյուր լեգեոնական մարմնի սպաներից և բ. այն խորհրդի անդամներից, որին շնորհվել է Սենատուսի կարգավիճակ, եթե այդպիսին է պարագան:

3. Սենատուսի հոգևոր առաջնորդը պետք է նշանակվի այն թեմերի եպիսկոպոսների կողմից, որոնց տարածքում Սենատուսն ունի իրավասություն:

4. Սենատուսը վավերացնում է իր հետ անմիջականորեն կապված խորհուրդների սպաների ընտրությունները: Այս սպաները պարտավոր են ներկա լինել Սենատուսի ժողովներին, եթե հանգամանքները (օրինակ՝ հեռավորությունը և այլն) չեն խանգարում:

5. Փորձը ցույց է տվել, որ նամակագրողների նշանակումը Սենատուսի համար ամենաարդյունավետ միջոցն է հեռավոր խորհուրդների նկատմամբ իր վերահսկողական գործառույթներն իրականացնելու համար: Նամակագրողը կանոնավոր կապ է պահում խորհրդի հետ և ստացված արձանագրություններից ամեն ամիս պատրաստում է զեկույց՝ ըստ պահանջի ներկայացնելու համար Սենատուսի ժողովին: Նա հաճախում է Սենատուսի ժողովներին, մասնակցում գործընթացներին, բայց քվեարկելու իրավունք ունի՝ միայն եթե Սենատուսի անդամ է:

6. Սենատուսի ժողովների արձանագրությունների պատճեն պետք է ուղարկվի Կոնսիլիումին:

7. Սենատուսի կառուցվածքի փոփոխության որևէ առաջարկ, որը կարող է մեծապես ազդել ժողովում անդամների հիմնական ներկայության վրա, պետք է պաշտոնապես արտոնվի Կոնսիլիումի կողմից:

«Աստված անսահման օրենք է, նաև անսահման զորություն, իմաստություն և սեր: Ավելին, կարգուկանոնի գաղափարն ինքնին ենթադրում է ենթակայության գաղափարը: Եթե աստվա-

ծային հատկանիշների մեջ գոյություն ունի կարգ, ապա նրանք պետք է որ միմյանց նկատմամբ հարաբերություններ ունենան, և, թեև յուրաքանչյուրն ինքնին կատարյալ է, այն պետք է գործի այնպես, որ չվնասի մնացածի կատարելությանը և պետք որ զիջի մյուսներին՝ առանձնահատուկ հանգամանքներում» (Սբ Ջոն Հենրի Նյուման, «Կարգը՝ միության վկան և գործիքը»):

5. ՄԱՐԻԱՄԻ ԼԵԳԵՈՆԻ ԿՈՆՍԻԼԻՈՒՄԸ

1. Պետք է գոյություն ունենա մի կենտրոնական խորհուրդ և կոչվի «Concilium Legionis Mariae»՝ Մարիամի Լեգեոնի Կոնսիլիում, որին պետք է վստահվի Լեգեոնի բարձրագույն կառավարման իշխանությունը: Ենթարկվելով եկեղեցական իշխանությանը, ինչպես գրված է այս էջերում, միայն այդ մարմնին է պատկանում իրավունքը՝ կանոններ ստեղծելու, փոխելու և մեկնաբանելու, հաստատելու կամ լուծարելու պրեզիդիումներ և ենթակա խորհուրդներ, որտեղ էլ տեղակայված լինեն, որոշելու Լեգեոնի գործելակերպը բոլոր տեսակի հարցերում, որոշում կայացնելու բոլոր վեճերի և բողոքների, անդամակցության բոլոր հարցերի վերաբերյալ, ինչպես նաև աշխատանքների համապատասխանության կամ դրանց կատարման ձևի վերաբերյալ:

2. Մարիամի Լեգեոնի Կոնսիլիումը ժողով է գումարում ամեն ամիս Իռլանդիայի Դուբլին քաղաքում:

3. Կոնսիլիումը կարող է իր գործառույթների մի մասի կատարումը պատվիրակել ենթակա խորհուրդներին կամ առանձին պրեզիդիումներին և կարող է ցանկացած ժամանակ փոխել իր կողմից պատվիրված գործառույթների ծավալը:

4. Կոնսիլիումը կարող է իր սեփական գործառույթներին միավորել իր ենթակայության տակ գտնվող խորհրդի կամ խորհուրդների գործառույթները:

5. Մարիամի Լեգեոնի Կոնսիլիումը պետք է բաղկացած լինի իր հետ անմիջական կապ ունեցող բոլոր խորհուրդների սպաներից: Դուբլինի արքեպիսկոպոսության ավագ Կուրիայի սպաները կազմում են Կոնսիլիումի ժողովներում ներկայության միջուկը: Հեռավորության և այլ պատճառներով

լեգեոնական մարմինների մեծամասնության համար կանոնավոր ներկայությունը Կոնսիլիումի ժողովներին անհնարին է: Կոնսիլիումն իրավունք ունի փոխելու Դուբլինի Կուրիան ներկայացնող սպաների կազմը:

6. Կոնսիլիումի հոգևոր առաջնորդը պետք է նշանակվի Իռլանդիայի Եպիսկոպոսների Խորհրդի կողմից:

7. Կոնսիլիումի հետ անմիջականորեն կապված խորհուրդների սպաների ընտրությունները պետք է վավերացվեն Կոնսիլիումի կողմից:

8. Կոնսիլիումը նշանակում է նամակագրողների՝ հեռավոր խորհուրդների նկատմամբ իր վերահսկողության գործառույթներն իրականացնելու համար: Նամակագրողը կանոնավոր կապ է պահում խորհրդի հետ և ստացված արձանագրություններից ամեն ամիս պատրաստում է զեկույց՝ ըստ պահանջի ներկայացնելու Կոնսիլիումի ժողովին: Նա հաճախում է Կոնսիլիումի ժողովներին, մասնակցում գործընթացներին, բայց քվեարկելու իրավունք ունի՝ միայն եթե Կոնսիլիումի անդամ է:

9. Կոնսիլիումի ներկայացուցիչները, որոնք ունեն պարտականություն, կարող են մտնել ցանկացած լեգեոնական տարածք, այցելել տեղի լեգեոնական մարմիններ, կատարել զարգացմանը նպաստող աշխատանք և առհասարակ կատարել գործառույթներ, որոնք թույլատրելի են Կոնսիլիումի համար:

10. Միայն Մարիամի Լեգեոնի Կոնսիլիումին է վերապահված իրավունքը, ըստ Լեգեոնի կանոնադրության, փոփոխելու Լեգեոնի ձեռնարկը: Մարիամի Լեգեոնի միջազգային կանոնադրությունը՝ ճանաչված Սուրբ Աթոռի լիազոր վարչության կողմից, պետք է միշտ ընթերցվի Մարիամի Լեգեոնի ձեռնարկի հետ միասին, քանի որ այն հիմնականում բխում է ձեռնարկից և պետք է ընթերցվի ձեռնարկի լույսի ներքո:

11. Կանոնակարգի փոփոխությունները չեն կարող գործադրվել՝ մինչև դրանց հետ համաձայն չլինեն լեգեոնական մարմինների մեծ մասը: Այս մարմինները՝ իրենց համապատասխան խորհուրդներով, պետք է տեղեկացվեն կանոնների փոփոխության բոլոր առաջարկների մասին, և նրանց

պետք է հատկացվի բավարար ժամանակ՝ հստակեցնելու համար իրենց տեսակետները առաջարկների վերաբերյալ: Նրանց տեսակետները կարող են ներկայացվել կամ ներկայացուցիչների կողմից՝ Կոնսիլիումի ժողովի ժամանակ կամ գրավոր:

«Այսպես, Աստծո զորությունն իսկապես անսահման է, բայց դարձյալ ենթակա է Նրա իմաստությանը և արդարությանը, Նրա արդարությունը ևս անսահման է, բայց դա ևս ենթակա է Նրա սիրուն, և Նրա սերն էլ, իր հերթին, անսահման է, բայց ենթակա է Նրա անթափանց սրբությանը: Հատկանիշների միջև կա ըմբռնում, այնպես որ մեկը չի խանգարում մյուսին, որովհետև յուրաքանչյուրը գերազանց է իր մասով: Այդպիսով, անսահմանություն անսահմանության. յուրաքանչյուրն իր կարգի մեջ գործելով՝ միացած են միմյանց՝ Աստծո անսահմանորեն պարզ Միության մեջ» (Սբ Ջոն Հենրի Նյուման, «Կարգը՝ միության վկան և գործիքը»):

29

ԼԵԳԵՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ

Կազմակերպության ամբողջ գաղափարը բազմության միությունն է: Լեգեոնում պետք է գոյություն ունենա կապի սկզբունքը՝ հասարակ անդամից մինչև իշխանության բարձրացող աստիճանները, և որքանով, որ այդ կապը պակասի, այնքանով կլինի հեռացում կենսական սկզբունքից:

Կամավորական կազմակերպության մեջ այդ կապի ցեմենտը հավատարմությունն է՝ անդամների հավատարմությունը պրեզիդիումին, պրեզիդիումի հավատարմությունը՝ Կուրիային, և այդպես շարունակ՝ Լեգեոնի աստիճանակարգությամբ դեպի վեր՝ Լեգեոնի Կոնսիլիումին, և եկեղեցական իշխանություններին, որտեղ էլ լինի: Անկեղծ հավատարմությունը լեգեոնականին, պրեզիդիումին և մյուս խորհուրդներին կներշնչի անկախ գործելու ցանկության մերժում: Բոլոր կասկածելի կետերում, բոլոր դժվարին

իրավիճակներում կամ բոլոր տեսակի նոր աշխատանքի կամ շեղման վերաբերյալ պետք է դիմել համապատասխան վերադաս իշխանությանը՝ առաջնորդության և թույլտվության համար:

Հավատարմության պտուղը հնազանդությունն է, և վերջինիս ստուգումը պատրաստակամությունն է՝ ընդունելու տհաճ իրադրությունները և որոշումները, և թույլ տվեք ընդգծել, ընդունելու զվարթությամբ: Այսպիսի արագ և ի սրտե հնազանդությունը միշտ դժվար է: Երբեմն այդպիսի հնազանդությունը նշանակում է ոտնձգություն բնական հակումների նկատմամբ՝ այն աստիճան, որ դա նմանվում է հերոսականության կամ, ըստ էության, մարտիրոսության: Սրա վերաբերյալ Սբ Իգնատիոս Լոյոլացին խոսում է հետևյալ կերպ. «Նրանք, ովքեր առատաձեռն ջանադրությամբ որոշում են հնազանդվել, վաստակում են մեծ արժանիքներ. հնազանդությունը, որը զոհաբերվում է, նման է մարտիրոսության»: Լեգեոնն ամենուրեք իր զավակներից սպասում է ամեն տեսակ պատշաճ իշխանության հանդեպ այդպիսի հերոսական և քաղցր խոնարհության ոգի:

Լեգեոնը մի բանակ է՝ Ամենախոնարհ Կույսի բանակը: Լեգեոնն իր ամենօրյա աշխատանքում պետք է ցույց տա այն, ինչ շատ կարելի է տեսնել որևէ երկրային բանակում՝ հերոսականություն և զոհաբերություն, նույնիսկ գերագույն զոհաբերություն: Լեգեոնականներից ևս մշտապես պահանջվում է գերազանցորեն հստակ բնութագիր: Միշտ չէ, որ լեգեոնականները կանչված են իրենց մարմինները դնելու դանակի կամ մահվան բերանը, ինչպես աշխարհի զինվորները: Բայց թող նրանք առավել փառավորվեն հոգևոր բաներում: Թող նրանք պատրաստ լինեն ընծայելու իրենց զգացմունքները, դատողությունը, անկախությունը, հպարտությունը, կամքը, հակասությունների վերքերը, ամբողջական նվիրման զոհաբերությունը, երբ դրանք պահանջի վերադաս իշխանությունը:

«Մեծ վնաս է հասցնում անհնազանդությունը, որովհետև հնազանդությունը կանոնի կապն է»,– ասում է Թեննիսոնը, բայց Լեգեոնի կենսական գիծը կարող է բաժանվել կամավոր անհնազանդության հետևանքով: Հետևանքը նույնը

կլինի, եթե սպաներն արհամարհեն ժողովներին հաճախելու և նամակագրությունը կատարելու սեփական պարտականությունները, և դրա պատճառով պրեզիդիումներն ու խորհուրդները կտրվեն լեգեոնական կյանքի հիմնական հունից: Նույնպիսի մեծ վնաս են հասցնում նրանք՝ լինեն սպաներ կամ անդամներ, որոնք հաճախում են ժողովներին, բայց որոնց վարքագիծը, ինչ պատճառով էլ լինի, բաժանումներ հրահրելն է:

«Հիսուսը հնազանդվում էր իր Մորը: Դուք ընթերցել եք այն ամենը, ինչ ավետարանիչները պատմում են Նազարեթում Հիսուսի թաքնված կյանքի մասին՝ Մարիամի և Հովսեփի հետ միասին. «Նա հնազանդ էր նրանց և աճում էր իմաստությամբ և հասակով» (Ղկ. 2:51-52): Մի՞թե այստեղ Նրա աստվածության հետ ինչոր անհամատեղելի բան կա: Իհարկե, ո՛չ: Բանը Մարմին եղավ. Նա այնքան հեռու գնաց, որ վերցրեց մեր նման բնություն՝ առանց մեղքի: Նա ասաց, որ եկել է «ոչ թե ծառայություն ընդունելու, այլ ծառայելու» (Մտթ. 20:28), «հնազանդ լինելու՝ մինչև մահ» (Փլպ. 2:8), ահա՛ թե ինչու Նա կամեցավ հնազանդվել Իր Մորը: Նազարեթում Նա հնազանդվեց Մարիամին և Հովսեփին՝ երկու արտոնյալ անձանց, ում Աստված դրեց Նրա կողքին: Որոշ չափով Մարիամը մասնակցում էր Որդու մարդկության նկատմամբ Հավիտենական Հոր իշխանությանը: Հիսուսն իր Մոր մասին կարող էր ասել այն, ինչ ասաց Իր Երկնային Հոր մասին. «Ես միշտ անում եմ այն, ինչ հաճելի է Նրան» (Հվհ. 8:29)», (Երանելի Քոլումբա Մարմիոն):

30

ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Յուրաքանչյուր Կուրիայի վրա դրված է պարտականություն՝ սեփական իրավասության տակ գտնվող տարածքում Լեգեոնի բոլոր անդամներին պարբերաբար հավաքել միասին, որպեսզի ճանաչեն իրար, և ամրանա միության ոգին:

Լեգեոնի գործառույթները հետևյալն են:

1. ԱՍԻԵՍԸ (ACIES)

Նկատի ունենալով Մարիամի հանդեպ ջերմեռանդության կարևորությունը Լեգեոնի համակարգում՝ ամեն տարի լեգեոնականները պետք է նվիրագործվեն Տիրամորը: Նվիրագործումը, որը պետք է լինի թե՛ անհատական, թե՛ հավաքական, պետք է տեղի ունենա մարտի 25-ին կամ այդ ամսաթվին մոտ որևէ օր և պետք է կոչվի Ասիես: Լատիներեն այդ բառը նշանակում է ճակատամարտի պատրաստ բանակ և հարմար է մի հանդիսության համար, որտեղ լեգեոնականները միասին հավաքվում են իրենց հավատարմությունը հայտնելու Մարիամին՝ Լեգեոնի Թագուհուն, և Նրանից ստանալ ուժ և օրհնություն՝ չարի ուժերի դեմ ևս մեկ տարվա ճակատամարտի համար: Ավելին, այս բառը հակառակն է պրեզիդիումին, որը ներկայացնում է Լեգեոնը՝ ոչ որպես մեկ տեղում շարված բանակ, այլ առանձին ստորաբաժում, որը զբաղված է իր ուրույն շրջանի պաշտպանությամբ:

Ասիեսը Լեգեոնի տարեկան մեծ գործառույթն է, ուստի անհրաժեշտ է շեշտել Ասիեսին բոլոր լեգեոնականների ներկայության կարևորությունը: Լեգեոնի հիմնական գաղափարը, որի վրա կառուցված է մնացած ամեն ինչ, Լեգեոնի Թագուհու՝ Մարիամի հետ միասին և նրանից կախված լինելով աշխատելն է: Ասիեսն այդ միության և կախվածության հանդիսավոր արտահայտությունն է, Տիրամոր նկատմամբ լեգեոնական հավատարմության հայտարարության անհատական և հավաքական նորացումն է: Հետևաբար, ակնհայտ է, որ որևէ լեգեոնական, որը կարող է մասնակցել Ասիեսին, բայց չի մասնակցում, իր մեջ չունի կամ քիչ չափով ունի Լեգեոնի ոգին: Այսպիսի անձանց անդամակցությունը ձեռքբերում չէ Լեգեոնի համար:

Ընթացակարգը հետևյալն է:

Հանդիսության համար նշանակված օրը լեգեոնականները հավաքվում են, եթե հնարավոր է, եկեղեցում: Մի հարմարավետ տեղում դրվում է Անարատ Հղության արձանը՝ պատշաճ կերպով զարդարված ծաղիկներով և մոմերով: Արձանիկի առջևի մասում դրվում է Լեգեոնի դրոշի մեծ չափերով պատրաստված կրկնօրինակը, ինչպես

նկարագրված է 27-րդ Գլխում: Ընթացքը սկսվում է օրիներգությամբ, որին հետևում են Լեգեոնի բացման աղոթքները և Վարդարանը: Ապա քահանան խոսք է ասում Տիրամորը նվիրագործվելու կարևորության մասին: Ապա թափորով մոտենում են դեպի Սուրբ Կույսի արձանը: Հոգևոր առաջնորդները գնում են առջևից՝ մեկ շարքով: Ապա գնում են լեգեոնականները՝ դարձյալ մեկ շարքով, իսկ եթե նրանց թիվը մեծ է, կարող են գնալ և զույգերով: Դրոշին հասնելով՝ յուրաքանչյուրը (կամ յուրաքանչյուր զույգը) կանգ է առնում, ապա, ձեռքը դնելով դրոշի վրա, որպես անհատական նվիրագործման քայլ, բարձրաձայն ասում է հետևյալ բառերը. «Ես ամբողջությամբ քոնն եմ, իմ Թագուհի՛, իմ Մա՛յր, և այն ամենը, ինչ ունեմ, քոնն է»: Այս ասելուց հետո թողնում են դրոշը, թեթև խոնարհվում և անցնում առաջ: Եթե լեգեոնականների թիվը մեծ է, անհատական նվիրագործման քայլը կխլի որոշ ժամանակ, բայց հանդիսության տպավորությունը դրանից ոչ թե կտուժի, այլ կշահի: Օգտակար կլինի, եթե այդ թափորի ընթացքում մի հոգևոր երաժշտություն հնչի երգեհոնով:

Պետք չէ օգտագործել մեկից ավելի դրոշ: Դա կկարճացներ ընթացակարգը, բայց այն կվնասեր միությանը: Ավելին, շտապողականության միտքը տեղին չէ: Ասիեսի հատուկ բնութագիրը պետք է լինի հանդիսության կարգուկանոնը և արժանապատվությունը:

Երբ բոլոր լեգեոնականները վերադառնում են իրենց տեղերը, Տիրամոր հանդեպ նվիրագործման խոսքերը արտասանվում են քահանայի կողմից՝ բոլոր ներկաների անունից: Ապա բոլորը կանգնած ասում են Կատենա աղոթքը: Դրան հետևում է, եթե հնարավոր է, Սուրբ Հաղորդությամբ օրհնությունը, ապա ասում են Լեգեոնի եզրափակիչ աղոթքները, երգվում է մի օրիներգություն, և Ասիեսն ավարտվում է:

Իհարկե, պատշաճ կլինի, եթե օրհնության փոխարեն մատուցվի Սուրբ Պատարագ՝ Ասիեսի հանդիսության առիթով, իսկ ընթացակարգի մյուս մանրամասները պետք է մնան նույնը: Զատկական Խորհրդի տոնակատարությունը, «միակ Միջնորդի» միջոցով և Սուրբ Հոգու ներգործությամբ,

իր մեջ կներառի բոլոր նվիրագործումները և հոգևոր ընծայաբերությունները, որոնք դրվել են «Տիրոջ առատաձեռն գործակցի և խոնարհ աղախնի» (LG 61) մայրական ձեռքերում:

Նվիրագործման վերոնշյալ բանաձևը՝ «Ես ամբողջովին քոնն եմ...», չպետք է արտասանվի մեխանիկորեն կամ մտացրիվ կերպով: Յուրաքանչյուրը պետք է դա անի ամբողջական ընկալմամբ և երախտագիտությամբ: Որպես օգնություն՝ լեգեոնականները կարող են ուսումնասիրել այս ձեռնարկի Հավելված 11-ը՝ «Մարեմական համադրությունը»: Այդտեղ փորձ է արվել ներկայացնելու Մարիամի եզակի դերը փրկության մեջ, և, համապատասխանաբար, յուրաքանչյուրիս պարտականությունը Մարիամի հանդեպ: Գուցե «Մարեմական համադրությունը» կարելի է օգտագործել հոգևոր ընթերցման և քարոզի ժամանակ՝ Ասիեսին անմիջապես նախորդող պրեզիդիումի հանդիպման ժամանակ: Առաջարկ կա, որ այն կարելի է նաև օգտագործել որպես նվիրագործման հավաքական գործողություն Ասիեսի հանդիսության ժամանակ:

«Մարիամը դժոխքի ուժերի սարսափն է: Նա ահավոր է՝ ինչպես պատերազմի պատրաստ բանակը (տես Երգ, 6:10), որովհետև իմաստուն հրամանատարի նման Մարիամը քաջ գիտի՝ ինչպես օգտագործել իր ուժը, իր ողորմությունը և իր աղոթքները՝ թշնամուն շփոթեցնելու համար և իր ծառաների օգտին» (Սբ Ալֆոնսուս Լիգուորացի):

2. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՎԱՔԸ

Անարատ Հղության տոնին հնարավորինս մոտ մի ժամանակ պետք է կազմակերպվի բոլոր անդամների հավաքը կամ վերամիավորումը: Եթե ցանկանում են, սա կարելի է անել եկեղեցական տոնակատարությամբ:

Սրան հետևելու է հասարակական երեկոն: Եթե Լեգեոնի աղոթքներն արդեն չեն ասվել եկեղեցական արարողության ժամանակ, ապա դրանք պետք է ասել՝ երեք մասերի բաժանելով, ինչպես ժողովների ժամանակ:

Լավ կլինի, որ այդ միջոցառումը կազմակերպվի լեգեոնականների նվիրատվություններով: Թեթև օրակարգից բացի, պետք է լինեն նաև ուղերձներ կամ ընթերցվեն Լեգեոնին առնչվող թղթեր:

Իհարկե, ավելորդ է հիշեցնել լեգեոնականներին, որ այդտեղ պաշտոնական վարվելակերպի տեղը չէ, և հատուկ կերպով պետք է բացառվի, քանի որ շատ լեգեոնականներ են մասնակցում: Նպատակը պետք է լինի այն, որ ներկաներն ավելի լավ ճանաչեն իրար: Հետևաբար, ծրագիրը պետք է թույլ տա ազատ շարժվելու և միմյանց հետ զրուցելու: Կազմակերպիչները պետք է հետևեն, որ ներկաները խմբերի չբաժանվեն և այդպիսով չվնասեն այդ միջոցառման նպատակին, որն է՝ Լեգեոնի ընտանիքում խթանել միության ոգին և ջերմությունը:

«Զվարթությունը մի քաղցր գրավչություն էր հաղորդում Սբ Ֆրանցիսկոսի հոգևոր ասպետությանը: Որպես Քրիստոսի իսկական ասպետ, Ֆրանցիսկոսը աննկարագրելիորեն երջանիկ էր՝ ծառայելու Տիրոջ բանակում, հետևելու Նրան աղքատության մեջ և նմանվելու Նրան՝ չարչարանքով: Եվ ծառայության, Քրիստոսին նմանվելու, Նրա նման չարչարվելու այս երանավետ երջանկությունը Ֆրանցիսկոսը՝ որպես ասպետական մունետիկ և Աստծո թափառական երգիչ, ազդարարում էր ամբողջ աշխարհին: Ֆրանցիսկոսի ամբողջ կյանքը հնչում էր զվարթության այս հիմնական նոտայի վրա: Մտքի անվրդով հանդարտությամբ և ուրախությամբ նա իր սրտում ուրախության երգեր էր երգում ինքն իր և Աստծո համար: Նա անդադար ջանում էր ինքն իրեն ներքնապես և արտաքնապես պահել միշտ ուրախ տրամադրության մեջ: Իր եղբայրների մտերիմ շրջանակում ևս նա գիտեր հնչեցնել ուրախության մաքուր նոտան և դա անում էր այնքան ամբողջական ներդաշնակությամբ, որ նրանք իրենց զգում էին գրեթե Երկնքում: Այդ նույն բերկրալից նոտայով էր ներթափանցված սրբի երկխոսությունն իր ընկերների հետ: Նույնիսկ նրա քարոզները, թեև ապաշխարությամբ բեռնավորված, դառնում էին բերկրալից օրհներգություններ, և նրա պարզ ներկայությունն անգամ տոնական ուրախության առիթ էր բոլոր դասակարգերի մարդկանց համար» (Ֆելդեր, «Սբ Ֆրանցիսկոս Ասիզեցու իդեալները»):

3. ԲԱՑՕԹՅԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս գործառույթը գալիս է Լեգեոնի առաջին օրերից: Սա պարտավորեցնող չէ, բայց խրախուսվում է: Դա կարող է լինել էքսկուրսիայի, ուխտագնացության կամ այլ բացօթյա միջոցառման տեսքով: Կուրիան պետք է որոշի՝ դա Կուրիայի՞, թե՞ պրեզիդիումի գործողություն է: Եթե Կուրիան է կազմակերպողը, գործողությանը կարող են մասնակցել մեկից ավելի պրեզիդիումներ:

4. ՊՐԵԶԻԴԻՈՒՄԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ

Մեծապես խորհուրդ է տրվում, որ յուրաքանչյուր պրեզիդիում միջոցառում կազմակերպի Սուրբ Ծննդյան տոնի առթիվ: Այն վայրերում, որտեղ կան շատ պրեզիդիումներ, մի քանի պրեզիդիումներ կարող են միավորվել այդ միջոցառումը կազմակերպելու համար:

Ոչ լեգեոնական բայց պատշաճ անձինք ևս կարող են մասնակցել այդ միջոցառումներին՝ նրանց ևս Լեգեոնի անդամակցության հրավիրելու նկատառումով:

Լավ կլինի, որ Լեգեոնի աղոթքներն ամբողջությամբ (ներառյալ՝ Վարդարանը) ասվեն՝ երեք մասերի բաժանելով, ինչպես պրեզիդիումի ժողովներին: Աղոթքը որոշ ժամանակ կտանի հասարակական մասից, բայց Տիրամոր հանդեպ այս հարգանքի տուրքը կհատուցվի միջոցառման հաջողությամբ: Լեգեոնի Թագուհին «մեր Խնդության Պատճառն է», և նա կարձագանքի՝ միջոցառմանը մի հատուկ զվարթություն հաղորդելով:

Երաժշտական համարների միջև պետք է լինի առնվազն մեկ լեգեոնական զրույց: Բոլորը փոքր-ինչ ավելին կիմանան Լեգեոնի մասին, իսկ ծրագիրը ավելի հարուստ կդառնա: Մի պարզ զվարճանքն անհամ կլինի:

5. ԿՈՆԳՐԵՍԸ

Լեգեոնի առաջին Կոնգրեսն անցկացվեց 1939թ. Քլերում (Իռլանդիա), Զատկի կիրակի օրը: Այդ Կոնգրեսի հաջողության արդյունքը եղավ այն, որ սկսեցին նման կոնգրեսներ

կազմակերպել, և հիմա դա իր ամուր տեղն ունի Լեգեոնի համակարգում:

Կոնգրեսի կազմակերպումը պետք է վստահվի Կուրիային կամ Կոմիցիումին: Առավել լայն տարածքներ ընդգրկող հավաքները չեն համապատասխանում Կոնգրեսի ընկալմանը և նպատակային պտուղներ չեն կարող տալ: Հետևաբար, «Կոնգրես» անունը չպետք է տալ այդպիսի հավաքներին, եթե դրանք կազմակերպվում են, և ոչ էլ դրանք պետք է համարել կոնգրեսին փոխարինողներ: Բայց կոնգրեսին կարող են հրավիրվել այցելուներ այլ տարածքներից:

Կոնսիլիումը որոշել է, որ յուրաքանչյուր տարածք կարող է հրավիրել կոնգրես առնվազն երկու տարին մեկ անգամ: Այդ գործողությանը պետք է տրամադրվի մեկ ամբողջ օր: Վանական տան առկայությունը կարող է լուծել շատ հարցեր: Եթե հնարավոր է, օրակարգը կարող է սկսվել Սուրբ Պատարագով, որից հետո կարող է լինել հոգևոր առաջնորդի կամ մեկ այլ քահանայի կարճատև քարոզը, և պետք է ավարտվի Ամենասուրբ Հաղորդությամբ օրհնությամբ:

Օրը բաժանվում է բաժինների, որոնցից յուրաքանչյուրը պետք է ունենա իր թեման կամ թեմաները: Յուրաքանչյուր թեմա պետք է շատ համառոտակի ներկայացվի մեկի կողմից, ով նախապես պատրաստել է այն: Բոլորը պետք է ինչ-որ չափով մասնակցեն քննարկումներին: Այս համընդհանուր մասնակցությունը կոնգրեսի հիմնական էությունն է:

Դարձյալ պետք է շեշտել, որ կազմակերպիչ սպաները չպետք է շատ խոսեն կամ անընդհատ միջամտեն քննարկումներին: Խորհուրդների ժողովների պես, կոնգրեսը պետք է անցկացնել խորհրդարանական մեթոդով, այսինքն՝ համընդհանուր մասնակցության սկզբունքի համաձայն՝ կարգավորվելով նախագահի կողմից: Որոշ նախագահողներ հակված են մեկնաբանելու յուրաքանչյուր խոսողի ասածը: Սա հակասում է կոնգրեսի գաղափարին, և դա չպետք է հանդուրժել:

Ցանկալի է առավել բարձր կառավարող որևէ մարմնի ներկայացուցիչների աջակցությունը: Նրանք կարող են կատարել որոշ հատուկ պարտականություններ, օրինակ՝ նախագահել, սկսել քննարկումները և այլն…

Հռետորական տպավորիչ ճառախոսությունից պետք է խուսափել, որովհետև դա կստեղծի անիրական մթնոլորտ: Դա Լեգեոնի միջավայրը չէ. այդ դեպքում ոչ ոք չի ոգևորվի, ոչ մի խնդիր չի լուծվի:

Երբեմն Կոնգրեսին ներկա են լինում բոլոր լեգեոնականները, իսկ երբեմն էլ՝ միայն սպաները: Առաջին դեպքում թույլատրելի է, որ առաջին նստաշրջանի ժամանակ լեգեոնականներին բաժանեն ըստ նրանց զանազան պաշտոնների՝ շարքային անդամներին տեղակայելով մեկ խմբում: Հետո պետք է հաշվի առնել յուրաքանչյուրի հատուկ պարտականությունները և կարիքները: Կամ, որպես այլընտրանք, լեգեոնականներին կարելի է բաժանել ըստ նրանց աշխատանքների, որոնցում ներգրավված են: Բայց այսպիսի բաժանումն ըստ ցանկության է, իսկ հետագա նստաշրջանները որևէ դեպքում չպետք է բաժանվեն ենթաբաժինների: Անիմաստ է անդամներին ի մի հավաքելը և ապա միմյանցից բաժանելն այդքան երկար ժամանակով: Պետք է նշել, որ այստեղ սպաների պարտականությունները շատ ավելի լայն են, քան նրանց պաշտոնական առօրեական գործառույթները: Օրինակ՝ քարտուղարը, որի պաշտոնական պարտականությունները սահմանափակվում են արձանագրություններ կազմելով, չի կարող այստեղ սահմանափակվել միայն այդքանով: Քանի որ բոլոր սպաները Կուրիայի անդամներ են, նրանց նստաշրջանը պետք է ուսումնասիրի Կուրիայի աշխատանքի կատարելագործման մեթոդները՝ և՛ ժողովների գումարման, և՛ ընդհանուր ղեկավարման առումներով:

Կոնգրեսը չպետք է վերածվի պարզապես ևս մեկ Կուրիայի ժողովի՝ զբաղված լինելով կառավարման նույն մանրամասներով և հարցերով, որոնք կարելի էր քննել Կուրիայի ժողովի ժամանակ: Կոնգրեսը պետք է զբաղվի հիմնարար հարցերով: Բայց, անշուշտ, Կոնգրեսի ժամանակ քաղված բոլոր դասերը պետք է կիրառվեն Կուրիայի կողմից: Քննարկվելիք թեմաները պետք է առնչվեն Լեգեոնի հիմնական սկզբունքներին, մասնավորապես հետևյալին.

Ա. Լեգեոնի ջերմեռանդական համակարգը. Լեգեոնը հնարավոր չէ հասկանալ՝ մինչև անդամները որոշակի մակարդակով չընկալեն Լեգեոնի բազմակողմանի

ջերմեռանդությունը: Լեգեոնի աշխատանքը չի կատարվի պատշաճ կերպով, եթե ջերմեռանդությունը չկապվի ակտիվ գործունեության հետ այնքան սերտորեն, որ դառնա դրա դրդապատճառն ու ոգին, այլ խոսքով՝ ջերմեռանդությունը պետք է կենդանացնի ամբողջ աշխատանքն այնպես, ինչպես հոգին կենդանացնում է մարմինը:

Բ. լեգեոնական որակները և դրանց զարգացման միջոցները:

Գ. Լեգեոնի մեթոդական համակարգը՝ ներառյալ ժողովների վարումը և անդամների հաշվետվությունների կենսական կարևորությունը, այսինքն՝ դրանք հաղորդելու և մեկնաբանելու ձևը:

Դ. Լեգեոնի աշխատանքների՝ ներառյալ մեթոդների բարելավումը և նոր աշխատանքներ ծրագրելը, որպեսզի Լեգեոնը կարողանա հասնել յուրաքանչյուր մարդու:

Կոնգրեսի մի հատված պետք է նվիրված լինի մի բանախոսության, որը պետք է տա որևէ հոգևոր առաջնորդ կամ պատրաստված մի լեգեոնական՝ լեգեոնական ջերմեռանդության որևէ թեմայի, իդեալիզմի կամ պարտականության վերաբերյալ:

Յուրաքանչյուր նստաշրջան պետք է սկսվի ու ավարտվի աղոթքով: Լեգեոնի աղոթքները կապահովեն աղոթքներ երեք հանգրվանների համար:

Կարևոր է ժամանակը ճիշտ կառավարելը և ընթացքը վարելը: Այս կետում ձախողման հետևանքով կկորսվի ամբողջ օրը:

Նույն տարածքում կազմակերպվող հերթական կոնգրեսները պետք է տարբերվեն իրենց բնույթով: Մեկ կոնգրեսի ընթացքում կարելի է անդրադառնալ միայն սահմանափակ թվով թեմաների, քանի որ անհրաժեշտ է, որ տարիների ընթացքում հողը հերկվի և նորացվի: Երկրորդ, երբեք չպետք է լինի նույն տեղում դոփելու զգացողությունը: Հետևաբար, պետք է ձգտել փոփոխության՝ կարևորելով ինքին փոփոխությունը: Երրորդ, ինչ-որ հատուկ կանգրեսի հաջողությունը պատճառ է, որպեսզի այդ նույն ծրագրով առաջնորդվեն նաև հաջորդ կոնգրեսի ժամանակ: Բայց այդ հաջողության պատճառը մասամբ պայմանավորված է

նորույթի տարրով, իսկ այդ նորույթն առաջին կոնգրեսից հետո այլևս նորույթ չէ: Եթե յուրաքանչյուր նոր կոնգրեսում նորույթը պետք է լինի խթան հանդիսացող բաղկացուցիչ, ապա կոնգրեսը պետք է նախապես ծրագրավորել ճարտարամիտ ձևով:

«Եթե ցանկանում ենք հասկանալ, թե ինչպե՛ս պետք է հավատացյալ հոգին պատրաստվի աստվածային Մխիթարչի գալստյանը, եկե՛ք մտքով գնանք դեպի Վերնատուն, որտեղ հավաքված են աշակերտները: Այնտեղ, ըստ Ուսուցչի սահմանած կարգի, նրանք հարատևում են աղոթքի մեջ՝ սպասելով, որպեսզի երկնքից Զորություն իջնի իրենց վրա և զգեստավորի իրենց հանդերձանքով և զենքերով՝ կռվելու իրենց առջև ծավալվող պատերազմում: Հոգևոր ամփոփման և խաղաղության այդ սրբազան վայրում մեր հարգանքով լի աչքերը սևեռվում են Հիսուսի մոր՝ Մարիամի վրա, ով Սուրբ Հոգու գլուխգործոցն է, Կենդանի Աստծո Եկեղեցին: Նույն Սուրբ Հոգու ներգործությամբ, Մարիամից՝ որպես մայրական արգանդից, կելնի Պատերազմող Եկեղեցին, որն այս Նոր Եվան ներկայացնում է և շարունակում է իր մեջ կրել» (Գերանջեր, «Ծիսական տարին»):

31

ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ ԵՎ ՆՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ

1. Լեգեոնի ընդլայնման պարտականությունը միայն առավել բարձր խորհուրդներինը չէ, ոչ էլ միայն Կուրիայի պաշտոնն է. դա Կուրիայի յուրաքանչյուր անդամի պարտականությունն է: Ավելին, դա յուրաքանչյուր անհատ լեգեոնականի պարտականությունն է, և յուրաքանչյուրը պետք է գիտակցի այդ փաստը և հաճախակի հաշվետվություն ներկայացնի այդ ուղղությամբ իր կատարած գործակցության վերաբերյալ: Հարցազրույցի կամ նամակագրության միջոցով մարդկանց վրա ազդելը այս պարտականությունը կատարելու ակնհայտ մեթոդ է, բայց կան նաև

հատուկ միջոցներ, որոնք կարելի է առաջարկել յուրաքանչյուրին:

Եթե հնարավոր լիներ ստեղծել բազում կենտրոններ, որոնք կխթանեին Լեգեոնի տարածումը, ապա այն գոյություն կունենար ամենուրեք, և Տիրոջ բերքի դաշտերը կլցվեին պատրաստակամ մշակներով (տե՛ս Ղկ. 10:2): Հետևաբար, ընդլայնման և նոր անդամների հավաքագրման այս կարևոր թեմաները պետք է հաճախակի դրվեն անդամների ուշադրության ներքո, որպեսզի յուրաքանչյուրը հստակորեն հասկանա իր պարտականությունն այս ուղղություններով:

2.Լեգեոնի արդյունավետ մասնաճյուղը կլինի վիթխարի բարիքի աղբյուր: Եթե մեկը մտածում է, որ այդ բարիքը կարող է կրկնապատկվել՝ երկրորդ մասնաճյուղ հիմնելով, յուրաքանչյուր անդամ (ոչ միայն սպաները) պետք է ջանք թափի դա իրականություն դարձնելու համար:

Երբ պարզվի, որ անդամների զեկույցները և օրակարգի այլ կետեր կանոնավոր ձևով կրճատվել են՝ ինքնաբերաբար մասնաճյուղի փակումը մոտեցնելու համար, ապա բաժանումը ոչ միայն ցանկալի է, այլև անհրաժեշտ: Հետևաբար, եթե դա տեղի չունենա, կգերիշխի բարձիթողի վիճակ, աշխատանքի հանդեպ հետաքրքրությունը կվերանա, և անդամները կհեռանան: Այդպիսի պրեզիդիումը ոչ միայն կկորցնի զորությունը՝ ուրիշ մասնաճյուղի կյանք տալու համար, այլև կդժվարանա նույնիսկ պահել սեփական գոյությունը:

Եթե որևէ տարածքում առաջարկվում է ձևավորել հավելյալ պրեզիդիում, ապա գուցե առարկություն լինի, թե այդտեղ գործող լեգեոնականների թիվը բավական է գոյություն ունեցող կարիքները հոգալու համար: Սրա դեմ կարելի է շեշտել հետևյալը. քանի որ Լեգեոնի հիմնական նպատակը իր սեփական անդամների սրբացումն է և այդ սրբության դրսևորման միջոցով համայնքի սրբացումն ընդհանրապես, տրամաբանորեն հետևում է, որ անդամների թվի ավելացումը՝ թեկուզ միայն այդ պատճառով, պետք է լինի սկզբունքային նպատակ: Հնարավոր է, որ նոր անդամներին

աշխատանք հանձնարարելը խնդիր լինի փոքր տարածքներում, այնուամենայնիվ, նրանց անդամակցությունը պետք է ողջունել և ձգտել դրան: Լեգեոնը երբեք չպետք է մտածի սահմանափակող հասկացություններով, թե իբր պետք է բացառել արդեն գոյություն ունեցող անդամներից ավելի լավերին ընդգրկելու հնարավորությունը: Երբ առավել ակնհայտ կարիքները բավարարված են, ավելի խո՛րքը նայեք: Աշխատանքն անհրաժեշտ է, որպեսզի մեքենան գործի: Ուրեմն պետք է գտնել աշխատանքը, և այն կա՛:

Այն վայրերում, որտեղ Լեգեոնն արդեն գոյություն ունի, պետք է ջանալ արդեն գոյություն ունեցող մասնաճյուղի հաշվին նորաստեղծ մասնաճյուղի համար ապահովել սպաների և անդամների արդարացի թվաքանակներ: Պրեզիդիումները պետք է իրենց համար մեծագույն պատիվ համարեն՝ նոր պրեզիդիումների ձևավորման համար տրամադրել իրենց լավագույն անդամներին: Սա էտման ամենաառողջ ձևն է: Այն պրեզիդիումը, որն անդամներ է տրամադրել այդ նպատակով, շուտով անդամների նոր համալրում կունենա, և իր առաքելությունը կօրհնվի հավելյալ ձևով:

Այն քաղաքներում կամ բնակավայրերում, որտեղ Լեգեոնի ոչ մի մասնաճյուղ գոյություն չունի, գուցե անհնարին լինի տրամադրել փորձառու լեգեոնականների: Այս պարագայում նոր պրեզիդիումի հիմնադիրները պետք է առավել եռանդով ուսումնասիրեն Լեգեոնի ձեռնարկը, և նրանց պետք է տրամադրել ցանկացած մեկնաբանություն:

Նոր վայրում նոր պրեզիդիում հիմնելիս լավ կլինի դրա աշխատանքը դարձնել առավելագույնս բազմակողմանի: Սա առավել հետաքրքիր կդարձնի ժողովները և կօգնի առողջ պահել պրեզիդիումը: Ավելին, այդպիսով կարելի է աշխատանքներ գտնել յուրաքանչյուրի կարողություններին և ճաշակին համապատասխան:

3. Այստեղ պետք է զգուշավորության երկու խոսք ասել նոր անդամների հավաքագրման վերաբերյալ: Իրական վտանգ կա, թե նոր անդամների նկատմամբ ներկայացված պահանջները կարող են լինել չափազանց խիստ: Բնական է, որ որոշ փորձառությամբ անդամների համար

չափորոշիչներն ավելի բարձր կլինեն ընդհանուր չափորոշիչներից, բայց դրանք նոր անդամների համար կիրառելը ճիշտ չի լինի: Սխալ կլինի նոր անդամագրվածից պահանջել չափորոշիչներ, որոնց ավելի վաղ անդամագրվածները հասել են Լեգեոնում որոշ ժամանակ լինելուց հետո:

Շատ տարածված է, երբ պրեզիդիումներն անդամագրության ցածր ցուցանիշներ ունենալու համար որպես պատճառ բերում են այն, թե չկան համապատասխան անձինք, բայց այս բացատրությունը հազվադեպ կարելի է արդարացնել, եթե ուսումնասիրենք բոլոր հանգամանքները: Սխալը գրեթե միշտ պրեզիդիումինն է՝ հետևյալ պատճառներով.

Ա. լուրջ ջանքեր չեն գործադրվել անդամների հավաքագրման ուղղությամբ, որը նշանակում է, թե լեգեոնականների կողմից կա պարտականությունների անհատական կամ հավաքական արհամարհանք,

կամ

Բ. պրեզիդիումը սխալ է գործում՝ նոր անդամների համար չափազանց լարված փորձնական ստուգումներ նշանակելով, որոնք նույնիսկ սկզբնական և ներկա անդամները չէին կարողանա անցնել:

Պատասխանատուները պատճառաբանում են, թե իրենք չպետք է ռիսկի դիմեն՝ անհամապատասխան անձանց ներգրավելով: Բայց նրանք չպետք է մերժեն անդամակցությունը նոր անձանց համար՝ ի շահ նրանց, բացառությամբ շատ քիչ թվով անձանց միայն: Եթե ընտրություն կատարելու լինենք չափազանց խստության և չափազանց ազատ թողնված լինելու միջև, առաջինն առավել մեծ սխալ է, քանի որ այն սպանում է աշխարհական առաքելական ոգին աշխատողների պակասի պատճառով: Մյուսը պարզապես սխալներ կառաջացնի, իսկ դա կարելի է ուղղել:

Պրեզիդիումը պետք է ընտրի միջին ճանապարհ, բայց պետք է անխուսափելիորեն առերեսվել ռիսկի որոշակի տարրի: Միակ ճանապարհը՝ համոզվելու, թե արդյոք անձը համապատասխանում է, թե ոչ, գործնականում փորձարկելն է: Իրական ապահովությունն այն է, որ անհամապատասխան անձը, եթե մտնում է, աշխատանքի լարվածության պատճառով շուտ դուրս է գալիս:

Ո՞վ է երբևէ լսել մի բանակի մասին, որը թողնում են այն պատճառով, որ վախենում են, թե այդտեղ կարող են ներթափանցել անհամապատասխան տարրեր: Բանակի համակարգը գոյություն ունի՝ մեծ թվաքանակով միջին մակարդակի անձանց ձևավորելու և կառավարելու համար: Նմանապես, Լեգեոնը, լինելով մի բանակ, պետք է նպատակ ունենա արդարացիորեն մեծ թվով անդամներ ունենալու: Այն, անշուշտ, ունի անդամակցության համար իր ստուգարքները, բայց այդ դրանք չպետք է լինեն այնպիսին, որ բարի և միջին մակարդակի անձինք չկարողանան անցնել: Լեգեոնի հոգևոր և սերտորեն կապակցված համակարգի գոյության նպատակն է՝ ձևավորել և կառավարել անձանց, որոնք կարիքն ունեն ձևավորման և կարգուկանոնի, և ոչ թե գերմարդկանց: Չպետք է նաև վերցնել միայն գերազանցորեն սուրբ և զուսպ անձանց, որովհետև այդպես սովորական աշխարհականներն ընդհանրապես ներկայացված չեն լինի:

Հետևաբար, ամփոփելու համար պետք է ասել, որ ցավն այն չէ, որ շատ քիչ են անդամակցությանը համապատասխանողները, այլ այն, որ շատ քչերն են պատրաստակամ՝ տանելու անդամակցության բեռը: Սա բերում է հետևյալ նկատառումներին.

Գ. համապատասխան անձանց կարող են շեղել Լեգեոնին անդամակցելուց, որովհետև պրեզիդիումի մթնոլորտը չափազանց խեղդող է կամ անհարմար նրանց համար:

Լեգեոնը չի սահմանափակում իր անդամակցությունը երիտասարդների համար, ընդհակառակը, երիտասարդներին պետք է հա՛տկապես փնտրել և հոգ տանել նրանց մասին: Եթե Լեգեոնը չի գրավում երիտասարդներին, ուրեմն ձախողվել է և իր նպատակին չի հասել, որովհետև շարժումը, որը երիտասարդներին չի առնչվում, երբեք լայն ազդեցություն չի ունենա: Ավելին, երիտասարդները ապագայի բանալին են: Հետևաբար, հարկավոր է հասկանալ երիտասարդների ողջամիտ ճաշակները և թույլ տալ, որ դրսևորվեն: Պայծառ, առատաձեռն և խանդավառ երիտասարդներին չպետք է հեռու պահել՝ սահմանելով չափորոշիչներ, որոնք հարմար չեն երիտասարդների համար, կամ

որոնք ոչ այլ ինչ են, քան զվարթությունը սպանող չափորոշիչներ:

Դ. Սովորական ներողությունը, թե «Ես ժամանակ չունեմ», հավանաբար ճիշտ է: Շատ մարդիկ պարզապես լցնում են իրենց ժամանակը, բայց ոչ կրոնական գործունեությամբ. սա վերջին տեղում է: Այդ անձանց համար հավիտենական շահ կլինի, եթե օգնենք, որ նրանք տեսնեն, որ ապրում են սխալ արժեհամակարգով: **Առաքելություն կատարելը պետք է լինի առաջնային,** և որոշ այլ բաներ պետք է զիջեն իրենց տեղը նրան:

«Յուրաքանչյուր կրոնական հասարակության համար առաջնային օրենքը պետք է լինի հարատևելը, սեփական առաքելական գործունեությունը աշխարհով մեկ տարածելը և հասնել հոգիների հնարավոր ամենամեծ թվաքանակին: «Աճեցե՛ք և բազմացե՛ք և լցրե՛ք երկիրը» (Ծնն. 1:28): Կյանքի այս օրենքը ինքն իրեն պարտադրում է յուրաքանչյուր մարդու, որը դառնում է հասարակության անդամ: Հայր Շամինադը այդ օրենքը ձևակերպում է հետևյալ կերպ. «Մենք պետք է նվաճումներ կատարենք Երանելի Կույսի համար. բոլոր մարդկանց համար, որոնց հետ ապրում ենք, պետք է հասկանալի դարձնենք, թե որքա՛ն քաղցր է Մարիամին պատկանելը, որպեսզի նրանցից շատերին համոզենք միանալ մեզ՝ մեր առաջընթացիկ հաղթարշավին» (Petit Traite de Mariologie: Marianiste):

32

ԿԱՆԽԱՏԵՍԵԼԻ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Լեգեոնի կարիքը չկա այստեղ»:

Խանդավառ անձինք, որոնք ցանկանում են Լեգեոնի մասնաճյուղ հիմնել նոր տարածքում, գուցե առարկություն լսեն, թե Լեգեոնի կարիքն այդտեղ չկա: Քանի որ Լեգեոնն այնպիսի կազմակերպություն չէ, որն անում է միայն մեկ

հատուկ տեսակի աշխատանք, այլ նախ և առաջ կաթողիկէ եռանդի ու ոգու զարգացման համար է (որը կարող է հետո հիմք դառնալ ցանկացած աշխատանքի կատարման համար), այդպիսի առաջարկությունը սովորաբար հավասարազոր է դառնում այն հայտարարությանը, թե այդտեղ կարիք չկա կաթողիկէ եռանդի՝ մի վստահեցում, որը հիմնավորապես սխալ է: Համաձայն Հայր Ռաուլ Պլուսի հակիրճ ձևակերպման, «Քրիստոնյան նա է, ում խնամքին է Աստված վստահել իր բարեկամներին»:

Առանց բացառության, բոլոր վայրերում կենսականորեն անհրաժեշտ է այդպիսի առաքելական գործունեությունը, և բազում պատճառներով: Առաջինը, համայնքի այն անդամները, որոնք կարող են դա անել, պետք է ունենան արդյունավետ հնարավորություն՝ ապրելու առաքելական կյանքով: Երկրորդ, բնակչության մեջ այդպիսի առաքելական աշխատանքի խթանումն անհրաժեշտ է մեր օրերում, եթե ուզում ենք կանխել, որ կրոնը չվերածվի մակերեսային առօրեականության կամ նյութապաշտության: Երրորդ, այդպիսի աշխատողների համբերատար և գործունյա ջանքերը պահանջվում են հովվելու համար նրանց, ովքեր ապրում են ձախողված կյանքով, կամ նրանց, ովքեր հակված են հեռանալ կրոնից:

Բոլոր հոգևոր վերադասներն ունեն պատասխանատվություն՝ զարգացնելու իրենց պատասխանատվության տակ գտնվող անձանց հոգևոր կարողությունները: Ուրեմն, ևս առավել պետք է կարևորել առաքելական գործունեությունը՝ քրիստոնեական նկարագրի այդ տարբերիչ և էական բաղադրիչը: Հետևաբար պետք է կոչ արվի առաքելություն կատարելու: Բայց կանչելը՝ առանց տրամադրելու արձագանքման միջոցները, լռությունից գրեթե չի տարբերվում, որովհետև կոչին արձագանքողներից քչերը կունենան կարողություն ինքնուրույն ստեղծելու միջոցներ: Հետևաբար պետք է հիմնվի առաքելական գործունեություն կատարող կազմակերպության ձև ունեցող մի մեքենա:

2. «Չկան անդամակցությանը համապատասխանող անձինք»

Քանի որ այս առարկությունը սովորաբար արդյունք է պահանջվող աշխատողների սխալ ընկալման, պետք է

ընդհանուր առմամբ ասել, որ յուրաքանչյուր գրասենյակում, խանութում և այլ աշխատատեղերում կան հնարավոր լեգեոնականներ:

Այդ հնարավոր լեգեոնականները կարող են լինել ուսյալ կամ թերուս, աշխատողներ կամ արձակուրդի անցածներ, կամ գործազուրկներ: Հնարավոր լեգեոնականները որևէ հատուկ մարդկային ցեղի, գույնի, ռասսայի կամ դասակարգի մենիշխանությունը չեն և կարող են լինել ամեն տեղ: Լեգեոնն ունի հատուկ պարգև, որով ընդունակ է Եկեղեցու ծառայության մեջ ներգրավելու այդ թաքնված ներուժը, այդ դեռևս չզարգացած բնավորության նկարագիրը: Գերի. Ալֆրեդ Օ'Ռահիլին, ուսումնասիրելով Լեգեոնի գործունեությունը, գրեց հետևյալը. «Ես մեծ հայտնագործություն եմ արել, կամ ավելի ճիշտ, ես գտա, որ մի հայտնագործություն է կատարվել, որ թվացյալ հասարակ մարդկանց և կանանց մեջ կա մի թաքնված հերոսականություն, էներգիայի անծանոթ աղբյուրներ, որոնք բացվել են»:

Անդամակցության չափորոշիչները չպետք է շեղվեն այն չափորոշիչներից, որոնք պապերն ունեին իրենց մտքերում, երբ հայտարարում էին, թե ցանկացած դասակարգում կարելի է պատրաստել և ձևավորել ընտրյալների մի խումբ առաքելական գործի համար:

Այս առնչությամբ հատկապես ուշադիր պետք է ընթերցել 31-րդ Գլխի («Ընդլայնումը և նոր անդամների հավաքագրումը») պարագրաֆ 3-րդի Բ կետը, ինչպես նաև՝ 40-րդ Գլխի («Լեգեոնը՝ որպես առաքելության լրացում») 7-րդ բաժինը, որը խրախուսում է լայն անդամակցությունը Լեգեոնին նորահիմն քրիստոնեական համայնքներում:

Անդամներ գտնելու իրական դժվարությունը ցույց կտա այն, որ խնդրո առարկա տարածքում հոգևոր ցածր չափանիշներ կան, և ուրեմն, ոչ թե պետք է ոչինչ չանել այդտեղ, այլ առավել ևս մեծ կարիք կա հիմնելու Լեգեոնի մի մասնաճյուղ, որպեսզի այն թթխմորի դեր կատարի այդտեղ: Մտովի պետք է հիշել այն փաստը, որ թթխմորը մեր Տիրոջ պատվերն է՝ չափանիշները բարձրացնելու համար (տե՛ս Մտթ. 13:33): Հիշե՛նք, որ պրեզիդիումը կարող է հիմնվել նաև չորս, հինգ կամ վեց անդամներով: Երբ նրանք սկսեն

աշխատել և հասկանան աշխատանքի պահանջները, նրանք արագ կգտնեն և կբերեն այլ հարմար անդամների ևս:

3. «Լեգեոնի այցելությունը դժկամությամբ կընդունվի»:

Եթե իրոք այդպես լինի պարագան, հետևությունը պետք է լինի այն, որ պետք է ընտրել ուրիշ տեսակի աշխատանք, և ոչ թե թողնել Լեգեոն ունենալու գաղափարը (բարիք գործելու իր բոլոր հնարավորություններով՝ անդամների և համայնքի համար): Այնուամենայնիվ, պետք է ասել, որ մինչև հիմա ոչ մի վայրում Լեգեոնն այցելությունների հետ կապված չի ունեցել որևէ մշտական կամ էական դժվարություն: Եթե այցելությունը կատարվել է Լեգեոնի առաքելագործ ճշմարիտ ոգով, սովորաբար պետք է հասկանալ, որ լեգեոնականների հանդեպ սառնությունը վկայում է կրոնական անտարբերության կամ ավելի վատ իրավիճակի մասին, հետևաբար, հենց այնտեղ, որտեղ լեգեոնականներին ամենաքիչն են ցանկանում տեսնել, նրանց աշխատանքի ամենամեծ կարիքը կա: Սկզբնական դժվարությունների պատճառով չի կարելի արդարացնել այցելությունները չշարունակելու միտքը: Գրեթե միշտ այն լեգեոնականները, որոնք չեն վախեցել այս սառցե պատնեշներից, կարողացել են հաղթահարել ոչ միայն դրանք, այլ նաև դրանց առավել ծանր պատճառները:

Պետք է հատկապես շեշտադրել այն փաստը, որ տունը հոգևոր իմաստով ռազմավարական կետ է: Տունը շահելը՝ նշանակում է շահել հասարակությունը: Իսկ տունը շահելու համար պետք է գնալ այդ տունը:

4. «Երիտասարդները ստիպված են ծանր աշխատանք կատարել օրվա ընթացքում և իրենց ազատ ժամանակն ուզում են հանգստանալ»:

Որքան էլ որ այս միտքը ողջամիտ է հնչում, բայց եթե այդպես մտածելով գործենք, աշխարհը կլքվի որպես կրոնական անապատ, որովհետև Եկեղեցու աշխատանքը կատարում են ո՛չ հանգստի վիճակում: Ավելին, մի՞թե ճիշտ չէ, որ հոգևոր բարձր նկարագիր ունեցող երիտասարդներն իրենց ազատ ժամանակը տրամադրում են քիչ թե շատ անկանոն զվարճանքներին և ոչ թե իսկական հանգստին: Ծանր

աշխատանքի և հաճույքի երեկոների այդպիսի հաջորդականության մեջ շատ հեշտ է ընկնել գործնական նյութապաշտության մեջ, որը մի քանի տարի անց մարդկային սիրտը թողնում է առանց իդեալի՝ ցավելով կորսված երիտասարդության համար, որ արդեն անցել է՝ իր հետ տանելով այն միակ բաները, որոնք իրենք սովորել էին գնահատել: Եվ ամեն ինչ կարող է նույնիսկ առավել վատ ավարտ ունենալ: Մի՞թե Սբ Հովհան Ոսկեբերանը չի ասում, որ երբեք չի կարողացել ինքն իրեն համոզել այն մտքում, թե որևէ մեկը կարող է հասնել փրկության՝ առանց երբևէ որևէ բան անելու մերձավորի փրկության համար:

Շատ ավելի իմաստուն կլիներ երիտասարդներին խրախուսել Տիրոջը նվիրել իրենց ազատ ժամանակի առաջին պտուղները՝ անդամակցելով Լեգեոնին: Այդ առաջին պտուղները կոգեշնչեն երիտասարդի ամբողջ կյանքը և նրա սիրտն ու երեսը կպահեն խաղաղ և երիտասարդ: Եվ դեռևս ազատ ժամանակ կմնա հանգստի համար, որը կարելի է կրկնակի վայելել, որովհետև կրկնակի է դրա վաստակը:

5. «Լեգեոնը պարզապես ևս մեկն է բազում կազմակերպությունների մեջ, որոնք ունեն նույն իդեալները և ծրագիրը»:

Ճիշտ է այն, որ իդեալիզմի պակասություն չկա, և այն, որ յուրաքանչյուր մեկը, ով ունի թուղթ ու գրիչ, մի քանի րոպեում կարող է գրել ցանկալի աշխատանքների մի ծրագիր: Հետևաբար, ճիշտ է, որ Լեգեոնը միայն մեկն է տասնյակ հազարավոր կազմակերպություններից, որոնք առաջարկում են ազնիվ պատերազմ մղել մարդկային հոգիների փրկության համար և ունեն կարևոր աշխատանքների ծրագրեր: Բայց նաև ճշմարիտ է այն, որ Լեգեոնն այն քչերից է, որոնք շատ որոշակի ձևով առաքելական գործ են կատարում: Մի աղոտ իդեալիզմ, որն շրջապատում բարիք գործելու ընդհանուր կոչեր է անում կազմակերպության անդամներին, միշտ կուղեկցվի ամենաանորոշ կատարողականով: Լեգեոնը որոշակիացնում է իր պատերազմը հստակ հոգևոր նկարագրով, աղոթքի հստակ ծրագրով, հստակ շաբաթական առաջադրանքով, հստակ շաբաթական հաշվետվությամբ և, ի վերջո, հստակ կատարողականով: Եվ

վերջապես, բայց ոչ վերջին տեղում, Լեգեոնն իր մեթոդական համակարգը հիմնում է Մարիամի հետ միության՝ աճող ուժականությամբ օժտված սկզբունքի վրա:

6. «Լեգեոնի աշխատանքներն արդեն կատարվում են այլ կազմակերպությունների կողմից, Լեգեոնը կարող է բախվել նրանց հետ»:

Որքա՛ն տարօրինակ է լսել այս բառերն այն վայրերի մասին, որտեղ բնակչության լայն զանգվածները գործնականում պասիվ կաթողիկէներ են կամ կաթողիկէներ չեն, և որտեղ առաջընթացն արհամարհված է:

Որքա՛ն տխուր է, երբ որևէ մեկը հաշտվում է այսպիսի status quo-ի հետ, ինչը նշանակում է, որ այդտեղ Հերովդեսն է, որ զբաղեցնելու է մարդկանց սրտերի գահը, մինչդեռ Տերը և Նրա սիրելի Մայրը պետք է հարատևորեն հետ մղվեն դեպի թշվառ ախոռը:

Այդպիսի բառերը, որոնք մերժում են ընդունել Լեգեոնին, հաճախ նաև օգտագործվում են այն կազմակերպությունների կողմից, որոնք ներկայացնում են միայն անուններ՝ առանց կատարողականի, բանակներ, որոնք գուցե գոյություն ունեն, բայց երբեք չեն հաղթում որևէ թշնամու:

Ավելին, աշխատանքը երբեք չի կարելի համարել կատարված, եթե այն պատշաճ ձևով չի կատարվում: Հետևաբար, չի կարելի համարել, որ աշխատանքը կատարված է, եթե դրանում ներգրավված են մոտ մեկ տասնյակ առաքելական աշխատողներ՝ այնտեղ, որտեղ ճիշտ կլինի, որ ներգրավված լինեն հարյուրավոր, նույնիսկ հազարավոր աշխատողներ, և ցավոք, սա է ճշմարտությունը: Հաճախ, կազմակերպությունների պակասը, ինչպես ցույց են տալիս փոքր թվերը, նշանակում է հոգևոր ոգու և մեթոդի պակաս:

Վստահաբար, իմաստուն կլիներ ստուգել Լեգեոնը՝ հանձնարարելով գործողությունների սահմանափակ մի ոլորտ: Արդյունքը կարող է համոզիչ լինել, և մի փոքրիկ մասնաճյուղի անդամները կարող են հինգ գարեհացի կտորների նման բազմապատկվել այնքան, որ բավարարեն բոլոր կարիքները և նույնիսկ ավելիով (հմմտ.՝ Մտթ. 14:16-21):

Լեգեոնը չունի աշխատանքների հատուկ ծրագիր: Այն չի ենթադրում նոր աշխատանքներ, այլ արդեն գոյություն

ունեցող և դեռևս արդյունավետ կերպով չհամակարգված աշխատանքների համար առաջարկում է մի նոր գործելաոճ, ինչպես այն արդյունքները, որոնք կարելի է ունենալ, երբ նախկինում ձեռքով կատարված աշխատանքները կատարելու համար սկսում ենք օգտագործել էլեկտրականություն:

7. «Արդեն կան չափազանց շատ կազմակերպություններ: Ճիշտ կլինի վերակենդանացնել գոյություն ունեցող հասարակությունները կամ ընդլայնել նրանց գործառույթները Լեգեոնի կողմից առաջարկվող աշխատանքները կատարելու համար»:

Սա կարող է լինել հակառակ մի փաստարկ: «Չափազանց շատ» բառերը կարելի է արդարացիորեն կիրառել կյանքի յուրաքանչյուր ոլորտին: Բայց նորը չի մերժվում այն պատճառով, որ այն նոր է, և ժամանակ առ ժամանակ մեծ առաջընթաց է գրանցվում: Ուրեմն, Լեգեոնը ևս իրավունք ունի հնարավորության՝ ապացուցելու իր արդյունավետությունը: Եթե այն «ևս մեկը» չէ, այլ Աստծուց է, ապա ինչպիսի՛ կորուստ կլինի հեռացնելն այն սեփական դռնից:

Ավելին, վերը բերված առարկությունը ենթադրում է, թե խնդրո առարկա աշխատանքը ներկայումս չի կատարվում: Այդպիսի պայմաններում ոչ իմաստ ունի և ոչ էլ համընդհանուր սովորություն է՝ մերժելը մի նոր համակարգ, որն այլ վայրում ցույց է տվել իր կարողությունը՝ կատարելու այդ աշխատանքը:

8. «Սա փոքր վայր է, Լեգեոնի համար այստեղ տեղ չկա»:

Անսովոր չէ այսպիսի խոսքեր լսել այնպիսի վայրերի մասին, որոնք, թեև մեծ չեն, բայց տհաճ համբավ ունեն:

Նորից պետք է ասել, որ մի որևէ գյուղ կարող է ունենալ սովորական բարի համբավ, բայց լինել լճացած վիճակում՝ լճացած բարոյական որակներում, լճացած՝ մարդկային հետաքրքրություններում, այնպես որ երիտասարդները, բարոյական աջակցություն չունենալով, փախչում են դեպի առավել մարդաշատ կենտրոններ:

Խնդրի պատճառը կրոնական իդեալիզմի բացակայությունն է, որը գալիս է նրանից, որ հիմնական պարտականություններից բացի, ուրիշ ոչ մի բան չեն ուզում անել: Երբ

կրոնական իդեալիզմ չկա, մնում է կրոնական անապատը (և միայն գյուղերը չէ, որ այդպիսի անապատներ են): Այդ անապատը նորից ծաղկեցնելու համար հարկավոր է գործընթացը հետ շրջել՝ ստեղծել առաքյալների մի փոքրիկ խումբ, որն իր սեփական ոգին կփոխանցի ուրիշներին և կհաստատի վարքագծի նոր նորմեր: Նրանք կկատարեն այդ վայրին համապատասխան աշխատանք, կյանքը վերստին հոգի կառնի, և մարդկանց արտագաղթը կդադարի:

9. «Լեգեոնի շատ աշխատանքներ հոգևոր գործեր են, որոնք իրենց բնույթով պատկանում են քահանային, և որոնք պետք է տրվեն աշխարհականներին միայն այն դեպքում, երբ հոգևորականները չեն կարող կատարել դրանք: Քանի որ այդպես է, ես կարող եմ իմ հոգևոր հոտին այցելել տարվա մեջ մի քանի անգամ և ունենալ գոհացուցիչ արդյունքներ»:

Այս առարկությանն ըստ էության պատասխանում է Գլուխ 10-ը՝ «Լեգեոնի առաքելական գործունեությունը», նաև առավել մանրամասն գրված է սույն հատվածում: Բայց պետք է նախօրոք ասել, որ չպետք է կատարել որևէ աշխատանք, որը ցանկալի չէ:

Երբ ճանաչում ենք աշխարհի աներկբայորեն ամենասուրբ քաղաքներից մեկը, ակնհայտ է դառնում, որ այն լի է մարդկանց բազմություններով, որոնք հիվանդ են մեղքով և աշխարհիկությամբ և եռուն՝ ժամանակակից քաղաքակրթության խնդիրներով: Այդ կամ այլ քաղաքի կամ համայնքի համար այն մտածումը, թե ամեն ինչ կարելի է ապահովել այցելություններով, ինչքան էլ դրանք պտղաբեր լինեն տարեկան մեկ, երկու, երեք կամ չորս անգամ, արդարացված չէ: Եթե ամեն ինչ լավ է, օրինակ, շատերը Սուրբ Խորանին կմոտենային ամեն օր, առավել շատերը՝ ամեն շաբաթ կամ, նվազագույնը, ամիսը մեկ անգամ: Այդ դեպքում, ինչո՞ւ է բավարար շաբաթական չորս-հինգ ժամ խոստովանարանում անցկացնելը: Որտեղի՞ց է այս սարսափելի անհամաչափությունը:

Դարձյալ մտերմության կամ անձնական շփման ինչպիսի՞ որակ է պահանջվում կատարելու համար հովվական

պարտավորությունը քահանային հանձնված յուրաքանչյուր մարդկային հոգու համար, այն հոգու, որը, ինչպես ասում էր Չարլզ Բորրոմեոն, ամբողջ թեմն է՝ հանձնված մեկ եպիսկոպոսի խնամքին: Պարզ հաշվարկը ցույց կտա, թե վերջին հաշվով ինչ է նշանակում յուրաքանչյուրի համար տարեկան միայն կես ժամ հատկացնելը: Եվ արդյոք այդ կես ժամը բավարար նվիրաբերում կլինե՞ր: Սբ Մադլեն Սոֆի Բարաթը, անթիվ հարցազրույցներից բացի, դժվարության մեջ գտնվող մեկին գրել է երկու հարյուր նամակ: Շատ լեգեոնական առանձին առաքելություններ տևել են տասը և ավելի տարիներ և դեռևս ընթացքի մեջ են: Մինչդեռ եթե ծանրաբեռնված քահանան չի կարող հատկացնել գեթ կես ժամ, և եթե, ինչպես ասվում է, Լեգեոնը նրան կտրամադրի խանդավառ անձանց և շատերին՝ այնտեղ, որտեղ քահանան մենակ է, անձինք, որոնք կհնազանդվեն քահանայի յուրաքանչյուր խոսքին, որոնք սթափ ընկալում ունեն, որոնք քահանայի նման կարողանում են հասնել անհատներին և ընտանիքներին, ունեն անդիմադրելի շնորհներ՝ ոգևորելու հոգիներին՝ հասնելու առավել բարձր բաների, որոնք քահանային հնարավորություն են ընձեռում մարդկային հոգիներին տալ ավելին, քան մի սովորական ծառայություն. այս ամենով հանդերձ, արդյոք արդարացի կլինի՞ քահանայի և նրա աշխատանքի համար, որ մերժի այսպիսի օգնությունը:

«Մարիամի Լեգեոնը քահանային բերում է հավասարարժեք երկու օրհնություն. առաջին՝ հաղթանակի գործիք, որը կրում է Աստծո Հոգու ճշմարիտ նշանը, և հետևաբար, ինքս ինձ պետք է հարցնեմ, թե արդյոք ես իրավունք ունե՞մ արհամարհելու այդպիսի նախախնամական մի զենք: Երկրորդ՝ կենդանի ջրի մի աղբյուր, որը կարող է նորացնել մեր ամբողջ ներքին կյանքը: Եվ, բնականաբար, գալիս եմ դեպի երկրորդ հարցումը. եթե ինձ առաջարկվում է այս ջինջ և խոր կյանքի աղբյուրը, մի՞թե ես պարտավոր չեմ խմել դրանից (Կանոնիկոս Գվինոն):

10. «Ես վախենում եմ, որ անդամների մի մասը գուցե լավ չհասկանա»:

Այստեղ կա իրականության ընկալման պակաս: Սա նույնն է, ինչ մերժես հավաքել բերքը՝ այն պատճառաբանությամբ,

թե որոշ դուրս ցցված մասեր կարող են փչանալ անճարակ շարժումների հետևանքով: Վտանգված բերքը հոգիներն են՝ խեղճ և տկար, և կույր, և հաշմված, այնպիսի կարիքի մեջ, այնպիսի թվաքանակներով, որ կա վտանգ, թե վիճակը կարելի է համարել անբուժելի: Սակայն հենց այսպիսիների համար է, որ Տերը խնդրում է փնտրել նրանց փողոցներում և նրբանցքներում, մայրուղիներում և ցանկապատերի մոտ, որպեսզի Իր տունը լցվի նրանցով (Ղկ. 14:21-23): Այդպիսի հունձքը չի կարող կատարվել որևէ այլ կերպ, քան միայն աշխարհականների գումարտակների հաղթարշավի միջոցով: Կարող են լինել որոշ թյուրըմբռնումներ: Որոշ չափով դրանք անբաժանելի են խանդավառությունից և կյանքից: Թյուրըմբռնումներից ապահովագրելու երկու ճանապարհ կա՝ ամոթալի անգործությունը կամ հոգատար կարգապահությունը: Այն սիրտը, որն արձագանքում է Հիսուսի կարոտին՝ հիվանդ բազմությունների հանդեպ, սարսափով հետ կշրջվի առաջին ճանապարհից և ամբողջ ուժով կնետվի այդ կոտրված հոգիների հունձքի մեջ:

Լեգեոնի պատմության մեջ մինչ օրս չեն եղել թյուրըմբռնումներ՝ ո՛չ լուրջ և ո՛չ մեծ թվաքանակով, որոնք հուշեն, թե պետք է կանխատեսել թյուրըմբռնումները, և նվազագույնը, ակնհայտ է եղել հոգատար կարգապահությունը:

11. Խոչընդոտներ՝ սկսելիս. դրանք միշտ լինելու են:

Սրանում Լեգեոնը միայնակ չէ՝ որպես բարի գործ սկսող: Մի փոքրիկ վճռականությունն էլ ի հայտ կբերի այդ խոչընդոտները, որոնք սկզբում այնքա՛ն վիթխարի են թվում, որ նմանվում են անտառի, որը հեռավորության վրա ահազդու և անթափանց է թվում, բայց մոտենալիս տեսնում ես, որ հեշտ ու անցանելի է:

Հիշե՛ք նաև, որ «նրանք, ովքեր նշանառություն չեն կատարում, նպատակին չեն հասնում, ովքեր երբեք չեն համարձակվում, երբեք չեն շահում, մշտապես ապահով լինել՝ նշանակում է մշտապես թույլ լինել, և որ էական բարիք գործելը փոխհատուցում է բազում անկատարությունների դիմաց» (Սուրբ Ջոն Հենրի Նյուման):

Շնորհի ներգործության մասին խոսելիս թող ոչ ոք չլինի այնքան աշխարհիկ, որ արհամարհի շնորհի գոյությունը:

Չի կարելի հղում անել առարկություններին և վնասելու հնարավորություններին՝ առանց օգնելու մասին մտածելու: Լեգեոնը կառուցված է աղոթքի վրա, աշխատում է հոգիների համար և ամբողջությամբ պատկանում է Մարիամին: Հետևաբար, երբ խոսում եք Լեգեոնի մասին, մի՛ խոսեք մարդկային կանոններից, այլ պատմեք Աստծո՛ կանոնների մասին:

«Մարիամը Բացառիկ Կույս է, և ի տարբերություն որևէ այլ կույսի, Եզակի Կույս է՝ Virgo Singularis: Երբ խոսում եք նրա մասին, մի՛ խոսեք մարդկային կանոնների մասին, այլ խոսե՛ք Աստծո կանոնների մասին» (Բոսյուե):

33

ԼԵԳԵՈՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԿԱՆՈՆԱՎՈՐ ԵՎ ՃՇՏԱՊԱՀ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՊՐԵՔԻԴԻՈՒՄԻ ԺՈՂՈՎՆԵՐԻՆ

(տես Գլուխ 11, «Լեգեոնի համակարգը»)

ա) Այս պարտականությունը կատարելը ավելի դժվար է, երբ մեկը հոգնած է, քան երբ թարմ է, և երբ եղանակը վատն է, քան հիանալի, և առհասարակ երբ մեկը գայթակղվում է գնալ այլ տեղ և ոչ թե ժողովի: Իսկ ինչպե՞ս ստուգել, եթե ոչ դժվարության մեջ: Եվ որտե՞ղ է իսկական վաստակը, եթե ոչ դժվարությունները հաղթահարելու մեջ:

բ) Ավելի հեշտ տեսանելի է աշխատանք կատարելու արժեքը, քան թե ժողովին հաճախելու և զեկուցելու կարևորությունը, սակայն ժողովը առաջնային կարևորություն ունի: Ժողովը աշխատանքի համեմատ այն է, ինչ արմատը՝ ծաղկի համար. ծաղիկը չի կարող ապրել առանց արմատի:

գ) Երկար ճամփորդությամբ հանդերձ, ժողովներին հավատարմորեն հաճախելը գերբնական տեսլական ունենալու մասին ապացույց է, որովհետև բնական տրամաբանությունը հուշում է, որ ժողովներին հաճախելու համար չարժե ժամանակ կորցնել ճամփորդության վրա: Բայց դա կորսված ժամանակ չէ: Դա կատարված ամբողջ աշխատանքի մի մասն է, և մանավանդ վաստակած մասը: Մի՞թե ժամանակի կորուստ էր Մարիամի երկար ճամփորդությունը Եղիսաբեթին այցելելու համար:

«Սբ Թերեզան, ի շարս իր մյուս առաքինությունների, ուներ մի աննահանջ քաջություն: Նրա մշտական սկզբունքն այն էր, որ բողոքելուց առաջ «հարկավոր է անել մեր ուժերի առավելագույնը»: Որքա՜ն շատ անգամներ նա ստիպված էր լինում բացակայել առավոտյան ժամերգությունից գլխապտույտի և ուժգին գլխացավերի պատճառով: «Ես դեռ կարող եմ քայլել,– ասում էր նա,– և ուրեմն պետք է լինեմ իմ տեղում»: Այս անսպառ էներգիայի շնորհիվ նա կատարում էր գործեր, որոնք հերոսական էին» (Սբ Թերեզա Լիզյոյից):

2. ՇԱԲԱԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ա) Այս աշխատանքը պետք է լինի «էական», այսինքն՝ լեգեոնականը շաբաթական մի քանի ժամ պետք է հատկացնի դրան: Բայց լեգեոնականները չպետք է այդպես հաշվարկով սահմանափակվեն. մեծաթիվ լեգեոնականներ շատ են գերազանցում այդ նվազագույնը՝ մինչև իսկ նվիրելով շաբաթական մի քանի օր: Շատերը Լեգեոնի համար աշխատում են ամեն օր: Աշխատանքը պետք է լինի մի որոշակի գործունյա պարտականություն՝ հանձնարարված պրեզիդիումի կողմից և ոչ թե որևէ լեգեոնականի անձնական քմահաճույքով թելադրված մի բան: Աղոթքները կամ այլ հոգևոր վարժանքներ, ինչքան էլ պատկառելի լինեն, չեն բավարարում այդ պարտականությանը, ոչ էլ մասամբ փոխարինում են ակտիվ աշխատանքին:

բ) Աշխատանքը աղոթք է՝ կատարված այլ ձևով, և աղոթքի կանոններն էլ պետք է կիրառվեն դրա նկատմամբ:

Ոչ մի աշխատանք չի կարող հարատևել առանց գերբնական հիմքի: Կամ պարտականությունը հեշտ կլինի, և այս դեպքում այն կդառնա միալար, կամ եթե հետաքրքիր լինի, ամենայն հավանականությամբ, կլինի դժվար և կուղեկցվի մերժումներով և թվացյալ ձախողմամբ: Երկու դեպքում էլ մարդկային նկատառումները կպահանջեն թողնել աշխատանքը: Փոխարենը, լեգեոնականին պետք է պատրաստել՝ նայելու համար մարդկային զգացմունքների մշուշից այն կողմ, մշուշ, որը փակում է ամեն տեսակ աշխատանքի գերբնական կողմը: Որքան շատ է որևէ աշխատանք նմանվում խաչի, այնքա՛ն ավելի պետք է գնահատել այն:

գ) լեգեոնականը զինվոր է, և պարտականությունը նրա համար չպետք է լինի պակաս կարևոր, քան ռազմական գործում ներգրավված զինվորի համար է: Ամեն ազնվություն, ինքնազոհաբերություն, ասպետականություն, ուժ, որոնք կարելի է գտնել զինվորական բնավորության մեջ, Մարիամի ճշմարիտ լեգեոնականի մեջ պետք է լինի առավելագույն չափով և, իհարկե, արտահայտվի լեգեոնական աշխատանքում:

Զինվորական պարտականությունների կատարումը կարող է նշանակել մահ, կամ ժամապահի ծառայության միալարությունը, կամ անընդհատ քայլքը՝ զինվորական շենքի հատակին: Բայց ամեն պարագայում ուշադրության կենտրոնում միայն պարտականության կատարումն է, ոչ թե ընթացիկ դժվարությունները: Բոլոր պարագաներում նույն հավատարմությունն է, և հաղթանակը կամ պարտությունը չեն ազդում պարտականության կատարման վրա: Ոչ պակաս ամուր պետք է լինի նաև լեգեոնականի ընկալումը, թե ինչ է պարտականությունը, և ոչ պակաս բծախնդիր պետք է լինի պարտականության կատարումը բոլոր տեսակի աշխատանքներում՝ թե՛ ամենաանշան, թե՛ ամենադժվարին:

դ) Լեգեոնական աշխատանքը պետք է կատարվի Մարիամի հետ ամենամտերիմ միության մեջ: Բայց ի հավելումն, այդ աշխատանքի կարևոր նպատակներից մեկը պետք է համարել՝ մարդկանց մեջ, որոնց համար աշխատում են լեգեոնականները, զարգացնել Մարիամի ճանաչողությունը և նրա հանդեպ սերը, որպեսզի նրանք էլ որոշակի

ծառայություն մատուցեն Սուրբ Կույսին: Մարիամի ընկալումը և նրա հանդեպ ջերմեռանդությունն անհրաժեշտ են հոգիների առողջության և զարգացման համար: «Որովհետև նա գործակցում է աստվածային խորհուրդների իրագործման մեջ և կարող է, հիրավի, բնորոշվել որպես դրանց պահապան: Մարիամի վրա՝ որպես Քրիստոսից հետո ամենաազնիվ հիմքի վրա, հիմնված է բոլոր սերունդների հավատքը» (AD 5): Լեգեոնականների ուշադրությունն ենք հրավիրում մտածելու տեղիք տվող այլ խոսքերի վրա, որոնց հեղինակը Սբ Պիուս Ժ Պապն է. «Հենց որ ազնվագույն Մարիամի հանդեպ ջերմեռանդությունը խոր արմատներ ձգի մարդկանց հոգիների մեջ, այդ ժամանակ, և միա՛յն այդ ժամանակ, նրանց համար ջանք չխնայողը նրանց մեջ կտեսնի առաքինության և սրբության պտուղները, որոնք համապատասխանում են իր տքնություններին, որոնք ինքը կատարում է նրանց համար»:

«Հիշե՛ք, որ կռվում եք հաղթող ճակատամարտում, ինչպես մեր Տերը՝ Գողգոթայի վրա: Մի՛ վախեցեք այն զենքերից, որոնք նա սրել է, և մի՛ վախեցեք կրել այն վերքերը, որոնք Նա է կրել: Ի՞նչ կարևոր է ձեզ համար, թե հաղթանակը կլինի ձեր սերնդի ժամանակ, թե հաջորդ: Շարունակե՛ք համբերատար աշխատանքի ավանդությունը և թույլ տվե՛ք, որ Աստված հոգ տանի մնացածի մասին, որովհետև մեզ տրված չէ իմանալ այն ժամանակներն ու պահերը, որոնք Հայրը հաստատել է Իր զորությամբ: Սիրտ առե՛ք և տարե՛ք ձեր ասպետության բեռը ձեզնից առաջ մարտնչած վսեմ հոգու տեր մարդկանց աննահանջ քաջությամբ» (Հ. Թոմաս Գավան Դաֆֆի, «Բացվող օրվա գինը»):

3. ԺՈՂՈՎԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

Սա շատ կարևոր պարտականություն է և այն հիմնական գործողություններից է, որոնք օգնում են պահել հետաքրքրությունը Լեգեոնի աշխատանքի նկատմամբ: Այս նպատակով և ժողովին տեղեկատվություն տրամադրելու նպատակով է, որ անհրաժեշտ է կատարել զեկուցումը: Լեգեոնականի աշխատանքի որակը ստուգելու լավ ձև է

նայելը, թե ինչպես է նա պատրաստում իր զեկույցը և ինչպես է այն ներկայացնում: Յուրաքանչյուր զեկույց մի քար է՝ դրված ժողովի կառույցի մեջ, և ժողովի ամբողջականությունը կախված է զեկույցների կատարելությունից: Յուրաքանչյուր զեկույց, որը բացակայում է կամ թերի է, հարված է՝ հասցված ժողովին, որը կյանքի աղբյուր է:

Լեգեոնականի պատրաստության մի կարևոր մաս պետք է լինի այլ լեգեոնականների մեթոդները սովորելը՝ նրանց զեկույցները լսելիս, և սեփական զեկույցների մասին փորձառու լեգեոնականների մեկնաբանությունները լսելիս: Հետևաբար, եթե ինչ-որ զեկույց տրամադրում է միայն աղոտ տեղեկատվություն, այն չի կարող օգնել ոչ զեկուցողին և ոչ էլ նրանց, ովքեր լսում են զեկույցը:

Զեկույցի և այն պատրաստելու ձևի մասին առավել հանգամանալից կարելի է տեսնել Գլուխ 18-ի 9-րդ բաժնում՝ «Պրեզիդիումի ժողովի կարգը»:

«Հիշե՛ք, թե ինչպիսի ուժգնությամբ է Սբ Պողոսը քրիստոնյաներին կոչ անում օգնել, հիշել «բոլոր մարդկանց և աղոթել նրանց համար, որովհետև Աստված կամենում է, որ բոլոր մարդիկ փրկվեն… որովհետև Քրիստոսը Ինքն Իրեն տվեց որպես փրկագին՝ բոլորի համար» (Ա Տիմ. 2:6): Եվ պարտականության ու նպատակի համընդհանրության այս սկզբունքը տեսնում ենք նաև Սբ Հովհան Ոսկեբերանի հետևյալ վսեմ խոսքում. «Քրիստոնյաներ, դուք պետք է հաշիվ տաք ոչ միայն ինքներդ ձեզ համար, այլ նաև ամբողջ աշխարհի համար» (Գրաթրի, «Les Sources»):

4. ՊԵՏՔ Է ՊԱՀՊԱՆԵԼ ԱՆԽԱԽՏ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

Լեգեոնականները պետք է անխախտ գաղտնիություն պահպանեն այն ամենի մասին, ինչ լսում են իրենց ժողովներում կամ իրենց աշխատանքի ընթացքում: Այդ տեղեկությունները նրանք ստանում են, որովհետև լեգեոնականներ են, և Լեգեոնի համար անթույլատրելի դավաճանություն կլինի, եթե հայտնի դարձնեն դրանք: Զեկույցները պետք է իհարկե կատարվեն պրեզիդիումի ժողովին, բայց նույնիսկ այստեղ պետք է շրջահայացություն լինի: Այս հարցն

առավել ամբողջականորեն քննարկվում է Գլուխ 19-ի 20-րդ բաժնում՝ «Ժողովը և անդամը»:

«Պահի՛ր այն, ինչ վստահվել է քեզ» (Ա Տիմ. 6:20):

5. ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՆԴԱՄ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ ՆՈԹԱՏԵՏՐ

Այս նոթատետրում պետք է գրել աշխատանքների մասին կարճ նշումներ. ա) հարմար կլինի, որ աշխատանքին մոտենան գործարարի պես, բ) այդպես կհիշվեն անցած և մոռացված գործերը, գ) առանց նոթատետրի օգնության, զեկույցը լավ չի ստացվի, դ) դա կզարգացնի կարգապահություն, ե) կատարված աշխատանքի մասին այդ կոնկրետ նոթագրությունը մեծապես կօգնի այն անխուսափելի պահին, երբ ներկա ձախողումն իր ստվերը կգցի անցյալում կատարված աշխատանքի վրա:

Այսպիսի նոթագրությունը պետք է պահել (այսինքն՝ պետք է մշակվի ծածկագրության մի ձև), որպեսզի նուրբ տեղեկությունները չկարդա ոչ լեգեոնական որևէ մեկը: Այն երբեք չպետք է լրացվի այլ մարդկանց ներկայությամբ:

«Ամեն ինչ պետք է անել համեստությամբ և կարգուկանոնով» (Ա Կրնթ. 14:40):

6. ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԼԵԳԵՈՆԱԿԱՆ ՊԵՏՔ Է ԱՄԵՆ ՕՐ ԱՂՈԹԻ ԿԱՏԵՆԱ ԼԵԳԵՈՆԻՍ (ԼԵԳԵՈՆԻ ՇՂԹԱ) ԱՂՈԹՔԸ

Կատենան նախ և առաջ բաղկացած է «Մեծացուսցէ»-ից, որ Մարիամի սեփական աղոթքն է, և Եկեղեցու երեկոյան օրհներգությունը, որը «բոլոր երգերից ամենախոնարհն ու երախտապարտն է, ամենավսեմն ու վերամբարձը» (Սբ Լուրի-Մարի դը Մոնֆոր):

Ինչպես հուշում է անունը, այս աղոթքը կապն է Լեգեոնի և նրա բոլոր անդամների՝ և՛ ակտիվ, և՛ օժանդակ, ամենօրյա

կյանքի միջև, և այն կապը, որը միացնում է բոլորին միմյանց և իրենց Երանելի Մոր հետ: Այս աղոթքի անունը նաև ենթադրում է, որ այն պետք է ասել ամեն օր: Թո՛ղ որ կապերից կազմված շղթայի գաղափարը, որտեղ յուրաքանչյուր կապ կենսական կարևորություն ունի կատարելության համար, բոլոր լեգեոնականների համար լինի հորդոր՝ չքանդելու այդ կապը Լեգեոնի ամենօրյա աղոթքի շղթայի մեջ:

Լեգեոնականները, որոնք հանգամանքների բերումով ստիպված են եղել թողնելու ակտիվ անդամակցությունը (և նույնիսկ նրանք, ովքեր ակտիվ անդամների շարքերը թողել են ոչ շատ ծանրակշիռ պատճառներով), լավ կլինի, որ շարունակեն պահել այդ գեղեցիկ սովորությունը և Լեգեոնի հետ առնվազն այդ կապն իրենց կյանքի ընթացքում:

«Երբ Հիսուսի հետ զրուցեմ հարազատաբար, ամեն անգամ ես դա կանեմ Մարիամի անունով և մասամբ՝ նրա անունից: Իմ միջոցով Մարիամը փափագում է վերապրել Նազարեթում իր սիրելի Մանկան հետ անցկացրած մտերմության և անասելի քնքշության ժամերը: Իմ օգնությամբ Աստվածամայրը ևս մեկ անգամ կուզենար խոսել Նրա հետ և վայելել այդ զրույցը, իմ շնորհիվ Մարիամը կուզենար գրկել Նրան և սեղմել իր կրծքին, ինչպես մի անգամ արեց Նազարեթում» (Դը Ջագեր, «Վստահության առաքինությունը»):

7. ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լեգեոնականներն ընդհանրապես պատրաստակամ են հարգելու իրենց քույր և եղբայր անդամակիցներին սիրելու պարտականությունը, բայց երբեմն չեն հիշում, որ դա պետք է ներառի նաև բարությունը նրանց թվացյալ թերությունների նկատմամբ: Այստեղ ձախողելը պրեզիդիումին կզրկի շնորհից, և դրա խիստ հետևանքը կարող է լինել այն, որ ոմանք դադարեցնեն անդամակցությունը:

Եվ մյուս կողմից, բոլորը պետք է լինեն բավականաչափ ողջամիտ՝ հասկանալու համար, որ իրենց անդամակցությունը մի բան է, որ բոլորովին անկախ է այն փաստից, թե իրենք հաճելի են համարում իրենց նախագահին

կամ անդամակցին, թե հակառակը, թե եղել են իրական կամ երևակայական վիրավորանքներ կամ գնահատանքի պակաս, կամ անհամաձայնություններ, կամ կշտամբանքներ, կամ այլ պատահական հանգամանքներ:

Բոլոր ընդհանուր աշխատանքների հիմքում պետք է լինի սեփական «ես»-ը չկարևորելը: Առանց այդ որակի՝ նույնիսկ լավագույն աշխատողները կարող են սպառնալիք լինել կազմակերպության համար: Լեգեոնին լավագույն կերպով ծառայում են նրանք, ովքեր չափավորում են իրենց սեփական անհատականությունը և առավելագույն ներդաշնակությամբ հարմարվում են համակարգին: Մյուս կողմից, նա, ով անում կամ ասում է մի բան, որը շեղվում է Լեգեոնին բնորոշ քաղցրությունից, կարող է դուռ բացել ճակատագրական հետևանքների առաջ: Հետևաբար, բոլորը թող ուշադիր լինեն, որ անեն բաներ, որոնք կենտրոնամետ են և ոչ կենտրոնախույս:

Լեգեոնականների միջև հարաբերությունները քննարկելիս հարկ է հատուկ ուշադրություն դարձնել մի երևույթի, որը թեթևորեն, բայց սխալմամբ, կոչում են «աննշան նախանձներ»: Նախանձը հազվադեպ է ինքնին աննշան: Դա նշանակում է, որ մարդու սրտում դառնություն կա: Այն համընդհանուր ձևով տարածված է մարդկային հարաբերություններում՝ թունավորելով դրանք: Չարակամությամբ հանդերձ՝ այն դաժան և խելագար մի ուժ է, որը կարող է պատճառ դառնալ ամենասարսափելի քայլերի: Բայց այն նմանապես գայթակղում է նաև անեսասերներին և սրտով մաքուրներին՝ նրանց զգայուն և սիրալիր բնավորությամբ հանդերձ: Որքա՛ն դժվար է տեսնել, որ քեզ փոխարինել են ուրիշով, որ մեկը քեզնից առաջ է անցել առաքինությամբ կամ աշխատանքի կատարողականությամբ, կամ մի կողմ ես թողնվել, որովհետև նախընտրել են երիտասարդներին: Որքա՛ն դառն է խորհրդածել սեփական ստվերման մասին: Լավագույն հոգիներն անգամ զգացել են այդ գաղտնի խայթոցը և հասկացել սեփական զարմանալի թուլությունը: Որովհետև այդ դառնությունն իրականում ծխացող ատելություն է և կարող է բռնկվել՝ կործանարար կրակի տեսքով:

Երբ ջանում ես մոռանալ, հնարավոր է հանդարտվել: Բայց լեգեոնականը պետք է ձգտի առավել բարձր նպատակների, քան այդպիսի խաղաղության: Նա պետք է գոհանա ոչ պակաս բանով, այլ միայն հաղթանակով, պատերազմի պատրաստվող սեփական հանդուգն բնության գովասանքի արժանի սանձահարմամբ՝ նախանձի կիսատելությունը ամբողջությամբ փոխակերպելով քրիստոնեական սիրո: Բայց ինչպե՞ս կարելի է հասնել այդպիսի հրաշալիքի: Դա կարելի է անել՝ ամբողջությամբ ի գործ դնելով սեփական լեգեոնական պարտականությունն անդամակից եղբայրների և քույրերի, նաև շրջապատի մարդկանց նկատմամբ, որոնցից յուրաքանչյուրի մեջ լեգեոնականին սովորեցրել են տեսնել և հարգել իր Տիրոջը: Նախանձի յուրաքանչյուր խայթոցին պետք է արձագանքել հետևյալ խորհրդածությամբ. այն անձը, որի աճն ինձ ցավեցնում է, ոչ այլ ոք է, քան Տերը: Հետևաբար, իմ զգացումները պետք է լինեն Սբ Հովհաննես Մկրտչի զգացումները: Իմ ուրախությունը կատարյալ է, երբ Հիսուսը մեծանում է իմ հաշվին: Նա պետք է ավելանա, իսկ ես՝ նվազեմ:

Այդ աշխարհայացքը հերոսականորեն սուրբ է: Դա իսկական հում նյութ է հաջողության համար: Ինչպիսի՛ փառավոր տարածք է դա հատկացնում Մարիամին՝ մարդու հոգին ազատագրելու համար փառասիրության ամեն մի բծից, որպեսզի այդ հոգու միջոցով լույսը շողշողա ուրիշների վրա (Հվի. 1:7), որպեսզի Մարիամը ձևավորի այդ հոգուն՝ որպես ևս մեկ անեսասեր՝ ուղարկված պատրաստելու ճանապարհը Տիրոջ առաջ (Մրկ. 1:2):

Նախակարապետը պետք է մշտապես փափագի իր սեփական ստվերումը նրա կողմից, ում գալուստը հռչակում է: Առաքյալը միշտ ուրախությամբ կնայի իրեն շրջապատողների աճին և երբեք չի մտածի, որ նրանց աճը վնասում է իրեն: Առաքյալ չէ նա, ով փափագում է բոլորի աճը՝ միայն այն դեպքում, եթե նրանց աճը չստվերի իր սեփականը: Նախանձոտ այդ մտածումը ցույց է տալիս, որ երբ «ես»-ին դիպչում են, «ես»-ն առաջին տեղում է, մինչդեռ առաքյալի համար «ես»-ը պետք է միշտ լինի վերջին տեղում: Եվ ո՛չ

ավելին: Նախանձի հոգին չի կարող գոյակցել ճշմարիտ առաքելական աշխատանքի հետ:

«Հարգալիր և սիրալիր ողջունատրության իր առաջին բառերով Մարիամը փոխանցում է այդ առաջին սրբարար խթանը, որը մաքրագործում է այդ հոգիներին՝ վերածնելով Հովհաննես Մկրտչին և այդ նույն պահին ազնվացնելով Եղիսաբեթին:

Բայց եթե այդ առաջին բառերը այդպիսի մեծ բաներ արեցին, ապա ի՞նչ պետք է մտածել դրանց հետևող օրերի, շաբաթների և ամիսների մասին: Մարիամը մշտապես տալիս է... իսկ Եղիսաբեթը ստանում է, և ինչո՞ւ դա ընդգծված կերպով չասել, ստանում է առանց նախանձի: Եղիսաբեթը, որին Աստված նմանապես պարգևել է հրաշալի մայրությունը, խոնարհվում է իր երիտասարդ զարմուհու առջև՝ առանց չնչին դառնության զգացումի՝ այն բանի համար, որ ինքը չէ Տիրոջ ընտրյալը: Եղիսաբեթը չէր նախանձում Մարիամին, իսկ ավելի ուշ Մարիամը չէր նախանձելու, որ Հիսուսը սիրում էր իր առաքյալներին: Ոչ էլ Հովհաննես Մկրտիչն էր նախանձում Հիսուսին, երբ իր աշակերտները նրանից հեռանում էին Հիսուսի մոտ: Առանց դառնության հետքի՝ Հովհաննեսը նայում էր, թե ինչպես էին իր աշակերտները հեռանում իրենից: Նրա միակ մեկնաբանությունը հետևյալն էր. «Նա, որ ի վերուստ է գալիս, բոլորից վեր է... Նա պետք է ավելանա, իսկ ես՝ նվազեմ»» (Հվհ. 3:30-31) (Փերրոյ, «L'Humble Vierge Marie»):

8. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂ ԸՆԿԵՐԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լեգեոնականները հատուկ պարտականություն ունեն այցելությունների ժամանակ իրենց ընկերակցող անդամակիցների նկատմամբ: Այստեղ ունենք խորհրդավոր «երկու» թիվը՝ եղբայրասիրության խորհրդանիշը, որից կախված է առաքելության ամբողջ արդյունավետությունը. Տերը «ուղարկեց նրանց իր առջևից՝ երկու-երկու» (Ղկ. 10:1): Բայց այդ «երկուսը» չպետք է ցույց տա պարզապես անձանց, որոնք պատահաբար միասին են աշխատում, այլ այն միությունը, որ օրինակ ունեին Դավիթը և Հովնաթանը, որոնց հոգիները ագուցված էին միմյանց. նրանցից յուրաքանչյուրը մյուսին սիրում էր՝ ինչպես սեփական հոգին (Ա Թգվ. 18:1):

«Նրանք տուն կվերադառնան բերկրանքի աղաղակներով՝ կրելով իրենց խուրձերը» (Սղմ. 126:6):

Փոքր մանրամասների մեջ է, որ պետք է երևա համատեղ այցելողների միջև միությունը: Չկատարված խոստումները, պայմանավորվածությունները, անճշտապահությունը, մտքով և խոսքով եղբայրասիրության մեջ ձախողումները, փոքրիկ անքաղաքավարությունները, սեփական գերազանցության զգացումները. այս ամենը փոս են փորում երկուսի միջև: Այդպիսի պայմաններում անհնարին է որևէ միություն:

«Կրոնական հասարակության համար կրոնական կարգապահությունից հետո օրհնությունների և արդյունավետության ամենաթանկարժեք երաշխիքը եղբայրասիրության և ներդաշնակ միության մեջ է: Մենք պետք է սիրենք մեր բոլոր եղբայրներին առանց բացառության՝ որպես Մարիամի արտոնյալ և ընտրյալ զավակներին: Ինչ մենք անում ենք նրանցից յուրաքանչյուրին, Մարիամը համարում է, թե իրեն ենք արել, կամ ավելի շուտ, իր Որդուն՝ Հիսուսին ենք արել, որովհետև մեր բոլոր անդամակիցները կոչված են Հիսուսի հետ և Հիսուսի մեջ դառնալու Մարիամի որդիներ» (Petit Traite de Mariologie: Marianiste):

9. ՆՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ

Յուրաքանչյուր լեգեոնականի պարտականությունների մի մասը պետք է լինի նոր անդամներ շահելը: Տերը մեզ պատվիրել է սիրել մերձավորին՝ ինչպես ինքներս մեզ, հետևաբար, եթե Լեգեոնը օրհնություն է սեփական անձի համար, մի՞թե լեգեոնականը չպետք է ձգտի այդ օրհնությունը բերել նաև ուրիշներին: Եթե մեկը տեսնում է, որ իր աշխատանքի շնորհիվ հոգիները վսեմանում են, մի՞թե չպետք է ձգտի ընդարձակել այդ աշխատանքը:

Եվ վերջապես, մի՞թե որևէ լեգեոնական կարող է ձգտել հավաքագրելու նոր անդամների, եթե մտածում է, որ Լեգեոնը պետք է նրանց առաջ տանի միայն Մարիամի հանդեպ սիրո և ծառայության մեջ: Հիսուսից հետո սա մեծագույն օրհնությունն է, որ կարող է լինել մարդու կյանքում: Որովհետև Աստված ստեղծել է Մարիամին՝ որպես գերբնական

կյանքի արմատը, աճը և ծաղկումը՝ լինելով կախվածության մեջ և անբաժան Քրիստոսից:

Եթե չմոտենանք և չխթանենք, անհամար թվով անձինք երբեք չեն մտածի մտնելու այն Մայրուղին, որը նրանք ներքուստ փափագում են, և որը նրանց կարող է տանել դեպի իրենց համար այդպիսի հրաշալի բաների, և նրանց միջոցով՝ նաև այլ հոգիների համար:

«Յուրաքանչյուր մարդու համար բացվում է
Մի ճանապարհ և ճանապարհներ, և մի ճանապարհ:
Եվ Վսեմ Հոգին մագլցում է Վսեմ Ճանապարհը,
Եվ Ցածր Հոգին շոշափում է Ցածր բաները,
Իսկ միջակայքում՝ աղոտ հարկերում,
Մնացյալն են դեգերում այս ու այն կողմ:
Եվ ամեն մի մարդու համար բացվում է
Մի Վսեմ Ճանապարհ և մի Ցածր,
Եվ ամեն մարդ որոշում է
Ճանապարհն այն, որով իր հոգին պետք է գնա»:

Ջոն Օքսենհամ

10. ՁԵՌՆԱՐԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Պարտադիր է, որ յուրաքանչյուր անդամ մանրամասն ուսումնասիրի ձեռնարկը: Այն Լեգեոնի պաշտոնական բացատրությունն է: Այն հնարավորինս համառոտ ձևով բովանդակում է այն ամենը, ինչ յուրաքանչյուր պատշաճ ձևով պատրաստված լեգեոնական պետք է իմանա կազմակերպության սկզբունքների, օրենքների, մեթոդների և ոգու մասին: Անդամները և մասնավորապես սպաները, որոնք չգիտեն ձեռնարկը, գուցե չկարողանան համակարգում աշխատել պատշաճ ձևով, մինչդեռ մյուս կողմից, ավելի մեծ գիտելիքը միշտ կբերի ավելի մեծ արդյունավետություն: Անսովոր յուրահատկությունը կլինի այն, որ ժամանակի ընթացքում կաճի հետաքրքրությունը, իսկ քանակի հետ կավելանա որակը:

Ոչ հազվադեպ լսում ենք «շատ երկա՛ր է» բացականչությունը, և երբեմն տարօրինակ անհամաչափությամբ՝

այնպիսի մարդկանցից, որոնք ամեն օր օրաթերթերի ընթերցման վրա ծախսում են այնքան ժամանակ, որքան բավական կլիներ ձեռնարկի մի մեծ հատված ընթերցելու համար:

«Շա՛տ երկար է, չափազանց շատ մանրամասներ կան»: Արդյոք սեփական երկրի օրենքները, բժշկությունն կամ ռազմական գիտությունն ուսումնասիրող մի ուսանող այդպիսի բառեր կասի՞ նույն ծավալն ունեցող մի գրքի մասին, որտեղ գրված է այն ամենը, ինչ ինքը պետք է իմանա իր ուսումնասիրած գիտության մասին: Բացի նրանից, որ նա այդպես չի ասի և այդպես չի մտածի, նա կջանար մեկ կամ երկու շաբաթվա ընթացքում մտապահել այդ գրքում պարունակվող յուրաքանչյուր գաղափար, նույնիսկ յուրաքանչյուր բառ: Իսկապես, «այս աշխարհի որդիներն ավելի իմաստուն են իրենց սերնդի մեջ, քան լույսի որդիները» (Ղկ. 16:8):

Եվ այսպիսի առարկություն են անում, թե «ձեռնարկը լի է դժվար գաղափարներով և հարցերով, այնպես որ մեր շատ երիտասարդ և պարզ անդամներ հազիվ թե կարողանան հասկանալ դրանք: Ուրեմն ինչո՞ւ մի ավելի պարզեցված ձեռնարկ չունենալ նրանց համար»: Այստեղ նույնիսկ ավելորդ է ասել, որ այսպիսի առաջարկը դեմ է կրթության առաջնային օրենքներին, որոնք պահանջում են, որ ուսանողներն աստիճանաբար առաջնորդվեն դեպի անհայտ տարածք: Կրթությունն անհնարին է, եթե անձն ամեն ինչ հասկանում է ի սկզբանե, և երբ որևէ նոր բան չի առաջարկվում մտքի համար, ապա կրթական գործընթացը դադարել է: Ինչո՞ւ պետք է լեգեոնականից ակնկալենք, որ անմիջապես հասկանա ձեռնարկը, եթե ուսանողից ևս չենք պահանջում, որ միանգամից հասկանա իր դասագիրքը: Դպրոցի գործառույթն է և կրթության ամբողջ գաղափարն է, որ հստակեցվի այն, ինչ հստակ չէ մտքի համար, և ներդնել այն որպես գիտելիք:

«Նույնիսկ բառերն են դժվար»: Բայց մի՞թե չի կարելի սովորել դրանք: Ձեռնարկի բառապաշարը այնքան էլ բարդ չէ. այդ բառերին կարելի է տիրապետել հարցեր տալով և բառարանում նայելով: Իրականում այդ բառապաշարը օրաթերթերի բառապաշարն է, որոնք կարդում է յուրաքանչյուր

ոք: Ո՞վ է երբևէ լսել մի առաջարկ, թե պետք է այդ օրաթերթերը պարզեցնել: Եվ մի՞թե յուրաքանչյուր լեգեոնական ինքն իր և իր կաթողիկէ հավատքի առջև պարտավոր չէ յուրացնել այդ բառերը, որոնք անհրաժեշտ են Լեգեոնի հոգևոր և այլ սկզբունքների բացատրության համար:

Այն ամենը, ինչ ասացինք ձեռնարկի բառապաշարի մասին, վերաբերում է նաև ձեռնարկի գաղափարներին: Դրանք աղոտ գաղափարներ չեն: «Եկեղեցու վարդապետության մեջ չի կարող լինել մի ներքին ուսմունքի մաս, որը կարող են հասկանալ միայն քչերը» (Արքեպիսկոպոս Ջոն Չարլս ՄքՔուեյդ): Ասվածի ապացույցն է այն, որ բազմաթիվ լեգեոնականներ՝ հասարակ, նույնիսկ պարզ մարդիկ, ամբողջությամբ ընկալել են այդ գաղափարները և դրանք դարձրել իրենց կյանքի սնունդն ու հենքը: Եվ այդ գաղափարները բնավ անկարևոր չեն: Իրականում դրանք պետք է ողջամտությամբ ընկալվեն՝ եթե ուզում ենք պատշաճ կերպով առաքելություն կատարել, որովհետև դրանք առաքելության իսկական կյանքն են: Առանց այդ սկզբունքների բավարար հասկացողության, առաքելությունը զրկված կլինի իր ճշմարիտ իմաստից և իր հոգևոր արմատներից և առհասարակ «քրիստոնեական» կոչվելու իրավունք չի ունենա: Քրիստոնեական առաքելության և «բարի գործերի» արշավի միջև տարբերությունը նույնն է, ինչ հեռավորությունը երկնքի և երկրի միջև:

Հետևաբար պետք է յուրացնել այս ձեռնարկի առաքելական գաղափարները, իսկ պրեզիդիումը պետք է ունենա ուսուցչի դերակատարություն: Այս գործընթացը պետք է կատարել հոգևոր ընթերցումների, քարոզների միջոցով և լեգեոնականներին խրախուսելով, որ համակարգված կերպով ընթերցեն և ուսումնասիրեն այս ձեռնարկը: Գիտելիքը չպետք է մնա տեսական: Գործնական աշխատանքի յուրաքանչյուր ուղղություն պետք է կապվի համապատասխան վարդապետությանը և այդպիսով ստանա հոգևոր կարևորություն:

Մի անգամ, երբ Թովմա Աքվինացուն հարցրին, թե ինչպես պետք է սովորել, նա պատասխանեց. «Կարդա՛ մեկ գիրք: Այն, ինչ կարդում ես կամ լսում, ջանք թափի՛ր լավ

հասկանալ: Վստահություն ձեռք բեր նրանում, ինչ կասկածելի է»: Ուսման վարպետն այստեղ մատնացույց չէր անում մի որևէ հատուկ մեծ գրքի, այլ նկատի ուներ մի որևէ արժանի գիրք, որը կարող էր գիտելիք հաղորդել: Հետևաբար, լեգեոնականները կարող են նրա խոսքերն ընդունել որպես խթան՝ սպառիչ կերպով ուսումնասիրելու ձեռնարկը:

Ի հավելումն, այն ունի քրիստոնեական ուսմունքի արժեք: Այն պարզ և հասկանալի ձևով ներկայացնում է կաթողիկէ դավանանքը՝ հարմարեցված Վատիկանի Երկրորդ Ժողովի կանոնադրությանը:

«Թեև Սբ Բոնավենտուրան պնդում էր, թե գիտելիքը ներքին լուսավորության արդյունք է, այնուամենայնիվ, լավ գիտեր, որ ուսումը ենթադրում է ջանադրություն: Եվ ուրեմն, հղում անելով Սբ Գրիգորին, նա մատնացույց է անում Գալիլիայի Կանա քաղաքի հարսանիքը՝ որպես ուսումնառության մեկնաբանություն: Քրիստոսը ոչնչից չստեղծեց գինին, այլ նախ ծառաներին խնդրեց սափորները լցնել գինով: Նույն կերպ Սուրբ Հոգին չի շնորհում հոգևոր բանականություն և հասկացողություն մի մարդու, որը նախ չի լցնում սեփական սափորը՝ իր միտքը, ջրով, այսինքն՝ ուսմամբ ձեռք բերված գիտելիքով: Առանց ջանադրության՝ չի կարող լինել լուսավորություն: Հավիտենական ճշմարտությունների ընկալումն ուսումնասիրության ջանադրության արդյունքն է, որից չի կարող խուսափել ոչ ոք» (Ջեմելլի, «Ֆրանցիսկյան ուղերձը՝ աշխարհին»):

11. ՄԻՇՏ ԼԻՆԵԼ ՊԱՏՐԱՍՏ՝ ՈՐՈՇԱԿԻ ԻՄԱՍՏՈՎ

Ողջամտության սահմաններում լեգեոնականը պետք է նպատակ ունենա Լեգեոնի ոգին բերելու առօրյա կյանքի բոլոր հարցերի մեջ և պետք է միշտ զգոն լինի՝ օգտագործելու բոլոր հնարավորությունները՝ առաջ մղելու համար Լեգեոնի գլխավոր խնդիրը, որն է՝ ոչնչացնել մեղքի կայսրությունը, արմատախիլ անել այն և դրա ավերակների մեջ տնկել Քրիստոս Թագավորի դրոշը:

«Փողոցում մեկը կմոտենա քեզ և լուցկի կուզի: Խոսի՛ր նրա հետ, և տասը րոպե հետո նա քեզնից կխնդրի Աստծուն» (Դյուհամել): Բայց ինչո՞ւ չենք կարող ավելի վստահությամբ

հաստատել այդ հարաբերությունը՝ առաջի՛նը լուցկի խնդրելով նրանից:

Առհասարակ, այն աստիճան, որ արմատացել և դարձել է սովորություն, քրիստոնեությունը հասկանում և գործադրում են միայն մասնակի իմաստով, այսինքն՝ միայն որպես անհատապաշտական կրոն, որի նպատակը միայն սեփական շահն է՝ ամենևին չմտահոգվելով մերձավորի մասին: Սա այն «կիսաշրջանաձև քրիստոնեությունն է», ինչպես քննադատաբար ասում էր Պիուս ԺԱ Պապը: Ակնհայտ է, որ այն Մեծ Պատվիրանը, թե պետք է սիրենք Աստծուն մեր ամբողջ սրտով, մեր ամբողջ հոգով և մեր ամբողջ մտքով, և մեր մերձավորին՝ ինչպես ինքներս մեզ (Մտթ. 22:37-39), հասել է բազում ականջների, որոնք, սակայն, վճռել են մնալ խուլ:

Այս մեծապես սխալ տեսակետի դրսևորումը կլինի այն, որ Լեգեոնի չափանիշները դիտվեն որպես մի տեսակ սրբություն, որը նախատեսված է միայն ընտրյալ հոգիների համար: Որովհետև այդ չափանիշները պարզապես տարրական քրիստոնեական չափանիշներ են: Հեշտ չէ տեսնել, թե ինչպես մեկը կարող է ծանր կերպով իջնել այդ չափանիշներից և միաժամանակ պնդել, թե ինքը գործունյա կերպով սիրում է մերձավորին, ինչը թելադրված է մեզ Մեծ Պատվիրանով, և որն Ինքնին Աստծո սիրո մի մասն է, այն աստիճան, որ եթե այն հանվի, քրիստոնեական գաղափարը կհաշմվի: «Մենք պետք է փրկվենք միասին: Մենք պետք է միասին մոտենանք Աստծուն: Ի՞նչ կասեր մեզ Աստված, եթե մեզնից ոմանք Իրեն մոտենային առանց ուրիշների» (Փեգուի):

Այդ սերը պետք է առատորեն հեղվի մեր մերձավորների վրա՝ առանց խտրականության, անհատապես և հավաքականորեն, ոչ որպես պարզապես զգացմունք, այլ պարտականության, ծառայության, ինքնազոհաբերության ձևով: Լեգեոնականը պետք է լինի այս ճշմարիտ քրիստոնեության գրավիչ մարմնավորումը: Մինչև Ճշմարիտ Լույսը չշողշողա մարդկանց առջև՝ այդ Լույսի բազմաթիվ և ակնառու ճառագայթների միջոցով, այսինքն՝ իրական քրիստոնեական ապրելակերպի գործնական օրինակներով, կա ոչ միայն

վտանգ, այլև վստահություն առ այն, որ այդ Լույսը չի արտացոլվի կաթողիկէ հավատացյալների ընդհանուր չափանիշներում: Սա կարող է իջնել մինչև նվազագույն աստիճանի, ինչը կարելի է համեմատել պարզապես դժոխքից խուսափելուն: Սա կնշանակի, թե կրոնը մերկացել է իր ազնիվ և անեսասեր բնույթից, այլ խոսքով՝ վերածվել է ծիծաղելի հակադրությունն այն բանի, ինչը ակնկալվում էր, որ պետք է լինի, և հետևաբար, չի կարող գրավել և պահել ոչ ոքի:

Պարտականությունը նշանակում է կարգապահություն: Լինել մշտապես պատրաստ՝ նշանակում է ունենալ զգաստ կարգապահություն: Հետևաբար, մարդու խոսքը, հագուստը, վարվեցողությունը, վարքը, ինչքան էլ պարզ լինեն, երբեք չպետք է լինեն այնպիսին, որ վատ օրինակ ծառայեն: Մարդիկ կփնտրեն սխալներ նրանց մեջ, ում համարում են գործնական՝ կրոնում: Ձախողումները, որոնք ուրիշների մեջ հազիվ թե նկատվեն, լեգեոնականի մեջ կնկատվեն որպես ապաշնորհություն և մեծապես կվնասեն ուրիշներին բարիք գործելուն ուղղված նրանց ջանքերին: Բայց սա անհիմն չէ: Մի՞թե արդարացի չէ բարի չափանիշներ պահանջել նրանցից, ովքեր ուրիշներին հորդորում են ձգտել բարձրագույն բաների:

Բայց այստեղ, ինչպես բոլոր այլ բաներում, պետք է լինի արդար դատողություն: Նրանք, ովքեր ունեն լավ մտադրություններ, չպետք է հեռու մնան առաքելական ջանքերից իրենց սեփական տկարությունների պատճառով: Որովհետև դա կնշանակեր ամբողջ առաքելության վերջը: Նրանք նաև չպետք է մտածեն, որ իրենց համար գուցե կեղծավորություն կլիներ կատարելության հասնելու մասին մտածելը, կատարելության, որն իրենք չունեն: «Ո՛չ,– ասում է Սբ Ֆրանցիսկոս դը Սալը,– կեղծավորություն չէ՝ խոսելն ավելի լավ, քան մեր գործերն են: Եթե այդպես լիներ, Տե՛ր Աստված, որտե՞ղ կլիներինք մենք. ստիպված կլիներինք լուռ մնալ»:

«Մարիամի Լեգեոնը պարզապես նպատակ ունի ապրել բնականոն կաթողիկէ կյանքով: Մենք ասում ենք «բնականոն», չենք ասում՝ «միջակ»: Մեր օրերում կա մի մղում՝ մտածելու, թե «բնականոն» կաթողիկէն նա է, ով իր կրոնը գործադրում է բացառապես իր սեփական շահի համար՝ առանց գործնական որևէ

հետաքրքրություն ցուցաբերելու իր եղբայրակիցների փրկության նկատմամբ: Աշխարհի մասին այսպես դատելը կնշանակեր ծաղրել իրական կաթողիկէին և, հիրավի, ինքնի՛ն կաթողիկէությունը: Այս դեպքում անհրաժեշտ կլիներ մանրազնին քննության և վերատեսության ենթարկել «բարեպաշտ կաթողիկէի» և «գործնական կաթողիկէության» մասին այս գերիշխող կարծիքը: Ոչ ոք չի կարող համարվել կաթողիկէ, եթե կանգնած է որոշակի առաքելական նվազագույն չափանիշից ցածր աստիճանին, և այս անփոխարինելի նվազագույնը, որից կախված կլինի Ահեղ Դատաստանը, անհասանելի է մնում այսպես կոչված գործնական կաթողիկէների զանգվածի համար: Ուրեմն, մի ողբերգական իրավիճակում ենք. այստեղ կա մի հիմնարար թյուրըմբռնում» (Կարդինալ Սուենենս, «La Theologie de l'Apostat»):

12. ԼԵԳԵՈՆԱԿԱՆԸ ՊԵՏՔ Է ԱՂՈԹԻ ԵՎ ԱՇԽԱՏԻ

Թեև Կատենա Լեգեոնիս աղոթքի կատարումը միակ ամենօրյա պարտականությունն է, որը Լեգեոնը պատվիրում է իր անդամներին, այնուամենայնիվ, անկեղծորեն խնդրում ենք, որ բոլոր անդամներն ամեն օր աղոթեն Տեսսերայի բոլոր աղոթքները: Այդ աղոթքների կատարումը պահանջում ենք օժանդակ անդամներից, և ակտիվ անդամների համար դիտողության արժանի սխալ կլիներ, եթե նրանք թերանային մի բանի մեջ, որում չեն թերանում մեծաթիվ օժանդակ անդամներ: Ճիշտ է, որ օժանդակ անդամը չի կատարում գործնական աշխատանք, այնուամենայնիվ, հստակ է, որ օժանդակ անդամն ավելի մեծ ծառայություն է մատուցում Լեգեոնի Թագուհուն, քան այն գործող անդամը, որն աշխատում է, բայց չի աղոթում: Սա կլինի Լեգեոնի մտադրության հակառակը, որն ակտիվ անդամներին համարում է իր հարձակման գեղարդի սայրը, իսկ օժանդակ անդամներին՝ միայն գեղարդի հիմքը:

Ավելին, օժանդակ անդամների եռանդն ու հաստատակամությունը մեծապես կախված կլինեն իրենց այն համոզումից, թե իրենք օգնում են ինքնազոհ և հերոսական ծառայությանը՝ մի բան, որ շատ ավելի՛ն է, քան իրենցը: Այս հավելյալ պատճառով գործող անդամը օժանդակ անդամների համար պետք է լինի օրինակ և ոգեշնչման աղբյուր,

բայց գործող անդամը հազիվ թե կարողանա լինել իսկական ոգեշնչման աղբյուր, եթե իր աղոթական ծառայությունը նվազ է նրանից, ինչ պահանջվում է օժանդակ անդամներից. այստեղ կասկած է առաջանում, թե ով է ավելի լավ ծառայում Լեգեոնին:

Յուրաքանչյուր լեգեոնական՝ գործող կամ օժանդակ, պետք է անդամագրվի Ամենասուրբ Վարդարանի Եղբայրակցությանը: Այդ անդամակցության օգուտները վիթխարի են (տե՛ս Հավելված 7):

«Բոլոր սուրբ խնդրանքների մեջ Հիսուսի Ամենասուրբ Անունը կանչվում է առնվազն լուռ դիտավորությամբ, նույնիսկ եթե «մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով» բառերը բացահայտ ձևով չեն ասվում, որովհետև Նա անհրաժեշտ Միջնորդն է, Ում պետք է ներկայացվեն բոլոր խնդրանքները: Ավելին, երբ աղոթողը Հայր Աստծուն է դիմում անմիջականորեն, կամ երբ իր խնդրանքը ներկայացնում է մի հրեշտակի կամ մի սրբի՝ առանց տալու Մարիամի ամենասուրբ անունը, ապա նույնը պետք է ասել նաև Երանելի Կույսի մասին, ինչպես ասում ենք նրա Աստվածային Որդու մասին: Ճիշտ ինչպես Հիսուսի անունն ենք կանչում՝ այն պատճառով, որ Նա միակ անհրաժեշտ Միջնորդն է, այդպես էլ Նրա Երանելի Մոր անունը, ով միացած է Նրա հետ, ևս լռելյայն դիտավորությամբ կանչում ենք Նրա անվան հետ միասին: Երբ էլ որ դիմում ենք Աստծուն, խնդրում ենք նաև Մարիամին: Երբ էլ որ Քրիստոս Մարդուն ենք խնդրում, խնդրում ենք նաև Մարիամին: Երբ էլ որ խնդրում ենք որևէ սրբի, խնդրում ենք նաև Մարիամին» (Քանիս Բուրք, O.F.M. Cap., «Մարիամը»):

13. ԼԵԳԵՈՆԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԸ

«Այլևս ես չէ, ոչ ապրում եմ,– ասում է առաքյալը,– այլ Քրիստոսն ապրում է իմ մեջ» (Գղ. 2:20): Ներքին կյանքը՝ նշանակում է, որ մարդու մտքերը, ցանկությունները և զգացումները տանում են դեպի մեր Տերը: Սրան հասնելու մեթոդը մեր Երանելի Տիրամայրն է: Նա շարունակաբար առաջ էր գնում սրբության մեջ, որովհետև հոգևոր առաջընթացը առաջընթաց է եղբայրասիրության կամ սիրո մեջ,

իսկ եղբայրասիրությունը Մարիամի մեջ աճում էր նրա ողջ կյանքի ընթացքում:

«Բոլոր քրիստոնյաները՝ կյանքի ինչպիսի հանգամանքներում և դիրքում էլ լինեն, կանչված են ապրելու ամբողջական քրիստոնեական կյանքով և սիրո կատարելությամբ… Բոլոր հավատացյալները հրավիրված են և պարտավոր են ապրել սրբությամբ և կատարելագործել իրենց ապրելակերպը» (LG 40, 42): Սրբությունը գործնական ձեռքբերում է: «Սրբությունն ամբողջությամբ Աստծո հանդեպ սիրո մեջ է, իսկ Աստծո հանդեպ սերն ամբողջությամբ Նրա կամքը կատարելու մեջ է» (Սբ Ալֆոնսուս Լիգուորի):

«Մեր կյանքի համար Աստծո իրական կամքը բացահայտել կարողանալու համար անհրաժեշտ է հետևյալը. բաց սրտով լսել Աստծո Խոսքը և Եկեղեցուն, ջերմեռանդ և մշտական աղոթք, հետևել մի իմաստուն և սիրալիր հոգևոր առաջնորդի և հետևողական զատորոշում՝ Աստծո կողմից շնորհված պարգևների ու տաղանդների, ինչպես նաև ընկալում զանազան սոցիալական և պատմական պայմանների, որոնց մեջ քրիստոնյան ապրում է» (CL 58):

Պրեզիդիումի մակարդակում լեգեոնականների հոգևոր ձևավորումը մեծապես օգնում է նրանց սրբության զարգացմանը: Բայց պետք է նշել, որ այդ մատուցվող հոգևոր առաջնորդությունը հավաքական է: Քանի որ յուրաքանչյուր անդամ բացառիկ անհատականություն է՝ իր անձնական կարիքներով, ցանկալի է, որ հավաքական առաջնորդությունը լրացվի անհատական առաջնորդությամբ և արդյունքում յուրաքանչյուր անդամ հոգևորապես հարստանա «իմաստուն և սիրալիր հոգևոր առաջնորդությամբ» (տե՛ս նույն տեղում):

Քրիստոնեական կյանքի համար գոյություն ունի երեք անհրաժեշտ պահանջ՝ աղոթքը, մահացումը և Սուրբ Խորհուրդները, և սրանք փոխկապակցված են:

ա) Աղոթքը

Այն պետք է լինի անհատական, ինչպես և հասարակական, որովհետև մարդկային բնությունը երկու կողմ ունի՝ անհատական և հասարակական: Աստծուն պաշտելու պարտականությունը մեզ, նախ և առաջ, պարտավորեցնում է

որպես անհատների, բայց պաշտամունքի պարտականություն ունի նաև համայնքը, որտեղ բոլորը փոխկապակցված են սոցիալական հարաբերություններով: Ծեսը, ինչպես, օրինակ, Սուրբ Պատարագը և Ժամերգությունները, Եկեղեցու հասարակական պաշտամունքի ձևն է: Սակայն Վատիկանի Բ Ժողովը մեկնաբանում է. «Քրիստոնյան իրոք կանչված է աղոթելու ուրիշների հետ, բայց նաև պետք է մտնի իր սենյակը և աղոթի իր Հորը ծածուկ, ավելին, ըստ առաքյալի ուսմունքի, նա պետք է աղոթի անդադար» (SC 12): Առանձնական աղոթքի ձևերն են՝ «մտածական աղոթքը, խղճի քննությունը, հոգևոր կրթությունը, այցելությունը Սուրբ Հաղորդությանը և հատուկ ջերմեռանդություններ՝ Երանելի Կույս Մարիամին, և իհարկե, ամենակարևորը, Վարդարանի աղոթքը» (MD 186): «Սնելով քրիստոնյաների հոգևոր կյանքը՝ առանձնական աղոթքները տալիս են իրենց պտուղները բոլոր հասարակական գործառույթներում քրիստոնյաների մասնակցության մեջ և նպաստում են, որպեսզի ծիսական աղոթքները չվերածվեն դատարկ հանդիսությունների» (նույն տեղում, 187):

Առանձին հոգևոր ընթերցումը ոչ միայն զարգացնում է քրիստոնեական համոզումները, այլև մեծապես նպաստում է աղոթքի կյանքին: Պետք է նախընտրություն տալ Նոր Կտակարանի ընթերցմանը՝ պատշաճ կաթողիկէ մեկնությամբ (հմմտ.՝ DV 12), և հոգևոր դասական գրականությանը՝ ընտրված ըստ ընթերցողի կարիքների և կարողությունների: Այստեղ է, որ հատկապես կարևոր է իմաստուն առաջնորդողը: Սրբերի լավ գրված վարքագրությունները լավ ներածություն են տալիս հոգևոր կյանքի վերաբերյալ: Դրանք առաջնորդում են դեպի լավ որակներ և հերոսականություն: Սրբերը տեսանելի դարձած վարդապետություններն ու սրբության գործադրություններն են: Եթե ընկերանանք նրանց, շուտով կընդօրինակենք նրանց որակները:

Յուրաքանչյուր լեգեոնական, եթե հնարավոր է, պետք է փակված հոգևոր կրթություն անցնի տարին մեկ անգամ: Հոգևոր կրթությունների և աղոթական առանձնությունների պտուղը սեփական կոչման առավել հստակ տեսողությունն

է և այդ կոչմանը հետևելու առավել պայծառ պատրաստակամությունը:

բ) Մահացում կամ ինքնամերժում

Սա նշանակում է ազատվել «ես»-ից և Քրիստոսին թույլ տալ Իր կյանքն ապրելու մեր մեջ և առավել լրիվությամբ մեզ հետ կիսել Իր կյանքը: Դա ինքնակարգապահություն է՝ սիրելու Աստծուն և ուրիշներին՝ հանուն Աստծո: Այդ կարիքը մեծանում է, որովհետև սկզբնական մեղքի պատճառով մեր բանականությունը մթագնել է, մեր կամքը թուլացել է, և կրքերը մեզ հեշտությամբ մղում են դեպի մեղքը:

Առաջին պահանջը պատրաստակամորեն կատարելն է այն ամենը, ինչ Եկեղեցին սովորեցնում է ապաշխարության օրերի մասին և թե ինչպես պետք է դրանք պահել: Լեգեոնի համակարգը, եթե պատշաճ կերպով հետևեն, արժեքավոր ձևով պատրաստում է մահացումների համար:

Դրան հաջորդում է Աստծո ձեռքերից «կյանքի խաչերը, հոգնությունները և հիասթափությունները» սիրով ընդունելը: Հարցը վերաբերում է մեր զգացումները կառավարելուն, հատկապես նրան, թե ինչ ենք ինքներս մեզ թույլատրում նայել, լսել կամ խոսել: Այդ ամենն օգնում է կառավարել հիշողության և երևակայության ներքին զգացումները: Մահացումը նաև նշանակում է հաղթահարել սեփական ծուլությունը, վատ տրամադրությունները և եսասիրական վարվեցողությունը: Ինքն իրեն մերժած անձը քաղաքավարի և հաճելի կլինի նրանց նկատմամբ, ում հետ ապրում է և աշխատում: Անձնական առաքելությունը նշանակում է ընկերություն՝ հասցված իր տրամաբանական ավարտին, ենթադրում է մահացում, որովհետև նշանակում է դժվարություն կրել՝ ուղղելու համար ընկերներին բարությամբ և նուրբ վարվեցողությամբ: «Ես դարձել եմ ամեն ինչ՝ բոլորի համար,– ասում է Սուրբ Պողոսը,– որպեսզի կարողանամ ամեն կերպ փրկել ոմանց» (Ա Կրնթ. 9:22): Այն ջանքերը, որոնք անհրաժեշտ են զսպելու համար վտանգավոր մղումները և լավ վարվեցողություն մշակելու համար, նաև ծառայում են որպես հատուցում մեր մեղքերի և ուրիշների մեղքերի համար՝ Խորհրդավոր Մարմնի մեջ: Եթե այդ Մարմնի Գլուխը՝ Քրիստոսը, տառապեց մեր մեղքերի պատճառով,

իրավացի է, որ մենք Նրա հետ համերաշխ լինենք: Եթե Քրիստոսը, Ով անմեղ էր, վճարեց մեղավորներիս համար, անշուշտ, մենք՝ մեղավորներս, պետք է ինչ-որ բան անենք ինքներս: Յուրաքանչյուր նոր մեղքի դրսևորում առատաձեռն քրիստոնյաներին ոգեշնչում է կատարել հատուցման դրական գործեր:

գ) Քրիստոսի հետ միությունը բխում է Մկրտությունից, հետագա զարգացումը գտնում է Դրոշմի մեջ և իրականանում և ուժգին սնվում է Սուրբ Հաղորդությամբ: Քանի որ Սուրբ Խորհուրդների մասին այս ձեռնարկի այլ հատվածներում խոսվել է, ապա այստեղ պետք է խոսել այն Սուրբ Խորհրդի մասին, որում Քրիստոսը շարունակում է գործադրել Իր ողորմած ներողամտությունը նրա միջոցով, ով գործում է Քրիստոսի անունից կաթողիկէ քահանայի մասին: Այն տարբեր անվանումներ ունի՝ Խոստովանություն, Ապաշխարություն, Հաշտություն. Խոստովանություն, որովհետև դա գործված մեղքերն ազնվորեն ընդունելն է, Ապաշխարություն, որովհետև այն նշանակում է փոփոխություն, Հաշտություն, որովհետև այս Սուրբ Խորհրդի միջոցով ապաշխարողը հաշտվում է Աստծու հետ, Նրա Եկեղեցու և ամբողջ մարդկության հետ: Այն սերտորեն կապված է Սուրբ Հաղորդության հետ, որովհետև Քրիստոսի ներումը մեզ է գալիս Նրա մահվան վաստակի միջոցով՝ այն նույն մահվան, որը տոնակատարում ենք Սուրբ Հաղորդության մեջ:

Թող յուրաքանչյուր լեգեոնական օգտվի Քրիստոսի հրավերքից՝ Իրեն անձամբ հանդիպելու համար Հաշտության Սուրբ Խորհրդի մեջ և դա անելու հաճախակի և կանոնավոր ձևով, «որովհետև այսպիսով մենք աճում ենք ճշմարիտ ինքնաճանաչողության և քրիստոնեական խոնարհության մեջ, վատ սովորություններն արմատախիլ են արվում, հոգևոր տգիտությունն ու անտարբերությունը կանխվում են, խիղճը մաքրագործվում է, և կամքը զորանում, ձեռք է բերվում փրկարար հոգևոր առաջնորդություն, և ավելանում է շնորհը՝ ինքնին Սուրբ Խորհրդի արդյունավետությամբ» (MC 88): Հաշտության Սուրբ Խորհրդի օգուտները քաղելով՝ լեգեոնականները կքաջալերվեն կիսել դրանք ուրիշների հետ՝ նրանց հրավիրելով Խոստովանության:

Ամփոփելով՝ ասենք, որ հոգիների փրկությունը և սրբացումը, ինչպես նաև աշխարհի քրիստոնեական փոխակերպումը կարող են իրականանալ միայն որպես մեր հոգիներում Քրիստոսի կյանքի արդյունք: Որպես փաստ, սա ամենակարևոր հարցն է:

«Մարեմական **հոգևոր փորձառությունը**, ինչպես դրան համապատասխան **ջերմեռանդությունը**, առատորեն բխում է աշխարհի տարբեր ժողովուրդների և ազգերի մեջ ապրող անձանց և զանազան քրիստոնեական համայնքների պատմական փորձառությունից: Այս առումով, հոգևոր փորձառության բազմաթիվ վկաների և ուսուցիչների մեջ ես կուզենայի հիշատակել Սուրբ Լուի-Մարի Գրինյոն դը Մոնֆորի կերպարը, որն առաջարկում է նվիրվել Քրիստոսին Մարիամի ձեռքերով՝ որպես արդյունավետ միջոց քրիստոնյաների համար՝ հավատարմորեն իրագործելու իրենց մկրտության հանձնառությունները» (RMat 48):

«Օրգանական կապ կա մեր հոգևոր կյանքի և դոգմաների միջև: Դոգմաները ջահեր են՝ հավատքի ճանապարհին. դրանք լուսավորում և ապահով են դարձնում հավատքի ճանապարհը: Հետևաբար, եթե մեր կյանքը ուղիղ է, մեր բանականությունն ու սիրտը բաց կլինեն՝ ընդունելու համար հավատքի դոգմաների սփռած լույսը» (CCC 89):

14. ԼԵԳԵՈՆԱԿԱՆԸ ԵՎ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՉՈՒՄԸ

Լեգեոնն առաջարկում է ավելի շուտ կյանքի ձև, քան ինչ-որ աշխատանքի կատարում: Այն տրամադրում է մի պատրաստություն, որի նպատակը ազդելն է կյանքի յուրաքանչյուր ոլորտի վրա և կյանքի ամեն մի ժամի վրա: Լեգեոնականը, որը լեգեոնական է միայն ժողովի ընթացքում և նշանակված աշխատանքը կատարելիս, չի ապրում Լեգեոնի ոգու համաձայն:

Լեգեոնի նպատակն է՝ օգնել իր անդամներին և բոլոր նրանց, ում հետ շփվում են լեգեոնականները, լիակատար ձևով ապրելու իրենց քրիստոնեական կոչումը: Այդ կոչումը բխում է Մկրտությունից: Մկրտությամբ մարդը դառնում է ևս մեկ Քրիստոս: «Մենք ոչ միայն դարձել են ևս մեկ Քրիստոս, այլև Ինքնի՛ն Քրիստոսը» (Սբ Օգոստինոս):

Մկրտությամբ միավորվելով Քրիստոսին՝ Իր Եկեղեցու յուրաքանչյուր անդամ մասնակցում է Իր դերակատարությանը՝ որպես Քահանա, Մարգարե և Թագավոր:

Մենք մասնակցում ենք Քրիստոսի **քահանայական** առաքելությանը՝ անհատական և հասարակական պաշտամունքի միջոցով: Պաշտամունքի բարձրագույն ձևը զոհաբերությունն է: Զոհաբերության միջոցով մենք ինքներս մեզ և մեր ամբողջ գործունեությունը նվիրաբերում ենք Հայր Աստծուն: Աշխարհականների մասին խոսելիս Վատիկանի Բ Ժողովն ասում է. «Նրանց բոլոր գործերը, աղոթքները և առաքելական ձեռնարկները, ընտանիքը և ամուսնական կյանքը, ամենօրյա աշխատանքը, մտքի և մարմնի հանգիստը, եթե այս բոլորը կատարվում են Սուրբ Հոգով, հիրավի, նույնիսկ կյանքի դժվարությունները, եթե համբերատար ձևով տարվեն, այս ամենը դառնում են հոգևոր զոհաբերություններ՝ ընդունելի Աստծո համար՝ Հիսուս Քրիստոսի միջոցով (Ա Պետ. 2:5): Սուրբ Հաղորդության տոնակատարության ժամանակ այս ամենն ամենապատշաճ ձևով կարող են ընծայվել Հորը՝ Տիրոջ Մարմնի հետ միասին, և այդպես, ամենուրեք պաշտելով իրենց սուրբ գործերով, աշխարհականները աշխարհին ինքնին նվիրաբերում են Աստծուն» (LG 34):

Մենք մասնակցում ենք Քրիստոսի **մարգարեական** (վարդապետական) առաքելությանը: Նա «հռչակում էր Իր Հոր Արքայությունն Իր կյանքի վկայությամբ և Իր Խոսքի զորությամբ» (LG 34): Որպես աշխարհական հավատացյալներ՝ մեզ շնորհվել է կարողություն և պատասխանատվություն՝ հավատքով ընդունելու Ավետարանը և հռչակելու այն խոսքով և գործով: Մեծագույն ծառայությունը, որ կարող ենք մատուցել մարդկանց, հավատքի ճշմարտությունների մասին խոսելն է, օրինակ՝ ասելը, թե ինչ է Աստված, ինչ է մարդկային հոգին, ինչ է կյանքի նպատակը և ինչ կա մահվանից հետո, և ամենակարևորը, մեր Տեր Քրիստոսի մասին, Ում մեջ է ամենայն ճշմարտություն: Մեր խոսքերի համար վիճելու կամ ապացուցելու անհրաժեշտություն չկա, բայց պետք է իմանալ և ապրել այդ ճշմարտությունները, հասկանալ դրանց արդյունքները, խոսել այդ մասին նրբամտորեն,

բացատրել դրանց իմաստը, հետաքրքրություն արթնացնել և դիմացինին մղել ձգտելու առավել ամբողջական գիտելիքների:

Լեգեոնին անդամակցելն օգնում է ավելացնել գիտելիքները հավատքի վերաբերյալ և այն մասին, թե ինչպես ապրել հավատքը: Այն նաև օգնում է՝ լինելով ուժեղ խթան և փորձառություն՝ կրոնի մասին խոսելու անծանոթների հետ: Բայց մարդիկ, որոնք մեր առաքելական եղբայրասիրության մեծագույն կարիքն ունեն, նրանք ենք, ում մենք սովորաբար հանդիպում ենք տանը, դպրոցում, արհեստի և մասնագիտության բերումով, սոցիալական և ժամանցային գործունեության մեջ: Նրանց հետ աշխատելը սովորաբար մեր Լեգեոնի հանձնարարությունների մեջ չի մտնում, բայց նրանք ևս նույն կերպ հանձնված են մեր խնամքին:

Մենք մասնակցում ենք Քրիստոսի **թագավորական** առաքելությանը՝ ինքներս մեր մեջ հաղթահարելով մեղքի թագավորությունը, ծառայելով մերձավորին, որովհետև կառավարել՝ նշանակում է ծառայել: Քրիստոսն ասաց, որ եկել է ծառայելու և ոչ թե ծառայություն ընդունելու (Մտթ. 20:28): Նախ և առաջ մենք մասնակցում ենք Քրիստոսի այս առաքելությանը՝ լավ կատարելով մեր աշխատանքը, ինչ էլ այն լինի, տանը թե դրսում, Աստծո հանդեպ սիրուց մղված և որպես ծառայություն՝ ուրիշներին: Լավ կատարված աշխատանքով մենք շարունակում ենք արարչագործությունը և օգնում ենք՝ աշխարհը դարձնելու ապրելու համար առավել լավ և հաճելի վայր: Բոլոր աշխարհական քրիստոնյաների առաջնային խնդիրն է՝ բոլոր երկրային գործերի մեջ ներդնել Ավետարանի ոգին և կատարելագործել այս անցողիկ աշխարհակարգը:

Լեգեոնի խոստման մեջ աղոթում ենք, որպեսզի կարողանանք դառնալ Սուրբ Հոգու հզոր նպատակների գործիքները: Անշուշտ, մեր գործերը պետք է մշտապես լինեն գերբնականորեն ոգեշնչված, բայց մեր մարդկային բնությունը նաև պետք է Սուրբ Հոգու տրամադրության տակ դնի հնարավորինս կատարյալ աշխատող մի գործիք:

Քրիստոսն Աստվածային Անձ է, բայց Իր մարդկային բնությունը դերակատարություն ունեցավ Իր

գործողություններում, Իր մարդկային բանականության մեջ, Իր ձայնի մեջ, Իր հայացքում, Իր վարքագծում: Մարդիկ՝ ներառյալ մանուկները, որոնք ամենաընկալունակն են, սիրում էին լինել Նրա հետ: Նա սպասված հյուր էր բոլորի տներում:

Սբ Ֆրանցիսկոս դը Սալը մի մարդ էր, որի վարքն ու վարվեցողությունը արդյունավետ միջոց էին շատ հոգիներ Աստծուն մոտեցնելու համար: Նա էր, որ խորհուրդ էր տալիս, թե ամեն մեկը, ով ուզում է եղբայրասիրություն գործադրել, պետք է ինքն իր մեջ մշակի այն, ինչ նա անվանում էր «փոքրիկ առաքինություններ»՝ ընկերասիրություն, քաղաքավարություն, լավ վարվելակերպ, հարգանք, համբերատարություն և հասկացողություն, հատկապես դժվար մարդկանց հետ:

«Արյան ինքնությունը ենթադրում է Հիսուս Քրիստոսի և Մարիամի միջև համանմանություն՝ կազմավորման, դիմագծերի, հակումների, ճաշակների, առաքինությունների՝ ոչ միայն այն պատճառով, որ արյան ինքնությունը շատ հաճախ առաջացնում է այդպիսի համանմանություն, այլ նաև այն պատճառով, որ Մարիամի պարագայում (նրա մայրությունն ամբողջովին գերբնական մի փաստ էր՝ գերիշխող շնորհի արդյունք) աստվածային շնորհը, վերցնելով այդ քիչ թե շատ ընդհանուր բնական սկզբունքը, զարգացրեց այն այնպես, որ դարձրեց իր Աստվածային Որդու կենդանի պատկերն ու դիմանկարը, այնպես որ ով նայեր Մարիամին, կարող էր հիանալ Հիսուս Քրիստոսի բացառիկ կերպով գծագրված պատկերով: Մայրության հարաբերությունը Մարիամի և նրա Որդու միջև հաստատեց այնպիսի մտերմություն՝ ոչ միայն կենսական շփման և հաղորդության իմաստով, այլ նաև սրտերի փոխադարձ կապվածության և գաղտնիքների փոխանակման իմաստով, որ Մարիամը մի հայելի էր, որն արտացոլում էր Հիսուսի բոլոր մտքերը, զգացումները, ձգտումները, ցանկությունները և նպատակները, ինչպես և Հիսուսն իր հերթին առավել վսեմ ձևով, ինչպես անբիծ մի հայելու մեջ, արտացոլում էր մաքրության, սիրո, նվիրվածության, անհատակ սիրո հրաշքը, որը Մարիամի հոգին էր: Հետևաբար, Մարիամն առավել հիմնավոր ձևով, քան Հեթանոսների Առաքյալը, կարող էր ասել. «Ոչ թե ես եմ ապրում, այլ Քրիստոսն է ապրում իմ մեջ»» (Դը Քոնսիլիո, «Մարիամի ճանաչողությունը»):

34

ՊՐԵԶԻԴԻՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Քանի որ Լեգեոնն իր հաջողության մասին դատում է ամբողջությամբ այն հոգևոր որակներով, որոնք զարգացվել են իր անդամների մեջ և ներդրվել նրանց կատարած աշխատանքի մեջ, ապա հոգևոր առաջնորդը, որը պարտավոր է նրանց ոգևորել այդ որակներով, պրեզիդիումի ակունքն է: Նա հաճախում է ժողովներին և նախագահի և մյուս սպաների հետ միասին հետևում է, որպեսզի կանոնները պահվեն, և Լեգեոնի համակարգը գործի թե՛ հոգով, թե՛ օրենքի տառով: Նա պաշտպանում է Լեգեոնը բոլոր սխալներից և ունի պատշաճ լեգեոնական հեղինակություն:

Եթե նրա առաջնորդած պրեզիդիումը արժանի է այն անվանը, որը կրում է, ապա այդտեղ նա ունի իր հոգևոր համայնքին հատուկ ջերմեռանդությունը և հնարավորությունները: Բայց պրեզիդիումի աշխատանքը կախված է հոգևոր առաջնորդից, որովհետև այդ աշխատանքը պետք է լինի պատշաճ և բարդ: Աշխատանքը խթանելը կախված կլինի հոգևոր առաջնորդից, որովհետև անհրաժեշտ կլինի կոտրել ներքին դժկամություններն ու արտաքին պատնեշները: Նա է պրեզիդիումի հոգևոր որակի ոգեշնչող սկզբունքը: Իրականում, այնքան շատ բան է կախված հոգևոր առաջնորդից, որ Պիուս ԺԱ Պապը գրում է հետևյալը. «Իմ ճակատագիրը ձեր ձեռքերում է»: Ցավալի կլինի, որ նույնիսկ մեկ դեպքում այդ վստահության զգացումն իզուր լինի, որ նույնիսկ մի փոքրիկ խումբ, որ ցանկանում է իր ուժերի լավագույնը ներդնել Աստծո, Մարիամի և հոգիների համար, մնա առանց առաջնորդության, հիրավի, մի հոտ՝ առանց հովվի: Ի՞նչ կասի գլխավոր հովիվը այդպիսի մեկի համար, որից նա ակնկալում է լինելու «կազմակերպության հոգին,

բոլոր լավ ձեռնարկների ոգեշնչումը, խանդավառության աղբյուրը» (Պիուս ԺԱ Պապ):

Հոգևոր առաջնորդն իր պրեզիդիումին պետք է նայի՝ ինչպես ուսուցիչն է նայում իր նորընծա աշակերտներին, և անդադար ձգտի զարգացնել նրանց հոգևոր աշխարհայացքը և նրանց մեջ սերմանել Մարիամի լեգեոնականին պատշաճող գործեր և որակներ: Արդյունքը կլինի այն, որ այդ հոգևոր որակները կհասնեն այն բարձունքներին, որոնց կոչված են, այնպես որ հոգևոր առաջնորդը չպետք է վախենա Լեգեոնի մեջ իր կոչումը համարել գերագույն առաքինություն կամ իր անդամների առջև դնել հերոսական որակներ պահանջող աշխատանքներ: Նույնիսկ անհնարինը պետք է հանձնվի աստվածային շնորհին, իսկ շնորհը տրվում է խնդրողին: Բայց Հոգևոր Առաջնորդը պետք է նաև պնդի հաստատուն հավատարմություն նրանց պարտականությունների փոքր մանրամասների մեջ՝ որպես մեծ ձեռքբերումների համար էական հիմք: Թեև բնավորությունը կարելի է տեսնել մեծ բաների մեջ, բայց այն ձևավորվում է փոքր բաների մեջ:

Նա պետք է հետևի, որ իր հոգևոր առաջնորդության ներքո գտնվող լեգեոնականներն իրենց աշխատանքը չկատարեն եսասիրության ոգով, և ջանա այնպես անել, որ նրանք աշխատանքից վերադառնալիս չմեծամտանան հաջողությունից և ոչ էլ ընկճվեն ակնհայտ ձախողումից, և պատրաստ լինեն, հարվածներ կրելիս, հազար անգամ վերադառնալ ամենաանընդունելի՛ կամ ամենաճնշող պարտականությանը:

Նա պետք է հետևի, որ լեգեոնականներն իրենց աշխատանքի համարձակ և բծախնդիր կատարումը լրացնեն աշխատանքի համար աղոթքով և ինքնազոհության գործերով: Նա պետք է սովորեցնի նրանց, որ հենց այն ժամանակ, երբ բոլոր սովորական միջոցներն ապարդյուն են, երբ ամեն ինչ, մարդկայնորեն ասած, անհույս է, կարելի է դիմել Լեգեոնի Թագուհուն՝ իրենց Մորը, ամենահաստատ վստահությամբ, և Թագուհին նրանց կպարգևի հաղթանակ:

Ըստ էության, Մարիամի Լեգեոնի հոգևոր առաջնորդի պարտականությունն է՝ իր բոլոր անդամներին լցնել

Աստվածամոր հանդեպ լուսավոր և ամենաուժգին սիրով, մասնավորապես, Սուրբ Կույսի այն արժանիքների հանդեպ, որոնք Լեգեոնը հատկապես պատվում է:

Այսպես համբերատարությամբ կառուցելով՝ քարը քարին դնելով, նա կարող է հուսալ յուրաքանչյուր անդամի մեջ կառուցելու ոգեղեն մի ամրոց, որը չի կարողանա քանդել ոչ մի բան:

Որպես պրեզիդիումի անդամ, հոգևոր առաջնորդը պետք է մասնակցի պրեզիդիումի բոլոր գործերին, զանազան քննարկումներին և ձեռնարկներին և պետք է լինի «ըստ անհրաժեշտության, ուսուցիչ, խորհրդատու և առաջնորդ» (Սբ Պիուս Ժ Պապ): Բայց նա պետք է զգույշ լինի, որ իր վրա չվերցնի նախագահի պարտականությունները: Եթե նրա մոտ այդպիսի հակվածություն լինի, ապա դա պրեզիդիումին բարիք չի բերի: Եթե նրա քահանայական հեղինակությանը և կյանքի մասին անսահմանորեն առավել ընդարձակ ճանաչողությանն ավելացվի պրեզիդիումի գործերի վարումը, ապա մեծ ճնշում կգործադրվի ժողովի վրա: Այնպես կստացվի, որ յուրաքանչյուր աշխատանքի դիտարկումը կվերածվի երկխոսության հոգևոր առաջնորդի և այդ աշխատանքը կատարած լեգեոնականի միջև, որում նախագահը և մյուս անդամները, մեծ հաշվով, մասնակցություն չեն ունենա՝ լուռ մնալով այն զգացումի պատճառով, թե իրենց միջամտությունը գուցե դիտարկվի որպես հոգևոր առաջնորդի որոշումներին խանգարելու փորձ: Եթե աշխատանքների ազատ և ընդհանուր քննարկումը խանգարվի, ժողովը միանգամից կկորցնի իր գրավչության գլխավոր տարրը՝ իր սկզբնական դաստիարակող ուժը և իր առողջ մթնոլորտի հիմնական աղբյուրը: Այդպիսի պրեզիդիումը ոչ մի աշխատանք չի կատարի, եթե հոգևոր առաջնորդը բացակայի, և կարող է փլուզվել հոգևոր առաջնորդի հեռանալու պարագայում:

«Նա պետք է մեծ հետաքրքրություն ունենա այն ամենի նկատմամբ, ինչի մասին խոսվում է Լեգեոնի ժողովի ժամանակ: Բայց նա չպետք է կառչի յուրաքանչյուր բառից՝ որպես առիթ իր սեփական հայացքները ներարկելու համար: Անշուշտ, նա կարող է միջամտել, երբ խնդրում են նրա

խորհուրդները կամ գիտելիքները, բայց նա պետք է դա անի հավասարակշռված ձևով՝ ո՛չ մեջտեղից հանելով նախագահին, ո՛չ կլանելով ժողովը, և մյուս կողմից, պետք է միջամտի այնպես, որ տա մի օրինակ, թե ինչ չափով և ինչպես պետք է յուրաքանչյուր անդամ հետաքրքրվի այն աշխատանքներով, որոնք ինքն անձամբ չի կատարել» (Եպիսկոպոս Հելմսինգ):

Եթե պրեզիդիումը ձեռնարկում է ուսումնասիրության աշխատանք, հոգևոր առաջնորդը պետք է վերահսկի ընթերցվելիք գրքերի ընտրությունը: Նա պետք է այդ աշխատանքը կատարի զգոն աչալրջությամբ և չպետք է թույլ տա, որ անդամներին առաջարկվեն ուսմունքներ, որոնք ամբողջովին չեն համապատասխանում Եկեղեցու սկզբունքներին:

Կատենայի արտասանությունից անմիջապես հետո հոգևոր առաջնորդը պետք է հանդես գա կարճ խոսքով, նախընտրելի է՝ ձեռնարկի վերաբերյալ մեկնաբանությամբ (տե՛ս Գլուխ 18, Պրեզիդիումի հանդիպման կարգը, 11-րդ բաժին՝ Քարոզը): Նրա բացակայության դեպքում այս պարտականությունն ընկնում է Նախագահի վրա:

Եզրափակիչ աղոթքների ավարտից անմիջապես հետո նա օրհնում է անդամներին:

«Քրիստոսը հաստատեց քահանայությունը, որը պետք է ոչ միայն ներկայացնի Նրան և փոխարինի Նրան, այլ նաև պետք է որոշակի իմաստով լինի հենց Ինքը, այսինքն՝ Քրիստոսը պետք է քահանայության միջոցով գործադրի Իր աստվածային զորությունը: Հետևաբար, քահանայի հանդեպ նվիրումն ու հարգանքը ուղղակի հարգանք է Հավիտենական Քահանայության հանդեպ, որին մասնակցում է քահանան» (Բենսոն, «Քրիստոսի ընկերությունը»):

«Քահանան պետք է լինի այն ծառան, որն օրվա յուրաքանչյուր ժամին՝ արշալույսից մինչև արևամուտ, դուրս է գալիս հասարակական վայրեր՝ մշակներ կանչելու Տիրոջ խաղողի այգու համար: Եթե նա չկանչի, մեծ վտանգ կա, թե մեծամասնությունը կմնա դրսում՝ «պարապ կանգնած ամբողջ օրը (Մտթ. 20:6)» (Սիվարդի):

2. ՆԱԽԱԳԱՀԸ

1. Նախագահի առաջնահերթ պարտականությունն է՝ հաճախել Կուրիայի ժողովներին, որին կցված է իր պրեզիդիումը, և այս ու այլ միջոցներով պրեզիդիումին ամուր միացած պահել Լեգեոնի հիմնական կառույցին:

2. Պրեզիդիումի ժողովներում նախագահը պետք է զբաղեցնի իր պաշտոնական տեղը և վարի ժողովի ընթացքը: Նա պետք է նշանակի աշխատանքները և ընդունի անդամների հաշվետվությունները կատարված աշխատանքների վերաբերյալ: Նա պետք է հիշի, որ Լեգեոնի վստահված անձն է՝ համակարգի ճշգրիտ աշխատանքի ապահովման համար՝ իր բոլոր մանրամասնություններով: Այդ վստահության մեջ ինքն իրեն չարդարացնելը Լեգեոնի հանդեպ անհավատարմության քայլ է: Աշխարհիկ բանակները դա կանվանեին դավաճանություն և խախտողի հանդեպ կսահմանեին ամենախիստ պատիժները:

3. Նախ և առաջ նրա վրա դրված է պարտականությունը հետևելու, որ ժողովի սենյակը պատրաստ լինի (այսինքն՝ լուսավորությունը, ջերմությունը, նստելու հարմարությունները և այլն), որպեսզի ժողովը սկսվի ճիշտ ժամանակին:

4. Նա պետք է ժողովը սկսի ճշգրիտ նշանակված ժամին, ժողովի ընթացքը ընդմիջի Կատենայի աղոթքի համար և ժողովը հասցնի ավարտին՝ առաջարկված ժամանակին: Այս նկատառումով, լավ կլինի, որ նախագահն իր առջև սեղանին դրված ունենա ժամացույց:

5. Հոգևոր առաջնորդի բացակայության դեպքում քարոզը նա պետք է անի կամ նշանակի մեկին, որ քարոզի:

6. Նախագահը պետք է հրահանգի և վերահսկի մյուս սպաների կողմից աշխատանքային պարտականությունների կատարումը:

7. Նախագահը պետք է մշտապես ուշադիր լինի հատուկ արժանիքներ ունեցող անդամների նկատմամբ, որոնց կարող է երաշխավորել Կուրայի առջև սպայական թափուր պաշտոններին նշանակելու համար իր կամ այլ պրեզիդիումներում: Քանի որ պրեզիդիումի արդյունավետ գործունեությունը կախված է սպաների որակից, ապա նախագահի

ուսերին է մնում վեր հանել արժանավորներին և այդպիսով ապահովել Լեգեոնի ապագան:

8. Նախագահը պետք է իր բոլոր գործակից լեգեոնականների համար սահմանի հոգևոր ապրումի և խանդավառության բարձր մակարդակ, բայց ոչ այնպես, որ իր վրա վերցնի այն աշխատանքները, որոնք պետք է կատարեն մյուս անդամները: Եթե նախագահը այդպես անի, նա գուցե իրոք եռանդուն լինի, բայց այդպես նա օրինակ չի կարող ծառայել, որովհետև կարգելի նրանց, ում համար պետք է օրինակ ծառայի, որպեսզի հետևեն իր առաջնորդությանը:

9. Նա պետք է հիշի, որ շշուկով ասված կամ ոչ պարզ հաշվետվությունները ժողովի թշնամին են: Նա ինքը պետք է խոսի ձայնի այնպիսի տոնայնությամբ, որ հնչի ամբողջ սենյակով մեկ: Եթե նա թուլանա այս կետում, ապա կհայտնաբերի, որ իր անդամները հաշվետվությունները տալիս են հազիվ լսելի ձայնով, և ժողովը միանգամից կձախողվի:

10. Նրա պարտականությունն է՝ հետևել, որպեսզի յուրաքանչյուր անդամ հանդես գա պատշաճ հաշվետվությամբ, խելամիտ հարցադրումներով առաջնորդել անփորձ կամ ամաչկոտ անդամներին և, մյուս կողմից, չափավորել այն հաշվետվությունները, որոնք, թեև ինքնին գերազանց են, բայց սպառնում են խլել չափազանց մեծ հատված հատկացված ժամանակից:

11. Ժողովը պատշաճ վարելով հանդերձ, նախագահը պետք է խոսի հնարավորինս քիչ: Այսինքն՝ նա պետք է գտնի երկու ծայրահեղությունների միջինը: Մեկ ծայրահեղությունը ոչ ստուգելն է, ոչ խթանելը, այնպես որ ժողովը գրեթե ինքնահոսի է մատնվում: Սրա հետևանքն այն է, որ որոշ անդամներ գոհանում են կցկտուր հաշվետվություններով, մինչ մյուսները խոսում են առանց դադարի: «Չափազանց քչի» և «չափազանց շատի» միջինը գտնելով՝ պրեզիդիումը գուցե կարողանա իր գործը կատարել պատշաճ ժամանակին: Բայց կարիք չկա ասելու, որ սխալների այդպիսի համադրությունը չի դառնում ճշգրտություն, ճիշտ ինչպես քողարկված քաոսը չի կարող լինել կատարյալ կարգուկանոն:

Մյուս ծայրահեղությունը չափազանց շատ խոսելն է: Որոշ նախագահներ եռանդագին խոսում են ամբողջ ժամանակի ընթացքում՝ այդպիսով ա) սեփականացնելով մյուս անդամներին վերապահված ժամանակը, բ) գլխիվայր շրջելով պրեզիդիումի գաղափարը, որը ենթադրում է ոչ թե դասախոսության մի ձև, այլ՝ «Հոր գործի» (տե՛ս Ղկ. 2:49) միասնական կատարում, գ) ավելին, աթոռին նստած չափազանց շատ խոսելը թմրեցնում է անդամներին և դնում մի հանգստավետ վիճակում, երբ չեն ուզում բացել իրենց բերանները:

Այս երկու ծայրահեղություններն ամբողջությամբ վնասում են անդամների պատրաստությանը:

12. Նախագահը պետք է պրեզիդիումի մեջ զարգացնի եղբայրասիրության ոգին՝ հասկանալով, որ երբ դա չլինի, ամեն ինչ կփլուզվի: Նա ի՛նքը պետք է երաշխավորի դա՝ յուրաքանչյուր անդամի հանդեպ մեծագույն սեր ցուցաբերելով և առհասարակ մեծ խոնարհության օրինակ լինելով: Նա պետք է ընդունի մեր Տիրոջ խոսքերը. «Ով ուզում է լինել առաջինը ձեր մեջ, պետք է լինի ձեր ծառան» (Մտթ. 20:27):

13. Նախագահը պետք է անդամներին խրախուսի արտահայտելու իրենց կարծիքները և կամավոր օգնություն առաջարկել այն գործերում, որոնք իրենցը չեն, և այդպիսով նրանց մեջ զարգացնել կենդանի հետաքրքրություն պրեզիդիումի ամբողջ աշխատանքի հանդեպ:

14. Նախագահը պետք է գոհանա միայն այն ժամանակ, երբ յուրաքանչյուր լեգեոնական կատարի իր գործը՝

ա) ճիշտ ոգով,

բ) ճիշտ ուղղությամբ,

գ) որ ամբողջ բարիքը, որը Լեգեոնը կուզենար տեսնել հասունացած յուրաքանչյուր գործի մեջ, իրականում ձեռքբերված է,

դ) որ ժամանակ առ ժամանակ վերստին անդրադարձ է կատարվում հին աշխատանքներին,

ե) որ անդամների մեջ կենդանի է մնում նախաձեռնության ոգին՝ նոր գործերի կանոնավոր ձեռնարկումներով:

15. Նախագահը պետք է ապահովի պրեզիդիումի անդամների ջանադրության և ինքնազոհողության պատշաճ

մակարդակ, որին նրանք ընդունակ են: Լավ կարողություններ ունեցող լեգեոնականին հանձնարարել ինչ-որ խղճուկ պարտականություն կատարել՝ նշանակում է շատ անարդար վարվել այդ լեգեոնականի նկատմամբ, որի համար պահված է հավիտենական կյանքը: Յուրաքանչյուր ոք, ում քաջալերում են, դժվարություններն ավելի հեշտությամբ կհաղթահարեն: Այսպես, նախագահը պետք է յուրաքանչյուրին առաջ մղի, որովհետև Աստված իր յուրաքանչյուր արարածից կամենում է տեսնել կարողությունների առավելագույն դրսևորումը:

16. Պրեզիդիումի սխալները սովորաբար նախագահի սխալներն են: Եթե նախագահն ընդունում է անճշտությունները, ապա դրանք կրկնվում են և առավել վատթարանում են:

17. Եթե նախագահն իր աթոռը զբաղեցնում է տարեկան մոտ հիսուն անգամ, և ոչ ավելին է, քան մարդկային արարած, ապա անխուսափելի է, որ ինչ-որ մի առիթով նա կլինի մտավոր լարվածության վիճակում: Եթե այդպես լինի, նա պետք է ջանա ցույց չտալ դրա ոչ մի նշույլ, որովհետև ոչինչ այնքան վարակիչ չէ, քան վատ հումորը: Երբ սկսվում է մեկ մարդուց, մանավանդ իշխանություն ունեցող մեկից, այն կարող է արագորեն տարածվել ամբողջ կառույցով մեկ:

18. Եթե նախագահը զգում է, որ պրեզիդիումը գնում է անհոգության ճանապարհներով, և ոգին անկում է ապրում, պետք է առանձին խորհրդակցի Կուրիայի սպաների հետ, որպեսզի որդեգրվի ճիշտ ուղղություն: Եվ եթե խորհուրդ է տրվում, որ նախագահն այդ պարագայում տեղափոխվի պարզ անդամների շարքը, ապա նա պետք է խոնարհությամբ հնազանդվի այդ որոշմանը, որն իր համար առատ օրհնություններ կբերի:

19. Նախագահը պետք է այլ սպաների և անդամների նման կատարի անդամակցության պարտավորությունները՝ կատարելով պրեզիդիումի սովորական աշխատանքը: Ավելորդ կլիներ այդ մասին խոսել նախագահի վերաբերյալ, եթե փորձառությունը չհուշեր հակառակի մասին:

20. Վերջապես, նախագահի մոտ երբեք չպետք է պակասեն այն որակները, որոնք, ինչպես ասում է աշխարհական

առաքելությունների վերաբերյալ մի ականավոր հեղինակություն (կարդինալ Պիցցարդոն), պետք է շատ հատուկ կերպով բնորոշեն այդ շարժման յուրաքանչյուր առաջնորդի հնազանդության առաքինությունը եկեղեցական իշխանությունների նկատմամբ, ինքնուրացումի ոգին և այլ կազմակերպությունների ու դրանց պատկանող անձանց նկատմամբ եղբայրասիրության և ներդաշնակության ոգին:

«Այն պահից, երբ ինձ տրվեց հոգիների առաջնորդությունը, ես մի հայացքով տեսա, որ այդ խնդիրն իմ ուժերից վեր է, և շուտափույթ ապավինելով մեր Տիրոջ ձեռքերին, ես նմանվեցի այն մանուկներին, որոնք վախենալիս իրենց երեսները թաքցնում են իրենց հայրերի ուսերին. «Դու տեսնում ես, Տե՛ր,– գոչեցի ես,– որ ես չափազանց փոքր եմ՝ կերակրելու քո փոքրիկներին, բայց եթե իմ միջոցով Դու կտաս յուրաքանչյուրին ինչ որ պատշաճ է, ապա լցրո՛ւ իմ ձեռքերը, և, առանց լքելու Քո ձեռքերի ապաստարանը, կամ նույնիսկ առանց գլուխս շրջելու, ես կբաշխեմ Քո գանձերն այն հոգիներին, որոնք գալիս են ինձ մոտ՝ կերակուր խնդրելու: Երբ նրանք հավանեն դրանք, ես կիմանամ, որ ինձ չէ՛, որ նրանք պարտական են, այլ Քե՛զ, մինչդեռ եթե նրանք բողոքեն, թե դրանք դառնահամ են, ես ամենևին չեմ անհանգստանա, այլ կջանամ համոզել նրանց, որ դրանք գալիս են Քեզնից, և ես զգույշ կլինեմ, որ նրանց կերակրեմ միայն դրանցով» (Սբ Թերեզա դը Լիզյո):

3. ՓՈԽՆԱԽԱԳԱՀԸ

1. Փոխնախագահի պարտականությունն է՝ հաճախել Կուրիայի ժողովներին:

2. Նա պետք է նախագահի պրեզիդիումի ժողովներին, եթե նախագահը բացակայում է: Բայց պետք է հասկանալ, որ այդ պաշտոնը չի տալիս իրավունք՝ ստանալու նախագահի պաշտոնը, եթե այն թափուր դառնա:

Հետևյալ խորհուրդը՝ վերցված Սբ Վինսենթ դը Փոլի հասարակության ձեռնարկից, հավասարապես վերաբերում է նաև պրեզիդիումի փոխնախագահին. «Երբ նախագահը բացակա է, մանավանդ որոշ ժամանակով, պետք է հասկանալ, որ փոխնախագահը տիրապետում է նրա ամբողջ իշխանությանը և լիակատար ձևով փոխարինում

է նրան: Կազմակերպությունը երբեք չպետք է դադարեցնի իր աշխատանքը անդամներից մեկի բացակայության պատճառով, և դժբախտաբար այդպես կլինի, եթե անդամները չեն համարձակվել որևէ բան անել նախագահի բացակայության դեպքում: Ուրեմն, դա ոչ միայն փոխնախագահի իրավունքն է, այլև նրա գիտակցված պարտականությունը՝ ամբողջությամբ փոխարինել նախագահին նրա բացակայության պայմաններում, որպեսզի, երբ նախագահը վերադառնա, չպարզվի, որ ամեն ինչ փլվել է իր բացակայության պատճառով»:

3. Փոխնախագահը պետք է առհասարակ օգնի նախագահին պրեզիդիումի կառավարման և աշխատանքներն առաջ տանելու գործերում: Շատ հաճախ ենթադրում են, թե նրա պարտականությունը սկսվում է միայն այն ժամանակ, երբ նախագահը բացակա է: Սա մի սխալ է, որն աղետաբեր կլինի թե՛ փոխնախագահի, թե՛ պրեզիդիումի համար: Ճիշտ տեսակետն այն է, որ փոխնախագահը պետք է սերտորեն համագործակցի նախագահի հետ նրա գործողություններում: Նրանք երկուսով պրեզիդիումի համար պետք է լինեն ինչպես հայրն ու մայրը՝ ընտանիքի համար, կամ ինչպես գլխավոր հրամանատարն ու անձնակազմի պետը բանակի համար են: Փոխնախագահը լրացնում է նախագահին: Նա պետք է լինի գործող սպա և ոչ թե պահեստազորային կամ անգործ սպա: Ժողովների ընթացքում նրա հատուկ գործառույթն է՝ վերահսկել անթիվ բաներ, որոնք դուրս են մնում նախագահի ուշադրությունից, բայց որոնցից կարող է կախված լինել պրեզիդիումի պատշաճ աշխատանքը:

4. Փոխնախագահը, մասնավորապես, պարտավոր է հետևել անդամակցությանը: Նա պետք է ծանոթացնի նորեկներին առաջին հաճախման ժամանակ և ողջունի նրանց մուտքը պրեզիդիում, ծանոթացնի նրանց մյուս անդամների հետ՝ ժողովից առաջ կամ հետո, հետևի, որ նրանց համար նշանակվի աշխատանք, որ նրանց բացատրվեն անդամակցության պարտականությունները (ներառյալ Կատենայի ամենօրյա աղոթքը) և տեղեկացվի անդամակցության պրետորական աստիճանի գոյության և մանրամասների մասին:

5. Ժողովի ժամանակ նա պետք է լրացնի ներկաների և բացակաների անունները:

6. Փոխնախագահը պետք է գրառումներ կատարի գործող, պրետորական, ադյուտորական և օժանդակ անդամների վերաբերյալ՝ յուրաքանչյուր դեպքում զատորոշելով լիարժեք անդամներին փորձաշրջանում գտնվող անդամներից: Նա պետք է հետևի, որ օժանդակ անդամներին այցելեն նրանց փորձաշրջանի վերջում և երբ համոզվեն, որ նրանք հավատարիմ ձևով կատարում են իրենց պարտականությունները, նրանց անուններն արձանագրեն մշտական ցուցակներում:

7. Փոխնախագահը պետք է տեղեկացնի փորձաշրջանում գտնվող գործող անդամներին փորձաշրջանի ավարտին մոտենալու մասին և կատարի բոլոր պատրաստությունները լեգեոնական խոստումը տալու համար:

8. Փոխնախագահը պետք է նկատի առնի անդամների բացակայությունը պրեզիդիումի ժողովներից, և ապա նամակագրության կամ այլ միջոցներով ջանա կանխել նրանց ամբողջական հեռացումը Լեգեոնի անդամությունից:

Ակնհայտ է, որ նրանց միջև, ում անդամակցությունը Լեգեոնին երբեք կասկածի տակ չի դրվում, և նրանց միջև, ովքեր միանգամից դուրս են գալիս անհամապատասխանության պատճառով, պետք լինի մի մեծ միջանկյալ խումբ, որոնց մնալը Լեգեոնի կազմում կախված կլինի արտաքին և պատահական հանգամանքներից, և ում հնարավոր կլինի պահել, եթե մի ուշադիր սպա հատուկ հոգատարություն ցուցաբերի նրանց նկատմամբ: Պետք է հիշել, որ Լեգեոնի համար անդամներին պահելն ավելի կարևոր է, քան նոր անդամներ ձեռք բերելը: Այսպես, այդ ուղղությամբ աշխատող սպայի աշխատանքը, եթե հավատարմորեն իրականացվի, ուղղակիորեն կարդյունավորվի բազմաթիվ բարի գործերով և հոգևոր հաղթանակներով, արագորեն կբերի նոր պրեզիդիումների ձևավորմանը և ինքնին կլինի բոլորովին այլ տեսակի մի առաքելական գործունեություն:

9. Փոխնախագահը պետք է հետամուտ լինի, որ չարհամարհվի ննջեցյալ անդամների համար աղոթքի

պարտականությունը: Այդ պարտականության մասին առավել հստակ խոսվում է հատուկ բաժնում:

10. Նա պետք է այցելի հիվանդ անդամներին կամ ապահովի, որ այլ անդամներ այցելեն նրանց:

11. Փոխնախագահը պետք է վերահսկի, որ մյուս անդամներն աշխատեն ավելացնել օժանդակ անդամների թիվը, մասնավորապես, ադյուտորների թիվը, և հետո կապ պահեն նրանց հետ:

«Նորընծաներն իրենց զարմանքն էին արտահայտում Սրբուհի Թերեզային՝ տեսնելով, որ նա կռահում է իրենց ամենաներքին մտածումները: «Ահա իմ գաղտնիքը,– բացատրում էր նա նորընծաներին,– ես երբեք ոչ մի դիտարկում չեմ անում՝ առանց հայցելու Երանելի Կույսի օգնությունը: Ես խնդրում եմ Նրան լուսավորել ինձ, թե ինչը ձեզ համար կլինի ամենամեծ բարիքը: Եվ ես հաճախ ապշում եմ այն բաների վրա, որոնք հետո ձեզ սովորեցնում եմ: Ձեզ հետ խոսելիս ես զգում եմ, որ խաբված չեմ, երբ հավատում եմ, որ Հիսուսը խոսում է ձեզ հետ իմ բերանով»» (Սբ Թերեզա դը Լիզյո):

4. ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

1. Քարտուղարը պարտավոր է հաճախել Կուրիայի ժողովներին:

2. Քարտուղարին է վստահված պրեզիդիումի արձանագրությունների գրառումն ու պահպանությունը: Մեծ ջանքեր պետք է գործադրել արձանագրությունների պատրաստության համար, որոնք պետք է կարդալ հստակ ձայներանգով: Արձանագրությունները շատ կարևոր դերակատարություն ունեն և՛ ընթերցման ձևի, և՛ բովանդակության շնորհիվ: Լավ ընթերցված արձանագրությունները՝ ոչ շատ երկար, ոչ էլ շատ կարճ, որոնք ակնհայտորեն մեծ ջանքեր են խլել քարտուղարից, լավ ուղղություն են տալիս ժողովի ամբողջ մնացած ընթացքին և մեծ չափով օգնում են դրա արդյունավետ անցկացմանը:

3. Քարտուղարը պետք է հետևի իր գործիքներին, եթե ուզում է ունենալ լավ արդյունքներ: Ողջամիտ մարդու համար հասկանալի փաստ է, որ նույնիսկ լավ քարտուղարը,

որը, սակայն, գրում է մատիտով կամ կոտրված գրչով մի կտոր թղթի վրա, սովորաբար պատշաճ արձանագրություն չի կազմում: Հետևաբար, արձանագրությունները պետք է գրվեն պատշաճ գրչով կամ տպվեն և պահվեն որակյալ գրքում:

4. Քարտուղարը չի ազատվում իր առաքելություն կատարելու պարտականությունից՝ քարտուղարի պարտականությունները կատարելու հաշվին:

5. Քարտուղարը պետք է պարտաճանաչ ձևով տրամադրի ամբողջական տեղեկատվությունը և հաշվետվությունը, որոնք կարող են պահանջվել Կուրիայի կողմից, և առհասարակ պետք է պատասխանատու լինի Կուրիայի հետ նամակագրության համար: Քարտուղարը նաև պետք է հետևի, որպեսզի պրեզիդիումի գրենական պիտույքները լինեն պատշաճ վիճակում:

6. Սակայն քարտուղարի պարտականությունների մի մասը նախագահի կողմից կարող է հանձնվել պրեզիդիումի այլ անդամներին:

«Ավետարանն ասում է. «Մարիամն այս բոլոր բաները պահեց իր սրտում» (Ղկ. 2:51): Ինչո՞ւ ոչ նաև մագաղաթի վրա, հարցնում էր Բոթիչելլին: Առանց առավել խորանալու հարցի մեկնության մեջ՝ նա այսպես պատկերեց մտահափշտակության և գոհության օրհներգերից ամենակատարյալը՝ մի հրեշտակ իր աջ ձեռքում առաջարկում է թանաքաման, մինչ իր ձախ ձեռքով նա բռնել է ձեռագիրը, որի վրա Երանելի Կույսը հենց նոր գրել է «Մեծացուսցէ»-ն՝ լուսավորված գոթական տառատեսակով, նրա թմբլիկ Մանուկը նման է մի մարգարեի, որ իր փոքրիկ ձեռքով, կարծես, ուղղորդում է մոր մատները՝ այդ նյարդային, զգայուն, գրեթե մտածող մատները, որոնք ֆլորենտյան վարպետը մշտապես սերտորեն կապում է Կույսի մասին իր գաղափարի արտահայտման հետ: Թանաքամանը, նմանապես, իր իմաստն ունի այստեղ. այն թեև ոսկուց չէ, թանկագին քարերով պաճուճված չէ՝ ինչպես հրեշտակների բարձրացրած թագը, սակայն այն ևս խորհրդանշում է Երկնքի և Երկրի Թագուհու հաղթական ճակատագիրը: Այն կանխապես հայտնում է այն ամենը, ինչ մինչև ժամանակների վախճանը կգրվի մարդկային վավերագրերում՝ ի հաստատումն նրա, ինչ Տիրոջ խոնարհ աղախինը կանխատեսել է իր սեփական փառքի մասին» (Վլոբերգ):

5. ԳԱՆՁԱՊԱՀԸ

1. Գանձապահը պարտավոր է հաճախել Կուրիայի ժողովներին:

2. Նա պետք է պատասխանատու լինի պրեզիդիումի արած և պրեզիդիումի կողմից ընդունված բոլոր վճարումների համար և դրանց վերաբերյալ ամբողջական և պատշաճ կերպով գրված հաշվետվությունների համար:

3. Նա պետք է գումար վճարի՝ միայն պրեզիդիումի տնօրինությամբ, և պետք է ձեռքի տակ ունեցած միջոցներից պրեզիդիումին հատկացնի միայն այն ձևով, որը կհաստատի պրեզիդիումը:

4. Գանձապահը պետք է հիշի կուտակված ֆինանսական միջոցների մասին առաջարկները, որոնց մասին գրված է Գլուխ 35-ում՝ «Ֆինանսական միջոցները», և ժամանակ առ ժամանակ պետք է առաջացող հարցերը ներկայացնի պրեզիդիումին:

«Մարիամը ամբողջ Սուրբ Երրորդության նկուղի տնօրինողն է, որովհետև Սուրբ Հոգու գինին լցնում և տալիս է ում կամենա և այն չափով, որ ինքն է կամենում» (Սբ Ալբերտ Մեծ):

«Մարիամը գանձապահ է, ում գանձը Հիսուս Քրիստոսն է: Հիսո՛ւսն է Մարիամի սեփականությունը, Հիսո՛ւսն է, Ում նա տալիս է» (Սբ Փիթեր Ջուլիան Էյմարդ):

35

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1. Յուրաքանչյուր լեգեոնական մարմին պետք է նվիրատվություն կատարի հաջորդ առավել բարձր խորհրդին: Ենթարկվելով այս և հետևյալ դրույթներին՝ յուրաքանչյուր լեգեոնական մարմին ամբողջական վերահսկողություն ունի իր սեփական ֆինանսական միջոցների վրա և ունի միայն իրեն վերապահված պատասխանատվություն իր պարտքերի համար:

2. Մարմինները չպետք է սահմանափակեն իրենց նվիրատվությունները տոկոսներով կամ նվազագույնով: Խորհուրդ ենք տալիս, որ պրեզիդիումի կարիքները հոգալուց հետո ավելացած բոլոր ֆինանսական միջոցներն ուղարկվեն Կուրիային Լեգեոնի ընդհանուր նպատակների համար: Այս և մյուս այլ հարցերում պրեզիդիումի հարաբերությունը Կուրիայի նկատմամբ պետք է նման լինի զավակի և մոր փոխհարաբերություններին, ընդ որում՝ մայրը պաշտպանում է իր զավակի շահերը, որն իր հերթին ջանում է ամեն կերպ օգնել մորը մայրական հոգատարությունը դյուրացնելու համար:

Շատ հաճախ պրեզիդիումները բավականաչափ ձևով չեն գնահատում այն փաստը, որ Լեգեոնի ընդհանուր ղեկավարումը կախված է իրենց նվիրատվություններից: Պարզվում է, որ նրանք օգնում են միայն Կուրիայի նվազագույն կարիքների բավարարմանը և նույնիսկ երբեմն դա են ձախողում: Որպես հետևանք՝ այդպիսի Կուրիաները չեն կարողանում օգնել առավել բարձր խորհուրդներին՝ տանելու իրենց ծանր բեռը՝ ընդլայնելու Լեգեոնը, հիմնելու և այցելելու մասնաճյուղեր, և այլ ընթացիկ ծախսերում: Սա նշանակում է, որ Լեգեոնի մի կենսական գործառույթ հաշվվում է, որը մի ցավալի բան է՝ որպես պատճառ ունենալով պարզ անմտությունը:

3. Նոր տեսակի ծախսերի մասին բոլոր առաջարկները պետք է ուղղվեն Կուրիային, որպեսզի Կուրիան որոշի, թե արդյոք կա՞ մի բան, որը կարող է ունենալ սխալ արձագանքներ:

4. Կուրիան կարող է տալ դրամաշնորհներ պրեզիդիումին, բայց չպետք է ֆինանսական պատասխանատվություն կրի այդ պրեզիդիումի կողմից կատարված որևէ աշխատանքի համար: Այդ պատասխանատվությունը միայն պրեզիդիումի վրա է: Այս հրահանգի անհրաժեշտությունն ակնհայտ է: Առանց դրա՝ որևէ խումբ, որը ղեկավարում է մի Ակումբ, Ապաստարան, կամ այլ աշխատանք, հաստատված լինելով որևէ պրեզիդիումի կողմից, կարող է այլ

պրեզիդիումներին դարձնել դրամ հավաքող գործակալություններ իր համար:

Սրանից պետք է հետևություն անել, որ ոչ մի պրեզիդիում չի կարող պահանջել, այլ կարող է միայն խնդրել որևէ այլ պրեզիդիումի կամ Կուրիայի՝ օգնել հավաքելու ֆինանսական միջոցներ:

5. Ֆինանսական միջոցների որևէ այլ տեսակի ուղղորդում, քան միայն պրեզիդիումի կողմից՝ իր հատուկ աշխատանքին, կամ հակառակը, պետք է լինի Կուրիայի արտոնության և որոշման տիրույթում:

6. Եթե պրեզիդիումը կամ Լեգեոնի որևէ այլ խորհուրդ դադարում է գոյություն ունենալ կամ գործել որպես Լեգեոնի մարմին, ապա այդ մարմնի ֆինանսական միջոցները և սեփականությունը փոխանցվում է հաջորդ առավել բարձր կառավարող մարմնին:

7. Հոգևոր առաջնորդը չի կարող ունենալ անձնական ֆինանսական պատասխանատվություն այն պարտքերի համար, որոնք ինքը չի առաջարկել վերցնել:

8. Գանձապահի գիրքը պետք է ստուգվի ամեն տարի: Առաջարկում ենք, որ պրեզիդիումի կամ խորհրդի (ըստ պարագայի) երկու անդամներ (ոչ գանձապահը) նշանակվեն այդ ստուգման պարտականությունը կատարելու համար:

9. Հնարավոր չէ Տիրամոր տնային տնտեսությունը վարելու հետ համադրել վատնողականության գաղափարը: Ուրեմն, հարկ չկա ասելու, որ յուրաքանչյուր լեգեոնական մարմին պետք է իր սեփականությունը և ֆինանսական միջոցները կառավարի զգուշությամբ և տնտեսմամբ:

«Ամբողջ մարդկությունը մեկ ամբողջություն է՝ մի մարմին, որում յուրաքանչյուր անդամ ստանում է և պարտավոր է նաև տալ: Կյանքը պետք է ապրվի և շրջանառվի: Դա պետք է անեն բոլորը, նա, ով կանգնեցնի կյանքը, կկորցնի այն: Նա, ով համաձայն է կորցնել իր կյանքը, գտնում է այն: Յուրաքանչյուր հոգի, եթե ուզում է ապրել, պետք է ինքն իրեն հեղի դիմացինի հոգու մեջ: Աստծու յուրաքանչյուր պարգև մի ուժ է, որը պետք է փոխանցվի առաջ, որպեսզի պահպանվի և բազմապատկվի» (Գրաթրի, «Մարիամի ամիսը»):

36

ՊՐԵԶԻԴԻՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ՀԱՏՈՒԿ ԱՆԴՐԱԴԱՐՁ

1. ԿՐՏՍԵՐ ՊՐԵԶԻԴԻՈՒՄՆԵՐԸ

1. Տասնութ տարեկանը չլրացած անձանց համար պրեզիդիումներ կարող են հիմնվել Կուրիայի հավանությամբ և կարող են ենթակա լինել որևէ հատուկ պայմանների՝ ըստ անհրաժեշտության: Տե՛ս Գլուխ 14, պարագրաֆ 22:

2. Լեգեոնի մասին սովորելու միակ իսկական ճանապարհը Լեգեոնի համակարգի մեջ աշխատելն է: Երիտասարդներին հաճախ դասախոսություններ են տալիս՝ խրախուսելով առաքելություն սկսել աշխարհում, բայց այդպիսի դասախոսությունները, որքան էլ գերազանց լինեն, պարզապես չորացած ոսկորներ են՝ գործնական կյանքի կենդանի մարմնի համեմատ: Ավելին, առանց որոշակի գործնական պատրաստության՝ առաքելական գործ սկսելու մտադրությունը կամ ցանկությունը քիչ արժեք ունի: Փորձի պակաս ունեցող անձը հեշտությամբ վախենում է դժվարություններից, կամ եթե առաքելությունը սկսում են սեփական պատկերացումների համաձայն, գրեթե միշտ ընկնում են ճահճի մեջ:

3. Էական պայման է, որ կրտսեր պրեզիդիումի առնվազն նախագահը պետք է լինի չափահաս անձ: Ցանկալի է, որ ևս մեկ չափահաս սպա լինի, որպեսզի փոխարինի նախագահին, եթե նա բացակայի, ինչպես նաև պրեզիդիումն ընդլայնելու հնարավորության համար: Եթե այդ չափահաս լեգեոնականները նաև մնում են չափահասների պրեզիդիումի անդամներ, ապա կրտսեր պրեզիդիումի համար սպաներ լինելը նրանց համար համարվում է աշխատանքային պարտականություն: Բայց եթե նրանք միայն կրտսեր պրեզիդիումի անդամներ են, ապա այդ պրեզիդիումի համար պետք է կատարեն էական ակտիվ աշխատանք՝

իրենց չափահաս կարողություններին համապատասխան: Այս սպաները, եթե առհասարակ հնարավոր է, պետք է լինեն փորձառու լեգեոնականներ, որոնք գերազանցորեն հասկանում են Լեգեոնի համակարգը, կամ այլապես համապատասխանում են կրտսեր լեգեոնականների համար կատարելու այն նպատակը, որը Լեգեոնը նկատի է ունեցել այդ կրտսեր պրեզիդիումը հաստատելիս: Այդ նպատակը, նախ և առաջ, որոշակի ծավալով օգտակար աշխատանքի կատարումը չէ, այլ անդամների պատրաստությունն ու հոգևոր մակարդակի բարձրացումը, և նրանց պատրաստելը, որ դպրոցն ավարտելուն պես մտնեն չափահաս լեգեոնականների շարքը:

4. Հասկանալի է, որ քարոզը (Allocutio) պետք է կրկնակի կարևորություն ունենա կրտսեր պրեզիդիումի մեջ, որովհետև կրտսեր լեգեոնականներից շատերը անկարող են ինքնուրույն ընթերցմամբ յուրացնել ձեռնարկի բովանդակությունը: Հետևաբար, հոգևոր առաջնորդը (կամ նրա բացակայության դեպքում՝ նախագահը) պետք է յուրաքանչյուր քարոզը հիմնեն ձեռնարկի վրա: Պետք է ընթերցել մի փոքրիկ հատված և ապա բացատրել այնպիսի մանրամասն և պարզ ձևով, որպեսզի համոզված լինի, որ յուրաքանչյուր անդամ ամբողջովին հասկացել է ընթերցված հատվածը: Լեգեոնի ձեռնարկն այդ ձևով պետք է մանրամասն ուսումնասիրվի շաբաթ առ շաբաթ՝ մինչև վերջ, ապա նորից անդրադարձ կատարվի: Բայց իրականում, կրտսեր լեգեոնականի անդամակցության շրջանն այնքան արագ է ավարտվում, որ, հավանական է, նույն լեգեոնականների համար ձեռնարկը երկրորդ անգամ ընթերցելու հնարավորություն չլինի: Յուրաքանչյուր վատ արտասանված քարոզ, ըստ այդմ, մի արհամարհված հնարավորություն է, մի կորուստ, որը բարիք չի բերում:

5. Եթե կարելի է ձեռնարկը համակարգված ձևով ուսումնասիրել 10-րդ հավելվածում («Հավատքի ուսումնասիրությունը») առաջարկված մեթոդով, ապա դա կլինի մի շատ օգտակար պատրաստություն՝ առանց այն զգացողության, թե դա «պարզապես մի դպրոցական հանձնարարություն է»: Դա կլինի մի անգին ուսումնառություն չափահաս Լեգեոնի այդ ապագա սյուների համար:

6. Քանի որ չափահասների պրեզիդիումների որդեգրած աշխատանքները, հավանաբար, հարմար չեն լինի այս տեսակի պրեզիդիումների համար, անհրաժեշտ կլինի ցուցաբերել ստեղծագործ մոտեցում՝ ամեն շաբաթ յուրաքանչյուր անդամի ապահովելու համար բովանդակային ակտիվ աշխատանքով՝ համարժեք յուրաքանչյուրի ունակություններին: Շատ կրտսեր լեգեոնականներ կարող են կատարել այն աշխատանքները, որոնք ընդունված է համարել աշխատանքներ չափահասների համար: Եվ իրականում, ոչ մի կրտսեր լեգեոնականի, որի տասնվեց տարեկանը դեռ չի լրացել, չի կարելի հանձնարարել մի աշխատանք, որն ընդունելի չէ չափահասների համար: Պրեզիդիումի աշխատանքները պետք է լինեն բազմակողմանի: Զանազան աշխատանքները կրթում են տարբեր ձևերով: Քանի որ մեկ անդամը չի կարող անել բոլոր տեսակի աշխատանքները, համակողմանի պատրաստություն տալու մյուս լավագույն միջոցն այն է, որ տեսնեն, թե ինչպես են ուրիշները կատարում դրանք: Ավելին, պրեզիդիումի գործերն այդպիսով դառնում են ավելի հետաքրքիր:

7. Կրտսեր անդամներից կարելի է ակնկալել շաբաթական առնվազն մեկ ժամ տևողությամբ աշխատանք, որն ավագ լեգեոնականների պարտականության կեսն է:

8. Աշխատանքի համար կարող ենք առաջարկել հետևյալը.

ա. Հրաշագործ մեդալիոնների բաժանում՝ հետևյալ ծրագրով. յուրաքանչյուր հանդիպման ժամանակ ամեն մի լեգեոնականին տրվում է մեկ կամ երկու մեդալիոն (մի սահմանված թիվ): Նրանք պետք է դա համարեն զինամթերքի չափաբաժին, որը նրանք՝ որպես Մարիամի զինվորներ, պետք է օգտագործեն մեծ արդյունավետությամբ՝ դրանք բաժանելով, եթե կարելի է, ոչ կաթողիկէներին կամ հոգևոր պարտականությունները մոռացած կաթողիկէներին: Այս գաղափարը խթանում է երևակայությունը և մղում է զոհաբերություններ կատարելուն: Կրտսեր լեգեոնականներին պետք է ուղղություն ցույց տալ առ այն, թե ինչպես պետք է պատասխանեն հավանական

հարցերին և ճիշտ օգուտ քաղեն առաջին հաղթանակներից:

բ. Օժանդակ անդամներին շահելը: Սա ենթադրում է նոր անդամակցող օժանդակներին ուղղորդելը, որպեսզի կատարեն աղոթքները, նաև նրանց պարբերաբար այցելություններ տալը՝ նրանց հավատարմության մեջ համոզվելու համար:

գ. Ջանալ ամեն շաբաթ առնվազն մեկ հավելյալ անձի օգնել, որպեսզի ամեն օր հաճախի Սուրբ Պատարագի կամ աղոթի մի որևէ ջերմեռանդական աղոթք, կամ միանալ մի հոգևոր միության, աղոթքի առաքելության կամ կաթողիկէ հասարակության:

դ. Մանկահասակ երեխաներին բերել Սուրբ Պատարագի, և որպեսզի ստանան Սուրբ Խորհուրդները:

ե. Սպասավորել Սուրբ Պատարագի ժամանակ:

զ. Սովորեցնել կրոնի դասեր կամ երեխաներին հավաքել կրոնի դասերի համար:

է. Այցելել հիվանդանոցում, այլ հաստատություններում կամ իրենց տներում գտնվող երեխաների:

ը. Այցելություններ հիվանդներին և կույրերին՝ նրանց մատուցելով ամեն տեսակ անհրաժեշտ ծառայություններ:

9. Մեծապես խրախուսում ենք, որ յուրաքանչյուր կրտսեր պրեզիդիում ունենա առնվազն երկու անդամ այդ ցուցակի վերջին երեք աշխատանքների համար, այսինքն՝ զ, է, ը կետերի համար: Եթե այդ աշխատանքները պատշաճ ձևով կատարվեն, ապա դա մի գերազանց պատրաստություն կլինի այդ աշխատանքներում ներառված կրտսեր լեգեոնականների համար, և այդպիսով կսահմանվեն պատշաճ չափանիշներ պրեզիդիումի այլ աշխատանքների համար:

10. Կրտսեր լեգեոնականի համար թույլատրելի է, որ իր աշխատանքը կատարի մի չափահաս լեգեոնականի ընկերակցությամբ:

11. Ուսումնական հաստատությունների մեջ գործող պրեզիդիումների պարագայում ցանկալի է անդամներին ապահովել այդ հաստատություններից դուրս կատարվող գործունյա կանոնավոր աշխատանքով: Բայց վերադասները,

հիշելով իրենց պատասխանատվությունը, կվախենան, թե այդ արտոնությունը կարող է շահագործվել, և կարող են երևակայել այլ վտանգներ: Այս մտավախություններին պատասխանում ենք այսպես. ա. իսկ եթե այդ լեգեոնականները լինեին հաստատությունից դուրս գործող կրտսեր պրեզիդիումի անդամներ, չէ՞ որ նրանք կանեին իրենց կանոնավոր աշխատանքը, բ. ապագան կարելի է ապահովել միայն պատրաստությամբ: Եթե հիմա ազատություն չտրվի, հնարավոր չի լինի այլևս պատրաստել անսահմանափակ ազատության ժամանակ: Այդ արտաքին աշխատանքը՝ կրկնակի ապահովագրված ուսումնական հաստատության և Լեգեոնի կողմից, կարող է դառնալ մի իդեալական պատրաստություն:

12. Ուսումնական հաստատության մեջ գործող պրեզիդիումի պարագայում, եթե աշակերտներն արձակուրդներին գնում են տուն, և հետևաբար, անհնարին է այդ ընթացքում ժողովներ գումարել, ապա աշակերտները կարող են աշխատել իրենց հայրենի քաղաքներում գործող պրեզիդիումներում:

13. Անդամները պետք է լավ հասկանան, որ իրենց սրբությունը ոչ միայն Լեգեոնի հիմնական խնդիրն է, այլև Լեգեոնի աշխատանքի հիմնական արդյունքն է: Հետևաբար, նրանց պետք է քաջալերել, որպեսզի աղոթեն և զոհողություններ կատարեն պրեզիդիումի նպատակների համար, բայց սա չպետք է հանձնարարել լեգեոնականներին որպես աշխատանք և այդ մասին չպետք է հաշվետվություն պահանջել ժողովների ժամանակ: Հատկապես ընդգծում ենք, որ այդ հոգևոր գործողությունները չեն կարող փոխարինել ակտիվ աշխատանքին: Եթե դրանք կատարվում են, ապա պետք է լինեն հավելում ակտիվ աշխատանքին:

14. Անդամները պետք է հատուկ խնամքով պատրաստեն իրենց զեկույցները, և նրանց սպաները պետք է մեծ ջանադրությամբ սովորեցնեն նրանց, թե ինչպես պետք է պատրաստել զեկույցները: Նրանց աշխատանքի բնույթը սովորաբար չի տրամադրում այնպիսի բովանդակություն, որպեսզի զեկույցները լինեն հետաքրքիր և մանրամասն, հետևաբար, պետք է հատկապես հոգ տանել, որպեսզի

կատարված աշխատանքի մասին պատմվի հետաքրքիր և տարբերվող ձևով:

15. Կրտսեր լեգեոնականների մոտ նույնության զգացումը չափահասների Լեգեոնի հետ, որը մարտնչում է Տիրոջ ճակատամարտերում՝ բարդ և հաճախ վտանգավոր հանգամանքներում և ունենալով բազում մեծ նախաձեռնություններ, կենդանի շունչ կհաղորդի իրենց առավել պակաս նախաձեռնողական աշխատանքին և կբոցավառի այդ կրտսեր լեգեոնականների երևակայությունը (սա մի գործընթաց է, որին Լեգեոնի համակարգում նպաստում է ամեն ինչ): Սա կպաշտպանի նրանց, և նրանց միջոցով՝ շատերին, այն տրամադրվածությունից, որը կրոնը համարում է պարզապես մի պարտադրված առօրյա: Եթե այս վերջին գաղափարն արմատավորվի այդ երիտասարդական տպավորվող ժամանակաշրջանում, ապա մի այնպիսի վնաս կհասցվի, որն այլևս հնարավոր չի լինի հատուցել որևէ տեսակի գիտուն հմտությամբ:

16. Փորձաշրջանի կանոնը չի կիրառվում կրտսեր անդամների նկատմամբ: Լեգեոնական խոստումը ևս նրանց համար չէ, և ոչ էլ՝ չափահասների Կուրիային մասնակցելը: Բայց բոլոր մյուս մասերով ողջ աղոթքները, համակարգը և ժողովների գումարումը՝ ներառյալ գաղտնի նվիրատվությունների հավաքումը, պետք է բծախնդրորեն կատարվեն, ճիշտ ինչպես չափահասների պրեզիդիումների պարագայում է:

Կրտսեր անդամակցությունից չափահաս անդամակցության տեղափոխվելիս պետք է պահել սովորական փորձաշրջանը:

17. Եթե կրտսեր պրեզիդիումի մեջ ծառայում է չափահաս լեգեոնական, որը դեռևս չի տվել իր խոստումը, ապա պետք է խոստումը տա կրտսեր պրեզիդիումի մեջ: Խոստման արարողակարգի շուրջ մտածելը խորապես կտպավորի կրտսերներին և պատճառ կհանդիսանա, որպեսզի նրանք սպասեն այն օրվան, երբ նրանք ինքնուրույն կկատարելագործեն իրենց անդամակցությունը՝ ընդունելով Խոստումը:

18. Հաճախ առաջարկվել է, որ աղոթքները պետք է այնպես հարմարեցվեն, որպեսզի խրախուսվի երեխաների

անդամակցությունը: Այդպիսի առաջարկների անընդունելիությունը պետք է լինի ակնհայտ այս Գլուխը կարդալիս, որը բացատրում է, թե կրտսեր անդամակցությունը պետք է նման լինի չափահասների անդամակցությանը: Սա չի նշանակում, թե «կրտսեր»՝ նշանակում է «անկարևոր»: Կրտսեր անդամների առջև պետք է դնել գործողությունների և ջերմեռանդության բարձագույն իդեալներ: Նրանցից ակնկալվում է, որ առաջնորդության դերակատարություն ունենան տարեկիցների համար: Այս չափանիշը չի կարող հասանելի լինել որևէ երեխայի համար, որը որոշակի ուղղորդումից հետո էլ չի կարողանում հասկանալով աղոթել Լեգեոնի բոլոր աղոթքները:

19. Նաև առաջարկում են, որպեսզի կրտսերների օգտագործման համար տրամադրվի առավել պարզեցված մի ձեռնարկ: Այս մասին քննարկվում է 10-րդ բաժնի 33-րդ Գլխում՝ «լեգեոնականների հիմնարար պարտականությունները»:

20. Ծնողները և բոլոր պատասխանատուները պետք է ամբողջական ձևով համագործակցեն լեգեոնական ծրագրի հետ, որից այնքա՛ն շատ բան է կախված: Այդ կրտսեր լեգեոնականները ձևավորվում են՝ դառնալու համար անձինք, որոնց Սբ Լուի-Մարի դը Մոնֆորն անվանում է «Հիսուսի և Մարիամի քաջարի զինվորներ, որոնք պայքարում են աշխարհի, չարի և ապականված բնության դեմ գալիք աննախադեպ սպառնալից օրերում»: Իր գաղափարներով և կառուցվածքով պարզ՝ ինչպես ճախարակը, լծակը կամ այլ սարքավորում՝ նախատեսված ուժը մեծացնելու համար, Լեգեոնը ունակ է ակնառու դարձնել կաթողիկէ վարդապետության ամբողջ բովանդակությունը և այն վերածել մի շարժիչ ուժի՝ յուրաքանչյուր կաթողիկէ նպատակի համար: Բայց այդ զորությունը նաև դուրս է հորդում անմիջապես: Այն լցնում է դպրոցում անցկացված ժամանակը, խաղի ժամանակը, տունը և որևէ այլ ժամանակահատված՝ սուրբ, գործնական իդեալիզմով: Այն իր անդամներին հաղորդում է աշխարհի մասին մի նոր տեսլական, որը հավասարազոր է նրան, որ աշխարհը նրանց համար դառնում է տարբեր. նրանք որդեգրում են այլ աշխարհայացք՝

ա. Եկեղեցու վերաբերյալ, երբ հասկանում են, որ իրենք Եկեղեցու զինվորներն են՝ վճռորոշ դերակատարությամբ՝ Եկեղեցու մղած պատերազմում և այն ընդլայնելու պատասխանատվությամբ:

բ. Ամենօրյա կենցաղավարության և խնդիրների վերաբերյալ: Ինչպես մի փոքրիկ լույսի շող լուսավորում է սենյակը, այդպես էլ Լեգեոնի փոքրիկ հանձնարարությունը իմաստավորում է ամբողջ շաբաթվա ընթացքը: Այն, ինչ անդամները սովորում են և գործադրում պրեզիդիումի մեջ, նրանք կապրեն իրենց առօրյա կյանքում:

գ. Իրենց մերձավորների մասին, որոնց մեջ, ինչպես սովորել են, պետք է տեսնեն և ծառայեն Քրիստոսին:

դ. Իրենց տան մասին, որը, ինչպես սովորել են, պետք է պարուրված լինի Նազարեթի մթնոլորտով:

ե. Տանը օգնելու մասին (կամ դպրոցում, եթե պրեզիդիումը կրթական հաստատության մեջ է)՝ Լեգեոնի ոգով, այսինքն՝ Նազարեթում ապրած Մարիամի՛ ոգով՝ ձգտելով աշխատել՝ խուսափելու փոխարեն, ընտրելով ամենատհաճ հանձնարարությունները, սեփական սիրտը ներդնելով նաև փոքրագույն բաների մեջ, մշտապես լինելով քաղցրության և հոգատարության մարմնավորում, մշտապես աշխատելով Հիսուսի համար և պահելով Նրա ներկայության զգացումը:

զ. Դպրոցի մասին, որովհետև նրանք որոշակի չափով յուրացրած կլինեն լեգեոնական իդեալները և, որպես արդյունք, կսկսեն դպրոցին, ուսուցիչներին, գրքերին և ուսմանը նայել տարբեր տեսանկյունից: Համապատասխան ձևով, նրանք դպրոցից կստանան բաներ, որոնք ուրիշները չեն կարող ստանալ: Այնպես որ, նույնիսկ եթե Լեգեոնը խլում է ուսման համար հատկացված ժամանակը (ինչը հիմնական առարկությունն է), համապարփակ արդյունքը կլինի անհամեմատ ավելի մեծ ձեռքբերում:

է. «Պարտականության» և «կարգուկանոնի» մասին. այս երկու ամենակարևոր բաները, որոնք այդքա՛ն չարագուշակ են դեռահասների համար, որովհետև

հասկացված չեն նրանց կողմից, դառնում են ընկալելի և գեղեցիկ, երբ կապվում են երկու այլ բառերի՝ «Մարիամի» և «Լեգեոնի» հետ:

ը. Աղոթքի մասին, երբ նրանք հասկանան, որ աղոթելը պարզապես սովորույթի ուժով պարտադրված հանձնարարություն չէ, այլ զորության աղբյուր, աջակցություն իրենց աշխատանքի համար, նաև իրենց արժեքավոր նպաստն է Լեգեոնի գանձարանին և, հետևաբար, Եկեղեցուն:

21. Գուցե չափազանցված չի լինի ասել, որ եթե կրտսեր պրեզիդիումը պատշաճ ձևով աշխատի, ապա այն կունենա կրթական հնարավոր մեծագույն ազդեցությունները, որոնք կարելի է առհասարակ ակնկալել երիտասարդներից: Դա նրանց մեջ կզարգացնի ամեն տեսակ որակ, որը պատշաճում է քրիստոնեական բնութագրին և կծառայի որպես մի զարգացման վայր, որտեղից դուրս կգան բազմաթիվ սուրբ և վստահելի երիտասարդներ, որոնք կլինեն իրենց ծնողների և ուսուցիչների ուրախությունը և մշտական անդամներ՝ Եկեղեցու համար:

22. Բայց այս ամբողջ ծրագիրը, այս բոլոր հույսերը հօդս կցնդեն, եթե պրեզիդիումն իր անդամներին չի ապահովում պատշաճ աշխատանքով կամ արհամարհում է Լեգեոնի կանոնները: Այդ պրեզիդիումը կլինի մի տձև կաղապար: Այդպիսին իր անդամներին և յուրաքանչյուր մեկի տրամադրում է Լեգեոնի դեմ: Հետևաբար, այդպիսի պրեզիդիումը լուծարելը կնշանակի ծառայություն մատուցել Լեգեոնին:

«Երիտասարդներին չպետք է պարզապես համարել Եկեղեցու հովվական մտահոգության առարկա. իրականում երիտասարդներին պետք է և պարտավոր ենք քաջալերել, որպեսզի Եկեղեցու կյանքում լինեն գործնական՝ **որպես ավետարանման առաջնորդներ և հասարակության նորացման մասնակիցներ**: Երիտասարդությունը ժամանակ է՝ հատկապես խանդավառ ձևով **բացահայտելու** «ինքնությունը» և կատարելու «ընտրություն ամբողջ կյանքի համար»: Երիտասարդությունը ժամանակ է **աճման,** որը պետք է զարգանա «իմաստությամբ, տարիքով և շնորհով Աստծո և մարդկանց առաջ»» (Ղկ. 2:52) (CL 46):

2. ՃԵՄԱՐԱՆԱԿԱՆ ՊՐԵԶԻԴԻՈՒՄՆԵՐԸ

«Հատկապես կարևոր է պատրաստել ապագա քահանաներին աշխարհականների հետ միասին աշխատելու համար: Ժողովն ասում է. «Նրանք պետք է պատրաստակամ լինեն լսելու աշխարհականներին, եղբայրական ուշադրությամբ մոտենալու նրանց ցանկություններին և ողջունեն նրանց փորձառությունն և հմտությունը մարդկային գործունեության տարբեր ոլորտներում...»: Վերջին Սինոդը ևս ընդգծել է աշխարհականների հանդեպ հովվական խնամքի կարևորությունը. «Ուսանողը նաև պետք է դառնա ընդունակ՝ աշխարհական հավատացյալներին, հատկապես երիտասարդներին, առաջարկելու և ծանոթացնելու տարբեր կոչումների հետ... Ամենակարևորը, անհրաժեշտ է, որ նա կարողանա աշխարհականներին ուսուցանել և աջակցել նրանց կոչման մեջ՝ ներկա լինելու աշխարհում և փոխակերպելու աշխարհը Ավետարանի լույսով՝ հասկանալով իրենց առջև դրված այդ հանձնարարությունը և հարգելով այն» (PDV 59):

Ակնհայտ է, որ Լեգեոնի նման արդյունավետ և լայնորեն տարածված կազմակերպության մասին գիտելիքները արժեքավոր ձեռքբերում կլինեն ապագա քահանաների և կրոնավորների համար: Լեգեոնի մասին ակադեմիական գիտելիքը, սակայն, շատ թույլ ձևով է միայն փոխարինում գործնական անդամակցությանը: Հետևաբար, ճեմարանական համար պրեզիդիումների հիմնադրումը մեծ կարևորություն ունի: Այն դեպքերում, երբ ճեմարանների կամ այլ հաստատությունների ներսում պրեզիդիումների հիմնումը հնարավոր չէ, ուսանողները մեծապես կշահեն՝ անդամագրվելով հաստատություններից դուրս գործող պրեզիդիումներին: Ե՛վ հաստատությունների ներսում գործող, և՛ դրանցից դուրս գործող պրեզիդիումների անդամները պետք է ամբողջովին առաջնորդվեն Լեգեոնի տեսությամբ. գործնական աշխատանքով և առաքելության ամբողջ փիլիսոփայությամբ: Երբ նրանք վերջապես կանցնեն իրենց աշխատանքների կատարմանը, նրանք լավ ըմբռնած կլինեն, թե ինչպես պետք է գործեն Լեգեոնը և այլ առաքելագործ խմբեր:

Հաստատությունների ներսում գործող պրեզիդիումների վերաբերյալ պետք է նկատի ունենալ հետևյալը.

ա. Էական է, որ ամենշաբաթյա ժողովների համար հատկացվի բավական ժամանակ: Դժվար կլինի ժողով անել մեկ ժամից քիչ, և պետք է ամեն ջանք գործադրվի, որպեսզի մի քիչ ավելի ժամանակ հատկացվի: Ժողովի օրակարգին պետք է հետևել ճիշտ այնպես, ինչպես գրված է այս ձեռնարկում:

բ. Մեծ ուշադրություն պետք է դարձվի յուրաքանչյուր անդամին ակտիվ աշխատանք տրամադրելուն: Առանց էական աշխատանք կատարելու՝ ոչ մի պրեզիդիում չի կարող գոյություն ունենալ: Նկատի ունենալով, որ ժամանակը սահմանափակ է, որ ճեմարանական կյանքի պայմաններում գուցե հեշտ չլինի պատշաճ աշխատանք գտնել, և որ հատուկ ուշադրություն է դարձվում ձեռնարկի ուսումնասիրությանը, շաբաթական առնվազն մեկ ժամ պետք է հատկացվի ակտիվ աշխատանքին: Աշխատանքի զանազանության հնարավոր պակասը պետք է փոխհատուցվի հոգու հարստությամբ: Աշխատանքը պետք է կատարել բացարձակ կատարելությամբ և շեշտելով Մարիամի հետ միությունը:

Աշխատանքների ընտրությունը կախված կլինի հաստատության պայմաններից և կանոններից: Ահա՛ որոշ առաջարկություններ՝ կարելի է այցելել տներ, հիվանդանոցներ և այլ հաստատություններ, ուղղորդել նորադարձներին, ուսուցանել կրոնագիտություն, մեծահասակներին և երեխաներին պատրաստել Սուրբ Խորհուրդներին: Շատ կարևոր է, որ ձեռնարկված որևէ աշխատանք կապված լինի վերադասների կողմից անցկացվող հովվական պատրաստության ծրագրերին:

գ. Պրեզիդիումին տրվող զեկույցները չպետք է լինեն կենցաղային խոսքերով: Դրանք պետք է լինեն ակնառու և հետաքրքիր: Այս ուղղությամբ հաջողելը անդամներին կդարձնի վարպետներ զեկուցման արվեստում, և պատրաստված՝ սովորեցնելու այդ արվեստը նրանց,

ում լեգեոնական ճակատագրերն իրե՛նք են առաջնորդելու ապագայում:

դ. Չի կարելի լեգեոնականների համար նշանակել կարգապահական կամ զուտ վերատեսչական պարտականություններ: Այդպիսի աշխատանքը հնարավորություն չի տա դասընկերներին սիրելու լեգեոնականներին (և հետո՝ նաև Լեգեոնն ինքնին):

ե. Անդամակցությունը պետք է լինի ամբողջությամբ կամավոր: Որևէ պարտադրող բան կամ ուսումնական հաստատության ամենօրյա կենցաղին առնչվող բան կարող է քայքայող ազդեցություն ունենալ: Լեգեոնական անդամակցության կամավոր բնույթը շեշտելու համար լավ գաղափար է՝ պրեզիդիումի ժողովներն անցկացնել ազատ ժամանակ:

զ. Պրեզիդիումը պետք է վարել այնպես, որ թե ժողովների և թե գործունեության կազմակերպման ընթացքում չխանգարվեն հաստատության դասացուցակը և կանոնները: Մյուս կողմից էլ, Լեգեոնին ակտիվ անդամակցության պայմանները չպետք է փոփոխվեն, որովհետև դա կվնասի ամբողջ նպատակին: Գործնականում պարզ կդառնա, որ այդպիսի պրեզիդիումի հետևողական աշխատանքը առավել կազնվացնի ուսանողների վերաբերմունքն իրենց կոչման, ուսման և հաստատության կարգուկանոնի նկատմամբ:

37

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այս գլխում ներկայացված են Լեգեոնի աշխատանքային պարտականության կատարման մեթոդները, որոնք, ինչպես ցույց է տալիս ընդհանուր փորձառությունը, հատկապես արդյունավետ են: Սրանք, այնուամենայնիվ, միայն առաջարկներ են, որովհետև հատուկ կարիքները կարող են պահանջել հատուկ աշխատանքներ: Հորդորում ենք, որ

Լեգեոնից հեռու չպահվի արկածախնդիր և բարդ աշխատանքը, որովհետև Լեգեոնը հիանալի կերպով հարմարեցված է այդպիսի աշխատանքին: Չնչին հանձնարարությունները լավ ազդեցություն չեն թողնի լեգեոնականների ոգու վրա:

Որպես սկզբունք, յուրաքանչյուրը պետք է կատարի որոշակի աշխատանք, որը կարելի է անվանել հերոսական: Նույնիսկ երբ ամեն ինչ նոր է սկսվում, հնարավոր է գտնել երկու անդամ, որոնք ձգտում են հերոսական գործեր կատարել, և թող նրանց տրվի այդ հնարավորությունը: Հետո նրանց օրինակը կլինի մի նշաձող, դեպի ուր գրեթե ինքնաբերաբար կձգտեն բարձրանալ նաև մյուս լեգեոնականները: Երբ հիմնական նշաձողն այդ կերպ բարձրացվի, այդ սկզբնական երկու անվեհեր անդամներին պետք է նորից ուղարկել հերոսական գործերի: Այս զարգացող առաջամարտիկների գոյությունը հնարավորություն է ընձեռում շարունակաբար բարձրացնել չափորոշիչները: Որովհետև գերբնական հարթության վրա գոյություն չունեն բնական սահմանափակումներ: Որքան շատ է մարդ նետվում Աստծո մեջ, այնքա՛ն ավելի են ընդլայնվում հորիզոնները, ավելի են մեծանում հնարավորությունները:

Բայց անմիջապես լինում է անհամաձայնություն: Կրոնի համար վտանգների ենթարկվելու գաղափարը անհանգստացնում է շատ մարդկանց: Դրա հետևանքով անընդհատ լսվում են «անհարմար է», «անխոհեմ է» արտահայտությունները: Բայց աշխարհը չի խոսում այդպիսի թույլ ձևով, և Լեգեոնն էլ չպետք է զիջի իր ոգով: Եթե որևէ աշխատանք հարկավոր է կատարել հոգիների փրկության համար, և եթե մի բարձր սանդղակ կենսական կարևորություն ունի քրիստոնեական համայնքի բնութագիրը ձևավորելու համար, ապա զգուշավորությունը պետք է երկրորդական լինի, և արիությունը պետք է գա առաջնաբեմ: Խորհրդածե՛ք կարդինալ Փայի հետևյալ բառերի շուրջ. «Երբ ողջամտությունը լինի ամենուրեք, այն ժամանակ արիություն չի լինի ոչ մի տեղ: Դուք կտեսնեք, որ մենք կմեռնենք ողջամտության պատճառով»:

Թույլ մի՛ տվեք, որ Լեգեոնը մեռնի ողջամտության պատճառով:

1. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ահա՛ մի քանի միջոցներ, թե ինչպես կարող են լեգեոնականներն օգնել, որպեսզի համայնքի իսկական ոգին աճի.

ա. այցելություն մարդկանց տները (տե՛ս այս Գլխի 2-րդ կետը),

բ. իրականացնել ոչ ծիսական աղոթական արարողություններ կիրակի և տոնական պարտավորիչ օրերին՝ այն վայրերում, որտեղ Սուրբ Պատարագ մատուցելու համար քահանաներ չկան,

գ. վարել կրոնուսուցման դասեր,

դ. այցելություն և խնամք հաշմանդամներին, հիվանդներին և ծերերին՝ ներառյալ, եթե անհրաժեշտ է, պայմանավորվելով քահանայի այցելությունը կազմակերպելու համար,

ե. աղոթել Վարդարան ննջեցյալների մոտ հսկումների և հուղարկավորությունների ժամանակ,

զ. զարգացնել կաթողիկէ միությունները և ծխական հասարակությունները՝ ներառյալ եկեղեցական եղբայրությունները և միաբանությունները, որտեղ գոյություն ունեն՝ հավաքագրելով նոր անդամներ և եղած անդամներին խրախուսելով, որ հաստատուն մնան իրենց անդամակցության մեջ,

է. համագործակցություն համայնքի կողմից նախաձեռնված յուրաքանչյուր առաքելական և միսիոներական ձեռնարկի մեջ, և այդպիսով օգնել յուրաքանչյուր մարդկային հոգու ինչ-որ կերպ բերելու համար Եկեղեցու պաշտպանիչ միջավայրի մեջ՝ այդպիսով ապահովելով թե՛ անհատի, թե՛ համայնքի հոգևոր անվտանգությունը:

Կան այլ ծխական աշխատանքներ, որոնք, թեև կարևոր են, բայց բավարար չեն (բացառությամբ հատուկ դեպքերի) չափահաս լեգեոնականների աշխատանքային պարտականության կատարման համար: Այդպիսիք են՝ Խորանի

Հասարակության աշխատանքը, եկեղեցու մաքրությանն և գեղեցկությանը հետևելը, առաջնորդությունը Եկեղեցու խորհրդակատարությունների ժամանակ, Սուրբ Պատարագին ծառայելը և այլն… Այնտեղ, ուր անհրաժեշտություն կա, լեգեոնականները կարող են կազմակերպել կամ առաջնորդել այդ ծառայությունների կատարումը, որն իրենց համար կլինի օրհնության աղբյուր: Լեգեոնականները դրանից հետո կարող են առավել բարդ և ուղղակի ձևով մոտենալ մարդկային հոգիներին:

«Ես փափագում եմ Շնորհների Մոր նման աշխատել Աստծո համար: Փափագում եմ իմ ջանքերով և զոհողություններով համագործակցել իմ և ամբողջ աշխարհի փրկության համար, ինչպես Սուրբ Գիրքն է ասում Մակաբայեցիների մասին, որոնք իրենց քաջության ամբողջ խանդավառությամբ «չէին մտածում միայն իրենք իրենց փրկելու մասին, այլ ձեռնամուխ եղան փրկելու իրենց եղբայներին՝ հնարավորինս մեծ թվով» (Գրաթրի, «Մարիամի ամիսը»):

2. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԴԿԱՆՑ ՏՆԵՐԸ

Տների այցելությունը, թեև դա չէր ամենաառաջին առաքելությունը, ավանդաբար եղել է Լեգեոնի նախընտրած աշխատանքը, հատուկ զբաղվածությունն ամենուրեք, և մայրուղին՝ մեծագույն բարիքի հասնելու համար: Տների այցելությունը Լեգեոնի բնութագրերից մեկն է:

Այդ այցելություններով հնարավոր է լինում անձնական կապ հաստատել մեծ թվով մարդկանց հետ, և այդպիսով կարող է տեսանելի դառնալ Եկեղեցու հոգատարությունը յուրաքանչյուր անձի և ընտանիքի նկատմամբ: «Եկեղեցու հովվական խնամքը չպետք է սահմանափակվի միայն այն ընտանիքներով, որոնք մոտ են ապրում, այն պետք է ընդլայնի իր հորիզոնները՝ Քրիստոսի Սուրբ Սրտի հետ ներդաշնակ ձևով, և պետք է նույնիսկ ավելի ուժգին լինի ընդհանրապես բոլոր ընտանիքների և հատկապես այն ընտանիքների հանդեպ, որոնք ապրում են դժվարին կամ ոչ կանոնավոր պայմաններում: Նրանց բոլորի համար Եկեղեցին պետք է ունենա ճշմարտության, բարության,

հասկացողության, հույսի մի խոսք և խոր սրտակցություն նրանց երբեմն ողբերգական դժվարությունների մեջ: Նրանց բոլորին Եկեղեցին պետք է առաջարկի իր անշահախնդիր օգնությունը, որպեսզի նրանք առավել մոտենան ընտանիքի այն մոդելին, որն Արարիչը նախատեսել է «ի սկզբանե», և որը Քրիստոսը նորացրել է Իր փրկարար շնորհով» (FC 65):

Պրեզիդիումը պետք է մշակի տներ այցելելու իր մոտեցումը: Անշուշտ, լեգեոնականները պետք է ներկայանան և բացատրեն, թե ինչու են եկել: Տներ այցելել կարելի է, օրինակ, տներում Հիսուսի Սուրբ Սրտի Գահակալությունը հաստատելու, համայնքի մարդահամար կատարելու, կաթողիկէ գրականություն բաժանելու նպատակներով:

Տնայցերի միջոցով լեգեոնական առաքելությունը կարելի է կատարել ո՛չ միայն քրիստոնեական կյանքով ապրող կաթողիկէների համար. կարելի է հարաբերություն հաստատել նաև ոչ կաթողիկէների և ոչ քրիստոնյաների հետ, և այն կաթողիկէների հետ, որոնք խորթացել են Եկեղեցուց: Պետք է նաև ուշադրություն դարձնել նրանց, ովքեր ապրում են ամուսնական ոչ կանոնավոր հարաբերություններում, ինչպես ասվեց վերևում, նրանց, ովքեր առաջնորդության կարիք ունեն, միայնակներին, հիվանդներին: Յուրաքանչյուր տուն պետք է դիտվի ծառայություն մատուցելու անհրաժեշտության տեսանկյունից:

Լեգեոնական այցելությունը պետք է դրոշմված լինի խոնարհությամբ և պարզությամբ: Մարդիկ գուցե սխալ պատկերացումներ ունեն այցելությունների վերաբերյալ՝ ակնկալելով, թե իրենց համար ամբարտավան ձևով դասախոսություններ են կարդալու: Ընդհակառակը, լեգեոնականների նպատակը պետք է լինի, նախ և առաջ, մարդկանց լսելը, ոչ թե խոսելը: Երբ համբերատար և հարգալից ձևով լսեն, նրանք կվաստակեն նաև իրավունք խոսելու համար:

«Անհնարին է ուրանալ ընտանիքի ավետարանի քարոզության դերակատարությունն աշխարհականների ավետարանման առաքելության մեջ:

Եկեղեցու պատմության զանազան պահերին և նաև Վատիկանի Երկրորդ Ժողովի ժամանակ ընտանիքը ճշգրիտ կերպով վաստակել է «տնային Եկեղեցի» անունը: Սա նշանակում է, թե

յուրաքանչյուր քրիստոնյա ընտանիքում պետք է լինեն ամբողջ Եկեղեցու զանազան հատկանիշները: Ավելին, ընտանիքը պետք է լինի մի վայր, որտեղ փոխանցվում է Ավետարանը, և որտեղից ճառագում է Ավետարանը:

Այն ընտանիքում, որը գիտակցում է այս առաքելությունը, բոլոր անդամները քարոզում են Ավետարանը և ընդունում Ավետարանի քարոզությունը: Ծնողները ոչ միայն Ավետարանը հաղորդում են իրենց զավակներին, այլ նաև իրենք ևս կարող են սեփական զավակներից ընդունել Ավետարանը, երբ նրանք իրենց կյանքը խորապես ապրում են Ավետարանի համաձայն:

Եվ այդպիսի ընտանիքը դառնում է Ավետարանի փոխանցող շատ այլ ընտանիքների և իր շրջապատի մարդկանց համար, որոնց մեջ ապրում է: Խառն ամուսնությամբ ընտանիքները ևս ունեն Քրիստոսին իրենց երեխաներին հռչակելու պարտականությունը, որը բխում է ընդհանուր Մկրտությունից. ավելին, նրանք ունեն իրենց առջև դրված ևս մեկ խնդիր՝ կառուցելու միություն» (EN 71):

3. ՍՈՒՐԲ ՍՐՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՏՆԵՐՈՒՄ

Թող հայտնի լինի, որ տներում Սուրբ Սրտի Գահակալության հաստատման հանդեպ ջերմեռանդության տարածումը հատկապես բարենպաստ է ընտանիքների հետ ծանոթանալու և մտերմություն զարգացնելու համար:

Այս մոտեցումը բնութագրող իդեալները և մեթոդները մանրամասնորեն ուսումնասիրված են Գլուխ 39-ում՝ «Լեգեոնի առաքելության արմատական կետերը»: Այդտեղ բավարար չափով ընդգծված է, որ հնարավորինս չպետք է շրջանցել ո՛չ մի տուն, և որ յուրաքանչյուր տան մեջ հարկավոր է սիրով և հաստատակամությամբ ջանալ, որպեսզի յուրաքանչյուր անձ՝ երիտասարդ կամ ծեր՝ առանց բացառության, գոնե մեկ քայլ առաջ գնա հոգևոր կյանքում:

Նրանք, ովքեր կատարում են այս աշխատանքը, կարող են յուրացնել Սուրբ Սրտի Տասներկու Խոստումները: Նույնիսկ տասներորդը՝ «Ես քահանաներին կտամ անգամ ամենակոշտացած սրտերին դիպչելու շնորհը» ինչ-որ չափով վերաբերում է նրանց, ովքեր գնում են որպես քահանայի ներկայացուցիչներ: Հատկապես ոգևորված այս մտքով՝

լեգեոնականները պետք է գնան կատարյալ վստահությամբ՝ առ այն, որ կկարողանան մարտնչել նույնիսկ այն պարագաներում, որոնք համարվել են «անհույս»:

Սուրբ Սրտի հանդեպ ջերմեռանդության տարածումը այցելությունների ժամանակ ամենաարդյունավետն է բոլոր սկզբնական ծանոթության միջոցների մեջ՝ ի սկզբանե դիպչելով պարզ բարեպաշտության ճիշտ նոտային, դյուրացնելով ծանոթությունը և այդպիսով՝ շարունակական այցելությունները, նաև Լեգեոնի առաքելության զարգացումը:

Քանի որ Մարիամի առաքելությունն է՝ իրականություն դարձնել Հիսուսի թագավորությունը, հա՛տկապես պատշաճ է (որի համար Սուրբ Հոգին կտա հատուկ շնորհներ), որ Մարիամի Լեգեոնը տարածի Սուրբ Սրտի Գահակալության հաստատումը տներում:

«Սիրել ընտանիքը՝ նշանակում է ընդունակ լինել գնահատելու ընտանիքի արժեքներն ու կարողությունները՝ մշտապես ամրացնելով դրանք: Սիրել ընտանիքը՝ նշանակում է տեսնել վտանգներն ու չարիքները, որոնք սպառնում են ընտանիքին դրանք հաղթահարելու համար: Սիրել ընտանիքը՝ նշանակում է ստեղծել նրա զարգացման համար նպաստավոր միջավայր: Ժամանակակից քրիստոնեական ընտանիքը հաճախ կանգնած է հուսահատության փորձության առջև և խռովվում է, երբ դժվարություններն ավելանում են: Վսեմ սիրո մի ձև է՝ ընտանիքին վերստին տալ հիմքեր ինքնավստահության համար, վստահելու համար այն հարստություններին, որոնք ընտանիքն ունի ի բնե և Աստծո շնորհով, և վստահելու այն առաքելությանը, որ Աստված վստահել է ընտանիքին: «Հիրավի, այո՛, ընտանիքներն այսօր պետք է հետ կանչվեն իրենց սկզբնական դիրքին: Նրանք պետք է հետևեն Քրիստոսին» (AAS 72 (1980), 791)» (FC 86):

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ ԿԱՏԱՐԵԼԸ

Այս աշխատանքը գերազանց հնարավորություն է կապ հաստատելու կաթողիկէների հետ, որոնք ուշադրության կարիք ունեն, կամ որոնք անցել են հեռացած կաթողիկէների շարքերը, այսինքն՝ նրանք, ովքեր կորցրել են Եկեղեցու հետ ամեն տեսակ առնչություն: Քահանայի անունով

այցելություն կատարելիս պետք է հնարավորինս այցելել տուն առ տուն: Բնական է, որ այն մարդիկ, որոնց տուն կայցելեն, կհարցնեն կրոնին առնչվող բաներ, և, որպես կանոն, նրանց պետք է պատասխանել ուրախությամբ: Քահանան և լեգեոնականները կարող են երկարատև ձևով շարունակել այդ անձանց ուսուցանելու իրենց ջանքերը:

Բայց անձանց գտնելը միայն նախնական՝ ամենահեշտ, քայլն է: Այցելության միջոցով գտնված անձանցից յուրաքանչյուրին վերականգնելը՝ որպես համայնական, պետք է համարել որոշակի իմաստով մի վստահություն, որն Աստծո կողմից հանձնարարված է Լեգեոնին, և որը պետք է սկսել ուրախությամբ և հետևողականորեն կատարել աննկուն կամքով: Թող Լեգեոնը որևէ պատճառով, որն իր հնարավորությունների սահմաններում է, չձախողի այդ վստահությունը՝ անկախ նրանից, թե որքան երկար կտևի այդ հոգևոր ճակատամարտը, թե որքան եռանդ կպահանջի աշխատանքը, թե որքան շատ կլինեն կտրուկ մերժումները, թե որքան բարդ կլինեն դեպքերը, թե որքան անհույս կլինի հեռանկարը:

Ի հավելումն, կրկնենք, որ ոչ միայն անտարբերները, այլև բոլո՛րը պետք է լինեն ջերմ ուշադրության կենտրոնում:

«Եկեղեցու առաքելական ջանադրության դաշտում մենք ունենք մի պաշտոնական առաքելություն, գործունեության նախախնամական մի ձև, մեր սեփական հատուկ զենքը: Դա այն է, որ մենք մարդկային հոգիներին մոտենում ենք ոչ միայն Մարիամի անունով և Մարիամի հովանու ներքո, այլ նաև և նախ և առաջ, մեր ամբողջ զորությամբ աշխատում ենք այդ հոգիները լցնել Մարիամի նկատմամբ մանկական սիրով» («Petit Traite de Mariologie», Marianiste):

5. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐ՝ ՆԵՐԱՌՅԱԼ ՀՈԳԵԲՈՒԺԱՐԱՆՆԵՐ

Աղքատների հիվանդանոց այցելելն առաջին գործն է, որ Լեգեոնը ձեռնարկեց և մի որոշ ժամանակ միայն դա էր անում: Դա օրինություններ բերեց նորածին կազմակերպության

համար, և Լեգեոնը փափագում է, որ այդ աշխատանքը միշտ կատարվի պրեզիդիումների կողմից: Այդ վաղ օրերին գրված հետևյալ տողերը ներկայացնում են այն ոգին, որն այդ առաքելությունը դարձնում է օրինակելի. «Ապա մի անուն տրվեց, և մի անդամ սկսեց իր աշխատանքի հաշվետվությունը: Դա մի հիվանդանոց այցելության մասին էր: Այն կարճ էր, բայց խոսում էր հիվանդների հետ սերտ մտերմության մասին: Նա որոշակի շփոթմունքով ընդունեց, որ հիվանդները գիտեին իր բոլոր եղբայրների և քույրերի անունները: Նրա զեկույցին հաջորդեց իր հետ այցելող լեգեոնականի զեկույցը: Ակնհայտ է, որ աշխատանքը կատարվում է երկուսով: Ինձ թվում է, թե սա ոչ միայն առաքելական օրինակ է, այլև այդպիսի գործելաոճն օգնում է, որ շաբաթական այցելությունները շարունակվեն:

Զեկույցները հաջորդում են մեկը մյուսին: Որոշ հիվանդասենյակներում մի նոր բան կա և պատմելու ավելի շատ բան կա, բայց զեկույցների մեծ մասը կարճ են: Շատերը զարմացնող են, շատերը հուզիչ են, և բոլորը գեղեցիկ են, քանի որ ակնհայտ ձևով հասկանում են, թե ում են իրականում այցելում: Դա ակնհայտ է յուրաքանչյուր հաշվետվության մեջ: Շատերը նույնիսկ իրենք իրենց համար չէին անի այն, ինչ այստեղ պատմվում է, որ պարզ և բնական ձևով կատարվել է մեր բնակչության ամենացածր խավի համար: Այցելությունների ժամանակ, բացառիկ հոգատարությունից և ջերմությունից բացի, կատարվում են նաև շատ խնդրանքներ՝ նամակներ են գրում, փնտրում են իրենց հիվանդներին մոռացած ընկերներին կամ հարազատներին, վազում այլ խնդրանքների համար: Պարզ է, որ ոչ մի բան չեն համարում շատ անընդունելի կամ չափազանց անկարևոր բան հոգատարության համար:

«Հանդիպման ժամանակ ընթերցվեց մի հիվանդի նամակ՝ ուղղված իրեն այցելած լեգեոնականներին: Այդ նամակում մի խոսք կար. «Այն պահից, երբ հայտնվեցիք իմ կյանքում...»: Դա մի էժանագին վիպակի նման էր հնչում, և բոլորը ծիծաղեցին: Բայց հետո ես հետադարձ հայացք գցեցի և մտածեցի հիվանդանոցի մահճակալին պառկած այդ միայնակ մարդու մասին, որի համար այդ բառերը շատ մեծ

իմաստ ունեին, և այդ միտքը հուզեց ինձ: Ես նաև մտածեցի, որ մեկ հոգու մասին ասվածը կարող էր վերաբերել նաև բոլորին: Այսպես հիանալի՛ է միության զորությունը, որը կարող է շատերին մեկտեղել և այդտեղից նրանց ուղարկել կատարելու հրեշտակային առաքելություններ հազարավոր մարդկանց կյանքում, որոնք դուրս են մնացել արտաքին աշխարհից» (Հայր Մայքլ Քրիդոն՝ Մարիամի Լեգեոնի Կոնսիլիումի առաջին հոգևոր առաջնորդը):

Լեգեոնականների այցելության միջոցով պետք է հիվանդներին սովորեցնել ճիշտ հասկանալ իրենց տառապանքները, որպեսզի կարողանան տանել դրանք պատշաճ ոգով:

Նրանք պետք է համոզվեն, որ այն, ինչ համարում են շատ անտանելի, իրականում օգնում է նմանվել Քրիստոսին, և որպես այդպիսին, մեծ բարիք է: «Բարձրյալն Աստված չի կարող մեզ առավել մեծ շնորհ անել, քան պարգևել մի այնպիսի կյանք, ինչպիսին ապրեց Իր սիրելի Որդին», ասում է Սբ Թերեզա Ավիլացին: Դժվար չէ մարդկանց բացատրել տառապանքի այս իմաստը, որը երբ ընկալվի, տառապանքը կրելը կդառնա պակաս ցավոտ:

Պետք է նրանց օգնել հասկանալ այն հոգևոր գանձերի մեծությունը, որոնք նրանք կարող են ձեռք բերել: Հիվանդների համար կարելի է հաճախ կրկնել Սբ Պետրոս Ալքանթարացու հուզված խոսքերը՝ ասված մեկին, ով երկար ժամանակ հիացմունքի արժանի դիմացկունությամբ կրել էր մի շատ ցավոտ հիվանդություն. «Ո՛վ երջանիկ հիվանդ, Աստված ինձ ցույց է տվել, թե ինչպիսի՛ մեծ փառք ես վաստակել քո հիվանդությամբ: Դու վաստակել ես ավելին, քան ուրիշները կարող են ձեռք բերել աղոթքով, ծոմապահությամբ, հսկումներով, ինքնախարազանությամբ և ապաշխարության այլ գործերով»:

Ցանկալի է, որ այդ հոգևոր գանձերը ծախսվեն տարբեր ձևերով, ինչը հնարավոր չի եղել դրանք վաստակելիս: Ավելին, սեփական անձի համար հավաքելն այդքան զորություն չի ունենա: Հետևաբար, լեգեոնականը պետք է զարգացնի տառապանքի առաքելության գաղափարը: Հիվանդներին պետք է սովորեցնել զբաղվել աշխարհի հոգևոր գործերով՝

իրենց տառապանքների գանձերն ընծայելով աշխարհի անթիվ կարիքների համար և կատարելով մի քարոզարշավ, որի զորությունը կլինի անդիմադրելի, որովհետև դա միաժամանակ և՛ աղոթք է, և՛ ապաշխարություն:

«Այդպիսի ձեռքերը, որոնք վեր են ձգվում դեպի Աստված,– աղաղակում է Բոսյուեն,– ջարդում են ավելի շատ մարտագնդեր, քան հարվածող ձեռքերը»:

Այդ համառ պայքարը արդյունավետ կլինի, եթե հիվանդները անձնապես մտահոգվեն այն ամենով, ինչի համար աղոթում են: Հետևաբար, կարևոր է, որ առանձնահատուկ կարիքներ և աշխատանքներ (լավ կլինի, որ հենց լեգեոնականի աշխատանքները) առանձնացվեն և բացատրվեն նրանց:

Պետք է նպատակը լինի նրանց առաջարկել Լեգեոնի օժանդակ անդամակցությունը, ապա՝ ադյուտորական աստիճանը: Կարելի է ձևավորել այդպիսի օժանդակ անդամների խմբեր, որոնք հետո կհավաքագրեն այլ օժանդակ անդամների: Նաև պետք է քաջալերել, որ հիվանդներն օգնեն միմյանց որևէ այլ ձևով ևս:

Բայց եթե անդամակցության այդ բոլոր ձևերը կարող են կատարվել, այդ դեպքում ինչո՞ւ չլինել ակտիվ անդամներ: Շատ հոգեբուժարաններում գործում են հիվանդներից կազմված պրեզիդիումներ: Հաստատության մեջ ունենալ այդպիսի պրեզիդիումներ՝ նշանակում է տեղում աշխատեցնել մի կենսունակ թթխմոր: Այդպիսի լեգեոնականներն առատ ժամանակ ունեն՝ աշխատելու համար այլ հիվանդների հետ, և կարող են բարձրանալ սրբության գագաթը: Նրանց լեգեոնական անդամակցության արժեքն (ավելի ցածր մակարդակում՝ որպես թերապևտիկ կամ բուժիչ զորություն) այնքան ակնհայտ է եղել նրանց համար, որ ամենուրեք ճանաչվել է այդ հաստատությունների բուժանձնակազմերի կողմից:

Նրանց համար բացված այդ նոր հայացքը կյանքի հանդեպ, նկատի ունենալով, որ նրանցից ոմանք նախկինում հասել են թշվառության հատակը՝ մտածելով, թե անպիտան են և բեռ են, գերագույն ուրախություն կապրեն այն զգացումից, որ իրենք օգուտ են բերում Աստծուն:

Սրբերի Հաղորդությունը պետք է անհրաժեշտաբար իր զորեղ ներգործությունն ունենա լեգեոնականների և նրանց համար, ում նրանք այցելում են, այն իմաստով, որ նրանք փոխադարձաբար կարող են կրել միմյանց բեռները և հոգևոր բարիքները: Չի կարելի ենթադրել, թե հիվանդները լեգեոնականների փոխարեն վճարում են տառապանքի պարտականության որոշակի բաժին, որը պետք է կրի յուրաքանչյուր մահկանացու մարդ, բայց եթե յուրաքանչյուր մարդ ի՛նքը կրի տառապանքի մի բաժին, ապա ամբողջ աշխարհը հիվանդ կլինի, այնպես որ ոմանց տրված է առավելություն կրելու ավելին, քան իրենց բաժինն է, որպեսզի աշխարհը կարողանա առաջ գնալ իր աշխատանքի մեջ:

Եվ ի՞նչ կարող է տալ լեգեոնականն այս տեսանելի գործարքում: Ուրիշ ի՞նչ, եթե ոչ իր առաքելության բաժինը, քանի որ հիվանդը անկարող է (և երբեմն պատրաստ չէ) կատարելու իր քրիստոնեական պարտականության այդ հատվածը:

Հետևաբար, յուրաքանչյուրը գոհությամբ կշահի՝ դիմացինի շնորհիվ: Այնուամենայնիվ, սա հավասարապես բաշխված փոխանակության հարց չէ: Որովհետև յուրաքանչյուրի շահույթը շատ ավելի ծանրակշիռ է, քան կորուստը՝ շնորհիվ քրիստոնեական այն սկզբունքի, թե տալ՝ նշանակում է ընդունել բազմապատիկ ավելի շատ: (տե՛ս Գլուխ 39՝ Լեգեոնի առաքելության արմատական կետերը, բաժին 20):

«Ես Քրիստոսի ցորենն եմ,– ասում էր Սբ Իգնատիոս Անտիոքացին,– և որպեսզի Աստծուն արժանի հաց դառնամ, ես պետք է աղացվեմ առյուծների ատամների տակ»: Երբեք մի՛ կասկածիր, որ լավագույն խաչը, ամենապահովը, ամենաաստվածայինը միշտ այն է, որը Հիսուսն Ի՛նքն է կարգադրում՝ առանց մեզ հետ խորհրդակցելու: Ավելացրե՛ք ձեր հավատքը այս վարդապետության մեջ, որն այնքա՛ն սիրելի էր այն սրբերի համար, որոնք ձևավորվել են Նազարեթի դպրոցում: Պաշտե՛ք, օրհնե՛ք և փառաբանե՛ք Աստծուն այն բոլոր առճակատումների և փորձությունների մեջ, որոնք ուղղակիորեն գալիս են Նրա Ձեռքով, և սանձելով ձեր բնության ըմբոստությունը՝ ձեր ամբողջ սրտով ասացե՛ք. «Եղիցի՛», կամ ավելի շուտ. «Մեծացուսցէ՛»» (Մաթեո Քրոուլի-Բովեյ):

6. ԱՇԽԱՏԱՆՔ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱԹՇՎԱՌՆԵՐԻ ԵՎ ՄԵՐԺՎԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Սա պետք է ներառի աղքատների հյուղակները, ժամանակավոր կեցավայրերը, ապաստարաններն ու բանտերը, և հնարավոր է, որ ապաստարանները կառավարվեն լեգեոնականների կողմից, որոնք բնակվում են այդտեղ կամ դրսում:

Երբ որևէ հաստատության մեջ Լեգեոնն ունենա բավարար փորձառությամբ և դիրքի անդամներ, պետք է ձեռնարկվի այդ աշխատանքը Քրիստոսի ամենափոքր եղբայրների և քույրերի համար: Շատ հաճախ այդ աշխատանքն արհարմարհում են, որի հետևանքով կաթողիկէ անունը պախարակվում է:

Չպետք է լինի ոչ մի խորք, որտեղ Լեգեոնը չթափանցի՝ փնտրելով Իսրայելի Տան կորած ոչխարներին: Կեղծ վախերը կլինեն առաջին արգելքը: Բայց այդ վախերը կեղծ լինեն թե հիմնավոր, **ինչ-որ մեկը պետք է անի այդ աշխատանքը:** Եթե կարող և պատրաստված լեգեոնականները՝ ապահովված լինելով իրենց աղոթական և կարգապահ համակարգով, չեն կարող ստանձնել դա, ապա ո՛չ ոք չի կարող:

Մինչև Լեգեոնը որևէ հաստատության մեջ վստահ չլինի, որ իր անդամներն անձամբ ճանաչում են և ինչ-որ ձևով շփում ունեն կարիքի մեջ ապրող մարդկանցից յուրաքանչյուրի հետ, ապա Լեգեոնի աշխատանքը պետք է դիտարկվի որպես դեռևս ոչ լիակատար ձևով զարգացած, և պետք է ավելի մեծ ջանքեր գործադրել այս ուղղությամբ: Լեգեոնականը պետք է շատ ավելի ուժգին փափագի օգնել աշխարհի դժբախտներին, քան որևէ մեկը, ով ի սրտե փափագում է երկրային գանձեր ունենալ: Լեգեոնականի ձգտումը՝ օգնելու այդ դժբախտներին, կարող է լինել նրանց միակ հնարավորությունը՝ ունենալու հավիտենական կյանքը: Հաճախ նրանք այնքա՛ն անհասանելի են բարի ազդեցությունների համար, որ բանտը նրանց համար կարծես մի քողարկված օրհնություն լինի:

Ավելին, այս աշխատանքի համար անհրաժեշտ է որդեգրել հաղթարշավ կատարող զինվորի աշխարհայացքը: Լեգեոնականները կառերեսվեն ակնհայտ անհարմարությունների: Հնարավոր է՝ նետերի նման շպրտվող բարկացած

բառերին ավելանան նաև ավելի վատ բաներ՝ հարվածներ, վիրավորանքներ՝ ռումբերի նման: Այդպիսի բաները կարող են նվաստացնել և ցավ պատճառել, բայց դրանք չպետք է վախեցնեն, դրանք չպետք է շեղեն: Այստեղ է թաքնված զինվորական մասնագիտությունների ամրությունը, որի մասին այնքան հաճախ մտածել է լեգեոնականը և բազում անգամներ խոսել: Լեգեոնականը խոսել է պատերազմի մասին, ամենավատ մարդկանց գտնելու մասին, և հիմա, երբ գտել է այդպիսի մարդկանց, անտրամաբանական կլինի, եթե բողոքի: Ինչպե՞ս կարող է զարմացնել այն, որ վատը վատ վարք ունի, և վատագույնը վարվում է արատավոր ձևով:

Կարճ ասած, առանձնակի դժվարության յուրաքանչյուր վիճակում կամ վտանգի սպառնալիքի դեմ հանդիման լեգեոնականը պետք է ինքն իրեն հիշեցնի. «Պատերա՛զմ է»: Այս արտահայտությունը, որ նյարդայնացնում է մարդկանց, որոնք ստիպված են զոհողություններ կատարել, պետք է պատրաստի լեգեոնականին հոգիների փրկության համար մղվող իր պատերազմին և ամուր պահի նրան իր աշխատանքի մեջ, երբ շատ ուրիշները կփախչեին:

Եթե թանկագին և հավիտենական հոգիների փրկության մասին խոսակցություններում որևէ անկեղծություն կա, ապա պետք է լինի պատրաստակամություն նրանց համար մի որոշակի գին վճարելու համար: Ի՞նչ գին, և ո՞վ պետք է վճարի: Պատասխանը հետևյալն է. եթե ընդհանրապես աշխարհականներին պետք է խնդրենք առերեսվել վտանգների, ապա ո՞ւմ պետք է խնդրել, եթե ոչ նրանց, ովքեր ջանում են արժանի լինել «Մարիամի լեգեոնական» տիտղոսին: Եթե աշխարհական կաթողիկէներից երբևէ պետք է խնդրել մեծ զոհողություններ կատարել, ապա ո՞ւմ պետք է դիմել, եթե ոչ նրանց, ովքեր այդքան վճռականորեն, այդքան հանդիսավորապես զինվորագրվել են ծառայելու նրան, ով կանգնած էր Գողգոթայի վրա: Վստահաբար, նրանք չեն ձախողելու, եթե կանչվեն:

Բայց առաջնորդությունը կարող է ձախողվել առաջնորդվողների հանդեպ սխալ հոգատարության պատճառով: Հետևաբար, հոգևոր առաջնորդներն ու բոլոր սպաները պետք է հաստատեն չափանիշներ, որոնք պետք է փոքր-ինչ

նման լինեն Կոլիզեումին: Այս բառը գուցե անիրական հնչի մեր օրերում, երբ ամեն ինչ հիմնված է հաշվարկների վրա: Բայց Կոլիզեումը ևս հաշվարկ էր. բազում սիրալիր մարդկանց հաշվարկը՝ ոչ ավելի ուժեղ և ոչ ավելի տկար, քան Մարիամի լեգեոնականները, որոնք իրենք իրենց ասացին. «Ի՞նչ գին պետք է մարդ վճարի՝ մեկ հոգու համար»: Կոլիզեումը պարզապես մեկ բառով ամփոփում է այն բազում բառերը, որոնք կարդում ենք այս ձեռնարկի 4-րդ Գլխում՝ լեգեոնական ծառայության մասին, իսկ այդ գլխի նպատակը պարզապես զգացմունք արտահայտելը չէ:

Աշխատանքը արհամարհված կամ լքված խավերի համար միշտ կլինի դժվարին, երկարատև և հոգնեցնող: Ամենակարևորն այդտեղ գերազանց համբերատարությունն է: Այստեղ կարելի է հաջողության հասնել միայն բազում ձախողումներից հետո: Եթե նրանց հետ աշխատելիս առաջին տեղում դրվի կարգապահությունը, ոչինչ չի ստացվի: Կարճ ժամանակում խիստ համակարգը կկորցնի բոլոր նրանց, ում հետ պետք է աշխատեին լեգեոնականները, և կսկսեն աշխատել նրանց հետ, ովքեր ամենաքիչն ունեն այդ աշխատանքի կարիքը: Հետևաբար, աշխատանքը պետք է կատարվի **շրջված արժեքների սկզբունքով**, այսինքն՝ աշխատել պետք է հատկապես նրանց հետ, ում նույնիսկ լավատեսը կհամարեր բառացիորեն անհույս աշխատելու համար, և որոնց աղավաղված մտքերն և սկզբնական անզգայությունը՝ իրենց հասցեագրված խոսքերի հանդեպ, արդարացնում է այս նկարագրությունը: Չարագործը, բռնարարը, ատելությամբ լցվածը, հասարակություններից մերժվածներն ու սև ցուցակում հայտնվածները, նրանք, ումից քաղաքները հրաժարվում են, նրանց բոլորի մասին պետք է հաստատակամորեն հոգ տանել՝ չնայելով նրանց մերժումներին, բացարձակ ապերախտությանը և ակնհայտ ձախողմանը: Նրանց մեծ մասի հետ աշխատանքը կդառնա հանձնարարություն ամբողջ կյանքի համար:

Ակնհայտ է, որ այդպիսի աշխատանքը, որն իրականացվում է այսպիսի գաղափարներով, կարիք ունի հերոսական որակների և զուտ գերբնական տեսլականի: Այսպիսի մեծ ու ծանր աշխատանքի վարձատրությունը կլինի տեսնելը,

թե ինչպես են այդ մարդիկ վերջում հանգչում Աստծո հետ մտերմության մեջ:

Ուրեմն ինչպիսի՛ ուրախություն է համագործակցելը Նրա հետ, «Ով համբերատարությամբ և ջանադրությամբ ցեխից հանեց ու դեպի կյանք բերեց մի ժողովուրդ, որ փառաբանում է Իրեն» (Սբ Ջոն Հենրի Նյուման, «Գերոնթիուսի երազը»):

Այս առանձնահատուկ գործունեությանը երկար անդրադարձ կատարեցինք, որովհետև այն իսկապես վերաբերում է Լեգեոնի ամբողջ ոգուն: Ի հավելումն, այն առանցքային տեղ ունի Եկեղեցուն մատուցված ծառայությունների մեջ, որովհետև դա ընդգծված հաստատումն է կաթողիկէ այն սկզբունքի, թե նույնիսկ ամենացածր մարդկային էակները մեզ համար ունեն մի դիրք, որը կապ չունի նրանց արժեքի կամ մեզ համար ընդունելի լինելու հետ՝ այն, որ նրանց մեջ պետք է տեսնել, հարգել և սիրել Քրիստոսին:

Այդ սիրո իրական լինելու մասին ապացույցն այն է, որ դա պետք է արտահայտվի այն պայմաններում, որտեղ այն ստուգվում է: Այդ կենսական փորձությունն այն է, որ սիրենք նրանց, ում մեր մարդկային պարզ բնությունը հուշում է, թե չպետք է սիրել: Այստե՛ղ է այն վճռական ստուգումը, որտեղ երևում է մարդկության հանդեպ ճշմարիտ կամ կեղծ սերը: Դա հավատքի սյուն է, քրիստոնեության վճռական կետը, որովհետև առանց կաթողիկէ իդեալի՝ այդ տեսակ սերը պարզապես չի կարող գոյություն ունենալ: Այդ մասին միտքն անգամ կլինի ֆանտաստիկ, եթե կտրվի այն արմատից, որը դրան տալիս է իմաստ և կյանք: Եթե մարդկությունը՝ որպես այդպիսին, պետք է լինի Ավետարանը, ապա ամեն ինչ պետք է արժևորվի մարդկությանը ակնհայտ պիտանի լինելու տեսանկյունից: Մի բան, որն անարժեք կլինի մարդկության համար, տրամաբանորեն պետք է դիտվի այնպես, ինչպես մեղքը կդիտվեր քրիստոնեական տեսանկյունից, այսինքն՝ որպես մի բան, որից պետք է ազատվել ամեն գնով:

Նրանք, ովքեր ցուցաբերում են քրիստոնեական սիրո ինքնազոհաբերական գործեր՝ ամենավսեմ

արտահայտություններով, գերագույն ծառայություն են մատուցում Եկեղեցուն:

«Դժվա՛ր է, ասում եք, հաշտվել չարագործի հետ: Բայց հենց այդ պատճառով էլ դուք պետք է սիրով նվիրվեք նրան: Ձեր նպատակը պետք է լինի նրան շահելը և դուրս բերելը իր մեղավոր ճանապարհից և նրան առաջնորդելը դեպի առաքինություն: Բայց առարկում եք, թե չարագործը չի լսում այն, ինչ ասում եք, և ոչ էլ հետևում է ձեր խորհրդին: Ինչպե՞ս կարող եք այդքան վստահ լինել դրանում: Դուք փորձել եք ուղղակի դիմել նրան և հետ դարձնել: Դուք պատասխանում եք, թե հաճախ եք բանավիճել նրա հետ: Բայց որքա՞ն հաճախ: Հաճա՛խ, նորից ու նորից, ասում եք դուք: Իսկ դա հաճա՛խ եք համարում: Բայց նույնիսկ եթե ստիպված լինեիք շարունակելու ամբողջ կյանքի ընթացքում, դուք չպե՞տք է ոչ թուլացնեիք ձեր ջանքերը, ոչ էլ հուսալքվեիք: Դուք չե՞ք տեսնում, թե ինչպե՞ս է Աստված շարունակում դիմել մեզ Իր մարգարեների, Իր առաքյալների, Իր ավետարանիչների միջոցով: Եվ ի՞նչ արդյունք է ունենում: Մի՞թե մեր վարքն այն է, ինչ պետք է լինի: Մի՞թե մենք պատրաստ ենք հնազանդվել Նրան ամեն ինչում: Ավա՛ղ, իրականությունը հեռու է այդպիսին լինելուց: Սակայն հակառակ դրան, Նա երբեք չի դադարում հետապնդել մեզ իր խնդրանքներով: Եվ ինչո՞ւ: Այն պատճառով, որ չկա ավելի թանկ բան, քան հոգին: «Որովհետև ի՞նչ օգուտ ունի մարդ, եթե շահի ամբողջ աշխարհը, բայց կորցնի իր հոգին» (Մտթ. 16:26)»» (Սբ Հովհան Ոսկեբերան):

7. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿՐՏՍԵՐ ԼԵԳԵՈՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Տերը, վստահաբար, ջերմորեն և առատորեն սիրում է երեխաներին: Նա օրհնեց նրանց, և ավելին, նրանց խոստացավ Երկնքի Արքայությունը (հմմտ.՝ Մտթ. 19,13-15, Մրկ. 10, 14): Հիսուսը առանձնահատուկ կերպով բարձրացրեց երեխաների գործնական դերակատարությունը Աստծո Արքայության մեջ: Նրանք պերճախոս խորհրդանիշը և վսեմ պատկերն են այն բարոյական և հոգևոր պայմանների, որոնք էական են Աստծո Արքայություն մտնելու և Աստծո հանդեպ լիակատար վստահության ապրումի համար. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չդառնաք և չլինեք մանուկների նման,

Աստծո Արքայությունը չեք մտնի: Ով ինքն իրեն խոնարհեցնի այս մանկան նման, նա՛ է մեծը Երկնքի Արքայության մեջ» (Մտթ. 18:3-5, հմմտ.՝ Ղկ. 9:48)» (CL 47):

Եթե կարողանանք երիտասարդներին ամրացնել հավատքի և անմեղության մեջ, որքա՛ն փառավոր կլինի ապագան: Հետո, ինչպես մի թարմացած հսկա, Եկեղեցին կկարողանա նետվել հեթանոսական աշխարհը դարձի բերելու առաքելության մեջ և դա կատարել կարճ ժամանակում: Ցավոք, Եկեղեցու ջանքերի մի զգալի մաս վատնվում է ներքին ցավերին դարման գտնելու վրա:

Ավելին, առավել դյուրին է պահպանելը, քան հետո վերականգնելը: Լեգեոնը պետք է զբաղվի այդ երկուսով էլ, որովհետև երկուսն էլ կենսական կարևորություն ունեն: Բայց, վստահաբար, այն չպետք է արհամարհի այդ երկուսից առավել հեշտը՝ պահպանելը: Շատ երեխաների կարելի է փրկել աղետից, որովհետև հետո ավելի դժվար կլինի վերականգնել ստորացված չափահասի արժանապատվությունը:

Խնդիրն ունի հետևյալ կողմերը.

ա. Երեխաների մասնակցությունը Սուրբ Պատարագին:

Մի եպիսկոպոս, որը լեգեոնականներին տալիս էր աշխատանքային ծրագիր, առաջնային կարևորություն տվեց երեխաների շրջանում քարոզարշավ կատարելուն կիրակնօրյա Սուրբ Պատարագին մասնակցելու վերաբերյալ: Նա համարում էր, որ Պատարագից բացակայելը երեխայի համար հետագա բոլոր խնդիրների առաջացման հիմնական պատճառներից մեկն է: Այնտեղ, որտեղ երեխաները չեն կատարում այդ տարրական կաթողիկէ պահանջը, վստահաբար կարելի է ասել, որ նրանք զոհ են դարձել ծնողների անտարբերությանը և վատ օրինակին, և Լեգեոնն իր առաքելության ընթացքում պետք է միշտ նկատի ունենա այդ հավելյալ չարիքը:

Երեխաների պարագայում, առավել քան այլ պարագաներում, ոչ կանոնավոր կամ կարճատև այցելությունները ոչ մի արդյունք չեն տա կամ սակավ արդյունավետ կլինեն:

բ. Այցելություն ընտանիքներին:

Նույնիսկ ամենակարծր սիրտը փափկում է, երբ մտածում է իր սեփական երեխայի մասին: Մարդիկ կարող են մեռած լինել կրոնի հանդեպ, բայց խոր արմատներ ունեցող ազդակները խնդրում են նրանց նույն ճակատագիրը չկամենալ իրենց զավակների համար, և բնազդային ուրախություն են զգում, երբ տեսնում են, որ աստվածային շնորհը ներգործում է իրենց զավակների մեջ: Որպես հետևանք, մեկը, ով մերժում է նրանց, ովքեր ուղղակիորեն իրեն են մոտենում հոգևոր առաքելությամբ, կհանդուրժի նույն անձանց առաքելություն կատարելու իր ընտանիքի անդամների համար:

Բանիմաց և կարող լեգեոնականները, երբ մի անգամ ընդունվում են որևէ ընտանիքում, գիտեն՝ ինչպես անել, որ այդ ընտանիքի բոլոր անդամները զգան իրենց առաքելության լույսի ճառագումը: Երեխաների վերաբերյալ անկեղծ հետաքրքրությունը սովորաբար բարենպաստ տպավորություն է թողնում ծնողների վրա: Դա կարելի է հմտորեն օգտագործել՝ մեծահասկաների մեջ տնկելու համար գերբնականի սերմը, որպեսզի, ինչպես որ երեխաները եղան պատճառ, որ լեգեոնականները մտան իրենց ծնողների տուն, այդպես էլ երեխաները լինեն բանալի իրենց ծնողների սրտերը Աստծու առաջ բացելու և նրանց հոգիները շահելու համար:

գ. Երեխաներին ուսուցանել քրիստոնեական վարդապետությունը:

Այս գերազանցապես արժեքավոր աշխատանքը պետք է լրացվի՝ այցելելով այն երեխաների տները, որոնք բավարար չափով չեն հաճախում Սուրբ Պատարագներին, կամ այցելելով՝ պարզապես երեխաների նկատմամբ անձնական հետաքրքրություն ցուցաբերելու և ընտանիքի մյուս անդամների հետ ևս շփվելու համար: Զուգադիպությամբ, Մարիամի Լեգեոնը կարող է ծառայել նաև Քրիստոնեական Վարդապետության եղբայրակցության տեղական մասնաճյուղի նպատակներին: Տե՛ս հավելված 8:

Հետևյալ օրինակը ցույց է տալիս բազմամարդ ծխական համայնքում կիրակնօրյա կրոնի դասերում Լեգեոնի համակարգի ներդրման արդյունավետությունը: Հակառակ քահանաների ազնիվ ջանքերին՝ ներառյալ եկեղեցիների

ամբիոններից արված կոչերին, կրոնի դասերին հաճախող երեխաների թիվը նվազել, հասել էր 50-ի: Այդ ժամանակ ձևավորվեց մի պրեզիդիում, որը երեխաների համար կրոնի դասերին ավելացրեց այցելություններ երեխաների տները: Մեկ տարվա աշխատանքը բավական եղավ դասերին մասնակցող երեխաների միջին թիվը 600-ին հասցնելու համար: Եվ այստեղ ներառված չէ երեխաների բազմաթիվ անտարբեր հարազատների թիվը, որոնք այդպիսով հոգևոր օգուտներ են քաղում:

Բոլոր աշխատանքների մեջ լեգեոնականների համար պետք է մշտապես հնչի հետևյալ հարցադրումը. «Ինչպե՞ս կնայեր Մարիամն իր այս երեխաներին և ինչպե՞ս կվարվեր նրանց հետ»: Այդ միտքն առավել հստակ պետք է լինի հենց ա՛յս աշխատանքում: Բնական մղում կա երեխաների հետ անհամբերությամբ վարվելու: Բայց ամենավատ սխալը երեխաների հետ գործնական կամ աշխարհիկ ձևով խոսելն է՝ այնպես, որ երեխաներն այդ կրոնի դասերին վերաբերվեն որպես լրացուցիչ ժամերի՝ ի հավելումն իրենց դպրոցի դասերին: Եթե այդ տպավորությունը ստեղծվի երեխաների մոտ, ապա բերքի իննսուն տոկոսը կմնա չհասունացած վիճակում: Ուրեմն, ևս մեկ անգամ անդրադառնանք. «Ինչպե՞ս կուսուցաներ Հիսուսի Մայրն այդ երեխաներին, որոնցից յուրաքանչյուրի մեջ տեսնում է իր սեփական և սիրելի Հիսուսին»:

Փոքրերին ուսուցանելիս կարևոր դեր են խաղում հիշողությանն օգնող լատեսողական միջոցները: Պետք է մեծ ուշադրությամբ ընտրել դասավանդման նյութերը, որպեսզի դրանք ամբողջությամբ համաձայն լինեն Եկեղեցու ուսմունքին:

Ե՛վ քրիստոնեական վարդապետությունն ուսուցանողը, և՛ սովորողը Եկեղեցուց ստանում են մասնակի ներողություն՝ ինդուլգենցիա (EL 20):

դ. Ոչ կաթողիկէ կամ պետական դպրոցը:

Այն երեխան, որ չի հաճախում կաթողիկէ դպրոց, շարունակական ճգնաժամ է ապրում, և գուցե դժվար լինի կանխարգելելը, որ այդ ամենը խնդիր չդառնա հետագա

տարիներին: Տեղական եկեղեցական իշխանությունների կողմից արտոնված կանխարգելիչ միջոցները՝ երեխաների խնդիրների լուծման համար, պետք է Լեգեոնի կողմից օգտագործվեն ամբողջ կարողությամբ:

ե. Եղբայրակցություններ փոքրերի համար:

Այն երեխաների համար, որոնք սովորել են լավ դպրոցներում, ճգնաժամերը գալիս են դպրոցն ավարտելու տարիքում: Նրանք հեռանում են դպրոցից, որտեղ առողջ ազդեցությունների տակ էին, որտեղ կային պաշտպանական սահմանափակումներ, ապահովություններ: Երբեմն նրանք ամբողջովին կախված են եղել դպրոցում տրամադրվող այդ աջակցությունից, որովհետև տանը չեն ունեցել կրոնական կամ վերահսկող ազդեցություններ:

Կա հետագա ևս մեկ բարդություն՝ կապված այն փաստի հետ, որ այդ դրական գործոնները դադարում են բարոյական ամենամեծ դժվարությունների ժամանակ, և դժբախտաբար, այդ պատանիներն այլևս երեխաներ չեն, բայց և դեռևս չեն դարձել չափահասներ: Բնական է, որ այդ արշալույսի փուլում պատշաճ ձևով ամեն ինչ ապահովելը բարդ է, և այդ պատճառով էլ հաճախ դա բաց է մնում: Հետո, երբ անցումային փուլն անցնում է, և չափահասների ապահովության համակարգն իր գիրկը բացում է նրանց առաջ, սովորաբար դա կատարում է շատ անհաջող ձևով: Ազատության վտանգավոր գրավչությունը փորձված բան է:

Հետևաբար, դպրոցում գոյություն ունեցած վերահսկողությունը պետք է ինչ-որ չափով շարունակվի, երբ երեխաներն ավարտում են: Խորհուրդ է տրվում Լեգեոնի հովանավորության ներքո կազմավորել կրտսեր հոգևոր Եղբայրակցություններ կամ, առնվազն, սովորական Եղբայրակցությունների մեջ հիմնել հատուկ Կրտսեր մասնաճյուղեր: Նախքան երեխաների դպրոցն ավարտելը դպրոցի ղեկավարությունը կարող է հետևողական ձևով նրանց անունները տրամադրի լեգեոնականներին: Վերջիններս հետո կայցելեն նրանց տները՝ ծանոթության համար և նրանց համոզելու, որ միանան Եղբայրակցությանը: Այն երեխաները, որոնք չեն ուզում միանալ Եղբայրակցությանը,

կամ որոնք հաճախում են ոչ կանոնավոր կերպով, պետք է լինեն լեգեոնականների հատուկ ուշադրության կենտրոնում:

Յուրաքանչյուր լեգեոնականի կհանձնվի Եղբայրակցության կրտսեր անդամների որոշակի թիվ, որի համար նա կկրի պատասխանատվություն: Եղբայրակցության յուրաքանչյուր հանդիպումից առաջ պետք է զանգել բոլոր անդամներին և հիշեցնել հանդիպմանը մասնակցելու պարտականության մասին: Այդ համակարգի մաս պետք է կազմեն ամենամյա հոգևոր կրթությունները (եթե հնարավոր է, ամփոփված) և ամենամյա ուրախ ժամանցային միջոցառումները:

Չկա ավելի լավ միջոց, իսկ իրականում, չկա ո՛րևէ այլ որոշակի միջոց՝ հիմքեր ստեղծելու, որ դպրոցն ավարտելուց հետո երիտասարդները հաճախեն Սուրբ Խորհրդակատարություններին:

Մանկական ուղղիչ հաստատություններից կամ մանկատներից դուրս եկած երիտասարդների պարագան պահանջում է հատուկ ուշադրություն՝ առաջնորդվելով վերը նշված ուղղությամբ: Երբեմն նրանք բոլորովին դուրս են ծնողական խնամքից, երբեմն էլ դառնում են վատ ծնողավարության զոհեր:

զ. Կազմակերպել երեխաների ակումբներ, սկաուտական խմբեր, Սուրբ Մանկության միջազգային միավորման մասնաճյուղեր և այլն:

Հնարավոր է, որ սա լինի մի քանի անդամների աշխատանքային պարտավորություն և ոչ թե ամբողջ պրեզիդիումի պարտավորությունը: Բայց լիովին պատշաճ կլինի, որ պրեզիդիումը նվիրվի միայն մեկ հատուկ աշխատանքի՝ վերը բերված տարբերակների նման: Բայց այդպիսի պարագայում պետք է գիտակցել, որ պրեզիդիումի ժողովները պետք է ամբողջությամբ կատարվեն ըստ կարգի: Ժողովին չեն կարող փոխարինել այն պարագաները, երբ անդամները հավաքված են Հատուկ Աշխատանքի համար, և միաժամանակ ուզում են աղոթել, կարդալ արձանագրությունը և լսել մի քանի զեկույց: Գուցե այսպիսի պարագայում

ժողովի հիմնական մասերը պահպանվեն, բայց Լեգեոնի կառուցվածքի մասին 11-րդ Գլխի ընթերցումը ցույց կտա, թե կանոնների ոգին ինչքան թույլ է արտահայտվում այդպիսի արկածի ժամանակ: Լեգեոնի ցանկությունն է, որ Հատուկ Աշխատանքի ժամանակ Լեգեոնի աղոթքները արտասանվեն սկզբում, միջանկյալ հատվածում և վերջնական փուլերում: Եթե հնարավոր չէ ներառել Վարդարանը, պետք է ասել առնվազն Տեսսերայի մնացած մասը:

է. Լեգեոնական երիտասարդի բանաձևը:

Կարծում ենք, որ կարիքը կա առաջարկելու մի քանի առաջնորդող սկզբունքներ երիտասարդական ակումբներ կամ երիտասարդական խմբեր վարող լեգեոնականների համար: Սովորաբար մեթոդները, որոնց հետևում են, ամբողջությամբ կախված են այդպիսի խմբերն առաջնորդող անձերից, այնպես որ գոյություն ունի համակարգի լայն բազմազանություն՝ սկսած ամենօրյա հանդիպումներից մինչև ամենշաբաթյա հանդիպումներ, և զուտ ժամանցից կամ տեխնիկական ուղղորդումից մինչև մաքուր կրոն: Ակնհայտ է, որ այս տարբերակները կունենան շատ տարբեր արդյունքներ, և ոչ միշտ լավագույնը: Օրինակ՝ զուտ ժամանցը կասկածելի պատրաստություն է երիտասարդների համար, նույնիսկ այն ենթադրությամբ, թե «դա նրանց հեռու է պահում խնդիրներից»: Հայտնի ասացվածքն ասում է. «Միայն աշխատանքը՝ առանց խաղի, Ջեքին դարձնում է ձանձրալի» (All work and no play makes Jack a dull boy), բայց սրան լրացնում է մեկ այլ ասացվածք, որն ավելի ճիշտ է. «Միայն խաղը՝ առանց աշխատանքի, Ջեքին դարձնում է պարզապես մի խաղալիք» (All play and no work makes Jack a mere toy):

Պրեզիդիումի համակարգն ինքն իրեն դրսևորել է որպես մի չափանիշ, որը համապատասխանում է ամեն տեսակ մարդկանց և աշխատանքներին: Արդյոք հնարավոր չէ՞ մտածել մի պարզ ընդհանուր համակարգ, որը հարմար լինի բոլոր երիտասարդների համար:

Փորձերը ցույց են տվել, որ հետևյալ սխեման կաշխատի գոհացնող ձևով, և երիտասարդների խմբեր ղեկավարող պրեզիդիումներին խորհուրդ ենք տալիս օգտագործել այն.

1. առավելագույն տարիքը պետք է լինի 21-ը, և չկա նվազագույն տարիք, ընդ որում՝ ցանկալի է պահել տարիքային սահմանափակումը,
2. յուրաքանչյուր անդամ պետք է հաճախի կանոնավոր՝ ամենշաբաթյա հանդիպումներին: Եթե խումբը հանդիպում է շաբաթը մեկ անգամից ավելի հաճախ, այս կանոնները կարող են վերաբերել նաև լրացուցիչ հանդիպումներին,
3. յուրաքանչյուր անդամ պետք է ամեն օր աղոթի Կատենա Լեգեոնիսը,
4. ամենշաբաթյա հանդիպումներին Լեգեոնի Խորանը պետք է դնել կամ սեղանին, ինչպես պրեզիդիումի ժողովի ժամանակ է, կամ առանձին, կամ էլ՝ բարձր մի տեղ՝ ապահովության համար,
5. յուրաքանչյուր հանդիպման ժամանակ պետք է ասել Լեգեոնի աղոթքները՝ ներառյալ Վարդարանը, այնպես, ինչպես պրեզիդիումի ժողովի ժամանակ է,
6. հանդիպման ընդհանուր տևողությունը չպետք է լինի ժամուկեսից պակաս, բայց կարող է լինել ավելին,
7. ժամուկեսից ոչ պակաս պետք է հատկացնել գործերին և հրահանգավորմանը: Մնացած ժամանակը, եթե ցանկանում են, կարելի է հատկացնել ակտիվ հանգստին: «Գործեր» ասելով՝ նկատի ունենք այն աշխատանքները, որոնք բնականորեն կապված են որոշակի խմբեր առաջնորդելու հետ, օրինակ՝ ֆուտբոլային կամ այլ սպորտային ակումբներ և այլն... «Հրահանգավորում» ասելով՝ նկատի ունենք պատրաստության կամ կրթության որևէ ձև, կրոնական կամ աշխարհական:
8. յուրաքանչյուր անդամ պետք է ընդունի Սուրբ Հաղորդություն՝ ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ,

9. անդամներին պետք է խրախուսել Լեգեոնի օժանդակ անդամներ լինել, և նրանց մտքերում պետք է սերմանել մերձավորին և համայնքին ծառայելու մասին միտքը:

«Հեշտ կլիներ հիմնվել Սբ Ջոն Բոսքոյի արտասովոր գործունյա կյանքի բազմաթիվ դասերի վրա: Ես ընտրում եմ այդ դասերից միայն մեկը՝ դրա չափազանց մեծ և հարատև կարևորության համար, մասնավորապես՝ Բոսքոյի տեսանկյունն այն հարաբերությունների մասին, որոնք պետք է գոյություն ունենան ուսուցիչների և սովորողների, մեծավորների և ենթակաների, տնօրենների և աշակերտների միջև դպրոցում, վարժարանում կամ ճեմարանում: Նա իրավացիորեն զզվում էր խորթության, հեռավորություն պահելու ոգուց, չափազանցված պատվի զգացումից, որոնք հիմնված են երբեմն սկզբունքայնության, երբեմն անմտության, երբեմն էլ զուտ եսասիրության, և որոնք մեծավորներին և տնօրեններին դարձնում են գրեթե անհասանելի նրանց համար, ում պատրաստությունը և կրթությունը Աստված վստահել է իրենց: Սբ Ջոն Բոսքոն երբեք չէր մոռանում հետևյալ խոսքերը. «Մի՞թե նրանք քեզ կառավարիչ դարձրին. մի մեծամտացի՛ր, եղի՛ր նրանց հետ ինչպես նրանցից մեկը, հո՛գ տար նրանց մասին» (Սիր. 32)» (Կարդինալ Բուրն):

8. ԳՐՔԻ ԱՆԿՅՈՒՆԸ

Լեգեոնականները կարող են գրքի անկյուններ կամ շարժական գրքի պահարաններ տեղակայել հասարակական վայրերում, նախընտրելի է մի որևէ բանուկ փողոցում կամ դրան կից տարածքում: Չկա դրանից ավելի արդյունավետ ճանապարհ բովանդակային առաքելություն կատարելու համար՝ ուղղված բարեպաշտներին, միջակներին և վատերին, կամ բազմաթիվ անտեղյակների ուշադրությունը Եկեղեցու վրա հրավիրելու համար: Հետևաբար, Լեգեոնն անկեղծորեն փափագում է, որ յուրաքանչյուր մեծ կենտրոնում լինի այդպիսի առնվազն մեկ անկյուն:

Այդ անկյունը պետք է կազմակերպել այնպես, որ այն առաջարկի գրքերի վերնագրերի հնարավորինս մեծ քանակություն և առատ ու ոչ թանկարժեք հոգևոր գրականություն:

Լեգեոնականները կզբաղվեն այդ գրականության բաշխումով:

Բացի նրանցից, ովքեր կհետաքրքրվեն այդ գրականությամբ՝ ձեռք բերելու նպատակով, ամեն տեսակ անձինք կարող են հետաքրքրվել այդ անկյունով՝ կաթողիկէ հավատացյալներ, որոնք փափագում են զրուցել իրենց հավատակիցների հետ, այնպիսիք, ովքեր անտեղյակ են կամ անտարբեր, ժամանակ են սպանում կամ պարզ հետաքրքրություն ունեն, Եկեղեցու մաս չկազմող անձինք, որոնք որոշակի հետաքրքրություն ունեն, բայց չեն ուզում ավելի ուղղակի հարաբերության մեջ լինել Եկեղեցու հետ: Նրանք բոլորը կզրուցեն ջերմ ու սրտակից լեգեոնականների հետ, որոնք կկազմակերպեն այդ անկյունների աշխատանքը, պատրաստված կլինեն իրենց ուղղված հարցադրումները և գրականության ձեռքբերումը դիտելու որպես մարդկանց հետ ընկերական շփումներ հաստատելու հնարավորություն: Այս հնարավորությունը պետք է օգտագործվի բոլոր այդ մարդկանց առաջնորդելու համար դեպի մտածողության և գործողության առավել բարձր որակների: Կաթողիկէները կհակվեն միանալու մի «կաթողիկէ առաքելության»: Ոչ կաթողիկէներին կօգնեն հասկանալ, թե ինչ է Եկեղեցին: Մեկն այդ զրույցից կհեռանա հստակ որոշմամբ՝ ամեն օր մասնակցելու Սուրբ Պատարագին և ընդունելու Սուրբ Հաղորդություն, մեկ ուրիշը կորոշի դառնալ լեգեոնական՝ ակտիվ կամ օժանդակ, կամ՝ պատրիկ, երրորդի համար դա առիթ կլինի հաշտվելու Աստծո հետ, մեկ ուրիշն էլ իր սրտում գուցե ընդունի դարձի գալու սերմերը: Քաղաք այցելողները կհետաքրքրվեն Լեգեոնով (որի մասին այլ կերպ գուցե չիմանային) և կհակվեն այն հիմնել իրենց համայնքներում:

Սակայն լեգեոնականներին քաջալերում ենք, որ չսպասեն՝ մինչև մարդիկ մոտենան գրքի անկյուններին, այլ պետք է վճռականորեն իրե՛նք մոտենան տարածքում գտնվող մարդկանց՝ ո՛չ անպայման ավելի շատ գրականություն վաճառելու նպատակով, այլ մարդկային հարաբերություն հաստատելու համար, որը կարող է հնարավորություն ընձեռել վերը նշված իմաստներով:

Կարիք չկա հիշեցնելու լեգեոնականներին, որ դա հետևողականորեն ծանոթություններ և մտերմություններ հաստատելու իրենց ամբողջ աշխատանքի անհրաժեշտ մասն է:

Այդպիսի աշխատանք սկսելու առաջարկը միշտ կհարուցի այն առարկությունը, թե դա պետք է կատարեն բացառապես խոսելու լավ ունակություն ունեցող կաթողիկէները, իսկ այդպիսիք չկան: Ճիշտ է, որ կաթողիկէ ուսմունքի հատուկ իմացությունը շատ օգտակար կլինի, բայց եթե դա չկա, ապա լեգեոնականները չպետք է խուսափեն սկսելու այդ աշխատանքը: Որովհետև ամենակարևորն այստեղ անհատական հարաբերությունն է: Ինչպես ասել է Ջոն Հենրի Նյումանը. «Անհատներն ազդում են մեր վրա, ձայները հալեցնում են մեզ, գործերը բոցավառում են մեզ: Մենք դարձի չենք գալիս սիլլոգիզմներով»: Այլ խոսքով՝ ազնվությունն ու քաղցրությունը ավելի կարևոր են, քան խոր գիտելիքները: Խոր գիտելիքները հակված են նրան, ով ունի դրանք, տանելու դեպի ավելի խոր ջրերը և դժվարանցանելի անցումները, որոնք ոչ մի տեղ չեն տանում, մինչդեռ սեփական տկարության ազնիվ խոստովանությունը, թե՝ «Ես չգիտեմ, բայց կարող եմ ճշտել», երկխոսությունը կպահի առողջ հիմքի վրա:

Կպարզվի, որ բարձրաձայնվող դժվարությունները մեծ մասամբ պայմանավորված են խոր անգիտությամբ, և որ պարզ լեգեոնականն ի վիճակի է լուծելու դրանք: Իսկ ավելի բարդ հարցերը լուծելուն կօգնեն պրեզիդիումը կամ հոգևոր առաջնորդը:

Եկեղեցու հանդեպ մեղադրանքները վատ վարքի, հալածանքների կամ ջերմեռանդության պակասի վերաբերյալ կարող են դառնալ անվերջ վիճաբանությունների պատճառ և անհուսալիորեն ավելի խճողել հարցերը: Որոշ մեղադրանքների տակ կարող է թաքնված լինել ճշմարտության մի տարր և այդպիսով ավելի բարդացնել խճողումը: Թշնամաբար տրամադրված քննադատին գոհացնելը այս և վիճաբանության այլ՝ ավելի փոքր հարցերի շուրջ, բացարձակապես անհնարին է, նույնիսկ եթե մեծ խորագիտությամբ մոտենաս հարցին: Լեգեոնականը միշտ պետք է շարժվի այն ուղղությամբ, որ հետևողականորեն ջանա քննարկումը տանել

ամենապարզ տարրերի ուղղությամբ, այսինքն՝ պնդելով, որ Աստված պետք է որ աշխարհին թողած լինի մեկ ուղերձ, որը մարդիկ անվանում են «կրոն», որ այդ կրոնը, լինելով Աստծո ձայնը, **պետք է բացարձակապես լինի մեկ**, հստակ, հետևողական, անսխալ և պետք է ունենա աստվածային հեղինակություն:

Այս բնութագրերը պետք է գտնել միայն Կաթողիկէ Եկեղեցում: Չկա որևէ այլ կառույց կամ համակարգ, որը նույնիսկ հավակնի ունենալ այդ բնութագրերը: Եկեղեցուց դուրս կան միայն հակասություններ և խառնաշփոթ, այնպես, ինչպես Սուրբ Նյումանը դիպուկ կերպով ասում է. «Կա՛մ Կաթողիկէ Եկեղեցին է ճշմարտապես անտեսանելի աշխարհի մուտքը՝ դեպի այս աշխարհ, կամ գոյություն չունի ո՛չ մի դրական, ո՛չ մի վարդապետական բան՝ ուր էլ գնաս»:

Պետք է լինի մի ճշմարիտ Եկեղեցի: Կարող է լինել միայն մե՛կ ճշմարիտ Եկեղեցի: Ո՞ւր է այն, եթե ոչ Կաթողիկէ Եկեղեցին: Ինչպես միայն մեկ կետին ուղղված հարվածները, Ճշմարտությանը մոտենալու այս պարզ ուղղությունն ունի անվիճելի ազդեցություն: Դրա զորությունը ակնհայտ է պարզ մարդկանց համար: Սրան ոչինչ չեն կարող առարկել առավել ուսյալներն իրենց սրտերում, թեև կարող է շարունակել խոսել Եկեղեցու մեղքերի մասին: Այսպիսի մեկին պետք է կարճ և ջերմությամբ պատասխանել, որ իր խոսքերով նա անվանարկում է առավել մեծ մի իրողություն: Նրա առարկությունները նույնությամբ կարող են վերաբերվել ցանկացած այլ կրոնական համակարգի: Եթե նա ուզում է ապացուցել, թե Եկեղեցին կեղծ է՝ այն պատճառաբանությամբ, թե կղերականները սխալներ ունեն, ապա նա պարզապես ուզում է ապացուցել, թե աշխարհում գոյություն չունի որևէ ճշմարիտ կրոն:

Այլևս անցել են այն ժամանակները, երբ մի բողոքական կարող էր պնդել, որ իր մասնավոր աղանդն ունի ճշմարտության մենաշնորհը: Մեր օրերում այդպիսի մեկը ավելի համեստաբար կբավարարվեր՝ ասելով, թե **բոլոր** եկեղեցիներն ունեն ճշմարտության ինչ-որ մաս կամ կողմ: Բայց մասը բավարար չէ: Այդ պնդումը հավասարազոր է ասելուն, թե չկա որևէ ակնհայտ ճշմարտություն, և չկա որևէ ճանապարհ

ճշմարտությանը հասնելու համար: Որովհետև եթե մի Եկեղեցի ունի որոշ ուսմունքներ, որոնք ճշմարիտ են, իսկ մյուսները՝ ոչ, ուրեմն ինչպե՞ս հասկանալ, թե ո՛րն է ճշմարիտը. կարող ես պատահաբար վերցնել ոչ ճշմարիտ ուսմունքը: Հետևաբար, այն Եկեղեցին, որն իր ուսմունքների մասին ասում է. «Այս մի քանիսը ճշմարիտ են», անօգուտ Եկեղեցի է և չի կարող առաջնորդել: Այդպիսի Եկեղեցին մարդուն թողնում է նույն տեղում, որտեղ մարդը գտնվում էր՝ առանց ճշմարտության:

Ուրեմն, եկե՛ք կրկնենք՝ մինչև հասկանանք հետևյալի տրամաբանությունը. կարելի է կառուցել մեկ ճշմարիտ Եկեղեցի, որը չպետք է հակասի ինքն իրեն, որը պետք է ունենա ամբողջ ճշմարտությունը, և որը պետք է կարողանա բացատրել տարբերությունը ճշմարտության և կեղծիքի միջև:

«Աշխարհը չի կարող գտնել քեզնից առավել հզոր օգնական: Աշխարհն ունի իր առաքյալները, մարգարեները, մարտիրոսները, խոստովանողները, կույսերը, բարեպաշտ օգնականները, որոնց ես դիմում եմ աղոթքով: Բայց դո՛ւ, իմ Թագուհի՛, ավելի բարձր ես այդ բոլոր բարեխոսներից: Այն, ինչ նրանք բոլորը կարող են անել քեզ հետ միասին, դու կարող ես անել առանց նրանց:

Եվ ինչո՞ւ: Որովհետև դու մեր Փրկչի Մայրն ես: Եթե դու լռես, ոչ ոք չի աղոթի և չի գա մեզ օգնելու: Եթե դու աղոթես, բոլո՛րը կաղոթեն, բոլո՛րը կօգնեն» (Սբ Անսելմոս, «Oratio Eccl.»):

9. ՇՓՈՒՄԸ ԲԱԶՄՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Առաքելական գործունեության նպատակն է՝ Եկեղեցու ամբողջ հարստությունը բերել յուրաքանչյուր անհատի: Այս աշխատանքի հիմքը պետք է լինի մեկ ջերմ հոգու անհատական և հետևողական հպումը մեկ այլ հոգու, որը տեխնիկական հասկացությամբ անվանում ենք «կապ»: Այն չափով, որքանով որ այդ անհատական «կապը» թուլանում է, նույն չափով էլ թուլանում է իրական ազդեցությունը: Երբ մարդիկ դառնում են բազմություն, հակված են խուսափել մեզնից: Կարող ենք թույլ տալ, որ ամբոխը մեզ հեռու պահի անհատից: Այդ բազմությունը կազմված է անհատներից, որոնցից յուրաքանչյուրը մի անգին հոգի է: Այդ բազմության

յուրաքանչյուր անդամ ունի իր անձնական կյանքը, բայց նրանց ժամանակի մեծ մասն անցկացնում են բազմություն-ների մեջ որևէ կերպ՝ փողոցում կամ հավաքվելով ինչ-որ վայրում: Մենք պետք է այդ բազմությունները վերածենք անհատների և այդպիսով հնարավոր դարձնենք նրանց հոգիների հետ մեր կապը: Ինչպե՞ս է Տիրամայրը նայելու այդ բազմություններին: Նա Մայրն է այդ բազմությունների մեջ գտնվող յուրաքանչյուր անհատ հոգու: Նա պետք է որ մտահոգ լինի նրանց կարիքներով, և նրա սիրտը պետք է որ կարոտ լինի, որպեսզի ինչ-որ մեկն օգնի իրեն իր մայրական աշխատանքում:

Հասարակական վայրում գրքի անկյուն ունենալու արժեքի մասին արդեն խոսել ենք, բայց կարելի է կատարել բազմություններին ուղղված առանձին և ընդգրկուն առաքե-լություն՝ որպես առանձին աշխատանք: Մարդկանց մոտե-նալը՝ քաղաքավարությամբ խնդրելով զրուցել հավատքի թեմաների շուրջ, կարող է առաջնորդել արդյունավետ կապեր ստեղծելուն: Այսպես մարդկանց կարելի է մոտե-նալ փողոցում, այգում, հասարակական կենտրոններում, երկաթգծի կայարանների և ավտոբուսների կանգառների հարևանությամբ և այլ հասարակական վայրերում, որտեղ մարդիկ են հավաքվում: Փորձառությունը ցույց է տվել, որ այդպիսի մոտեցումն ընդհանրապես լավ է ընդունվում: Այս աշխատանքում ներգրավված լեգեոնականները պետք է հիշեն, որ իրենց խոսքը և վարվելաձևը մարդկանց հետ կապ հաստատելու իրենց գործիքներն են: Հետևաբար, նրանք պետք է լինեն ոչ հավակնոտ և հարգանքով: Քննարկման ժամանակ նրանք պետք է խուսափեն որևէ բառից, որով կարելի կլինի ենթադրել, թե նրանք կռվում են դիմացինի հետ, կամ որևէ բանից, որը հնչում է քարոզի նման, կամ օրենք բացատրելու նման, կամ վերադասի նման խոսելուց: Լեգեոնականները պետք է ամուր կերպով համոզված լինեն, որ Մարիամը՝ Առաքյալների Թագուհին, կշիռ է հաղորդում անգամ իրենց ամենաթույլ բառին, և որ Մարիամը անսահ-մանորեն մտահոգ է իրենց առաքելությունը պտղաբեր դարձնելու համար:

10. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱԹՈՂԻԿԷ ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Սա կարելի է իրականացնել որպես տնայցերի մի մաս կամ որպես հատուկ մի աշխատանք: Կաթողիկէ տնային աշխատողները, շատ հաճախ տեղավորված լինելով հավատքի հանդեպ անտարբեր կամ թշնամաբար տրամադրված տներում, համարվում են պարզապես մեքենաներ, մեկուսացված՝ հաճախ լինելով գաղթականներ կամ ներգաղթյալներ՝ առանց ընկերների, և այս պարագայում նրանց մնում է հաստատել պատահական ծանոթություններ, որոնք լի են աղետալի վտանգներով. այս ամենը նկատի ունենալով՝ կաթողիկէ մկրտությամբ տնային աշխատողները կարիք ունեն հատուկ խնամքի և աջակցության: Նրանց հետ կապ հաստատելը շատ կարևոր առաքելություն է:

Նրանց համար լեգեոնականների կանոնավոր այցելությունները, որոնք մտահոգ են նրանց բարեկեցության համար, կլինեն լույսի ճառագայթների նման: Այդ աշխատանքի հիմնական նպատակը պետք է լինի նրանց ներգրավելը կաթողիկէ հասարակությունների կամ ակումբների մեջ, պատշաճ մարդկային մտերմության մեջ և գուցե, շատ դեպքերում, նույնիսկ լեգեոնական անդամակցության մեջ: Այս աշխատանքը կօգնի շատերին ուղղորդել դեպի նոր և առավել երջանիկ ճանապարհները, որոնք տանում են դեպի ապահովություն և սրբություն:

«Առաջին հայացքից մենք կարող էինք ակնկալել, որ Աստծո Մոր հանդեպ, գոնե նրա երկրային կյանքի մի որոշ ժամանակահատվածում, մեծ տեղ և պատիվ տրվեր: Բայց որքան տարբեր էր Աստծո նախախնամությամբ կարգադրված իրականությունը: Մենք տեսնում ենք Մարիամին իր աղքատ տան մեջ՝ կատարելով այնպիսի խոնարհ պարտականություններ, ինչպես, օրինակ, հատակ ավլելը, սպիտակեղեն լվանալը, ճաշ պատրաստելը, սափորը գլխին դրած՝ դեպի ջրհոր գնալն ու գալը, զբաղված այնպիսի աշխատանքով, որը մենք Հիսուսի, Մարիամի և Հովսեփի օրինակին առերեսվելով՝ համարձակվում ենք անվանել «պարզունակ»: Մարիամի ձեռքերը, անկասկած, կարմրել և կոպտացել էին ծանր աշխատանքից, նա հաճախ հյուծված և գերհոգնած էր՝ բեռնավորված աշխատավոր կնոջ հոգսերով» (Վասսալ-Ֆիլլիփս, «Աստծո Մայրը»):

11. ԱՇԽԱՏԱՆՔ ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ

Այսպիսի մարդկանց կյանքի հանգամանքները նրանց ստիպում են անուշադրության մատնել կրոնը և խոցելի դառնալ շատ սխալների համար: Հետևաբար՝ նրանց ուղղված առաքելությունը կրկնակի անգամ ցանկալի է:

ա. Քանի որ քաղաքացիական անձանց համար զինված ուժերի հաստատությունները կարող են ոչ միշտ հասանելի լինել, զինվորների համար արդյունավետ աշխատանքը կարող է պահանջել զինվորներից կազմված պրեզիդիումների հիմնադրումը: Սա արդեն իսկ արվել է շատ տեղերում՝ ակնհայտ հաջողությամբ:

բ. Ծովագնացների համար աշխատանքը կարող է պահանջել այցելություններ նավերի վրա և ափին գտնվող ծովային ենթակառուցվածքներ: Այս աշխատանքը նախաձեռնող պրեզիդիումները պետք է կապ հաստատեն Apostolatus Maris ճանաչված միջազգային հասարակության հետ, որն ունի մասնաճյուղեր ծովային հաղորդակցություն ունեցող երկրներում:

գ. Լեգեոնականները պետք է բծախնդրորեն հարգեն զինվորական և ծովային կարգապահությունը: Նրանց գործողությունները երբեք չպետք է հակադրվեն կարգուկանոնին կամ ավանդություններին: Լեգեոնականները գործնականում պետք է ձգտեն իրենց առաքելության համար վաստակել անվերապահ ընդունելություն, քանի որ այն համակողմանիորեն բարձրացնում է անձնակազմին և բացառապես մի հավելում է այդ ծառայություններին, և ավելին՝ մի դրական անհրաժեշտություն է:

դ. Ճանապարհորդող մարդիկ, գնչուները և կրկեսի անձնակազմերը, գաղթականներն ու փախստականները ևս պետք է լինեն լեգեոնական առաքելության տիրույթում:

«Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող մեծ փոփոխությունների մեջ գաղթը հանգեցրել է մի նոր երևույթի՝ ավանդաբար քրիստոնյա երկրներում ոչ քրիստոնյաների թիվն ավելանում

է՝ ստեղծելով նոր հնարավորություններ կապերի հաստատման և մշակութային շփումների համար և Եկեղեցուն հրավիրելով հյուրընկալության, երկխոսության, աջակցության ու, մեկ բառով, եղբայրասիրության: Գաղթականների մեջ փախստականներն արժանի են ամենամեծ ուշադրությանը: Այսօր աշխարհում կան բազմամիլիոն փախստականներ, և նրանց թիվը հարատևորեն աճում է: Նրանք փախել են քաղաքական ճնշումներից և անմարդկային թշվառությունից, սովից և աղետալի չափերի հասնող երաշտից: Եկեղեցին պետք է նրանց ներառի իր առաքելական համընդհանուր մտահոգության տիրույթում» (RM 37 (b)):

12. ԿԱԹՈՂԻԿԷ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Մեծ թվով մարդկանց կյանքը, ինչպես, օրինակ, Սբ Օգոստինոս Հիպպոնացու և Սբ Իգնատիոս Լոյոլացու կյանքը, ցույց են տալիս, թե ինչպես է ազդեցիկ գրքերի ընթերցումը, որը խորհուրդ են տվել իրենց կողմից հարգված մարդիկ, վճռորոշ դեր խաղացել նրանց դեպի վսեմ իրողություններն առաջնորդելու գործում: Կաթողիկէ գրականության տարածումը մեծ հնարավորություններ է առաջարկում առաքելական կապերի հաստատման համար՝ տարբեր տեսակի անձանց հետ, որոնց կարելի է հեշտությամբ հասցնել կաթողիկէ հավատքի բովանդակությունը: Աշխարհիկ իրականության մեջ ապրող մարդիկ՝ առանց չափահասների համար նախատեսված շարունակական կրոնական կրթության, աննախանձելի վիճակում են: Եկեղեցին նրանց սովորեցնում է մի աշխարհ, բայց նրանք ապրում են մեկ այլ աշխարհում: Աշխարհիկացած աշխարհի ձայնն ավելի բարձր է հնչում, քան Եկեղեցու ձայնը: Այս անհամաչափությունը պետք է ուղղվի: Քրիստոնյան լիազորված է շահել աշխարհիկացած աշխարհը Քրիստոսի համար: Սա պահանջում է, որ մենք ունենանք ճիշտ, այսինքն՝ քրիստոնեական արժեքներ և վերաբերմունք:

Առանց թերագնահատելու հաղորդակցության այլ ձևերը՝ պետք է ասել, որ ընթերցումը, այսինքն՝ սովորելու նպատակով ընթերցումը, գաղափարների շատ հարուստ և ազդեցիկ աղբյուր է: Քիչ, բայց կանոնավոր կերպով կատարված

ընթերցանությունը շատ ավելի օգտակար է, քան ըստ ցանկության, բայց հազվադեպ կատարված ընթերցանությունը: Լուրջ խնդիր կա՝ մարդկանց տրամադրելու դեպի հոգևոր գրքերի ընթերցանությունը: Հարկավոր է շարժել նրանց հետաքրքրությունը, և որպեսզի հետաքրքրությունը չկորի, ընթերցանության նյութը պետք է լինի դյուրին և հասկանալի: Ահա՛ մի քանի հուշում կաթողիկէ առաքելության համար:

Կրոնական գրքերի և թերթոնների կողքին կան կաթողիկէ թերթեր և ամսագրեր, որոնց նպատակն է՝ 1. ներկայիս իրողությունների ողջամիտ համադրումը, 2. լինել անհրաժեշտ սրբագրիչ՝ աղավաղված հայացքների կամ հաշվարկված լռությունների համար, 3. վերանայել և առաջարկել ուղեցույց լրատվամիջոցների ներկա հաղորդումների ընկալման համար, 4. զարգացնել առողջ հպարտություն և մտահոգ հետաքրքրություն Տիեզերական Եկեղեցու իրողությունների վերաբերյալ, և 5. ճաշակ զարգացնել առավել տևական ընթերցանության հանդեպ:

Տպագիր խոսքից բացի, հավատքի փոխանցման գործում արժեքավոր դեր ունի տեսալսողական հաղորդակցությունը:

Կրոնին առնչվող որևէ նյութ օգտագործելուց առաջ միշտ կարևոր է վստահելի աղբյուրից հավաստիանալ, թե արդյոք այն ամբողջությամբ համապատասխանո՞ւմ է Եկեղեցու ուսմունքին: Ինքնուրույն ձևաչափով կաթողիկէ հրատարակությունները պետք է արժանի լինեն կաթողիկէ կոչվելուն: «Անունները չեն, որ վստահություն են ներշնչում իրերի հանդեպ, այլ իրերն են, որ վստահություն են ներշնչում անունների հանդեպ» (Սբ Հովհան Ոսկեբերան):

Կաթողիկէ գրականության փորձված և ստուգված միջոցներից են. 1. տնետուն հարցախույզ անելը բաժանորդագրության համար, 2. թերթերի կամ պարբերականների առաքումը տները, 3. աշխատել եկեղեցական գրավաճառակետերում և գրախանութներում, 4. տեղադրել գրքի շարժական կետեր և անկյուններ հասարակական վայրերում, 5. օգտվել պատրիկների աշխատանքից՝ նորագույն գրականություն առաջարկելու համար:

Գրքերի ցուցադրությունը և դրանց ցուցափեղկերը պետք է լինեն գրավիչ և լավ մտածված: Կաթողիկէ Եկեղեցին ներկայացնելիս լավ չէ օգտագործել թափթփված, պատահական մեթոդներ:

Կաթողիկէ գրականություն բաժանելու նպատակով կատարված այցելությունների ընթացքում լեգեոնականները պետք է ջանան իրականացնել առաքելություն՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամին վրա դրական ձևով ազդելու համար:

«Մարիամը Հիսուսի անբաժան գործակիցն է: Մայրը մշտապես և ամենուրեք իր Որդու կողքին է: Հետևաբար, մեզ Աստծո հետ կապողը, մեզ Երկնային պարգևներ շնորհողը ոչ թե միայն Քրիստոսն է, այլև այդ Երանելի Զույգը՝ Կինը և նրա Սերունդը: Հետևաբար, կրոնական պաշտամունքի մեջ Մարիամին Հիսուսից բաժանելը նշանակում է խախտել Աստծո կողմից հաստատված կարգը» (Թերիեն, «La Mère des Hommes»):

13. ՏԱՐԱԾԵԼ ԱՄԵՆՕՐՅԱ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ՋԵՐՄԵՌԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

«Ցանկալի է, որ հավատացյալները՝ հնարավորինս մեծ թվով, ամեն օր ակտիվորեն մասնակցեն Սուրբ Պատարագին, օգտվեն Սուրբ Հաղորդության մաքուր և սուրբ հոգևոր նորոգումից, պատշաճ ձևով գոհություն հայտնեն մեր Տեր Քրիստոսի մեծ պարգևի համար: Ահա՛ այն բառերը, որոնք պետք է հիշել. «Հիսուս Քրիստոսը և Եկեղեցին փափագում են, որ Քրիստոսի բոլոր հավատացյալներն ամեն օր մասնակից լինեն սրբազան սեղանին: Այդ փափագի նպատակն է, որպեսզի նրանք միանան Աստծո հետ այդ Սուրբ Խորհրդի միջոցով և զորություն ստանան՝ զսպելու համար կիրքը, որպեսզի լվացվեն ամենօրյա թեթև մեղքերը, որպեսզի կանխարգելվեն առավել ծանր մեղքերը, որոնց ընդունակ է մարդկային տկարությունը: (AAS 38 (1905), 401) Պահանջվում է ավելին: Ծիսական օրենքները պահանջում են, որպեսզի Սուրբ Հաղորդությունը եկեղեցիներում պահվի

մեծագույն հարգանքով և ամենակարևոր վայրում: Հավատացյալները պետք է հաճախակի այցելություն կատարեն Սուրբ Հաղորդությանը, որովհետև դա երախտագիտության ապացույց է, սիրո գրավական է, երկրպագություն Սուրբ Հաղորդության մեջ ներկա Տեր Քրիստոսին» (MF 66):

Սա գուցե պետք է իրականացվի ավելի շուտ ոչ թե որպես աշխատանք, այլ՝ որպես յուրաքանչյուր լեգեոնականի գործունեության մի մասը, որը պետք է հիշել և կատարել մեծ եռանդով: Տե՛ս 8-րդ Գլուխը՝ «լեգեոնականը և Սուրբ Հաղորդությունը»:

«Մենք տեսնում ենք, թե ինչպես է Սուրբ Հաղորդությունը, լինելով զոհաբերություն և Սուրբ Խորհուրդ, իր առատ հարստության մեջ հանրագումարի բերում այն ամենը, ինչ Խաչն ընծայաբերեց Աստծուն և ապահովեց մարդկության համար: Սուրբ Հաղորդությունը միաժամանակ Գողգոթայի Արյունն է և Երկնքի ցողը՝ ողորմություն աղաղակող Արյունը և կենսաբեր ցողը, որ վեր է բարձրացնում թառամող տունկը: Այն մեզ համար վճարված գինն է և մեզ համար բերված օրհնությունն է: Այն կյանք է և կյանքի գինն է: Ո՛չ Խաչը և ո՛չ էլ Վերջին Ընթրիքը, կամ երկուսը միասին՝ ավելի մեծ արժեք չունեն, քան Սուրբ Հաղորդությունը, և այս Սուրբ Խորհուրդը լի է մարդկության հույսերով: Այս պատճառով Սուրբ Պատարագը կոչվում է Հավատքի Խորհուրդ՝ ոչ միայն որովհետև դրանում հանրագումարի է բերված քրիստոնեական ամբողջ վարդապետությունը (որը Ադամի մեջ մեր անկման և Հիսուս Քրիստոսի մեջ մեր վերականգնման վարդապետությունն է), այլ նաև և գլխավորապես այն պատճառով, որ այն դրաման, հերոսական գործը, որի միջոցով ձեռք բերվեց մարդկության վսեմ բարձրացումը և գերառատ փոխհատուցումը մեր նախկին կորուստների համար, շարունակվում է մեր մեջ Սուրբ Հաղորդության միջոցով: Եվ դա կրկնություն չէ՝ մի պարզ խորհրդանշանի միջոցով, այլ գործնականում իրականացնում է մեր մեջ այն, ինչ կատարեց Ինքը՝ Քրիստոսը» (Դե լա Թայլ, «Հավատքի Խորհուրդը»):

14. ՕԺԱՆԴԱԿ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԽՆԱՄՔԸ ՆՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ

Յուրաքանչյուր պրեզիդիում, որը գնահատում է աղոթքի զորությունը, կձգտի ունենալ մեծ թվով օժանդակ

անդամներ: Յուրաքանչյուրի պարտականությունն է՝ հավաքագրել օժանդակ անդամներ և ջանալ կապ պահել նրանց հետ:

Նկատի առե՛ք, որ օժանդակ անդամները Լեգեոնին են նվիրել իրենց հոգիների թանկարժեք շնչառությունը: Սրբության ինչպիսի՛ հնարավորություններ ունեն նրանք: Լեգեոնը մեծապես պարտական է նրանց: Լեգեոնը կարող է փոխհատուցել այդ պարտավորության դիմաց՝ օժանդակ անդամներին առաջնորդելով դեպի կատարելություն: Թե՛ ակտիվ, թե՛ օժանդակ անդամները հավասարապես Լեգեոնի զավակներ են: Ակտիվ անդամներն ավագ զավակներն են, և Լեգեոնի Մայրը, ինչպես բոլոր ընտանիքներում, կուզենա, որ նրանք օգնեն իրեն կրտսեր զավակների հանդեպ հոգատարության մեջ: Մայրը պարզապես չի վերահսկելու այդ աջակցությունը: Նա այդ աջակցությունը կդարձնի արդյունավետ, այնպես որ օժանդակ անդամների նկատմամբ հետագա «խնամքը» հրաշալի պտուղներ կունենա թե՛ ակտիվ, թե՛ օժանդակ անդամների համար: Օժանդակ անդամների հոգիների մեջ այդ խնամքի արդյունքում բարձրանում է սրբության մեծ շինությունը, և ակտիվ լեգեոնականի համար պատրաստված է շինարարի վարձատրություն:

Օժանդակ անդամների համար տարվող այս աշխատանքն այնքա՛ն լի է հնարավորություններով, որ կարիքն ունի պրեզիդիումի բարձր հոգևոր նկարագիր ունեցող անդամների հատուկ ուշադրության, որոնք դա պետք է անեն «ավագ որդիների» նման:

«Կարծում եմ՝ ակնհայտ է, որ սարսափելի մեղքի և Աստծո հանդեպ ատելության այս օրերին մեր Օրհնյալ Տերն ուզում է Իր շուրջը հավաքել ընտրյալ հոգիների մի լեգեոն, որոնք սրտով և հոգով նվիրված կլինեն Իրեն և Իր շահերին, և որոնց կարող է միշտ վստահել աջակցության և մխիթարության համար, այնպիսի մարդկային հոգիների, որոնք չեն հարցնի, թե «Ինչքա՞ն պետք է անեմ», այլ ավելի շուտ՝ «Ինչքա՞ն շա՛տ բան կարող եմ անել Նրա սիրո համար», այնպիսի հոգիների լեգեոն, որոնք կտան և չեն հաշվարկի գինը, որոնք ցավ կզգան միայն այն բանի համար, որ չեն կարող անել և տալ ավելի՛ շատ, և ավելի շատ տառապել Նրա համար, Ով այդքա՛ն շատ բան է արել իրենց համար, մեկ խոս-

քով՝ հոգիներ, որոնք նման չեն մնացած մարդկանց, և որոնք գուցե հիմարներ են աշխարհի աչքերում, որովհետև նրանց լոգունգը զոհաբերությունն է և ոչ թե սեփական հարմարավետությունը» («Հ. Ուիլյամ Դոյլի կյանքը», Գերհ. Ալֆրեդ Օ'Ռահիլի)։

«Հետո փոքրիկ հոգիների լեգեոնը, ողորմած սիրո զոհերի լեգեոնը կդառնա բազմաթիվ՝ ինչպես «երկնքի աստղերը և ծովափի ավազը»։ Այն սարսափելի կլինի սատանայի համար, այն կօգնի Երանելի Կույսին՝ ճզմելու օձի գլուխն ամբողջությամբ» (Սբ Թերեզա դը Լիզյո)։

15. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Առաքելությունների համար մտահոգությունն իսկական քրիստոնեական կյանքի անբաժանելի մասն է։ Այն ենթադրում է աղոթք, նյութական աջակցություն և առաքելական կոչումների խրախուսում՝ համաձայն յուրաքանչյուրի պայմանների։

Լեգեոնականները, օրինակ, կարող են առաջնորդել Սուրբ Մանկության միավորման մի մասնաճյուղ և շրջապատվեն մանուկներով, որոնց մեջ կներշնչեն սեր առաքելություններ կատարելու հանդեպ։ Լեգեոնականները կարող են նաև հավաքել այնպիսի անձանց խումբ, որոնք հարմար չեն ամբողջական լեգեոնական անդամակցության համար (գուցե հնարավոր է նրանց կազմակերպել որպես օժանդակ լեգեոնականներ) և նրանց խնդրել կատարել կարի, հագուստների պատրաստության աշխատանքներ և այլն... Կարելի է երեք աշխատանքները միացնել միմյանց՝ հետևյալ կերպ՝ ա. լեգեոնականը սրբանում է, բ. օգնում է ուրիշներին սրբանալ, գ. լեգեոնականը գործնականում օգնում է այլ առաքելությունների։

Այս աշխատանքի հետ կապված հատկապես անհրաժեշտ է ընդգծել երկու կետ, որոնք սակայն ունեն ընդհանուր հասցեականություն.

ա. ոչ մի պրեզիդիում չպետք է վերածվի պարզապես հավաքող մի գործակալության՝ ինչ նպատակով էլ լինի,

բ. կարուձևի մեջ ներգրավված մարդկանց աշխատանքի վերահսկումը և կարգավորումը պետք է համարվի բավարար աշխատանքային պարտավորություն: Բայց կարի աշխատանքը, որպես այդպիսին, չի կարող ներկայացնել էական ակտիվ աշխատանք չափահաս լեգեոնականի համար՝ բացի շատ հատուկ հանգամանքներից, ինչպես, օրինակ, գործնական ֆիզիկական հաշմանդամությունը:

«Զորս հասարակությունները՝ Հավատքի քարոզության, Սբ Պետրոսի Առաքյալի, Սուրբ Մանկության և Առաքելությունների Միության հասարակությունները, ունեն ընդհանուր նպատակ՝ Աստծո ժողովրդի մեջ զարգացնել համընդհանուր առաքելական ոգին» (RM 84):

16. ԽՐԱԽՈՒՍԵԼ ՀՈԳԵՎՈՐ ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անձնապես ունենալով հոգևոր կրթության դրական փորձառությունը՝ լեգեոնականները պետք է իրենք կազմակերպեն հոգևոր կրթություններ, տարածեն դրա գաղափարը և հաստատեն այնտեղ, որտեղ դեռևս չի կազմակերպվում:

Սա Ն. Ս. Պիուս ԺԱ Պապի հորդորն է, որ գտնում ենք ստորև մեջբերված նրա շրջաբերական նամակում՝ ուղղված «բարեպաշտ աշխարհականներին, որոնք փափագ ունեն ծառայելու Առաքելական Նվիրապետությանը կաթողիկէ շարժումների և տարբեր աշխատանքների միջոցով: Այս հոգևոր կրթությունների ընթացքում նրանք հստակ կտեսնեն հոգիների արժեքը և կբոցավառվեն նրանց օգնելու ցանկությամբ, նաև կսովորեն առաքելություն կատարելու ոգին, ջանասիրությունը, գործերի արիությունը»:

Կարևոր է այդ մեծ Պապի կողմից արված շեշտադրությունը առաքյալներ ձևավորելու անհրաժեշտության մասին: Երբեմն այդ նպատակի ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվում, առաքյալներ չեն հայտնվում: Այդ պարագայում կասկածելի է մնում այդ հոգևոր կրթությունների օգտակարությունը:

Լեգեոնականները չպետք է հրաժարվեն հոգևոր կրթության կազմակերպումից՝ այն պատճառաբանությամբ, թե գիշերակացի ապահովման հնարավորություններ չկան: Գործնական փորձառությունն ապացուցել է, որ մեկօրյա հոգևոր կրթությունը՝ առավոտից մինչև երեկո տևողությամբ, ևս լավ պտուղներ է տալիս. իրականում սա՛ է միակ ճանապարհը հոգևոր կրթության համակարգը մեծ թվով մարդկանց հասանելի դարձնելու համար: Գրեթե ցանկացած տեսակի շինություն՝ որոշակի հարակից տարածքներով, կարող է օգտագործվել այդ նպատակով՝ մեկ օրվա համար, և որոշ պարզ ճաշատեսակների ապահովումը մեծ ծախսեր չի պահանջի:

«Աստվածային Վարդապետն Ինքն իր աշակերտներին սիրում էր հրավիրել հոգևոր կրթության մտերմիկ լռությանը. «Եկե՛ք առանձին ամայի մի տեղ և մի քիչ հանգստացե՛ք» (Մրկ. 6:31): Երբ նա թողեց այս վշտերի երկիրը՝ երկինք բարձրանալու համար, կամեցավ, որ այդ նույն առաքյալները և իր աշակերտները հղկվեն և կատարելագործվեն Երուսաղեմի վերնատանը: Այդ պատճառով նրանք տասն օր անցկացրին՝ «լինելով մեկ սիրտ և մեկ հոգի» աղոթքով (Գրծք. 1:14), և արժանացան ընդունելու Սուրբ Հոգին: Սա, անշուշտ, հիշարժան հոգևոր կրթություն էր՝ նախաստվերը հոգևոր վարժանքների, որից Եկեղեցին դուրս եկավ՝ օժտված առաքինություններով և հավերժական զորությամբ, և որի շնորհիվ, Սուրբ Կույս Մարիամ Աստվածածնի ներկայությամբ և հովանավորությամբ ի հայտ եկան նրանք, ում կարող ենք իրավացիորեն կոչել կաթողիկէ շարժումների նախակարապետները» (MN 5):

17. ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀՐԱԺԱՐՄԱՆ ՍՈՒՐԲ ՍՐՏԻ ԱՌԱՋԱՄԱՐՏԻԿ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

Պրեզիդիումների համար անկասկած հիանալի գործունեություն կարող է լինել այս միավորման համար անդամների հավաքագրումը: Այս միավորման առաջնային նպատակը Աստծո փառքն է՝ զգոնության և զսպվածության զարգացման միջոցով: Իսկ այդ նպատակին հասնելու հիմնական միջոցներն են աղոթքը և զոհողությունները: Այս միավորման անդամները ոգեշնչված են Քրիստոսի հանդեպ իրենց

անձնական սիրով՝ ա. ալկոհոլից անկախ լինելու և բարիք գործելու համար, բ. հատուցում կատարելու՝ սեփական ինքնաթողության՝ ներառյալ սեփական մեղքերի համար, գ. աղոթքի և զոհողությունների միջոցով ընդունելու շնորհ և զորակցություն նրանց համար, ովքեր խմում են առանց չափի, և նրանց համար, ովքեր տառապում են չափից դուրս խմելու պատճառով:

Այդ միավորման անդամների հիմնական պարտավորություններն են՝ 1. մինչև կյանքի վերջ հրաժարվել ամեն տեսակ ալկոհոլային խմիչքից, 2. օրական երկու անգամ աղոթել «Հերոսական ընծայաբերում» աղոթքը, 3. հրապարակավ կրել տարբերանշանը:

Ահա՛ «Հերոսական ընծայաբերում» աղոթքը.

«Ո՛վ Սուրբ Սիրտ Հիսուսի,

Քո առավել մեծ փառքի և մխիթարության համար,

Հանուն Քեզ՝ բարի օրինակ տալու համար, ինքնահրաժարման համար,

Զսպվածության դեմ գործված մեղքերի դիմաց Քեզ հատուցելու համար, և հարբեցողների դարձի գալու համար,

Ես մինչև կյանքիս վերջը կհրաժարվեմ ամեն տեսակ թունավոր խմիչքներից»:

Գոյություն ունի մի կարգավորում, 1. ըստ որի՝ որևէ պրեզիդիում կարող է, այդ միավորման գլխավոր տնօրենի արտոնությամբ, ստեղծել այդ միավորման պատկանող կենտրոն, 2. ըստ որի՝ այն տարածքներում, որտեղ արդեն գոյություն ունի այդ միավորման կենտրոն, թույլ տրվի Լեգեոնի պրեզիդիումի ստեղծումը՝ գոյություն ունեցող կենտրոնի հավանությամբ, որպեսզի այդ պրեզիդիումը կցվի միավորման կենտրոնին միավորման համար անդամների հավաքագրման նպատակով (տե՛ս հավելված 9):

18. ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԿԵՆՏՐՈՆ ՈՒՆԻ ԻՐ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐԸ

Լեգեոնականները պետք է գործադրեն ցանկացած այլ միջոց Լեգեոնի նպատակներին հասնելու համար, որոնք կթույլատրեն տեղի հանգամանքները և Լեգեոնի

ղեկավարությունը՝ միշտ համաձայնեցնելով, անշուշտ, եկեղեցական իշխանությունների հետ: Եվս մեկ անգամ պնդում ենք, որ հնարավոր աշխատանքների վերաբերյալ հայեցակարգը պետք է հիմնված լինի նախաձեռնողականության և համարձակության վրա:

Հերոսության որևէ գործ՝ կատարված կաթողիկէ դրոշի ներքո, տեղական մարդկային մտածողության վրա թողնում է մի ազդեցություն, որը կարող ենք բնորոշել որպես լիցքավորող: Բոլորը, նույնիսկ անկրոն անձինք, կրոնին սկսում են մեկ ակնթարթում նոր լրջությամբ վերաբերվել կրոնին: Այդ նոր չափանիշները կձևավորեն ամբողջ բնակչության կենսակերպը:

««Մի՛ վախեցեք». ասաց Հիսուսը: Ուրեմն, եկե՛ք մի կողմ թողնենք վախը: Մենք չենք ուզում, որ մեր մեջ լինեն վախկոտներ: Եթե երբևէ կարիքը կա կրկնելու Քրիստոսի այդ խոսքը՝ «Մի՛ վախեցեք», ապա, անկասկած, դա պետք է անել առաքելության առնչությամբ: Որովհետև վախը մարդկային միտքը դարձնում է գործելու անկարող և մեզ զրկում է ճշգրիտ դատելու կարողությունից: Ուրեմն, նորից եմ ասում, պետք է հեռացնենք վախը մեզնից, ամեն տեսակ վախերը՝ բացի մեկ տեսակից, որ երկյուղն է Աստծուց: Երբ ունեք աստվածավախություն, ապա չեք վախենա ո՛չ մարդկանցից, ո՛չ այս աշխարհի ոգիներից:

Իսկ ինչ վերաբերում է ողջամտությանը, ապա այն պետք է լինի այնպիսին, ինչպես այն բնորոշում է Սուրբ Գիրքը և չի հոգնում կրկնել. Աստծո որդիների ողջամտությունը, հոգու ողջամտությունը: Այն չպե՛տք է լինի և չէ՛ մարմնի ողջամտությունը՝ թույլ, ծույլ, հիմար, եսասեր, թշվառ» (Պիուս ԺԱ Պապի ճառը, 17 մայիսի, 1931թ.):

38

ՊԱՏՐԻԿՆԵՐԸ

Պատրիկների հասարակությունը հիմնադրվեց 1955թ.: Նպատակն է՝ կառուցել մարդկանց կրոնական գիտելիքները, սովորեցնել ինքնարտահայտվել և քաջալերել, որպեսզի

առաքելություն կատարեն: Այդ մեթոդը նախատեսվել էր որպես փորձնական, բայց այն մնաց անփոփոխ: Թեև սկզբում շատերը մտածում և առաջարկում էին փոփոխություններ, սակայն պարզ դարձավ, որ դրանք պարզապես արդեն հաստատված այլ մեթոդների կրկնություններ էին, ինչպես, օրինակ, կրոնագիտության դասընթացի, դասախոսության համակարգի, հարցուպատասխանի մեթոդների: Այդ ամենն ունեն իրենց էական դերակատարությունը, բայց դրանք չեն լուծում այն, ինչ, հավանաբար, Եկեղեցու արմատական խնդիրն է՝ չափահասների կրոնական անգրագիտությունը և աշխարհականների կաթվածահար լեզուները: Պատրիկներն այդ ոլորտում աշխատեցին բավական արդյունավետ, և հետևաբար, նրանց պետք է պահել նախանձախնդրությամբ: Դա մի նրբորեն հավասարակշռված համակարգ է: Մի փոքրիկ միջամտություն անգամ կարող է ամբողջովին փոխել այն՝ ճիշտ ինչպես ռադիոյի ալիքների չնչին փոփոխությունը տանում է ուրիշ ռադիոկայանի հաղորդման:

Մյուս համակարգերը խոսելու լավ հմտությամբ մեկ կամ փոքրաթիվ անձանց օգնում են ուղղորդել մի քանի այլ անձանց, մինչդեռ Պատրիկների մեթոդը ինքնին Լեգեոնի մեթոդն է՝ միասնական մոտեցում ցուցաբերել խնդրին: Բոլորն աշխատում են միասին՝ գիտելիք ձեռք բերելու համար:

Վերլուծությունը ցույց է տվել, որ Պատրիկների հաստատությունը Լեգեոնի իսկական զավակն է, որովհետև այն պարունակում է այն զանազան առանձնահատկությունները, որոնք միասին կազմում են ինքնին Լեգեոնը. դա Լեգեոնի համակարգի արտապատկերումն է՝ կրոնական կրթության ոլորտում:

Պատրիկների մեջ նախագահում է Մարիամը: Նա է, ով ծնեց Հիսուսին և տվեց աշխարհին: Մարիա՛մն է առաջնորդել հետագայում Հիսուսին աշխարհին փոխանցելու գործընթացը: Մարիամի այդ գերիշխանությունն արտահայտվում է Լեգեոնի խորանի միջոցով, որը պետք է լինի Պատրիկների հանդիպումների առանցքային կետը: Պատրիկները հավաքվում են Մարիամի շուրջ՝ խոսելու համար Եկեղեցու մասին՝ իր բոլոր կողմերով, այսինքն՝ Հիսուսի

մասին, Ով ներկա է նրանց մեջ՝ համաձայն Իր խոստման: Սա աղոթքի մի գերազանց ձև է, որը հեշտացվել է՝ հանդիպման հարուստ բովանդակությամբ. այլապես դյուրին չէր լինի երկու ժամ շարունակ անցկացնել կանոնավոր աղոթքի մեջ: Սա մի պատճառ է՝ ասելու համար, թե ինչու է Պատրիկների հանդիպումն ապահովում հոգևոր զարգացում:

Պրեզիդիումի մեջ առաջնային պահանջը բոլոր անդամներից բանավոր զեկույցում լսելն է: Պատրիկների հանդիպման նպատակը ևս նույն նոտայի վրա է. առաջնային նպատակն է՝ յուրաքանչյուրից լսել բանավոր խոսք: Հանդիպման կառուցվածքը և վարումն ունեն այդ նպատակը: Հանդիպման մթնոլորտը պետք է լինի մտերմիկ, միմյանց գնահատելու սկզբունքով, ըստ էության, մի լավ ընտանիքի նման, որտեղ, թեև ոմանք ավելի շատ են խոսում, քան մյուսները, բայց բոլորն են արտահայտում սեփական կարծիքը: Այդ մթնոլորտը կախված է հակադիր երևույթների բացակայությամբ: Հասարակական վիճաբանությունների սովորական ռազմավարությունը հիմնված է հարձակման, դատապարտման, ծաղրանքի վրա: Եթե Պատրիկների հանդիպման ժամանակ այսպիսի բաներ լինեն, անդամները կցրվեն:

Եթե հաստատվի ընտանեկան մթնոլորտ, որտեղ նույնիսկ «փոքրագույն մարդիկ» իրենք իրենց զգում են ինչպես տանը, ապա Պատրիկների հանդիպումների հիմքը դրված է: Յուրաքանչյուրի խոսքը պետք է միտված լինի «բոցավառելու» մեկ ուրիշի խոսքը, ինչպես շղթայի յուրաքանչյուր օղակն է քաշում մյուսին: Գիտելիքի բացերը լրացվում են, միմյանցից կտրված մասերը միանում և ձևավորվում են կաթողիկէ վարդապետության խճանկարի մեջ: Երբ գիտելիքն ու հետաքրքրությունն աճում են, անհատներն ավելի շատ են միաձուլվում Քրիստոսի Խորհրդավոր Մարմնի միության մեջ և ներթափանցվում են Նրա կյանքով:

Պատրիկների հանդիպումներն իրենց այլ առանձնահատկություններով ևս ներկայացնում են լեգեոնական վարդապետության և ճարտարվեստի կիրառությունը: Կարևոր է, որ լեգեոնականներն ամբողջությամբ գիտակցեն սա, որպեսզի Պատրիկների ձևավորման աշխատանքում ունենան նույն համոզմունքը, որն ունեն պրեզիդիումի

մեջ աշխատելիս: Այդ ժամանակ նրանք լավ զինված կլինեն իրենց առջև դրված հանձնարարությունը կատարելու համար:

Ցավալի իրականություն է, որ կաթողիկէները կրոնի մասին չեն խոսում Եկեղեցուց դուրս գտնվող անձանց հետ և հազվադեպ են խոսում Եկեղեցու ներսում գտնվողների հետ: Քրիստոնեական այդ չկողմնորոշվածության համար մտածվել է մի հասկացություն՝ համրությունը (mutism): Կարդինալ Սուենենսը իրավիճակը նկարագրում է այսպես. «Ասում են, թե Եկեղեցուց դուրս գտնվողները չեն լսի մեզ: Բայց իրականությունն այն է, որ կաթողիկէները չեն խոսի»: Այն տպավորությունն է, թե կաթողիկէ սովորական հավատացյալը չի օգնի ուրիշին կրոնական հարցերում: Անկեղծ հարցադրում անողները չեն ստանում իրենց փնտրած հարցերի պատասխանները, և սխալ տպավորություն է ստեղծվում առ այն, թե կաթողիկէներն անտարբեր են դարձի եկողների նկատմամբ:

Այս մեծ ձախողումը, կարծում ենք, սպառնում է ինքնին քրիստոնեական բնութագրին, որովհետև քրիստոնեությունը եսասիրություն չէ: Բայց իրականությունն այնքան վատը չէ, ինչքան երևում է: Այդ լռությունը և ակնհայտ անտարբերությունը մեծ մասամբ պայմանավորված են ինքնավստահության պակասով:

ա. Այդ անձինք քաջ գիտակցում են, որ իրենք կրոնական գիտելիքների մեծ բաց ունեն: Որպես հետևանք՝ նրանք կխուսափեն որևէ առիթից, որը կարող է լույսի տակ բերել իրենց այդ տկարությունը:

բ. Նույնիսկ երբ անձը բովանդակային գիտելիքներ ունի, մասերն իրարից բաժանված են, ինչպես կրոնագիտության պատասխանները: Միտքը չի կատարել այդ մասերը պատշաճ կերպով իրար միացնելու գործողությունը, ինչպես, օրինակ, իրար են միացած ավտոմեքենայի կամ մարդկային մարմնի մասերը: Կան նաև այլ բարդություններ. շատ մասեր բացակայում են, մյուսները համաչափ չեն իրար նկատմամբ, այս պարագայում նույնիսկ եթե բոլորը միավորվեն, դա կնմանվի մի մեքենայի, որի մասերն իրար չեն համապատասխանում, և որը չի աշխատի:

գ. Շատ դեպքերում կա այնպիսի անգրագիտություն, որ հավատքը պարզապես չի կարող հենվել այդպիսի անբավարար գիտելիքների վրա: Կամ հավատքը գոյություն ունի միայն կիսով չափ: Եվ երբ այսպիսի վիճակում անձը հայտնվի անկրոնության միջավայրում, հավատքը կարող է քայքայվել:

Այսպիսին է խնդիրը:

Պատրիկների խումբը մի հասարակություն է, որը ղեկավարվում է Լեգեոնի կողմից: Յուրաքանչյուր մասնաճյուղ պետք է կցված լինի որևէ պրեզիդիումի, և նախագահողը պետք է լինի ակտիվ լեգեոնական: Մեկ պրեզիդիումը կարող է ղեկավարել մի քանի մասնաճյուղեր: Մասնաճյուղը պետք է ունենա հոգևոր առաջնորդ՝ պրեզիդիումի հոգևոր առաջնորդի արտոնությամբ: Պատրիկների հոգևոր առաջնորդությունը կարող է կատարել նաև կրոնավոր միաբանը կամ աշխարհականը (եթե եկեղեցական իշխանությունն արտոնել է):

«Պատրիկներ» անունը, ինչպես Լեգեոնի անունների մեծամասնությունը, վերցված է հին Հռոմի տերմինաբանությունից: Պատրիկները հասարակության երեք շերտերից (պատրիկներ, պլեբեյներ և ստրուկներ) ամենավերինն էին: Բայց մեր Պատրիկները ձգտում են մեկ հոգևոր ազնվականության մեջ միավորել հասարակական բոլոր շերտերին: Ավելին, Պատրիկներից ակնկալում էին, որ նրանք պետք է լինեին մեծ հայրենասերներ և պատասխանատվություն կրեին հայրենիքի բարօրության համար: Հետևաբար, մեր Պատրիկները պետք է աջակցեն իրենց հոգևոր հայրենիքին, որ Եկեղեցին է: Կանոնները չեն պնդում, որ նրանք լինեն նվիրված կամ նույնիսկ գործնական կաթողիկէներ, այլ միայն այն, որ նրանք լինեն շատ հավատարիմ կաթողիկէներ: Արմատացած հակակաթողիկէ կաթողիկէները չեն կարող տեղավորվել այդ դասակարգման մեջ:

Ոչ կաթողիկէները չեն կարող հաճախել Պատրիկների հանդիպումներին, եթե այդ մասին չլինի եպիսկոպոսի հատուկ որոշումը:

Պատրիկների հանդիպումներն անցկացվում են ամիսը մեկ անգամ: Էական է պարտաճանաչ և շարունակական

ներկայությունը հանդիպումներին: Հանդիպումները չպետք է բաց թողնվեն, բացառությամբ այն պարագաների, երբ իսկապես անհնարին է հանդիպում անցկացնելը: Պարտադիր չէ, որ մեկ անդամը մասնակցի անխտիր բոլոր հանդիպումներին: Անհրաժեշտ է որդեգրել հաջորդ հանդիպման մասին անդամներին հիշեցնելու մի ձև:

Ցանկալի է, որ մասնաճյուղի անդամների թիվը չլինի հիսունից ավելի, և նույնիսկ ա՛յդ թիվն ունի իր դժվարությունները:

Հանդիպման միջավայրը

Պետք է խուսափել բեմի և հանդիսատեսի թատերական տպավորությունից, բայց նաև պետք է բացառել անկարգուկանոն մթնոլորտը: Ինչքան հնարավոր է, աթոռները պետք է դասավորել կիսաշրջանաձև, իսկ սեղանը պետք է փակի շրջանը: Սեղանի վրա պետք է դնել Լեգեոնի խորանը, որի կարևոր մաս է դրոշը:

Հանդիպումը պետք է ունենա գրավչության բոլոր տարրերը՝ ներառյալ պատշաճ նստելու հարմարությունները, լուսավորությունը և ջերմությունը:

Ծախսերը պետք է կազմակերպվեն գաղտնի նվիրատվություն կատարելով, և յուրաքանչյուր հանդիպման ժամանակ պետք է ներկայացվի ֆինանսական հաշվետվություն:

Հանդիպման կարգը

1. Հանդիպումը սկսվում է Պատրիկների աղոթքով, որը պետք է ասել միասին և ոտքի կանգնած:

2. Բանախոսություն կամ թղթի ընթերցում՝ հստակ սահմանափակվելով 15 րոպեում, քննարկվելիք թեմայի շուրջ, աշխարհականի կողմից: Այն չպետք է գերազանցի այդ ժամանակը, այլապես կվնասի: Անհրաժեշտություն չկա, որ այդ գրությունը պատրաստվի մասնագետի կողմից: Մասնագետի կողմից գրված լինելը ենթադրում է շատ մեծ գիտելիք և շատ երկար խոսք, որը հանդիպման սկզբում կարող է կործանել հանդիպումը: Մյուս կողմից նաև առաջարկվել է, թե կարիք չկա գրություն պատրաստելու: Բայց անառարկելի է, որ անհրաժեշտ է նախապես թեմայի որոշ ուսումնասիրություն կատարել: Դա կարելի է արդյունավետ կերպով

անել, միայն եթե մեկը նշանակվի այդ աշխատանքի համար: Հանդիպումը պետք է ունենա անմշակ նյութ, որի վրա հնարավոր լինի աշխատել:

3. Գրության ընթերցմանը հետևում է ընդհանուր քննարկումը: Հանդիպման բոլոր մյուս հատվածները գոյություն ունեն այս հատվածի համար և պետք է ուղղված լինեն քննարկման պատշաճ ձևով կազմակերպմանը: Քննարկումը չի կարող տեղի ունենալ, եթե անդամները չեն մասնակցում դրան: Պատրիկների հանդիպումների բարդությունը դժկամությամբ խոսող անհատներին օգնելն է, որպեսզի խոսեն: Այս խնդրի լուծումը բխում է նրանց շահերից և առողջ Եկեղեցի ունենալու անհրաժեշտությունից:

Հետևաբար պետք է օգտվել ամեն տեսակ աջակցությունից, և բոլոր հակառակ ազդեցությունները պետք է վերացվեն: Սխալական և անուշադիր խոսքերի (որոնք շատ կլինեն) նկատմամբ կոպիտ վերաբերմունքը կլինի ճակատագրական: Դա կհարվածի Պատրիկների միության նպատակին, որն է՝ օգնել յուրաքանչյուրին ինքնարտահայտվել: Հետևաբար, խոսքի ազատությունն առաջնային կարևորություն ունի, և այն պետք է խրախուսվի, նույնիսկ եթե խոսում են ոչ տեղին բաներ: Պետք է հիշել, որ այդ թերությունները կրկնվում են երգչախմբի նման, որից դուրս դրանք չեն ուղղվում:

Ուրեմն, ամենակարևորն այն է, որ յուրաքանչյուրը խոսի և ոչ թե նրանց խոսքերը անպայման լինեն իմաստուն և ճիշտ: Կատարյալները գուցե ամենաշատը փայլեն, բայց հասարակներն ամենաշատը կանեն, որովհետև վերջիններս ոչ պերճախոսներին սովորեցնում են խոսել:

Հոգեբանորեն կարևոր է, որ մասնակիցների խոսքերն ուղղված լինեն բոլոր մասնակիցներին և ոչ թե որևէ առանձին կարևոր անհատի: Գաղափարն այն է, որ երբ խոսողն ավարտում է, յուրաքանչյուր ունկնդիր, այսպես ասած, մնում է դեմ առ դեմ իր լսածի հետ, որը նրան կոչ է անում մեկնաբանություն անելու, այնպես, կարծես թե դա լիներ գրեթե երկխոսություն երկու անձանց միջև: Այս դեպքում պատասխանը միանգամից է գալիս լեզվի վրա, և արձագանքելու

այդ պատրաստակամությունը հենց այն է, ինչին ուզում է հասնել Պատրիկների խումբը:

Այս հոգեբանական հավասարակշռությունը կխախտվի, եթե մարդկանց մտքերը շեղվեն այլ ուղղությամբ: Օրինակ՝ այդպիսի շեղում կարող է առաջացնել նախագահողի կողմից բոլորի ուշադրությունը դեպի իրեն հրավիրելը՝ մի մեկնաբանություն ներմուծելու կամ նույնիսկ իր գնահատանքն արտահայտելու միջոցով, կամ երբ գրությունն ընթերցողն անընդհատ ընդհատի՝ գրության կետերը մեկնաբանելու համար, կամ երբ հոգևոր առաջնորդը ջանա լուծել քննարկման ընթացքում առաջացող բոլոր խնդիրները: Այդ դեպքում հանդիպումը կդառնա պանելային քննարկում, որտեղ մի քանի անհատներ հարցեր են տալիս և ստանում են պատասխաններ մի քանի մասնագետներից:

Ցանկալի է, որ ձևավորվի այնպիսի մթնոլորտ, որտեղ երկչոտ անձինք խրախուսվում են խոսել:

Նախագահողը պետք է լինի հանդուրժող մեկուսացած անտեղի խոսքերի նկատմամբ: Ինչ-որ մեկին կարգի հրավիրելը կարող է վախեցնող ազդեցություն թողնել ամբողջ հանդիպման վրա: Բայց եթե այդ անտեղի խոսքը կարող է ուրիշներին էլ շեղել, այդ դեպքում նախագահողը պետք է բոլորին վերադարձնի ճիշտ ուղղության վրա:

Խոսելիս մասնակիցները պետք է ոտքի կանգնեն: Գուցե խոսքերն ավելի ազատ արտահայտվեն, եթե նրանք նստած մնան, բայց դա կարող է քննարկումը դարձնել մտքերի անկանոն փոխանակում, որը կվերածվի ուղղակի զրույցի:

Անդամները սահմանափակված չեն միայն մեկ խոսք ասելու: Բայց նա, ով դեռ չի խոսել, իրավունք ունի առաջինը խոսելու նրա նկատմամբ, ով արդեն խոսել է:

4. Քննարկումը պետք է ավարտվի հանդիպումը սկսվելուց մեկ ժամ հետո: Անմիջապես կատարվում է ֆինանսական հաշվետվությունը՝ հիշեցնելով, որ հոգևոր առաջնորդի խոսքից անմիջապես հետո կլինի գաղտնի նվիրատվությունը՝ պարկի մեջ:

5. Հետո մատուցվում է թարմացնող թեթև մի բան (օրինակ՝ սուրճ, թեյ և թխվածք): Սա շատ կարևոր կետ է հանդիպման ժամանակ և չպետք է դուրս թողնվի: Այն ունի շատ կարևոր

նպատակներ. ա. սոցիալական օժանդակող ազդեցություն, բ. մտքերի փոխանակում, գ. ազատ խոսելու հնարավորություն, դ. առաքելական շփումների հնարավորություն:

Առաջարկվել է, որ թարմացման պահը հանվի և փոխարենն այդ հատվածն օգտագործվի այլ նպատակով: Գործնականում հեշտ չի լինի արդարացնել ընդմիջումը՝ առանց թարմացնող բաների:

Ընդմիջումը պետք է տևի 15 րոպե:

6. Ապա խոսում է հոգևոր առաջնորդը՝ դարձյալ 15 րոպե: Ամեն ինչ ուղղորդվել է դեպի այս խոսքը, և պետք է այն լսել համակ ուշադրությամբ: Սա կենսական կարևորության մաս է՝ քննարկման նյութը տեղափոխելով կանոնավոր և ճիշտ ձևի մեջ՝ բարձրացնելով վսեմագույն կետին և մասնակիցներին ոգեշնչելով ավելի մեծ սեր և ծառայության պատրաստակամություն Աստծո հանդեպ:

Հարց է առաջացել, թե ինչու հոգևոր առաջնորդի խոսքը չդնել հանդիպման վերջում, որպեսզի այն ամփոփի այն ամենը, ինչ ասվել է: Պատասխանը հետևյալն է. այս խոսքի նպատակն է՝ արժեքավոր նյութ տալ հետագա քննարկման համար: Քննարկումն ուրեմն չէր կարող լինել, եթե այդ խոսքը վերջում լիներ: Կա նաև այլ պատճառ. այդ հոգևոր խոսքը գուցե չընկալվի բոլոր ներկաների կողմից, և ընկալմանը կօգնի ամփոփիչ քննարկման ժամանակ կիրառվող «մեկնաբանության սկզբունքը» (նկարագրված է ստորև):

7. Հոգևոր առաջնորդի խոսքից հետո ընդհանուր քննարկումը շարունակվում է՝ մինչև ավարտից 5 րոպե առաջ:

8. Հետո ա. նախագահողը համառոտ կերպով արտահայտում է հանդիպման մասնակիցների գնահատանքը գրության ընթերցողի հանդեպ, չպետք է լինեն ձևական շնորհակալական խոսքեր, բ. պետք է որոշել հաջորդ հանդիպման թեման: Թեմաները պետք է հիմնված լինեն կրոնի վրա: Պետք է խուսափել զուտ ակադեմիական, մշակութային, գրական կամ տնտեսական թեմաներից: գ. Կարող են արվել այլ հայտարարություններ:

9. Հետո կատարվում է եզրափակիչ աղոթքը՝ Հավատամքը, միասին և ոտքի կանգնած:

10. Հանդիպումն ավարտվում է քահանայի օրհնությամբ: Բոլորը պետք է կանգնած լինեն, որպեսզի անկանոն աղմուկ չլինի՝ մարդկանց բազմությամբ լի սենյակում աթոռների արանքում ծնկի գալու պատճառով:

Այսպիսով, հանդիպման ամբողջ տևողությունը պետք է լինի երկու ժամ: Կարևոր է ճշգրտորեն հետևել ժամին: Եթե հանդիպման որևէ մաս նախատեսվածից ավելի երկար է տևում, ապա մյուս մասերը տուժում են, և հանդիպման հավասարակշռությունը խախտվում է: Հանդիպման մասերն ու տևողությանն ամփոփող գրաֆիկը տրված է ստորև:

Քննարկման թեման պետք չէ ամփոփել ավարտուն ձևով: Հարկ չկա մտահոգվելու, եթե որոշ կարևոր հարցեր մնում են չլուծված: Կլինեն ուրիշ հանդիպումներ, և, ի վերջո, հարցերի պատասխանները կամբողջացվեն:

Չկա աշխատանքային պարտականություն: Հանդիպումը չպետք է ոչ մի հանձնարարություն տա: Անդամների վրա չպետք է ճնշում գործադրել՝ կատարելու այլ գործողություններ: Բայց ընկերական հարաբերությունները, որոնք զարգանում են, պետք է օգտագործել մարդկանց առաջնորդելու համար, մասնավորապես, դեպի անդամակցություն Լեգեոնին, ակտիվ կամ օժանդակ կամ ադյուտոր: Եթե իմաստուն ձևով օգտագործվի, Պատրիկների խումբը կարող է այնպիսի ուժեղ խթան հանդիսանալ, որ համայնքում շահեն բոլորը:

ՊԱՏՐԻԿՆԵՐԻ ՈՐՈՇ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. Խմբային հոգեբանություն: Մարդիկ կարիք են զգում միմյանց օգնության և բնականորեն հավաքվում են խմբերում: Խումբն իր ազդեցությունն իրականացնում է շնորհիվ նրա, որ ունի կանոններ և ոգի: Անհատները ջանում են համահունչ գնալ այն խմբի հետ, որի անդամներն են իրենք. մի փաստ, որը կարող է գործադրվել ի բարին կամ ի չարս: Նրանք դադարում են զուտ պասիվ լինելուց: Նրանք մասնակցում են խմբի կյանքին: Եթե նրանք իրենց լավ են զգում այդ խմբում, ապա նրանք այդտեղ կլինեն ազդեցիկ: Այս ամենը Պատրիկներին վերագրելիս նշանակում է, որ

բոլորի վրա կա մի հանդարտ, բայց անդիմադրելի ճնշում՝ ներառյալ ամենահետինների վրա, յուրացնելու իրենց լսածը և վարվել դրա համաձայն: Իհարկե, մի խումբ, այդ աստիճանին հասնելով, կարող է ինքն իրենով ձախողել առաջընթացը: Պատրիկների պարագայում այդպես չի կարող լինել, որովհետև նրանց մեջ կան այնպիսի բարձրամիտ անձինք, որոնք կապահովեն գերազանց գաղափարների ներհոսքը: Վերը նկարագրված խմբային հոգեբանության շնորհիվ այդ գաղափարները կկլանվեն անդամների կողմից, այնպես որ խումբը մշտապես որակապես կաճի:

2. Ցավոտ դադարներ: Անդամների խոսքերի միջև երկարատև լռությունները կարող են շեղել: Նախագահողը կարող է գայթակղություն ունենալ անդամներին ստիպելու, որ խոսեն: Դա սխալ կլինի: Լարվածության զգացում կառաջանա, որը կհամակի մանավանդ նրանց, ովքեր դժկամությամբ են խոսում: Այստեղ պատշաճ է ասել, որ ընտանիքում կարիք չեն զգում անդադար խոսելու, և որ հարմար է երբեմն դադարներ ունենալը: Ուրեմն, երբ լռություն կա, թող որ հանդարտ նստեն, ինչպես տանը: Դադարին սովորաբար հաջորդում է հարմարության մի զգացում, երբ լեզուները կարող են ազատ շարժվել:

3. Լուծման հետաձգումը: Գոյություն ունի խնդրի լուծման երկու հիմնական ճանապարհ: Առաջինը պատասխանը ստանալն է՝ անմիջապես փորձագետից: Մյուսը ջանալն է՝ ինքնուրույն գտնել լուծումը: Առաջինը, թվում է, ուղղակի և պարզ ճանապարհն է, և կրթության մեծ մասը հիմնված է դրա վրա: Դրա թերությունն այն է, որ պատասխանները միայն կիսով չափ են հասկացված, և որ աշակերտների պաշարներն ու պատասխանատվության զգացումը չեն զարգացվում: Երկրորդ մեթոդը ավելի աշխատատար է: Այն խնդիրը թողնում է սովորողների վրա: Նրանք պետք է իրենք ջանք թափեն: Երբ նրանք ներկայացնում են իրենց հում նյութը, ստանում են փորձագիտական առաջնորդություն: Հետո նրանք նորից հենվում են իրենց սեփական ուժերի վրա՝ ձգտելու համար ավելի բարձր կետի: Այս **աջակցված ինքնաօգնության** վերջնական արդյունքն այն է, որ նրանք իսկապես կրթվում են: Քանի որ լուծումը հայտնվել է իրենց

սեփական դանդաղ ջանադրության ընթացքում, նրանք հեշտությամբ են յուրացնում նյութը, հիշում են այն և ինքնավստահ են դառնում ապագայի համար: Սա է Պատրիկների հանդիպումների մեթոդը: Դա պահանջում է հետևյալը. երբ ասում են ինչ-որ ոչ ճիշտ բան, ապա իշխանություն ունեցող անձը չպետք է անմիջապես ուղղի դա, այլ պետք է դա դառնա քննարկման նյութ: Շատ հավանական է, որ այդ անճշտությունը վերացվի: Իսկ եթե դա մնում է որպես լուրջ սխալ, ապա դա պետք է ուղղվի, բայց ոչ ստորացման ճանապարհով: Մտածե՛ք, թե ինչպես կարող էր Մարիամը սովորեցնել իր Մանկանը:

4. Հարցադրումներ անելը: Դասախոսության համակարգերի համար ցանկալի է, որ լսարանն արձագանքի և նյութին համապատասխան հարցադրումներ անի: Որոշ անձինք արձագանքում և հարցեր են տալիս, ապա դասախոսը պատասխանում է: Պատրիկների մեթոդը, ընդհակառակը, չի ողջունում այդ ձևը և դա համարում է միջամտություն քննարկմանը, որը գրեթե հավասար է կարճ միացմանը էլեկտրականության մեջ: Շատ անձինք սկզբում մասնակցության որևէ այլ գաղափար չեն ունենա, քան միայն հարցեր տալը առավել ծանրակշիռ անձանցից մեկին: Եթե փորձեն պատասխանել այդ հարցերին, քննարկումը կաթվածահար կլինի և իրականում կվերածվի դասարանի, իսկ անդամները կցրվեն:

Այստեղ ոսկե կանոնն այն է, որ հարց տվողը պետք է նաև իր սեփական գաղափարներն ավելացնի պատասխանի վրա: Փորձը ցույց է տվել, որ այս դեպքում հարցը օգտակար կերպով կմտնի քննարկման հունի մեջ:

5. Պատրիկների կառուցելու սկզբունքը: Գիտելիք կառուցելը՝ քար առ քար ավելացնելու միջոցով, լավ է: Բայց այն, ինչ տեղի է ունենում Պատրիկների խմբերում, ավելի շուտ բազմապատկում է, քան թե ավելացնում: Պատրիկները կառուցում են կենդանի աղյուսներով՝ այն իմաստով, որ յուրաքանչյուր նոր խոսք կապված է այն ամենի հետ, ինչ արդեն ասվել է՝ բխելով դրանցից և իր հերթին ազդելով դրանց վրա: Կարծիքները մշակվում են, և ծնվում են նոր գաղափարներ: Այս բարդ գործողությունը, որը կատարվում է շնորհի

միջոցով, պետք է անխուսափելիորեն դառնա պտղաբեր հումուս յուրաքանչյուրի մտքում: Բայց դա նաև թողնում է ընդհանուր ազդեցություն, այսինքն՝ ամբողջ խմբի վրա: Այդ ազդեցությունը համեմատելի է մակընթացության հետ: Այն հավաքում է անդամների բնավորություններն ու մտքերը և առաջ մղում դրական խթանով: Կանգնած վիճակում գտնվող հավատքին և կրոնական աշխարհայացքին էներգիա և ուղղություն հաղորդելուն պետք է հետևի մարդկային կյանքերի փոփոխությունը:

6. Կարևոր դերակատարությունները: Ինչպես պրեզիդիումը կախված է իր սպաներից, այդպես էլ Պատրիկների խմբերը կախված են իրենց առանցքային անձանցից: Նրանք պետք է զգույշ լինեն, որ չչարաշահեն իրենց գործառույթները: Եթե այդպես անեն, ապա կսահմանափակեն սովորական անդամների գործառույթները: Այդպիսով նրանք կնմանվեն դպրոցի դասարանին: Շատ կարևոր է, որ հոգևոր առաջնորդը, նախագահողը և թեմատիկ գրության ընթերցողը պահպանեն ժամանակի և այլ նախատեսված սահմանափակումները՝ անկախ նրանից, թե ինչ գայթակղություններ կունենան: Շատ մարդիկ իրենց շփոթված են զգում մասնագետի կամ հեղինակավոր անձի ներկայությամբ: Այդ պատճառով այդ առանցքային անձերը պետք է գործեն համաձայն մեր Տիրոջ բանաձևի, որպեսզի գիտելիքը փոխանցվի արդյունավետ ձևով. «Սովորեցե՛ք ինձնից, որ հեզ եմ և սրտով խոնարհ» (Մտթ. 11:29): Հավանաբար պետք է ասել, որ ինչքան շատ նրանք ստվերում մնան, այնքան ավելի ազատ կստացվի քննարկումը: Բայց սա չի նշանակում սահմանափակել նրանց, որ խոսեն միայն իրենց հատկացված ժամին. նրանք կարող են միջամտել սովորական անձանց նման, բայց սահմանափակ ձևով:

7. «Մեկնաբանելու սկզբունքը»: Պատրիկների բնորոշ գծերից ամենակարևորը «մեկնաբանելու սկզբունքն» է: Այդ սկզբունքի շնորհիվ, այն խոսքերը, որոնք անդամների մեծամասնության համար մնում են ոչ ամբողջությամբ հասկանալի, դառնում են հասկանալի բոլորի համար: Սա նշանակում է, որ նուրբ մտքերը և բարդ գաղափարները կարող են արտահայտվել և պարզ ձևով, որպեսզի հասանելի

դառնան ամենապարզ անդամներին ևս: Ամենակրթվածներին և ամենաքիչ ուսյալներին օգնելու այս կարողությունը, որպեսզի միմյանց հասկանան, մի թանկարժեք գանձ է: Ահա՛ թե ինչպես է դա աշխատում. եկեք պատկերացնենք, որ բացման խոսքը կամ քննարկման ժամանակ հնչած որևէ խոսք այնքան բարդ է, որ մասնակիցների միայն տասը տոկոսն է ընդունակ այն հասկանալու: Հետևաբար, եթե դա լիներ մի սովորական դասախոսություն, ապա իզուր վատնում կլիներ: Բայց Պատրիկների պարագայում, այդ տասը տոկոս հասկացողների մեջ որոշ անձինք կսկսեն քննարկել թեման: Գործնականում նրանք այդ քննարկումը կանեն այնպես, որ համապատասխան լինի անդամների մեծամասնության ընկալունակությանը, և դժվար թեման հասկանալի կդառնա բոլորի համար: Հետո ուրիշները ևս սկսում են խոսել, և, ի վերջո, կատարվում է մի գործողություն, որը նման է ցորենն աղալուն և ընտիր ալյուր ստանալուն: Սկզբնական խոսքում պարունակվող բոլոր ծածկված իմաստները մեկնաբանվում կամ թարգմանվում են՝ բոլոր անդամների մտավոր պատրաստվածության համաձայն: Այսպիսով, ոչինչ այն ամենից, որ խոսվում է Պատրիկների հանդիպման ժամանակ, կորած չէ:

Պատրիկների այս բնորոշ գիծը եզակի արժեք ունի մանավանդ առաքելության դաշտի համար: Միսիոների խնդիրը կաթողիկէության ամբողջ վարդապետությունը սովորեցնելն է մարդկանց, որոնց լեզուն ամբողջությամբ չի հասկանում, և որոնց մտածողությունը տարբերվում է իր մտածողությունից: Պատրիկների մեկնաբանելու կարողությունը կամրջում է այս խոր վիհերը:

8. Աստծուն տալ մի բան, որի համար անհրաժեշտ է Նրա աշխատանքը: Այս հարցում ավելի շատ բան է վտանգված, քան պարզապես մի քանի աղյուսներ շարելը՝ մի կառույց ստանալու համար: Այստեղ կա շնորհի սկզբունքը, որը գերբնական է և մեզ ունակ է դարձնում կառուցել շատ ավելի մեծ կառույց, քան այն, ինչ նախատեսել էինք՝ շինանյութ հավաքելով:

Մենք պետք է գիտակցենք, որ ի վերուստ հայտնված կրոնի դեպքում ոչ ոք չունի ամբողջական պատասխաններ:

Որովհետև այդ ոլորտում պետք է միշտ գործեն հավատքն ու շնորհը: Նույնիսկ ամենաիմաստուն փաստարկները գուցե չկարողանան կամրջել բացը, բայց սխալ կլիներ ենթադրել, թե այդ պատճառով պակաս իմաստուն խոսքեր ասելն անիմաստ է: Փաստն այն է, որ Աստված վերցնում է նույնիսկ ամենաթույլ խոսքերը և դրանցով ինչ-որ բան է ստեղծում: Երբ բոլորն անում են իրենց լավագույնը, ապա այն բացը, որը թվում էր անկամրջելի, կարող է ծածկվել: Ոչ ոք չի կարող ասել, թե այդ պարագայում բա՞ցն էր ավելի քիչ, քան մտածում էին, թե՞ Աստծո շնորհն էր ավելի մեծ, քան կարծում էին, կամ գուցե Աստված պարզապես լրացրե՞ց այն, ինչ պակասում էր: Բայց փաստ է, որ ամբողջ աշխատանքը կատարվում է:

Ստորև գրվածը պետք է միշտ լինի մեր փիլիսոփայությունը և ավելի լայն իմաստով, քան միայն Պատրիկների համար: Յուրաքանչյուրը պետք է ունենա իր մասնակցությունը, նույնիսկ եթե գիտեն, որ դա տեղին չէ: Թույլ ջանքն անգամ ավելի լավ է, քան ոչ մի ջանք չգործադրելը: Աշխարհը դարձի բերելու համար հարկավոր է, որ բոլոր կաթողիկէները ջանք գործադրեն: Ջանքերը անբավարար կլինեն այնքան ժամանակ, քանի դեռ կաթողիկէները շշնջում են իրենց համար. «Ես բավականաչափ գիտելիք չունեմ, ուրեմն ավելի լավ է՝ լուռ մնամ»: Բայց հենց այս վերջինն է այն տարածված վիճակը, որտեղ Պատրիկներն ուզում են օգտակար դերակատարություն ունենալ:

ՊԱՏՐԻԿՆԵՐԻ ԱՂՈԹՔԸ
(պետք է ասեն բոլորը՝ ոտքի կանգնած)

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

Սիրելի՛ Տեր, օրհնի՛ր Պատրիկների հասարակությունը, որին մենք անդամակցել ենք՝

ավելի մոտենալու համար Քեզ և Մարիամին՝ Քո Մորը, Ով նաև մեր Մայրն է:

Օգնի՛ր մեզ, որ հասկանանք մեր կաթողիկէ հավատքը,

որպեսզի այդ հավատքի փոխակերպող ճշմարտություններն իրականացվեն մեր կյանքում:

Օգնի՛ր մեզ նաև հասկանալ մեզ հետ Քո մտերիմ միությունը,
որով մենք ոչ միայն ապրում ենք Քո մեջ, այլ նաև կախված ենք միմյանցից այնպես, որ եթե ոմանք թուլանում են, ուրիշներն են տուժում և կարող են կորչել:
Մեզ ունակ դարձրո՛ւ տեսնելու այն ծանր, բայց փառավոր բեռը, որ դրված է մեր վրա,
և ձգտելու կրել այն Քեզ համար:
Մենք գիտակցում ենք, թե ինչ է նշանակում լինել մարդ՝ մեր մարդկային բնության դժկամությունը,
թե որքա՛ն անարժան ենք մենք՝ Քեզ առաջարկելու մեր ուսերը:
Բայց մենք համոզված ենք, որ Դու կնայես ավելի շուտ մեր հավատքին, քան թե տկարությանը,
ավելի շուտ՝ Քո գործերի անհրաժեշտությանը,
քան թե գործիքների անհամապատասխանությանը:
Ուրեմն, մեր ձայնը միացնելով Մարիամի մայրական խնդրանքներին՝
մենք խնդրում ենք Երկնավոր Հորից և Քեզնից Սուրբ Հոգու պարգևը,
որպեսզի մնա մեզ հետ, սովորեցնի մեզ Քո կենսատու վարդապետությունը,
ապահովի այն ամենը, ինչի կարիքը մենք ունենք:
Շնորհի՛ր նաև, որպեսզի առատորեն ընդունելով՝ մենք կարողանանք առատաձեռնորեն տալ,
որովհետև այլապես աշխարհը գուցե չստանա Քո Մարդեղության և դաժան Մահվան պտուղները:
Օ՛, մի՛ թող, որ Քո այդ մեծ ջանադրությունն ու չարչարանքն իզուր անցնեն. Ամէն:
Փա՛ռք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՐԳԸ

0.0 Պատրիկների աղոթքը (ասում են բոլորը միասին՝ կանգնած)

Խոսք՝ աշխարհականի կողմից (ոչ ավելի, քան 15 րոպե)

0.15 Քննարկում
0.59 Ֆինանսական հաշվետվություն և հիշեցում, որ գաղտնի նվիրատվության պարկը կշրջանառվի քահանայի խոսքից անմիջապես հետո:
1.00 Ընդմիջում, թեյ, սուրճ:
1.15 Քահանայի խոսքը (ոչ ավելի, քան 15 րոպե):
1.30 Քննարկումն ամփոփվում է, գաղտնի նվիրատվություն:
1.55 Հայտարարություններ (շնորհակալական խոսքեր՝ գրությունը կարդացողին, հաջորդ հանդիպման օրը և թեման և այլն):
2.00 Հավատամքը (ասում են բոլորը միասին՝ կանգնած):
Քահանայի օրհնությունը (բոլորը կանգնած են):

ՔՈԼԵՋԻ ԵՎ ԿՐՏՍԵՐ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԵՐԸ

Հետևյալ հանգամանքներում, որտեղ կարող է իսկապես անհնարին լինել պահել սովորական օրակարգը, այսինքն՝ ա. քոլեջների և հաստատությունների ներսում գործող մասնաճյուղերում և բ. մասնաճյուղերում, որտեղ բոլոր անդամները 18 տարեկանից ցածր են, առաջարկում ենք հետևյալ առավել սեղմ օրակարգը (ամբողջ տևողությունը՝ 1,½ ժամ).

0.0 Պատրիկների աղոթքը, որին հետևում է գրության ընթերցումը (ոչ ավելի, քան 5 րոպե):
0.05 Քննարկում (40 րոպե):
0.45 Ընդմիջում (10 րոպե), (թեյը կարելի է բաց թողնել):
0.55 Հոգևոր առաջնորդի խոսքը (10 րոպե): Գաղտնի նվիրատվությունը կարելի է բաց թողնել:
1.05 Քննարկման ամփոփում (20 րոպե):
1.25 Հայտարարություններ՝ վերը նշված ձևով:
1.30 Հավատամքը և այլն՝ վերը նշված ձևով:

«Պատրիկների հասարակությունն ընտանեկան գործ է՝ ընտանեկան զրույց այն հարցերի մասին, որոնք վերաբերում են բոլորիս, բաց, ազնիվ և ի սրտե զրույց, որն ընտանեկան կյանքի վայելքներից մեկն է: Մենք՝ քրիստոնյաներս՝ որպես Քրիստոսի եղբայրներ, պատկանում ենք Աստծո

ընտանիքին: Մեր հավատքի մասին մտածելը, դրա մասին խոսելը և քննարկելը՝ այն ոգով, որով մեր Տերը և առաքյալները խոսում էին օրվա ուսուցման մասին առաքելական օրվա վերջում Գալիլիայում. սա՛ է Պատրիկների ոգին:

Հիսուս Քրիստոսին ճանաչել՝ որպես հրաշալի, սիրելի ուսուցչի, վարդապետի և Տիրոջ, ինչպիսին որ Նա է, նշանակում է, որ մենք պետք է մեր մտքերը լցնենք Նրա փրկարար ճշմարտություններով և կրոնի մասին խոսելիս ինքներս մեզ զգանք միանգամայն տանը, ճիշտ ինչպես սիրում ենք խոսել մեր երեխաների, մեր տան և մեր աշխատանքի մասին: Սուրբ Հոգին մեզ շնորհում է ամբողջ կարողությունը՝ թափանցելու Քրիստոսի ճշմարտության մեջ: Այս ամենը մենք կիսում ենք ուրիշների հետ, նաև սովորում նրանցից Պատրիկների հանդիպումների ժամանակ: Այնտեղ մենք վկայում ենք Քրիստոսի մասին, և մեր սրտերն այրվում են մեր ներսում, երբ նա խոսում է մեզ հետ մեր մերձավորների բերանով:

Պատրիկների մեջ և միջոցով Աստված ավելի է մոտենում մեզ, Նրա ճշմարտություններն ավելի շատ են մեզ տպավորում, և Եկեղեցին՝ որպես մեր ջանքերի դաշտ, առավել իրական է դառնում մեզ համար: Մտքերը լուսավորվում են մտքերից, սրտերը շողշողում են հավատքով, Քրիստոսն աճում է մեր մեջ» (Հ. Փ. Ջ. Բրոֆի):

39

ԼԵԳԵՈՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԿԵՏԵՐԸ

1. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀՈԳԻՆԵՐԻՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ ՄՈՏԵՆԱԼ ԱՅԼ ԿԵՐՊ, ՔԱՆ ՄԻԱՅՆ ՄԱՐԻԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ

Երբեմն Սուրբ Կույս Մարիամին պահում են ստվերում՝ հարմարվելու համար այն անձանց նախապաշարումներին,

որոնք քիչ բան գիտեն Մարիամի մասին: Կաթողիկէ վարդապետությունն ավելի ընդունելի դարձնելու այս մեթոդը կարող է համաձայն լինել մարդկային պատճառաբանությունների հետ, բայց այն չի արտացոլում աստվածային գաղափարը: Նրանք, ովքեր այդպես են վարվում, չեն գիտակցում, որ կարող էին նույն ձևով քրիստոնեությունը քարոզել առանց Քրիստոսի, ինչպես արհամարհում են Մարիամի դերը փրկագործության մեջ: Որովհետև Աստված Ի՛նքն է պատշաճ համարել ամեն ինչ այնպես տնօրինել, որ ո՛չ Հիսուսի մասին կանխասացությունները, ո՛չ Հիսուսի գալուստը, ո՛չ Հիսուսին պարգևելն աշխարհին, ո՛չ Նրա հայտնությունը չլինեն առանց Կույս Մարիամի:

Մարիամն Աստծո մտքում էր ի սկզբանե և աշխարհի արարումից էլ առաջ: Աստված նախ Ինքն Իրեն պատմեց Մարիամի մասին և Մարիամի համար գծագրեց կյանքի մի ծրագիր, որն աներկբայորեն եզակի մի ծրագիր է: Որովհետև Մարիամի ամբողջ մեծությունը շատ վաղ սկզբնավորում ունի: Այդքա՛ն վաղ էր Աստված պատասխանել կասկածամիտների հարցին, թե՝ «Ինչո՞ւ Աստված կարիքն ուներ Մարիամի օգնության»: Աստված կարող էր ընդհանրապես Մարիամի օգնությունից չօգտվել, ինչպես և կարող էր չօգտվել նույնիսկ Հիսուսի օգնությունից: Բայց Աստված հաճեց որդեգրել մի ճանապարհ, որը ներառում էր Մարիամին: Այդ ճանապարհը Մարիամին դրեց Փրկչի կողքին՝ սկսած ճիշտ այն վայրկյանից, երբ Փրկիչն ինքը հռչակվեց որպես Փրկիչ: Ավելին, այդ ծրագրում Մարիամին շնորհվեց ոչ պակաս, քան Փրկչի Մայրը, հետևաբար և անհրաժեշտաբար, նաև Փրկչի հետ բոլոր միացածների Մայրը լինելու դերակատարությունը:

Այդպիսով, ի հավիտենից Մարիամը եղել է բարձրագույն մի դիրքում՝ որպես միակը ամբողջ արարչագործության մեջ, և բացարձակապես վեր՝ նույնիսկ ամենավսեմ արարածի համեմատ, առանձնահատուկ՝ Աստծո գաղափարի մեջ, առանձնահատուկ՝ իր ստացած պատրաստությամբ, և հետևաբար, պատշաճ ձևով առանձնացված բոլորից՝ փրկության մասին առաջին մարգարեության մեջ. «Թշնամություն

պիտի դնեմ քո և կնոջ միջև, քո սերնդի և նրա սերնդի միջև, նա կջախջախի քո գլուխը, և դու կխայթես նրա գարշապարը» (Ծննդ. 3:15): Ահա՛ այստեղ է Աստված ամփոփել ապագա փրկագործությունը: Անկասկած, Մարիամը պետք է լինի Սատանայի թշնամին՝ փրկության մեջ իր դերակատարությամբ, նույնիսկ իր ծնունդից առաջ և դրանից հետո՝ միշտ լինելով Փրկչից ներքև, բայց Նրա կողքին և Նրան նման (Ծննդ. 2:18) և տարբեր բոլոր մյուս արարածներից: Ոչ մի մարգարե, նույնիսկ Հովհաննես Մկրտիչը, հավասար չէ Մարիամին, ոչ էլ որևէ թագավոր, որևէ առաջնորդ, որևէ առաքյալ կամ ավետարանիչ՝ ներառյալ Պետրոսը և Պողոսը, ոչ էլ ամենանշանավորները պապերի, քահանաների և դոկտորների մեջ, ո՛չ էլ որևէ սուրբ, ո՛չ Դավիթը, ո՛չ Սողոմոնը, ո՛չ Մովսեսը, ո՛չ էլ Աբրահամը: Նրանցից և ո՛չ ոք: Մարիամը՝ միակը բոլոր արարածներից, որ երբևէ եղել են կամ կլինեն, աստվածային ծրագրում նախատեսված է որպես Փրկության Համագործակից:

Ակնհայտ և անսխալաբար հայտնված՝ մարգարեությամբ: Մարգարեության ընթացքը շարունակվում է՝ «Կույսը», «Կույսը և Մանուկը», «Կինը», «Կինը և Մանուկը», «Թագուհին՝ նստած Թագավորի աջ կողմում», և մշտապես կրկնվող հաստատումը՝ թե կինը պետք է լինի մեր փրկության առաջնային տարրը: Ինչպիսի՞ ապագա է սա կանխագուշակում Մարիամի մասին: Մի՞թե այս ամենից տրամաբանորեն չեն հետևում այն մեծագույն խոսքերը, որ կարելի է ասել Մարիամի մասին: Հազիվ թե մենք գիտակցում ենք, թե որքա՛ն ջախջախիչ է, որքա՛ն վերջնական է մարգարեության իրականացումը քրիստոնեական կրոնում Մարիամի ունեցած տեղի վերաբերյալ: Մարգարեությունը գալիք բաների ստվերն է, մի հայացք, որն անցնում է ժամանակի միջով՝ տարածության փոխարեն, հեռավոր հեռանկարի դժգույն գծագրումը: Անհրաժեշտաբար, մարգարեությունը պետք է լինի պակաս ակնառու, պակաս հստակ, պակաս իրական, քան այն իրականությունը, որի մասին մարգարեանում է: Բայց մարգարեությունը նաև պետք է պահպանի ներդաշնակ համապատասխանությունն այդ իրականության հետ:

Մարգարեությունը, որը փրկության ձեռքբերումը պատկերում էր Կնոջ և նրա Մանկան միջոցով (և այդ զույգից բացի՝ ուրիշ ո՛չ ոքի միջոցով), որոնք ջախջախեցին Սատանայի գլուխը, արմատապես չէր համապատասխանի մի գործնական փրկագործության, որը կնոջը թողնում է անհայտության մեջ: Այսպիսով, եթե մարգարեության մեջ հստակ ասվում է, և եթե փրկությունը Հիսուս Քրիստոսի մարդեղության և մահվան շնորհիվ մարդկային հոգիներում իրականացվում է մարդկության ամբողջ կյանքի ընթացքում (և Սուրբ Եկեղեցին ու Սուրբ Գիրքը միասնաբար վկայում են այս մասին), ուրեմն քրիստոնեական ընկալման մեջ Մարիամին պետք է տեսնել Հիսուսի հետ միասին և Նրանից անբաժան՝ փրկագործության մեջ, Նոր Եվան՝ կախված Հիսուսից, բայց անհրաժեշտ Նրա համար. հիրավի, Մարիամը ոչ այլ ոք է, քան Բոլոր Շնորհների Միջնորդը, ինչպես բնորոշում է Կաթողիկէ Եկեղեցին՝ հանրագումարի բերելով Մարիամի շնորհաշատ գործառույթը: Եթե այն, ինչ մարգարեությունը տեսել է, իսկապես Աստծո երկիրն է, ապա նրանք, ովքեր փոքրացնում են Մարիամին, խորթ են այդ երկրին:

Նմանապես, Ավետումը ցույց է տալիս Մարիամի առանցքային դիրքը: Հասնում է մարգարեությունների կիզակետը, մոտ է Մարիամի դարավոր ճակատագիրը:

Տեսե՛ք Աստծո ողորմած նախատեսության երկյուղածություն ներշնչող իրականացումը: Հոգով մասնակցե՛ք երբևէ գումարված ամենամեծ խաղաղության խորհրդաժողովին: Դա մի խորհրդաժողով է՝ Աստծո և մարդկանց մասնակցությամբ, և այն կոչվում է «Ավետում»: Այդ խորհրդաժողովում Աստծուն ներկայացնում է Իր հրեշտակապետներից մեկը, իսկ մարդկությունը ներկայացված է նրա կողմից, ում անունը Լեգեոնին արտոնված է կրել: Մարիամը մի նուրբ օրիորդ էր, սակայն ամբողջ մարդկության ճակատագիրն այդ օրը կախված էր նրանից: Հրեշտակը եկավ բարի լուր ավետելու: Նա Մարիամին առաջարկեց մարդեղությունը: Հրեշտակը ոչ թե պարզապես տեղեկացրեց Մարիամին, այլ Սուրբ Կույսի ընտրության ազատությունը մնաց անձեռնմխելի, այսինքն՝ մի պահ ամբողջ մարդկության ճակատագրի

հավասարակշռությունը երերում էր: Փրկագործությունը Աստծո մեծ ցանկությունն էր: Բայց այստեղ, ինչպես և այլ ավելի փոքր պարագաներում, Աստված չի պարտադրում մարդուն Իր կամքը: Աստված առաջարկեց մեծարժեք շահը, և մարդն ազատ էր հրաժարվելու դրանից: Հասել էր այն պահը, որին սպասում էին բոլոր սերունդները՝ ճիշտ ինչպես այդ պահից սկսած՝ բոլոր սերունդները հետ են նայում դեպի այդ իրադարձությունը: Դա բոլոր ժամանակների ճգնաժամն էր: Ավետումը լսելով՝ Կույսը կանգ առավ: Մարիամը միանգամից չէ, որ ընդունեց. նա հարց տվեց, և պատասխանը տրվեց: Եղավ մեկ այլ դադար, և հետո նա ասաց հետևյալ բառերը. «Թող ինձ լինի քո խոսքի համաձայն» (Ղկ. 1:38)՝ այն բառերը, որոնք Աստծուն բերեցին երկրի վրա և ստորագրեցին մեծ Խաղաղության Դաշինքը մարդկության համար:

Հայրը փրկագործությունը կախման մեջ դրեց Մարիամից: Շատ քչերն են հասկանում այն ամենը, ինչ բխում է Մարիամի համաձայնությունից: Նույնիսկ կաթողիկէների մեծամասնությունը չեն գիտակցում Մարիամի դերակատարության կարևորությունը: Եկեղեցու Վարդապետներն ասում են հետևյալը. «Եթե Մարիամը մերժած լիներ մայրության առաջարկը, ապա Աստվածային Երկրորդ Անձը մարմնավորված չէր լինի նրա մեջ»: Ինչպիսի՛ հանդիսավոր բան է: «Ինչպիսի՛ սարսափելի միտք է՝ մտածելը, թե Աստված Փրկչի մուտքը աշխարհ կախման մեջ դրեց Նազարեթի աղախնի «Թող լինի ինձ քո խոսքի համաձայն» (Ղկ. 1:38) խոսքերից, որ այս խոսքը պետք է լիներ հին աշխարհի ավարտը և նոր աշխարհի սկիզբը, բոլոր մարգարեությունների իրականացումը, բոլոր ժամանակների շրջադարձային կետը, առավոտյան աստղի առաջին փայլատակումը, որը ազդարարեց արդարության արեգակի ծագումը, որը, ինչքանով որ մարդկային կամքը ունակ է կատարելու, կապեց մի հանգույց, որը Երկինքը բերեց երկրի վրա և մարդկությանը բարձրացրեց դեպի Աստված» (Հեթթինգեր): Հիրավի, ինչպիսի՛ հանդիսավոր իրադարձություն է: Սա նշանակում է, որ Մարիամը մարդկության միակ հույսն էր:

Բայց մարդկության ճակատագիրն ապահով էր նրա ձեռքերում: Մարիամն արտասանեց այդ համաձայնությունը, որը թեև մենք չենք կարող ամբողջությամբ հասկանալ, այնուամենայնիվ, ողջամտությունը մեզ հուշում է, որ դա պե՛տք է որ անճառելի կերպով լինի ամենահերոսական արարքը, որ երբևէ կատարվել է աշխարհում, այնպիսին, որ բոլոր դարերում, նրանից բացի, ո՛չ մի այլ արարած չէր կարող կատարել դա: Հետո Մարիամի մոտ եկավ Փրկիչը, ոչ միայն Մարիամի մոտ, այլև նրա միջոցով՝ խեղճ, անօգնական մարդկության մոտ, որի անունից Մարիամը խոսում էր: Փրկչի հետ միասին Մարիամը մարդկությանը բերեց հավատքի ամբողջ իմաստը, իսկ հավատքը մարդկության իսկական կյանքն է: Ուրիշ ոչինչ այնքան կարևոր չէ, որքան հավատքը: Ամեն ինչ պետք է թողնել հանուն հավատքի: Ամեն զոհաբերություն պետք է կատարվի հանուն հավատքի: Հավատքն աշխարհում միակ բանն է, որ արժեք ունի: Հետևաբար, անդրադարձե՛ք, որ բոլոր սերունդների հավատքը նրանց, ովքեր արդեն հեռացել են այս աշխարհից՝ մինչև մերօրյա սերնդի հավատքը, և գալիք միլիոնավոր սերունդների հավատքը՝ բոլորի՛ հավատքը կախված էր այդ աղախնի բառերից:

Չկա ճշմարիտ քրիստոնեություն առանց Մարիամի: Ի պատասխան այդ անգին պարգևի, բոլոր սերունդները պարտավոր են այդ աղախնին անվանել «երանելի»: Նա, ով քրիստոնեությունը բերեց երկրի վրա, չպետք է բացակայի քրիստոնեական պաշտամունքից: Բայց ի՞նչ ասենք աշխարհի շատ մարդկանց մասին, որոնք էժանագին տեղ են հատկացնում Մարիամին, որոնք արհամարհում են նրան, որոնք ավելի վատ ձևով են վարվում նրա հետ: Այդ մարդկանց մտքով երբևէ անցե՞լ է, որ իրենց ունեցած բոլոր շնորհների համար իրենք պարտական են Մարիամին: Արդյոք նրանք երբևէ հասկանո՞ւմ են, որ եթե ավետման երեկոյան իրենք տեղ չունենային Մարիամի համաձայնության խոսքերի մեջ, ապա փրկագործությունը երբեք չէր իջնի երկրի վրա իրենց համար: Եթե այդպես լիներ, նրանք կմնային դրսում: Այլ խոսքով, նրանք ընդհա՛նրապես քրիստոնյաներ չէին լինի, թեկուզ և ամեն օր և ամբողջ օրը բացականչեին՝ «Տե՛ր, Տե՛ր»

(Մտթ. 7:21): Եվ մյուս կողմից, եթե նրանք իսկապես քրիստոնյաներ են, և եթե կյանքի պարգևը տրվել է նրանց, ապա դա միայն այն պատճառով է, որ Մարիա՛մն է այն վաստակել իրենց համար, որովհետև իրե՛նք էին ներառված Մարիամի համաձայնության մեջ: Մեկ խոսքով, մկրտության միջոցով մարդը դառնում է ոչ միայն Աստծո զավակ, այլ միաժամանակ նաև՝ Մարիամի՛ զավակ:

Հետևաբար, Մարիամի հանդեպ երախտագիտությունը՝ գործնական երախտագիտությունը, պետք է լինի յուրաքանչյուր քրիստոնյայի տարբերանշանը: Փրկագործությունը Հոր և Մարիամի միասնական պարգևն է: Ուրեմն, Հորն ուղղված գոհության խոսքերի հետ միասին շնորհակալության խոսքեր պետք է հղենք նաև Մարիամին:

Որդին միշտ Իր Մոր հետ է: Աստծո կամքն էր այն, որ շնորհի թագավորությունը չսկսվի առանց Մարիամի: Աստծո կամքն էր, որ ամեն ինչ ընթանար այդպես: Երբ Տերը կամեցավ Սբ Հովհաննես Մկրտչին պատրաստել, որպեսզի առաքելության գնա Իրենից առաջ, Նա սրբացրեց Հովհաննեսին Իր Երանելի Մոր սիրալիր այցելության միջոցով, որ տրվեց Եղիսաբեթին: Սուրբ Ծննդյան առաջին գիշերը նրանք, ովքեր իրենց դռները փակեցին Մարիամի առջև, փակեցին Տիրոջ առջև: Նրանք չէին հասկանում, որ Մարիամին մերժելով՝ մերժում էին Նրան, ում սպասում էին: Երբ ընտրյալ ժողովուրդներին ներկայացնող հովիվները գտան Նրան, Ով խոստացված էր բոլոր ազգերին, նրանք գտան Նրան՝ Մարիամի՛ հետ միասին: Եթե նրանք հրաժարվեին Մարիամից, նրանք չէին գտնի Խոստացյալին: Աստվածահայտնության ժամանակ աշխարհի հեթանոս ազգերն ընդունվեցին Տիրոջ կողմից՝ հանձինս երեք թագավորի, բայց այս թագավորները գտան Նրան՝ միայն այն պատճառով, որ գտան Մարիամին: Եթե նրանք հրաժարվեին մոտենալ Մարիամին, ապա նրանք չէին հասնի Հիսուսին:

Այն, ինչ ծածուկ կերպով կատարվել էր Նազարեթում, պետք է հրապարակավ կրկնվեր Տաճարում. Հիսուսն Ինքն Իրեն ընծայաբերեց Հորը, բայց դա տեղի ունեցավ Իր Մոր գրկում և Իր Մոր ձեռքերով: Որովհետև այդ Մանուկը

պատկանում էր Իր Մորը, և առանց Մարիամի այդ ընծայաբերումը չէր կարող տեղի ունենալ:

Ավելին, Եկեղեցու Հայրերից իմանում ենք, որ Տերն իր հասարակական կյանքն էլ չսկսեց առանց Մարիամի համաձայնության: Նմանապես, Մարիամի խնդրանքը Գալիլիայի Կանա քաղաքում սկիզբն էր նշանների, հրաշքների և հզոր գործերի, որոնցով Հիսուսը կատարում էր Իր առաքելությունը:

Մարդը՝ մարդու համար, աղախինը՝ աղախնու համար, ծառը՝ ծառի համար: Երբ Գողգոթայի վրա տեղի ունեցավ վերջին տեսարանը, որով ավարտվեց փրկագործության պատկառելի դրաման, Հիսուսը կախվեց Խաչի ծառից, և Մարիամը կանգնած էր Խաչի տակ՝ ոչ այն պատճառով, որ Մարիամը սիրալիր Մայր էր, ոչ պատահականորեն, այլ ճիշտ այն ունակությամբ, որով Մարիամն ընդունեց մարդեղությունը: Մարիամը Խաչի տակ էր՝ որպես ամբողջ մարդկության ներկայացուցիչ՝ վավերացնելով իր Որդուն ընծայաբերելը՝ հանուն ամբողջ մարդկության: Մեր Տերն Ինքն Իրեն չընծայաբերեց Հորը՝ առանց Մոր համաձայնության և ընծայաբերության՝ կատարված իր բոլոր զավակների անունից. Խաչը պետք է լիներ այդ բոլոր զավակների և Հիսուսի՛ զոհաբերությունը: «Որովհետև ինչպես Մարիամը ճշմարտապես տառապեց և գրեթե մեռավ իր չարչարվող Որդու հետ միասին, այդպես էլ Մարիամը ճշմարտապես հրաժարվեց իր Որդու նկատմամբ իր մայրական իրավունքներից՝ հանուն մեր փրկության, և ողջակիզեց Նրան, և մենք Մարիամի հետ միասին շահեցինք Աստծո արդարությունը: Հետևաբար, կարելի է հիրավի ասել, որ Քրիստոսի հետ միասին նա փրկեց մարդկային ցեղը»:

Սուրբ Հոգին միշտ գործում է Մարիամի հետ միասին: Եկե՛ք մոտենանք Պենտեկոստեի տոնին՝ այդ վիթխարի իրադարձությանը, երբ Եկեղեցին սկսեց իր առաքելությունը: Մարիամն այդտեղ էր: Մարիամի՛ աղոթքով էր, որ Սուրբ Հոգին իջավ Քրիստոսի Խորհրդավոր Մարմնի վրա և եկավ բնակվելու նրա մեջ՝ իր ամբողջ «զորությամբ, ուժով,

փառքով, հաղթանակով և մեծությամբ» (Ա Մնաց. 29:11): Մարիամը Քրիստոսի Խորհրդավոր Մարմնի նկատմամբ ցուցաբերում է նույն հարգանքը, որը մատուցեց Նրա իրական Մարմնի հանդեպ: Այս օրենքը վերաբերում է նաև Պենտեկոստեին, որը մի տեսակ նոր աստվածահայտնություն էր: Մարիամն անհրաժեշտ է Պենտեկոստեի համար՝ ճիշտ ինչպես անհրաժեշտ էր աստվածահայտնության համար: Եվ սա վերաբերում է աստվածային բոլոր գործերին՝ մինչև վերջ. եթե Մարիամը դուրս թողնվի, Աստծո ծրագրից շեղում կլինի՝ ինչքան էլ աղոթենք, աշխատենք և ձգտենք: Եթե Մարիամը չի մասնակցում, շնորհը չի տրվում: Սա գերազանց մի զորություն տվող միտք է: Սրանից կարող է մի հարց ծագել. «Արդյոք նրանք, ովքեր արհամարհում կամ վիրավորում են Մարիամին, զրկվա՞ծ են բոլոր շնորհներից»: Իրականում՝ ո՛չ, նրանք ստանում են շնորհներ, որովհետև Մարիամին ընդունելու մեջ ձախողումը կարող է ներվել որպես բացառապես անգիտության հետևանք: Բայց ի՛նչ ափսոս է Երկնքի համար: Եվ դա Մարիամի հետ վարվելու ի՛նչ ձև է: Ավելին, շնորհները, որ գալիս են այդպիսի պայմաններում, պարզապես մի մասն են այն ամենի, ինչ պետք է հեղվի առատորեն, և եթե այդ հեղումը մասամբ է, մարդու կյանքի գործը ձախողված է:

Ի՞նչ տեղ պետք է հատկացնենք Մարիամին: Ոմանք գուցե զգուշանան և ասեն, թե Աստծու հանդեպ վիրավորանք է՝ մի արարածի վերագրել այդպիսի տիեզերական զորություն: Բայց եթե Աստծուն հաճելի է եղել այդպես վարվել, ինչպե՞ս կարող է դա վիրավորել Նրա արժանապատվությունը: Ինչքա՛ն հիմար կինչեր, եթե մեկն ասեր, թե ձգողականության ուժը շեղում է Աստծո զորությունը. ձգողականության օրենքն Աստծուց է և իրագործում է Աստծո նպատակներն ամբողջ բնության մեջ: Ինչպե՞ս կարող է մեկը մտածել, որ Աստծո հանդեպ հարգանքի պակաս է Մարիամին այդքան շատ բաժին հատկացնելը շնորհների տիեզերքում: Եթե բնության համար Աստծո ստեղծած օրենքները ցույց են տալիս Աստծո զորությունը, ինչպե՞ս կարող է այն օրենքը, որն Աստված ստեղծել է Մարիամի

համար, գործել այլ կերպ, քան միայն ցույց տալու համար Աստծո բարությունն ու ամենակարողությունը:

Բայց նույնիսկ եթե ընդունում են, որ այդ ամենը պատշաճ է Մարիամի համար, ապա դեռևս մնում է կերպի և չափի հարցը: «Ինչպե՞ս,– ասում են ոմանք,– կարող եմ միմյանց հետ ճիշտ համաչափության մեջ դնել աղոթքն ուղղված Մարիամին, աղոթքն ուղղված Սուրբ Երրորդությանը կամ աղոթքն ուղղված սրբերին: Ո՞րն է ճշգրիտ չափը, որը պետք է ուղղեմ Մարիամին, որ լինի ո՛չ չափազանց շատ և ո՛չ չափազանց քիչ»: Ուրիշներ է՛լ ավելի առաջ են գնում և առարկում այսպես. «Մի՞թե ես երես չեմ թեքում Աստծուց, երբ աղոթքներս ուղղում եմ Մարիամին»:

Այս բոլոր կասկածների պատճառը երկնային իրողություններին երկրային իրողություններ վերագրելն է: Այսպիսի անձինք Հոր, Որդու, Սուրբ Հոգու մասին, Մարիամի և սրբերի մասին մտածում են այնպես, կարծես նրանք արձաններ են, և մեկին դիմելիս պետք է անհրաժեշտաբար շուռ գաս մյուսից: Կարելի է օգտագործել շատ օրինակներ՝ ավելի լավ բացատրելու համար ճիշտ դիրքը: Բայց տարօրինակ է, որ այդպիսի դժվարությունների ամենապարզ և միաժամանակ ամենասուրբ լուծումը հետևյալ առաջարկի մեջ է. «Դու իսկապես պետք է ամեն ինչ տաս Աստծուն, բայց այդ ամենը պետք է տաս Մարիամի հետ միասին»: Այսպես պարզ կդառնա, որ այս թվացյալ ծայրահեղ ջերմեռանդությունը Մարիամի նկատմամբ ազատ է այն բարդություններից, որոնք բերում է չափ ու ձև սահմանելը:

Յուրաքանչյուր գործողություն պետք է երաշխավորի Մարիամի «Եղիցի՛»-ն:

Այս մեթոդի արդարացումը պետք է գտնել ինքնին Ավետման մեջ: Այդ պահին ամբողջ մարդկությունը միացած էր Մարիամին, ով ներկայացնում էր մարդկությանը: Մարիամի բառերի մեջ մտնում էին մարդկության բառերը, և ինչ-որ իմաստով Մարիամի մեջ ներառված էր ամբողջ մարդկությունը: Աստված մարդկությանը նայում էր Մարիամի միջոցով: Հետևաբար, քրիստոնյայի ամենօրյա կյանքը ոչ այլ ինչ է, քան մեր Տիրոջ կազմավորումը՝ Իր Խորհրդավոր Մարմնի այդ անդամի մեջ: Այս կազմավորումը տեղի չի

ունենում առանց Մարիամի: Դա սկզբնական մարմնավորման շարունակությունն ու մի մասն է, այնպես որ՝ Մարիամը ճշմարտապես Մայրն է յուրաքանչյուր քրիստոնյայի՝ ճիշտ ինչպես Մայրն է Քրիստոսի: Մարիամի համաձայնությունն ու մայրական խնամքը անհրաժեշտ են քրիստոնյայի հոգում Քրիստոսի ամենօրյա աճման համար ճիշտ այնպես, ինչպես անհրաժեշտ էին Քրիստոսի նախնական մարմնավորման համար: Ի՞նչ է այս ամենը ենթադրում քրիստոնյայի համար: Դա ենթադրում է շատ կարևոր բաներ, որոնցից մեկը հետևյալն է. քրիստոնյան պետք է վճռականորեն և ամբողջ սրտով ընդունի Մարիամի դիրքը՝ որպես իր ներկայացուցիչը զոհաբերության ընծայաբերման մեջ, որը սկսվեց Ավետումով և իր լրումին հասավ Խաչի վրա, որով Տերը վաստակեց մեր փրկությունը: Քրիստոնյան պետք է վավերացնի այն ամենը, ինչ Մարիամն արել է իր անունից, որպեսզի կարողանա առանց ամաչելու և լիակատար ձևով վայելել Մարիամի շնորհիվ իր համար ապահովված անթիվ օգուտները: Եվ ինչպիսի՞ն է այդ վավերացումը: Արդյոք մեկ անգամ կրկնված գործողությունը բավարա՞ր է: Այդ հարցին կարող եք պատասխանել՝ ելնելով այն փաստից, որ Մարիամի՛ միջոցով էր, որ մարդու կյանքի յուրաքանչյուր գործողությունը դարձել է քրիստոնյայի գործողություն: Մի՞թե ողջամիտ և պատշաճ չէ, որ յուրաքանչյուր գործողություն որոշակի ձևով արտացոլի Մարիամին ընդունելը և Մարիամի հանդեպ երախտագիտությունը: Ուրեմն պատասխանը նույնն է. «Դու պետք է Մարիամին տաս ամեն ինչ»:

Փառաբանել Տիրոջը՝ Մարիամի հետ միասին: Մարիամին ունեցի՛ր մտքիդ մեջ՝ գոնե դույզն-ինչ չափով, բայց մշտապես: Մտադրությունդ և կամքդ միացրո՛ւ Մարիամի մտադրությանն ու կամքին՝ այնպես, որ օրվա ընթացքում քո կատարած յուրաքանչյուր գործողությունը, յուրաքանչյուր աղոթքը կատարվի Մարիամի հետ միասին: Մարիամին չի կարելի դուրս թողնել և ո՛չ մի բանից: Երբ աղոթես Հորը կամ Որդուն, կամ Սուրբ Հոգուն, կամ ինչ-որ մի սրբի, պետք է միշտ աղոթես Մարիամի հետ միասին: Մարիամը քեզ հետ միասին կրկնում է աղոթքի բառերը: Մարիամի շուրթերը և քո շուրթերը միասին են կազմավորում բառերը, և Մարիամը

մասնակցում է ամեն ինչում: Այսպիսով, Մարիամը շատ ավելին է անում, քան քո կողքին լինելը: Մարիամն ամբողջությամբ քո մեջ է. քո կյանքը դու ես և Մարիամը՝ միասին, Աստծուն ընծայելով այն ամենը, ինչ դուք ունեք միասին:

Մարիամի հանդեպ փառաբանության այս համապարփակ ջերմեռանդությունը գեղեցիկ կերպով ի գիտություն է ընդունում այն դերակատարությունը, որ Մարիամն ունեցել է և շարունակում է ունենալ փրկության իրագործման մեջ: Դա նաև ամենահեշտ ջերմեռանդությունն է Մարիամի հանդեպ: Դա փարատում է կասկածները նրանց, ովքեր ասում են. «Որքա՞ն շատ» և նրանց, ովքեր վախենում են, թե Մարիամին տալը նշանակում է՝ վերցնել Աստծուց: Բայց նույնիսկ որոշ կաթողիկէներ կարող են ասել. «Դա ծայրահեղությո՛ւն է»: Բայց ինչո՞վ է դա հակառակ ողջամտությանը: Եվ որտե՞ղ է Մարիամի հանդեպ ջերմեռանդությունը մերժում այն, ինչ պատշաճում է Աստծո հանդեպ ջերմեռանդությանը: Այս վերջին կետում մեղք են գործում նրանք, ովքեր ասում են, թե իրենք նախանձախնդիր են Աստծո արժանապատվության համար, բայց չեն կատարում Աստծո ծրագիրը, ովքեր ասում են, թե իրենց համար Սուրբ Գիրքն Աստծո սրբազան խոսքն է, բայց չեն լսում այն տողերը, որոնք երգում են Մարիամի հանդեպ Աստծո մեծագործությունների մասին, և որ բոլոր սերունդները Մարիամին երանի կտան (Ղկ. 1:48-49):

Այս բոլոր կասկածամիտների հետ խոսելու լավագույն միջոցը Մարիամի հանդեպ հարուստ և լիակատար ջերմեռանդությունն է: Բայց ինչպե՞ս կարող են լեգեոնականները Մարիամի մասին խոսել որևէ այլ ձևով: Նվազագույնի հասցնելն ու նվազեցնելը միայն թողնում են Մարիամին՝ որպես մի առեղծված: Եթե Մարիամը լոկ մի ստվեր է կամ զգացմունքային մի բան, ապա, անշուշտ, արդարացի են ոչ թե կաթողիկէները, այլ նրանք, ովքեր Մարիամին վերաբերվում են միայն թեթևորեն: Եվ մյուս կողմից, քրիստոնեական կյանքում Մարիամի դերակատարության և էական տեղի մասին հաստատումը մի մարտահրավեր է, որը չի կարող արհամարհվել որևէ մարդկային սրտի կողմից, որտեղ գերիշխում է աստվածային շնորհը: Այդ դեպքում Մարիամի

դերակատարության հանդարտ ուսումնասիրությունն այդպիսի մարդկանց կբերի Մարիամի ոտքերի առաջ:

Լեգեոնի նպատակն է՝ արտացոլել Մարիամին: Եթե Լեգեոնը հավատարիմ մնա այս իդեալին, ապա կմասնակցի Մարիամի գերազանց շնորհին՝ լույս սփռելու համար նրանց սրտերի մեջ, ովքեր անհավատության խավարի մեջ են:

«Թովմա Աքվինացու մեծ ուսուցիչը՝ Ալբերտ Մեծը, մի արժանավայել խոսք ունի Ավետարանի Ավետման մասին դրվագում, որը եթե ազատորեն շարադրենք, ասում է, թե Մարիամի Որդին Իր Մորը տալիս է անսահման գերազանցություն՝ որպես մի ծառի, որը տալիս է անսահմանորեն կատարյալ պտուղ, կատարելություն, որը բնորոշ է միայն այդ պտղին:

Գործնականում Կաթողիկէ Եկեղեցին Աստվածամորը նայում է որպես մի անսահմանափակ զորության՝ շնորհի իրականության մեջ: Մարիամը համարվում է բոլոր փրկվածների Մայրը՝ իր շնորհի տիեզերականության պատճառով: Մարիամը՝ իր աստվածային մայրության շնորհիվ, Մարիամը հստակորեն ամենամեծ, ամենաարդյունավետ, ամենատիեզերական գերբնական զորությունն է Երկնքում և երկրի վրա՝ Երեք Աստվածային Անձերից հետո» (Վոնիեր, «Աստվածային Մայրությունը»):

2. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՆԳԻՆ ՀՈԳՈՒՆ ՊԵՏՔ Է ՎԵՐԱԲԵՐՎԵԼ ԱՆՍԱՀՄԱՆ ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՔԱՂՑՐՈՒԹՅԱՄԲ

Կոպիտ վերաբերմունքը պետք է արգելվի լեգեոնական առաքելության մեջ: Հաջողության համար էական որակները, և մանավանդ արհամարհվածների և մեղավորների հետ աշխատելիս, պետք է լինեն սրտակցությունն ու հաստատուն քաղցրությունը: Կյանքի պարագաներում մշտապես մենք ինքներս մեզ համոզում ենք, թե կան մասնավոր դեպքեր, երբ պետք է օգտագործել կշտամբող կամ սուր խոսքեր, և մենք օգտագործում ենք այդպիսի բառեր, իսկ հետո զղջում: Գուցե յուրաքանչյուր պարագայում էլ սխալներ եղել են: Ինչո՞ւ չենք կարող ժամանակին հիշել, որ դժկամությունն ու հակառակությունը ծնվում են կոպիտ վերաբերմունքից, թեև, անկասկած, արժանի վերաբերմունքից: Բայց

այն ծաղիկը, որը կբացվեր մեղմության և սրտացավության քնքուշ ջերմության պայմաններում, ամուր փակվում է սառը եղանակին: Մյուս կողմից լեգեոնականի սրտացավ մոտեցումը, պատրաստակամությունը՝ լսելու և իր առջև դրված խնդրի մեջ ամբողջ սրտով մտնելու, հաճելիորեն անդիմադրելի են, և ամենակարծրացած մարդն էլ ամբողջովին ազդվելով՝ տեղի է տալիս հինգ րոպեում, ինչին դժվար թե հնարավոր լիներ հասնել՝ մեկ տարի շարունակաբար հորդորելով:

Այդպիսի բարդ բնավորությամբ մարդիկ սովորաբար երերում են բարկության եզրին: Նա, ով շարունակում է գրգռել նրանց, պատճառ է դառնում, որ նրանք մեղք գործեն և կոշտացնում է նրանց դիմադրությունը: Նա, ով կարող է օգնել նրանց, պետք է առաջնորդի հակառակ ուղղությամբ: Նա կարող է դա անել միայն չափազանց մեծ համբերատարությամբ և հարգանքով:

Յուրաքանչյուր լեգեոնական պարտավոր է իր հոգում դրոշմել հետևյալ խոսքերը, որոնք մեր Օրհնյալ Տիրամոր կողմից ուղղված են Եկեղեցուն. «Որովհետև իմ մասին հիշողությունն ավելի քաղցր է, քան մեղրը, և ինձ ունենալն ավելի քաղցր է, քան մեղրախորիսխը» (Սիր. 24:20): Ուրիշները կարող են բարի ազդեցություն ունենալ ավելի ուժեղ մեթոդներով: Բայց լեգեոնականի համար Աստծո գործերը կատարելու համար կա միայն մեկ ճանապարհ՝ քնքշության և քաղցրության ճանապարհը: Լեգեոնականը թո՛ղ երբեք չհեռանա այդ ճանապարհից, ինչ էլ պատահի: Եթե հեռանա, ապա չի հասնի բարիքին, այլ ավելի շուտ՝ կվնասի: Այն լեգեոնականները, որոնք շեղվում են Մարիամի իրականությունից, կորցնում են կապը Մարիամի հետ, ումից կախված է իրենց աշխատանքը: Այդ դեպքում, նրանք ի՞նչ կարող են հուսալ, որ կանեն:

Լեգեոնի ամենաառաջին պրեզիդիումին տրվեց «Ողորմության Տիրամայր» անվանումը: Պատճառն այն էր, որ նրանց ձեռնարկած առաջին աշխատանքն այցելելն էր մի հիվանդանոց, որը գտնվում էր Մարիամի Քույրերի միաբանության հոգածության ներքո: Լեգեոնականներին թվում էր, թե իրենք էին ընտրել այդ անունը, բայց անկասկած, այդ

անունը շնորհել էր ինքը՝ քաղցր Կույս Մարիամը, և դրանով ցույց էր տվել, որ այդ ողորմության որակով լեգեոնականը պետք է միշտ տարբերվի ուրիշներից:

Սովորաբար լեգեոնականներն անփույթ չեն մեղավոր հոգիներին փնտրելիս: Հաճախ լինում է, որ երկար տարիներ անխոնջ ջանքերով աշխատում են մի աննահանջ մեղավորի դարձի բերելու համար: Բայց երբեմն լինում են անձինք, որոնք դիմացինի հավատքը, հույսը և սերը դնում են փորձության մեջ: Նրանք, կարծես, դուրս են սովորական մեղավորների դասակարգից՝ ընդգծված վատ վարքով անձինք, եսասիրության մարմնացումներ, կամ անսկզբունք դավաճաններ՝ լի Աստծո հանդեպ ատելությամբ կամ կրոնի հանդեպ ապստամբ պահվածքով: Այդպիսիները, կարծես, իրենց մեջ չունեն որևէ մեղմ տեղ, շնորհի որևէ կայծ, կամ հոգևորի որևէ նշույլ: Այդպիսիներն այնքան բառացիորեն վանող են, որ դժվար է չհավատալ, որ նրանք նույն կերպ տհաճ են նաև Աստծո համար: Ի՞նչ կարող է Աստված տեսնել այդպիսի սարսափելի այլանդակությունների մեջ, որը Նրան ստիպի փափագել այդպիսի անձանց հետ ունենալ ամենամտերիմ միությունը Սուրբ Հաղորդության մեջ, կամ նրա ընկերությունը՝ Երկնքում:

Բնական գայթակղությունը՝ այդպիսի մեկին թողնելու միայնակ ինքն իր հետ, գրեթե անհաղթահարելի է: Այնուամենայնիվ, լեգեոնականը չպետք է տեղի տա այդ գայթակղությանը: Այդ բոլոր մարդկային պատճառաբանությունները կեղծ են: Աստված հիրավի՛ ուզում է այդ չարագործ, այլանդակված հոգին այնքա՛ն շատ, այնքա՛ն եռանդով, որ ուղարկել է Իր Որդուն՝ մեր ամենասիրելի Տիրոջը, այդ անձի մոտ, և Նա հիմա նրա հետ է: Ահա՛ լեգեոնական հետևողականության դրդապատճառը՝ բացառիկ կերպով գրված Գերհարգելի Ռ. Հ. Բենսոնի կողմից. «Եթե մի մեղավոր Հիսուսին պարզապես մի կողմ հրեր իր մեղքով, մենք կարող էինք թույլ տալ, որ այդպիսի մեկն ուղղակի գնար իր ճանապարհով, բայց, Սբ Պողոսի սարսափեցնող խոսքերով, մեղավոր հոգին բռնում է Քրիստոսին և դարձյալ խաչը հանում Նրան և ծաղրում (տե՛ս Եբր. 6:6), և այս պատճառով է, որ չենք կարող մեղավորին թողնել, որ գնա իր ճանապարհով»:

Ինչպիսի՛ ոգեշնչող միտք է: Քրիստոսը՝ մեր Թագավորը, այսպես ասած, թշնամու տիրապետության տակ է: Ինչպիսի՛ բնաբան է հարատև պայքար մղելու համար, երբևէ սանձազերծված ամենամռայլ ճակատամարտի համար, աննահանջ փնտրելու համար մի հոգի, որին պետք է դարձի բերել, որպեսզի Քրիստոսի հոգեվարքն ավարտվի: Ամեն ինչ, որ բնական է, պետք է այրվի հավատքի եռանդով առլեցուն ներգործության մեջ, որը տեսնում և սիրում է և կանգնում է խաչյալ Քրիստոսի կողքին՝ այդ մեղավորի մեջ: Ճիշտ ինչպես ամենակոպիտ երկաթը հեղուկ է դառնում՝ կրակի փուքսի ներգործությամբ, այդպես էլ ամենակարծրացած սիրտը կփափկի անհաղթելի սիրո կրակի մեջ:

Մի շատ փորձառու լեգեոնականի, որն աշխատել է մի մեծ քաղաքի մեղավորների հետ, հարցրին, թե արդյոք նա հանդիպե՞լ է մեղավորների, որոնք բացարձակապես անհույս էին: Որպես լեգեոնական, դժկամորեն ընդունելով, որ կա այդպիսի դասակարգում, նա պատասխանեց, թե շատերն էին սարսափելի, բայց քչերն էին անհույս: Ի վերջո նա ընդունեց, որ ճանաչում էր միայն մեկին, ով կարծես թե տեղավորվում էր այդ բնորոշման մեջ:

Հենց այդ երեկո նա ստացավ իր ամբողջական կշտամբանքը: Բոլորովին պատահականորեն նա փողոցում հանդիպեց հենց այդ անձին, որին այդպես էր բնորոշել: Եվ հրա՛շք. միայն երեք րոպե տևած զրույցից հետո տեղի ունեցավ այդ անձի լիարժեք և ընդմիշտ դարձը:

«Սրբուհի Մադլեն Սոֆիի կյանքում աչքի է ընկնում մի դրվագ, որտեղ ամբողջ հուզականությամբ երևում է մարդկային հոգու փրկության հավատարիմ ձգտումը: Քսաներեք տարի շարունակ նա համառ սիրով կառչել էր մեկից, ում աստվածային նախախնամությունն էր բերել իր ճանապարհին մի մոլորյալ ոչխար, որը, Սրբուհի Մադլենից բացի, չէր կարողանա գտնել մեկին, ով իրեն դներ ճիշտ ճանապարհի վրա: Թե որտեղ էր ծնվել Ջուլին, ոչ ոք չգիտեր. նա երբեք իր մասին երկու անգամ նույն ձևով չէր պատմում: Բայց նա մենակ էր, խեղճ, բարդ վիճակում, սխալ ճանապարհներով գնալու պատրաստ, նրա կյանքում ոչինչ նորմալ չէր՝ ստում էր, դավաճանում, չար և կրքերին տրված՝ խելագարության աստիճան: Բայց Սուրբ Մադլենը նրա մեջ տեսնում էր միայն մի վտանգված հոգի, որին գտել է Բարի Հովիվը և դրել իր

խնամակալության տակ: Մադլենը նրան որդեգրեց իր սեփական երեխայի նման, գրեց նրան ուղղված ավելի քան երկու հարյուր նամակ և շատ տառապեց նրա համար: Այդ ամենի դիմաց սրբուհին ստանում էր միայն զրպարտություն և անշնորհակալ վերաբերմունք, բայց դարձյալ կառչում էր նրանից և երբեք հույսը չէր կտրում... Ջուլին վախճանվեց սրբուհուց յոթ տարի անց՝ Աստծո հետ հաշտված» (Մոնահան, «Սրբուհի Մադլեն Սոֆի Բարաթ»):

3. ԼԵԳԵՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր մասնագիտություն ունի համարձակության իր յուրահատուկ տեսակը, և անարժան է համարում նրանց, ովքեր չունեն այդ համարձակությունը: Լեգեոնի պահանջը վերաբերում է հատկապես բարոյական համարձակությանը: Լեգեոնի աշխատանքը գրեթե ամբողջությամբ ուղղված է մարդկանց մոտենալուն՝ նրանց Աստծուն մոտեցնելու մտադրությամբ: Երբեմն այդ մոտեցմանն ի պատասխան լինում է դժկամությունը կամ անհասկացողությունը, որը կարտահայտվի տարբեր ձևերով, ավելի պակաս մահացու, քան պատերազմի հրթիռները, բայց, ինչպես փորձը ցույց է տալիս, քչերն են կարողանում դիմանալ: Որովհետև հազարավորների մեջ, որոնք համարձակորեն կանգնում են կրակոցների և ռումբերի կարկտին դեմ հանդիման, դժվար թե գտնվի մեկը, ով չի ցնցվի նույնիսկ մի քանի ծաղրական կամ բարկացած բառերից, կամ քննադատությունից, կամ նույնիսկ հետաքրքրասեր հայացքներից, կամ մտավախությունից, թե գուցե մտածեն, որ ինքը քարոզ է անում կամ ուզում է սրբի տպավորություն թողնել:

«Ի՞նչ կմտածեն, ի՞նչ կասեն». սրանք վախեցնող հարցադրումներ են, մինչդեռ լավ կլինի որդեգրել առաքյալի մտածումը առ այն, որ մենք արժանանում ենք արհամարհանքի Հիսուսի անվան համար (Գրծք. 5:41):

Այնտեղ, որտեղ ազատություն է տրվում այս երկչոտությանը, որն ընդհանրապես կոչվում է մարդկային հարմարվողականություն, հոգիների համար ամբողջ աշխատանքն իջեցվում է երկրորդական մակարդակի: Նայե՛ք ձեր շուրջբոլորը և տեսե՛ք դրա ողբերգական հետևանքները: Ամենուրեք

հավատացյալներն ապրում են մեծ համայնքներում՝ անհավատների, ոչ կաթողիկէների կամ հեռացած կաթողիկէների հետ միասին: Նրանց բոլորի հինգ տոկոսին կարելի է շահել՝ սկզբնական լուրջ ջանքերով նրանց անհատապես ներկայացնելով կաթողիկէ վարդապետությունը: Հետո այդ հինգ տոկոսը կարող է լինել սկիզբ և միջոց ավելի լայնամասշտաբ դարձի համար: Բայց այդ ջանքը չի գործադրվում: Այդ կաթողիկէները կուզենային դա անել, բայց ոչինչ չեն անում, որովհետև նրանց գործնական ուժերը կաթվածահար են դարձել մարդկային հարմարվողականության մահացու թույնի պատճառով: Մարդիկ տարբեր պիտակներով են անվանում այդ հարմարվողականությունը՝ «ողջամտություն», «հարգանք ուրիշների կարծիքների հանդեպ», «անհույս ձեռնարկ», «առաջնորդություն է պետք» և շատ այլ խոսույթներով, բայց դրանց բոլորին հետևում է անգործությունը:

Սբ Գրիգոր Սքանչելագործի վարքում պատմվում է, որ մահվանից առաջ նա յուրայիններին հարցրել է, թե քաղաքում քանի անհավատ կա: Պատասխանը արագ տրվեց. «Միայն տասնյոթ մարդ»: Մահամերձ եպիսկոպոսը այդ թվի վրա փոքր-ինչ խորհրդածելուց հետո ասաց. «Դա ճիշտ թիվն է հավատացյալների, որոնց ես գտա այստեղ, երբ եկա որպես եպիսկոպոս»: Սկսելով միայն տասնյոթ հավատացյալներով՝ նրա ջանքերով հավատքն ընդունել էին բոլորը՝ բացի միայն տասնյոթ մարդուց: Հրաշալի՛ է: Բայց դարերի հոլովույթի մեջ Աստծո շնորհը չի սպառվել: Հավատքն ու քաջությունը կարող են նույն բանը անել այսօր: Սովորաբար ոչ թե հավատքն է պակասում, այլ քաջությունը:

Հասկանալով այս ճշմարտությունը՝ Լեգեոնը պետք է վճռականորեն պայքարի իր անդամների մեջ մարդկային հարմարվողականության ոգու արտահայտության դեմ՝ նախ և առաջ հստակ կարգապահություն մտցնելով գործողությունների մեջ, երկրորդ, սովորեցնելով իր լեգեոնականներին մարդկային հարմարվողականությանը նայել այնպես, ինչպես զինվորը նայում է վախկոտությանը: Լեգեոնականներին պետք է կրթել գործել հակառակ սեփական բնազդներին և առաջնորդել՝ հասկանալու համար, որ

սերը, հավատարմությունը և կարգապահությունը, ի վերջո, տկար կլինեն, եթե նրանք չկարողանան զոհաբերել և լինել համարձակ:

Լեգեոնականը չի կարող լինել անհամարձակ: Ի՞նչ կարող ենք ասել այս դեպքում, եթե ոչ Սբ Բեռնարդոսի խոսքերը. «Ինչպիսի՛ ամոթ է՝ լինել փշերով պսակված Գլխի մարմնի մի նուրբ անդամ»:

«Եթե կռվեիր միայն այն ժամանակ, երբ պատրաստ լինեիր կռվի, ապա ինչո՞ւմ կլիներ քո վաստակը: Մի՞թե կարևոր է այն, որ համարձակություն չունես, եթե քեզ պահել ես այնպես, կարծես իսկապես քաջ ես: Եթե ծուլություն ես զգում մի կտոր թել վերցնելու, և սակայն անում ես դա ի սեր Հիսուսի, ապա ավելի շատ վաստակ ես ունենում, քան առավել ազնիվ գործողության համար, որն արել ես մեծ հաճույքով: Տխրելու փոխարեն ուրախ եղի՛ր, որ թույլ տալով քեզ սգալու սեփական թուլությունը՝ Տերը քեզ առիթ է ընձեռում ավելի մեծ թվով հոգիներ փրկելու համար» (Սբ Թերեզա դը Լիզյո):

4. ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Սա մի հիմնարար լեգեոնական սկզբունք է, որ յուրաքանչյուր աշխատանքի մեջ տանք մեր լավագույն ուժերը: Պարզ թե բարդ աշխատանք կատարելիս ամեն դեպքում աշխատանքը պետք է կատարվի Մարիամի ոգով:

Կա ևս մեկ կարևոր պատճառ: Հոգևոր գործերում չի կարելի հարցնել, թե որքան ջանք է հարկավոր ներդնել: Հոգու հետ աշխատելիս ո՞ր կետում կարելի է ասել «բավական է»: Եվ, իհարկե, սա հատկապես վերաբերում է առավել դժվար աշխատանքներին: Այս դժվարություններին առերեսվելով՝ տեսնում ենք, որ չափազանցնում ենք դժվարությունները և պտտվում «անհնարին է» արտահայտության շուրջ: Անհնարին թվացող բաներից շատերը բացարձակապես անհնարին չեն: Քիչ բան է անհնարին, եթե կա եռանդ և հմտություն: Բայց մենք երևակայում ենք, թե դրանք անհնարին են և այդպիսով դրանք դարձնում անհնարին:

Բայց երբեմն հանդիպում ենք աշխատանքների, որոնք իսկապես անհնարին են, այսինքն՝ մարդկային

կարողություններից վեր են: Ակնհայտ է, որ եթե հիմնվենք միայն մեր սեփական կարողությունների վրա, ապա ձեռնպահ կմնանք մեր կողմից անօգուտ համարվող գործողություններից, որոնք երևակայել ենք որպես անհնարին, կամ որոնք իսկապես անհնարին են: Գուցե դա նշանակում է, որ պետք է ձեռք չտայինք առավել կարևոր և կատարելու համար անհրաժեշտ աշխատանքի երեք չորրորդ մասին, ինչը հավասարազոր կլիներ այն բանին, որ արկածային քրիստոնեական հաղթարշավը իջեցնենք և դարձնենք մի փոքրիկ պատերազմ: Ուրեմն, Լեգեոնի բանաձևը պահանջում է ջանքեր գործադրել բոլոր իրավիճակներում և ամեն գնով. ջանադրությունն առաջին սկզբունքն է: Անհնարինության մասին գաղափարի ժխտումը՝ բնական և գերբնական իմաստով, բանալին է հնարավորին հասնելու համար: Այդ վերաբերմունքն ինքնին կարող է լուծել խնդիրները: Այն կարող է ավելի հեռուն գնալ, որովհետև դա, անկասկած, նշանակում է լսել Ավետարանի աղաղակը առ այն, թե Աստծո հետ միասին ոչ մի աշխատանք անհնարին չի լինի: Դա հավատքի պատասխանն է մեր Տիրոջ սեփական կանչին՝ հավատալու այնպես, որ նույնիսկ լեռները ենթարկվեն և ծովն ընկնեն:

Մտածել հոգևոր հաղթանակի մասին՝ առանց միաժամանակ ամրացնելու սեփական ոգին, որպեսզի անպարտելի դառնա, կլինի պարզապես մի երևակայական բան:

Գիտակցելով սա՝ Լեգեոնի գլխավոր աշխատանքը պետք է լինի իր անդամների ոգին զորացնելը:

«Յուրաքանչյուր անհնարինություն կարելի է բաժանել տասներեք քայլերի, որոնցից յուրաքանչյուրը հնարավոր է», հայտարարում է մի լեգեոնական լոզունգ՝ թվացյալ ինքնահակադրությամբ: Սակայն այդ գաղափարը գերազանցորեն շոշափելի է: Դա ձեռքբերումների հիմքն է: Այն ամփոփում է հաջողության փիլիսոփայությունը: Որովհետև եթե միտքը շփոթվում է ակնհայտ անհնարինի մասին խորհրդածության պատճառով, մարմինը կթուլանա՝ ընկնելով կարեկից անգործության մեջ: Այդպիսի պայմաններում **յուրաքանչյուր** դժվարություն պարզապես մի անհնարինություն է: Երբ հանդիպում ենք այդպիսի դժվարության, ասում է իմաստուն

լոզունգը, բաժանի՛ր այն, բաժանի՛ր և նվաճիր: Չես կարող մեկ քայլով բարձրանալ շենքի տանիքը, բայց կարող ես հասնել այնտեղ աստիճաններով, ամեն անգամ կատարելով մեկ քայլ: Նմանապես, դժվարության հանդիպելով՝ կատարի՛ր մեկ քայլ: Եվ կարիք չկա մտահոգվելու հաջորդ քայլի մասին, ուրեմն կենտրոնացի՛ր այդ մեկ քայլի վրա: Երբ կատարես առաջին քայլը, երկրորդը կստացվի ինքն իրեն: Կատարի՛ր երկրորդ քայլը, և երրորդը կստացվի, ու այդպես շարունակ: Եվ շատ քայլեր անելուց հետո գուցե լոզունգի ոչ բոլոր տասներեք քայլերը, որը պարզապես այդ «անհնարինություն» բառի տառերի քանակն է, կտեսնես, որ անցել ես անհնարին դռները և մտել Ավետյաց երկիրը:

Նկատի ա՛ռ, որ հոգեկան լարումը գործողություն չէ: Անկախ նրանից, թե ինչպիսին է բարդության աստիճանը, քայլը պետք է կատարվի: Իհարկե, քայլը պետք է լինի հնարավորինս արդյունավետ: Բայց եթե արդյունավետ քայլը չի երևում, պետք է անել գոնե պակաս արդյունավետը: Եվ եթե դա էլ հնարավոր չէ կատարել, ապա պետք է անել ինչ-որ գործունյա ժեստ (այսինքն՝ ոչ պարզապես աղոթք), որը, թեև գործնական արժեք չունի, բայց առնվազն ուղղված է ինչ-որ խնդիր լուծելուն, կամ առնչվում է դրա հետ: Այս վերջին մարտահրավեր նետող ժեստը այն է, ինչ Լեգեոնն անվանում է «Խորհրդանշական գործողություն»: Դրա վրա հիմնվելը կվերացնի անհնարինությունը՝ որպես երևակայություն: Եվ մյուս կողմից այն հավատքի ոգով մտնում է դրամատիկ պայքարի մեջ՝ իրական անհնարինության հետ:

Արդյունքը կարող է լինել այդ Երիքովի պատերի փլուզումը:

«Եվ յոթերորդ անգամ, երբ քահանաները հնչեցրին փողերը, Հեսուն ասաց ժողովրդին. «Այժմ աղաղակե՛ք, որովհետև Տերն այս քաղաքը մեր ձեռքը հանձնեց»… Երբ ժողովուրդը լսեց փողի ձայնը, բոլորն աղաղակեցին մեծ և ուժգին աղաղակով, պարիսպն ընկավ շուրջանակի, և ժողովուրդը բարձրացավ, մտավ քաղաք, ամեն մեկը գնում էր ուղիղ իր դիմացը, և քաղաքը գրավեցին» (Հես. 6:16-20):

5. ՊԵՏՔ Է ԿԱՏԱՐՎԻ ԳՈՐԾՈՒՆՅԱ ԱՇԽԱՏԱՆՔ

Լեգեոնն առանց իր ոգու կնմանվի անկյանք մարմնի: Լեգեոնի ոգին, որն այդպես փոխակերպում է իր անդամներին, տարածված չէ օդում՝ սպասելով, որ անդամներն ընդունեն այն: Ո՛չ, այդ կենսական ոգին արդյունքն է շնորհի՝ որպես պատասխան անդամների գործադրած ջանքերի: Այն կախված է կատարվող աշխատանքից և անհատ լեգեոնականների կողմից աշխատանքի կատարման ձևից: Եթե չկա ջանադրություն, ոգին նվազում է և կարող է մեռնել:

Որպես հետևանք ա. աշխատելու դժկամության, որովհետև աշխատանքը համարում են բարդ, կամ բ. անկարողության տեսնելու աշխատանքի կարիքը, որը կա առատորեն, նույնիսկ ամենափոքր վայրերում, բայց նախ և առաջ գ. հակառակող քննադատության վախի, կարող է լինել ակտիվ աշխատանքից խուսափելու հակում կամ անդամների համար անկարևոր աշխատանք նշանակելու հակում: Բայց բոլորին զգուշացնում ենք, որ Լեգեոնի համակարգը կառուցված է՝ վերահսկելու համար բովանդակային գործունյա աշխատանքը: **Բացարձակապես ոչ մի արդարացում չկա հիմնելու այս համակարգը, եթե գործունյա աշխատանք չի ձեռնարկվում: Մի բանակ, որը հրաժարվո՛ւմ է մարտի բռնվել, ինչպե՞ս կարող է բանակ կոչվել: Նմանապես, այն պրեզիդիումի անդամները, որոնք ներգրավված չեն գործունյա որևէ աշխատանքի մեջ, իրավունք չունեն կրելու «Մարիամի լեգեոնականներ» անունը: Կրկնում ենք, որ հոգևոր վարժությունները չեն համապատասխանում ակտիվ աշխատանք կատարելու լեգեոնական պարտականությանը:**

Անգործ պրեզիդիումը ոչ միայն հավատարիմ չէ գործնական և կենսական առաքելություն կատարելու Լեգեոնի նպատակին, այլ դա մեկ այլ առավել մեծ անարդարություն է Լեգեոնի հանդեպ: Դա տպավորություն է ստեղծում, թե Լեգեոնը հարմար չէ որոշակի աշխատանք կատարելու համար, մինչդեռ իրական փաստն այն է, որ Լեգեոնը, թեև կատարելապես ունակ է, նույնիսկ չի էլ փորձվել այդ աշխատանքի մեջ:

6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ ՊՐԵԶԻԴԻՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ

Աշխատանքը պետք է նշանակվի պրեզիդիումի կողմից: Անդամները չեն կարող ձեռնարկել ու կատարել որևէ աշխատանք՝ ըստ իրենց հայեցողության և Լեգեոնի անունից: Այս կանոնը, սակայն, չպետք է մեկնաբանվի այնպես խստորեն, որ լեգեոնականներին արգելվի բարի գործ կատարել, եթե դրա առիթն ընձեռվում է պատահաբար: Իրականում, լեգեոնականը պետք է միշտ պատրաստ լինի բարիք գործելու: Պատահաբար կատարված աշխատանքը կարելի է ներկայացնել և դրա վերաբերյալ հաշվետվություն տալ հաջորդ հանդիպման ժամանակ, և պրեզիդիումի կողմից ընդունվելու դեպքում կարող է դառնալ սովորական լեգեոնական աշխատանք: Բայց այդ ամենի մեջ պրեզիդիումը պետք է զգուշավոր լինի: Բարի կամքի տեր շատ մարդիկ բնական հակում ունեն կատարելու ամեն ինչ, բացի նրանից, ինչ իրենցից ակնկալվում է կատարել, շրջել ամբողջ դաշտով մեկ՝ փոխարենը կանգնելու այն աշխատանքի վրա, որը հանձնարարվել է իրենց: Այս անձինք ավելի շատ վնասում են, քան բարիք են գործում, և եթե նրանք չզսպվեն, ապա կսկսեն վնասել լեգեոնական կարգապահությանը:

Երբ թուլանա պրեզիդիումի հանդեպ պատասխանատվության զգացումը և այն գաղափարը, թե լեգեոնականը պրեզիդիումի պատգամաբերն է՝ ուղարկված հստակ հրահանգներով և վերադարձած՝ հաշվետու լինելու իրեն հանձնարարված աշխատանքի կատարման վերաբերյալ, ապա աշխատանքն ինքնի՛ն շուտով այլևս չի կատարվի կամ էլ վտանգի աղբյուր կդառնա Լեգեոնի համար: Եթե այդպիսի ինքնանկախ գործունեության հետևանքը լինի մի ծանր սխալ, մեղադրյալի աթոռին կնստի Լեգեոնը՝ չնայած նրան, որ սխալը Լեգեոնի համակարգն արհամարհելու հետևանքն է:

Երբ հատկապես խանդավառ լեգեոնականները բողոքում են, թե իրենց բարիք գործելու ջանքերը սահմանափակվում են չափազանց շատ կարգապահությամբ, լավ կլինի վերլուծել այդ բողոքի պատճառը: Բայց նաև պետք է համոզվել, թե արդյոք այդպիսի բողոքը հիմնավոր չէ՞: Կարգապահության

հիմնական նպատակը մարդկանց առաջ մղելն է և ոչ թե հետ պահելը, բայց որոշ անձինք կարծես թե իշխանություն բանեցնելն այլ կերպ չեն պատկերացնում, քան միայն «ո՛չ» ասելով և, ըստ այդմ, գործում են՝ սահմանափակելով ուրիշներին:

7. ԵՐԿՈՒ-ԵՐԿՈՒ ԱՅՑԵԼԵԼՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԼԵԳԵՈՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Այցելությունները պետք է կատարել երկու-երկու: Այս սկզբունքին հետևելով՝ Լեգեոնն ունի հետևյալ նպատակները. նախ՝ լեգեոնականների ապահովությունը: Սովորաբար այս նկատառումը վերաբերում է տնայցերին, քան թե փողոցներում աշխատանքին: Երկրորդ, երկուսով կատարվող այցելությունը փոխադարձ քաջալերանքի հնարավորություն է: Դա օգնում է՝ ընդդեմ մարդկային հարմարվողականության կամ վախի զգացումներին՝ դժվարին վայրեր կամ տներ այցելելու ժամանակ, երբ սառնությամբ են ընդունում: Երրորդ, դա աշխատանքի վրա դնում է կարգուկանոնի կնիքը: Նշանակված այցելությունը կատարելու ժամանակ այդ սկզբունքն ապահովում է բծախնդրությունը և հավատարմությունը: Եթե թողնվի միայն մեկի հայեցողությանը, ապա նա կարող է հեշտությամբ փոխել իր շաբաթական այցելության ժամը կամ ընդհանրապես հետաձգել այն: Հոգնածությունը, եղանակային վատ պայմանները, բնական դժկամությունը՝ կատարելու տհաճ այցելությունը, այս ամենը ազատորեն գլուխ են բարձրացնում, եթե չկա ուրիշի հետ պայմանավորվածություն: Հետևանքը լինում է այն, որ այցելությունը դառնում է անկարգուկանոն և անհաջող և, ի վերջո, ընդհանրապես թողնվում է:

Սովորաբար, երբ լեգեոնականը չի պահում իր գործակից լեգեոնականի հետ պայմանավորվածությունը, տեղի է ունենում հետևյալը: Եթե այդ աշխատանքը, օրինակ, հիվանդանոց կատարվող այցելություն է, կամ այլ աշխատանք, որտեղ ակնհայտ է, որ չկա վտանգի հավանականություն, լեգեոնականը կարող է միայնակ կատարել նշանակված աշխատանքը: Իսկ եթե դա այնպիսի աշխատանք է,

որը լեգեոնականին կարող է դնել դժվարին իրավիճակում, կամ անառողջ միջավայրում է, ապա նա պետք է թողնի այդ այցելությունը: Պետք է հասկանալ, որ միայնակ այցելություն կատարելու թույլտվությունը բացառություն է: Պրեզիդիումը պետք է շատ լրջորեն վերաբերվի լեգեոնականի կողմից գործակցի հետ միասին նշանակված պայմանավորվածության կրկնվող խախտումներին:

Երկու-երկու այցելություններ կատարելու մասին պահանջը չպետք է հասկանալ այն իմաստով, թե երկուսը պետք է աշխատեն նույն մարդկանց հետ: Օրինակ՝ հիվանդասենյակ այցելության պարագայում լավ կլինի, որ երկու լեգեոնականներն աշխատեն տարբեր անձանց հետ:

8. ՊԵՏՔ Է ՊԱՀՊԱՆԵԼ ԼԵԳԵՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄՏԵՐՄԻԿ ԲՆՈՒՅԹԸ

Լեգեոնը պետք է զգուշանա, որ չդառնա գործիք չափազանց եռանդուն սոցիալական բարեփոխիչների ձեռքում: Լեգեոնի աշխատանքը, ըստ էության, թաքնված աշխատանք է: Այն սկսվում է անհատ լեգեոնականի սրտում՝ նրա մեջ զարգացնելով խանդավառության և եղբայրասիրության ոգին: Ուրիշների հետ ուղղակի և հետևողական հարաբերության միջոցով լեգեոնականները ջանում են բարձրացնել ամբողջ համայնքի հոգևոր նկարագիրը: Աշխատանքը կատարվում է հանդարտորեն, առանց անհարկի միջամտության և նրբանկատորեն: Այն ավելի շատ ուղղված է ոչ թե մեծ չարիքն ուղղակիորեն ճնշելուն, այլ համայնքի մեջ ներդնելու կաթողիկէ սկզբունքներն ու կաթողիկէ զգացումը, որպեսզի չարիքն ինքնուրույնաբար մեռնի՝ իր համար պարարտ հող չլինելու շնորհիվ: Լեգեոնի իրական հաղթանակը մարդկանց մեջ զորեղ կաթողիկէ կյանքի և աշխարհայացքի հաստատուն, գուցե երբեմն դանդաղ զարգացումն է:

Կարևոր է նախանձախնդրությամբ ապահովել Լեգեոնի այցելությունների մտերմիկ բնույթը: Այդ ոգին չի պահպանվի, եթե լեգեոնականները ձեռք բերեն այնպիսի հեղինակություն, որը փնտրում է մարդկանց սխալները՝ հրապարակավ նրանց խայտառակելու համար: Այդ դեպքում

մարդկանց տները կատարած նրանց այցելություններին, նաև նրանց հիմնական գործողություններին կսկսեն նայել կասկածանքով, և նրանց այլևս չեն նայի որպես ընկերների, որոնց կարելի է ամբողջությամբ վստահել, այլ կսկսեն կասկածել այն բանում, թե իբր զբաղված են իրենց կազմակերպության համար բացահայտող գործունեություն ծավալելով: Այդ դեպքում անխուսափելիորեն նրանց ներկայությունը կմերժվի, իսկ դա կլինի իրական լեգեոնական օգտակարության ավարտը:

Հետևաբար, Լեգեոնի գործունեության ղեկավարները պետք է զգույշ լինեն, որ Լեգեոնի անունը չառնչվի այնպիսի նպատակների հետ, որոնք թեև ինքնին լավն են, բայց ենթադրում են այնպիսի մեթոդների կիրառում, որոնք քիչ կապ ունեն Լեգեոնի մեթոդների հետ: Կան հատուկ կազմակերպություններ, որոնք գոյություն ունեն՝ ժամանակի աչքի զարնող սխալների դեմ պայքարելու համար: Թող լեգեոնականներն օգտվեն այդ կազմակերպություններից և իրենց աջակցությունը տրամադրեն նրանց՝ իրենց անձնական կարողությունների համաձայն, բայց թող Լեգեոնն ինքնին շարունակի հավատարիմ մնալ իր սեփական ավանդությանը և աշխատանքի սեփական մեթոդներին:

9. ՑԱՆԿԱԼԻ Է ՏՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ՄԵԿ ԱՌ ՄԵԿ

Լեգեոնի այցելությունները պետք է հնարավորինս լինեն տուն առ տուն՝ անկախ այդ տներում ապրող մարդկանցից: Մարդիկ գուցե վիրավորվեն, եթե մտածեն, որ իրենք հատուկ ուշադրության կենտրոնում են:

Չպետք է շրջանցել նույնիսկ ոչ կաթողիկէների տները, բացառությամբ եթե չկա դա չանելու զորավոր պատճառ: Նրանց չպետք է այցելել կրոնական հարձակողականության ոգով, այլ ընկերություն հաստատելու նպատակով: Բացատրելը, թե տներն այցելում են բնակիչների հետ ծանոթանալու նպատակով, կբերի նրան, որ շատ ոչ կաթողիկէ տներ սիրով կընդունեն լեգեոնականներին. սա մի հանգամանք է, որն աստվածային նախախնամությունը կարող է օգտագործել որպես շնորհի հեղման գործիք այդ «ուրիշ ոչխարների»

համար, որպեսզի նրանց ևս բերի իր հոտի մեջ: Առաքելություն կատարող կաթողիկէների հետ ընկերությունը պատճառ կհանդիսանա, որպեսզի շատ կարծրատիպեր վերանան, իսկ կաթողիկէների հանդեպ հարգանքին կհետևի կաթողիկէ հավատքի հանդեպ հարգանքը: Գուցե, տեղեկություններ կամ գրքեր խնդրեն, և այս ամենին կարող է հետևել մի ավելի մեծ բան:

10. ՆՅՈՒԹԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՆ ԱՐԳԵԼՎԱԾ Է

Նյութական օգնություն չպետք է տրամադրվի, նույնիսկ ամենափոքր ծավալով, և անհրաժեշտ է ասել, որ դա հին գործելաոճ է:

Այս կանոնը չի նշանակում, թե Լեգեոնի համար նյութական օգնությունն ինքնին ընդունելի չէ, այլ պարզապես ասում է, որ Լեգեոնի համար դա գործնականում չի կարելի կիրառել: Աղքատներին տալը բարի գործ է, իսկ եթե դա կատարվում է գերբնական մղումով՝ ուրեմն դա վսեմ մի բան է: Շատ մեծ հասարակությունների համակարգեր հիմնված են այս սկզբունքի վրա, օրինակ՝ Սբ Վինսենթ դը Փոլի հասարակությունը, որի օրինակին և ոգուն, Լեգեոնն ուրախությամբ հայտարարում է, որ պարտական է, և այնքան շատ, որ կարելի է ասել, որ Լեգեոնի արմատներն այդ հասարակության մեջ են: Բայց Լեգեոնն ունի այլ պարտականությունների դաշտ: Լեգեոնի համակարգը կառուցված է հասարակության յուրաքանչյուր անդամի համար հոգևոր բարիք գործելու համար: Այս ծրագիրն ու նյութական օգնություն տրամադրելը գործնականում անհամատեղելի են, որովհետև.

ա. Նյութական օգնություն տրամադրող կազմակերպության այցելությունները հազվադեպ կողջունվեն այն անձանց կողմից, որոնք նյութական օգնության կարիք չունեն: Նրանք կվախենան, թե գուցե այդպիսի այցը հարևանների կողմից պիտակավորվի այնպես, թե իրենք նյութական օգնություն են ստանում: Որպես հետևանք, եթե պրեզիդիումը նյութական օգնություն տրամադրող կազմակերպության անուն

հանի, շատ արագ կսահմանափակի իր աշխատանքի դաշտը: **Նյութական օգնությունն այլ կազմակերպությունների համար կարող է լինել բացող բանալի, իսկ Լեգեոնի համար դա կլինի այն բանալին, որով ինքն իր վրա դրսից կփակի դուռը:**

բ. Նրանք, ովքեր սպասում են նյութական օգնություն և չեն ստանում, դժգոհում են, ինչը խոչընդոտում է Լեգեոնի դրական ազդեցությանը:

գ. Նույնիսկ նրանց, ովքեր նյութական օգնության կարիք ունեն, Լեգեոնը չի կարողանա նյութականը տալով՝ հոգևոր բարիք մատուցել: Թո՛ղ Լեգեոնը դա թողնի այլ կազմակերպությունների, որոնց հատուկ աշխատանքն է դա, և որոնք հատուկ շնորհ ունեն դա իրականացնելու համար: Վստահաբար, լեգեոնականները չունեն նյութական օգնություն տալու շնորհը, որովհետև դրանով կխախտեն իրենց կանոնը: Այն պրեզիդիումը, որը կգործի այդ սխալը, կընկնի ծանր բարդությունների մեջ և, ցավից բացի, երբեք այլ բան չի կարող բերել Լեգեոնին:

Անհատ լեգեոնականները կարող են պարտավորված զգալ օգնություն տալու ինչ-որ մեկին՝ ըստ կարիքի, բայց պետք է զգույշ լինեն, որ դա չանեն որպես լեգեոնականներ, այլ դա պետք է լինի նրանց անձնական գործը: Սրա վերլուծությունը, սակայն, ցույց է տալիս, որ այս պարագայում էլ անխուսափելիորեն կառաջանան բարդություններ: Օրինակ վերցնենք մեկին, ով նյութական օգնություններ չի տրամադրել մինչև իր լեգեոնական դառնալը, և հանդիպում է անձանց, որոնք, իր կարծիքով, այս կամ այն կարիքի մեջ են: Նա զսպվում է և որևէ բան չի տալիս լեգեոնական այցելության օրը, բայց գնում է մեկ այլ օր՝ որպես «մասնավոր անհատ», և նյութական օգնություն է տալիս: Նա, անշուշտ, խախտում է Լեգեոնի կանոնը նյութական օգնություն չտրամադրելու մասին, և իր կրկնակի այցելությունը միայն քողարկում է իր դեմ լինելը այդ կանոնին: Առաջին անգամ նա գնում է որպես լեգեոնական, իրավիճակին ծանոթանում է որպես լեգեոնական, օգնություն ստացողն իրեն ճանաչում է որպես լեգեոնական և, իհարկե, նա չի խորանում կանոնին

դեմ գնալու մասին Լեգեոնի դիրքորոշման մեջ: Օգնություն ստացողների համար դա ընկալվում է պարզապես որպես Լեգեոնի օգնություն տրամադրելու գործողություն, և Լեգեոնին միայն մնում է համաձայնել, թե նրանք ճիշտ են մտածում:

Հիշե՛նք, որ մեկ անձի անհնազանդությունը կամ անմտածված քայլն այս հարցում կարող է վնասել ամբողջ պրեզիդիումին: Շատ հեշտ է վաստակել նյութական օգնություն տվողի անունը. դրա համար հարկավոր չէ հարյուրավոր օգնություններ տալ, երկուսն էլ բավական է:

Եթե որևէ լեգեոնական ինչ-որ պատճառով ցանկանում է օգնել մի մասնավոր հարցում, ինչո՞ւ Լեգեոնին չազատել ամեն տեսակ բարդություններից՝ պարզապես այդ օգնությունն ուղարկելով ընկերոջ միջոցով՝ անանուն մնալով, կամ մի որևէ կազմակերպության միջոցով: Եթե լեգեոնականը չի ուզում այդպես վարվել, տպավորություն է թողնում առ այն, որ նա ավելի շատ ձգտում է երկրային վարձատրության, քան թե երկնային:

Լեգեոնականները, սակայն, չպետք է անտարբեր մնան՝ աղքատություն և կարիք տեսնելով, որոնք անխուսափելի են այցելությունների ժամանակ, պետք է այդ մասին հայտնեն այլ կազմակերպությունների, որոնք տրամադրում են այդ տեսակ օգնություն: Բայց եթե այդ ուղղությամբ Լեգեոնի ձեռնարկած բոլոր միջոցներն ապարդյուն անցնեն, Լեգեոնն ինքը չպետք է լրացնի այդ բացը: Դա Լեգեոնի գործը չէ, և անհնարին է հավատալ, որ ժամանակակից որևէ համայնքում չեն կարող գտնվել այլ անձինք կամ կազմակերպություններ, որոնք կարող են օգնություն տրամադրել տվյալ դեպքում:

«Անկասկած, աղքատների նկատմամբ մեր ցուցաբերած սրտացավությունը մեծապես խրախուսվում է Աստծո կողմից: Բայց ո՞վ կուրանա այն, որ շատ ավելի մեծ արժեք ունեն այն եռանդն ու ջանքը, որ ներդրվում են մարդկանց ուղղորդելու և բացատրելու մեջ և դրանով նրանց հոգիներին շնորհում են ոչ թե երկրի անցողիկ օգուտները, այլ այնպիսի բարիքներ, որոնք մնում են հավիտյան» (AN):

Ինչպես շատ օրինակներ ցույց են տվել, այս կանոնը կարող է մեկնաբանվել չափազանց սահմանափակ ձևով,

հետևաբար անհրաժեշտ է ասել, որ ծառայության աշխատանքները չեն կարող համարվել նյութական օգնություն: Ընդհակառակը, Լեգեոնը խրախուսում է դրանք: Այդպիսով մերժվում է այն մեղադրանքը, թե լեգեոնականները սահմանափակվում են միայն կրոնի մասին խոսելով և անտարբեր են մարդկանց կարիքների հանդեպ: Լեգեոնականները պետք է փաստեն իրենց խոսքերի անկեղծությունը՝ առատորեն սեր տալով և ծառայելով բոլոր թույլատրելի միջոցներով:

11. ԴՐԱՄԱՀԱՎԱՔԸ

Օգնության տրամադրման նման արգելվում է նաև լեգեոնականների կանոնավոր այցելություններն օգտագործելը դրամահավաքի համար:

Այդպիսի նպատակով կատարված այցելությունները կարող են ապահովել դրամը, բայց երբեք չեն ստեղծի այն մթնոլորտը, որն անհրաժեշտ է հոգևոր բարիք կառուցելու համար և կլինեն վառ օրինակն այն քաղաքականության, որը կոչվում է «penny-wise, pound foolish»՝ մանր ծախսերի մեջ իմաստուն, բայց հիմար՝ մեծ ծախսերի մեջ:

12. ՈՉ ՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԼԵԳԵՈՆԻ ՄԵՋ

Ոչ մի լեգեոնական կառույց չպետք է թույլ տա, որ իր ազդեցությունը կամ իր տարածքներն օգտագործվեն որևէ քաղաքական նպատակով կամ որևէ քաղաքական կուսակցության օգնելու համար:

13. ՓՆՏՐԵԼ ԵՎ ՔՐՈՒՑԵԼ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ՀԵՏ

Կրոնական աշխատանքի էությունը ցանկությունն է հասնելու յուրաքանչյուր մարդու, իր առաքելության ոլորտում ներառելու ոչ միայն արհամարհվածներին, ոչ միայն հավատացյալներին, ոչ միայն աղքատներին կամ հասարակության ստորին շերտերին, այլ ԲՈԼՈՐԻՆ:

Հատկապես կրոնական արհամարհանքի ամենամերժելի ձևերը չպետք է վախեցնեն լեգեոնականին: Չկա մեկը,

ինչքան էլ լքված և անհույս լինի արտաքնապես, ում մեջ լեգեոնականի հավատքը, արիությունը և հետևողականությունն արդյունքներ չունենան: Մյուս կողմից Լեգեոնի առաքելության անհանդուրժելի սահմանափակում կլիներ ուշադրությունը կենտրոնացնելը միայն ամենածանր չարիքների վրա: Մոլորված կամ գողի ձեռքում գտնվող ոչխարներին գտնելու հատուկ գրավչությունը չպետք է կուրացնի լեգեոնականին՝ տեսնելու համար այն առավել լայն գործունեության դաշտը, որտեղ մարդկային բազմությունները, թեև Աստծո կողմից կանչված են սրբության, գոհանում են միայն հիմնական պարտականությունների պարզ կատարմամբ: Իսկ պարզապես սեփական պարտականությունները կատարելով գոհացող անձանց խթանելը, որպեսզի լինեն ավելի նախանձախնդիր և ջերմեռանդ, հնարավոր է միայն տևական ժամանակ շարունակվող այցելություններով, որոնք պահանջում են մեծ համբերատարություն: Բայց եթե, ինչպես Հայր Ֆաբերն է ասում, մեկ սուրբն արժե մեկ միլիոն սովորական կաթողիկէներ, և եթե, ինչպես Սբ Թերեզա Ավիլացին էր ասում, մեկ հոգին, որը սուրբ չէ, բայց ձգտում է սրբության, Աստծո համար ավելի թանկ է, քան հազարավորները, որոնք ապրում են սովորական կյանքով, ապա որքա՛ն հաճելի է առաջին քայլերը նրանց, ովքեր գնում են ո՛չ սովորական ծեծված ճանապարհով:

14. ՈՉ ՈՔ ԱՅՆՔԱՆ ՎԱՏԸ ՉԷ, ՈՐ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԼԻՆԻ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ, ԵՎ ՈՉ ՈՔ ՉԱՓԱՋԱՆՑ ԼԱՎԸ ՉԷ

Այցելությունների ժամանակ հանդիպած անձանցից ոչ ոք չպետք է թողնվի այն նույն հոգևոր մակարդակի վրա, որում լեգեոնականները նրան հանդիպել են առաջին անգամ: Չկա մեկը, ով այնքան լավը լինի, որ հնարավոր չլինի նրան բավական մոտեցնել Աստծուն: Լեգեոնականները շատ հաճախ կմոտենան այնպիսի անձանց, որոնք շատ ավելի սուրբ են, քան իրենք, բայց նույնիսկ այդ դեպքում նրանք չպետք է կասկածեն, որ կարող են մեծ բարիք գործել: Նրանք կփոխանցեն նոր գաղափարներ, ջերմեռանդության նոր ձևեր:

Նրանք կարող են թթխմոր դնել հասարակ բաների մեջ: Եվ իհարկե, նրանք չեն կարող օգտակար չլինել իրենց առաքելական կյանքի ուրախալից ապրումով: Ուրեմն, անկախ նրանից՝ լեգեոնականները գործ ունեն սրբի, թե մեղավորի հետ, թող առաջ գնան այն վստահ գիտակցությամբ, որ գնում են ոչ թե իրենց հոգևոր աղքատությամբ, այլ որպես Մարիամի Լեգեոնի ներկայացուցիչներ՝ «միացած իրենց հովիվների և եպիսկոպոսների հետ, Սուրբ Աթոռի և Քրիստոսի հետ» (UAD):

15. ԱՂՈՏ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՔԻՉ ԱՐԺԵՔ ՈՒՆԻ

Յուրաքանչյուր դեպքում պետք է լինի ծանրակշիռ և որոշակի բարիքի մատուցումը: Եթե հնարավոր է, մեծ բարիք պետք է անել մեծ թվով մարդկանց, իսկ եթե հնարավոր չէ, ապա մեծ բարիք՝ ավելի քիչ թվով մարդկանց, և երբեք մի՛ գոհացեք փոքր բարիք անելով մեծ թվով մարդկանց: Այն լեգեոնականը, որը գնում է այդ վերջին ճանապարհով, կարող է վատ ծառայություն մատուցել, որովհետև այն աշխատանքը, որը հազիվ է սկսվել, պիտակավորում է որպես արդեն կատարված աշխատանք՝ այդպիսով ուրիշներին էլ արգելելով, որ սկսեն այն: Մեկ այլ վտանգ էլ կա. հիասթափեցնող է այն աշխատանքը, որը ներկայացվում է որպես մի քիչ բարիք շատերի համար, որը, ըստ էության, ոչ մի բարիք էլ չէ: Այս ոչ արդյունավետ աշխատանքը վտանգի տակ է դնում լեգեոնականի անդամակցությունն ինքնին:

16. ԱԶԴԵԼՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ ՍԵՐՆ Է

Պետք է ընդգծել, որ իրական և տևական բարիքի կարելի է հասնել՝ բարեկամություն հաստատելով լեգեոնականների և այն անձանց միջև, որոնց նրանք այցելում են: Այլապես բարիքը կլինի ցրված և պատահական: Սա պետք է հատկապես հիշել Սուրբ Սրտի Գահակալության նպատակով մարդկանց տներն այցելելիս: Թեև այս աշխատանքն ինքնին գերազանց մի բան է, բայց այն չպետք է համարել գլխավոր նպատակը: Այն այցելությունը, որի արդյունքում շատ արագ

տեղի է ունենում Սուրբ Սրտի գահակալությունը, բայց հետո չի շարունակվում, Լեգեոնի տեսանկյունից քիչ պտուղներ է տալիս: Յուրաքանչյուր ընտանիքին պետք է այցելել բազում անգամներ և շարունակական ձևով, որի համար անհրաժեշտ են շատ լեգեոնականներ և շատ պրեզիդիումներ:

17. ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՆՁԻ ՄԵՋ, ՈՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏՈՒՄ Է ԼԵԳԵՈՆԱԿԱՆԸ, ՊԵՏՔ Է ՏԵՄՆԵԼ ԵՎ ԾԱՌԱՅԵԼ ՔՐԻՍՏՈՍԻՆ

Ոչ մի տեղ և ոչ մի դեպքում այցելությունները չպետք է կատարել միայն մարդասիրության ոգով կամ ելնելով դժբախտների հանդեպ մարդկային պարզ խղճահարությունից: «Այն, ինչ արեցիք իմ այս փոքր եղբայրներից մեկին, ի՛նձ արեցիք» (Մտթ. 25:40): Այս բառերը պետք է գրված լինեն լեգեոնականի սրտում, և իր մերձավորի (որ ամբողջ մարդկությունն է՝ առանց խտրականության) մեջ նա պետք է միշտ տեսնի մեր Տիրոջը և մատուցի պատշաճ ծառայություն: Բոլորին՝ չարերին, անշնորհակալներին, տառապյալներին, արհամարհվածներին, մերժվածներին, նրանց, ում հանդեպ կարելի է ունենալ բնական ամենախոր հակակրանքը, բոլորի՛ն պետք է նայել այս նոր լույսի ներքո: Նրանք իսկապես Քրիստոսի եղբայրներից ամենափոքրերն են, և (հիշելով Քրիստոսի բառերը) պետք է նրանց մատուցել իշխաններին վայել ծառայություն և հարգանք:

Լեգեոնականը պետք է միշտ հիշի, որ ինքն այցելում է ո՛չ թե որպես վերադասն՝ իր ենթակային, ո՛չ թե որպես հավասարը հավասարին, այլ որպես ստորադասն իր վերադասին, որպես ծառան իր Տիրոջը: Այս ոգու բացակայությո՛ւնն է, որ հանգեցնում է հովանավորի կեցվածքին: Եթե այցելողը համակված է հովանավորողի ոգով, չի կարողանա հասնել ո՛չ գերբնական, ո՛չ բնական բարիքի: Նրա ներկայությունը կհանդուրժեն միայն այն դեպքում, երբ նա նվերներ է բերում: Մյուս կողմից, եթե լեգեոնականը մարդկանց այցելում է սիրալիր, կարեկից ձևով՝ հեզությամբ խնդրելով մտնել այն տունը, որի դուռը թակում է, կընդունվի ուրախությամբ, թեև նրա բերած նվերները նյութական չեն, և նա կարող է արագ

ընկերություն սկսել այդ ընտանիքի հետ: Լեգեոնականները պետք է հիշեն, որ իրենց հագուստի կամ խոսվածքի մեջ պարզության բացակայությունը պատնեշ կստեղծի իրենց և այն անձանց միջև, որոնց այցելել են:

18. ԼԵԳԵՈՆԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՐԻԱՄԸ ՍԻՐՈՒՄ ԵՎ ԽՆԱՄՈՒՄ Է ԻՐ ՈՐԴՈՒՆ

Ահա՛ բառերը մի լեգեոնականի, որը բացատրում է հաջող ելքը մի շատ տհաճ և բարդ այցելության. «Մեզ հաջողվեց այնպես անել, որ նրանք սիրեցին մեզ»: Այս խոսքերը հիանալի ձևով ամփոփում են լեգեոնական մեթոդները: Սիրո զգացումն արթանցնելու համար նախ անհրաժեշտ է սեր ցուցաբերել մարդկանց նկատմամբ, որոնց այցելում են: Չկա այլ ձև, այլ դիվանագիտություն, ոչ մի այլ բանալի իրական ազդեցություն գործելու համար: Սբ Օգոստինոսը նույն գաղափարը ձևակերպում է այլ կերպ, երբ հայտարարում է. «Սիրի՛ր և արա՛ ինչ ուզում ես»:

Սբ Ֆրանցիսկոս Ասսիզեցու կյանքի մասին իր գրքում Չեսթերթոնը հաստատում է այդ հստակ քրիստոնեական սկզբունքը. «Սբ Ֆրանցիսկոսը միայն տեսնում էր Աստծո պատկերը՝ բազմապատկված և երբե՛ք՝ միագույն: Նրա համար մարդը միշտ մարդ էր և չէր անհետանում խիտ մարդկային բազմության մեջ՝ ճիշտ ինչպես անապատում: Նա պատվում էր բոլոր մարդկանց, այսինքն՝ նա ոչ միայն սիրում էր, այլ նաև հարգում էր նրանցից յուրաքանչյուրին: Այն, ինչ նրան տալիս էր այս արտասովոր անձնական ուժը, հետևյալն էր. Պապից մինչև մուրացկան, Սիրիայի սուլթանից, որ նստում է իր գահավորակում, մինչև անտառներից դուրս սողացող ցնցոտիներով գողերը, երբեք չկար մեկը, ով նայեր Ֆրանցիսկոս Բեռնադոնեի այդ շագանակագույն աչքերին և վստահ չլիներ, որ նա ճշմարտապես հետաքրքրված էր իրենով և իր անձնական կյանքով՝ օրորոցից մինչև գերեզման, որ իրեն արժևորում էին և վերաբերվում լրջորեն»:

Բայց արդյոք կարո՞ղ է ինչ-որ մեկը սիրել այսպես: Այո՛, կարո՛ղ է՝ միայն այդ բոլոր մարդկանց մեջ, որոնց հանդիպում է, տեսնելով մեր Երանելի Տիրոջը: Սերը բոցավառվում

է նույնիսկ միայն այդ մտքից: Նորից ասենք, որ Մարիամը ցանկանում է, որ իր սիրելի Որդու Խորհրդավոր Մարմնի հանդեպ ցուցաբերվի նույնանման մի սեր, ինչպիսին ինքն ուներ Նրա իրական մարմնի հանդեպ: Եվ Մարիամը կօգնի՛ իր լեգեոնականներին այս առաքելության մեջ: Այնտեղ, ուր Մարիամը գտնում է նրանց մեջ այդ սիրո առկայծումը, պատրաստակամությունը, Մարիամը կփչի և կդարձնի այն մի ճարակող կրակ:

19. ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԴՈՒՌ ԲԱՑՎՈՒՄ Է ԽՈՆԱՐՀ ԵՎ ՀԱՐԳԱԼԻՑ ԼԵԳԵՈՆԱԿԱՆԻ ԱՌՋԵՎ

Անփորձությունը «առաջին այցելության» ժամանակ հասկանալի է, բայց այն լեգեոնականը՝ լինի նոր կամ փորձառու, որը սրտին մոտ է ընդունել այս վերնագրի միտքը, մուտքի իրավունք է ստանում բոլոր տներում:

Անվիճելի է, որ ոչ ոք չունի մտնելու այլ իրավունք, քան միայն քաղաքավարությամբ: Պետք է մոտենալ, այսպես ասած, գլխարկը ձեռքում՝ գործի դնելով դիմացինին հարգելու ամբողջ կարողությունը, որով մեկը մտնում է մեծամեծների առջև: Առաքելության մասին հայտնելը և ապա մտնելու համար թույլտվություն խնդրելը սովորաբար լայնորեն կբացի դուռը, և կհրավիրեն նստել: Հետո լեգեոնականները պետք է հիշեն, որ նրանց գործը դասախոսություն կարդալը կամ բազմաթիվ հարցեր տալը չէ, այլ մտերմության սերմեր ցանելը, մտերմություն, որը կբացի գիտության և ազդեցության հեղեղի դարպասները:

Ասվում էր, թե սիրո հատուկ փառքը ուրիշներին հասկանալու կարողության մեջ է: Այս տխուր աշխարհում չկա առավել շատ սպասված նվեր, քան դա: Որովհետև «մարդկանց մեծամասնությունը, թվում է, թե տառապում է արհամարհված լինելու զգացումից: Նրանք դժբախտ են, որովհետև ոչ ոք նրանց ձեռքից չի բռնում, որովհետև ոչ ոք պատրաստ չէ ընդունելու այդ մարդկանց կողմից սեփական անձնական խնդիրներն իրենց վստահելը, որոնք առաջարկում են այդ մարդիկ» (Դյուհամել):

Սկզբնական դժվարությունները չպետք է ընդունել չափազանց լուրջ: Նույնիսկ երբ հանդիպում ենք դիտավորյալ կոպտության, խոնարհ հնազանդությունը կարող է դա վերածել ամոթի, և դա կարող է պտուղներ տալ ավելի ուշ:

Երեխաների հանդեպ հետաքրքրասիրությունը կարող է հնարավորություն ընձեռել զրույցի համար: Կարելի է հարցադրումներ կատարել նրանց կրոնական գիտելիքների և Սուրբ Խորհուրդներն ընդունելու մասին, իսկ եթե այդ փուլում այդպիսի հարցեր տանք ծնողներին, նրանք գուցե դժկամությամբ ընդունեն դա: Բայց երեխաների միջոցով արդյունավետ դասեր կարող են քաղել նաև ծնողները:

Երբ հեռանում են տնից, պետք է հնարավորություն թողնվի մեկ այլ այցելության համար ևս: Պարզ մտերմությունը, որը ձևավորվում է այդ այցելության ժամանակ, և այդ ընտանիքի հետ նորից հանդիպելու հույսը հնարավորություն է տալիս և՛ բնական ձևով հեռանալու, և՛ հաջորդ այցելությանը պատրաստվելու համար:

20. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Որևէ հաստատություն այցելող լեգեոնականները պետք է հիշեն, որ նրանց այնտեղ պարզապես հանդուրժում են, ճիշտ ինչպես հյուրը՝ մասնավոր մի տան մեջ: Պաշտոնյաները մշտապես կասկածանքով են վերաբերվում բարեգործական կազմակերպության այցելուներին, որոնք այցելելով հիվանդներին, հակված են մոռանալու, որ պետք է հարգանք ցուցաբերվի նաև անձնակազմին, կանոններին և կարգավորումներին: Լեգեոնականները պետք է մշտապես ուշադիր լինեն այս վերջինին: Այցելությունը երբեք չպե՛տք է կատարվի անհարմար ժամանակին, հիվանդներին չպետք է բերվեն դեղորայք կամ այլ արգելված իրեր, տեղում առկա վիճաբանությունների ընթացքում չի կարելի բռնել որևէ մեկի կողմը: Կլինեն անձինք, որոնք կասեն, թե անձնակազմի կամ այլ հիվանդների կողմից վատ վերաբերմունքի են արժանանում, բայց լեգեոնականների գործառույթը չէ այդ բողոքների հետևից գնալը, նույնիսկ եթե դրանք ճիշտ են: Նրանք, իհարկե, կարող են կարեկցանքով

լսել այդ բողոքները և ջանալ հիվանդի մեջ ներդնել դրական զգացումներ, բայց սովորաբար նրանց գործը պետք է ավարտվի դրանով: Եթե լեգեոնականն ուժգին բարկացել է, ավելի ապահով կլինի, որ հարցը քննարկվի պրեզիդիումի մեջ: Պրեզիդիումը կուսումնասիրի հանգամանքներն իրենց ամբողջության մեջ և, եթե ցանկալի է, կձեռնարկի համապատասխան քայլեր:

21. ԼԵԳԵՈՆԱԿԱՆԸ ՉՊԵՏՔ Է ՆՍՏԻ ԴԱՏԱՎՈՐԻ ԴԻՐՔՈՎ

Ոչ միայն լեգեոնականի վարքը, այլ նաև, որ առավել կարևոր է, նրա միտքը պետք է կրի նրբազգաց հարգանքի կնիքը: Լեգեոնականի առաքելությանն անհարիր է մերձավորին դատելը կամ բոլորին պարտադրելը, որ հարմարվեն իր սեփական մտածելակերպի և վարքագծի հետ: Նա չպետք է մտածի, որ նրանք, ովքեր իրենից տարբերվում են տարբեր առումներով, ովքեր հրաժարվում են ընդունել իրեն կամ նույնիսկ հակառակվում են, անհրաժեշտաբար անարժան անձինք են:

Կան շատ մարդիկ, որոնց գործողությունները քննադատության արժանի են թվում, բայց լեգեոնականը չէ, որ պետք է անի դա: Շատ հաճախ այդպիսի անձինք սրբեր են, որոնց սխալմամբ են քննադատել: Եվ շատերի կյանքը ոչ ակներև ձևով ծանր վիրավորանքների է ենթարկվել: Բայց միայն Աստվա՛ծ է տեսնում մարդու սիրտը և կարող է դատել իրական իրավիճակը: Որովհետև, ինչպես Գրաթրին է ասում. «Շատերը նույնիսկ տարրական կրթություն չունեն: Նրանք ծնվել են առանց բարոյական հայրության առաջնորդության և գուցե, որպես սնունդ, այդ բարդ կյանքի ճամփորդության համար, ստացել են միայն շուռ տված խոսքեր և օրինակներ: Եվ սա նշանակում է, որ ոչ մեկից չենք կարող պահանջել ավելին, քան այն, ինչ նրանց տրվել է»:

Կան նաև շատերը, որոնք ցուցադրում են իրենց հարստությունները, և որի կյանքը հեռու է զոհողություններից: Նրանք եթե դառը բառեր օգտագործենք, կրում են իրենց դարի ոգին: Բայց այս պարագայում լեգեոնականը

դարձյալ պետք է մտածի: Միշտ կա հնարավորությունը, որ այդ անձինք կարող են նմանվել Նիկոդեմոսին, որը Տիրոջ մոտ եկավ գաղտնաբար՝ գիշերով, և որը շատ բան արեց Տիրոջ համար, շատ ընկերներ շահեց Նրա համար, սիրեց ճշմարտապես, իսկ վերջում բացառիկ հնարավորություն ունեցավ օգնելու Տիրոջ թաղմանը:

Լեգեոնականի դերը երբեք չպետք է լինի դատելը կամ քննադատելը: Լեգեոնականները պետք է մշտապես մտածեն, թե ինչպես այդ բոլոր հանգամանքներին և անձերին կնայեր Սուրբ Կույս Մարիամն իր մեղմ աչքերով: Եվ թո՛ղ լեգեոնականները գործելիս ջանան նրա՛ն նմանվել:

Երանաշնորհ Էդել Քուիննի սովորություններից մեկն էր՝ երբեք որևէ մեկին չմեղադրել՝ առանց այդ հարցը Օրինյալ Կույսին ուղղելու:

22. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱԿԱՌԱԿՈՂ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ

Այս էջերում հաճախակի է խոսվում նույնիսկ լավագույն ձևով տրամադրված անձանց վրա թշնամական քննադատության հանդեպ վախի թողած կաթվածահար հետևանքների մասին: Այս առումով օգտակար կլինի անդրադառնալ հետևյալ սկզբունքին: Լեգեոնի գլխավոր խնդիրներից մեկը, որով այն կհասնի ամենամեծ արդյունքների, մտածողության և գործունեության բարձր չափորոշիչների ստեղծումն է: Լեգեոնի անդամները նպատակադրվում են ապրել առաքելագործ կյանքով և ըստ այդմ սահմանում են աշխարհական կյանքի մի բարձր նշաձող: Տպավորիչ բաներին, նույնիսկ չուզենալով, նմանվելու տարօրինակ բնազդով մղված՝ բոլորը տարբեր ձևով կձգտեն մոտենալ այդ նշաձողին: Սահմանված նշաձողի արդյունավետության ցուցիչը կլինի այն, որ շատերը բաց ձևով և ի սրտե կձգտեն հասնել դրան: Մեկ այլ և առավել տարածված ցուցիչ կլինի անհամաձայնության նշանների ի հայտ գալը, որովհետև այդպիսի նշաձողը բողոք է առավել ցածր չափանիշների դեմ: Դա մի խայթոց է հասարակական խղճի համար և, ինչպես որևէ այլ խայթոց, այն իր հետ կբերի անհարմարավետության և բողոքի առողջ

արձագանք, որին շուտով կհետևի վերընթացը: Բայց եթե չկա որևէ արձագանք, ուրեմն փաստ է, որ որևէ արդյունավետ նշաձող չի սահմանվել:

Հետևաբար, կարիք չկա չափազանց լարվելու, երբ Լեգեոնի գործողություններն առիթ տան որոշակի փոքրիկ քննադատությունների, եթե, իհարկե, այդ քննադատությունները սխալ մեթոդների պատճառով չեն: Միշտ հիշե՛ք ևս մեկ մեծ սկզբունք, որով պետք է առաջնորդվեն առաքելական ջանքերը. «Մարդկանց սրտերը կարելի է նվաճել միայն սիրով և բարությամբ, հանդարտ, հստակ օրինակով, որը չի ստորացնում մարդուն և չի ստիպում նրան տեղի տալ: «Նրանք չեն սիրում հարձակման ենթարկվել այնպիսի մեկի կողմից, ով չունի որևէ այլ գաղափար, քան միայն իրենց հաղթելը» (Գիոսյու Բորսի):

23. ԵՐԲԵՔ ՉԻ ԿԱՐԵԼԻ ՀԻԱՍԹԱՓՎԵԼ

Երբեմն ամենանվիրյալ ջանքերը՝ հերոսաբար և երկարատև գործադրված, քիչ պտուղներ են տալիս: Լեգեոնականներն իրենց սրտերը չեն կապում տեսանելի արդյունքների հետ, այնուամենայնիվ, նրանց օգտին չի լինի հուսահատության զգացումով աշխատելը: Նրանց համար մխիթարական կլինի և կմղի առավել լարված ջանադրության, եթե մտածեն, որ նույնիսկ մեկ կանխված մեղքը անգին ձեռքբերում է: Որովհետև այդ մեղքը կլիներ մի անչափելի չարիք՝ իր հետևից քարշ տալով աղետալի հետևանքների մի անվերջ շարան: «Ինչքան էլ փոքր լինի զանգվածը, այն խաղում է իր դերը աստղերի հավասարակշռության մեջ: Այսպես, ինչպես միայն Քո միտքը, ո՛վ Տեր, կարող է ըմբռնել և չափել, թղթի վրա սահող մի գրչի նվազագույն շարժումն անգամ կապված է երկնային ոլորտների շարժումների հետ, նպաստում է դրանց և դրանց մի մասն է: Նույնը տեղի է ունենում բանականության աշխարհում: Գաղափարներն այդ բանականության աշխարհում ապրում և ունենում են ամենաբարդ արկածներ, մի աշխարհում, որն անչափելիորեն գերազանցում է նյութական աշխարհին, մի աշխարհ՝ միավորված և նաև կազմակերպված՝ իր ընդարձակ, բազմաձև

և ամենատարատեսակ բարդ կազմությամբ: Ինչպես նյութական և բանական աշխարհում է, այնպես էլ անսահմանորեն ավելի մեծ բարոյական աշխարհում է» (Գիոսյու Բորսի): Յուրաքանչյուր մեղք ցնցում է աշխարհը: Այն վերք է բացում յուրաքանչյուր մարդու սրտի վրա: Երբեմն այս գործընթացում տեսանելի է առաջին կապը, երբ մեկը մեկ ուրիշին տանում է դեպի մեղք: Բայց տեսանելի թե անտեսանելի, մեղքը տանում է մեկ այլ մեղքի, հետևաբար, երբ կանխվում է մեկ մեղքը, կանխվում է նաև մեկ ուրիշը: Եվ նմանապես, մի՞թե այդ երկրորդ մեղքից խուսափումը չի կանխում մի երրորդ մեղք, և այդպես շարունակ՝ մինչև շղթան տարածվի ամբողջ աշխարհով մեկ և բոլոր ժամանակներում: Ուրեմն, մի՞թե չափազանցություն կլինի, եթե ասենք, որ բարի կյանք որդեգրած յուրաքանչյուր մեղավոր ի վերջո իր հետևից հաղթարշավով կտանի մի բարի բանակ դեպի Երկինք:

Հետևաբար, մի ծանր մեղք կանխելն արդարացնում է ամենաեռանդուն աշխատանքը, նույնիսկ ամբողջ կյանքը տևող ջանքերը, որովհետև այդպես յուրաքանչյուր մարդկային հոգի կզգա հավելյալ շնորհի շողշողումը: Կարող է պատահել, որ այդ մեղքի կանխումը լինի ճակատագրական պահ, մի վերընթացի մեկնարկ, որը ժամանակի ընթացքում գուցե մի ամբողջ ժողովրդի անաստված կյանքը վերափոխի առաքինի կյանքի:

24. ԽԱՉԻ ՆՇԱՆԸ ՀՈՒՅՍԻ ՆՇԱՆ Է

Բայց հուսահատության գլխավոր վտանգը հակառակորդի ուժերին դիմադրելու մեջ չէ, ինչքան էլ հզոր լինի այդ դիմադրությունը: Այլ վտանգը այն խռովքի մեջ է, որը լեգեոնականը չի կարող չզգալ, երբ պակասում են այն օգնությունները և հանգամանքները, որոնց նա ինքն իրեն պարտավոր է զգում ապավինելու: Ընկերները ձախողում են, բարի կամքով մարդիկ ձախողում են, միջոցները ձախողում են, և այն ամենը, ինչի վրա հենվում ենք, չեն ապահովում մեր խաղաղությունը: Թվում է, թե ինչպիսի՛ բարի բերք կարելի է հավաքել, եթե միայն մանգաղը սուր լիներ, եթե

չլինեին թերությունները սեփական ճամբարում, եթե խաչի ծանրությունը չճզմեր:

Այդ անհամբերությունը, որի հետևանքով մարդկային հոգիներին բարիք գործելու հնարավորությունը սահմանափակվում է, կարող է վտանգավոր լինել: Դա կարող է տանել հուսահատության, որն ի վիճակի չեն եղել անելու նույնիսկ հակառակորդ ուժերը:

Պետք է միշտ հիշել, որ Տիրոջ գործը կրելու է Տիրոջ սեփական նշանը՝ խաչի նշանը: Առանց այդ կնիքի՝ կասկածելի է որևէ աշխատանքի գերբնական բնույթը. չեն լինի իսկական արդյունքներ: Ջանեթ Էրսքին-Սթյուարթը այս սկզբունքի մասին գրում է այլ կերպ. «Եթե նայեք սրբազան պատմությանը, Եկեղեցու պատմությանը և նույնիսկ ձեր սեփական փորձառությանը, որն ամեն տարի ավելի հարստանում է, ապա կտեսնեք, որ Աստծո գործը երբեք չի կատարվում իդեալական պայմաններում, ինչպես պատկերացնում ենք կամ ըստ մեր ընտրության»: Այսինքն՝ և սա հիանալի՛ միտք է, այն նույն իրավիճակը, որը մարդկային սահմանափակ պատկերացման համար ոչ իդեալական է և փչացնում է աշխատանքի հեռանկարները, ոչ թե արգելք է հաջողության համար, այլ պայմա՛ն է հաջողության համար, ոչ թե արատ է, այլ դրոշմանշան, ոչ թե ծանրություն է, որն արգելում է ջանքերին, այլ վառելահեղուկ, որն ուժ է տալիս ջանադրությանը և օգնում, որ ջանադրությունը հասնի իր նպատակին: Որովհետև Աստծուն միշտ հաճելի է ծնել հաջողություն՝ անխոստումնալից պայմաններում, և իր մեծագույն ծրագրերն իրականացնել ոչ համապատասխան գործիքներով:

Բայց լեգեոնականները պետք է նկատի առնեն այս կարևոր նախադրյալը. դժվարությունները կլինեն հնարավորության աղբյուր, եթե դրանց պատճառը չլինի լեգեոնականի արհամարհական վերաբերմունքը: Լեգեոնը չի կարող հույս ունենալ, որ շնորհ կընդունի իր սեփական սխալներից և բացթողումներից:

25. ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ Է, ՁԱԽՈՂՈՒՄԸ՝ ՀԵՏԱՁԳՎԱԾ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ

Ճիշտ մոտենալու դեպքում աշխատանքը պետք է լինի ուրախության անսպառ աղբյուր: Հաջողությունն ուրախություն է: Ձախողումն ապաշխարություն է և հավատքի գործադրություն, որն առավել մեծ ուրախություն է՝ մտածելու ունակ լեգեոնականի համար, որը դրա մեջ տեսնում է պարզապես մի հետաձգված և ավելի մեծ հաջողություն: Նորից ասենք, որ բնական է այն ուրախությունը, երբ քեզ ընդունում են շնորհակալության ժպիտներով և մեծապես արժևորում են այցելությունդ: Բայց ուրիշների կասկածամիտ հայացքները պետք է բերեն ավելի խոր մխիթարություն, որովհետև այստեղ մի լուրջ բան կա, որը խուսափել է ուշադրությունից: Լեգեոնական փորձառությունը ցույց է տալիս, որ ճշմարիտ կաթողիկէ զգացումը, նույնիսկ երբ խճողվում է որոշակի կրոնական անտարբերության պատճառով, ունակ է արձագանքել ընկերական, կարեկից այցելությանը, այնպես որ հակառակը, այսինքն՝ երբ չեն արձագանքում այդպիսի այցելությանը, հաճախ ի ցույց է հանում այն, որ այդ անձի հոգին վտանգի մեջ է:

26. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՊՐԵԶԻԴԻՈՒՄԻ ԵՎ ԼԵԳԵՈՆԱԿԱՆՆԵՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Պետք է համբերատար լինել պրեզիդիումի կամ առանձին լեգեոնականների թերությունների նկատմամբ: Այն փաստը, որ նախանձախնդրությունն այդքան դանդաղաշարժ է, որ բարելավումը թվում է, թե չնչին է, և որ աշխարհային ձախողումները դժբախտաբար ակնհայտ են, չպետք է հիասթափեցնի: Նման պայմաններում օգտակար կլինեն հետևյալ մտքերը:

Եթե այդ լեգեոնականները, իրենց թիկունքում ունենալով Լեգեոնի համակարգը և աղոթքներն ու ջերմեռանդությունը, այնուամենայնիվ, թերություններ ունեն, ապա ինչպիսի՞ն կլինեն նրանց չափանիշներն առհասարակ՝ առանց Լեգեոնի: Դարձյալ, ինչպիսի՞ն է հոգևոր մակարդակն այն

համայնքի, որը չի կարող ապահովել նույնիսկ մի քանի արժանի աշխատողներ լավ պրեզիդիում ունենալու համար:

Պարզ տրամաբանությունն այն է, որ պետք է ամեն գնով բարձրացնել անձանց հոգևոր մակարդակները: Դա անելու լավագույն և իրականում միակ միջոցը առաքելական թթխմորի ներդրումն է, որը կաշխատի համայնքում այնքան, մինչև ամեն ինչ խմորվի (Մտթ. 13:33): Հետևաբար, հարկավոր է եղած առաքելական պաշարը մշակել անպարտելի համբերատարությամբ և քաղցրությամբ: Ինքնին կաթողիկէ ոգին դանդաղ է աճում: Ուրեմն, ինչպե՞ս կարելի է սպասել, որ առաքելական ոգին լինի վայրկենական արդյունք: Եթե սիրտը կորսված է, ուրեմն այլևս չկա միակ բուժումը:

27. Ո՛Չ ՄԻ ԵՍԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Լեգեոնը չպետք է թույլ տա, որ դառնա իր անդամներից որևէ մեկի անձնական նյութական շահույթի գործիքը: Հիրավի, ոչ մի լեգեոնական չպետք է առիթ տա, որ մեղադրվի Լեգեոնին իր անդամակցությունը չարաշահելու համար ո՛չ Լեգեոնից ներս, ո՛չ Լեգեոնից դուրս:

28. Ո՛Չ ՄԻ ՆՎԵՐ ԼԵԳԵՈՆԱԿԱՆՆԵՐԻՆ

Արգելված է Լեգեոնի մասնաճյուղերի կողմից իր անդամներին դրամական կամ այլ նվիրատվություններ կատարելը: Եթե այդպիսի նվիրատվությունները թույլատրվեն, դրանք կլինեն մեծ ֆինանսական բեռ: Սա չպետք է կատարվի՝ հատկապես նկատի ունենալով, որ Լեգեոնը ուրախ է իր շարքերում ունենալու սակավ ֆինանսական միջոցներով մեծ թվով անձանց:

Հետևաբար, եթե պրեզիդիումները կամ լեգեոնական մյուս մարմինները ուզում են իրենց անդամներից մեկի կյանքի որևէ իրադարձություն նշել, թող նրան նվիրեն հոգևոր մի փունջ:

29. ՈՉ ՄԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԼԵԳԵՈՆՈՒՄ

Հիմնականում Լեգեոնը դեմ է այնպիսի պրեզիդիումների կազմավորմանը, որոնք նախատեսված լինեն միայն համայնքի առանձնահատուկ մի դասակարգի կամ խմբի համար: Ահա՛ մի քանի պատճառ. ա. շատ հաճախ սահմանափակել՝ նշանակում է բացառել, որը դեմ է եղբայրասիրությանը, բ. անդամների հավաքագրման լավագույն մեթոդը ընկերական կապն է, բայց սա չի նշանակում, որ պրեզիդիումը պետք է լինի փակ անդամակցությամբ, գ. գրեթե միշտ ամենաարդյունավետ գործող պրեզիդիումները նրանք են, որտեղ կան տարբեր խավերի ներկայացուցիչներ:

30. ՆՊԱՏԱԿԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԿԱՄՐՋԵԼԸ

Լեգեոնի նպատակներից մեկը պետք է լինի պայքարելն աշխարհի բաժանումների և անթիվ ատելությունների դեմ: Այս գործընթացը պետք է սկսվի հենց Լեգեոնի կազմակերպական միավորի՝ պրեզիդիումի մեջ: Լեգեոնի համար պարզապես ապարդյուն կլինի տարբերությունները կամրջելու մասին խոսելը, եթե իր իսկ շարքերում ակնհայտ է անմիասնականության ոգին: Ուրեմն, թո՛ղ որ Լեգեոնը մտածի Քրիստոսի Խորհրդավոր Մարմնի միության և սիրո մասին և ջանա կազմակերպվել հավուր պատշաճի: Եթե Լեգեոնը մեկ պրեզիդիումի մեջ կարողացել է միավորել մարդկանց, որոնք իրականում բաժանված են, ապա այն հասել է իսկապես մի մեծ բանի. ստեղծվել է սիրո կապը, և այդտեղից այն կտարածվի դեպի դուրս ու կվարակի աշխարհը դրական արդյունքներով:

31. ՎԱՂ ԹԵ ՈՒՇ ԼԵԳԵՈՆԱԿԱՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԶԲԱՂՎԵՆ ԱՄԵՆԱԴԺՎԱՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ

Աշխատանքի ընտրությունը կարող է կասկածների տեղիք տալ: Չարագուշակ խնդիրները կարող են գոյություն ունենալ, բայց գուցե քահանան վախենա դրանք վստահել նորաստեղծ պրեզիդիումին: Վախի դրդապատճառները չպետք է գերիշխեն, որպեսզի մեզ չվերաբերվեն Սուրբ

Պիուս ԺԱ Պապի խոսքերն առ այն, թե առաքելության համար մեծագույն խոչընդոտը բարի կամքի տեր մարդկանց անվստահությունն է կամ, ավելի ճիշտ, վախը: Եթե կասկածները համառում են, թող աշխատանքը սկսեն զգուշությամբ, և թող պրեզիդիումը սկսի պարզ աշխատանքներից: Հանդիպումների շարունակականությանը և փորձառությանը զուգահեռ կհայտնվեն որոշ անդամներ, որոնք ի վիճակի կլինեն կատարելու ամենաբարդ աշխատանքը: Թող որ նրանք ստանձնեն այդ աշխատանքը, որի մասին կար երկմտանք, ապա կներգրավվեն նաև ուրիշները՝ ըստ պահանջի և ըստ կարողության: Նույնիսկ եթե միայն երկու լեգեոնական են զբաղվում բարդ աշխատանքով, դա գույն կհաղորդի մնացած լեգեոնականների աշխատանքին:

32. ՀԱՅԱՑՔ ՎՏԱՆԳԻՆ

Համակարգը անբարենպաստ հնարավորությունները կհասցնի բացարձակ նվազագույնի, բայց գուցե ռիսկի որոշակի տարր լինի մի որևէ կարևոր աշխատանքի մեջ: Հանգիստ դատողությունը ցույց կտա, որ ա. հակառակ դեպքում այն աշխատանքը, որից կախված է հոգիների փրկությունը, մասամբ կամ ամբողջովին, կմնա չարված, և բ. եթե հնարավոր ամեն ինչ արվել է հանուն անվտանգության, ապա կարելի է զբաղվել դժվարին աշխատանքով: Լեգեոնականների համար աններելի է, եթե անգործ դիտեն, թե ինչպես են իրենց մերձավորները քանդում իրենց սեփական կյանքը: «Աստվա՛ծ, հեռու պահիր մեզնից տգետների հանգստությունը: Աստվա՛ծ, հեռո՛ւ պահիր մեզնից վախկոտների խաղաղությունը» (Դը Գասպարին):

33. ԼԵԳԵՈՆԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՂԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԱՋՆԱԳԾՈՒՄ

Լեգեոնականները կիսում են Մարիամի հավատքն իր Որդու հաղթանակի հանդեպ, Մարիամի հավատքն առ այն, թե Քրիստոսն Իր մահով և Հարությամբ պարտության է մատնել մեղքի ողջ իշխանությունը աշխարհում:

Ըստ Տիրամոր հետ մեր միության չափի, Սուրբ Հոգին այդ հաղթանակը պարգևում է մեզ Եկեղեցու բոլոր ճակատամարտերում: Սա ի միտ ունենալով՝ լեգեոնականները պետք է ոգեշնչեն ամբողջ Եկեղեցուն իրենց վստահությամբ և արիությամբ, որոնցով ձեռնամուխ են լինում լուծելու մեր օրերի մեծ խնդիրները և կռվելու չարիքի դեմ:

«Մենք պետք է հասկանանք, թե ինչ է պատերազմը: Դա նշանակում է կռվել՝ ոչ թե պարզապես Եկեղեցու անդամների թիվը մեծացնելու համար, այլ հոգիները Քրիստոսի հետ միության մեջ բերելու համար: Դա ամենատարօրինակ պատերազմն է, քանի որ մղվում է թշնամու **համար**, ոչ թե նրա դեմ: Նույնիսկ «թշնամի» հասկացությունը չպետք է սխալ ընկալվի:

Յուրաքանչյուր անհավատ, ինչպես և յուրաքանչյուր կաթողիկէ հավատացյալ, մարդկային էակ է՝ անմահ հոգով, ստեղծված Աստծո պատկերով, որի համար Քրիստոսը մեռավ: Որքան էլ որևէ մեկը ուժգին հակառակորդ լինի Եկեղեցուն կամ Քրիստոսին, մեր նպատակը պետք է լինի նրան դարձի բերելը և ոչ թե պարզապես հաղթելը: Մենք պետք է երբեք չմոռանանք, որ սատանան ուզում է նրա հոգին տանել դժոխք, ինչպես ուզում է տանել նաև մեր հոգիները, ուստի մենք պետք է կռվենք սատանայի դեմ այդ հոգին փրկելու համար: Մենք գուցե ստիպված լինենք դիմադրություն ցույց տալ ինչ-որ մեկին, որպեսզի կանխենք այլ հոգիներին սպառնացող վտանգը, բայց մենք մշտապես ուզում ենք շահել նրան՝ հանուն իր իսկ հոգու փրկության: Սուրբ Հոգու զորությամբ է, որ մենք պետք է կռվենք, իսկ Սուրբ Հոգին Հոր և Որդու Սերն է. եթե Եկեղեցու զինվորները կռվում են ատելությամբ լցված, ապա նրանք կռվում են Սուրբ Հոգու դեմ» (Ֆ. Ջ. Շիիդ, «Աստվածաբանություն սկսնակների համար»):

34. ԼԵԳԵՈՆԱԿԱՆԸ ՊԵՏՔ Է ՏԱՐԱԾԻ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՄԵՆ ԻՆՉ

Լեգեոնականները չպետք է արհամարհեն Եկեղեցու կողմից արտոնված սքափուլյարների, մեդալիոնների և

կրծքանշանների օգտագործումը: Տարածելով այս ամենը և դրանց նկատմամբ ջերմեռանդությունը՝ կառուցվում են խողովակներ, որոնց միջոցով, ինչպես փաստում են միլիոնավոր օրինակներ, Աստծո կամքով առատորեն հոսում են շնորհները:

Լեգեոնականները պետք է հատկապես մտածեն շագանակագույն սքափուլյարի մասին, որը խորհրդանշում է Մարիամի վերարկուն: «Ոմանք բառացիորեն են մեկնաբանում այս տեքստը. «Նա, ով մեռնի այս սքափուլյարը կրելով, չի կորչի»: Սբ Քլոդ դը լա Քոլոմբիեն ոչ մի սահմանափակում չէր դնում. «Մարդ կարող է կորցնել իր սքափուլյարը, բայց նա, ով իր մահվան ժամին հագած լինի այն, կփրկվի»» (Հայր Ռաուլ Պլուս):

Նմանապես, լեգեոնականները պետք է խրախուսեն, որ մարդիկ իրենց տներում ունենան խաչելություններ, արձաններ, պատերին կախեն հոգևոր պատկերներ և նկարներ, տան մեջ պահեն օրհնված ջուր և պատշաճ օրհնված աղոթահամրիչներ՝ լիակատար թողությունների շնորհման համար: Այն տանը, որտեղ արհամարհված են Եկեղեցու այս խորհրդանմանները, վտանգ կա, որ կթողնեն նաև Սուրբ Խորհուրդների ընդունումը: Երեխաները հատկապես կարիքն ունեն հոգևոր ջերմեռանդության այդ արտաքին օժանդակ միջոցների, և այն տանը, որտեղ չկան արձանիկներ կամ սրբապատկերներ, դժվար կլինի երեխաներին փոխանցել հավատքի ճշմարիտ և հարազատ բնույթը:

35. VIRGO PRAEDICANDA. ՍՈՒՐԲ ԿՈՒՅՍԻՆ ՊԵՏՔ Է ՄՈՏԵՑՆԵԼ ԵՎ ՆՐԱ ՄԱՍԻՆ ՍՈՎՈՐԵՑՆԵԼ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՄԱՐԴՈՒ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՍՈՒՐԲ ԿՈՒՅՍԸ ԲՈԼՈՐԻ ՄԱՅՐՆ Է

Լևոն ԺԳ Պապի սիրելի թեմաներից մեկն այն էր, որ Մարիամը բոլոր մարդկանց Մայրն է, և որ Աստված յուրաքանչյուր մարդու սրտի մեջ ներդրել է նրա նկատմամբ սիրո սերմը, նույնիսկ նրանց սրտերում, ովքեր ատում են կամ չեն ճանաչում Մարիամին: Այդ սերմը պետք է աճի և, ինչպես բոլոր այլ դեպքերում, սերմի աճմանը պետք է օգնել՝

ստեղծելով պատշաճ պայմաններ: Հարկավոր է մոտենալ մարդկային հոգիներին և գիտելիքներ փոխանցել նրանց Մարիամի մայրական դերակատարության մասին:

Վատիկանի Երկրորդ Ժողովը հռչակել է Մարիամի տիեզերական մայրությունը (LG 53,54) և հայտարարել է, որ Մարիամն այնքան խորապես է հանդիսանում առաքելագործության աղբյուրն ու տիպարը, որ Եկեղեցին պետք է հիմնվի նրա վրա՝ մարդկանց փրկելու իր ջանադրության մեջ (LG 65):

Պողոս Զ Պապը պահանջում է, որ ամենուրեք և հատկապես այնտեղ, որտեղ կան մեծաթիվ ոչ կաթողիկէներ, հավատացյալներին պետք է ամբողջությամբ սովորեցնել Մարիամի մայրական պաշտոնի էությունը, որպեսզի նրանք կարողանան կիսել այդ գիտելիքի գանձը: Ավելին, Պապը Մարիամի սիրառատ Սրտին է հանձնում ամբողջ մարդկությանը, որպեսզի նա կարողանա կատարել բոլոր հոգիները դեպի Քրիստոսն ուղղորդելու իր առաքելությունը: Վերջապես, ողջ մարդկության յուրաքանչյուր անհատի հանդեպ նրա մայրական և միավորող պարտականությունը բացահայտող լույսի ներքո բերելու նպատակով Նորին Սրբություն Պապը Մարիամին շնորհում է «Մայր Միության» տիտղոսը:

Հետևաբար, ցավալիորեն սխալվում են նրանք, ովքեր Օրհնյալ Կույս Մարիամին նայում են որպես դարձի բերելու գործում արգելապատնեշի, որը պետք է իջեցվի: Նա շնորհների և միության Մայրն է, այնպես որ, առանց նրա, հոգիները չեն կարող գտնել իրենց փրկության ճանապարհը: Լեգեոնականները պետք է հետևողականորեն կիրառեն այս սկզբունքը՝ դարձի բերելու իրենց ջանադրության ժամանակ, այսինքն՝ բացատրելով բոլորին այն, ինչ երբեմն, բայց սխալմամբ, կոչում են Մարիամի հանդեպ լեգեոնական ջերմեռանդություն: Դա Լեգեոնի սեփականությունը չէ, այլ Լեգեոնն այն պարզապես սովորել է Եկեղեցուց:

«Եկեղեցին մշտապես հավատացյալներին առաջարկել է Սուրբ Կույս Մարիամին՝ որպես օրինակ, ում պետք է հետևել ոչ թե ճշգրտորեն Մարիամի կենսակերպին հետևելու համար և, առավել ևս, ոչ այն սոցիալ-մշակութային միջավայրի համար, որտեղ նա ապրում էր, և որն այսօր հազիվ թե գոյություն ունենա

որևէ տեղ: Մարիամը հավատացյալների համար որպես օրինակ է ներկայացվում ավելի շատ այն բանի համար, թե ինչպես նա իր կյանքի պայմաններում ամբողջովին և պատասխանատու ձևով ընդունեց կատարել Աստծո կամքը (հմմտ.՝ Ղկ. 1:38), որովհետև նա լսեց Աստծո խոսքը և կատարեց այն, և որովհետև Մարիամի գործողությունների շարժիչ ուժը սերն ու ծառայության ոգին էին: Նա արժանի է նմանվելու, որովհետև նա առաջինն ու ամենակատարյալն էր Քրիստոսի աշակերտների մեջ: Այս ամենն ունի հարատև և տիեզերական օրինակելի արժեք» (MCul 35):

40

ԳՆԱՑԵՔ ՔԱՐՈԶԵ՛Ք ԱՎԵՏԱՐԱՆԸ ԱՄԲՈՂՋ ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅԱՆԸ (ՄՐԿ. 16։15)

1. ՆՐԱ ՎԵՐՋԻՆ ԿՏԱԿԸ

Տիրոջ վերջին բառերը հանդիսավոր են, թեև ասվեցին խռովքի կամ տկարության մեջ: Ուրեմն ի՞նչ մտածենք մեր Տիրոջ վերջին հրահանգի մասին՝ տրված առաքյալներին, այն, ինչ կոչվում է Տիրոջ վերջին կամքը և կտակը՝ տրված ավելի սքանչելի պահի, քան Սինա լեռան վրա էր, այսինքն՝ որպես լրումն իր ամբողջ երկրային օրենքի տվչության և անմիջապես իր Համբարձումից առաջ: Խոսելիս Նա արդեն զգեստավորված էր Սուրբ Երրորդության ամբողջ վսեմությամբ. «Գնացե՛ք ամբողջ աշխարհով մեկ և քարոզեցե՛ք Ավետարանը ամբողջ արարչագործությանը» (Մրկ. 16:15):

Այս բառերը քրիստոնեության առանցքն են: Հավատքը պետք է ձգտի մարդկանց քարոզելու անսպառ եռանդով: Երբեմն այդ էական սկզբունքը բացակայում է: Ո՛չ համայնքում, ո՛չ համայնքից դուրս չկա ձգտում՝ փնտրելու և գտնելու մարդկանց: Բայց եթե Համբարձման ժամանակ Տիրոջ կողմից տրված այդ պատգամը չի հարգվում, դրա համար գին է վճարվելու՝ շնորհի կորուստը, հավատքի նվազումը և

քայքայումը՝ մինչև իսկ ոչնչացման աստիճան: Նայե՛ք ձեր շուրջբոլորը և տեսե՛ք, թե քանի՛ համայնքներ են արդեն վճարել այդ սարսափելի գինը:

Երբ Քրիստոսն ասաց «բոլորին», Նա իսկապես նկատի ուներ ԲՈԼՈՐԻՆ: Իրականում Նա Իր աչքերի առջև ուներ յուրաքանչյուր անհատի, «որի համար ինքը հագավ փշե պսակը, կրեց Խաչը, մեխերը, տիգախոց եղավ, կրեց ամբոխի արհամարհական հայացքը, անթիվ վշտերը, անչափելի ցավերը, ուժասպառ լինելը և հոգեվարքի ցավերը և մահն ինքնին՝ Գողգոթայի վրա»: Այդպիսի վիթխարի տառապանքը չպետք է իզուր անցնի: Անգին Արյունը պետք է դիպչի յուրաքանչյուրին, որի համար այն հեղվեց այդպես առեղծվածային կերպով: Քրիստոնեական այդ հանձնարարությունը մեզ ուժգին կերպով ուղարկում է մարդկանց մոտ ամենուրեք՝ ամենահետինների մոտ, մեծամեծների մոտ, նրանց մոտ, ովքեր մոտ են, և նրանց մոտ, ովքեր հեռու են, հասարակ մարդկանց մոտ, չարամիտների մոտ, ամենահեռավոր խրճիթները, բոլոր տառապյալ արարածների մոտ, դիվայինների մոտ, դեպի ամենամենավոր փարոսի աշտարակը, բորոտի մոտ, մոռացվածների մոտ, խմիչքի և արատների զոհերի մոտ, վտանգավոր խավերի մոտ, քարայրերում և քարավաններում բնակվողների մոտ, պատերազմի դաշտում գտնվողների մոտ, թաքնվողների մոտ, այն վայրերը, որտեղից ուրիշները խուսափում են, ամենացածր որջերը, սառցակալած անկյունները, արևից այրված անապատը, ամենաանթափանց ջունգլիները, զզվելի ճահիճները, մեկուսացված կղզիները, դեռ չհայտնաբերված ցեղերի մոտ, դեպի բացարձակապես անհայտ վայրերը՝ պարզելու համար, թե արդյոք այդտեղ ապրող մարդիկ կա՞ն, ընդհուպ մինչև երկրի ծայրերը, որտեղ հանգչում է ծիածանը: Ո՛չ ոք չպետք է խուսափի մեր փնտրտուքներից, որպեսզի բարի Հիսուսը չխոժոռվի մեր պատճառով:

Լեգեոնը պետք է, այսպես ասած, տարված լինի այդ վերջին պատվիրանով: Լեգեոնը, որպես առաջնային սկզբունք, պետք է դուրս գա՝ որևէ հարաբերություն հաստատելու ամեն տեղ ապրող յուրաքանչյուր մարդկային հոգու

հետ: Եթե սա կատարվի, և դա հնարավո՛ր է կատարել, ապա Տիրոջ պատվերը կմոտենա իրականացմանը:

Պետք է ասել, որ մեր Տերը չի հրամայում դարձի բերել յուրաքանչյուր անհատի, այլ հրամայում է, որ մոտենանք յուրաքանչյուրին: Առաջինը կարող է մարդկային հնարավորություններից վեր լինել, իսկ մոտենալը անհնարին չէ: Եվ եթե այս **համընդգրկուն, անխտրական կապը** բոլորի հետ հաստատվի, ի՞նչ կլինի հետո: Կասկածից վեր է, որ արդյունքներ կլինեն, որովհետև մեր Տերը չի հրամայում կատարել անիմաստ կամ ոչ անհրաժեշտ քայլեր: Երբ այդ լիակատար մոտեցումը դեպի մարդկությունն իրականություն դառնա, նվազագույնը Տիրոջ պատվիրանը կատարած կլինենք, և սա՛ է կարևոր հանգամանքը: Այն, ինչ տեղի է ունենալու հետո, կարող է լինել Հոգեգալստյան կրակների նորոգումը:

Շատ ազնվագույն աշխատողներ հավատում են, որ աշխատելով իրենց ուժերի առավելագույն չափով՝ նրանք կատարել են այն ամենը, ինչ Աստված ակնկալում է իրենցից: Ավաղ, այդ միակողմանի ջանադրությունը նրանց հեռու չի տանի, ոչ էլ Տերը գոհ կլինի այդ միայնակ ջանադրությամբ, և ոչ էլ բարիք կհանի այն ամենից, ինչը նրանք այդպես էլ չփորձեցին: Որովհետև կրոնական գործը պետք է սկսել այնպիսի աշխատանքի նման, որը գերիվեր է մարդկային ուժերից, այսինքն՝ համախմբվելով և կազմակերպելով բավարար թվով օգնականների:

Այս համախմբող սկզբունքը, ուրիշների ջանքերը մեր սեփական ջանքերին միացնելը հավաքական պարտավորության մի կենսական մասն է: Այդ պարտավորությունը ոչ միայն Եկեղեցում բարձր դիրք ունեցողներինն է, ոչ միայն քահանաներինն է, այլ նաև յուրաքանչյուր լեգեոնականինն է և յուրաքանչյուր կաթողիկէ հավատացյալինը: Երբ յուրաքանչյուր հավատացյալ տալիս է իր առաքելական ջանքերի վտակը, այն հոսում-գումարվում է տիեզերական ջանադրության հոսանքին:

«Դու կտեսնես, որ քո գործնական ուժերը միշտ հավասարազոր կլինեն քո ցանկություններին և հավատքի մեջ քո աճմանը: Որովհետև երկնային բարեհաճությունները նույնը չեն՝ ինչ երկրայինները. Աստված իր պարգևները քեզ տալիս է անսահմա-

նափակ ձևով: Աստվածային շնորհի շատրվանը մշտահոս է, ենթակա չէ որևէ հստակ սահմանափակումների, չունի սահմանված խողովակներ՝ կյանքի ջրերի հոսքը սահմանափակելու համար: Եկե՛ք քաջալերենք ազնիվ ծարավ այդ ջրերի նկատմամբ ու բացենք մեր սրտերը՝ դրանք ընդունելու համար, և այդ ջրերը մեր վրա կհոսեն այն առատությամբ, որքան մեր հավատքը կարող է ընդունել» (Սբ Կիպրիանոս Կարթագենացի):

2. ԼԵԳԵՈՆԸ ՊԵՏՔ Է ԳՆԱ ԴԵՊԻ ԱՆՀԱՏԻ ՀՈԳԻՆ

«Առավոտյան Սուրբ Պատարագի ժամանակ տեսնելով Խորանի մոտ գոյացող մարդկային շարքերը՝ մենք չպետք է կուրանանք և չտեսնենք սարսափելի հակադրությունը՝ ընտանիքներ, որտեղ համատեղ կյանքը չի ստացվում, կամ ապականված և արգահատելի բնակավայրեր, որտեղ չարն է թագավորում՝ իր սպասավորներով հանդերձ: Երկրորդ, մենք չպետք է մոռանանք, որ թեև այդպիսի վայրերում մեղքն արմատավորված է և կրկնակի զզվելի, մեղքը պակաս չարիք չի գործում այն վայրերում, որտեղ ավելի քիչ է տարածված: Երրորդ, թեև մենք այդտեղ տեսնում ենք հասունացած պտուղը՝ չարիքի պտուղների Մեռյալ Ծովը, բայց մեղքի արմատները թաքնված են երկրի բոլոր անկյուններում: Երբ արհամարհանքը ներս է սողում, կամ առօրեական մեղքը գլուխ է բարձրացնում, պետք է պատրաստվել արգահատելի երևույթների: Ամեն տեղ, որտեղ կարող է լինել լեգեոնականը, միշտ աշխատանք կա՛ անելու: Երբ թվում է, թե ուրիշ անելու բան չկա, մխիթարական խոսքեր ասեք մի ծեր խեղճ անձնավորության, որ գտնվում է հիվանդանոցում, կամ մանուկներին սովորեցրե՛ք խաչակնքվել և փորձեք պատասխանել այն հարցին, թե «Ո՞վ է ստեղծել աշխարհը», և այսպես, թեև դեռ ամբողջովին չես գիտակցում, բայց մի կատաղի հարված ես հասցնում չարի ամբողջ մեքենային: Չորրորդը մի հույսի ուղերձ է առաքելական աշխատողի համար, որը հակված է հուսահատվելու՝ առերեսվելով վիթխարի չարիքին. պետք է հիշել, որ նույնիսկ մեր նկարագրած այդ չարիքը անբուժելի չէ: Կա մեկ բուժում

և միայն մե՛կը՝ դա Եկեղեցու կրոնական համակարգի եռանդուն և համբերատար կիրառումն է:

Այդ ամեն կարծրացած արատի տակ, որի միայն հիշատակումն արդեն ցնցող է, կա մի հավատք, որը ժամանակ առ ժամանակ սպասում է բարությանը: Եթե, ուրեմն, այդտեղ կա մեկը, ով կարող է քնքշորեն համոզել, քաջալերել և խոսել ավելի լավ բաներից և հույս տալ առ այն, թե ամեն բան կարող է նորոգվել, ապա այդ արատավոր միջավայրի ամենախոցելի զոհին անգամ կարելի է մոտեցնել քահանային և Սուրբ Խորհուրդներին: Երբ դա տեղի ունենա, ապա նկատում ենք այնպիսի վերափոխում, որը երբեք այլևս չի կարող զրոյանալ: Հաճախ Քրիստոսի մեծ զորությունը հայտնի է դառնում Նրա Սուրբ Խորհուրդների մեջ, և մենք հիանում ենք՝ տեսնելով, որ կյանքի հրաշալի փոփոխությունը, որը տեղի ունեցավ, օրինակ, Օգոստինոսի կամ Մարիամ Մագդաղենացու մոտ, շարունակվում է նորովի:

Ուրիշների համար էլ բուժումը կլինի պակաս ակնհայտ: Վատ սովորությունների և հին ազդեցությունների ձգողականությունը կարող է լինել անդիմադրելի: Կլինեն անկումներ և վերստին վերելքներ: Ոմանք գուցե երբեք չդառնան այն, ինչ մենք անվանում ենք «լավ քաղաքացիներ», բայց նրանք կունենան բավականաչափ գերբնական կամք, որպեսզի ի վերջո հասնեն երանելի նավահանգստին: Այդպիսով հասած կլինենք գլխավոր նպատակին:

Ըստ էության, լեգեոնականի համար ձախողումներ քիչ կլինեն, եթե նա ունի պարզ և քաջարի հավատք՝ անկախ նրանից, թե որտեղ և ինչպիսի մութ և արատավոր վայրերում է նա աշխատում: Կանոնը շատ կարճ ու հստակ է՝ տարածել Սուրբ Խորհուրդների կարևորությունը և ժողովրդական ջերմեռանդական աղոթքների սովորությունները, ու մեղքը կհալվի աչքիդ առաջ: Բարիք գործի՛ր ամեն տեղ. բավական է դիմադրության ճակատը կոտրել որևէ կետում: Գործիքներդ հարմարեցրո՛ւ ըստ անհրաժեշտության: Մեկ շենքում վեց ընտանիք Սուրբ Պատարագին չեն հաճախում, Սուրբ Խորհուրդները չեն ընդունում և դիմադրում են, երբ սկսում ես համոզել: Գուցե կարող ես համոզել նրանցից մեկին անել մի բան, որը պահանջում է ավելի քիչ համագործակցություն:

Հիսուսի Սուրբ Սիրտը հաստատիր այդ տան մեջ և այդ օրն արդեն շահած կլինես: Նրանք կբարձրանան, և ուրիշներն էլ՝ նրանց հետ միասին: Ի վերջո, նրանք, ովքեր վատ օրինակով միմյանց քաշել են ներքև, կսկսեն ոգևորել միմյանց» (Հայր Մայքլ Քրիդոն՝ Մարիամի Լեգեոնի Կոնսիլիումի առաջին հոգևոր առաջնորդը):

«Այս ավազակը գողացավ Դրախտը: Նրանից առաջ ոչ ոք չստացավ այդպիսի խոստում՝ ո՛չ Աբրահամը, ո՛չ Իսահակը, ո՛չ Հակոբը, ո՛չ էլ Մովսեսը կամ մարգարեները, կամ առաքյալները. ավազակը նրանց բոլորից առաջ անցավ: Բայց նրա հավատքն էլ գերազանց էր մյուսներից: Նա տեսավ Հիսուսին չարչարանքների մեջ և պաշտեց Նրան, կարծես Հիսուսը լիներ փառքի մեջ: Նա տեսավ Հիսուսին խաչին գամված և պաշտեց Նրան, կարծես Հիսուսը լիներ գահին նստած: Նա տեսավ Հիսուսին դատապարտված և Նրանից բարեհաճություն խնդրեց՝ ինչպես թագավորից: Ո՛վ հիացմունքի արժանի գող, դու տեսար խաչված մարդուն և հռչակեցիր Աստծուն» (Սբ Հովհաննես Ոսկեբերան):

3. ՀԱՏՈՒԿ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՂՂԱՓԱՌ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԵՐ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԵՏ

Հիսուս Քրիստոսի ուղերձը յուրաքանչյուր մարդու հասցնելու աշխատանքը, որը, Սբ Պողոս Զ Պապի բառերով, «Եկեղեցու հիմնական առաքելությունն է» (EN 14), կապված է Եկեղեցու մեկ այլ մեծ հանձնառության հետ, որն է՝ քրիստոնյաների միջև հաշտության և միասնության առաջմղումը: Այստեղ հիշենք մեր Տիրոջ աղոթքը Վերջին Ընթրիքի ժամանակ. «Որպեսզի բոլորը լինեն մեկ, ինչպես դու Հայր՝ իմ մեջ, և ես՝ քո մեջ, որպեսզի նրանք էլ մեր մեջ լինեն, և որպեսզի աշխարհն էլ հավատա, թե դու ուղարկեցիր ինձ» (Հվի. 17:21):

Վատիկանի Երկրորդ Ժողովից (1962-1965) հետո քրիստոնյաների միջև միության հարցը Կաթողիկէ Եկեղեցու առաջնահերթություններից մեկն է ներկա ժամանակներում, որովհետև ինչպես մատնացույց է անում նույն Ժողովը, «քրիստոնյաների միջև բաժանումը ակնհայտորեն հակասում է Քրիստոսի կամքին, գայթակղում է աշխարհը և

վնասում ամենասուրբ գործին՝ Ավետարանի քարոզությանը յուրաքանչյուր արարածին» (UR 1):

Վերոհիշյալի համատեքստում շատ կարևոր է Սբ Հովհաննես Պողոս Բ Պապի «Orientale Lumen»՝ «Արևելքի Լույսը», առաքելական նամակը, որը գրվել է որպես աջակցություն Արևելքի քրիստոնյաների հետ միությանը: Այդ նամակում ասվում է. «Քանի որ, ըստ էության, մենք համոզված ենք, որ Արևելյան Եկեղեցիների հարգելի և հնագույն ավանդությունը Քրիստոսի Եկեղեցու ժառանգության անքակտելի մասն է, կաթողիկէ հավատացյալների համար առաջնային անհրաժեշտություն է այդ ավանդությանը ծանոթանալը և դրանով սնվելը, որպեսզի քաջալերվի միության գործընթացը յուրաքանչյուրի համար լավագույն ձևով:

Մեր արևելյան կաթողիկէ եղբայրներն ու քույրերը խորապես գիտակցում են, որ կենդանի կրողներն են այդ ավանդության՝ մեր ուղղափառ եղբայրների և քույրերի հետ միասին: Լատին Կաթողիկէ Եկեղեցու անդամները ևս պետք է ամբողջովին ծանոթ լինեն այս գանձի հետ և այդպիսով Պապի հետ միասին մեծ փափագ ունենան առ այն, որ Եկեղեցում և աշխարհում վերականգնվի կաթողիկէության ամբողջական տեսանելիությունը՝ արտահայտված ոչ միայն մեկ ավանդությամբ և առավել ևս ոչ մեկ համայնքով, որը հակադրվում է մյուսին, և նաև մեզ բոլորիս շնորհվի ամբողջական ճաշակումը տիեզերական Եկեղեցու՝ Աստծո կողմից հայտնված և անբաժանելի ժառանգության, որը պահպանվում և աճում է ինչպես Արևմուտքի, այնպես էլ Արևելքի Եկեղեցիներում (Orientale Lumen 1)»:

Այս Ուղղափառ Եկեղեցիները իսկապես մեր քույր Եկեղեցիներն են, մենք պետք է բոլոր հնարավոր միջոցներով առաջ մղենք միությունը միմյանց միջև՝ համաձայնության մեջ լինելով Քրիստոսի մտքի հետ և առաջնորդվելով Վատիկանի Երկրորդ Ժողովի «Unitatis Redintegratio» փաստաթղթի ուղենիշներով:

Այս Գլխի հետագա բաժիններում այն ամենը, ինչ ասվում է ոչ կաթողիկէների դարձի վերաբերյալ, չի վերաբերում Ուղղափառ Եկեղեցիների մեր եղբայրներին և քույրերին:

4. ՁԳՏԵԼ ԴԱՐՁԻ ԲԵՐԵԼ ԴԵՊԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Պիուս ԺԱ Պապը հանդիսավոր կերպով հայտարարել է. «Եկեղեցու գոյության միակ պատճառը Քրիստոսի Թագավորության տարածումն է ամբողջ աշխարհով մեկ, որպեսզի մարդիկ մասնակից դառնան Նրա փրկագործությանը»: Հետևաբար, տխուր է, որ կաթողիկէ հավատացյալներն ապրում են մարդկային բազմությունների մեջ, որոնք Եկեղեցու ծոցում չեն, և կաթողիկէները քիչ կամ ոչ մի ջանք չեն գործադրում նրանց Եկեղեցի բերելու համար: Պատճառը երբեմն այն փաստն է, որ կա հովվական աշխատանքի լուրջ խնդիր. նրանք դուրս են մնում տեսադաշտից, սա խնդրի մի կողմն է: Ուրեմն թող ոչ ոք չզարմանա, երբ վերջում ո՛չ Եկեղեցում գտնվողները մնան Եկեղեցում, ո՛չ դրսում գտնվողները ներս բերվեն:

Այս հարցում սխալվել չի կարելի: Հավատքը պետք է հասանելի դարձվի յուրաքանչյուր անձի համար, որը գտնվում է Եկեղեցուց դուրս: Երկչոտությանը, ուրիշների հետ հարմարվելու սովորությանը և այս կամ այն տեսակի դժվարություններին պետք է գերազանցի գերագույն կամքը՝ հավատքի այդ պարգևը կիսելու նրանց հետ, ովքեր այն չունեն: Ավետարանը պետք է հասցվի յուրաքանչյուր արարածի: Սբ Ֆրանցիսկոս Քսավիեն մտածում էր, որ այդ նպատակի համար պետք է գործադրել ջանքեր խելագարի նման, բայց ուրիշները կարծում են, որ այստեղ ողջամտություն է պետք: Այո, շատ բան կախված է ողջամտությունից, միայն թե դրա իրական ոլորտում, որն է՝ գործողությունների անվտանգության ապահովումը և ոչ թե գործողությունները անդամալուծելը: Համակարգի մեջ ողջամտության ճիշտ դերը արգելակի դերն է, և միշտ սխալվում են, երբ մտածում են, որ ողջամտությունը պետք է կատարի շարժիչի դերակատարություն: Եվ հետո զարմանում են, երբ գործողությունը չի ստացվում: Օ՛, մենք կարիքն ունենք խելագար մարդկանց, որոնք չեն առաջնորդվում եսասիրական զգուշությամբ, որոնք ապրում են ցածրակարգ վախից բարձր՝ չմտնելով այն ամենի մեջ, ինչը Լևոն ԺԳ Պապն անվանում էր հանցագործ չափազանցություններ, այսինքն՝ անտարբերության և, այսպես կոչված, ողջամտության մեջ:

Որովհետև հոգիները քշվում-տարվում են ժամանակի արագահոս գետի մեջ: Ուշացած ջանքերը կարող են փրկել ուրիշ հոգիների, բայց ոչ **այս հոգիներին,** որովհետև հավիտենության անդունդն արդեն կլանած կլինի **նրանց**:

«Անընդհատ կրկնելով, թե մարդիկ պատրաստ չեն ընդունելու Ավետարանը՝ կարող ես ինքդ կորցնել պատրաստակամությունը Ավետարանը բերելու մարդկանց» (կարդինալ Լ. Ջ. Սուենենս):

Եկեղեցուց դուրս գտնվող մարդիկ տարուբերվում են կասկածների ծովում, և նրանց սրտերը հանգիստ չունեն, բայց նրանք պետք է համոզված լինեն, որ Եկեղեցում իսկապես կա հավատք և հանդարտություն: Նրանց համոզելու առաջին քայլը պետք է անհրաժեշտաբար լինի նրանց մոտենալը: Ինչպե՞ս կարող են նրանք հասկանալ ճշմարտությունը, եթե որևէ մեկը չբացատրի նրանց (տե՛ս Գործք. 8:31): Ինչպե՞ս կարող է փարատվել երևակայական թյուրըմբռնումը որևէ հարցի մասին, եթե կաթողիկէները միշտ լռություն պահեն դրա մասին: Ինչպե՞ս կարող են Եկեղեցու հակառակորդները գուշակել կաթողիկէների արտաքին սառնության հետևում թաքնված հավատքի ջերմության մասին: Եվ մի՞թե ներելի չէ նրանց այն մտածումը, թե կաթողիկէ հավատքը, որը հազվադեպ է խանդավառվում, քիչ է հեռու կամ ընդհանրապես հեռու չէ իրենց սեփական անհավատությունից, որն իրենք ընդունում են:

Ոմանք հակված են մտածելու, թե լիովին բավական է այն տեղեկատվությունը, որ կաթողիկէ հավատքի մասին տարածում են լրատվամիջոցները կամ խոսում են հասարակական հանդիպումների ժամանակ: Բայց իրականում այդ մոտեցումը դառնում է քիչ արդյունավետ, որովհետև այդտեղ բացակայում է անձնական շփումը: Եթե մարդկանց դարձի բերելը գլխավորապես կախված լիներ վերոնշյալ միջոցներից, ապա ներկա դարի տեխնոլոգիաները կլինեին մեծ թվով մարդկանց դարձի բերելու միջոցներ: Բայց ի հակառակ դրան, դժվար է Եկեղեցում պահել նույնիսկ եղած կաթողիկէ հավատացյալներին:

Ո՛չ: Որպեսզի մոտեցումը արդյունավետ լինի, այն պետք է լինի անհատական և մտերմիկ: Հաղորդակցամիջոցները

կարող են ունենալ արթնացնող կամ աջակցող դերակատարություն այդ «ուրիշ ոչխարներին» Բարի Հովվի մոտ բերելու համար, բայց այդ մոտեցման գլխավոր մեթոդը պետք է լինի մարդու հետ անհատական աշխատանքը: Հոգևոր կյանքը կարգավորող կանոնների համաձայն, ինչպես ասում է Երանելի Ֆրեդերիկ Օզանամը, մարդկային հոգին բարձրացնելու համար անհրաժեշտ է, որ մեկ այլ հոգի լինի գրավիչ: Այլ խոսքով, պետք է գործի եղբայրասիրության օրենքը. պարգևը, առանց պարգևողի, դատարկ է: Բայց շատ հաճախ անհատ կաթողիկէ հավատացյալները որդեգրում են անօգնական անձի դիրքորոշումը, որը կարող է մտածել, թե նրանք, ովքեր Եկեղեցում չեն, չափազանց ամուր են արմատացած նախապաշարումների և տգիտության մեջ, որոնցից հնարավոր չէ դուրս բերել նրանց: Հասկանալի է, որ նախապաշարումները բազում են՝ ավանդական, գրեթե ի ծնե և ամրացած կրթությամբ: Ի՞նչ ռեսուրսներ ունի կաթողիկէ հավատացյալն այդպիսի պայմաններում գործելու համար: Նա չպե՛տք է վախենա: Եկեղեցու պարզ ձևով մեկնաբանված վարդապետության մեջ նա ունի մի փայլատակող սուր, որի զորությունը լավագույն ձևով բացատրում են Սբ Ջոն Հենրի Նյումանի հետևյալ բառերը. «Իմ մեջ մի ուժգին զգացում ունեմ առ այն, որ ճշմարտությունը հզոր է և հաղթանակած է: Այն իր վրա կրում է Աստծո օրհնությունը: Սատանան ինքը ոչինչ չի կարող անել, եթե ոչ միայն հետ քաշվել իր գերիշխող դիրքից. նա չի կարող կանխել ճշմարտությունը»:

Կաթողիկէ հավատացյալը պետք է նաև հիշի ևս մեկ սկզբունք, որը չի կարող կեղծ լինել. «Ճշմարտությունը սխալի դեմ կռվելիս երբեք չի բարկանում: Իսկ սխալը երբեք հանդարտ չէ ճշմարտության հետ մրցելիս» (Դը Մեյսթրե): Ինչպես անդադար կրկնել ենք այս էջերում, մոտեցումը դեպի այն անձինք, որոնց ուզում ենք շահել, պետք է լինի Աստվածային Հովվի մոտեցման նման: Չպետք է լինի ոչ մի հակասական, ոչ մի պարտադրող բան: Յուրաքանչյուր բառ պետք է շնչի հեզությամբ, ջերմությամբ, անկեղծությամբ: Իսկ գործողությունները բառերի նման պետք է ցույց տան մեկ էական իրողություն՝ այն, որ դրանք հիմնված են

իսկական հավատքի վրա: Այդ դեպքում դժվար կլինի դրանց դիմադրելը, և դրանք միշտ կթողնեն խոր տպավորություն, որի արդյունքում կհասունանան դարձի բազում պտուղներ:

«Մենք պետք է միշտ հիշենք,– ասում էր դկտ. Ուիլյամսը՝ Բիրմինգհեմի նախկին արքեպիսկոպոսը,– որ կրոնը ընդունվում է և ոչ թե դասավանդվում: Դա մի կրակ է, որը փոխանցվում է մի անձից մյուսին: Այն տարածվում է սիրով և ո՛չ որևէ այլ կերպ: Մենք այն վերցնում ենք միայն նրանցից, ում համարում են մեր ընկերները: Նրանք, ում համարում ենք անտարբեր կամ թշնամական, չեն կարող մեզ կրոն առաջարկել»:

Եթե անձնական հարաբերությունն անհրաժեշտ է, ապա մեկ լեգեոնականը չի կարող զբաղվել բազում գործերով: Հետևաբար, մեծ թվով մարդկանց դարձի բերելու համար անհրաժեշտ են մեծ թվով աշխատող լեգեոնականներ: Լեգեոնականները պետք է լինեն բազմաթիվ:

Որպես յուրաքանչյուր համակարգի մաս՝ պետք է ուշադրություն դարձնել հետևյալին.

ա. Պետք է սովորել ոչ թե պարզապես հակադրվելու համար, այլ որպեսզի կարողանաս պատասխանել անկեղծ հարցադրումներ կատարողներին:

բ. Պետք է փնտրել արդեն դարձի եկածներին՝ նրանց հետ մտերմություն հաստատելու համար կամ, եթե հարմար են, նրանց Լեգեոնի անդամակցության բերելու համար: Ոչ ոք նրանց նման պատրաստված չի լինի՝ հասկանալու համար իրենց նախկին եղբայրների և քույրերի խնդիրները և նրանց օգնելու համար:

գ. Աշխատել այն անձանց հետ, որոնք սկսել են կրոնագիտության դասընթացը, բայց չեն ավարտել (հիմնվելով այն անվանացանկերի վրա, որոնք կտրամադրեն կրոն դասավանդողները): Փորձը ցույց է տալիս, որ այդ բացթողումը սովորաբար ոչ թե կաթողիկէ հավատքն ընդունելու ցանկությունը կորցնելու պատճառով է, այլ պատահական հանգամանքների, որոնց հետևանքով նրանց հաճախումը դադարել է, և ապա ամաչկոտությունը և հետաձգելու ցանկությունը թույլ չեն տվել, որ նրանք վերսկսեն դասընթացը:

դ. Ոչ կաթողիկէ անձանց հետ արդյունավետ հարաբերություն հաստատելու հնարավորությունները շատ-շատ են՝ եթե միայն լեգեոնականները նրանց հետ վերաբերվեն քրիստոնեական անկեղծությամբ: Այն կաթողիկէներին, որոնք խռովված են, վշտի կամ որևէ խնդրի մեջ են, լեգեոնականը սովորաբար խորհուրդ կտար աղոթել կամ կհամոզեր կարդալ մի որևէ բան, որը կարող էր նրան օգնել: Լեգեոնականը նրանց հետ կխոսեր Աստծո սիրո, Մարիամի մայրության մասին՝ այդպիսով մխիթարելով և բարձրացնելով նրանց ոգին: Նմանապես կարելի է աշխատել նաև ոչ կաթողիկէ անձանց հետ, որոնք գտնվում են դժվարին փուլերում, որոնք հաճախ են պատահում բոլորի հետ, և որոնք կարելի է օգտագործել որպես հնարավորություն: Կրոնի թեման տաբու է: Սովորաբար ասում են միայն աշխարհիկ բառեր, որոնք չեն մխիթարում, ոչ էլ հավատք են փոխանցում կամ հասնում որևէ արդյունքի: Բայց լեգեոնականները թող օգտվեն մարդկանց մոտենալու այս կատարյալ հնարավորություններից: Այն պահերին, երբ սովորական պատնեշները խարխլված են, հոգևոր բառերը կընդունվեն երախտագիտությամբ և կարող են լավ արդյունքներ տալ:

ե. Բազմաթիվ վայրերում ոչ կաթողիկէների համար կազմակերպվում են մեկօրյա հոգևոր կրթություններ: Սովորական կառուցվածքը հետևյալն է. Սուրբ Պատարագ, երեք դասախոսություն, հարցուպատասխան, ճաշ, թեյ, օրհնություն Սուրբ Հաղորդությամբ և երբեմն ֆիլմի դիտում՝ մեկնաբանությամբ: Եթե հնարավոր լինի վանատուն գտնել այդ նպատակի համար, ապա իդեալական միջավայր կլինի և կցրի թյուրըմբռնումներն և նախապաշարումները:

Գործընթացը ենթադրում է նախ որոշել օրը, ապա տպագրել հրավիրատոմսեր, որոնց հետևում գրված է օրակարգը: Տարածքում գործող լեգեոնականների միջոցով և այլ հնարավոր ձևերով այդ հրավիրատոմսերը պետք է հասցնել ոչ կաթողիկէներին և նրանց բացատրել հոգևոր կրթության նպատակը: Այդ հրավիրատոմսերը ճիշտ ձևով օգտագործելը կարևոր հոգեբանական նշանակություն ունի: Հետևաբար, դրանք չպետք է երբեք բաժանել անտարբերությամբ՝ գովազդի նման: Պետք է գրի առնել

այն մարդկանց անունները, որոնց դրանք բաժանվում են, որպեսզի վերջում հնարավոր լինի ստուգել, թե ովքեր են եկել: Հրավիրատոմսերը պետք է տալ միայն այն անձանց, որոնք որոշակի հույս են ներշնչում, թե կգան:

Երբ լեգեոնականը վերցնում է հրավիրատոմսը, նշանակում է, որ նա ուզում է գտնել մեկին, ով պատրաստակամ է մասնակցելու հոգևոր կրթությանը: Մինչև այդ նպատակին լեգեոնականը հասած չլինի, հրավիրատոմսը նրան կհիշեցնի իր այդ պարտավորության կատարման անհրաժեշտության մասին:

Սովորաբար ոչ կաթողիկէներին հոգևոր կրթության կուղեկցեն նրանց կաթողիկէ ընկերները, որոնց շնորհիվ նրանք եկել են հոգևոր կրթության: Սրա նպատակը ոչ կաթողիկէ անձանց համար հեշտացնելն է մուտքը նոր պայմանների մեջ, տարբեր հարցերի շուրջ մտածելը և քաջալերելը, որպեսզի օրվա ընթացքում շփվեն քահանայի հետ: Լռությունը ստիպողական չէ: Հոգևոր կրթությունը բաց է թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց համար: Նրանք պետք է ձգտեն իրականացնել սեփական հոգևոր նպատակները: Դարձի եկած և արհամարհական վերաբերմունքով կաթողիկէները չպետք է բերվեն այդ հոգևոր կրթություններին:

Որքան շատ մարդկանց հրավիրեն լեգեոնականները, այնքան շատ կլինեն հոգևոր կրթության մասնակիցները, և որքան մեծ լինի հոգևոր կրթության մասնակիցների թիվը, այնքան մեծ կլինի Եկեղեցում ընդունվածների թիվը: Փորձառությունը ցույց է տալիս, որ այս համաչափությունը աճում է հենց այդ հերթականությամբ: Ըստ այդմ, սկզբնապես հաստատված մարդկային կապերի կրկնապատկումը (որը, անկասկած, մեզնից է կախված) կկրկնապատկի դարձի եկողների թիվը:

«Որպեսզի բոլորը մեկ լինեն, ինչպես դու՝ Հայր, իմ մեջ, և ես՝ քո մեջ, որպեսզի նրանք էլ մեր մեջ լինեն» (Հվհ. 17:21):

«Վերցրեք Օրհնյալ Տիրամոր նպաստը, որ բերել է Ավետարանի վկայության համար, ջնջեք նրա վկայությունը քրիստոնեության մեջ և կգտնեք ոչ թե պարզապես մի կոտրված օղակ, այլ կտեսնեք, որ ամբողջ շղթայի ամրությունը կբացակայի, ոչ թե պարզապես մի բաց կլինի կամ մի կոտրվածք կառույցի մեջ, այլև

հիմքը կվերանա: Մարդեղության միջոցով ձեռք բերված հրաշալիքների հանդեպ հավատքը, դարերի հավատքը, աշխարհի հավատքը հիմնված են մեկ վկայության վրա, մեկ միավորի վրա, մեկ ձայնի վրա, և դա Օրհնյալ Կույս Մարիամինն է» (Կարդինալ Ուայզմեն, «Նոր Կտակարանի Գործերը»):

5. ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՐՁԻ ԲԵՐԵԼՈՒ ԳՈՐԾԻՔ Է

Չափազանց շատ ժամանակ է ծախսվում այն փաստարկների վրա, որոնք մարդկանց չեն գրավում դեպի Եկեղեցի, նույնիսկ երբ դրանք ապացուցվում են: Բոլոր քննարկումների նպատակը պետք է լինի Եկեղեցուց դուրս գտնվող անձանց Եկեղեցու գանձերը ցույց տալը: Այդ անելու առավել արդյունավետ միջոց գոյություն չունի, քան Սուրբ Հաղորդության Խորհրդի ներկայացումը:

Նույնիսկ նրանք, ովքեր Հիսուսին ճանաչում են աղոտ և ոչ ամբողջությամբ ըմբռնելով, հիանում են Նրանով: Ականատեսների վկայությունների վրա հիմնվելով՝ նրանք ընդունում են, որ Հիսուսը եզակի իշխանություն ուներ բնության նկատմամբ, այնպես որ բնական տարերքը հնազանդվում էր Նրան, մեռածները վերակենդանանում էին, հիվանդությունները վերանում էին Նրա հրամանով: Քրիստոսն այդ ամենն անում էր անմիջականորեն սեփական իշխանությամբ, որովհետև թեև մարդ էր, բայց նաև Ինքը՝ Հավիտենական Աստվածն էր, Ով ստեղծել է ամեն բան, Ում խոսքը զորություն է:

Սուրբ Գիրքը պատմում է, թե ինչպես մի անգամ Աստվածամարդը, անթիվ հրաշքներ կատարելուց հետո, կատարեց նաև Սուրբ Հաղորդության քաղցր հրաշքը: «Հիսուսը հաց վերցրեց և օրհնեց, կտրեց, տվեց այն իր աշակերտներին և ասաց. «Առե՛ք, կերե՛ք, այս է իմ մարմինը» (Մտթ. 26:26): Սա Սուրբ Գրքի մի հզոր հատված է, բայց քանի-քանի՛ մարդկանց համար է այն եղել մի ծածկված բան. «Խիստ է այդ խոսքը, ո՞վ կարող է լսել այն» (Հվի. 6:60): Նույնիսկ Տիրոջ մի քանի աշակերտների առարկությունն արձագանքում է դարեր շարունակ՝ որպես հետևանք ունենալով անթիվ

հոգիների կորուստը. «Սա ինչպե՞ս կարող է իր մարմինը մեզ տալ՝ ուտելու» (Հվի. 6:53): Այդ աշակերտներին կարելի էր գրեթե ներել իրենց անհավատությունը, որովհետև նրանք չէին հասկացել իրենց առջև կանգնած անձի իսկական բնույթը: Բայց ի՞նչն է մթագնում այն մարդկանց մտքերը, որոնք ընդունում են Քրիստոսի աստվածությունը, ուրեմն և՝ ամենակարողությունը: Վստահաբար, այդպիսիների համար պատրանք կլիներ և, հետևաբար, աներևակայելի, եթե այդ նույն Աստվածային Անձը հասարակ ժողովրդին դիմելիս ասեր՝ «Ա՛յս է Իմ Մարմինը», բայց նկատի ունենար ուրիշ բան՝ «Սա Իմ Մարմինը չէ»: Թող նրանք հասկանան Պասկալի անգութ տրամաբանությունը. «Որքա՛ն արգահատելի է այս ամբոխը, որը չի հավատում Սուրբ Հաղորդությանը: Եթե Ավետարանը ճշմարիտ է, եթե Հիսուս Քրիստոսն Աստված է, ինչո՞ւմ է խնդիրը»:

Հնարավոր չէ՛ պարզապես չլսելու տալ Սուրբ Հաղորդության նման մի գաղափարի մարտահրավերը: Հարկավոր է ոչ կաթողիկէ քրիստոնյաների ուշադրությանը հետևողականորեն ներկայացնել Եկեղեցու այս թագադիր փառքը՝ նրանց մտքերին ստիպելու համար, որպեսզի մտածեն այդ Սուրբ Խորհրդի հնարավոր ճշմարտության մասին՝ իրենք իրենց ասելով. «Եթե սա ճշմարիտ է, ի՛նչ ահավոր մեծ բան եմ կորցրել»: Այդ մտքի ծակոցը կլինի առաջին մեծ խթանը, որպեսզի նրանք մտնեն իրենց ճշմարիտ տունը:

Եկեղեցուց դուրս գտնվող բազում ազնիվ մարդիկ կարդում են Աստվածաշունչը և խորհրդածությամբ ու աղոթքով ձգտում են Հիսուսին դուրս բերել պատմության աղոտ անցյալից՝ ուրախանալով, եթե կարողանում են երևակայությամբ վերարտադրել իրենց Տիրոջ հստակ պատկերը՝ զբաղված սիրո գործերով: Օ՛, եթե միայն այդ անձինք կարողանայի՛ն հասկանալ, որ Եկեղեցում գոյություն ունի Սուրբ Հաղորդության հրաշքը, որը կարող էր իրենց ներկա կյանքի մեջ բերել Հիսուսին՝ այնպիսին, ինչպիսին Նա է՝ ամբողջությամբ և լրիվությամբ, Իր ամբողջ ֆիզիկական իրականությամբ և Իր ամբողջ Աստվածությամբ: Եթե միայն նրանք հասկանայի՛ն, որ այդպիսով նրանք կկարողանային դիպչել Նրան, խորհրդածել Նրա մասին, շփվել Նրա հետ

ավելի մոտիկից, ավելի մտերիմ ձևով, քան շփվում էին Նրա սիրելի ընկերները Բեթանիայում: Դեռ ավելին, Սուրբ Հաղորդությամբ, Կույս Մարիամի հետ միասին, նրանք կկարողանային այդ Աստվածային Մարմնին ընծայել Մոր ամբողջական սիրասուն խնամքը, և այդպես, ինչ-որ իմաստով, համարժեք ձևով շնորհակալություն հայտնել Նրան այն ամենի համար, ինչ Նա արել է իրենց համար: Անշուշտ, Սուրբ Հաղորդության անգերազանցելի բարիքը պետք է բացատրվի այն բազմաթիվ մարդկանց, որոնք գտնվում են Եկեղեցուց դուրս, որպեսզի նրանք փափագեն այդ լույսը: Եվ ապա Հիսուսը նրանց կշնորհի Իրեն վերաբերող իրողությունները հասկանալու կարողությունը: Ինչպես Էմմավուս գնացող աշակերտների պարագայում էր, նրանց սրտերը ևս կվառվեն ճանապարհին, երբ Նա խոսի նրանց հետ և բացատրի Իր այդ «խիստ խոսքերի» իմաստը՝ «Առե՛ք, կերե՛ք, այս է Իմ Մարմինը» (Մտթ. 26:26): Եվ նրանց աչքերը կբացվեն, և նրանք կճանաչեն Նրան Աստվածային Հացի բեկման ժամանակ (Ղկ. 24:13-35):

Սուրբ Հաղորդության այս ճանաչման մեջ այն թյուրըմբռնումները և նախապաշարումները, որոնք մտավախություններ էին առաջացնում և մթագնում երկնքի տեսլականը, հալչում են ձյան փաթիլների նման կիզիչ արևի ճառագայթների ներքո, այնպես որ նա, ով քայլելիս չէր տեսնում, լիառատ սրտով կբացականչի. «Միայն մեկ բան գիտեմ, որ ես կույր էի, բայց այժմ տեսնում եմ» (Հվի. 9:25):

«Սուրբ Հաղորդության Տիրամայրը Մարիամն է, ով իր կարողությամբ՝ որպես շնորհի տիեզերական բաշխող, իր ամբողջական և բացարձակ տրամադրության տակ ունի Սուրբ Հաղորդությունը և Դրա շնորհները: Որովհետև այս Սուրբ Խորհուրդը փրկության ամենաարդյունավետ միջոցն է, փրկագնման ամենագերազանց պտուղը՝ ընծայված Հիսուսի Քրիստոսի կողմից: Հետևաբար, Մարիամն է, որ այս Խորհրդի մեջ ճանաչելի ու սիրելի է դարձնում Հիսուսին: Մարիամն է, որ Սուրբ Հաղորդությունը տարածում է ամբողջ աշխարհով մեկ, բազմապատկում է եկեղեցիները, հաստատում է եկեղեցիները անհավատ ժողովուրդների մեջ, պաշտպանում է Սուրբ Հաղորդության հանդեպ հավատքը՝ ընդդեմ հերետիկոսների և անբարեպաշտների: Մարիամի՛ գործն է մարդկային հոգիներին Սուրբ Հաղորդությանը

պատրաստելը, նրանց մղելը, որպեսզի հաճախ այցելեն Սուրբ Հաղորդությանը և անդադար հսկեն Հաղորդության առջև: Մարիամը գանձարանն է այն բոլոր շնորհների, որոնք պարունակվում են Սուրբ Հաղորդության մեջ, որոնք առաջնորդում են դեպի Սուրբ Հաղորդությունը, և որոնք հոսում են Սուրբ Հաղորդությունից» (Թեսնիե, «Mois de Notre-Dame du T. S. Sacrement»):

6. ԱՆԿՐՈՆ ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ

Անկրոնության մասշտաբը սարսափելի մեծ է: Աշխարհի բազմաթիվ խիտ բնակեցված վայրերում ամբողջական թաղամասեր, որոնք անվանապես կաթողիկէ են, վարում են մի կյանք, որտեղ ընդհանրապես բացակայում են Սուրբ Պատարագը, Սուրբ Խորհուրդները և նույնիսկ աղոթքը: Մի այդպիսի վայրում ուսումնասիրությունը ցույց տվեց, որ 20,000 բնակչության մեջ կաթողիկէ հավատքը գործնականում ապրում էին միայն 75 մարդ: Մեկ այլ վայրում՝ 30,000-ից Սուրբ Պատարագին մասնակցում էին միայն 400-ը, և մեկ ուրիշ վայրում՝ 900,000-ից մասնակցում էին 40,000-ը: Այդպիսի վայրերում շատ հաճախ թողնում են, որ անկրոնությունը վարակի նման տարածվի և աճի առանց խոչընդոտների: Ոչ մի պատշաճ ջանք չի գործադրվում դա կանգնեցնելու համար: Պնդում են, թե անմիջական մոտեցումը կլինի անպտուղ կամ կմերժվի և գուցե վտանգավոր լինի: Եվ տարօրինակ է, որ այդպիսի պատճառաբանություններն ընդունվում են նաև նրանց կողմից, ովքեր բնական են համարում, որ միսիոներները գնան մինչև աշխարհի ծայրերը և վտանգեն իրենց կյանքը:

Այդպիսի վայրերում ամենատխուր իրողությունն այն է, որ քահանաներին գործնականում պաշտոնապես արգելված է անմիջականորեն մոտենալ մարդկանց: Անկրոնության խելացնորության մեծ բարդություններից մեկն այն է, որ դրա զոհերը շրջվում են իրենց հոգևոր հայրերի դեմ և արտաքսում են նրանց իրենցից: Այստեղ է Լեգեոնի բացառիկ արժեքը: Այն ներկայացնում է քահանային և իրականացնում է նրա ծրագրերը, սակայն Լեգեոնը ժողովրդից է, և հնարավոր չէ այն պահել հեռավորության վրա: Լեգեոնն

ապրում է ժողովրդի կյանքով, և անկրոն մարդիկ չեն կարող ոչնչացնել Լեգեոնի աշխատանքը: Չեն էլ կարող արգելել նրանց մոտեցումը ստերի ծխապատնեշով, որը կարող են հեշտությամբ դնել իրենցից առանձնացված մարդկային խմբի դեմ, ինչպիսին հոգևորականներն են:

Ի՞նչ կարող են նրանք տալ իրենց կյանքի դիմաց (Մրկ. 8:37):

Ինչպիսի՞ ջանք պետք է գործադրել՝ մերձավորի փրկության համար: Վստահաբար, դա պետք է լինի մի գերազանց ջանադրություն, նույնիսկ մահվան վտանգի գնով, եթե անհրաժեշտ լինի: Այդ անկրոնության ընդարձակ տարածքներում պետք է ավետարանել ոչ պակաս վճռականությամբ, քան հեռավոր առաքելավայրերում: Այստեղ առաջարկում ենք ամբողջովին չանտեսել նրանց, ովքեր աղաղակում են՝ «անհույս է» կամ «վտանգավոր է»: Գուցե ինչ որ ասում են, նպաստի հաջողությանը և Լեգեոնի արշավի անվտանգությանը: Բայց ոչ մի դեպքում նրանց խոսքերը չպետք է կաթվածահար անեն այդ աշխատանքը: Մեծ հավատք է պետք՝ չարիքի լեռները տեղափոխելու համար. հավատք՝ նման այն հավատքին, որը նկատի ուներ Սբ Իգնատիոս Լոյոլացին, երբ ասում էր, թե Աստծո հանդեպ իր վստահությունն այնքան մեծ է, որ պատրաստ է գնալ դեպի ծովի խորքերը մի փոքրիկ նավակով՝ առանց թիերի և առագաստների:

Առաքելության ընթացքում կպարզվի, որ լեգեոնականներին սպասում է ոչ թե մարտիրոսությունը, այլ բովանդակալից մի հաջողություն: Իրականում մեծ թվով մարդկային հոգիներ սպասում են, որ լեգեոնականներն առաջին անգամ անմիջականորեն մոտենան իրենց:

Մոտեցման մի մեթոդ: Վերոնշյալ պայմաններում, որտեղ կրոնական ամենատարրական պարտավորություններն արհամարհվում են, լեգեոնականների առաջին ջանքերը կարող են ուղղված լինել այդ մեծ և կարևոր պահանջը՝ Սուրբ Պատարագին մասնակցելը, շեշտելուն: Կարելի է պատրաստել մի թերթոն, որտեղ պարզ և ազդեցիկ ձևով բացատրված լինի Սուրբ Պատարագի գեղեցկությունն ու

զորությունը: Թերթոնի ազդեցությունն ավելի մեծ կլինի, եթե դրանում ընդգրկված լինեն թեման լուսաբանող գունավոր նկարներ: Այս թերթոնով զինված՝ լեգեոնականները կարող են կատարել այցելություններ տուն առ տուն: Այդ թերթոնից կարող են տալ յուրաքանչյուրին, ով կընդունի իրենց, միաժամանակ սիրալիր ձևով բացատրելով Սուրբ Պատարագին մասնակցելու կարևորությունը: Ավելորդ է զգուշացնել լեգեոնականներին, որ իրենց վերաբերմունքը բոլոր հանգամանքներում պետք է լինի շատ քաղցրաբարո և համբերատար, ո՛չ երբեք պարզ հարցաքննություն, ո՛չ երբեք քննադատող արհամարհանք:

Սկզբում մերժումները շատ կլինեն, բայց դրանք կփոխհատուցվեն շատ հաջողություններով, որոնք կգան անմիջապես: Այդ ամենին կհետևի Լեգեոնի սովորական այցելությունների մեթոդը՝ մարդկանց հետ ընկերական հարաբերություններ հաստատելու նպատակով: Եթե հասնեն այդ նպատակին, ապա կհասնեն ամեն ինչի:

Կրոնի գործնական ապրումի մերժման յուրաքանչյուր դեպքին լեգեոնականները պետք է վերաբերվեն այնպես, ինչպես զինվորը պատերազմի ժամանակ կմտածի մի որևէ շահեկան դիրքի գրավման մասին, որովհետև յուրաքանչյուր դիրքի գրավումն իր հետևից կբերի այլ նվաճումներ: Երբ այդպիսով նվաճումների թիվն աճի, հասարակական կարծիքը ևս կփոխվի: Տարածքում բոլորի հայացքը լեգեոնականների վրա է: Բոլորը խոսում են, քննադատում են, մտածում են, և այն սրտերը, որոնք սառն էին, սկսում են վառվել: Տարին կհաջորդի տարվան՝ նորանոր նվաճումների ցուցակով հանդերձ: Երկար տարիներ բնակչության հիմնական վերաբերմունքը կրոնի հանդեպ կթվա անփոփոխ: Հետո, ճիշտ ինչպես մրջյունների կողմից կերած կտորը, որն արտաքնապես առողջ տեսք ունի, ձեռքի մի հպումով մեկ վայրկյանում դառնում է փոշի, որոշակի իրադարձություններ ցույց կտան, որ մարդկանց սրտերը վերադարձել են դեպի Աստված:

Ջանադրության արդյունքը: 50,000 բնակչությամբ մի որոշակի քաղաքի մասին կարելի էր ասել, որ հազիվ

թե որևէ մեկն այդտեղ ապրեր հոգևոր կյանքով: Կրոնի նկատմամբ արհամարհանքի այս վիճակը ավելի էր բարդացել ամեն տեսակ արտասովոր երևույթների պատճառով: Անհնարին էր, որ քահանան կարողանար անցնել մի քանի թաղամաս՝ առանց հարձակումների ենթարկվելու: Հավատքի ոգով հիմնվեց մի պրեզիդիում, և սկսեցին ակնհայտ անհույս թվացող տնայցերը: Բոլորը զարմացան, երբ անմիջապես գրանցվեցին տեսանելի արդյունքներ, որոնց թիվն ու կարևորությունն աճում էր լեգեոնականների թվի և փորձառության աճմանը զուգահեռ: Երեք տարվա անսպասելի հաջողություններից հետո եկեղեցական իշխանությունները համարձակվեցին տղամարդկանց կանչել Ընդհանուր Հաղորդության՝ հուսալով, որ գոնե 200 տղամարդ կմասնակցի: Տղամարդկանց իրական մասնակցության թիվը հասավ 1100-ի, ինչը ցույց տվեց, որ ամբողջ բնակչությունը խորապես արթնացել էր՝ երեք տարվա առաքելության շնորհիվ: Լեռան գագաթն արդեն իսկ պարզ երևում է, այնպես որ այդ քաղաքի նոր սերունդն արդեն կծնվի փոխված հասարակական մտածողության մեջ: Այնտեղ, ուր Սուրբ Պատարագը և հոգևոր սպասավորները նախկինում համընդհանուր ձևով ծաղրանքի առարկա էին, կթագավորի սրբությունը: Նույնկերպ պետք է բուժում գտնվի նաև մյուս բնակավայրերի համար, որոնք նմանատիպ իրավիճակներում են:

«Հիսուսը պատասխանեց նրանց. «Եթե Աստծո հանդեպ հավատք ունենաք, ճշմարիտ եմ ասում ձեզ՝ ով, որ այս լերանն ասի՝ ելի և ծովն ընկիր, և իր սրտում չկասկածի, այլ հավատա, թե ինչ որ ասում է, կլինի, նա ինչ էլ ասի, կկատարվի: Դրա համար ասում եմ ձեզ. ամեն ինչ, որ աղոթք անելով խնդրեք և հավատաք, թե կստանաք, կտրվի ձեզ» (Մրկ. 11:22-24):

7. ԼԵԳԵՈՆԸ՝ ՈՐՊԵՍ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԻՍԻՈՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Միսիոներության վիճակը:

Միսիոներություն ասելով՝ այստեղ նկատի ունենք այն գործունեությունը, որն ուղղված է այն ժողովուրդներին կամ խմբերին, որոնք չեն ճանաչում կամ չեն հավատում Քրիստոսին, Ում մեջ Եկեղեցին դեռ արմատներ չի արձակել, և Ում մշակույթը դեռ չի կրել քրիստոնեության ազդեցությունը:

Այդ մարդկանց մեջ, որոնց պետք է քարոզել Ավետարանը, գոյություն ունեն մեծ տարբերություններ մշակույթի, կրթության մակարդակների և սոցիալական պայմանների: Նույնիսկ միևնույն երկրի սահմաններում կարելի է գտնել և՛ խիտ բնակեցված քաղաքներ, և՛ ցրված գյուղական համայնքներ: Կարող են լինել հակադրություններ հարուստների և աղքատների միջև, բարձրագույն կրթություն ստացածների և դպրոց չհաճախածների միջև, տարբերություններ՝ էթնիկ և լեզվական խմբերի միջև:

Համընդհանուր մասշտաբով Քրիստոսին չճանաչողների թիվն ավելի արագ է աճում, քան գործնական հավատացյալների թիվը:

Այս ընդարձակ դաշտի մեջ է նետվում միսիոները՝ քահանան, կրոնավորը կամ աշխարհականը: Դրսից գալով՝ նրանք հանդիպում են ռասսայի, լեզվի և մշակույթի խոչընդոտներին: Փորձառությունը և պատրաստությունը կհեշտացնեն որոշ բաներ, բայց հազիվ թե վերացնեն այդ խոչընդոտները:

Նորաբաց տարածքում նրանց խնդիրն է՝ հաստատել տեղական քրիստոնեական համայնքներ, որոնք, ի վերջո, պետք է աճեն և դառնան ինքնուրույն եկեղեցական համայնքներ, որոնք ևս իրենց հերթին պետք է ավետարանեն:

Սկզբում միսիոներները պետք է ջանան արագ հաստատել լայն ծանոթություններ և ձեռք բերել ընկերներ: Այնտեղ, ուր հնարավոր է, նրանք պետք է հաստատեն անհրաժեշտ ծառայություններ՝ դպրոցներ և բժշկական կլինիկաներ՝ քրիստոնեական վկայություն տալու և մարդկային կապերն

ընդլայնելու նպատակով: Դարձի եկածներից պետք է ընտրեն կրոնի ուսուցիչներ և Եկեղեցու անձնակազմի այլ ներկայացուցիչներ:

Միսիոները կամ տեղի կրոնի ուսուցիչը կարող են ուսուցանել միայն նրանց, ովքեր կամենում են: Այդ կամքը ծնելը, եթե հստակ բառեր օգտագործենք, նշանակում է՝ ծնել նորադարձներ: Աստծո կամքով, դա սովորաբար տեղի է ունենում կաթողիկէ աշխարհականի հետ շփման արդյունքում և հետո միայն՝ քահանայի հետ շփման միջոցով: Դա ընկերության և վստահության աստիճանական աճ է: Հետաքրքրասերները քահանային կասեն. «Եկա, որովհետև ճանաչում եմ մի կաթողիկէի»:

Ծանրաբեռնված միսիոներներին Լեգեոնն ինքն իրեն առաջարկում է որպես փորձված և ստուգված գործիք՝ նորադարձներ շահելու և նրանց հավատարմությունը երաշխավորելու համար: Ունենալով տեղական անդամակցություն՝ Լեգեոնը, միսիոներական առաջնորդներին ունենալով որպես հոգևոր առաջնորդներ, կսովորեցնի, կձևավորի և առաջ կմղի նորադարձներին՝ ավետարանելու շարունակական և համակարգված ձևով: Ի տարբերություն միսիոներների, լեգեոնականները հասարակության մեջ չեն թափանցում դրսից: Նրանք արդեն հասարակության մեջ են և ունակ են, պատշաճ պատրաստվածությամբ, առաջին քրիստոնյաների նման համայնքում գործելու որպես լույս, աղ և թթխմոր:

Լեգեոնի տարածումը:

Լեգեոնականների թվի ավելացմանը և որակի բարձրացմանը զուգահեռ և պատշաճ ձևով պատրաստելու համար անհրաժեշտ կլինի ավելացնել պրեզիդիումների թիվը: Գուցե հոգևոր առաջնորդներից յուրաքանչյուրը կարողանա վերահսկել մեկից ավելի պրեզիդիումներ: Գուցե նաև հնարավոր լինի պրեզիդիումների նախագահներ ընտրել կրոնուսույցների և այլ փորձառու անձանց պրեզիդիումներին պատրաստելու և ոգևորելու համար: Յուրաքանչյուր նորահիմն պրեզիդիում նշանակում է տասից քսան զինվոր՝ հավատքը գործադրելու համար:

Պրեզիդիումների թիվը մեծացնելու քաղաքականության հաջողությունը կնշանակի, որ ժամանակի ընթացքում յուրաքանչյուր քահանա կկարողանա կազմակերպել և առաքելության ուղարկել ավելի մեծ թվով անձանց: Արդյունքը կլինի այն, որ քահանան կսկսի կատարել այնպիսի գործառույթներ, որոնցով նրա դերակատարությունը իրականում կնմանվի թեմական եպիսկոպոսի դերակատարությանը: Իսկ եպիսկոպոսը կհայտնաբերի, որ իր տրամադրության տակ են հավատքի համար աշխատող անթիվ և կուռ աստիճանակարգությամբ անձինք, որոնց միջոցով նա կկարողանա Ավետարանը քարոզել իր տարածքում ապրող յուրաքանչյուր մարդու:

Այն, ինչ այստեղ առաջարկում ենք, մի չփորձված ծրագիր չէ, այլ տարբեր առաքելավայրերում, տարբեր պայմաններում երկար տարիների ավետարանման հաջողված փորձառության պտուղը:

Հստակ պարտականություն յուրաքանչյուր լեգեոնականի համար:

Առաջարկված ծրագրում յուրաքանչյուր լեգեոնականի կհանձնարարվի գործունեության հստակ որոշված ուղղություն: Յուրաքանչյուր աշխատանքի ոլորտ կուսումնասիրվի և կհանձնարարվի լեգեոնականներին՝ որպես անհատական պարտականություն, և յուրաքանչյուր լեգեոնական հստակ պատասխանատվություն կկրի իր առաքելության պատշաճ կատարման համար: Լեգեոնականները պետք է հասկանան, որ իրենց պարտականությունների կատարման ժամանակ նրանք պետք է ազատորեն լինեն քահանայի տրամադրության տակ: Քահանայի միջոցով նրանք հաղորդության մեջ են Եկեղեցու առաքելության հետ: Լեգեոնի համակարգի հիմնական խնդիրներից մեկը՝ բացատրելն է յուրաքանչյուր լեգեոնականի և նրանց պատրաստելը, որ դա կատարեն հավատարմորեն:

Միսիոներության ժամանակ լեգեոնականի համար պատշաճ առաքելություններ են՝ ա. պատրաստել միսիոների պարբերական այցելությունները՝ մեկուսացված վայրեր, բ. սովորեցնել կրոնի դասերի մասնակիցներին, փնտրել նոր

մասնակիցների և քաջալերել, որ դասերին այցելեն կանոնավոր կերպով, գ. քաջալերել անտարբեր և հեռացած կաթողիկէներին, որպեսզի վերադառնան հավատքի լիակատար ապրումին, դ. կազմակերպել ոչ ծիսական աղոթքի արարողություններ, ե. լինել Սուրբ Հաղորդության հատուկ սպասավորներ, զ. հոգալ մահամերձների հոգևոր կարիքների և քրիստոնեական հուղարկավորության մասին: Տեղական կարիքները կառաջարկեն ողորմության հոգևոր և նյութական գործերի այլ հնարավորություններ ևս:

Արդյոք լեգեոնականները պե՞տք է ունենան մեծ կրոնական գիտելիքներ:

Գիտելիքների մակարդակը կախված է նրանից, թե լեգեոնականն ինչպիսի աշխատանք է կատարելու: Իհարկե, նորադարձներ բերելու և նրանց հավատարմությունը քաջալերելու համար հավատքի տարրական գիտելիքներն էլ բավական են: Սա հստակ երևում է վաղ ժամանակներում Եկեղեցու արագ տարածման մեջ: Շատ դեպքերում նորադարձներին Եկեղեցի էին բերում փոքրիկ, թույլ և ճնշված մարդիկ, որոնք ապրում էին այդ հզոր, հարուստ և լուսավորյալ հասարակության մեջ: Այստեղ մենք նկատի չունենք ֆորմալ կրթությունը, որը միշտ անհրաժեշտ է, այլ նկատի ունենք մեկ սրտի գերազանց բովանդակությունը մեկ այլ սրտի մեջ հեղելու ջանադրությունը: Դա հնարավոր է ամենաարդյունավետ կերպով իրականացնել, երբ նմանը գործ ունի իր նմանի հետ, բայց փորձառությունը ցույց է տալիս, որ սոցիալական պատնեշները կարելի է հեշտությամբ հատել: Յուրաքանչյուր համոզված կաթողիկէ, որքան էլ անկատար լինեն նրա գիտելիքները, ունի հավատքի մասին որոշակի պատկերացում, ունի կարողություն՝ այդ պատկերացումը փոխանցելու ուրիշներին, որոնց վրա ուզում է դրական ազդեցություն ունենալ: Բայց նա չի կարողանա գործադրել իր այդ կարողությունը, եթե մղված չլինի առաքելական կազմակերպության կողմից կամ այլ զորավոր խթանիչ գործոնով: Լեգեոնի համակարգը տրամադրում է այդ մղիչ զորությունը՝ մոտիվացնելու և առաքելական հանձնարարությունների միջոցով: Այդպիսի պատրաստվածության արդյունքը կլինի այն, որ լեգեոնականն

իր սեփական նախաձեռնությամբ, ամենայն հավանականությամբ, առիթներ կփնտրի իր հավատքի մասին ուրիշներին վկայելու համար:

Լեգեոնը նշանակում է այն, որ Մարիա՛մն է աշխատում:

Լեգեոնի մուտքը նշանակում է առաքելության աշխատանքի մեջ ներդնել երկու մեծ ուժեր. ա. մեթոդական կազմակերպման սկզբունքը, որի շնորհիվ մշտապես աճում է մասնակիցների հետաքրքրությունը և ուժը, և բ. ամենաուժական տարրը՝ Մարիամի մայր ազդեցությունը, որն ամբողջությամբ վայելում է Լեգեոնի մարեմական համակարգը և Լեգեոնի ակտիվ առաքելության միջոցով առատորեն հեղվում է մարդկային հոգիների վրա: Իրականում, հավատքի լույսի տարածումը չի կարող կատարվել այլ կերպ, քան միայն՝ Մարիամի հետ համաձայնությամբ: Այն ջանքերը, որոնք Մարիամը չի առաջնորդում, նման են յուղի՝ առանց լամպի: Հավանաբար, այսօր հավատքի վսեմ նվաճումների հազվադեպ լինելու պատճառներից մեկը այս փաստի անբավարար գնահատումն է: Վաղ դարերում արագորեն դարձի էին գալիս ժողովուրդներն ամբողջությամբ: Սբ Կյուրես Ալեքսանդրացին Եփեսոսի 431 թվականի ժողովում առանց վարանելու հայտարարում էր, թե Մարիամի շնորհիվ է, որ այդ բոլոր ժողովուրդներին հնարավոր եղավ շահել Քրիստոսի համար: Ավելին Սբ Ֆրանցիսկոս Քսավիեն՝ միսիոներների այդ մեծ հովանավորը, կիսվում էր իր սեփական փորձառությամբ, թե որտեղ ինքը Փրկչի Խաչի տակ չէր դնում Աստվածամոր արձանը, այդ երկրներն ապստամբում էին Ավետարանի դեմ, որն ինքը քարոզել էր նրանց:

Եթե լեգեոնական առաքելության միջոցով Մարիամի գերազանցորեն պտղաբեր գործունեությունը կարելի է իրականություն դարձնել առաքելավայրերում, ինչո՞ւ չեն կարող Սբ Կյուրեղի հիշատակած օրերը նորից գալ երկրի վրա, որպեսզի բազմաթիվ տարածաշրջաններ և ազգեր հրաժարվեն իրենց սխալներից և ուրախությամբ ընդունեն քրիստոնեական հավատքը:

«Որքա՛ն հիմար էր այդ մեծամտությունը, կամ որքա՛ն վսեմ

և երկնային էր այդ ոգեշնչումը, որը համակեց այդ ձկնորսներին: Մի պահ մտածե՛ք նրանց ձեռնարկի մասին: Երբեք ոչ մի իշխան կամ կայսրություն կամ հանրապետություն չի հղացել այդպիսի վսեմ ծրագիր: Առանց մարդկային օգնության որևէ հնարավորության՝ այդ գալիլիացիները սփռվեցին ամբողջ աշխարհով մեկ՝ ապագայի նվաճումների համար: Նրանք կազմեցին մի վճռական ծրագիր՝ փոխելու ամբողջ աշխարհում հաստատված կրոնները՝ լինեն կեղծ կամ մասնակիորեն ճշմարիտ, հրեական կամ հեթանոսական: Նրանք ցանկանում էին հաստատել մի նոր պաշտամունք, մի նոր զոհաբերություն, մի նոր օրենք, որովհետև, ինչպես իրենք էին ասում, դա հրամայեց մի Մարդ, ում մարդիկ խաչեցին Երուսաղեմում» (Բոսսյուե):

8. PEREGRINATIO PRO CHRISTO

Յուրաքանչյուրի հետ կապ հաստատելու հավակնությունը պետք է սկսի նրանցից, ովքեր մոտ են գտնվում: Այն չպետք է կանգ առնի այդտեղ, այլ պետք է շարունակվի դեպի խորհրդանշական քայլերը՝ շատ հեռու անցնելով առօրյա կյանքի սահմաններից: Այդ նպատակը հետապնդվում է լեգեոնական մի շարժմամբ, որը կոչվում է «Peregrinatio Pro Christo» (ուխտագնացություն՝ հանուն Քրիստոսի): Այս անունը վերցված է «Արևմուտքի վանականների միսիոներական էպոսից և անմահացված՝ Մոնթալեմբերի դասական ստեղծագործության մեջ: «Այդ անխոցելի բազմությունը դուրս եկավ իր սեփական երկրից և հարազատների մոտից և իր հոր տնից» (տե՛ս Ծննդ. 12:1) և տարածվեց Եվրոպայում վեցերորդ և յոթերորդ դարերում՝ վերակառուցելով հավատքը, որն անկում էր ապրել Հռոմեական Կայսրության փլուզմամբ:

Նույն իդեալիզմով Peregrinatio Pro Christo-ն ուղարկում է լեգեոնականների խմբեր, որոնք ունեն ժամանակ և միջոցներ կարճ ժամանակ անցկացնելու հեռավոր վայրերում, որտեղ կրոնական պայմանները վատ են, դեպի «նուրբ, դժվար, տհաճ առաքելության՝ հայտնելու մարդկանց, թե Քրիստոսն է աշխարհի Փրկիչը: Դա պետք է կատարի ժողովուրդը» (Սբ Պողոս Զ Պապ): Մոտակայքում գտնվող վայրերը չեն համապատասխանում Peregrinatio Pro Christo-ի

առաքելության պահանջներին: Եթե հնարավոր է, այդ առաքելության համար պետք է ընտրել այլ երկիր:

9. INCOLAE MARIAE

Անշուշտ, նվիրյալ սրտերը շատ դեպքերում չեն գոհանա միայն մեկ կամ երկու շաբաթով, այլ կուզենան տնից հեռու ծառայել ավելի երկար ժամանակով: Այդպիսի լեգեոնականները, որոնք կարող են իրենք իրենց համար առաքելավայրում ապահովել ապրուստի միջոցներ և կարող են մնալ այդտեղ վեց ամիս կամ մեկ տարի կամ նույնիսկ ավելին՝ առանց նեղություն տալու իրենց ընտանիքներին կամ ոչ այլ պարտավորությունների հաշվին, Կոնսիլիումի, Սենատի կամ Ռեգիայի կողմից կարող են նշանակվել այդպիսի առաքելության՝ համապատասխան ժամանակահատվածով: Անհրաժեշտ է, անշուշտ, նաև նախատեսվող առաքելավայրի իշխանությունների համաձայնությունը: Այսպիսի առաքելության մեկնող կամավորականները հայտնի են որպես Incolae Mariae (Մարիամի բնակիչներ)՝ մի արտահայտություն, որն բնութագրում է նրանց ժամանակավոր ճամփորդությունը դեպի հեռավոր վայրեր՝ Մարիամի միջոցով զոհաբերություն կատարելու ոգով:

10. EXPLORATIO DOMINICALIS

Exploratio Dominicalis հասկացությամբ՝ լեգեոնականները նկատի ունեն մի բան, որը կարելի է անվանել նաև փոքրիկ Peregrinatio, և որը կարելի է թարգմանել որպես մարդկային հոգիների կիրակնօրյա փնտրտուք:

Աշխարհի տարբեր վայրերում գործող յուրաքանչյուր պրեզիդիումի հորդորում ենք, եթե հնարավոր է, ամբողջ կազմով, տարվա մեջ մեկ կիրակի նվիրել մի ճամփորդության դեպի որևէ վայր, հնարավորինս խնդրահարույց մի վայր, ոչ շատ հեռու գտնվող, որպեսզի շատ ժամանակ չծախսվի ճամփորդության վրա: Այն չպետք է անհրաժեշտաբար սահմանափակվի մեկ օրով, երկու կամ երեք օրն էլ հնարավոր է: Exploratio Dominicalis-ը հնարավոր է դարձնում,

որ պրեզիդիումի անդամների մեծ մասը (շատ դեպքերում՝ բոլորը) մասնակցեն այդ արկածին: Բոլորն ընդունում են, որ նույնիսկ շատ ուզելու դեպքում Peregrinatio Pro Christo-ն ինքնին հնարավորություն չի տալիս, որ լեգեոնականների մեծամասնությունը մասնակցի այդ ճամփորդությանը: Փորձառությունը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է շեշտել այն, ինչ Կոնսիլիումն անընդհատ կրկնել է, որ Exploratio Dominicalis-ն իրականում ամբողջ պրեզիդիումի ծրագիր է: Խորհուրդներին և պրեզիդիումներին խնդրում ենք հիշել այդ մասին, երբ կազմակերպում են Exploratio Dominicalis-ը:

41

«ՍՐԱՆՑԻՑ ՄԵԾԱԳՈՒՅՆԸ ՍԵՐՆ Է» (Ա ԿՐՆԹ. 13։13)

Մարիամը այնքան լի էր սիրով, որ արժանի գտնվեց հղանալու և աշխարհ բերելու Նրան, Ով ինքը Սերն է: Մարիամի Լեգեոնը, իր ամբողջ գործունեությամբ հիմնված լինելով Մարիամի հանդեպ ջերմեռանդության և Մարիամին նմանվելու վրա, պետք է անհրաժեշտաբար առանձնանա այդ նույն եռանդուն սիրո որակով: Լեգեոնը պետք է լցված լինի սիրով. միայն այդ դեպքում Լեգեոնը կկարողանա աշխարհին սեր բերել: Հետևաբար, կարևոր է պահել հետևյալ ցուցումները:

1. Լեգեոնի շարքերը մտնելու համար չպետք է լինեն սոցիալական, ռասսայական, ազգային կամ մաշկի գույնի խտրականություններ: Միակ ստուգումը պետք է լինի անձի համապատասխանությունը Լեգեոնի անդամակցությանը: Լեգեոնական առաքելությունը կհասնի նույնիսկ ավելի մեծ արդյունքների՝ անուղղակի գործունեությամբ, այսինքն՝ որպես թթխմոր համայնքում, քան ուղղակի կատարվող աշխատանքներով: Եթե ուզում ենք, որ լեգեոնական գործունեությամբ ազդենք ամբողջ համայնքի վրա, ուրեմն Լեգեոնի

մեջ պետք է ընդգրկված լինեն անդամներ համայնքի բոլոր սոցիալական շերտերից:

2. Լեգեոնի անդամների միջև պետք է լինի ազատ պարզություն և անկեղծ փոխադարձ եղբայրասիրություն, և ոչ մի տարբերակում չպետք է լինի: Եթե լեգեոնականը պետք է սիրի նրանց, ում ծառայում է, ապա պետք է սիրի նաև իր լեգեոնական ընկերներին: Տարբերություններ դնելու ոգին խոսում է սիրո ոգու բացակայության մասին, որը անդամակցության առաջնային որակն է: Լեգեոնի ամբողջ գաղափարը և ոգին եռանդուն սերն ու սրտացավությունն է, որը դրսում ջերմություն փոխանցելուց առաջ պետք է նախ պայծառ և ուժեղ վառվի Լեգեոնի տան օջախում: «Սրանով բոլորը կիմանան, որ դուք իմ աշակերտներն եք, եթե սիրեք միմյանց» (Հվի. 13:35):

Եթե սերը գործադրվում է սեփական անդամների միջև, ապա շուտով այն կգործադրվի նաև ուրիշների հանդեպ: Նմանապես, եթե անդամների միջև բաժանումներ չկան, ապա կհաջողվի վերացնել նաև բաժանումներն ուրիշների միջև:

3. Այլ կազմակերպությունների նկատմամբ, որոնց նպատակները համադրելի են Եկեղեցու առաքելության հետ, պետք է լինի պատրաստակամություն ոգի՝ համագործակցելու և աջակցելու ըստ հնարավորության: Ոչ բոլոր կաթողիկէներին է հնարավոր բերել Լեգեոնի մեջ, որովհետև Լեգեոնի պահանջներին բավարարելը բնավ հեշտ չէ: Բայց հարկավոր է քաջալերել բոլորին՝ ինչ-որ ձևով մասնակցելու Եկեղեցու առաքելությանը: Լեգեոնականները կարող են անել դա իրենց առաքելության և անձնական կապերի միջոցով: Սակայն պետք է նշել, որ այդ համագործակցությունը չպետք է հավելյալ բեռ ավելացնի լեգեոնականների ուսերին և վնասի նրանց առաքելությանը: Նաև կարևոր է, որպեսզի լեգեոնականները լավ մտածեն, թե ինչ չափով և ինչպիսի աջակցություն են տրամադրում և ում: Այս առումով նաև պետք է առաջնորդվել այս ձեռնարկի հետևյալ բաժիններով՝ «Աշխատանքի վերահսկումը պրեզիդիումի կողմից»

(Գլ. 39, կետ 6) և «Պետք է պահպանել լեգեոնական աշխատանքի մտերմիկ բնույթը» (Գլ. 39, կետ 8):

4. Եկեղեցու հովիվների նկատմամբ հարկավոր է ցուցաբերել պատշաճ որդիական սեր, որովհետև նրանք հոգևոր հայրեր և հովիվներ են: Լեգեոնականները պետք է կիսեն նրանց մտահոգությունները և օգնեն նրանց աղոթքով և, ըստ կարողության, նաև գործունյա աշխատանքով, որպեսզի քահանաները կարողանան հաղթահարել իրենց դժվարությունները և կարողանան ավելի լավ կատարել իրենց պարտականությունները:

Քանի որ Եկեղեցու հովիվներն ունեն աստվածատուր պաշտոն՝ փոխանցելու աստվածային ճշմարտությունը և Սուրբ Խորհուրդների շնորհները, լեգեոնականների մտահոգությունը պետք է լինի՝ ապահովել մարդկանց կապն այդ աստվածային պարգևները կրողների հետ և նորոգել կապն այնտեղ, որտեղ այն խզված է:

Սա հատկապես անհրաժեշտ է նրանց պարագայում, ովքեր հոգևորականներից օտարացած են արդարացի կամ անարդարացի պատճառներով:

Ծանր հիվանդ մարդիկ կարող են շատ դժկամ լինել բժշկի հետ խորհրդակցելու համար: Հաճախ անհրաժեշտ է լինում ամուսնու կամ կնոջ, ընտանիքի կամ ընկերների աջակցությունը՝ անհրաժեշտ քաջալերանքի համար:

Երբ վտանգված է որևէ մեկի հոգևոր առողջությունը, շատ բան կախված է նրան մոտ գտնվող անձանց սիրուց:

Լեգեոնականների կազմավորումն օգնում է նրանց լինել նախաձեռնող՝ քահանաների և մարդկային հոգիների միջև միջնորդելու համար և դա սիրալիր ձևով կատարելու համար:

«Եթե խոսեմ մարդկանց և հրեշտակների լեզուներով, բայց սեր չունենամ, կնմանվեմ մի պղնձի, որ հնչում է, կամ՝ ծնծղաների, որ ղողանջում են: Եվ եթե մարգարեություն անելու շնորհ ունենամ և հասկանամ բոլոր խորհուրդներն ու ամբողջ գիտությունը, և եթե ունենամ ամբողջ հավատը՝ մինչև իսկ լեռները տեղափոխելու չափ, բայց սեր չունենամ, ոչինչ եմ: Եվ եթե իմ ամբողջ ունեցվածքը տամ աղքատներին և իմ այս մարմինը

մատնեմ այրվելու, բայց սեր չունենամ, ոչ մի օգուտ չեմ ունենա: Սերը համբերող է, քաղցրաբարո է, սերը չի նախանձում, չի ամբարտավանանում, չի գոռոզանում, անվայել վարմունք չի ունենում, իրենը չի փնտրում, բարկությամբ չի գրգռվում, չար բան չի խորհում, անիրավության վրա չի ուրախանում, այլ ուրախանում է ճշմարտության վրա: Սերն ամեն բանի դիմանում է, ամեն բանի հավատում է, մշտապես հույս է տածում, ամեն բանի համբերում: Սերը երբեք չի անհետանում. թե մարգարեություններ են, պիտի չքանան, թե լեզուներ՝ պիտի լռեն, թե գիտություն՝ պիտի անցնի» (Ա Կրնթ. 13:1-8):

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Պապական նամակները և ուղերձները

ՊԻՈՒՍ ԺԱ ՊԱՊԻՑ՝
Մարիամի Լեգեոնին

16 սեպտեմբերի, 1933թ.

«Շնորհում ենք մեր հատուկ օրհնությունը Մարիամի Լեգեոնին՝ այս գեղեցիկ և սուրբ գործին: Անունն ինքնին խոսուն է: Անարատ Կույս Մարիամի նկարը Լեգեոնի դրոշի վրա արտահայտում է վսեմ և սուրբ իրողություններ:

Օրհնյալ Կույսը Մայրն է Փրկչի և մեր բոլորիս: Մարիամը համագործակցում է մեր փրկագործության մեջ, որովհետև Խաչի տա՛կ էր, որ նա դարձավ մեր մայրը: Այս տարի մենք տոնակատարում ենք Մարիամի այդ համագործակցության և տիեզերական մայրության հոբելյանը:

Ես աղոթում եմ, որ դուք կարողանաք առավել անկեղծորեն կատարել աղոթքի և աշխատանքի ձեր առաքելությունը, որին ձեռնամուխ եք եղել: Թո՛ղ Աստված ձեր աշխատանքով ձեզ ևս դարձնի համագործակիցներ փրկագործության մեջ: Սա լավագույն ճանապարհն է՝ արտահայտելու ձեր երախտագիտությունը Փրկչի հանդեպ»:

ՊԻՈՒՍ ԺԲ ՊԱՊԸ՝ ՄԱՐԻԱՄԻ ԼԵԳԵՈՆԻՆ

Վատիկան՝
22 հուլիսի, 1953 թ.

Սիրելի պրն Դաֆֆ,

Ինձ համար պատիվ է Նորին Սրբության ազնվափայլ առաջնորդությամբ ողջույնի և քաջալերանքի ուղերձ հղելու Մարիամի Լեգեոնին, որը հիմնվել է երեսուն տարի առաջ կաթողիկէ Իռլանդիայի պարարտ հողում:

Նորին Սրբությունը հայրական հետաքրքրությամբ հետևել է Լեգեոնի առաջընթացի տարիներին, երբ Լեգեոնը դարձավ Մարիամին նվիրված և հավատարիմ զինվորների մի բանակ, որոնք մարտնչում են չարի ուժերի դեմ այսօրվա աշխարհում, և նա ուրախանում է Ձեզ հետ միասին՝ տեսնելով, թե ինչպես է Լեգեոնի դրոշը հաստատվում երկրագնդի չորս կողմերում:

Այսպիսով, պատշաճ է, որ հիմա Մարիամի լեգեոնականներին փոխանցվի երախտագիտության և գնահատանքի մի խոսք՝ կատարած բարիքի համար, նաև մի հորդոր՝ աճող նախանձախնդրությամբ շարունակելու իրենց առատաձեռն համագործակցությունը Եկեղեցուն օգնելու իր աստվածադիր առաքելության մեջ՝ ամբողջ մարդկությանը բերելու համար Քրիստոսի առաջնորդության ներքո, Ով Ճանապարհն է, Ճշմարտությունը և Կյանքը:

Եկեղեցու առաքելության համար նրանց բերած նպաստի արդյունավետությունը մեծ մասով կգնահատվի նրանց առողջ հոգևոր պատրաստությամբ, որը հոգևոր առաջնորդների ողջամիտ ղեկավարությամբ նրանց մեջ խորապես կզարգացնի ճշմարիտ առաքելական ոգի, որի շնորհիվ նրանց բոլոր գործողությունները կբնորոշվեն պատրաստակամ հնազանդությամբ՝ Սուրբ Աթոռի ցուցումներին և տեղի

թեմական առաջնորդներին, որոնց գլխավորությամբ և ուղղորդությամբ հավատարմորեն կիրականացնեն իրենց գործունեությունը: Ընդունելով ճշմարիտ աշխարհական առաքյալի այս գերբնական բնութագիրը՝ նրանք առաջ կգնան սուրբ արիությամբ և կշարունակեն լինել հզոր օգնականներ Եկեղեցու համար՝ չարի ուժերի դեմ Եկեղեցու մղած հոգևոր պատերազմում:

Խնդրելով Մարիամի բարեխոսությունը՝ ամբողջ աշխարհում գործող լեգեոնականների համար Նորին Սրբությունը, որպես նշան իր հատուկ բարեհաճության՝ անձնապես Ձեր, Հոգևոր Առաջնորդների և Լեգեոնի բոլոր ակտիվ և օժանդակ անդամների նկատմամբ, իմ միջոցով փոխանցում է իր Առաքելական Օրհնությունը:

Մեծ հարգանքի և հոգևոր նվիրումի
զգացումներով՝ ես մնում եմ
անկեղծորեն Ձերն ի Քրիստոս՝

Պրն Ֆրանկ Դաֆֆին,
Մարիամի Լեգեոնի Կոնսիլիումին,
Դը Մոնֆորի Տուն,
Նորթ Բրանսուիք փողոց, Դուբլին, Իռլանդիա

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻԳ ՊԱՊԸ՝ ՄԱՐԻԱՄԻ ԼԵԳԵՈՆԻՆ

Մարիամի Լեգեոնի սպաներին և անդամներին, որոնք գործում են ամբողջ աշխարհում՝ որպես Մեր հայրական ջերմ վերաբերմունքի նշան և որպես գրավական, որ նրանց գնահատելի աշխատանքն ունենա առավել առատ հոգևոր պտուղներ, Մենք ի սրտե հղում ենք հատուկ Առաքելական Օրհնություն:

Վատիկանից, 19 մարտի, 1960 թ.

«Ողորմության ինչպիսի՛ գեղեցիկ գործ է, և այնքան պատշաճ բազմաթիվ մարդկանց համար, որոնք չեն հասկանում դա՝ ճանաչելի դարձնելու Կաթողիկէ Եկեղեցու ճշմարիտ դեմքը:

Ֆրանսիայի լեգեոնականներին, 13 հուլիսի, 1960 թ.



ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԸ՝ ՄԱՐԻԱՄԻ ԼԵԳԵՈՆԻՆ

Վատիկան քաղաք,
6 հունվարի, 1965 թ.

Սիրելի պրն Դաֆֆ,

Նամակը, որը Դուք վերջերս հասցեագրել էիք Սրբազան Քահանայապետին, և որը ներշնչված էր որդիական նվիրումի զգացումներով, հաճույք և գոհացում պատճառեց նրան: Նորին Սրբությունը կամենում է այս առիթն օգտագործել՝ իր գնահատանքի և քաջալերանքի ուղերձը հղելու Մարիամի Լեգեոնին, որը, նախապես ծնված լինելով Կաթողիկէ Իռլանդիայի խորհրդազգացական միջավայրում, հիմա իր օգտակար գործունեությունը տարածել է յուրաքանչյուր մայրցամաքում:

Նորին Սրբությունը համարում է, որ Ձեր շարժումը առատորեն վաստակել է այս ուղերձը իր բարեպաշտ նպատակների և լայն գործունեության համար, որ կատարել և զարգացրել է այդպես իմաստուն ձևով՝ ի շահ կաթողիկէ առաքելության, և այդպիսով Լեգեոնը փաստել է, որ ապշեցուցիչ արդյունավետությամբ աշխատող գործիք է Աստծո թագավորությունը կառուցելու և տարածելու համար:

Նորին Սրբությունը դեռևս պարզ հիշում է Ձեզ հետ ունեցած իր հանդիպումները դեռ այն ժամանակ, երբ ինքը ծառայում էր Պետական Քարտուղարությունում: Նա հիշում է այն զրույցները, որոնք օգնել են իրեն ամբողջովին հասկանալու ձեր շարժման ոգին, որն այդ շարժման

կենսունակության գաղտնիքն է: Հիրավի, Մարիամի Լեգեոնի ոգին, առատորեն սնվելով իր անդամների ներքին կյանքով, նրանց կարգապահությամբ, մերձավորի փրկության հանդեպ նրանց նվիրումով, Եկեղեցու հանդեպ նրանց աննահանջ հավատարմությամբ, այնուամենայնիվ, առանձնանում և բնորոշվում է Օրհնյալ Կույսի գործունեության հանդեպ անհողդողդ վստահությամբ: Սուրբ Կույսի մեջ տեսնելով իր կատարելատիպը, իր առաջնորդությունը, իր ուրախությունը և աջակցությունը, որ շնորհվում է իր բոլոր անդամներին, Մարիամի Լեգեոնն իր պերճախոս գործունեությամբ օգնում է մեզ հասկանալ, թե որքան շատ պետք է առաքելությունը ներշնչվի Սուրբ Կույսով, ով Քրիստոսին տվեց աշխարհին և այդքան սերտորեն կապված էր Նրա հետ փրկագործության մեջ:

Նորին Սրբությունը, հետևաբար, ուրախ է հիմնվելու Լեգեոնի այս ոգու վրա, որն արդեն աշխարհի բոլոր ծայրերում պատրաստել է մեծ թվով եռանդուն առաքյալների և Քրիստոսի հերոսական վկաների, այն վայրերում, որտեղ հավատքի վրա հարձակումներ և հալածանքներ կան:

Այն համոզմունքով, թե արդեն ձեռք բերված արդյունքները ոչ թե կնվազեցնեն, այլ ավելի շուտ կավելացնեն բոլոր լեգեոնականների էներգիան և առաքելական ջանքերը, Սրբազան Քահանայապետն իր խորին շնորհակալությունն է հայտնում Ձեզ և Ձեր գործակիցներին և հորդորում է շարունակել Ձեր առաքելական գործունեությունը Եկեղեցու համար՝ նույն սիրով, առավել ամուր ձևով հիմնվելով եպիսկոպոսների վրա և բոլոր մյուս կաթողիկէ միավորումների հետ ակտիվ համագործակցության ոգով:

Ձեր բազմաթիվ անդամների շարքերը վստահելով Օրհնյալ Տիրամոր մայրական պաշտպանությանը՝ Գերագույն Քահանայապետը սիրով Ձեզ, բոլոր լեգեոնականներին և

նրանց առաջնորդներին, նրանց գործունեությանը հղում է Իր հատուկ հայրական Առաքելական Օրհնությունը:

Ձեր հանդեպ ի սրտե հարգանքով
և գնահատանքով, անկեղծորեն Ձերն ի Քրիստոս՝



Պրն Ֆրանկ Դաֆֆին,
Մարիամի Լեգեոնի Կոնսիլիումին,
Դը Մոնֆորի Տուն,
Նորթ Բրանսուիք փողոց, Դուբլին, Իռլանդիա

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԸ՝ ՄԱՐԻԱՄԻ ԼԵԳԵՈՆԻՆ

Սրբազան Քահանայապետ Սբ Հովհաննես Պողոս Բ-ի ուղերձը՝ մի խումբ իտալացի լեգեոնականներին, 30 հոկտեմբերի, 1982թ.

1. Ողջույնս ուղղված է ձեզ բոլորիդ և յուրաքանչյուրիդ: Ինձ համար ուրախություն է այս դահլիճում ձեզ տեսնել այսպիսի մեծ բազմությամբ՝ եկած Իտալիայի տարբեր շրջաններից, մանավանդ որ դուք միայն մի փոքր մասն եք այդ առաքելական շարժման, որը վաթսուն տարվա ընթացքում արագորեն տարածվեց աշխարհում, և այսօր՝ շարժման հիմնադիր Ֆրանկ Դաֆֆի մահվանից երկու տարի անց, շարժումը ներկա է ընդհանրական Եկեղեցու այդքան շատ թեմերում:

Իմ նախորդները՝ սկսած Պիուս ԺԱ-ից, գնահատանքի խոսքեր են ասել Մարիամի Լեգեոնին, և ես ինքս՝ 1979թ. մայիսի 10-ին, երբ ընդունեցի ձեր առաջին պատվիրակություններից մեկին և մեծ հաճույքով հիշեցի այն առիթները, որ նախապես ունեցել եմ՝ շփվելու Լեգեոնի հետ Փարիզում, Բելգիայում և Լեհաստանում, և հետո՝ որպես Հռոմի Եպիսկոպոս, Հռոմի համայնքներում իմ կատարած հովվական այցելությունների ժամանակ:

Ուստի այսօր, երբ ես ընդունում եմ ունկնդրելու ձեր շարժման իտալացի ուխտավորներին, ես կուզենայի շեշտել Եկեղեցու մեջ ձեր հոգևոր ապրումի և ձեր modus essendi-ի (գոյության ձև) էության մի քանի կողմերը:

Կոչումը՝ լինելու թթխմոր

2. Դուք աշխարհականների մի շարժում եք, որոնք ջանում են հավատքը դարձնել սեփական կյանքի ներշնչումը՝ ընդհուպ մինչև անհատական սրբության հասնելը: Դա, անշուշտ, վերամբարձ և բարդ իդեալ է: Բայց այսօր Եկեղեցին Ժողովի միջոցով բոլոր կաթողիկէ քրիստոնյա հավատացյալներին կանչում է դեպի այս իդեալը՝ հրավիրելով նրանց մասնակցելու Քրիստոսի թագավորական

քահանայությանը՝ սրբակյաց կյանքի վկայությամբ, զոհողություններով և եղբայրասիրության գործերով, գերազանց հավատքով, հույսով և սիրով լինելու աշխարհի համար այն, ինչ հոգին է մարմնի համար (LG 10, 38):

Ձեր հատուկ կոչումը՝ որպես աշխարհականներ, լինելու թթխմոր՝ Աստծո Ժողովրդի մեջ, քրիստոնեական ոգեշնչում՝ ներկայիս աշխարհում, և քահանային տանելու ժողովրդի մոտ, խորապես եկեղեցական է: Նույն Վատիկանի Երկրորդ Ժողովը բոլոր աշխարհական հավատացյալներին հորդորում է պատրաստակամ և մեծ սրտով ընդունելու կոչումը՝ առավել մտերիմ կերպով միանալու Տիրոջը և, սեփականը համարելով այն ամենը, ինչ Տիրոջն է, մասնակցել Եկեղեցու փրկարար առաքելությանը, լինելու Եկեղեցու կենդանի գործիքները, նախ և առաջ այնտեղ, որտեղ ժամանակակից հասարակության պայմանների պատճառով կա բնակչության մշտական աճ, քահանաների թվի նվազում, հայտնվում են նոր խնդիրներ, մարդկային կյանքի շատ ոլորտներ դառնում են ինքնավար, և Եկեղեցու համար առավել բարդանում է ապահովել իր ներկայությունը և գործել» (նույն տեղում, 33):

Այսօր աշխարհականների առաքելության տարածքը արտասովոր կերպով ընդլայնվել է: Եվ հետևաբար, ձեր հատուկ կոչման հանձնառությունը դառնում է առավել անհրաժեշտ, խթանող, կենդանի և պատշաճ: Եկեղեցու կենսունակության նշանը քրիստոնյայի կենսունակությունն է: Եվ ձեր՝ լեգեոնականներիդ, հանձնառությունը դառնում է առավել հրատապ՝ նկատի ունենալով մի կողմից իտալական հասարակության և հնագույն քրիստոնեական ավանդություն ունեցող ազգերի կարիքները և, մյուս կողմից, ձեր իսկ շարժման մեջ ձեզնից առաջ գոյություն ունեցած շողշողացող օրինակները: Միայն մի քանի անուն տամ՝ Էդել Քուիննը, որն աշխատեց Սևամորթ Աֆրիկայում, Ալֆոնսո Լամբը՝ Լատինական Ամերիկայի ամենամեկուսացված շրջաններում, և ապա հազարավոր լեգեոնականներ, որոնք սպանվեցին Ասիայում կամ իրենց կյանքն ավարտեցին աշխատանքային ճամբարներում:

Մարիամի ոգով և պաշտպանությամբ

3. Ձեր հոգևոր ապրումը խորապես մարեմական է՝ ոչ միայն այն պատճառով, որ Լեգեոնը կրում է Մարիամի անունը՝ որպես իր ակնբախ պաստառը, այլ նախ և առաջ այն պատճառով, որ Լեգեոնն իր հոգևոր ապրումի և առաքելության մեթոդը հիմնում է Մարիամի հետ միության ուժական սկզբունքի վրա, այն ճշմարտության վրա, որ Կույս Մարիամը ներգործուն ձևով մասնակցում է փրկության ծրագրին:

Այլ խոսքով, դուք տրամադիր եք յուրաքանչյուր մարդու, որ Քրիստոսի պատկերի կրողն է, ծառայել Մարիամի ոգով և Մարիամի պաշտպանությամբ:

Եթե մեր մեկ և միակ Միջնորդը Հիսուս Քրիստոս մարդն է, ինչպես հաստատում է Ժողովը. «Մարիամի մայրական դերակատարությունը մարդկության նկատմամբ ոչ մի կերպ չի նվազեցնում Քրիստոսի բացառիկ միջնորդությունը, և ընդհակառակը, այն ի ցույց է դնում այդ միջնորդության արդյունավետությունը» (LG 60): Եվ ուստի, Օրհնյալ Կույսին Եկեղեցում անվանում են Դատապաշտպան, Auxiliatrix՝ Օգնող, Օգնություն Մշտական, Mediatrix՝ Միջնորդ, Մայր Եկեղեցու:

Առաքելական աշխատանքը ծնվելու և աճելու համար իր հայացքն ուղղում է նրան, ով ծնեց Քրիստոսին և հղացավ Սուրբ Հոգով: Այնտեղ, ուր Մայրն է, այնտեղ է և Որդին: Երբ հեռանում ես Մորից, վաղ թե ուշ հեռանում ես նաև Որդուց: Զարմանալի չէ, որ այսօր աշխարհիկացած հասարակության տարբեր ոլորտներում նկատում ենք Աստծո հանդեպ հավատքի լայնատարած մի ճգնաժամ, որին նախորդում է Սուրբ Կույս Մարիամի հանդեպ ջերմեռանդության նվազումը:

Ձեր Լեգեոնը մի մասն է կազմում այն շարժումների, որոնք անձնական հանձնառություն են զգում տարածելու կամ ծնելու հավատքը՝ Մարիամի հանդեպ ջերմեռանդության տարածման կամ վերածնման միջոցով: Հետևաբար, Լեգեոնը միշտ կկարողանա անել իր լավագույնը, որպեսզի Մոր հանդեպ սիրո միջոցով առավել ճանաչվի և սիրվի Որդին, ո՛ր է ճանապարհը, ճշմարտությունը և յուրաքանչյուր մարդ արարածի կյանքը:

Հավատքի և սիրո այս հեռանկարով ի սրտե շնորհում եմ ձեզ իմ Առաքելական Օրհնությունը:

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԶ ՊԱՊԸ՝ ՄԱՐԻԱՄԻ ԼԵԳԵՈՆԻՆ

SECRETARIAT OF STATE

FIRST SECTION - GENERAL AFFAIRS

No. 102.129

Վատիկանից,
5 դեկտեմբերի, 2008թ.

Սիրելի Պրն Մքքաբե,

Նորին Սրբություն Բենեդիկտոս ԺԶ Պապը ուրախությամբ տեղեկացավ, որ Դուբլինում տեղի է ունեցել Մարիամի Լեգեոնի Կոնսիլիումի հազարերորդ հանդիպումը, և ինձ հանձնարարել է այդ առիթով Ձեզ ուղարկել իր ողջույնները և բարեմաղթանքները:

Սրբազան Հայրը կամենում է, ես վստահեցնեմ Ձեզ, որ նա գնահատում է այն առատաձեռն ծառայությունը, որն ամբողջ աշխարհով մեկ Եկեղեցուն մատուցվում է Լեգեոնի բազմաթիվ անդամների կողմից, որոնք Աստվածածին Մարիամի երկնային հովանավորության ներքո ջանում են բոլորին մոտեցնել Քրիստոսին՝ մարդկության Փրկչին:

Խնդրում ենք, համոզված եղե՛ք, որ Նորին Սրբությունն աղոթում է ձեր դիտավորությունների համար և Կոնսիլիումի որոշումների բոլոր մասնակիցների համար: Ձեզ և Լեգեոնի բոլոր անդամներին վստահելով Մարիամի՝ Առաքյալների Թագուհու, սիրալիր բարեխոսությանը՝ Սրբազան Հայրը շնորհում է իր Առաքելական Օրհնությունը:

Անկեղծորեն Ձերն ի Քրիստոս՝

Արքեպիսկոպոս Ֆեռնանդո Ֆիլոնի, փոխարինող,
Պրն Թոմմի Մքքաբեին,
Մարիամի Լեգեոնի Կոնսիլիում,
Դը Մոնֆորի Տուն,
Մորնինգ Սթար ավենյու,
Բրանսուիք փողոց,
Դուբլին 7

ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ՊԱՊԸ՝ ՄԱՐԻԱՄԻ ԼԵԳԵՈՆԻՆ

Օր. Մարի Մրֆիին,
Մարիամի Լեգեոնի Կոնսիլիումի նախագահին

Գոհունակությամբ տեղեկացա, որ Մարիամի Լեգեոնն այս տարի տոնում է իր հիմնադրման հարյուրերորդ հոբելյանը, և վստահեցնում եմ, որ աղոթքով բոլոր նրանց հետ եմ, ովքեր մասնակցում են եզրափակիչ Սուրբ Պատարագին, որ մատուցվելու է 2022թ. նոյեմբերի 19-ին Դուբլինում:

Առանձնահատուկ կերպով միանում եմ ձեզ՝ գոհություն հայտնելով Ամենակարող Աստծուն այն բոլոր շնորհների համար, որ անհաշվելի թվով մարդիկ աշխարհի տարբեր վայրերում ընդունել են Լեգեոնի հավատքի վկայության և եղբայրասիրական ջանքերի միջոցով: Ես նաև աղոթում եմ, որպեսզի զանազան հոբելյանական իրադարձություններն առաջնորդեն դեպի նորացված առաքելական մի եռանդ, մինչ դուք շարունակում ենք ընդառաջ գնալ Ավետարանի փրկարար ուղերձը ձեր կարևոր առաքելությամբ տարածելու կոչմանը: Այս տեսլականով, թո՛ղ որ դուք միշտ ձգտեք նմանվել ձեր երկնային հովանավորուհուն՝ Անարատ Մարիամին՝ անհողդողդ առատաձեռնությամբ և վստահությամբ աստվածային նախախնամության նկատմամբ:

Մարիամի Լեգեոնի հետ առնչություն ունեցող բոլորին հանձնելով Օրհնյալ Տիրամոր բարեխոսությանը՝ ես բոլորիդ համար հայցում եմ Տիրոջ օրհնությունները՝ ձեզ զորացնելու, ուրախացնելու և խաղաղության մեջ պահելու համար՝ որպես ի Քրիստոս ձեր հանդեպ իմ ջերմ զգացումների գրավական:

Հռոմ, Սուրբ Հովհաննես Լաթերանի տաճար,
14 նոյեմբերի, 2022թ.

ՄԱԳԻՍՏԵՐԻՈՒՄԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ

Վատիկանի Երկրորդ ժողովի փաստաթղթերը (1962-1965)

AA Apostolicam Actuositatem (Որոշում աշխարհականների առաքելության մասին)

DV Dei verbum (Վարդապետական սահմանադրություն Աստվածային Հայտնության մասին)

GS Gaudium et Spes (Հովվական սահմանադրություն Եկեղեցու մասին ժամանակակից աշխարհում)

LG Lumen Gentium (Վարդապետական սահմանադրություն Եկեղեցու մասին)

PO Presbyterorum Ordinis (Որոշում քահանաների ծառայության և կյանքի մասին)

SC Sacrosanctum Concilium (Սահմանադրություն սրբազան ծեսի մասին)

UR Unitatis Redintegratio (Որոշում էկումենիզմի մասին)

Մագիստերիումի այլ փաստաթղթեր

AAS Acta Apostolicae Sedis (Առաքելական Աթոռի որոշումները)

AD Ad Diem Illum (Անարատ Հղության դոգմայի ընդունման հոբելյան, Սբ Պիուս Ժ Պապ, 1904)

AN Acerbo Nimis (Քրիստոնեական վարդապետության ուսուցումը, Սբ Պիուս Ժ Պապ, 1905)

CCC Քրիստոնեական Կաթողիկէ Եկեղեցու (1992)

CIC Codex Iuris Canonici (Կանոնական իրավունքի օրենսգիրք)

CL Christifideles Laici (Աշխարհական հավատացյալների կոչումը և առաքելությունը Եկեղեցում և աշխարհում, Սբ Հովհաննես Պողոս Բ Պապ, 1988)

CT Catechesi Tradendae (Քրիստոնեական կրոնի ուսուցումը ներկա ժամանակներում, Սբ Հովհաննես Պողոս Բ Պապ, 1979)

EI Enchiridion Indulgentiarum (Լիակատար թողությունների պաշտոնական ցուցակը և դրանց կարգավորման օրենքները՝ Սրբազան Ապաշխարությունը, 1968)

EN Evangelii Nuntiandi (Ավետարանելը ժամանակակից աշխարհում, Սբ Պողոս Զ Պապ, 1975)

FC Familiaris Consortio (Քրիստոնյա ընտանիքը ժամանակակից աշխարհում, Սբ Հովհաննես Պողոս Բ Պապ, 1981)

ISE Iucunda Semper Expectatione (Վարդարանը, Լևոն ԺԳ Պապ, 1894)

MC Mystici Corporis (Քրիստոսի Խորհրդավոր Մարմինը, Երանաշնորհ Պիուս ԺԲ Պապ, 1943)

MCul Marialis Cultus (Օրհնյալ Կույս Մարիամի հանդեպ ջերմեռանդության ճիշտ կարգավորումը և զարգացումը, Սբ Պողոս Զ Պապ, 1974)

MD Mediator Dei (Սրբազան ծեսը, Երանաշնորհ Պիուս ԺԲ Պապ, 1947)

MF Mysterium Fidei (Հավատքի խորհուրդը, Սուրբ Հաղորդության Խորհրդի մասին, Սբ Պողոս Զ Պապ, 1965)

MN Mens Nostra (Հոգևոր կրթության պահեր, Պիուս 11-րդ, 1929)

PDV Pastores Dabo Vobis (Քահանաների պատրաստությունը ներկայիս պայմաններում, Սբ Հովհաննես Պողոս Բ Պապ, 1992)

RM Redemptoris Missio (Եկեղեցու առաքելության լիազորության մշտական վավերականությունը, Սբ Հովհաննես Պողոս Բ Պապ, 1990)

RMat Redemptoris Mater (Մարիամը՝ Փրկչի Մայրը, Սբ Հովհաննես Պողոս Բ Պապ, 1987)

SM Signum Magnum (Նվիրում Տիրամորը, Սբ Պողոս Զ Պապ, 1967)

UAD Ubi Arcano Dei (Քրիստոսի թագավորության մեջ Քրիստոսի խաղաղության մասին, Պիուս ԺԱ Պապ, 1922)

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ՎԱՏԻԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԺՈՂՈՎԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ LUMEN GENTIUM (ԼՈՒՅՍ ԱԶԳԵՐԻ) ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Այս սահմանադրությունը հարկավոր է ընթերցել ամբողջությամբ, որովհետև այս հրապարակումը հնարավորություն է ընձեռում առավել խորությամբ ընկալելու Քրիստոսի Խորհրդավոր Մարմինը և դրանով իսկ Եկեղեցուն առաջարկում է ավելի վստահ և վսեմ ապրելակերպ: Այս համառոտագրությունը չի փոխարինում ինքնին սահմանադրությանը. այստեղ բերված հատվածները հատկապես վերաբերում են Լեգեոնի էությանը՝ Մարիամի Մայրությանը Քրիստոսի Խորհրդավոր Մարմնի նկատմամբ: «Լույս ազգերին» սահմանադրությունը Մարիամին ի ցույց է դնում նոր լույսի ներքո: Մարիամը, Քրիստոսից հետո, Խորհրդավոր Մարմնի առաջին և ազնվագույն անդամն է: Մարիամին պետք է վերաբերվել որպես Եկեղեցու անբաժանելի մի մասը, եթե ուզում ենք ապահովել ամբողջ կառույցի պատշաճ համամասնությունը:

Հոդված 60. Առաքյալի խոսքով, կա միայն մեկ միջնորդ. «Մեկ Աստված կա և մեկ միջնորդ՝ Աստծու և մարդկանց միջև. Հիսուս Քրիստոս մարդը, որ տվեց ինքն իրեն՝ որպես փրկանք բոլորի համար» (Ա Տիմ. 2:5-6): Բայց Մարիամի գործառույթը՝ որպես մարդկության մայր, ոչ մի կերպ չի աղճատում կամ վերացնում Քրիստոսի այդ եզակի միջնորդությունը, այլ ավելի շուտ ցույց է տալիս այդ միջնորդության զորությունը: Բայց Օրհնյալ Կույսի կենարար ազդեցությունը մարդկության վրա ծագում է ոչ թե ինչ-որ ներքին անհրաժեշտությունից, այլ Աստծո բարեհաճությունից: Այն բխում է Քրիստոսի վաստակների գերառատությունից, կանգ է առնում Նրա միջնորդության վրա, ամբողջությամբ կախված է դրանից և իր ամբողջ զորությունը ստանում է դրանից: Այն ոչ մի կերպ չի խոչընդոտում Քրիստոսի հետ

հավատացյալների անմիջական միությունը, այլ, ընդհակառակը, ամրացնում է այն:

Հոդված 61. Օրինյալ Կույսի նախասահմանվածությունը՝ լինելու Աստվածամայր, կապված էր աստվածային խոսքի մարդեղության հետ. աստվածային նախախնամության ծրագրերում նա էր լինելու աստվածային Փրկչի շնորհաշատ մայրը՝ այստեղ երկրի վրա, և ամեն բանից վեր ու բացառիկ ձևով, Տիրոջ մեծահոգի գործակիցն ու խոնարհ աղախինը: Նա հղացավ, ծնեց և սնեց Քրիստոսին, նա ընծայեց Նրան Հորը տաճարում, մասնակից եղավ իր Որդու չարչարանքներին, երբ Նա մեռավ Խաչի վրա: Այդպիսով, ամբողջությամբ բացառիկ ձևով՝ իր հնազանդությամբ, հավատքով, հույսով և բոցավառ սիրով, նա գործակցեց Փրկչի առաքելության մեջ՝ մարդկային հոգիներին վերստին նվիրելու համար գերբնական կյանքը: Այս պատճառով նա մեզ համար շնորհների մայր է:

Հոդված 62. Մարիամի՝ շնորհների մայր լինելը անդադար շարունակվում է Ավետման ժամանակ նրա տված համաձայնությունից սկսած, որը նա անվարան կերպով պահեց Խաչի տակ և կպահի մինչև բոլոր ընտրյալների մուտքը հավիտենական կյանք: Վերափոխվելով Երկինք՝ նա չթողեց իր այդ փրկարար գործը, այլ իր բազմակողմանի բարեխոսությամբ շարունակում է մեզ բերել հավիտենական փրկության պարգևները: Իր մայրական սիրով նա հոգ է տանում իր Որդու եղբայրների մասին, որոնք դեռևս ճամփորդում են երկրի վրա՝ շրջապատված վտանգներով և դժվարություններով՝ մինչև առաջնորդվեն դեպի իրենց երանելի տունը: Այդ պատճառով Սուրբ Կույսին Եկեղեցում անվանում են Փաստաբան, Օգնական, Հովանավորուհի և Միջնորդ: Բայց այս ամենը հասկանում ենք այնպես, որ դրանք ոչինչ չեն ավելացնում Քրիստոսի՝ միակ Միջնորդի արժանապատվությանը և ներգործությանը և ոչինչ չեն պակասեցնում դրանցից:

Հոդված 65. Բայց մինչ Ամենաօրհնյալ Սուրբ Կույսի մեջ Եկեղեցին արդեն հասել է այդ կատարելությանը, որում

գոյություն ունի առանց արատի և կնճռի (հմմտ.՝ Եփս. 5:27), հավատացյալները շարունակում են պարտության մատնել մեղքը և ավելացնել սրբությունը: Եվ հետևաբար, նրանք դիմում են Մարիամի օգնությանը, ով ընտրյալների ամբողջ հասարակության առջև շողշողում է որպես առաքինությունների տիպար: Ջերմեռանդորեն խորհրդածելով նրա մասին մարդացած Խոսքի լույսի ներքո՝ Եկեղեցին երկյուղածությամբ ավելի խորապես է ներթափանցում մարդեղության մեծ խորհրդի մեջ և ավելի է նմանվում իր Փեսային: Մարիամը, խորապես ներգրավված լինելով փրկության պատմության մեջ, իր անձի մեջ միավորում և վերստին արտացոլում է հավատքի ամենակարևոր վարդապետությունները, երբ քարոզի և պաշտամունքի կենտրոնում Մարիամն է, նա հավատացյալներին մղում է, որպեսզի մոտենան իր Որդուն, Նրա զոհաբերությանը և Հոր սիրուն: Ձգտելով Քրիստոսի փառքին՝ Եկեղեցին ավելի է նմանվում Մարիամի վսեմ տիպարին և շարունակաբար աճում է հավատքի, հույսի և սիրո մեջ՝ փնտրելով և կատարելով Աստծո կամքը ամեն ինչում: Եկեղեցին, ուրեմն, իր առաքելական գործունեության մեջ ևս իրավացիորեն նայում է նրան, ով ծնեց Քրիստոսին՝ հղացված Սուրբ Հոգով և ծնված Սուրբ Կույսից, որպեսզի Եկեղեցու միջոցով Նա ծնվի և աճի հավատացյալների սրտերում: Իր կյանքով Սուրբ Կույսը եղել է մայրական սիրո տիպար, որով պետք է ոգևորվեն բոլոր նրանք, ովքեր միանում են Եկեղեցու առաքելությանը՝ վերակենդանացնելու մարդկությանը:

«Արդեն իսկ Ավետման ժամանակ Մարիամի մայրությունը առաջին և ծածուկ ձևն է Եկեղեցու: Այդ պահին Հիսուսի և Մարիամի մեջ չպետք է տեսնել միայն Որդու և իր Մոր Հասարակությունը, այլ պետք է տեսնել Աստծո և մարդու, Փրկչի և Իր կողմից առաջին փրկագնվածի Հասարակությունը: Բոլոր մարդիկ կանչված են մաս կազմելու այդ Հասարակության, որ Եկեղեցին է: Եվ Հիսուսի, և Մարիամի անձերի մեջ Եկեղեցին ձեռք է բերում ոչ միայն իր էությունը, այլ նաև իր հիմնական առանձնահատկությունները, նույնիսկ այս փուլում: Այն կատարելապես մեկ և սուրբ է: Իր այդ երկու տիեզերական Անդամների՝ Հիսուսի և Մարիամի մեջ, Եկեղեցին, որպես առաքինություն, կաթողիկէ է, այսինքն՝ տիեզերական» (Լորենտին):

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ՀԱՏՎԱԾՆԵՐ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕՐԵՆՍԳՐՔԻՑ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԱՇԽԱՐՀԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կանոն 224. Քրիստոսի աշխարհական հավատացյալների պարտականություններն և իրավունքները թվարկված են այս վերնագրի ներքո շարադրված կանոններում՝ ի հավելումն այն պարտականությունների և իրավունքների, որոնք ընդհանուր են Քրիստոսի բոլոր հավատացյալների համար և հաստատված են այլ կանոններով:

Կանոն 225. §1. Քանի որ աշխարհականները, Քրիստոսի բոլոր հավատացյալների նման, իրենց Մկրտության և Դրոշմի ուժով ուղարկված են առաքելություն կատարելու, նրանք ունեն ընդհանուր պարտավորություն և իրավունք անհատապես կամ միավորումների մեջ, ձգտելու առ այն, որ փրկության աստվածային պատգամը ճանաչվի և ընդունվի ամբողջ մարդկության կողմից ամբողջ աշխարհում: Այս պարտավորությունն առավել ևս հրատապ է այն պայմաններում, որոնցում միայն նրանց միջոցով է, որ մարդիկ կարող են լսել Ավետարանը և ճանաչել Քրիստոսին:

§2. Աշխարհական հավատացյալները, ըստ յուրաքանչյուրի պայմանների, ունեն հատուկ պարտավորություն՝ Ավետարանի ոգին տարածելու ժամանակի հասարակության մեջ և կատարելագործելու այն: Այս կերպ, այսինքն՝ զբաղված լինելով աշխարհի գործերով և կատարելով աշխարհիկ գործառույթներ՝ նրանք պետք է վկայեն Քրիստոսի մասին:

Կանոն 226. §1. Նրանք, ովքեր ամուսնացած են, ունեն հատուկ պարտավորություն՝ իրենց հատուկ կոչման համաձայն, իրենց ամուսնության և ընտանիքի միջոցով ձգտելու կազմավորել Աստծո ժողովուրդը:

§2. Ծնողներն ունեն լրջագույն պարտավորություն և իրավունք՝ կրթելու իրենց զավակներին, քանի որ ծնել են

նրանց: Հետևաբար, քրիստոնյա ծնողները առաջնային պատասխանատվություն են կրում քրիստոնեական կրթություն տալու իրենց զավակներին՝ համաձայն Եկեղեցու վարդապետության:

Կանոն 227. Քրիստոսի աշխարհական հավատացյալներն ունեն իրավունք՝ ազատություն ունենալու աշխարհիկ գործերում, ինչպես հատուկ է բոլոր քաղաքացիներին: Սակայն այդ ազատությունը գործադրելիս նրանք պետք է համոզված լինեն, որ իրենց գործողությունները ներթափանցված են Ավետարանի ոգով, և պետք է հետևեն Եկեղեցու ուսմունքին, որն առաջարկում է Եկեղեցու **մագիստերիումը** (վարդապետական իշխանությունը), բայց նրանք պետք է զգույշ լինեն կարծիք հայտնելիս, որպեսզի սեփական կարծիքը չներկայացնեն որպես Եկեղեցու ուսմունք:

Կանոն 228. §1. Հարմար աշխարհականները կարող են հոգևոր հովիվների կողմից նշանակվել եկեղեցական այնպիսի պաշտոններում կամ գործառույթների համար, որոնք կարող են կատարել՝ օրենքի դրույթներին համապատասխան:

§2. Այն աշխարհականները, որոնք ունեն անհրաժեշտ գիտելիքներ, ողջամտություն և շրջահայացություն, կարող են լինել փորձագետներ կամ խորհրդատուներ նույնիսկ ժողովներում, օրենքին համապատասխան, որպեսզի օգնեն Եկեղեցու հովիվներին:

Կանոն 229. §1. Աշխարհականները պարտավոր են և իրավունք ունեն ձեռք բերել քրիստոնեական վարդապետության վերաբերյալ գիտելիքներ՝ յուրաքանչյուրի կարողությանը և հանգամանքներին համապատասխան, որպեսզի կարողանան ապրել այս վարդապետության համաձայն, հռչակել այն և, անհրաժեշտության դեպքում, պաշտպանել այն, և կարող են ունենալ իրենց մասնակցությունը առաքելություն կատարելու մեջ:

§2. Նրանք նաև իրավունք ունեն ձեռք բերել ավելի լիակատար գիտելիք սրբազան գիտությունների մեջ, որոնք

դասավանդվում են եկեղեցական համալսարաններում կամ ֆակուլտետներում կամ կրոնական գիտությունների հաստատություններում՝ հաճախելով դասախոսությունների և ձեռք բերելով ակադեմիական աստիճաններ:

§3. Նմանապես, եթե համապատասխանության անհրաժեշտ պայմաններն ապահովվեն, նրանք կարող են եկեղեցական օրինական իշխանությունից ստանալ լիազորություն՝ ուսուցանելու սրբազան գիտությունները:

Կանոն 230. §1. Աշխարհականները, որոնց տարիքը և տաղանդները համապատասխանում են Եպիսկոպոսական Խորհրդաժողովների որոշումներով սահմանված պահանջներին, կարող են ստանալ դպիրի և ջահակիրի մշտական աստիճաններ՝ նախատեսված ծիսական արարողությամբ: Սակայն այս ծառայության տվչությունը նրանց իրավունք չի տալիս Եկեղեցուց պահանջելու ապրուստի միջոցներ կամ վարձատրություն:

§2. Աշխարհականները կարող են ստանալ ծիսական արարողությունների համար ժամանակավոր դպիրի նշանակում: Նմանապես, բոլոր աշխարհականները կարող են կատարել մեկնաբանի, երգչի կամ այլ նման ծիսական պաշտոնների գործառույթներ՝ օրենքի համաձայն:

§3. Այնտեղ, որտեղ Եկեղեցու կարիքները ստիպում են, և սպասավորներ չկան, աշխարհականները, որոնք թեև դպիրներ կամ ջահակիրներ չեն, կարող են կատարել այդ պաշտոնների որոշ գործառույթներ, օրինակ՝ ընթերցել Սուրբ Գիրքը, նախագահել ծիսական աղոթքներին, կատարել Մկրտություն, բաշխել Սուրբ Հաղորդություն, համաձայն օրենքի դրույթների:

Կանոն 231. §1. Աշխարհականները, որոնց վստահված է հատուկ ծառայություն կատարել Եկեղեցում՝ մշտապես կամ ժամանակավորապես, պարտավոր են ձեռք բերել համապատասխան պատրաստություն՝ ըստ իրենց գործառույթների պահանջների, որպեսզի կարողանան գիտակցաբար, ազնվորեն և ջանասիրաբար կատարել իրենց գործառույթները:

§2. Առանց կասկածի տակ դնելու Կանոն 230-ի §1-ը, նրանք իրավունք ունեն ստանալու արժանի վարձատրություն, որը համապատասխանում է իրենց հանգամանքին, որով պատշաճ կերպով հարգելով նաև քաղաքացիական օրենսդրությունը, նրանք կարող են հոգալ իրենց և իրենց ընտանիքների կարիքները: Նմանապես, նրանք իրավունք ունեն նաև ապահովագրության, սոցիալական անվտանգության և բժշկական օժանդակությունների ապահովման:

ՀԱՎԵԼՎԱԾ 4

ՀՌՈՄԵԱԿԱՆ ԼԵԳԵՈՆԸ

Հռոմեական Լեգեոնը հավանաբար ամենափառավոր բանակն էր, որ աշխարհը երբևէ տեսել է: Դրա անխոցելիության գաղտնիքը զինվորների հիացմունքի արժանի ոգին էր: Զինվորը պետք է իր անհատականությունը ձուլեր Լեգեոնի ինքնությանը, որին պատկանում էր: Պահանջվում էր անվերապահ հնազանդություն հրամանատարին, այնպես որ նա պետք է հնազանդվեր նույնիսկ «ad nutum», այսինքն՝ գլխի մի շարժումով, անկախ նրանից՝ սպան արժանի էր, թե ոչ, կամ անկախ նրանից, թե զինվորն ինչ էր ուզում կամ չէր ուզում: Եթե պաշտոնի բարձրացում չէր լինում, զինվորը չպետք է տրտնջար, իսկ եթե պատահում էր դժգոհության զգացում, ապա չպետք է թույլ տրվեր, որ դա արտահայտվեր խոսքով կամ գործով: Այսպիսով, բոլորը շարժվում էին միասին՝ որպես մեկ մարդ, որովհետև առաջնորդվելով ընդհանուր նպատակով՝ յուրաքանչյուրը կապված էր առաջնորդի և միմյանց հետ: Ուս ուսի տված և կողք կողքի ճակատ տալով՝ նրանց բանակները շրջեցին աշխարհով մեկ և հռոմեական համբավն ու հռոմեական օրենքը բարձր պահեցին ամենուրեք, ուր հայտնվեցին: Նվիրումը նրանց անդիմադրելի էր դարձնում թշնամու դեմ, նրանց աննահանջ արիությունը և հավատարմությունը հյուծում էին թշնամուն և ստիպում

կա՛մ հանձնվել, կա՛մ փախչել: Նրանք էին կայսրության առաջապահները. նրանց ուսերին էր ընկած կայսրությունն ամբողջական պահելու բեռը: Այն օրինակները, որ Պոմպեի պեղումների ժամանակ գտնվել է հռոմեական հարյուրապետը՝ իր դիրքում կանգնած, կամ հայտնի Թեբեի Լեգեոնը, որը կոտորվեց իր գեներալների՝ Սբ Մավրիկիոսի, Էքսուպերիուսի և Կանդիդուսի հետ միասին՝ Մաքսիմիանոսի հալածանքների ժամանակ, ցույց են տալիս լեգեոնների զինվորների անընկրկելի հերոսականությունը:

Հռոմեական Լեգեոնի ոգու մասին խտացված ձևով կարելի է ասել, որ այն ոգեշնչված էր իշխանության հանդեպ հնազանդությամբ, պարտականության անխոնջ զգացումով, հաստատակամությամբ՝ խոչընդոտների հանդիպելիս, տոկունությամբ՝ դժվարությունների ժամանակ և գործի հանդեպ հավատարմությամբ՝ պարտականությունը կատարելով ամենայն բծախնդրությամբ: Այդպիսին էր վստահելի ծառայության հեթանոսական իդեալը: Մարիամի լեգեոնականը ևս պետք է ունենա այս կորովը՝ դարձած գերբնական, մշակված և քաղցրացած՝ Մարիամի հետ մտերմությամբ, ով կարող է լավագույն ձևով սովորեցնել սիրո և շնորհալի ծառայության գաղտնիքը:

«Խաչի տակ կանգնած՝ հարյուրապետը տեսավ, թե ինչպես էր մեռնում Փրկիչը: Ցնցված հոգին ավանդելուց առաջ Հիսուսի բարձրացրած աղաղակից հարյուրապետը փառավորեց Աստծուն՝ ասելով. «Այս մարդն իսկապես Աստծո Որդին էր» (Մրկ. 15:39): Եվ լեգեոնականները, որոնք նրա հետ միասին նայում էին Հիսուսին, տեսնելով երկրաշարժը և տեղի ունեցած դեպքերը, այնքան վախեցան, որ ասացին. «Հիրավի, սա Աստծո Որդին էր» (Մտթ. 27:54):

Հռոմեական բանակի զինվորները, այսպիսով, դարձան առաջին նորադարձները: Ապագայի Եկեղեցին, որը կոչվելու էր «Հռոմեական Եկեղեցի», Գողգոթայի մոտ առեղծվածային ձևով սկսեց այն գործառույթը, որը կանխորոշված էր, որ պետք է կատարեր աշխարհում: Հռոմեացիներն էին, որ ընծայաբերեցին Զոհին և բարձրացրին Նրան՝ ի տես բազմությունների: Եկեղեցու միության այս ապագա պահապանները հրաժարվում էին պատ-

ռել Հիսուսի շապիկը: Հավատքի այս գրավադիրները լինելու էին առաջինները, որոնք գրելու և ի ցույց էին դնելու նոր հավատքի հիմնական դոգման՝ Նազովրեցու արքայական ծագումը: Նրանք կծեծեն իրենց կուրծքը զոհաբերության կատարման պահին՝ ասելով. «Հիրավի, սա Աստծո Որդին էր»: Վերջապես, նույն տեգով, որն Ավետարանի համար բացելու էր աշխարհի բոլոր մայրուղիները, նրանք բացեցին Ուսուցչի Սուրբ Միրտը, որից հոսեցին օրհնություն և գերբնական կյանք: Քանի որ ամբողջ մարդկությունն է մեղավոր Փրկչի մահվան մեջ, քանի որ բոլորն են արյունոտել իրենց ձեռքերը Նրա Արյան մեջ, և քանի որ ապագա Եկեղեցին չէր կարող ներկայացված լինել այլ կերպ, քան միայն հանցապարտներով, մի՞թե չեք կարծում, որ հռոմեացիներն արդեն իսկ Գողգոթայից սկսած, թեև անգիտակցաբար, սկսել են և հիմքն են դրել իրենց անմահ ճակատագրին:

Խաչը դրվել էր այնպիսի դիրքով, որ Հիսուսի մեջքը շրջված էր Երուսաղեմի դեմ, իսկ երեսը դարձած էր դեպի արևմուտք՝ դեպի Հավերժական Քաղաքը» (Բոլո, «Գողգոթայի ողբերգությունը»):

ՀԱՎԵԼՎԱԾ 5

ՄԱՐԻԱՄԻ՝ ԲՈԼՈՐ ՍՐՏԵՐԻ ԹԱԳՈՒՀՈՒ ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Սբ Լուի-Մարի դը Մոնֆորը «Օրհնյալ Կույս Մարիամի հանդեպ ճշմարիտ ջերմեռանդության մասին» իր աշխատության մեջ արտահայտում է իր փափագն առ այն, որ բոլոր նրանք, ովքեր կատարում են այդ ջերմեռանդությունը, հավաքվեն և ստեղծեն եղբայրություն: Դա տեղի ունեցավ 1899-ին, երբ Կանադայի Օտտավա քաղաքում հիմնվեց Բոլոր Սրտերի Թագուհի Մարիամի եղբայրությունը: Այն գտնվում է Մարիամի Ընկերության կամ Մոնֆորի Միսիոներների հոգածության ներքո:

2. Եղբայրությունը կազմված է այն հավատացյալներից, որոնք ուզում են իրենց մկրտության ուխտերը ապրել Քրիստոսի հանդեպ ամբողջական նվիրումով՝ Մարիամի ձեռքերով, այսինքն՝ Մարիամի հանդեպ ճշմարիտ

ջերմեռանդության կատարյալ գործադրությամբ, ինչպես սովորեցրել է Սբ Լուի-Մարի դը Մոնֆորը և ամփոփել հետևյալ բառերով.

«Այս ջերմեռանդությունը սեփական անձն ամբողջությամբ Մարիամին նվիրելու մեջ է՝ Մարիամի միջոցով ամբողջությամբ Քրիստոսին նվիրվելու համար: Դա մեզնից պահանջում է տալ.

1. **մեր մարմինը՝ մեր զգացումներով և անդամներով հանդերձ,**
2. **մեր հոգին՝ իր կարողություններով հանդերձ,**
3. **մեր ներկա նյութական ունեցվածքը և այն ամենը, ինչ ձեռք ենք բերելու ապագայում,**
4. **մեր ներքին և հոգևոր ունեցվածքը, այսինքն՝ մեր վաստակները, առաքինությունները և անցյալի, ներկայի ու ապագայի բարի գործերը:**

Այլ խոսքերով, մենք տալիս ենք Մարիամին այն ամենը, ինչ ունենք և՛ բնական կյանքում, և՛ հոգևոր կյանքում, ինչպես նաև այն ամենը, ինչ ձեռք ենք բերելու ապագայում՝ բնական կարգով, որպես շնորհ և երկնային արքայության փառքը: Սա պետք է անել առանց վերապահումների, ոչ էլ նույնիսկ մեկ գրոշ կամ մազ կամ փոքրագույն արարք մեզ համար պահելու: Եվ մենք պետք է տանք հավերժական ձևով՝ առանց պահանջելու կամ սպասելու, որ մեր ընծաների և ծառայության դիմաց ստանանք որևէ վարձատրություն, քան միայն այն, որ պատկանում ենք Տիրոջը՝ Մարիամի միջոցով և Մարիամի մեջ, նույնիսկ եթե մեր Մայրը չլիներ, թեև իրականո՛ւմ է, ամենաառատաձեռնը և գնահատողը Աստծո բոլոր արարածների մեջ» (Սբ Լուի-Մարի դը Մոնֆոր, «Ճշմարիտ ջերմեռանդության մասին», պարագրաֆ 121):

3. Ընդունելության պայմանները հետևյալն են.

ա. Սեփական անձը Մարիամի ձեռքերով նվիրել Հիսուս Քրիստոսին՝ Հավիտենական և Մարդացած Իմաստությանը, համաձայն Սբ Լուի-Մարի դը Մոնֆորի բանաձևի: Պետք է պատրաստվել պատշաճ ձևով, և լավ կլինի, որ առաջին նվիրման արարողության համար ընտրվի մի հատուկ օր, ինչպես, օրինակ, Տիրամոր տոներից մեկը: Այդ նվիրումը պետք է նորոգվի ամեն օր՝ օգտագործելով մի որևէ բանաձև,

ինչպես, օրինակ, հետևյալը. «Ես ամբողջովին քոնն եմ, և ամեն ինչ, որ ունեմ, ընծայաբերում եմ քեզ, ո՛վ ամենասիրելի Հիսուս, քո սուրբ Մոր՝ Մարիամի միջոցով»: Այս ձևը բավարար է նաև առավոտյան աղոթքի համար՝ որպես Առաքելության Աղոթք: Մեկ այլ աղոթքի ձև էլ կա, որ շատ սիրելի է Լեգեոնի համար. «Ես ամբողջովին քոնն եմ, իմ Թագուհի և Մայր իմ, և ամեն ինչ, որ ունեմ, քոնն է»:

բ. Գրանցել անունդ Մոնֆորի Միսիոներների կենտրոններից որևէ մեկում:

գ. Սովորություն դարձնել և միշտ ապրել (և սա այս ջերմեռանդության էությունն է) Մարիամի կամքից մշտական կախվածության մեջ՝ Նազարեթում իր մանկությունն ապրող Աստծո Որդու օրինակով, բոլոր գործողություններդ կատարելով Մարիամի միջոցով, Մարիամի հետ, Մարիամի մեջ և Մարիամի համար՝ այնպես, որ համարենք, որ Մարիամը միշտ գործում է մեզ հետ միությամբ՝ ուղղորդելով մեր բոլոր ջանքերը և բաշխելով մեր ջանքերի բոլոր պտուղները: Տե՛ս Գլուխ 6-ը՝ «Լեգեոնականների պարտականությունները Մարիամի նկատմամբ»:

4. «Այս միավորմանն անդամակցելն իր հետ բերում է հոգևոր հաղորդություն՝ Մոնֆորյան ամբողջ ընտանիքի հետ:

Անդամները կուզենան տոնել այդ ծիսական տոները, որոնք և՛ խորհրդանշան են, և՛ այս իրականություն են դարձնում այդ հաղորդությունը: Նրանք հատկապես կտոնեն Ավետման տոնը մարտի 25-ին, որն այդ միավորման գլխավոր տոնն է, Հիսուսի Ծնունդը՝ դեկտեմբերի 25-ին, Անարատ Հղության տոնը՝ դեկտեմբերի 8-ին, Սբ Լուի-Մարի դը Մոնֆորի տոնը՝ ապրիլի 28-ին:

Անդամները նաև մաս և բաժին ունեն այն հոգևոր հարստություններից, որոնցով Մոնֆորյան ընտանիքն օժտվել է Մարիամի կողմից, ով «հրաշալի կերպով նվիրվում է ամբողջությամբ նրան, ով ամեն ինչ տալիս է Մարիամին»» (Թագուհի, մայիս-հունիս, 1992, էջ 25):

5. Այս ջերմեռանդությունը լավ հասկանալու և գործադրելու համար էական է ընթերցել, և ոչ միայն մեկ անգամ, այլ հաճախակի, Սբ Լուի-Մարի դը Մոնֆորի «Ճշմարիտ

ջերմեռանդություն Օրհնյալ Սուրբ Կույսի հանդեպ» աշխատությունը և փոքրածավալ «Մարիամի գաղտնիքը» գիրքը:

«Հատկապես Սբ Պիուս Ժ-ն է հստակ շարադրել Մարիամի տիեզերական միջնորդության և հոգևոր մայրության մասին վարդապետությունն իր գեղեցիկ «Ad Diem Illum» շրջաբերական նամակում, որը հիմնականում Սբ Լուի Մարի դը Մոնֆորի «Ճշմարիտ ջերմեռանդություն Մարիամի նկատմամբ» գրքի վերաշարադրումն է: Այդ սուրբ քահանայապետը ջերմեռանդ սիրահարն էր այդ փոքրիկ աշխատության: Նա բոլորին հատուկ կերպով խորհուրդ էր տալիս կարդալ այն և իր Առաքելական Օրհնությունն էր շնորհում նրան, ով կարդում էր այդ գիրքը: Մարիամի մասին նրա վերոհիշյալ շրջաբերական նամակում կարելի է ոչ միայն գտնել Մարիամի այդ մեծ նվիրյալի ամենածանոթ մտքերը, այլ հաճախ նաև դը Մոնֆորի ուղղակի արտահայտությունները» (Մյուրա, «Le Corps Mystique du Christ»):

«Մարիամի մեջ Հիսուսի ստրուկներին սիրելը պետք է բարձրացնի հարգանքը Հիսուսի՝ Աստծո Խոսքի, հանդեպ ջերմեռանդ նվիրումը՝ Մարդեղության մեծ խորհրդի մեջ, որը տոնում ենք մարտի 25-ին, և որն այս ջերմեռանդությանը հատուկ խորհուրդն է, որովհետև այն ներշնչված է Սուրբ Հոգուց՝ հետևյալ պատճառներով.

ա. Որպեսզի կարողանանք պատվել և ընդօրինակել այն հրաշալի կախվածությունը, որը Որդին Աստված ընտրեց ունենալ Մարիամից՝ Իր Հոր փառքի և մարդու փրկագնման համար: Այս կախվածությունը հատկապես երևում է այն խորհրդի մեջ, երբ Հիսուսը դառնում է գերի և ստրուկ Իր Օրհնյալ Մոր արգանդում՝ կախված լինելով նրանից ամեն ինչում:

բ. Որպեսզի մենք կարողանանք Աստծուն գոհություն հայտնել այն անգին շնորհների համար, որոնք Նա տվել է Մարիամին և, հատկապես նրա համար, որ Մարիամին ընտրել է լինելու Իր ամենաարժանի Մայրը: Այս ընտրությունը կատարվեց Մարդեղության խորհրդի մեջ:

Սրանք են Մարիամի միջոցով Հիսուսի նկատմամբ ստրկության երկու հիմնական նպատակները» (Սբ Լուրի-Մարի դը Մոնֆոր, «Ճշմարիտ ջերմեռանդության մասին», պարագրաֆ 243):

ՀԱՎԵԼՎԱԾ 6

ԱՆԱՐԱՏ ՀՂՈՒԹՅԱՆ ՄԵԴԱԼԸ, ՈՐԸ ԿՈՉՎՈՒՄ Է ՀՐԱՇԱԳՈՐԾ ՄԵԴԱԼ

«Հետո Օրինյալ Կույսն ինձ ասաց. «Մի մեդալ պատրաստի՛ր այս օրինակով, նրանք, ովքեր կկրեն դա օրհնվելուց հետո, կընդունեն մեծ շնորհներ, հատկապես եթե կրեն դա իրենց պարանոցին: Նրանք, ովքեր վստահում են, առատ շնորհներ կընդունեն» (Սբ Քաթրին Լաբուրե):

Լեգեոնականները պետք է խորապես հարգեն այս մեդալը, որը սերտորեն կապված է եղել Մարիամի Լեգեոնի պատմության հետ: Դա արդյունքը չէր այն որոշման, որ 1830 թվականի օրինակով արձանիկը դրվեց Լեգեոնի առաջին հանդիպման սեղանին, այլ այդ մեդալը արդյունավետ ձևով ամփոփում էր Լեգեոնի ջերմեռանդական աշխարհայացքը, որը ձևավորվեց դրա շուրջ:

Այդ ժամանակվանից խորհուրդ էր տրվում օգտագործել այդ մեդալը: Մեդալի վրայի աղոթքն ասվեց առաջին հանդիպման ժամանակ, և հիմա ամեն օր յուրաքանչյուր լեգեոնական այն արտասանում է Կատենայի աղոթքի մեջ: Մեդալի պատկերը ներառված է Լեգեոնի Վեքսիլլումի մեջ:

Մտածելու բավական տեղիք է տալիս այն փաստը, որ այդ մեդալն այդպիսի բազմակի ձևով մտել է Լեգեոնի ջերմեռանդական համակարգի մեջ: Սա պատահականությո՞ւն էր արդյոք, թե՞ աստվածային նախախնամության նուրբ և հրաշալի միջամտություն. կարելի է հասկանալ հետևյալ հավելյալ նկատառումներից.

ա. Մեդալի նպատակը Անարատ Հղության հանդեպ ջերմեռանդության խրախուսումն է: Բայց մեդալը նաև ի ցույց է դնում Մարիամի Շնորհների Միջնորդ լինելու դերակատարությունը՝ այսպիսով Մարիամին համապարփակ ձևով ներկայացնելով իր տարբեր կողմերով, ինչպիսին Լեգեոնը նայում է նրան՝ որպես Անարատ Մարիամ, Մայր և Միջնորդ:

Անարատ Հղության պատկերումին գալիս է լրացնելու Անարատ Սրտի պատկերը մեդալի հակառակ կողմում:

Առաջինը պատկերում է Մարիամին՝ որպես անբիծ հղացված, իսկ երկրորդը ցույց է տալիս նրան՝ իր ամբողջ կյանքի անմեղությամբ:

բ. Մեդալի հակառակ կողմում պատկերված են Հիսուսի Սուրբ Սիրտը և Մարիամի Անարատ Սիրտը, որոնց երկուսին էլ Լեգեոնը դիմել է իր բացման աղոթքներում առաջին իսկ հանդիպումից սկսած: Երկու Սրտերի այս պատկերը՝ մեկը փշերով պսակված և մյուսը՝ սրով խոցված, երկու Սրտերի վրա բարձրացված Խաչը և M տառը հիշեցնում են Քրիստոսի Չարչարանքներն ու Չարչարանքներին մասնակցությունը, որոնք վաստակեցին այն շնորհները, որոնք Մարիամի հետ միասին մարդկանց տանելու արտոնության համար աղոթում են լեգեոնականները:

գ. Մի ապշեցուցիչ փաստ է այն, որ Քաթրին Լաբուրեի ունեցած երևման (որը Ֆրանսիայի համար ուներ հատուկ նշանակություն) ճիշտ հարյուրամյակին էր, երբ Փարիզի Արքեպիսկոպոս Վսեմաշուք Կարդինալ Վերդիեն սկսեց լսումները, որոնց ժամանակ իր հավանությունը և օրհնությունը տվեց Լեգեոնին:

Այսպիսով, կարելի է գրեթե ասել, որ մեդալը յուրացվել է Լեգեոնի կողմից, այնպես որ լեգեոնականների առաքելության մեջ է մտնում նաև մեդալը: Լեգեոնականը կենդանի Հրաշագործ Մեդալն է՝ աշխարհի վրա Տիրամոր միջոցով շնորհների հեղման մի խոնարհ գործիք:

Կաթողիկէ հավատացյալների մի որոշակի դաս, որոնք մտահոգվում են, որպեսզի երևան որպես «առաջատար և մտածող», ծաղրում են այս մեդալը, ինչպես նաև այլ մեդալներ և սքափուլյարներ՝ որպես սնահավատություն: Այսպիսի անհարգալից վերաբերմունքը խորհրդանմանների նկատմամբ, որոնք վայելում են Եկեղեցու հավանությունը, անխոհեմություն է: Այդ վերաբերմունքը նաև հակասում է փաստերին, որովհետև կասկած չկա, որ մեդալների օգտագործումը օրհնվել է դրամատիկ հանգամանքներում: Քանի որ լեգեոնականները քաջալերվում են իրենք իրենց համարելու զինվորներ, նմանապես նրանք պետք է մեդալը համարեն

իրենց հատուկ զինամթերքը: Վստահաբար, Մարիամը կրկնակի զորություն կհաղորդի այդ մեդալներին լեգեոնականների ձեռքերում:

Անդամակցության արարողակարգով անձը կարող է դառնալ Հրաշագործ Մեդալի Միավորման անդամ՝ առանց ռեգիստրում պաշտոնական գրառման: Եվ անդամն ինքնաբերաբար օգտվում է Միավորմանը շնորհված բոլոր լիակատար թողություններից:

Հրաշագործ Մեդալի Տիրամոր տոնը կատարվում է նոյեմբերի 27-ին:

«Մարիամն աշխարհ բերեց ինքնին առաքելական գործունեությունը Նրան, Ով եկավ երկրի վրա կրակ գցելու և կամենում էր, որ այն բռնկվի: Մարիամի դերը կլիներ կիսատ, եթե նա չլիներ կրակի լեզուների կենտրոնում, որոնք նրա Որդու Հոգին ուղարկեց առաքյալների վրա՝ բոցավառելու նրանց Քրիստոսի ուղերձով՝ աշխարհն ամբողջությամբ հրկիզելու համար: Հոգեգալուստը Մարիամի հոգևոր Բեթղեհեմն էր՝ նրա նոր աստվածահայտնությունը, որտեղ, որպես Մայր կանգնած Քրիստոսի Խորհրդավոր Մարմնի օրորոցի մոտ, Մարիամը նորից իր Որդուն հայտնի է դարձնում այլ հովիվների և այլ թագավորների» (Եպիսկոպոս Ֆուլթոն Շին, «Քրիստոսի Խորհրդավոր Մարմինը»):

ՀԱՎԵԼՎԱԾ 7

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՐԱՆԻ ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Սա մի միավորում է, որը մի մեծ ընտանիքի է մեջ հավաքում այն հավատացյալներին, որոնք հանձն են առնում աղոթել Վարդարանի քսան տասնյակները առնվազն շաբաթը մեկ անգամ: Որևէ ընտանիքի անդամ լինելը ենթադրում է բոլոր անդամների մասնակցությունը: Նրանք, ովքեր միանում են Վարդարանի Եղբայրությանը, հրավիրված են Տիրամոր ձեռքերին հանձնելու ոչ միայն իրենց աղոթած Վարդարանները, այլ նաև իրենց բոլոր գործերի,

տառապանքների և աղոթքների արժեքը, որպեսզի Սուրբ Կույսն իր հայեցողությամբ բաշխի դրանք այլ անդամների և Եկեղեցու կարիքների համար: Եղբայրությունը հիմնադրել է դոմինիկյան վանական Ալան դը լա Ռոշը 1470 թվականին: Դոմինիկյան ընտանիքը հատուկ պատասխանատվություն ունի տարածելու այդ եղբայրությունը: Դրա շնորհիվ բոլոր նրանք, ովքեր դառնում են Վարդարանի Եղբայրության անդամ, օգտվում են Դոմինիկյան միաբանության հոգևոր շնորհներից:

2. Այն փաստը, որ Սբ Լուի-Մարի դը Մոնֆորը ոչ միայն անդամ էր Վարդարանի Եղբայրության, այլ նաև եռանդուն ջանքերով նվիրված էր այն տարածելու գործին, պետք է օրինակ լինի լեգեոնականների համար: Դեռևս գոյություն ունի հետևյալ հետաքրքիր փաստաթուղթը. «Մենք՝ Քարոզիչների Միաբանության (Դոմինիկյանները) շրջանային Մեծավորը, հաստատում ենք և հայտարարում, որ Լուի-Մարի Գրինյոն դը Մոնֆորը՝ մեր Երրորդ Կարգի միաբանության եղբայրը, ամեն տեղ եռանդով քարոզում է Վարդարանի Եղբայրությունը, մեծ պտղաբերությամբ ուսուցանում է քաղաքներում և գյուղական վայրերում»:

3. Եղբայրությանը միանալու համար հարկավոր է գրանցել սեփական լրիվ անունը Դոմինիկյան միաբանության վանքում կամ մի որևէ եկեղեցում, որտեղ Եղբայրությունը հիմնվել է: Եղբայրությանն անդամակցելու շնորհիվ բազում թողություններ և արտոնություններ ստանալու համար անհրաժեշտ է աղոթելիս Վարդարանի խորհուրդների մասին խորհրդածել խորությամբ: Սբ Լուի-Մարի դը Մոնֆորն ասել է, որ «խորհրդածությունը Վարդարանի հոգին է»:

Առնվազն շաբաթը մեկ անգամ Վարդարանի քսան տասնյակներն աղոթելու պարտավորությունը չկատարելը մեղք չէ: Սովորական ամենօրյա Վարդարանի աղոթքն առավել քան բավական է: Հարկ չկա միանգամից ասել ամբողջ Վարդարանը. տասնյակները կարելի է ասել տարբեր ժամանակներում՝ ըստ հարմարության: Չկա պարտավորեցնող հանդիպում կամ անդամագրություն:

4. Եղբայրության մի քանի առավելությունները հետևյալն են՝ ա. Տիրամոր՝ Վարդարանի Թագուհու հատուկ խնամակալությունը, բ. մասնակցություն Դոմինիկյան միաբանության և Վարդարանի Եղբայրության բոլոր բարի գործերում և հոգևոր շնորհների մեջ, որոնք սփռված են ամբողջ աշխարհով մեկ, գ. մահվանից հետո օգուտներ՝ նույն միաբանության և Եղբայրության աղոթքներից, որ կատարվում են ննջեցյալների համար, դ. լիակատար թողություն կարելի է ստանալ անդամակցության օրը, Սուրբ Ծննդյան տոնին, Զատկին, Ավետման տոնին (Տիրոջ Մարդեղությունը), Տիրամոր Վերափոխման, Վարդարանի Տիրամոր, Անարատ Հղության, Տեառնընդառաջի տոներին:

5. Եղբայրությանն անդամակցության միջոցով ստացած թողություններից բացի, մեղքերի լիակատար թողություն է շնորհվում մեկ անգամ եկեղեցում կամ հասարակական աղոթարանում կամ ընտանիքի հետ, կրոնական որևէ համայնքում, բարեպաշտ որևէ միավորման հանդիպման ժամանակ (Լեգեոնի հանդիպումը ևս կլինի) Վարդարանի հինգ տասնյակները աղոթելու և խորհուրդների մասին խորհրդածելու համար: Մասնակի թողություն է շնորհվում Վարդարանի աղոթքն այլ հանգամանքներում աղոթելու համար:

6. Լիակատար թողություն ստանալու պայմանները հետևյալն են.

ա. Խոստովանություն. մեկ խոստովանությունը բավական է՝ մի քանի թողություններ ստանալու համար:

բ. Սուրբ Հաղորդություն. պետք է ընդունել ամեն անգամ, երբ մեկն ուզում է ստանալ լիակատար թողություն:

գ. Աղոթք Քահանայապետի դիտավորությունների համար. մեկ «Հայր մեր» և մեկ «Ողջույն» կամ որևէ այլ աղոթք՝ ըստ ցանկության, բավարար է այս պահանջի համար: Յուրաքանչյուր լիակատար թողության համար անհրաժեշտ է կրկնել այս աղոթքները:

դ. Պահանջվում է նաև, որպեսզի անձն ազատ լինի որևէ մեղքի նկատմամբ հակումից, նույնիսկ ներելի մեղքի նկատմամբ:

«Սուրբ Վարդարանը մեր միաբանության ամենաազնիվ ծաղիկն է: Եթե այդ ծաղիկը թոռոմի, միաժամանակ և մեր միաբանու-

թյան գեղեցկությունը և շքեղությունն էլ կթոռոմի և կանհետանա: Եվ մյուս կողմից, երբ այդ ծաղիկը վերակենդանանա, մեր վրա իջեցնում է երկնային եղյամը, մեզ է փոխանցում աստվածային շնորհի բուրմունքը և, որպես բարեպաշտության արմատ, աճեցնում է առաքինության և պատվի պտուղներ» (Դը Մոնրոյ, Օ. Փ.):

ՀԱՎԵԼՎԱԾ 8

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Մի քանի երկրներում Քրիստոնեական Վարդապետության Եղբայրությունը կարևոր դերակատարություն է ունեցել քրիստոնեական վարդապետության ուսուցման կազմակերպման մեջ: Շատ լեգեոնականներ են ներգրավված այդ Եղբայրության մեջ, և Լեգեոնն ամբողջությամբ հավանություն է տալիս նրանց աշխատանքին:

Կարևոր է նշել, որ քրիստոնեական վարդապետության ուսուցումը տարիքային բոլոր խմբերի և կրթության բոլոր մակարդակների համար է, ինչպես մատնանշում է Սբ Հովհաննես Պողոս Բ Պապը (CT 16):

«Ես ի սրտե ուզում եմ Եկեղեցու անունից երախտագիտություն հայտնել ձեզ բոլորիդ՝ համայնքներում քրիստոնեական կրոնի ուսուցիչներիդ, որ նվիրված եք բազում սերունդների հոգևոր կրթության առաքելությանը: Ձեր աշխատանքը հաճախ խոնարհ և ծածկված է, բայց իրականացվում է եռանդուն և առատաձեռն նախանձախնդրությամբ, և աշխարհական առաքելական աշխատանքի մի գերազանց ձև է, որը հատկապես կարևոր է այնտեղ, որտեղ երեխաները և երիտասարդները տարբեր պատճառներով իրենց տներում չեն ստանում պատշաճ կրոնական պատրաստություն» (CT 66):

«Երրորդ դասն այն է, որ կրոնի դասավանդումը միշտ եղել է և միշտ կլինի մի աշխատանք, որի իրականացման պարտականությունը պետք է զգա և կրի ամբողջ Եկեղեցին: Բայց Եկե-

ղեցու անդամներն ունեն տարբեր պարտականություններ՝ ըստ յուրաքանչյուրի առաքելության: Հոգևոր հովիվները, քանի որ առաջնորդում են հավատացյալներին տարբեր մակարդակներում, կրում են գլխավոր պատասխանատվություն՝ առաջ մղելու, առաջնորդելու և համակարգելու կրոնի դասավանդումը: Իր մասով Պապը քաջ գիտակցում է այդ աշխատանքում իր առաջնային պատասխանատվությունը և հովվական ուշադրություն է դարձնում այս հարցին, ինչն իր համար միայն ուրախության և հույսի աղբյուր է» (CT 16):

ՀԱՎԵԼՎԱԾ 9

ՍՈՒՐԲ ՍՐՏԻ ԱԼԿՈՀՈԼԻՑ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԱՌԱՋԱՄԱՐՏԻԿ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ (Տե՛ս Գլուխ 37)

ա. Երբ Առաջամարտիկ Միավորման մի որևէ կենտրոն համաձայնում է, որ իրեն ամրակցվի Լեգեոնի մի պրեզիդիում՝ Միավորման գաղափարները առաջ մղելու և անդամներ հավաքագրելու նպատակով, այդ պրեզիդիումին պետք է ապահովել անհրաժեշտ գրենական պիտույքներով, գրականությամբ, արձանագրությունների գրքերով, վկայականներով և տարբերանշաններով, որպեսզի այն կարողանա գործել որպես ապահովված միավոր: Հարկավոր է նաև սկզբնապես գումար խնդրել այդ պարագաների ձեռքբերման համար:

բ. Առաջամարտիկ Միավորման մեջ անդամներ հավաքագրելու և նրանց ներգրավելու աշխատանքը կարող է կատարվել որպես պրեզիդիումի կողմից նշանակված աշխատանք, ինչպես այլ աշխատանքների դեպքում է:

գ. Առաջամարտիկ Միավորման անդամակցության համար դիմումները կարելի է ուսումնասիրել պրեզիդիումի

ամենշաբաթյա ժողովների ժամանակ՝ ճիշտ ինչպես դա կարող էր իրականացվել Առաջամարտիկ Միավորման որևէ կենտրոնի կողմից **ամենամսյա** ժողովի ժամանակ:

դ. Առաջամարտիկ Միավորման վերաբերյալ բոլոր հարցումները պետք է ուղղորդվեն հետևյալ հասցեին՝ Central Director, Pioneer Total Abstinence Association, PO Box 13492, Dublin 7, Ireland: Հավելյալ տեղեկատվություն կարելի է գտնել www.pioneers.ie կայքում:

ՀԱՎԵԼՎԱԾ 10

ՀԱՎԱՏՔԻ ՈՒՍՈՒՄԸ

Հավատքի ուսումը կարող է արդյունավետորեն իրականացվել պրեզիդիումի մի քանի կամ բոլոր անդամների կողմից՝ որպես հավելում իրենց այլ աշխատանքներին: Որոշ տեսակի պրեզիդիումներ պետք է հանձն առնեն դա կատարել անհրաժեշտաբար, օրինակ՝ հաստատություններում գործող կամ կրտսեր պրեզիդիումները, և որոնք մասնագիտանում են դասավանդման մեջ:

Լեգեոնի աղոթքի եռանդուն ոգին և ջերմեռանդական համակարգը ապահովում է հիանալի հիմք հոգևոր ուսման համար և խուսափում է ոչ շահեկան հնարավորություններից, որոնք երբեմն պատահում են: Ինքնագոհ, գիտելիքով հպարտացած և նմանօրինակ անձինք, որոնք ուզում են մտնել Լեգեոն միայն խառնելու համար և ապա դուրս գալ, կմերժվեն Լեգեոնի կողմից: Եվ հակառակը, համակարգը կպահի նրանց, ովքեր չեն հասցնում յուրացնել արագ մատուցվող նոր նյութը:

Ավելին, ուսման հաջողությունը երաշխավորված կլինի Մարիամի հետ միության ոգով սովորելու շնորհիվ, որովհետև Մարիամի ձգտումը դեպի լուսավորությունն այնքա՛ն խոնարհ էր, այնքա՛ն պարզ էր, որ նա մշտապես մի կատարյալ տիպար է ներկայացնում հոգևոր լուսավորության

ձգտողների համար. «Ինչպե՞ս կարող է դա լինել» (Ղկ. 1:34): Եվ հետո Մարիամի՛ն տրվեց Նա, ով Աստվածային Իմաստությունն է, Հավիտենական Ճշմարտությունը, Ճշմարիտ Լույսը: Մարիամն է մնում այդ գանձի պահապանը: Նրանք, ովքեր ուզում են հարստանալ այդ գանձով, պետք է դիմեն Մարիամին: Լեգեոնականներն իրենց պրեզիդիումի ամենշաբաթյա ժողովը պետք է դիտեն որպես համախմբում իրենց սիրելի Մոր շուրջ, երբ իրենց ձեռքերը դնում են նրա մայրական ձեռքերի մեջ՝ այդքա՛ն լի գիտության գանձերով, որոնք իրենք ձգտում են ունենալ:

Այսպիսով, այս ուսման ուշագրավ առանձնահատկությունն այն է, որ լեգեոնականը դրան մոտենում է ավելի շուտ ջերմեռանդության ճանապարհով և այն չի համարում պարզապես մտավոր վարժանք: Մեկ այլ բնորոշ կողմ է այն, որ ուսումն այստեղ հիմնված չէ դասախոսության համակարգի վրա՝ մասամբ այն պատճառով, որ վերջինս չի համապատասխանում պրեզիդիումի համակարգին, բայց առավել այն պատճառով, որ մարդիկ հակված են հանգստանալու, երբ մեկը կամ մի քանիսը ստանձնում են կատարել ամբողջ աշխատանքը կամ վերցնում են ամբողջ պատասխանատվությունը, ինչպես անում է դասախոսը: Ավելին, գործնականում դասախոսությունը կազմակերպվում է այնպես, որ համապատասխանի լսարանի առավելագույն կարողություններին և, հետևաբար, դժվարություն է ներկայացնում լսողների մի մեծ մասի համար: Հետևանքը լինում է այն, որ առարկայի նյութն ամբողջությամբ չի յուրացվում, և որն անխուսափելիորեն հանգեցնում է արագ մոռացության: Այլ խոսքով ակնհայտ է, որ այդ խումբը լսում է մի խելացի դասախոսություն՝ լինելով գնահատողական, բայց ամբողջությամբ ոչ ակտիվ, փակ մտավոր վիճակում:

Մյուս կողմից, Լեգեոնի համակարգում անդամներին չի թույլատրվում ծուլանալ: Յուրաքանչյուրը պետք է հաշվետվություն ներկայացնի իր աշխատանքի մասին: Լեգեոնականի պարագայում սա ենթադրում է, ճիշտ է նույն կերպ, բայց այլ մակարդակում, գործադրել ջանքեր և ստանձնել պատասխանատվություն, որը դասախոսության համակարգում գործնականում ամբողջությամբ ընկնում է

դասախոսողի ուսերին: Անդամը պարզապես ունկնդիր չէ: Նրա մտավոր վիճակը ակտիվ է և ոչ պարզապես ընդունող: Հստակ է, որ նրա միտքը աշխատում է: Միաժամանակ նրա առաջընթացը ստուգվում և վերահսկվում է:

Յուրաքանչյուր անդամի հաշվետվությունը տրվում է նստած դիրքում: Նրա դասագիրքն իր առջևում է: Իր բոլոր կատարած նշումներն դրված են իր առջև: Միջավայրում ոչինչ չի սպառնում նրա ինքնավստահությանը: Նրա հաշվետվությունը կազմված է իր սեփական դարձվածքներով, փոխանցում է իր սեփական մտքերը և դժվարություններն այնպես, որ ամեն ինչ պարզ և ծանոթ է թվում բոլորի համար: Ուրիշները կարող են մեկնաբանել կամ հարցեր տալ: Ապա ներկայացվում է հաջորդ հաշվետվությունը: Ակնհայտ կլինի, որ ժողովն առաջ է գնում ո՛չ որպես մի մեքենա, որն իր ուղևորներին քարշ է տալիս, այլ որպես մի գութան, որը տակնուվրա է անում հողը: Պրեզիդիումի անդամների՝ իրար հաջորդող հաշվետվություններով գրքի գլուխը փորվում է նորից ու նորից և ընթացքում այն հասկանալի է դառնում յուրաքանչյուրի համար և, հետևաբար, հիշվում է:

Ուսման գործընթացը, լինելով պրեզիդիումի աշխատանքի մի մասը, վստահաբար կներթափանցվի Լեգեոնի ակտիվ ոգով, որն անդամներին կմղի կիրառել իրենց գիտելիքները: Այդ նպատակով այն պրեզիդիումները, որոնք առաջընթաց ունեն ուսման մեջ, պետք է մտածեն դասավանդելու, Կաթողիկէ Վկայության Եղբայրակցության աշխատանքով զբաղվելու և իրենց ձեռք բերած հատուկ գիտելիքները փոխանցելու այլ ճանապարհների մասին: Նրանք պետք է Լեգեոնի մեջ տարածեն մեծ ոգևորություն՝ քաջատեղյակ լինելու հավատքի հարցերում: Լեգեոնի մեջ ձեռք բերված գիտելիքները պետք է տարածել ժողովրդի մեջ լեգեոնական շփումների բազմաթիվ ճանապարհներով: Այսպիսով մի քայլ է կատարվում՝ «վերացնելու կաթողիկէ ժողովուրդների մեծագույն բացթողումը՝ աստվածային կրոնի մեջ գիտելիքների բացակայությունը» (Պիուս ԺԱ Պապ, Motu Proprio, 29 հունիսի, 1923):

Ամենաառաջին գիրքը, որը պետք է ուսումնասիրվի, Լեգեոնի ձեռնարկն է: Հիրավի, սա լեգեոնականի

հիմնական պարտականություններից է: Որովհետև մինչև Լեգեոնի համակարգը խորությամբ չընկալվի, այն չի կարող հաջողությամբ կիրառվել ուսման կամ որևէ այլ տեսակի աշխատանքի մեջ: Բոլորը կհամաձայնեն, որ անիմաստ է սկսել շենքի կառուցումը՝ առանց նախ հիմքը կառուցելու: Հավասարապես անիմաստ կլինի կառուցել ուսման շինությունը Լեգեոնի համակարգի հիման վրա՝ առանց լրջորեն մոտենալու վերջինիս, որին կարելի է հասնել միայն՝ լիակատար ձևով հասկանալով այն:

Ուսման ոլորտները, որոնք կարելի է շատ արդյունավետ ձևով ձեռնարկել Հոգևոր Առաջնորդի վերահսկողությամբ, հետևյալն են՝ Եկեղեցու դոգմաների վարդապետությունը և ջատագովական գրականությունը, Սուրբ Գիրքը, Եկեղեցու սոցիալական ուսմունքը, ծիսագիտությունը, Եկեղեցու պատմությունը, բարոյական աստվածաբանությունը:

Ժողովի մի որոշակի հատված գուցե քարոզից (Allocutio) հետո հարկավոր է հատկացնել այս աշխատանքի վերաբերյալ անդրադարձին: Այս հատվածին պետք է դարձնել հատուկ ուշադրություն, որպեսզի դրա համար հատկացվի հստակ և սահմանափակ տևողություն, և համոզված լինել, որ այն չի դառնա պարզապես մի թռուցիկ քննարկում:

Յուրաքանչյուր ժողովի ժամանակ որոշվում է դասընթացի մի հատված, որը հանձնարարվում է անդամներին ուսումնասիրության համար: Անդամներն այս աշխատանքը պետք է կատարեն լեգեոնական մեծ բծախնդրությամբ և նվիրումով, որովհետև կա հակվածություն՝ առանց հասկանալու, ուսման նկատմամբ որդեգրելու արհամարհական և անպատշաճ վերաբերմունք: Ուսման աշխատանքն այս պարագայում վերահսկվում է միայն երկնային ականատեսների կողմից: Ավելին, պրեզիդիումը սովորական դպրոցի դասարան չէ: Հեշտությամբ կարելի է անցկացնել նաև ուսման մասին հաշվետվությունը, նույնիսկ եթե ուսումը կատարվել է մատների արանքով:

Յուրաքանչյուր ժողովի ժամանակ անդամները պետք է անհատաբար հաշվետվություն ներկայացնեն իրենց շաբաթվա աշխատանքի մասին: Իրենց հաշվետվություններում նրանք կարող են ներկայացնել որևէ դժվարություն,

որին հանդիպել են ընթերցանության ընթացքում: Անդամները, սակայն, պետք է խուսափեն այնպիսի դժվարությունների մասին պատմելուց, որոնք կարելի է հաղթահարել մի քիչ ավելի ջանք ներդնելու դեպքում:

Ինքնօգնությունը և անհատական ջանքերը պետք է քաջալերվեն հնարավորինս շատ: Պետք է ջանալ, որ քննարկումները չգնան ոչ անհրաժեշտ կամ անցանկալի ուղղություններով և կանգ չառնեն չափազանց բարդ կամ սխալ ուղղությամբ տանող, անպատեհ դատողությունների վրա: Այս բոլոր հարցերում պրեզիդիումի գլխավոր հենարանը պետք է լինի, իհարկե, հոգևոր առաջնորդը:

Շեշտում ենք, որ պրեզիդիումի կողմից նշանակված աշխատանքային պարտականությունը կարող է կատարվել միայն բովանդակային և ակտիվ շաբաթական հանձնարարությամբ և նույնիսկ մասամբ չի՛ կարող փոխարինվել ուսման աշխատանքով:

«Որքա՛ն սերտորեն են միակցված մաքրությունն ու լույսը: Ամենամաքուր հոգիները նրանք են, ում Աստված տալիս է ամենաշատ լույսը: Ահա՛ թե ինչու Օրհնյալ Կույսը ամենալուսավորյալն է բոլոր արարածների մեջ: Ասում են, որ Սուրբ Կույսը լուսավորում է հրեշտակներին: Բայց նմանապես, Տիրամայրը լուսավորում է մարդկանց, և Եկեղեցին նրան անվանում է Աթոռ Իմաստության: Հետևաբար, մեր ուսումները, մեր խորհրդածությունները, մեր ամբողջ կյանքը պետք է առավել սերտորեն պտտվեն այդ Կնոջ շուրջը, ով ամենաօրհնյալն է բոլոր կանանց մեջ, մարմնացած Խոսքի՝ լույսերի Լույսի Մայրն է: Որովհետև Աստված այդ բացառիկ արարածին հագցրել է արևը և կարգադրել, որ նա Հիսուսի լույսը սփռի ամբողջ աշխարհի վրա և յուրաքանչյուր հոգու վրա, որը կբացվի՝ ընդունելու այն» (Սովե, «Marie Intime»):

ՀԱՎԵԼՎԱԾ 11

ՄԱՐԵՄԱԿԱՆ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՈՐԸ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՄԵՆԱՀԱՄԱՌՈՏ ՁԵՎՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՅՆ ՋԱՐՄԱՆԱԼԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԸ ՏՐՎԵԼ Է ՄԱՐԻԱՄԻՆ ԱՄԲՈՂՋ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՑԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՅՆ ԿԱՐԵԼԻ Է ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԱՄԻԵՍԻ ԺԱՄԱՆԱԿ՝ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՂՈԹՔ, ԿԱՄ ԱՅԼ ԱՌԻԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ (ԲԱՑ ԹՈՂՆԵԼՈՎ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՎԱԾԸ)

Մեր Թագուհի՛ և Մա՛յր,

Կարճատև կանգը քո դրոշի առջև ընձեռեց պատեհությունը սիրո մի կարճ բանաձևում տալու համար: Այժմ ավելի ազատ ենք՝ մեր սրտերին թույլ տալու համար, որ բացվեն և ընդլայնեն նվիրագործման այդ փոքրիկ գործողությունը՝ դարձնելով քո հանդեպ վստահության առավել լիակատար մի խոստովանություն:

Մենք հասկանում ենք, որ վիթխարի պարտավորություն ունենք քո հանդեպ: Դու մեզ տվեցիր Հիսուսին, որ աղբյուրն է մեր ամեն բարիքի: Բայց հանուն քեզ մենք պատրաստ ենք դեռևս մնալ կորուսյալ աշխարհի խավարում՝ դեռևս մահվան հնագույն դատավճռի տակ: Աստվածային Նախախնամությունը կամեցավ փրկել մեզ այդ ծայրահեղ թշվառությունից: Աստծուն հաճելի էր ներգրավել քեզ այդ ողորմության ծրագրում՝ քեզ վստահելով մի դերակատարություն, որը չէր կարող լինել ավելի ազնիվ, քան է: Թեև ամեն ինչով կախված ես Փրկչից, Նա քեզ դարձրեց Իր օգնականը, մոտեցած Նրան այնքան, որքան հնարավոր է արարածի համար, և անփոխարինելի Նրա համար:

Ի հավիտենից դու Նրա հետ էիր՝ Ամենասուրբ Երրորդության ծրագրում՝ մաս ունենալով Նրա կյանքում, հռչակված Նրա հետ միասին՝ որպես այն Կինը, ով ծնելու էր Նրան,

միացած Նրա հետ բոլոր նրանց աղոթքներում, ովքեր սպասում էին Նրա գալստյանը, միավորված Նրա հետ շնորհով և Անարատ Հղությամբ, որը հրաշալի կերպով փրկեց քեզ, միացած Նրան՝ Իր երկրային կյանքի բոլոր խորհուրդների մեջ՝ հրեշտակի ավետումից մինչև Խաչը, քո Վերափոխմամբ հաստատված Նրա հետ միասին փառքի մեջ, Նրա հետ միասին նստած Իր գահին և Նրա հետ միասին բաշխելով աստվածային շնորհները:

Բոլոր արարածների մեջ միայն դու էիր բավականաչափ մաքուր և բավականաչափ ուժեղ հավատքի մեջ և ուժեղ հոգով՝ դառնալու համար Նոր Եվան, ով Նոր Ադամի հետ միասին հետ էր շրջելու մարդու անկումը: Քո աղոթքը՝ արդեն լի Սուրբ Հոգով, Հիսուսին իջեցնելու էր երկրի վրա: Քո կամքն ու մարմինը հղացան Նրան: Քո կաթը սնեց Նրան: Քո գերազանց սերը պարուրեց Նրան և զորացրեց՝ մեծանալու, զորանալու և իմաստնանալու համար: Դու իրական ձևով ձևավորեցիր Նրան, Ով ծնել էր քեզ: Հետո, երբ հասավ ընծայաբերման համար սահմանված ժամանակը, աստվածային Գառնուկին ազատորեն հանձնեցիր Իր առաքելությանը և Գողգոթայի վրա Իր զոհաբերական մահվանը՝ Նրա հետ միասին կրելով բազում տառապանք՝ Նրա չարչարանքների նման, այնպես որ դու պատրաստ էիր մեռնելու Նրա հետ միասին, բայց դու պետք է հոգ տանեիր մանուկ Եկեղեցու համար:

Այսպիսով, լինելով Նրա անբաժան օգնականը փրկագործության ողջ ընթացքում՝ դու հավասարապես Նրա հետ եղար և հավասարապես անհրաժեշտ եղար Նրան քրիստոնյաների փրկությունն իրագործելու համար: Քո մայրությունն ընդլայնվեց՝ ընդունելու համար բոլոր նրանց, ում համար քո Որդին տվեց Իր կյանքը: Դու դարձար մարդկության մայրը, ինչպես Նրա մայրն ես, որովհետև մենք Նրա մեջ ենք: Յուրաքանչյուր հոգի նվիրված է քո համբերատար խնամակալությանը՝ մինչև յուրաքանչյուրին հասցնես հավիտենական կյանքին:

Ինչպես փրկության ծրագրի լիակատարության համար Աստված կամեցավ, որ դու լինես մասնակից դրա յուրաքանչյուր հանգրվանին, այդպես էլ պահանջվեց, որ դու

ներառվես մեր պաշտամունքի մեջ: Մենք պետք է գնահատենք քո արածը և ջանանք պատշաճ ձևով մեր հարգանքը մատուցել քեզ մեր հավատքի, մեր սիրո, մեր ծառայության միջոցով:

Այդպիսով, հայտարարելով, որ մեծապես և քաղցրությամբ պարտական ենք քեզ՝ ի՞նչ առավել բան կարող ենք ասել, եթե ոչ ամբողջ սրտով կրկնել. «Մենք ամբողջովին քոնն ենք՝ մեր Թագուհի՛, մեր Մա՛յր, և այն ամենը, ինչ մենք ունենք, քոնն է»:

«Առաջին անգամն է, որ մի Տիեզերական Ժողով ներկայացրել է այսպիսի ընդարձակ և հստակ ամփոփում այն դերակատարության, որը Մարիամն ունի Քրիստոսի Խորհուրդի և Եկեղեցու մեջ: Բայց սա համապատասխանում է այն նպատակին, որը Ժողովը դրել է իր առջև՝ ի ցույց դնելու Սուրբ Եկեղեցու դեմքը: Որովհետև Մարիամը միացած է Եկեղեցուն ամենամտերիմ ձևով: Ինչպես գերազանցորեն հայտարարվել է. «Մարիամը Եկեղեցու մեծագույն մասն է, լավագույն մասն է, հատուկ մասն է, ամենաընտիր մասն է» (Ռուփերթ դը Ափոք):

Հիրավի, Եկեղեցու իրականությունը միայն իր նվիրապետական կառուցվածքի մեջ չէ, միայն իր ծիսակարգի, միայն իր Սուրբ Խորհուրդների մեջ չէ, միայն իր իրավական որոշումների մեջ չէ: Եկեղեցու առավել խոր էությունը, սրբացման արդյունավետ զորության առաջնային աղբյուրը պետք է փնտրել Քրիստոսի հետ նրա խորհրդավոր միության մեջ: Այս միությունը չի կարելի համարել Մարիամից կտրված մի բան, Մարիամից, ով մարդացյալ Խոսքի Մայրն է, և ում Հիսուս Քրիստոսը կամեցավ ինքն իր հետ միավորել այդքան մտերիմ ձևով՝ մեր փրկությունն իրականացնելու համար: Սա բացատրում է, թե ինչու Եկեղեցու ուսումնասիրության մեջ պետք է պատշաճ ձևով ներդրվի սիրառատ խորհրդածությունն այն հրաշքների մասին, որոնք Աստված կատարել է իր սուրբ Մոր մեջ: Մարիամի մասին ճշգրիտ կաթողիկէ վարդապետության իմացությունը միշտ կլինի մի բանալի՝ ճիշտ ձևով ընկալելու համար Քրիստոսի և Եկեղեցու Խորհուրդը:

Այդ է պատճառը, որ մենք ամենասուրբ Մարիամին հայտարարում եմ Մայր Եկեղեցու, այսինքն՝ Աստծո ամբողջ ժողովրդի՝ հավատացյալների և նրանց հովիվների Մայրը» (Սբ Պողոս Զ Պապի խոսքը Վատիկանի Ժողովի ժամանակ):

[Այս մեջբերումը Համադրության տեքստի մաս չէ]:

ՀԱՎԵԼՎԱԾ 12

ՄԻ ԴԻՄԱՆԿԱՐ ՄԱՐԻԱՄԻՑ

«Իմ Տիրամայրը գեղեցիկ է, անզուգական գեղեցիկ, այնքան գեղեցիկ, որ եթե մեկը նրան մեկ անգամ տեսներ, կուզենար մեռնել, միայն թե մեկ անգամ ևս տեսներ, այնքան գեղեցիկ, որ երբ մեկը տեսնի նրան, այլևս չի կարող սիրել որևէ երկրային բան» (Սբ Բեռնադեթ):

Սբ Եպիփանեսին է վերագրվում Տիրամոր ամենավաղ դիմանկարային գրությունը, որը մնացել է պատմական արխիվներում: Վիճելի է, թե արդյոք այն հիմնված է ավանդությունների՞ վրա, թե՞ Սուրբ Երկրում աղջիկների արտաքինի վերաբերյալ սրբի գիտելիքների վրա, կամ գուցե կա մեկ այլ բացատրություն: Ինչ էլ լինի ծագումը, դա Տիրամոր ամենավաղ դիմանկարային գրությունն է, որ փոխանցվել է մեզ:

«Ըստ այս եպիսկոպոսի, Սուրբ Կույսը բարձրահասակ չէր, թեև հասակը մի քիչ բարձր էր միջին հասակից, գույնը՝ թեթև բրոնզե՝ սուլամացիների նման, ինչպես բնորոշ էր նրա երկրին, հասած ցորենի հատիկների երանգով, մազերը բաց գույնի, աչքերը՝ կյանքով լի, ակնաբիբերը՝ ավելի շատ ձիթենու գույնի, հոնքերը՝ կատարելապես կամարաձև և սև, քիթը՝ կատարյալ ձևերով և արծվանման, շրթունքները՝ վարդագույն, երեսը՝ գեղեցիկ օվալաձև, ձեռքերն ու մատները՝ երկար: Նա ամբողջությամբ լի էր աստվածային շնորհով և գրավչությամբ: Բոլոր Հայրերը

միաձայն վկայում են Սուրբ Կույսի՝ հիացմունքի արժանի գեղեցկության մասին:

«Բայց Մարիամի գեղեցկության զորությունը այս բնական կատարելությունների հանրագումարում չէր, այլ դա բխում էր առավել բարձր աղբյուրից: Սբ Ամբրոզիուսը լավ էր հասկանում դա, երբ ասում էր, որ այդ գրավիչ արտաքինը միայն մի թափանցիկ քող էր, որը թույլ էր տալիս իր միջով տեսնել բոլոր առաքինությունները, և որ Մարիամի հոգին՝ ամենաազնիվը, որը երբևէ եղել է Հիսուս Քրիստոսի հոգուց հետո, նրա մտավոր և անանց գեղեցկությունների միայն հեռավոր արտացոլանքն էր: Մարիամն ամենագեղեցիկն էր կանանց մեջ, որովհետև ամենաողջախոհն էր և ամենասուրբը Եվայի դուստրերի մեջ:

Կույսի բոլոր գործողությունները հատկանշված էին մեծագույն վայելչությամբ. նա բարի էր, սիրալիր, սրտացավ և երբեք չէր հոգնում տառապյալների երկար բողոքները լսելուց: Նա քիչ էր խոսում, միշտ իմաստավոր, և նրա շուրթերից երբեք սուտ խոսք դուրս չէր գալիս: Նրա ձայնը քաղցր և թափանցող էր, և նրա բառերը շնորհալի և մխիթարական բան ունեին իրենց մեջ, որ հանգստացնում էին մարդկային հոգին: Սուրբ Կույսն առաջինն էր աղոթական հսկումների մեջ, ամենաճշգրիտը՝ աստվածային օրենքը կատարելիս, ամենախոնարհը, ամենակատարյալը՝ ամեն տեսակ առաքինությունների մեջ: Նրան երբեք հնարավոր չէր տեսնել զայրացած, երբեք չէր վիրավորում, ցավ չէր պատճառում և չէր քննադատում թերությունների համար: Նա հակառակ էր շքեղությանը, պարզ՝ իր հագուստի մեջ և հասարակ՝ իր շարժուձևերով: Մարիամը երբեք չէր մտածում իր գեղեցկությունը, իր հին ազնվականությունն ի ցույց դնելու մասին: Նրա ներկայությունը կարծես սրբացնում էր ամեն ինչ իր շրջապատում, և նրան նայելիս ստվերվում էին երկրային բաների մասին բոլոր մտքերը: Նրա քաղաքավարությունը կեղծ խոսքերով դատարկ ձևականություն չէր, այլ հոգուց բխող ծով գթասրտության արտահայտություն: Նրա հայացքն արդեն հայտնում էր, որ ինքն էր Ողորմության Մայրը» (Օրսինի, «Օրինյալ Կույսի պատմությունը»):

«Արյան ինքնությունը ենթադրում է, որ Հիսուսի և Մարիամի միջև կա նմանություն՝ կազմավորման, դիմագծերի, հակումների, ճաշակների, առաքինությունների՝ ոչ միայն այն պատճառով, որ արյան ինքնությունը շատ հաճախ ստեղծում է այդպիսի նմանություն, այլ նաև այն պատճառով, որ Մարիամի պարագայում (քանի որ նրա Մայրությունն ամբողջովին գերբնական մի փաստ էր՝ բոլորանվեր շնորհի արդյունքը) նրան տրված շնորհը գերակայում էր նրա մարդկային բնության նկատմամբ, և այն ձևավորեց այնպես, որ նրան դարձրեց աստվածային Որդու կենդանի պատկերն ու դիմանկարը՝ ամենայն մանրամասնությամբ, այնպես որ, Սուրբ Կույսին նայելիս կարելի էր նրա մեջ տեսնել ու հիանալ Հիսուս Քրիստոսի ամենաբացառիկ մի պատկերով: Մայրության այդ նույն հարաբերությունը Մարիամի և նրա Որդու միջև հաստատել էր մի միություն՝ ոչ միայն որպես փոխադարձ կապ և կյանքի ընդհանրություն, այլև սրտերի և գաղտնիքների փոխանակում, այնպես որ Սուրբ Կույսը մի հայելի էր, որում արտացոլվում էին Հիսուսի բոլոր մտքերը, զգացմունքները, ձգտումները, ցանկությունները և նպատակները, ինչպես ինքը՝ Հիսուսն էլ, իր հերթին, ավելի գերազանց ձևով՝ ջինջ հայելու նման, արտացոլում էր մաքրության, սիրո, նվիրման, վիթխարի սիրո հրաշքը, որ Մարիամի հոգին էր: Հետևաբար, Մարիամն ավելի ծանրակշիռ պատճառ ուներ, քան հեթանոսների առաքյալը, ասելու՝ «Այլևս ոչ թե ես եմ ապրում, այլ Հիսուսն է ապրում իմ մեջ» (Դը Քոնսիլիո, «Ճանաչել Մարիամին»):

Հետևելով Մարիամին՝
Կանչելով նրան՝
Մտածելով նրա մասին՝
Բարձրացվելով նրա կողմից՝
Պաշտպանվելով նրա կողմից՝
Առաջնորդվելով նրա կողմից՝
Ունենալով նրա բարեհաճությունը՝

դու չես մոլորվի,
դու չես հուսահատվի,
դու չես թափառի անորոշությամբ,
դու չես ընկնի,
չես վախենա,
դու չես հոգնի,
դու կհասնես նպատակին:

(Սբ Բեռնարդոս)

«Per te, O Maria, resurrectionis nostrae tesseram certissmam tenemus»:

«Քո շնորհիվ, ո՛վ Մարիամ, մենք ունենք անխախտ գրավականը մեր հարության»

(Սբ Եփրեմ Ասորի):

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԳՐՔԵՐԻ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

Ծննդ. Ծննդոց

Ելք Ելք

Հես. Հեսու

Ա Թագ. Ա Թագավորներ

Ա Մնաց. Ա Մնացորդներ

Տոբ. Տոբիթ

Սղմ. Սաղմոս

Երգ. Երգ Երգոց

Սիր. Սիրաքի իմաստություն

Ես. Եսայի

Դան. Դանիել

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Մտթ. Ավետարան ըստ Մատթեոսի

Մրկ. Ավետարան ըստ Մարկոսի

Ղկ. Ավետարան ըստ Ղուկասի

Հվհ. Ավետարան ըստ Հովհաննեսի

Գրծք. Գործք Առաքելոց

Հռմ. Պողոս առաքյալի թուղթը՝ հռոմեացիներին

Ա Կրնթ.	Պողոս առաքյալի առաջին թուղթը՝ կորնթացիներին
Բ Կրնթ.	Պողոս առաքյալի երկրորդ թուղթը՝ կորնթացիներին
Գաղ.	Պողոս առաքյալի թուղթը՝ գաղատացիներին
Եփս.	Պողոս առաքյալի թուղթը՝ եփեսացիներին
Փիլպ.	Պողոս առաքյալի թուղթը՝ փիլիպպեցիներին
Կող.	Պողոս առաքյալի թուղթը՝ կողոսացիներին
Ա Թեսղ.	Պողոս առաքյալի առաջին թուղթը՝ թեսաղոնիկեցիներին
Ա Տիմ.	Պողոս առաքյալի առաջին թուղթը՝ Տիմոթեոսին
Բ Տիմ.	Պողոս առաքյալի երկրորդ թուղթը՝ Տիմոթեոսին
Եբր.	Եբրայեցիներին ուղղված թուղթը
Ա Պետ.	Ա Պետրոս
Ա Հվի.	Ա Հովհաննես
Հուդ.	Հուդա



Ես պեսնում եմ Նրա պյուռը
վարդի կա,
Եվ Նրա ալեների փառքը՝ ասպղերի մեջ,
Նրա մարմինը շողշողում է հավերժական
ջուրերի մեջ,
Նրա արյունվիները թափվում են ամպերից,
Ես պեսնում եմ Նրա դեմքը
ամեն մի ծաղկի մեջ,
Ամպրոպն ու թռչունների ձայնը
Ոչ այլ ինչ են, քան՝ Նրա ձայնը և
լցված են Նրա զորությամբ,
Ժայռերին Նրա քառքն են գրված,
Բոլոր պրահեղները պրոված են Նրա ոդքերով,
Նրա ուժեղ սրտի բաբախն ալեկոծում է
հանդարտ ծովը,
Նրա գլխ պսակը ճյուսված է ամեն մի գշով
Ամեն մի ծառ Նրա Խաչն է։

Ժոզեֆ Մարի Փլանչիոր



ԼԵԳԵՈՆԻ ԽՈՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ
Խորանը չպետք է լինի ժողովի շրջանակից դուրս

ՎԵՔՍԻԼԼՈՒՄԸ ՍԵՂԱՆԻՆ ԴՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՎԵՔՍԻԼԼՈՒՄԸ ԱՍԻԵՍԻ ԿԱՄ ԹԱՓՈՐԻ ԺԱՄԱՆԱԿ
ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՄԱՐԻԱՄԻ ԼԵԳԵՈՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ

LEGIO MARIAE

Անտարես

Տպագրվել է «Անտարես» հրատարակչատանը
Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374 10) 58 10 59, 56 15 26, 58 76 69
antares@antares.am
www.antares.am